



Ոգի-Նարի
Vogi-Nairi

《论语译注》 杨伯峻

CONFUCIUS
THE ANALECTS

Translator and annotator:
Yang Bojun

Translated from Chinese into Armenian by
Pavel Tshagharyan

Stepanakert 2020

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ

ԶՐՈՒՅՑՅԱՆ

Փոխադրություն եւ մեկնություն՝
ՅԱՍ ԲՈՉՅՈՒԽ

Չինարենից թարգմանությունը՝
Պավել ՃԱՎԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ 2020

ՀՏԴ 1/14

ԳՄԴ 87

Կ 709

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ

Կ 709 Զբույցներ/ Կոնֆուցիոս: Փոխադրությունը

եւ մեկնությունը՝ ՅԱՆ ԲՈՉՅՈՒՆԻՒ:

Չինարենից թարգմանեց Պավել Շաղարյանը.-

Ստեփանակերտ: «Ոգի-Նախրի» հրատ., 2020, 504 էջ:

Կոնֆուցիոսի հանրահայտ «Զբույցները» դարերի ընթացքում բազմաթիվ մեկնարաննությունների են արժանացել ամենատարբեր հետազոտողների կողմից: Յան Բոճյունը արդի կոնֆուցիազիտության հեղինակավոր անուններից է Չինաստանում, նրա աշխատասիրության կազմված սույն գիրքը թերեւս ամենանշանակալիններից է նմանօրինակ ուսումնասիրություններից: Մեր ընթերցողներն առաջին անգամ հնարավորություն են ստացել «լսել» Կոնֆուցիոսին՝ նրա բնագիր խոսքի եւ օրինակելի փոխադրության հայերեն վերարտադրությամբ:

ISBN 978-9939-1-1142-1

ՀՏԴ 1/14

ԳՄԴ 87

B&R Book Program

Authorized translation from the Simplified Chinese edition, entitled 《论语译注》,
published by Zhonghua Book Company, Copyright ©Yang Bojun

© «Ոգի-Նախրի» (թարգմանության համար), 2020

Նախարան

Տիտուր էր փառաբանված ռազմիկ Շուլյան Հեն: Արդեն վարսուներեք գարուն էր դիմավորել, ինը դուստրերի հայր էր, սակայն արու ժառանգ չուներ, ում կփոխանցեր ամենն, ինչ ուներ: Իսկ նրան մնացել էր լոկ ազն-վական տոհմանունը: Ամուսնացավ հարձի հետ, որը նրան որդի պարգևեց, սակայն երեխան թույլ ու հիվանդոտ էր: Պատերազմից վերադաշնալով՝ Շուլյան Հեն խնդրեց Յան տոհմի նահապետին իրեն կնության տալ նրա երեք դուստրերից մեկին: Յանաձայնվեց կրտսերը՝ տասնյոթամյա Յան Ձենձայր: Այդ ամուսնությունը ժամանակակիցներից ունաճ ապօրինի համարեցին, ոմանք՝ «բարբարոսներին հարիր». պատճառը, թերևս, ամուսինների տարիքային տարբերությունն էր և այն, որ ամուսնական ոչ բոլոր ծիսակատարություններն էին իրականացվել հավուր պատշաճի: Շուտով ծնվեց նրանց սիրո պտուղը՝ Քուն Ցյուն: Սովորական մանուկ էր, ում վիճակված չէր դաշնալ ճակատամարտեր հաղթող զորապետ կամ աշխարհառու տիրակալ: Սակայն նրա հոչակը տարածվեց երկրագնդով մեկ: Նա Արևելքում հայտնի էր Քունձի կամ Քուն Ֆուձի անունով, իսկ Արևմուտքում՝ որպես Կոնֆուցիոն: Գրական ժառանգություն չքողեց, սակայն սաներն ու հետևողները անփոփեցին նրա ուսմունքը «Զրույցներ» աշխատության մեջ, որի մտքերը դարեր ի վեր մեջբերել են կայսրերն ու ինաստատերները, զորավարներն ու աստիճանավորները, կղերականներն ու ուսյալ այրերը, նաև՝ անգրագետ արհեստավորներն ու գեղջուկները:

Ո՞րն էր Կոնֆուցիոսի և նրա «Զրույցների» հաջողության գաղտնիքը: Նրա ինաստությունը դյուրըմբռնելի է, առօրեական, երբեմն՝ նույնիսկ կենցաղային, սակայն այդ ողջ պարզության մեջ անհնար է չնկատել նրա գաղափարների անկոկնելի վիթխարիությունը: Դրանք չունեն դառսականությանը բնորոշ խենքությունն ու գերբնականությունը, բուդդայականության ապազգայնությունն ու ապաշխարհիկությունը, օրինականների կտրականությունն ու օգտապաշտությունը: Կոնֆուցիոսը ննան էր բոլորին, նրա «Զրույցները» ըմբռնելի էին բոլորի համար, թեև այդ ակնառու պարզության մեջ թաքնված է ծեսերի, ավանդույթների, տարատեսակ

ակնարկների ու խորհուրդների խորությունը: Պատահական չէ, որ Կոնֆուցիոսին չինացիներն անվանում են «ուսուցչի կատարելատիպ տաս հազար սերունդների համար»:

Կոնֆուցիոսի մեծագույն կոչումը հենց Ուսուցիչն էր: Ծեսերից և ավանդույթներից բխող գիտելիքներով նա փորձում էր ներդաշնակ կյանքի հանդեպ ձգուում առաջացնել բոլորի մոտ, ովքեր ապրում են Երկնքի տակ, ծառայում էր տիրակալներին և ուսուցանում էր մարդկանց: Կոնֆուցիոսի «Զրույցները» հսկայական ազդեցություն են ունեցել Չինաստանում՝ ձևավորելով ավելին, քան ազգային գաղափարախոսությունն է՝ ազգային հոգեքանություն: Իր այժմեական ձևով՝ քսան գլուխներով, «Զրույցները» խճագրովել է Թան հարստության կառավարման օրոք՝ յոթերորդ դարում: Մինչ այդ չիանակարգված մի քանի տարբերակ արդեն գործածության մեջ էին, քանզի դեռ մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում Արևատյան Յան կայսրության Ու Դի կայսրը սահմանեց պետական բննությունների համակարգ, և դիմորդները՝ ապագա քաղաքական ու ռազմական գործիքները, պետք է անգիր ինանային կոնֆուցիականների և օրինականների աշխատությունները, իսկ մեր թվարկության 59 թվականին Արևելյան Յան կայսրության Մին Դի կայսրը կառավարման ապարատի բարեփոխումների շրջանակներում տերունական պաշտոնյաների համար պարտադիր դարձրեց կոնֆուցիական որոշ նորմների, կանոնների և աշխատությունների, այդ թվում՝ նաև «Զրույցների» խորը ուսումնասիրությունը: Մի քանի տարի հետո բացվեց առաջին դպրոցը, որտեղ երիտասարդ ազնվականներն ու աստիճանավորների զավակները կոնֆուցիականություն էին ուսումնասիրում: «Զրույցների» իմացությունը համարվում էր ներդաշնակ սոցիալական կենսակերպի և տերունական ծառայության՝ տարբեր բնագավառներում կարիքայի ածի լուրջ նախահիմք: Ավելին՝ «Զրույցներում» մեջբերվող գաղափար ների շնորհիվ հնարավոր դարձավ ողջ երկրում կարգավորել սոցիալական փոխսհարաբերությունները միջանձնային և անձնային հետևյալ մակարդակներում՝ տիրակալի և հպատակների, ծնողների և զավակների, ավագ և կրտսեր եղբայրների, ամուսնու և կնոջ, բարեկամների միջև: Կարևորագույնը համարվում էին տիրակալի և հպատակների, ինչպես նաև ծնողների և զավակների փոխսհարաբերությունները, որոնց հիմնաքարը պատկառանքն էր: «Զրույցներում» առաջադրվում էր նաև

տերության՝ որպես մեծ ընտանիքի մոդելը: Իշխանները և աստիճանավորները համարվում էին «ավագներ», հպատակները՝ «կրտսերներ»: Տիրակալը պետության «հայրն» էր՝ անառարկելի, բացարձակ հեղինակություն, իսկ ժողովուրդը «զավակներն» էին՝ ենթարկվող ու ակնածող: «Զրույցներում» ժողովուրդը գորեղ, բայց անդեմ ու անձև, կույր ուժ է, որ առանց հմուտ կառավարչի ընդունակ է միայն անպտուղ ու կործանարար ընդվզումների: Ուստի խաղաղ և բարգավաճ կյանքով ապրելու համար ժողովուրդը ուներ մի ճանապարհ՝ հպատակվել տիրակալին:

Ուշագրավ է նաև բարոյական, առաքինի անձի կատարելատիփի՝ «ազնվայրի» գաղափարի ներկայացվածությունը «Զրույցներում»: Ըստ Կոնֆուցիոսի՝ ազնվայր կարող է դառնալ ուսման հանդեպ ձգտում ունեցող և սեփական զարգացման ուղղությամբ անընդհատ աշխատող յուրաքանչյուր անձ՝ անկախ սոցիալական վիճակից, ծագումից, ունակություններից և հնարավորություններից: Սա աննախադեպ գաղափար էր, որն ընկապ կառավարման համակարգում ներգրավվող ապագա աստիճանավորների մասնագիտական ընտրության հիմքում: Բաղձալի պաշտոնին կարող էին տիրանալ միայն արժանավորները: Այսինքն՝ «ազնվայրի» գաղափարի շուրջ ձևավորվեց առաքինի, բարձր բարոյականություն ունեցող պաշտոնյաների պատրաստության լրջագույն համակարգ: Մարդիկ «ազնվայր» համարվելու համար պիտի հետևեին «հինգ մշտականություններին» կամ «հինգ առաքինություններին»՝ մարդկանություն, պարտքի զգացում, իմաստություն, ծիսակարգի պահպանում և ազնվություն: «Ազնվայրին» հակառակում էր «նվաստի» կամ «փոքր մարդու» գաղափարը՝ անկիրթ, ազահ, հեշտասեր, շահամոլ և փորբոքի անձի տիպարը: «Զրույցներում» արծարձված գաղափարներից «ծներ» հսկայական ազդեցություն ունեցավ կառավարման համակարգի վրա և ձևավորեց հանրային օգտակար վարքի մոդելները: Կոնֆուցիականության կիրառությունն այնքան արդյունավետ էր կառավարման համակարգում, որ կառավարիչների մշտական փոփոխությունների պայմաններում նրանց բոլորի որդեգրած քաղաքական ուղղու կամ կառավարման ոճի հիմքում անփոփոխ ընկած էր Կոնֆուցիոսի ուսմունքը, ընդհուած մինչև 1949 թվականը, երբ Մարտենի կողմից կոնֆուցիականությունն արգելվեց որպես համայնավարության սկզբունքներին դեմ ուսմունք: Մոտեցումը, սակայն, փոխվեց, երբ իշխանության եկավ

Դեն Սյառվիհնը, ով վերահաստատեց կոնֆուցիականությունը՝ որպես չինական մշակույթի պահպանության, հասարակական և տնտեսական կյանքի բարգավաճնան զաղափարական գրավական:

«Զրույցները» ենթարկվել են բազմաթիվ խմբագրությունների, սակայն դրանք էականորեն չեն աղավաղել աշխատության իմաստային բովանդակությունը, իհմնական փոփոխությունները կրել են համակարգող բնույթ՝ միացվել կամ բաղդատվել են ասույթները: Նույայական թվով փիլիսոփաներ, գրականագետներ և լեզվաբաններ մեկնաբանել են այս աշխատությունը: Առաջին հիշարժան աշխատանքը պատկանում է Սուն հարստության կառավարման ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսոփաներից մեկին՝ Չու Սիհն, ում ջանքերով «Զրույցները» առավել հասկանալի դարձան: Մեր բարգմանությունն իրեմից ներկայացնում է ժամանակակից չին լեզվաբանության հսկա Յան Բոճյունի՝ Կոնֆուցիոնի բնագրի փոխադրությունն ու մեկնաբանությունները: Նրա աշխատությունը համարվում է «Զրույցների» մեկնությունների ժամանակակից առավել հաջողված տարբերակներից մեկը: Որպես աշխատության հիմք՝ Յան Բոճյունը վերցրել է «Զրույցների» հնագույն խմբագրություններից մեկը, որպեսզի բնագրային մասը ձևաբանական և շարահյուսական առումով հնարավորինս մոտ լինի Կոնֆուցիոնի ժամանակների լեզվաբանական և բարբառային իրողություններին: Յան Բոճյունը վիթխարի աշխատանք կատարեց՝ Կոնֆուցիոնի լակոնիկ և ժամանակակից լեզվամտածողությանը խորը ու խորին բնագիրը փոխադրելով ժամանակակից չինարենի: «Զրույցների» բոլոր արժեքավոր մեկնությունները՝ հին և ժամանակակից, իրենց ազդեցություններն են ունեցել Յան Բոճյունի աշխատության վրա, սակայն նրան հաջողվել է պահպանել մտքի յուրօրինակությունն ու քննադատականությունը: Բոճյունը հատկապես արժեքավոր է համարում Չու Սիի, Ցու Դունբիի, Չառ Յիի, Ցյան Սուի և Լյու Բաոնանի մեկնությունները: Վիճահարույց հարցերում նա գերծ է մնում կտրականությունից և հաաճեպ դատողություններ անելուց, պահպանում է անհրաժեշտ թերահավատություն: Արդյունքում՝ Յան Բոճյունին հաջողվել է բնագիրը փոխադրելով՝ պահպանել տեքստի բովանդակության իմաստային հատկանիշները և այնտեղ նկարագրված իրողությունների ժամանակագրական ու պատմական հավաստիությունը, ընդ որում՝ նրան հաջողվել է փոխադրությունը դարձնել դյուրընբոնելի: Բոլոր այն մեկնա-

բանությունները, որոնք հակասում են իին կամ ժամանակակից մեկնություններում արտացոլվածներին, կատարելապես հիմնավորվում են վերջինիս կողմից: Պատմական անցքերի մեկնությունների ժամանակ Բոջունը մշտապես հղումներ է անուն ժամանակագիրների աշխատություններին, հատկապես շատ են հղումները Սիմա Ցյանի «Պատմագրությանը» և «Զուոյի նորերին»: Թիչ չեն նաև հղումները ժամանակակից պատմագրությանը: Բոջունի Կոնֆուցիոսը զուրկ է գաղտնապաշտական քողից, որով նրան պատել էին միջնադարյան մեկնողները. նա այն է, ինչ եղել է՝ Ուսուցիչ, հասարակ մի մարդ՝ իր առավելություններով ու թերություններով, հույզերով, ապրումներով, ուրախություններով ու հիասքափություններով, ընդ որում՝ ինքանինք «ազնվայր» կոչվող կատարելատիպից բավականին հեռու համարող մեկը: Յան Բոջունը ստանձնել էր կարևորագույն մի առաքելություն՝ ժամանակակից չինական գիտական հանրության և հասարակության լայն շերտերի համար առավել ընթացելի դարձնել Կոնֆուցիոսի «Զրույցները», ինչը նրան մեծապես հաջողվել է:

Աշխատությունը հայերեն թարգմանելը մի շարք բարդություններ ուներ, մասնավորապես՝ տեքստի բնագրային մասի խրթին ու անբարեհունչ լինելը: Գրական չինարենը՝ վենյանը, որով գրառված է բնագիրը, բարդ ու լակոնիկ լեզու է, ինչը դժվարացնում է հայերեն լեզվամտածողության կրողի համար տեքստի ընթացնումը: Բնագրային մասի թարգմանությունն արվել է՝ ինաստային բովանդակությանը և գաղափարագրային կազմությանը առավելագույնս հավատարիմ մնալով: Ի սկզբանե կար մտավախություն, որ կտուժի ընկալողական ասպեկտը՝ տեքստը հասկանալի չի լինի ընթերցողին: Սակայն հաշվի առնելով, որ բնագրային մասի թարգմանությանը հաջորդում է դրա՝ ժամանակակից չինարենով փոխադրության թարգմանությունը, այսինքն՝ այսպես թե այնպես ներկայացվում է առավել հասկանալի տարրերակ, որոշեցի մշտապես հավատարիմ մնալ բնագրին: Բոջունի փոխադրությունները թարգմանելիս հակված էի տեքստում առավել ընթացնելի դարձնել, ուստի ինձ թույլ եմ տվել աննշան շեղումներ, որոնք, սակայն, իմաստային բովանդակության վրա բացարձակապես չեն ազդել: Ի մասնավորի՝ գրեթե բոլոր գաղափարագրերի մեկնություններում են ավելացրել եմ տվյալ գաղափարագրերի նշանակության մի քանի տարրերակներ, որոնք Յան Բոջունի փոխա-

դրության մեջ բացակայում են: Տվյալ մոտեցման իմաստը, կարծում եմ՝ միհանգամայն տրամաբանական է, քանի որ Բոձոյունի աշխատությունը չինարեն է և նախատեսված չին լսարանի համար, ուստի հայերեն թարգմանության մեջ գուտ չինարենով գաղափարագիր հրանցնելը՝ առանց նշանակության տարբերակների ներկայացման, աշխատանքը թերի է դարձնում: Որոշ դեպքերում մեկնությունների մեջ ավելացրել են որոշակի տեղեկատվություն՝ դրանք առավել ընթանելի դարձնելու նպատակով, հատկապես՝ ծիսակարգերին և պատմական անցքերին վերաբերող հատվածներում, սակայն դրանք եզակի բնույթ են կրել և որպես կանոն՝ սահմանափակվել են մեկ նախադասությամբ:

Թարգմանության ընթացքում բավականաչափ խնդրահարույց էր եզրույթների, հատուկ անումների և տեղանումների հայերեն տառադարձությունը: Մասնավորապես՝ լատինատառ գրի վրա հիմնված «փինյին» հնչյունային այրութենը տառադարձության հստակ որոշված մեխանիզմ չունի և ավելի շատ հնչյունների արտասանությունների պայմանական գրառում է, ուստի հետևել են հայերենի համար առավել բարեհունչ տառադարձելու սկզբունքին: Օրինակ՝ «փինյինով» «չի» հնչյունը կարող է գրառվել որպես «ջ», կամ «Ճ», «Շ»-ն և «Շ»-ն՝ որպես «Ճ» կամ «Ճ», «Ճ»-ն՝ որպես «Դ» կամ «Ծ»: Կոնֆուցիոսի անունը «փինյինով» գրառվում է որպես «Kongzi», ինչը հայերեն տառադարձման դեպքում պետք է գրվի «Քունձի» կամ «Քոնժը»: Անբարեհունչ լինելու պատճառով խուսափել են տառադարձման մեջ կիրառել «Ճ», «Ճ», «Ծ» տարերը: Թարգմանության ժամանակ բարդություններ էր առաջացնում նաև նույն ասույթում մեկ կամ ավելի անձանց՝ տարբեր անուններով հանդես գալը: Օրինակ՝ նույն ասույթում Կոնֆուցիոսը կարող էր կոչվել Քունձի կամ Ցյու, իսկ «Զրույցներում», բացի վերոնշյալից, նա հիշատակվում է նաև որպես Ցուն Ցյու, Չուննի, Քուն Ցունի անուններով: Նույն պատկերն է նրա սաների, նախարարների, իշխանների, արքաների և այլոց անունների հետ կապված: գրեթե չկան այնպիսիք, որոնք ծննդյան ժամանակ տրված անունից բացի չունենան պատվանուն կամ ծիսական անուն: Սակայն բոլոր նման դեպքերում, երբ երկրորդ անունը ներկայացվում է առաջին անգամ, մեկնության բաժնում տրված է համապատասխան ծանոթագրություն: Խնդրահարույց կարող են լինել ծիսակարգերին և ավանդույթներին, մարդկային հարաբերություններին, աշխարհայացքին

վերաբերող որոշ հարցեր, սակայն եթե ընթերցողը հաշվի առնի մեր հասարակությունների արժեհամակարգային և լեզվանտածողական տարբերությունները, ապա տպավորություններն այնքան էլ հակասական չեն լինի:

Ոչ պակաս խնդրահարույց էր հիշատակված աշխատությունների վերնագրերի թարգմանությունը, ինչու չէ՝ նաև հենց «Զրույցների» վերնագրի հարցը: Որոշ օտարալեզու թարգմանություններում այն ներկայացվում է «Զրույցներ և խորհրդաժողություններ», «Զրույցներ և կշռադատություններ», «Զրույցներ և մտորումներ» տարբերակներով: Սակայն չինացի մեկնողների մեծամասնությունը, ինչպես նաև կորեացի և ճապոնացի հայտնի մասնագետներ Պակ Իլբոնը և Կանայա Օսամուն կոնֆուցիական աշխատության վերնագիրը փոխադրում են ուղղակի որպես «Զրույցներ»: Վիճահարույց է որոշ առանցքային եզրույթների թարգմանության հարցը, մասնավորապես՝ «Ժեն»-ը, որը թարգմանությունների մեծամասնության մեջ ներկայացված է որպես «մարդասիրություն». Ես հարկ եմ համարել փոխադրել այն որպես «մարդկայնություն», ինչը գաղափարագրի կազմության և իմաստային բովանդակության վերլուծության համադրման հետևանք է:

Սույն աշխատությունը թարգմանելն ահօելի պատասխանատվություն էր, միաժամանակ՝ մեծ պատիվ, ուստի ձգտել եմ աշխատել ջանապիրաբար և զգուշորեն՝ նարդկության մեծագույն Ուսուցչի ժառանգությունը չաղավաղելու համար: Որքանո՞վ է հաջողվել՝ կպատասխանես դու, հարգելի ընթերցող...

Պավել ճԱՂԱՐՅԱՆ

Գլուխ 1. Ուսուցում Բնդամենք 16 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1 子①曰：“学而时②习③之，不亦说④乎？有朋⑤自远方来，不亦乐乎？人不知⑥而不愠⑦，不亦君子⑧乎？”

Ուսուցիչն ասաց. «Սովորածը ժամանակի ընթացքում կիրառելը միշտէ ուրախապի չէ: Բարեկամներն են գալիս հեռավոր գավառներից, միշտէ հաձելի չէ: Մարդիկ չգիտեն և չես տիրում. միշտէ դա չէ ազնվայրը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Միշտն ուրախապի չէ սովորելը և մշտապես վարժվելը: Միշտն հաձելի չէ հեռավոր վայրերից եկած ընկերներիդ հյուրընկալելը: Մնալ անվրդով, երբ քեզ չեն ձանաչում, միշտն այդպիսին չէ ազնիվ մարդը»:

[Մեկնությունը]

① «子» - Կոնֆուցիոսի «Զրույցներ» աշխատության մեջ հաձախ հանդիպող «子曰»-ի «子»-ն (ուսուցիչ, վարպետ) Քունձին է՝ Կոնֆուցիոսը:

② «时» - Սույն գաղափարագիրը տարբեր նշանակություններ է ունեցել. Զոյն և Ցին հարստությունների օրոք կիրառվել է որպես «ժամանակ», իսկ Մենձիի համանուն աշխատության «Լյանի Հուեյ արքան» գլխում կիրառվել է որպես «ժամանակին», «հենց այդ ժամանակ» և «ձիշտ ժամանակին»: Վան Սուի «Զրույցների մեկնության» մեջ նոյն

նշանակություններն ունի: Զու Միհ «Զրովցների մեկնաբանության» մեջ կիրառվում է որպես «հաձախակի», իսկ այլ հիմ աշխատություններում՝ նաև որպես «մշտական»:

③ «*爻*» - Շատերն այս գաղափարագիրը կիրառել են «վերանայել» իմաստով, սակայն հիմ աշխատություններում այն օգտագործվում է որպես «վարժվել»: Մասնավորապես՝ «Պատմագրություն. Կոնֆուցիականություն» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Քունձին զնաց ծառ Շիսունի մոտ, որպեսզի վարժեցնի [նրա] սաներին Տաշուում»: Այժմ «*爻*» գաղափարագիրը կիրառվում է որպես «սովորել», սակայն Կոնֆուցիոսի աշխատությունն, ընդհանուր առմամբ, սերտորեն առնչվում էր իր ժամանակների սոցիալական և քաղաքական կյանքի այնպիսի կողմների, ինչպիսիք են տարաբնույթ ծիսակատարությունները, երաժշտությունը, նետաձգությունը, ձիավարությունը, որոնցում վարպետանալը ենթադրում է վարժվել: Հետևաբար՝ «*爻*» գաղափարագիրը լիովին նպատակահարմար է կիրառել «վարժվել» իմաստով:

④ «说» - Սույն գաղափարագիրը նշանակում է «խոսել», սակայն ժամանակին «*說*» գրելաձևով կիրառվել է որպես «ուրախալի», «հաձելի», «երջանիկ»:

⑤ «有朋» - Սույն բառը կիրառվել է «ընկեր» իմաստով: Հնում ասվում էր՝ «միանման խոսող մարդիկ»: Սույն Սյանֆենը իր «Գրառումներ նախահիմքերի ուսմունքի մասին» աշխատության մեջ «朋» գաղափարագիրը կիրառում է «աշակերտ», «սան» իմաստով: «Պատմագրություն. Կոնֆուցիականություն» աշխատության մեջ նշվում է. «Երբ Քունձին արդեն պաշտոնյա չէր, տարվեց բանաստեղծություններով, գրքերով, ծիսական երաժշտությամբ և հեռվից եկած աշակերտներով»: Ժամանակակից թարգմանություններում հաձախ օգտագործվում է «գաղափարակից» եզրույթը:

⑥ «人不知» - Այս նախադասության մեջ «知»՝ «իմանալ» գաղափարագիրը չի հստակեցնում մի բան. ինչ չգիտեն մարդիկ: Այժմ ավելի նպատակահարմար է «人不知»՝ «մարդիկ չգիտեն» արտահայտությունը:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Առ մեկմաքանեկ որպես «Մարդիկ չգիտեն (չեն հասկանում) այն, ինչ ես ասում եմ»: Թերևս համոզիչ չի հնչում, սակայն կարող ենք բերել ևս մեկ օրինակ: «Զրույցների» տասնինգերորդ գլխի տասնիներորդ ասույթում նշվում է հետևյալը. «Ազնվայրը ցավ է զգում անկարողությունից, ոչ թե նրանից, որ իրեն չեն հասկանում»: Այն գրեթե նույն իմաստն ունի:

⑦ «愠» - հնչում է «յուն», կիրառվել է «անհանգստանալ», «դառնանալ», «տիրել», «վրդովվել»:

⑧ «君子» - «ազնվայր» կամ «ազնիվ մարդ». «Զրույցներում» կիրառվում է որպես «առարինություններ ունեցող մեկը», այլ աղյուրներում կիրառվել է նաև որպես «դիրք (պաշտոն) ունեցող մեկը», սակայն եղեկով «Զրույցների» բնույթից՝ նպատակահարմար է առաջին տարրերակի կիրառումը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.2 有子①曰：“其为人也孝弟②，而好犯③上者，鲜④矣；不好犯上，而好作乱者，未之有也⑤。君子务本，本立而道生。孝弟也者，其为仁之本⑥与⑦！”

Յոռուձին ասաց. «Նրանք, ովքեր հարգում են ծնողներին և սիրում են եղբայրներին, երբեք չեն ընդդիմանա ավագներին: Նրանք, ովքեր չեն ընդդիմանում ավագներին՝ չեն ընդվզի: Ազնվայրը ամրացնում է արմատները. երբ արմատներն ամուր են, ի հայտ է գալիս ձշմարիտ ուղին: Հարգել ծնողներին և սիրել եղբայրներին՝ սրանք են մարդկայնության արմատները»:

[Փոխադրությունը]

Յոռուձին ասաց. «Քիչ են նրանք, որոնք հարգելով ծնողներին և սիրելով եղբայրներին՝ կըմբռաստանան ավագներին: Եվ չկան այնպիսիք,

ովքեր ավագներին չըմբռատանալով՝ կարող են խռովություն սերմանել: Ազնիվ մարդը անրացնում է հիմքերը, իսկ երբ դրանք ամուր են՝ տեսանելի է դառնում ձանապարհը: Ծնողների հանդեպ հարգանք ու եղբայրական սեր՝ սրանը են մարդկայնության հիմքերը»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «**有子**» - Կոնֆուցիոսի սանն է՝ Յոռու տոհմից, Ժու անունով: Նա Կոնֆուցիոսից փոքր էր տասներեք տարով, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ երեսուներեք, ընդ որում՝ երեսուներեք տարով փոքր լինելն ավելի արժանահավատ է: «Զրույցներում»՝ Կոնֆուցիոսի սաներից ունանց անվանում են «**子**», մասնավորապես՝ ժամյուն և Մին Ձիսունը այդպես էին դիմում միմյանց, և շատ մարդիկ կարծում են, որ «Զրույցները» գրի են առնվել և կազմվել են հենց աշակերտների կողմից: Յոռու Ժուին նույնապես դիմել են «**子**» պատվանունով, ենթադրվում է, որ նա եղել է Կոնֆուցիոսի լավագույն սաներից մեկը և ամենահարգվածը՝ Կոնֆուցիոսից հետո: Սա նաև պատմական փաստ է, որն արտացոլված է «Ծեսերի» գրքի «Թան Գունի մասին», Մենածի համանուն աշխատության «Թեն Վենգունի մասին» գլուխներում և «Զուննիի սաների պատմագրություն» աշխատություններում (Զուննին Կոնֆուցիոսի պատվանուներից է՝ ծնր.՝ թարգմանչի): Իսկ «Զուոյի նոթեր» աշխատության մեջ նշվում է, որ Յոռուն ութ տարի պետական պաշտոնյա է եղել, ինչը նրան «ուսուցիչ» կոչելու հիմքեր չի տալիս:

② «**孝弟**» - Ստրկատիրական հասարակարգի պայմաններում պատկառանքը համարվում էր որդիների՝ ծնողների հանդեպ վերաբերմունքի հիմքը: «**弟**»՝ «Եղբայր» գաղափարագիրը, որն իր հնչողությամբ և նշանակությամբ նման է «**悌**»՝ «տի» («Եղբայրանալ», «Վերաբերել ինչպես եղբորը») գաղափարագրին, խորհրդանշում է Եղբայրական սերը: Ավատադիրական ժամանակաշրջանում ևս «պատկառանքը» շարունակվում էր համարվել հասարակական կարգն ու կանոնը պահպանելուն միտված հիմնական թարուական ուժը:

Կոնֆուցիոս. Զրույցներ

③ «犯» - «ընդդիմանալ», կիրառվում է նաև՝ «հակաձառել», «հակաել», «ըմբռստանալ» իմաստներով:

④ «鮮» - հնչում է որպես «պան», բառացի նշանակում է «թարմ», սակայն «քրույցներում» կիրառվում է «երիտասարդ», «հազվադեպ» և «քիչ» իմաստներով:

⑤ «未之有也» - «այդպիսի ոչ ոք չկա» կամ «այդպիսի ոչինչ չկա» փոխարերական ձևն է: Հին չինարենի շարակիության մեջ ընդունված էր ժխտական դերանունները տեղադրել բայից առաջ:

⑥ «其为仁之本» - «仁»՝ «մարդկայնությունը» Կոնֆուցիոսի ուսմունքի առանցքային հասկացություններից էր, որը խորհրդանշում էր անթերի առարինությունը: Որոշ հետինակներ (մասնավորապես՝ Սուն հարստության օրոր ապրած Չեն Շանը և Էլի շատերը) նշում են, որ «仁» գաղափարագիրը կարելի է նույնացնել «人»՝ «մարդ» գաղափարագիրի հետ: Սակայն «քրույցներում» այն նպատակահարմար է մեկնաբանել որպես «մարդ լինել» կամ «մարդկային լինել»: Ահա թե ինչու է նշում՝ «սրանք են մարդկայնության արմատները»: Գուանձին իր «Պատվիրաններում» ասում է. «Որդիական պատկառանքը հենց մարդկայնությունն է», այսինքն՝ դրանք նույնիմաստ են:

⑦ «与» - հնչում և մեկնաբանվում է «欵»՝ «յու» գաղափարագրի նման. «քրույցներում» կիրառվել է որպես զարմացական կամ հիացական բացականչություն:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.3 子曰：“巧言令色①， 鲜矣仁！”

Ուսուցիչն ասաց. «Ճարտար խոսքեր և կեղծավոր կեցվածք, որքան քիչ է մարդկայնությունը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Գեղեցիկ խոսքերով ու շողոքորթ վարքով մարդիկ հեռու են մարդկայնությունից»:

[Մեկնությունը]

① «巧言令色» - Զուն իր «Մեկնության» մեջ ասում է հետևյալը. «Ճարտար լեզվով, կեղծավոր վարքով ու շրեղ հանդերձներով այրը չի կարող ծառայել մարդկանց»: Հետևաբար՝ «Ճարտար խոսքեր» և «կեղծավոր կեցվածք» արտահայտությունները հարմար են գործածության համար:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.4 曾子①曰：“吾日三省②吾身——为人谋而不忠乎？与朋友交而不信③乎？传④不习⑤乎？”

Յենձին ասաց. «Ամեն օր ես ինձ ստուգում եմ երեք բանում. հավատարիմ եմ նրանց, ում ծառայում եմ, ազնիվ եմ բարեկամներիս հետ և վարժվու՞ն եմ արդյոք»:

[Փոխադրությունը]

Յենձին ասաց. «Ես ամեն օր ինքս ինձ երեք բան եմ հարցնում. արել եմ առավելագույնը մարդկանց համար, ազնիվ եմ ընկերներիս հետ և կրկնել եմ, արդյոք, Ռւսուցիս պատվիրանները»:

[Մեկնությունը]

① «曾子» - Յենձին Կոնֆուցիոսի աշակերտներից է, հայտնի նաև Յան, Էշեն, Զի Ձիյու անուններով: Նանու քաղաքից է (Աերկայիս Շանդուն նահանգի Պանդի շրջան), ապրել է մթա. 545-505 թվականներին:

② «三省» - «Երեք»՝ «三» գաղափարագիրն այստեղ ուղղակի իմաստ չունի, կիրառվում է երևոյթի բազմակի լինելը նշելու համար: «省» գաղափարագիրը կիրառվում է «ստուգել», «ներհայել», «իմքնաբնել», «ներանձնանալ» իմաստներով: «三» արտահայտության երեքը

Կոնֆուցիոս. Զրույցներ

գործածվում է գործողությունների հաձախականությունը արտահայտելու համար: Հնում «երեք» և «ինը» թվերը հիմնականում կիրառվում էին հենց այդ նպատակով, ինչի մասին նշված է նաև Վան Զունի «Երեքի և իննի մեկնության» մեջ:

- ③ «信» - նույն «誠»՝ «ազնվությունն» է:
- ④ «传» - հնչում է «չուան», կիրառվում է ուսուցչոց ստացված գիտելիքը տարածելու, դրանում վարժվելու իմաստով:
- ⑤ «习» - նշված գաղափարագիրն այս ասուլյում տեղին է կիրառել նաև «վերանայել», «կրկնել» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.5 子曰：“道①千乘之国②，敬事③而信，节用而爱人④，使民以时⑤。”

Ուսուցիչն ասաց. «Կառավարելով հազար մարտակառք ունեցող տերությունը, ուշադիր եղիր տերության գործերին և վստահելի եղիր, խնայիր միջոցները և սիրիր պաշտոնյաներին, աշխատեցրու ժողովրդին ձիշտ ժամանակին»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Որպեսզի դեկավարես հազար մարտակառք մարտի դաշտ հանող տերությունը, պիտի խնամքով մոտենաս պետական գործերին, լինես վստահելի, խնայող և մարդասեր՝ չստիպելով մարդկանց օրնիբուն աշխատել»:

[Մեկնությունը]

- ① «道» - բառացի նշանակում է «ուղի», տվյալ ասուլյի մեջ կիրառվում է որպես բայ, ունի «կառավարել», «դեկավարել» իմաստները:
- ② «千乘之国» - «հազար մարտակառք ունեցող տերություն»:

Հնում՝ «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում քառածի մարտակառքերը լայնորեն կիրառվել են պատերազմներում և տերության ուժը համեմատական է եղել մարտակառքերի այն թվին, որ տիրակալը կարող էր դուրս բերել մարտադաշտ: «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանի սկզբում ոչ մի մեծ տերություն այդքան մարտակառ չուներ: Մասնավորապես՝ «Զույի նոթեր» աշխատության մեջ նշվում է, որ նշյալ ժամանակաշրջանի քանութերորդ տարվա մեջ քաղաքներից մեկի համար տեղի ունեցած ձակատամարտին Զինի իշխան Վենը կարողացել էր մարտի դաշտ դուրս բերել ընդամենը յոթ հարյուր մարտակառ: Սակայն այդ ժամանակաշրջանում պատերազմները հաճախակի էին, և հարձակվողներն ու պաշտպանվողները անընդհատ համալրում էին իրենց զինապաշարը: Երբեմն դաշնակիցները միավորում էին ուժեղ՝ բազմապատկերով մարտակառքերի թիվը, օրինակ՝ Շու Այանը նշում էր, որ Զինը Պինցյու տերության դեմ ձակատամարտերից մեկի ժամանակ (տես՝ «Զույի նոթեր»՝ Զատ իշխանի կառավարման տասներեքերորդ տարվա նկարագրությունը), մարտի դաշտ էր հանել չորս հազար մարտակառը: Հազար մարտակառ ունեցող տերությունը Կոնֆուցիոսի ժամանակներում մեծ չէր համարվում, և նույնիսկ Զիլուն նշում էր հետևյալը. «Հազար մարտակառ ունեցող տերությունը ենթարկվում է մեծ տերություններին»:

③ «敬事» - «敬»՝ «հարգանք» գաղափարագիրը հաճախ է գործածվել հնում՝ ծառայության և տերունական գործերի հանդեպ վերաբերմունքը նշելու համար, որպես կանոն՝ օգտագործվել է «事»՝ «գործ, քան» գաղափարագիր հետ:

④ «爱人» - հնում «人»՝ «մարդ» գաղափարագիրն ունեցել է երկու հիմնական իմաստ: Լայն իմաստով կիրառվել է մարդկանց և նրանց խմբերը նշելու համար, նեղ իմաստով՝ պաշտոնյաներին և ծառայողներին նշելու համար: Գրքի սկզբի գլուխներում «人» գաղափարագիրը կիրառվում է հիմնականում նեղ իմաստով, իսկ մարդկանց, ժողովրդին նշելու համար կիրառվում է «民» գաղափարագիրը:

Կոնֆուցիոս. Զրույցներ

⑤ «使民以时» - հնում մեծ կարևորություն է ունեցել հողագործությունը, հետևաբար՝ «աշխատեցրու ժողովրդին ձիշտ ժամանակին» արտահայտությունը նույն իմաստն ունի, ինչ Մենձի համանուն աշխատության «Լյանի Հուեյ արքան» գլխում «մի ստիպիր վարուցանք անել, եթք ժամանակը չէ» արտահայտությունը, հետևաբար ձիշտ կիճի բարգմանել ըստ դրա նշանակության, այլ ոչ թե բառացիորեն:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.6 子曰：“弟子①，入②则孝，出③则悌，谨④而信，泛爱众，而亲仁⑤。行有余力，则以学文。”

Ուսուցիչն ասաց. «Ներսում զավակները որոիական պատկառանք են դրսնորում, դրսում՝ եղբայրական սեր, զգոն են ու վստահելի, լի են սիրով բոլորի հանդեպ, սակայն մոտ են մարդկայնություն ունեցողներին։ Սրանց հետո մնացած ուժերը կարելի է ծախսել սովորելու վրա»։

[Փռխադրությունը]

Քոնձին ասաց. «Երիտասարդ սերունդը տանը հարգալից է ծնողների հանդեպ, տնից դուրս՝ հարգալից է ավագ եղբայրների հանդեպ, քչախոս է, ազնիվ ու վստահելի, բարի է և մոտ առաքինի մարդկանց։ Եթե այս ամենն անելուց հետո ուժեր են մնում՝ դա ծախսում են սովորելու վրա»։

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «弟子» - այս գաղափարագիրը կիրառվել է երկու իմաստով՝ «կրտսեր եղբայր» և «սան»։ Տվյալ ասույթի մեջ կիրառվել է առաջին իմաստով։

② «入», «出» - «ներսում», «դուրս»: «Ծեսերի գործի» «Ներքին կանոններ» գլխում նշվում է հետևյալը. «Պաշտոնյաների բարձր դասերի պատկանող հայր ու որդին ապրում են տարբեր տներում»: Տվյալ ասույթի մեջ «λ» գաղափարագիրը խորհրդանշում է հոր տունը:

③ «谨» - «զգոն», «ուշադիր», քչախոս մարդիկ նշվել են «谨» գաղափարագրով: Մանրամասների համար տես պարոն Յան Յուֆոյի «Էպիգրաֆիկա» աշխատության առաջին հատորը:

④ «仁» - «մարդկայնություն», նոյն իմաստն ունի, ինչ «仁人»՝ «մարդ լինել» արտահայտությունը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.7 子夏①曰：“贤贤易色②；事父母，能竭其力；事君，能致③其身；与朋友交，言而有信。虽曰未学，吾必谓之学矣。”

Զիսան ասաց. «Առաքինությունը տեսքից նշանակալի է. ծառայելով ծնողներին՝ անում է ուժերի ներածինը, ծառայելով տիրակալին՝ զրհաբերում է կյանքը, բարեկամների հետ ազնիվ է և ձշմարտախոս, և այնամ, նոյնիսկ եթե բոլորն ասեն, որ նա ուսալ մարդ չէ, ես կասեմ, որ նա է իսկական ուսալը»:

[Փոխադրությունը]

Զիսան ասաց. «Իր կնոջ մեջ նա գնահատում է համեստությունը, ոչ թե արտաքին գեղեցկությունը: Ծառայելով հորն ու մորը՝ նա անում է այն ամենն, ինչ հնարավոր է: Ծառայելով տիրակալին՝ նա կարող է չխնայել կյանքը: Հնկերների հետ նա ազնիվ է և ձշմարտախոս: Այսիսի մարդը, նոյնիսկ եթե ուսալ չինի, ես կհավաստեմ, որ նա ուսալ է»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «子夏» - Կոնֆուցիոսի աշակերտն էր՝ Բո տոհմից, Շան անունով, հայտնի՝ որպես Չի Ձիսլա: Կոնֆուցիոսից փոքր էր քառասունչորս տարով (ծնված՝ մըա. 507 թվականին, մահվան տարեթիվն անհայտ է):

② «贤 贤 易 色» - այս արտահայտության իմաստը հետևյալն է՝ «գերադասիր առարինությունը գեղեցիկ արտաքին տեսքից»: Այն բավականին հերիերուկ է: Այնուամենայնիվ՝ Չեն Ձյուֆանի, Սուն Սյանֆենի և այլոց աշխատություններում նշվում է, որ «ծնողների», «տիրակալի» և «ընկերների» հետ եղել է փոխհարաբերությունների մենահատուկ, որոշակի շրջանակ: Սակայն ստրկատիրական և ավատատիրական ժամանակաշրջաններում կարևորագույնն էին համարվում «ամուսին՝ կին» փոխհարաբերությունները, որպես մարդկային հարաբերությունների սկիզբ և տիրության հիմք: Այդ իսկ պատճառով ես գտնում եմ, որ տվյալ ասույթում «贤 贤 易 色» արտահայտությունը նպատակահարմար է կիրառել «ամուսին՝ կին» փոխհարաբերությունների կտրվածքով:

③ «致» - այս զարավարագիրը կիրառվել է «նվիրում» կամ «լրում» իմաստով, սակայն այս ասույթի մեջ նպատակահարմար է կիրառել՝ որպես «զոհաբերություն» կամ «անձնազոհություն»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1.8 子曰：“君子①不重，则不威；学则不固。主忠信②。无友不如己者③。过，则勿惮改。”

Ուսուցիչն ասաց. «Եթե ազնվայրը ծանրակշիռ չէ, հեղինակավոր չէ, ապա նրա գիտելիքը հիմնավոր չի լինի: Հավատարին է: Չունի ընկերներ, որոնք հավասար չեն իրեն: Այնուամենայնիվ՝ չի վախենում փոխվել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե ազնիվ մարդը լուրջ չէ և նրա վարքում վեհություն չկա, ապա նույնիսկ գրքեր ուսումնասիրելով՝ նա չի կարող համախմբել իր գիտելիքը: Պիտի կենտրոնանա հավատարմության և բարոյականության վրա: Ընկերություն չի անի նրանց հետ, ովքեր ցածր են իրենց: Սխալ գործելով՝ նա չի վախենում այն շոկել»:

[Մեկնությունը]

① «君子» - «ազնվայր». այս արտահայտությունն աշխատության մեջ շատ է հանդիպում, ուստի դադարեցնում ենք դրա մեկնությունը:

② «主忠信» - այս արտահայտությունը նոյնացվում է «բարոյական է» արտահայտության հետ:

③ «无友不如已者» - հնուց ի վեր այս արտահայտությունը տարբեր մեկնաբանություններ ունի, սակայն գերադասում ենք ներկայացնել այն բառացիորեն:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.9 曾子曰：“慎终①，追远②，民德归厚矣。”

Յենձին ասաց. «Սգալը և նախնիներին հիշատակելը ամրացնում է ժողովրդի առաքինությունը»:

[Փոխադրությունը]

Յենձին ասաց. «Ծնողների շիրիմների մասին հոգ տաճելը և նախնիների հիշատակը վառ պահելը ամրապնդում է ժողովրդի հավատարմությունն ու բարոյականությունը»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԼՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «慎终» - Զեն Սյուանի «Մելնություններում» նշվում է հետևյալը. «Ծանր է տանել ծերերի մահը»: «Ծերեր» ասելով՝ նկատի ունի ծնողներին: Հնում հատկապես կարևորվում էին ծնողների շիրմմներին հոգ տանելու ծեսերը:

② «追远» - շատ աղբյուրներ մեկնարանում են որպես «լիալատար անձնվիրություն», սակայն գերադասելի է պահպանել բառացի՝ «նախնիների հիշատակում» տարբերակը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.0 子禽①问于子贡②曰：“夫子③至于是邦也，必闻其政，求之与？抑与之与？”子贡曰：“夫子温、良、恭、俭、让以得之。夫子之求之也，其诸④异乎人之求之与？”

Զի Ցինը հարցրեց Զիգունին և ասաց. «Երբ տերը զայիս էր որևէ իշխանություն, նա ուզում էր իմանալ դրա կառավարման ձևը: Նա հարցնո՞ւմ էր դրա մասին, թե՛ նրան տեղեկացնում էին»:

Զիգունն ասաց. «Տերը մեղմ է, բարի, հարգալից և հանդուժող: Տերն իմանում է իր ուզածը: Տարբերվո՞ւմ է դա նրանից, ինչ ուզում են մարդիկ»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Զի Ցինը հարցրեց Զիգունին. «Ամեն անգամ, երբ ուսուցիչը ժամանում էր որևէ տերություն, նա պիտի իմանար տերունական գործերի մասին: Նա ինչ-որ մարդկանց հարցնո՞ւմ էր այդ մասին, թե՛ նրան պատմում էին»:

Զիգունն ասաց. «Ուսուցիչն իր մեղմությամբ, բարեսրտությամբ, հարգանքով և ազնվությամբ տրամադրում էր մարդկանց պատմել: Մի՞թե դա տարբերվում է նրանից, ինչպես վարվում են մարդիկ»:

[Մեկնությունը]

① «子禽» - Զեն Քանն է՝ հայտնի որպես Զի Ցին: Հաշվի առնելով «Զրոյցների»՝ Զի Զանի մասին ասույթների հատվածները՝ կարող ենք եզրակացնել, որ Զի Ցինը Կոնֆուցիոսի աշակերտներից չի եղել: «Չուննի սաների պատմագրություն» աշխատության մեջ ևս նման անվամբ սան չի հիշատակվում: Սակայն Զեն Սյուանի «Զրոյցների մեկնություն» և «Տաճգունի մասին» աշխատություններում հպանցիկ նշվում է նման սանի մասին՝ առանց հավել յալ տեղեկություն տալու: Յան Յունի «Բայ Չինի օրագրերում» նշվում է, որ Զի Ցինը «Չուննի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակված Քան Զին է, սակայն Զյան Չառլ յանի «Զրոյցների մեկնության» մեջ այդ տեսակետը հերքվում է:

② «子贡» - Կոնֆուցիոսի աշակերտն է, Գուանմու տոհմից, Ցի անունով, հայտնի որպես Զիգուն, Վեյ տերությունից, Կոնֆուցիոսից փոքր էր 31 տարով (ծնվել է մթա. 520 թվականին, մահվան տարեթիվն անհայտ է):

③ «夫子» - «տեր». Իին ժամանակներում պատվու տիտղոս էր, այդպես էին դիմում պետական աստիճանավորներին և գիտնականներին: Կոնֆուցիոսը Լու տերության ազնվական էր և սաները նրան դիմելիս հաձախ գրծածում էին «տեր» պատվամունք: Սակայն հետագայում նրան սկսեցին դիմել «ուսուցիչ» անունով: Այնպես որ, միանգամյան բնական է Կոնֆուցիոսին նման կերպ դիմելը:

④ «其諸» - «ուա տարրեր է», «տարրերվում է». ասույթում կիրառվում է անորոշ կերպով, նշելու համար հասարակության մեջ ընդունված որևէ վարքային ձև:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.1 子曰：“父在，观其①志；父没，观其①行②；三年③无改于父之道④，可谓孝矣。”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Հայրը կա՝ նա կատարում է կամքը, հայրը չկա՝ նա հետևում է վարքին, երեք տարի հոր ուղուն հետևելը կարելի է կոչել «որդիական պատկառանք»»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ հայրը ողջ է (այսինքն՝ որդու ինքնուրույն գործերու իրավունքը սահմանափակ է), պետք է հաշվի նատել նրա ցանկությունների հետ, երբ հայրը մահանում է, պետք է ուսումնասիրել նրա վարքը և հետևել դրան. տևական ժամանակ դա անելուց հետո մենք կարող ենք խոսել որդիական պատկառանքի մասին»:

[Մեկնությունը]

- ① «其» - «նրա». ասույթում նկատի ունի որդուն, ոչ թե հորը:
- ② «行» - բառացի՝ «գիծ», սակայն հնում կիրառվել է որպես «վարք», նաև՝ «անել», «կատարել», «գնալ», «վարվել», «վարքականուն»:
- ③ «三年» - «երեք տարի». հնում մարդիկ լայնորեն գործածել են այս արտահայտությունը՝ նշելու համար անորոշ, սակայն երկար տևականություն ունեցող որևէ ժամանակահատված:
- ④ «道» - «ուղի». հաճախ այն կիրառվել է ուղղակի իմաստով, երբեմն՝ բարին ու չարք, լավն ու վատը նշելու համար: Սակայն այս ասույթում կարելի է մեկնաբանել նաև որպես «լավ» կամ «խելամիտ», այսինքն՝ վարքին բնորոշ կողմեր:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻԱՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.2 有子曰：“礼之用，和①为贵。先王之道，斯为美；小大由之。有所不行②，知和而和，不以礼节之，亦不可行也。”

Յոուձին ասաց. «Ծեսերի կատարումը բերում է ներդաշնակության:

Հին արքաների ուղին գեղեցիկ էր: Մանր ու մեծ գործերը նրանք անում էին ծեսերի համաձայն: Պատահում էր անհնարինը, սակայն նրանք ներդաշնակում էին և հաջողում: Անհնար է հասնել ներդաշնակության առանց ծեսերը կատարելու»:

[Փոխադրությունը]

Յուլիան ասաց. «Ծիսակատարություններն արժենորում են ամեն ինչ: Հնում արքաները հիանալի կառավարում էին տերությունները՝ մանր ու մեծ գործերը հեշտությամբ հաջողելով ըստ ծեսերի: Երբ պատահում էին ամիրականալի գործեր, նրանք տարակարծության միջոցով հասնում էին ներդաշնակության և հնարավոր դարձնում անհնարինը: Իսկ դա անհնար է անել առանց ծիսակատարությունների»:

[Մեկնությունը]

① «和» ~ «ներդաշնակություն», «միասնություն»: «Ծեսերի գորի» «Վասն իմաստի» գլխում նշվում է հետևյալը. «Զայրույթը և վիշտը հետևանք են ծիսակատարությունների սխալ կատարման»: Պարոն Յան Յուֆուի «Զրույցների մեկնություններում» նշվում է. «Ծիսակատարությունները հիմքն են ամեն ինչ՝ բարենտության և զայրույթի, ուրախության և թախծի»: Այս գաղափարագրի նշանակությունը շատ մեկնություններ է ունեցել՝ «թեթևություն», «փափկություն», «հնագանդություն», «միասնություն»: Տվյալ ասույթի մեջ տեղին է կիրառել «տարակարծությամբ ներդաշնակություն» իմաստով:

② «有所不行» ~ «Եթե պատահում էր անհնարինը». Ակատի ունի պետական կառավարման համակարգում և ընդհանրապես կենցաղում ի հայտ եկող այն խնդիրները, որոնց լուծման համար չկան մշակված ուղիներ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.3 有子曰：“信近于义，言可复①也。恭近于礼，远②耻辱也。因③不失其亲，亦可宗④也。”

Յոռածին ասաց. «Եթե անկեղծությունդ մոտ է արդարությանը, կարելի է հետևել քո խոսքերին: Եթե պատկառանքդ մոտ է ծեսերին, զերծ կմնաս ամոթից: Հեմվերվ ծնողական զգացումը չկորցրածների վրա՝ կունենաս հուսալի հենարան»:

[Փոխադրությունը]

Յոռածին ասաց. «Եթե պատվիրանները, որոնց դու հետևում ես, արդար են, ապա այն, ինչ ասում ես՝ կկատարվի: Քանի դեռ քո վարվեցողությունն ու արտաքինը համապատասխան են ծեսերին, խայտառակ չես լինի: Մարդիկ, որոնք հաստատուն հարաբերություններ են ստեղծում, նույնպես հուսալի են»:

[Մեկնությունը]

① «复» - «կրկնել», «հետևել», «գնալ-գալ». «Չույի նորեր» աշխատությամ՝ Սի իշխանի տիրապետության իններորդ տարվան վերաբերող հատվածի մեջ նշվում է հետևյալը. «Ես խոսում էի իմ նախնիների հետ, մի՞թե պիտի ամաչեի, եթե հետևեի նրանց խոսքերին»: Պարոն Թուն Դիրեն նույնակա գտնում է, որ «Չույի նորերը» տվյալ ժամանակաշրջանի համար արժանահավատ աղբյուր է:

② «远» - հնչում է «յուան», տվյալ ասույթում օգտագործվում է որպես բայ՝ «մոտ լինել» իմաստով:

③ «因» - «որովհետև», «պատճառ». տվյալ ասույթում կիրառվում է «հենվել», «ունենալ որպես հենարան» իմաստով:

④ «宗» - ունեցել է «դպրոց», «աղանդ», «հիմնավորում», «հենարան», «վարք» նշանակությունները: Երբեմն կիրառվել է որպես «պատ-

Յան Բոնդունի փոխադրությունը եւ մեկնությունը

կառանքի» հոմանիշ, ինչը, կարծում ենք, անընդունելի է տվյալ ասուլիքի համար:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.4 子曰：“君子①食无求饱，居无求安，敏于事而慎于言，就有道而正②焉，可谓好学也已。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը ուտելիս բավականություն չի փնտրում, հարմարավետություն չի փնտրում, ուշադիր է գործերում և զգուշավոր խոսքերում, հետևում է արդարներին և շտկվում. նրա մասին կարող ենք ասել, որ սիրում է սովորել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը ուտելիս չի ցանկանում հագենալ, ապրուստի մեջ չի ձգտում հարմարավետության, ժրացան է ու ձկուն, խոսելիս զգուշավոր է, օրինակ է վերցնում արդար մարդկանցից. և այսպիսով կարող ենք ասել, որ նա ջանասեր է սովորելու մեջ»:

[Մեկնությունը]

① «君子» ~ «Ազնվայր» եզրույթը «Զրույցներում» ունի «պաշտոնյա», «բարոյական մարդ», «առարինի մարդ» նշանակությունները: Այս ասույթում ավելի նպատակահարմար է եզրույթը դիտարկել որպես «առարինի մարդ»:

② «正» ~ «Ուղիղ», «ձշմարիտ», «ձշգրիտ», «դրական»: Այս գաղափարագիրը «Զրույցներում» կիրառվում է բավական հաճախ: Որպես բայ կիրառվելու դեպքում՝ ունի «ուղղել», «շտկել» իմաստները: Երբեմն այս գաղափարագիրը կիրառվել է նաև «ձիշտ և սխալ», «ձեռքբերում և կորուստ» արտահայտություններում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.1.5 子贡曰：“贫而无谄，富而无骄，何如①？”

子曰：“可也；未若贫而乐②，富而好礼者也。”

子贡曰：“《诗》云‘如切如磋，如琢如磨③’，其斯之谓与？”

子曰：“赐④也，始可与言《诗》已矣，告诸往而知来者⑤。”

Զիգումն ասաց. «Աղքատ է, բայց շողոքորթ չէ, հարուստ է, բայց գոռող չէ, ինչ ասես»:

Ուսուցիչն ասաց. «Լավ է. բայց երբ աղքատը երջանիկ է, իսկ հարուստը հետևում է ծեսերին, դա ավելի լավ է»:

Զիգումն ասաց. «Երգերի գրքում» այդ մասին է ասվում. «Կտրում են և փայլեցնում փղոսկրի պես, հասում և կոկում են հասպիսի պես»:

Ուսուցիչն ասաց. «Շնորհալիք. Քեզ հետ կարող եմ խոսել «Երգերի գրքի» մասին: Քանզի երբ խոսում եմ անցյալի մասին, դու արդեն գիտես ապագան»:

[Փոխադրությունը]

Զիգումն ասաց. «Աղքատ, բայց ոչ շողոքորթ, հարուստ, բայց ոչ սնապարծ, ինչ կասես այդ մասին»:

Քունձին ասաց. «Շատ լավ է, բայց ավելի լավ է, երբ աղքատ լինելով՝ ազնիվ ես, հարուստ լինելով՝ համեստ ու բարեկիրթ»:

Զիգումն ասաց. «Ինչպես ասվում է «Երգերի գրքում»՝ «Եղիր մշակվող ոսկորների, եղջյուրների, փղոսկրի և հասպիսի պես՝ հատվիր և կոկվիր», այնպես չէ»:

Քունձին ասաց. «Կեցցեն: Այժմ քեզ հետ կարող եմ քննարկել «Երգերի գիրքը»: Քանզի ասում եմ քեզ մի բան, և դու արդեն գիտես, թե ինչի մասին է լինելու հետագա խոսքը»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «何如» - «ի՞նչ կասես». «Չրուցներում» այս արտահայտությունը կիրառվում է «ի՞նչ կասես այս մասին» իմաստով:

② «贫而乐» - «աղքատ և երջանիկ». Հուանքամը «乐»՝ «երջանիկ» գաղափարագիրը հոմանիշ էր համարում «道»՝ «ուղի» գաղափարագին: Իսկ Ձեն Սյուանի «Մեկնություններում» նշվում է. «Երջանկությունը լուրու վրա լինելու նշան է, աղքատության համար պեսք չէ տիրել»:

③ «如切如磋，如琢如磨» - հատվածը երկու անգամ հանդիպում է «Երգերի գրքի» «Վեյի քամին» և «Զարմանալի գետը» երգերում:

④ «赐» - «蒧»՝ «Շնորհալի». Զիգունի պատվանունը: Կոնֆուցիոսը սովորություն ուներ անուններ տալ իր սաներին:

⑤ «告诸往而知来者» - այս արտահայտությամբ Կոնֆուցիոսը ցույց է տալիս իր գոհունակությունն այն բանից, որ Զիգունն օրինակ է թերում «Երգերի գրքից», ինչը վկայում է վերջինիս ուսումնառության հաջողության մասին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 . 1 6 子曰：“不患人之不已知，患不知人也。”

Ուսուցիչն ասաց. «Չեմ վշտանում, որ մարդիկ չեն ձանաչում ինձ, վշտանում եմ, որ ինքս չեմ ձանաչում մարդկանց»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ մարդիկ չեն ձանաչում ինձ, ես չեմ տիրում, ինձ տիրեցնում է այն, որ ես չեմ ձանաչում մարդկանց»:

Գլուխ 2. Կառավարում Ընդամենը 24 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՍԻԱՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1 子曰：“为政以德，譬如北辰①居其所而众星共②之。”

Ուսուցիչն ասաց. «Կառավարելիս առաքինության վրա հենվելով՝ նմանվում ես Հյուսիսային աստղին, որը կանգնած է՝ շրջապատված մնացյալ աստղերով»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Եթե տերությունը կառավարելիս առաքինի ես, ապա նմանվում ես Բևեռային աստղին, որն անշարժ է, իսկ իր շուրջը պտտվում են մնացյալ աստղերը»:

[Մեկնությունը]

① «北辰» - «Բևեռային աստղ»: Հնում կարծում էին, որ Արեգակը և մյուս տեսանելի երկնային մարմինները շարժվում են, իսկ Բևեռային աստղն անշարժ է, և մնացած աստղերը պտտվում են նրա շուրջ: Մեր Խուանիս գետի միջին և ստորին հոսանքները գտնվում են հյուսիսային լայնության 36 աստիճանի վրա, և Հյուսիսային աստղը 36 աստիճանով բարձր է հորիզոննից: Կոնֆուցիոսը Հյուսիսային աստղը համարում էր անշարժ, թեև այն շարժվում է: Այն երկրագնդից 782 լուսային տարվա հեռավորության վրա է, այդ պատճառով էլ մարդիկ կարծում էին, որ այն անշարժ է:

② «共» - Ունի «ընդհանուր», «սովորական», «միասնական», եր-

թեմն նաև «կամար» նշանակությունները, սակայն այս ասուլյառում կիրառվել է «շրջապատել» իմաստով: Մասնավորապես «Զույի մեկնություններ» աշխատության երեսուներկուերորդ տարվա մասին պատումի մեջ հիշատակվում է հենց «կամար» իմաստով. «իշխանական դամբարանի փայտե կամար»:

ԿՈՆՖՈՒՅՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2 子曰：“《诗》三百①，一言以蔽之，曰‘思无邪②’。”

Ուսուցիչն ասաց. «Երգերը» երեք հարյուրն են, մի խոսքով՝ կարելի է ասել ամենը. «մեղսավոր մտքեր չկան»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երգերի գրքում» երեք հարյուր երգ կա, և եթե ամփոփենք դա մի նախադասության մեջ, կստացվի՝ «ազնվորեն մտածիր»:

[Մեկնությունը]

① «诗» 三百 ~ «Երգերը երեք հարյուրն են»: «Երգերի գրքում» կան երեք հարյուր հինգ երգեր, Կոնֆուցիոսի նշած «Երեք հարյուրը» պարզապես ընդհանրացում է:

② «思无邪» ~ «Մեղսավոր մտքեր չկան»: Այս արտահայտությունն ի սկզբանե կիրառվել է «Երգերի գրքի» «Զոն Լու տերությանը» հատվածում, որտեղ «思»՝ «մտածել» գաղափարագիրը անհասկանալի կիրառություն ուներ, սակայն Կոնֆուցիոսն այն մեջքերելով՝ օգտագործում է որպես «միտք», ինչը համատեքստից կտրված գաղափարական լուծում է: Յու Յու կամաց մասնաւորապես մեջքերելով՝ թույլուանի մասին» աշխատության մեջ նշվում է, որ վերոնշյալ գաղափարագրի նման կիրառությունը

Կոնֆուցիոս. Զրույցներ

կամայական է և կարող է չհամապատասխանել Կոնֆուցիոսի նախնական մտադրություններին, այսինքն՝ փոփոխության հեղինակ կարող էին լինել Կոնֆուցիոսի «Զրույցները» գրի առնող սաները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.3 子曰：“道①之以政，齐之以刑，民免②而无耻；道之以德，齐之以礼，有耻且格③。”

Ուսուցիչն ասաց. «Եթե կառավարե՞լ կիրառելով օրենքները և պատիժները, ժողովուրդը կխուսափի դրանցից և կկորցնի ամոթը: Եթե կառավարե՞լ կիրառելով առաքինությունն ու ծեսերը, ժողովուրդը ամոթ կունենա և օրինապահ կինի»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Օրենքները կիրառելով՝ դրդում են մարդկանց գործել, պատժելով՝ ուղղում են: Այսպես մարդիկ ժամանակավորապես հեռու են մնում մեղքերից, սակայն կորցնում են ամոթը: Եթե նրանց դրդում են գործել բարոյականությամբ, իսկ ուղղում են ձիշտ վարվեցողությամբ, ապա ժողովուրդը ոչ միայն ամոթ կունենա, այլև քաղաքակիրթ կլինի»:

[Մեկնությունը]

① «道» - «Ուղի» գաղափարագիրը այս ասույթում կիրառվում է «կառավարել», «ուղղորդել» իմաստով:

② «免» - Ցին հարստության ժամանակաշրջանից առաջ կիրառվել է միայն «ազատություն» իմաստով, սակայն հետագայում այն ձեռք է բերել «կանխել», «խուսափել», «փախչել», «արգելել» իմաստները,

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

մասնավորապես կիրառվել է «խուսափել պատժից», «ազատվել աղետներից» խմաստներով:

③ «格» - «Օրենք», «կանոն», «օրինաչափություն» խմաստներն են ունեցել: «Ծեսերի գրքում» նշվում է հետևյալը. «Եթե այր մարդուն ուսուցանում են առաջինությամբ. նա մոտենում է ծեսերին: Եթե նրան ուղղորդում են օրենքներով, նա փորձում է խուսափել պատժից»: Սա Կոնֆուցիոսի ասույթին վերաբերող ամենահին մեկնարանությունն է, ինչը բավականին արժանահավատ է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.4 子曰：“吾十有①五而志于学，三十而立②，四十而不惑③，五十而知天命④，六十而耳顺⑤，七十而从心所欲，不逾矩⑥。”

Ուսուցիչն ասաց. «Տասնինգում ես ցանկացա սովորել, երեսունում՝ ոտքի կամգնեցի, քառասունում՝ սկսեցի չկասկածել, հիսունում՝ իմացա Երկնքի կամքը, վաթսունում՝ հնազանդվեցի, յոթանասունում՝ անում էի սրտիս թելադրածը՝ չխախտելով օրենքը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես տասնինգ տարեկան էի և ցանկացա սովորել, երեսուն տարեկանում իմացա պատշաճության կանոնները և խոսում ու գործում էի անշեղորեն, քառասուն տարեկանում վարպետացա իմ գիտելիքներում, հիսուն տարեկանում ըմբռնեցի Երկնքի կամքը, վաթսուն տարեկանում սկսեցի տարրերել ձշմարիտը ստից, երբ խոսում էին ուրիշները, այժմ ես յոթանասուն տարեկան եմ և կարող եմ անել սրտիս ուզածը՝ առանց խախտելու կանոնները»:

[Մեկնությունը]

① «有» ~ «Ունենալ», «գոյություն ունենալ», «լինել» իմաստներն ունի գաղափարագիրը, սակայն հնում կիրառվել է նաև մեծ ու փոքր թվերը կապակցելու համար, «又»՝ «և / ու» գաղափարագիրի փոխարեն:

② «立» ~ «կանգնել», «հենվել»: «Չրուցների» «Ծայրոյի մասին» գլխում հիշատակվում է «立于礼՝ «ի յու ի», որտեղ առաջին «ին» ունի կանգնել իմաստը, երկրորդը՝ «ծես», «օրենք» կամ «կանոն» իմաստները: Նման կիրառում առկա է նաև «Չրուցների» «Զիշի մասին» գլխում, որ նշվում է հետևյալը. «Կանոնները իմանալով կարող ես ամուր կանգնել ոտքերիդ»: «立» գաղափարագիրը ասույթում կիրառվում է հենց «կանգնել» իմաստով:

③ «不惑» ~ «Առանց կասկածների», «ինքնավստահ»: «Չրուցների» «Ուստիշը հազվադեպ էր....» և «Սյանը հարցրեց....» գլուխներում նշվում է նոյն արտահայտությունը՝ «գիտելիքին պետք չէ կասկածել», ինչը նշանակում է՝ ունենալ իմացության և վարժվածության այն մակարդակը, որն ապահովում է անհրաժեշտ ինքնավստահություն:

④ «天命» ~ «Երկնքի կամք» կամ «ձակատագիր»: Կոնֆուցիոսը ձակատագրապաշտ չէր, սակայն այստեղ խոսում էր «Երկնքի կամքի» մասին: Այս արտահայտությունը բազմաթիվ տարածայնությունների առիթ է հանդիսացել, և հիմա էլ այն գերադասելի է թողնել ուղղակի իր բառացի իմաստով:

⑤ «耳顺» ~ Այս բառակապակցությունը խրթին է և բազմաթիվ թարգմանիչներ իրենց տարբերակներն են առաջարկել, սակայն դժվար է որոշել, թե ո՞րն է արժանահավատ: Սկզբնական իմաստը՝ «հետևել», «հնագանդ (սոր) լինել»:

⑥ «从心所欲，不逾矩» ~ «անում էի սրտիս թելադրածը՝ չխախտելով օրենքը»: «从» գաղափարագիրը կիրառվել է «հետևել», «մասնակցել», «վարվել», «անել» և մի շարք այլ իմաստներով: Նշված ասույթում ունի «կարող եմ թույլ տալ ինձ» իմաստը, տեղին է մեկնա-

բանել հենց այդ կերպ: Լու Զյունյուանի աշխատության մեջ նշվում է հետևյալը՝ «Քունձին յոթանասուն տարեկան էր և հոգսեր չուներ», հետևաբար կարելի է վերոնշյալ արտահայտությունը մեկնաբանել նաև՝ որպես «անհոգ լինել»: Իսկ «Չույնի մեկնություններ» աշխատության մեջ առկա է նաև «տրվել ցանկություններին» մեկնաբանությունը, ինչը, սակայն, բացասական հնչերանգ ունի և Կոնֆուցիոսի նկատմամբ կարելի է կիրառել վերապահումներով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

孟懿子①问孝。子曰：“无违②。”

樊迟③御，子告之曰：“孟孙问孝于我，我对曰，无违。”樊迟曰：“何谓也？”

子曰：“生，事之以礼④；死，葬之以礼，祭之以礼。”

Մեն Իձին հարցրեց որդիական պատկառանքի մասին: Ուսուցիչն ասաց.

- Մի՞ խախտիք:

Ֆան Զին կառքն էր վարում, երբ Ուսուցիչն ասաց.

- Մեն Սունը հարցրեց պատկառանքի մասին: Ես պատասխանեցի՝ «Մի խախտիք»:

Ֆան Զին հարցրեց.

- Ինչպես հասկանալ դա:

Ուսուցիչն ասաց.

- Կենդանության օրոք ծառայել ըստ ծեսերի: Մահից հետո՝ հողարկավորել ըստ ծեսերի, և զոհաբերություններ անել ըստ ծեսերի:

[Փոխադրությունը]

Մեն Իձին Քունձիին հարցրեց,թե ի՞նչ է որդիական պատկառանքը: Քունձին ասաց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Մի խախտիր ծիսակարգը:
- Հետո, երբ ֆան Չին կառքն էր վարում, որի մեջ Քունձին էր, նա ասաց.
- Մեն Սունը հարցրեց ինձ, թե ի՞նչ է որդիական պատկառանքը: Ես ասացի նրան՝ «Մի խախտիր ծիսակարգը»:
- Ֆան Չին հարցեց.
- Ի՞նչ է նշանակում այդ արտահայտությունը:
- Քունձին ասաց.
- Ծնողների կենդանության ժամանակ պետք է նրանց ծառայել ծեսերի համաձայն: Ծնողների մահից հետո պետք է նրանց հույսարկավորել ծեսերի համաձայն և զոհաբերություններ մատուցել՝ ծեսերի համաձայն:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆ]

① «孟懿子» - Մեն Իձին Լու տերության երեք զիխավոր պետական պաշտոնյաներից մեկն էր, Սուն տոհմից, Հեծի ամունով: «懿»՝ «ազնիվ» նա անվանվեց հետմահու: Նա Մեն Սյունձիի ծոռն էր: «Զույի մեկնություններ» աշխատությունում, Զառ իշխանի կառավարման յոթերորդ տարվա նկարագրության մեջ նշվում էր, որ Մեն Իձին ցանկություն էր հայտնել աշակերտել Կոնֆուցիոսին:

② «无违» - «չխախտել»: Հուան Շխանի «Զրույցների» մեկնություն՝ «չխախտության մեջ նշվում է հետևյալը. «Զույի մեկնությունների» Հուան իշխանի կառավարման երկրորդ տարվա մասին հատվածում նշվում են «առաքինությունն է խախտվել» և «կործանվել է բարոյականությունը», «օրենքը խախտելով՝ կվորցնես առաքինությունդ» արտահայտությունները: Այսինքն՝ հնում օրինախախտը համարվում էր անբարդական»: Այդ պատճառով էլ ես «违»՝ «խախտել» գաղափարագրի փոխարեն կիրառել եմ «违礼»՝ «խախտել ծեսերը (ծիսակարգը)» արտահայտությունը:

③ «樊迟» - Ֆան Զի. Կոնֆուցիոսի սանն էր, Սյու անունով, Կոնֆուցիոսից փոքր էր քառասունվեց տարով, թեև «Չուննիի սամերի պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ նա փոքր էր երեսունվեց տարով: Կա տեսակետ, համաձայն որի՝ հնում «երեք» և «չորս» գաղափարագրերը նմանատիպ գրություն ունեին, հենց դա էլ տարակարծությունների առիթ է տալիս:

④ «生，事之以礼» - «Կենդանության օրոք ծառայել ըստ ծեսերի»: «生»՝ «կյանք», «կենդանություն» և հաջորդ արտահայտության մեջ առկա «死»՝ «մահ», «մահանալ» գաղափարագրերը կիրառվել են կոնկրետ ժամանակահատված նշելու համար: Հնում ծիսակարգերը տարբեր էին կայսեր, իշխանների, պաշտոնյաների, ուսուլ մարդկանց և հասարակ մարդկանց համար: Լու տերությունում երեք տոհմի ներկայացուցիչներ էին զբաղեցնում պետական պաշտոնները, սակայն նրանք նաև արտոնություն ունեին իշխանական և երեմն նույնիսկ կայսերական ծիսակարգերով շարժվելու: Դա ցավակի երևույթ էր Կոնֆուցիոսի համար, և իր պատասխանով նա փորձում է ցույց տալ դա:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.6 孟武伯①问孝。子曰：“父母唯其②疾之忧。”

Մեն Ուրոն հարցրեց որդիական պատկառանքի մասին: Ուսուցիչն ասաց.

- Ծնողներին մտահոգում է միայն նրանց հիվանդությունը:

[Փոխադրությունը]

Մեն Ուրոն Քունձիին հարցրեց, թե ի՞նչ է որդիական պատկառանքը: Քունձին ասաց.

- Հայրդ ու մայրդ մտահոգվում են միայն քո հիվանդությամբ:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Մեկնությունը]

① «孟武伯» - Մեն Ուբո. Մեն Իձիի որդին էր, հետմահու ստացել էր «武»՝ «մարտական», «խիզախ» պատվանունը:

② «其» - Երդորդ դեմքը ցուց տվող դերանուն է, համարժեք է «նրա» և «նրանց» դերանուններին: Ասույթում անորոշ է, թե ում է վերաբերում «նրանցը»՝ ծնողներին, թե՝ որդիներին: Դրա մեկնության երկու մոտեցում կա: Վաճ Չունը «Քունձիի «Քրուցների» 18 մեկնաբանություն» աշխատության մեջ նշում է. «Ուբոն խիստ անհանգստանում էր նրանց առողջությամբ»: «Խուայնանի ուսուցիչներ» աշխատության մեջ Լիմպունը նշում է հետևյալը. «Նա, ով մտահոգվում է իր ծնողների առողջության համար, կարող է բժշկել նրանց»: Իսկ Գառ Յուն նշում է հետևյալը. «Ծերերն իրենք են մտածում իրենց հիվանդությունների մասին»: Նկատելի է, որ Վաճ Չունը և Գառ Յունը կարծում են, որ «其» գաղափարագիրը խորհրդանշում է ծնողներին: Սակայն Մա Ժունը ասում է հետևյալը. «Սխալ է խոսել որդիական պատկառանքի մասին, եթե մտահոգվում ես միայն ծնողների հիվանդություններով»: Հետևաբար՝ տեղին է կիրառել վերոնշյալ դերանունը որդիներին նշելու համար:

ԿՈՆՖՈՒՅՈՒՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.7 子游①问孝。子曰：“今之孝者，是谓能养②。至于③犬马，皆能有养④；不敬，何以别乎？”

Զիյոնուն հարցրեց որդիական պատկառանքի մասին: Ուսուցիչն ասաց.

- Հիմա «որդիական պատկառանք» են անվանում այն, որ կերակրում են ծնողներին: Ինչպես և կերակրում են շներին ու ձիերին: Ի՞նչ տարբերություն, եթե դա արվում է առանց ծնողների նկատմամբ խորը հարգանքի:

[Փոխադրությունը]

Զիյուն հարցրեց, թե ինչ է որդիական պատկառանքը: Քունձին ասաց.

- Այժմ շատերն են «որդիական պատկառանք» ասելով հասկանում իրենց հորն ու մորը կերակրելը: Հենց այդպես էլ կերակրում են շներին ու ձիերին: Եթե դու չես հարգում ծնողներիդ, ինչպես կարող ես տարբերել նրանց կերակրելը շներին ու ձիերին կերակրելուց:

[Մեկնությունը]

① «*子游*» - Զիյուն. Կոնֆուցիոսի սանն է, Յան տոհմից, Յան անունով, մականունը՝ Յոու, Ու տերության բնակիչ, Կոնֆուցիոսից փոքր էր 45 տարով:

② «*养*» - «*աձեցնել*», «*մեծացնել*», «*օժանդակել*»: Այս ասույթում կիրառելի է նաև «կերակրել» իմաստով:

③ «*至于*» - Ունի «ինչ վերաբերում է», «ինչպես և...», «ինց այդպես», «նույնը՝ ինչ...» և մի շարք այլ իմաստներ: Զան Սյանի «Բանաստեղծությունների և ասույթների մեկնություններ» աշխատության մեջ նշյալ գաղափարագիրը կիրառվում է նաև «ինչպես», «նույնիսկ» և «ուղղակի» իմաստներով: Նշված ասույթում կիրառված է «ինչպես և» իմաստով, ինչը հանդիպում է միայն մինչև Ցին հարատության ժամանակաշրջանը ստեղծված գրական աշխատություններում:

④ «*至于犬马，皆能有养*» - «Ինչպես և կերակրում են շներին ու ձիերին». այս արտահայտությունը միշտ էլ տարածայնությունների առիթ է տվել: Որոշ մասնագետներ մեկնաբանել են այն որպես «շներն ու ձիերը ծառայում են մարդկանց», մյուսները՝ «շներն ու ձիերը ևս հոգ են տանում իրենց ծնողների մասին»: Լյու Բառնանը նույնիսկ համարում էր, որ շներն ու ձիերը այստեղ գուտ փոխաբերական և խորհրդանշական բնույթ ունեն, սակայն նման փոխաբերությունները հատուկ չեն «Զրույցների» ոճին:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.8 子夏问孝。子曰：“色难①。有事，弟子②服其劳；有酒食③，先生馔④，曾⑤是以孝乎？”

Զիսյան հարցրեց որդիական պատկառանքի մասին։ Քունձին ասաց.

- Դժվար է ամենը։ Ի՞նչ որդիական պատկառանք, եթք որդիները օրնիբուն բանում են, իսկ ծնողները միայն ուտում են և խմում։

[Փոխադրությունը]

Զիսյան հարցրեց, թե ի՞նչ է որդիական պատկառանքը։ Քունձին ասաց.

- Երիտասարդների համար բարդ է մշտապես ուրախ երևալ ծնողներին։ Նրանք անընդհատ աշխատում են, իսկ տարեցները ուտում են ու խմում. միայն չասես, թե դա է որդիական պատկառանքը։

[Մեկնությունը]

① «色难» - Բառացի՝ «բարդ է երևում», ասույթի համատեքստում նպատակահարմար է կիրառել «բարդ է ամենը» իմաստով։ Նկատի ունի, որ որդիական պատկառանքը ցույց տալը բարդ ու բազմաբաղադրիչ երևույթ է։ «Ծեսերի գրքի» զոհաբերություններին վերաբերող գլխում նշվում է հետևյալը. «Եթե կա որդիական պատկառանք, կա նաև ներդաշնակություն, եթե կա ներդաշնակություն, կա նաև երջանկություն, եթե կա երջանկություն, կա նաև բարեկրթություն»։ Ուշ Հան ժամանակաշրջանի Բան Սյանը և Մա Ժունը գտնում էին, որ «色难» բառակապակցությունն ավելի շատ ունի «դժվար է ծառայել ծնողներին» իմաստը, սակայն ասույթի համատեքստին բնորոշ է «դժվար է պատկառանք ցույց տալ» տարրերակը։

② «弟子, 先生» - Բառացի՝ «կրտսերներ, ավագներ», սակայն ասույթում ունի «որդիներ, ծնողներ» իմաստը։

Յան Բոհյունի փոխադրությունը և մեկնությունը

③ «食» - Հնում ունեցել է «ուտել», «կերակրել», «սնել» իմաստները: Արտասանվել է «սի», այժմ՝ «շի»:

④ «饌» - Հնչում է «ջուան», ունի «ուտելիք», «նրբախորտիկ» իմաստները: Հնում նաև այդպես են անվանել ծիսակատարությունների ժամանակ զոհաբերվող մրերքները:

⑤ «曾» - Հնչում է «ցեն», ունի «մի անգամ», «երբեկ», «նախկինում» իմաստները, սակայն ասույթում ընդամենը անցյալը որոշակի դարձնող մասնիկ է:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.9 子曰：吾与回①言终日，不违，如愚。退而省其私②，亦足以发，回也不愚。”

Ուսուցիչն ասաց. «Ողջ օրը խոսում էի Հուեյի հետ, նա ոչինչ չասաց իիմարի պես: Ետ գնալով՝ նա մտորում էր միայնության մեջ, և ես հասկացա, որ Հուեյն ամենսին էլ հիմար չէ»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ամբողջ օրը ես սովորեցնում էի, իսկ Յան Հուեյը իիմարի պես ոչ մի հարց չտվեց: Հետո նա սկսեց ինքնուրույն սովորել ու վարժվել, և մենք հասկացանք, որ Յան Հուեյը բոլորովին հիմար չէ»:

[Մեկնությունը]

① «回» - Հուեյ. Կոնֆուցիոսի ամենաընդունակ սաներից էր, հայտնի որպես Յան Հուեյ, Լու Տերության հպատակ էր, ուներ գեղջկական ծագում: Կոնֆուցիոսից փոքր էր երեսուն տարով, թեև «Զուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակվում է քառասուն տարով փոքր լինելը. ապրել է մթա. 511-480 թվականներին:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

② «退而省其私» - «Ետ գնալով՝ նա մտորում էր միայնության մեջ». Զու Սին իր «Մեկնաբանություններում» նման կերպ է բացատրում այս արտահայտությունը. «Քունձին միայնակ է թողնում նրան, որպեսզի նա մտորի առանձին, և հետևելով նրա կենսակերպին՝ հասկանում է, որ նրա լուր մտորումները լուրջ հիմք են վարպետանալու համար»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2 . 1 0 子曰：“视其所以①，观其所由②，察其所安③。人焉廋哉④？人焉廋哉？”

Ուսուցիչն ասաց. «Նայիր նրա արարքներին, հասկացիր դրանց պատճառները, իմացիր, թե ինչն է հանգստացնում նրան: Կկարողանա՞ն նա թաքցնել իր բնույթը: Կկարողանա՞ն նա թաքցնել իր բնույթը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հետևիր մարդու վարքին, հասկացիր, թե ինչ միշտցներով է նա հասնում իր նպատակներին, իմացիր նրա տրամադրությունը և կիմանաս, թե ով է նա: Այդ մարդն ինչպես կկարողանա թաքցնել իր էությունը: Այդ մարդն ինչպես կկարողանա թաքցնել իր էությունը»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «所以» - Բառացի՝ «որպես արդյունք», «հետևաբար», «այնպես որ»: «以» գաղափարագիրը երբեմն կիրառվել է «գործել» և «վարվել» իմաստներով:

② «所由»- «由» գաղափարագիրը կիրառվել է «պատճառ» իմաստով, սակայն ես նպատակահարմար եմ գտել փոխադրել բնագրից՝ որպես «նպատակներին հասնելու միշտցներ»:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

③ «所安» - «安» գաղափարագիրը կիրառվել է «հանգիստ», «խաղաղ», «բավարարվել» իմաստներով:

④ «人焉廋哉» - Արտահայտության բառացի նշանակությունն է՝ «Որտե՞ղ կարող է թաքնվել մարդը»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.1 子曰：“温故而知新①，可以为师矣。”

Ուսուցիչն ասաց. «Ով հնում վարժվելով սովորում է նորը, կարող է ուսուցիչ դառնալ»:

[Փոխադրությունը]

Քոնֆուցիան ասաց. «Եթե իին զիտելիքն ուսումնասիրելու ընթացքում դու նոր փորձ ես ձեռք բերում և նոր զիտելիք, ապա դու կարող ես դառնալ ուսուցիչ»:

[Մեկնությունը]

① «溫 故 而 知 新» - «Ով հնում վարժվելով սովորում է նորը». Հուանքանը իր «Ճշմարտի մեկնություն» աշխատության մեջ նշում է, որ «հնում վարժվելը» նոյն իմաստն ունի, ինչ «ամիսների ընթացքում յուրացրածը չմոռանալը»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.2 子曰：“君子不器①。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը գործիք չէ»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը չի կարող գործիք լինել»:

[Մեկնությունը]

① «君子不器» - «Ազնվայրը գործիք չէ»։ Ինում գիտելիքների շրջանակը նեղ էր, և Կոնֆուցիոսը գտնում էր, որ այն պետք է հասանելի լինի բոլորին։ Կոնֆուցիոսին նույնիսկ մեղադրում էին «առանց փառքի սովորելու» համար, ինչը նշանակում էր, որ նա սովորելով չի ձգտել իշխանության, նյութական բարեկեցության և փառքի։ Հնում ուսյալ լինելը ձանապարհ էր դեպի պետական պաշտոններ և արքունի բարձր դիրք, սակայն Կոնֆուցիոսը միշտ համարում էր, որ «ազնվայրը գործիք չէ», որովհետև ուսյալ մարդը կարող էր օգտագործվել վերադասի կողմից ամենատարբեր նպատակներով։

ԿՈՆՖՈՒՅԻ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.3 子贡问君子。子曰：“先行其言而后从之。”

Զիգունը հարցրեց ազնվայրի մասին։ Ուսուցիչն ասաց.
- Նա սկզբից գործում է, հետո՝ խոսում։

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց, թե ինչպիսի՞ն է ազնիվ մարդը։ Քունձին ասաց.
- Եթե ուզում ես ինչ-որ բան անելու մասին խոսել, սկզբից արա դա, հետո խոսիր։

ԿՈՆՖՈՒՅԻ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

子曰：“君子周而不比①，小人比而不周。”

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը միավորում է առանց շահի, նվաստը շահ է փնտրում առանց միավորման»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը նա է, ով միավորում է բոլորին և դավեր չի նյութում, իսկ նվաստը դավեր է նյութում՝ տարանջատելով բոլորին»:

[Մեկնությունը]

① «周...比» ~ «周» գաղափարագիրն այս ասույթում կիրառվել է «միավորել», «համախմբել» իմաստներով. նկատի է առնվում գաղափարական համակիրներին միավորելը, իսկ «比» գաղափարագիրը կիրառվում է «շահ» իմաստով, նկատի է առնվում ժամանակավոր շահի շուրջ միաբանվելը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.5 子曰：“学而不思则罔①，思而不学则殆②。”

Ուսուցիչն ասաց. «Սովորելն առանց մտածելու մոլորեցնող է, մտածելն առանց սովորելու՝ վտանգավոր»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե դու ուղղակի գրքեր ես սերտում առանց մտորելու, դու կխաբվես, եթե մտորում ես առանց կարդալու՝ վստահության պակաս կունենաս»:

[Մեկնությունը]

① «罔» ~ «Խաբել», «խարուսիկ», «մոլորեցնել». ասույթում ունի

Կոնֆուցիոս. Զրույցներ

«կեղծ», «անիմաստ», «անօգուտ» իմաստները: «Սովորելն առանց մտածելու» խաբուսիկ է. նույնաբովանդակ մի միտք էլ նշում էր Մենձին իր համանուն աշխատության «Ամենն իմ մտքում» գլխում. «Գրքեր սերտելը անիմաստ է առանց դրանց շուրջ խորհրդածելու»:

② «殆» - «Վտանգ», «Վտանգավոր», «Վնասակար». «Զրույցներում» «殆» գաղափարագիրը, բացի նշված իմաստներից, ունի նաև երկրորդ՝ «կասկածելի» իմաստը: Երկու իմաստներն էլ կիրառելի են: Եվ «罔», և «殆» գաղափարագրերը հին աշխատություններում շատ էին կիրառվում, մասնավորապես «Երգերի գրքում» առկա են հետևյալ տողերը. «Ազնվայրին նախանձելն անիմաստ է, նվաստներն են Վտանգ սիռում»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2 . 1 6 子曰：“攻①乎异端②，斯③害也已④。”

Ուսուցիչն ասաց. «Այլախոհության համար հարձակվելը կործանարար է»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Այլոց սխալ մտքերը քննադատելը Վտանգավոր է, քանզի տանում է դեպի կործանում»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «攻» - «Հարձակվել», «գործել», «մեղադրել». «Զրույցներում» նշված գաղափարագիրը կիրառվում է չորս անգամ, և բոլոր դեպքերում էլ՝ «հարձակվել» իմաստով: Այս ասույթը մեկնելիս նոյնպես նպատակահարմար է պահպանել այդ իմաստը. «Այլախոհության համար հարձակվելը» կիրառելի է և պետության տեսանկյունից, և հասա-

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

բակության, քանզի պետությունը հարձակվելով՝ կարող է ոչնչացնել այլախոհներին, հերձվածողներին, գաղափարական ընդդիմադիրներին: Որոշ մասնագետներ մեկնաբանում են ասույթը՝ որպես «օտար գաղափարներով տարվելը կործանարար է»:

② «*异端*» - «այլախոհություն», «հերետիկոսություն». Կոնֆուցիոսի ժամանակ տարբեր գաղափարական հոսանքներ և վարդապետություններ չկային, այդ պատճառով էլ տեղին չէ կիրառել «տարբեր ուսմունքներ» եզրույթը: Հետևաբար՝ ասույթը փոխադրելիս կիրառել եմ «սխալ մտքեր» բառակապակցությունը:

③ «*斯*» - «սա». ասույթում ընդհանրացնող բառի իմաստ ունի:

④ «*已*» - Այս գաղափարագիրը նպատակահարմար է դիտարկել որպես բայ՝ «կործանել, ոչնչացնել» իմաստով: Այս ասույթն ամենավիճահարույցներից է «Զրույցներում»:

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.7 子曰：“由①！诲女知之乎！知之为知之，不知为不知，是知也②。”

Ուսուցիչն ասաց. «Յոռու: Կսովորեցնեմ, թե ինչ է գիտելիքը: Եթե գիտես, ուրեմն գիտես, եթե չգիտես, ուրեմն չգիտես, սա է գիտելիքը»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Յոռու: Կսովորեցնեմ քեզ, թե ինչպես տարբերես իմացությունը չիմացությունից: Իմանալն իմանալ է, չիմանալը՝ չիմանալ: Սա է ողջ իմաստությունը»:

[Մեկնությունը]

① «*由*» - Յոռու: Կոնֆուցիոսի սամն էր, Զուն Յոռու անունով, Լու տերության հպատակ, ապրել է մթա. 542-480 թվականներին:

Կոնֆուցիոն. Զրույցներ

② «是知也» - «սա է գիտելիքը» կամ «սա ևս գիտելիք է». նման մի հատված առկա է նաև Սյունձիի «Հորդոր ուսանելու» աշխատության մեջ, ուր նշվում է հետևյալը. «Եթե գիտես, թե ինչ ես ասում, ուրեմն նաև գիտես, թե ինչ ես անելու»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.8 子张①学干禄②。子曰：“多闻阙疑，慎言其余，则寡尤；多见阙殆③，慎行其余，则寡悔。言寡尤，行④寡悔，禄在其中矣。”

Զիջանը սովորում էր պետական պաշտոն ստանալու համար: Ուսուցիչն ասաց. «Ավելի շատ լսիր՝ ըմբռնելու համար այն, ինչ կասկածելի է, զգույշ խոսիր մնացյալի մասին, այնժամ բողոքներ քիչ կլինեն: Ավելի շատ շուրջը նայիր՝ շրջանցելու համար վտանգավորը, մնացյալում շրջահայաց եղիր՝ զղումներ չեն լինի: Երբ խոսքերդ քիչ բողոքներ կառաջացնեն, իսկ արարքներդ չեն ստիպի զղալ՝ այնժամ պաշտոն կստանաս»:

[Փոխադրությունը]

Զիջանը հարցրեց Քունձիին, թե ինչպես կարող է պետական պաշտոնյա դառնալ: Քունձին ասաց. «Ուշադիր լսիր, որպեսզի հասկանաս այն, ինչ կասկածի տեղիք է տալիս: Այնժամ վստահ կլինեն և սխալներդ քիչ կլինեն: Ուշադիր նայիր հասկանալու համար, թե ինչն է վտանգավոր, խելամիտ գործիք և զղումների կարիք չի լինի: Երբ սխալներդ քիչ լինեն և արարքներդ զղալու տեղիք չեն տա, այնժամ կարող ես պետական պաշտոնյա դառնալ»:

[Մեկնությունը]

① «子张» - Զիջան. Կոնֆուցիոնի սանն էր, Սուն տոհմից, Զեն

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

տերության հպատակ, Կոնֆուցիոսից փոքր էր 48 տարով (ծնված՝ մթա. 503 թվականին):

② «干禄» ~ «աշխատել պետական ռոձիկի համար». իին օրերում պետական աստիճան ստանալու համար հատուկ քննություններ էին հանձնում, հավանաբար՝ Զիջանը սովորում էր դրանք հաջողությամբ հանձնելու համար:

③ «阙殆» ~ «վտանգավոր». ասույթում գրեթե նույն իմաստն ունի, ինչ «阙疑»՝ «կասկածելի», «թերահավատ» բառակապակցությունը:

④ «行» ~ «անել», «կատարել», «վարք». ասույթում կիրառվում է «արարներ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.1.9 哀公①问曰：“何为则民服？”孔子对曰②：“举直错诸枉③，则民服；举枉错诸直，则民不服。”

Իշխան Այլ հարցրեց.

- Ի՞նչ անել, որ ժողովուրդը հնազանդ լինի:

Ուսուցիչը պատասխանեց.

- Եթե բարձրացնես շիտակներին՝ ծոերից վեր դասելով, ժողովուրդը հնազանդ կլինի: Եթե բարձրացնես ծոերին՝ շիտակներից վեր դասելով, ժողովուրդը չի հնազանդվի:

[Փոխադրությունը]

Լու տերության իշխան Այլ հարցրեց.

- Ի՞նչ կարելի է անել մարդկանց հնազանդեցնելու համար:

Քունձին պատասխանեց.

- Առաջխաղացման տար արդարներին՝ անարդարներից վեր դասելով, այնժամ մարդիկ հնազանդ կլինեն: Եթե անարդարներին առաջ-

Կոնֆուցիոն. Զրոյցներ

խաղացման տանես՝ արդարներից վեր դասելով, մարդիկ չեն հնագանդվի:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆ]

① «哀公» - Այգուն՝ իշխան Այ. Լու տերության տիրակալը՝ Զիտումից, Զյան անունով, Դինգունի որդին, զահը Ժառանգել է հորից, իշխել է 27 տարի: Նա «Այ»՝ «Տիուր» անվանվեց հետմահու:

② «对曰» - «ասել», «պատասխանել». գրառման այս ձևը հասուլ է «Չրուցների» ոձին, երբ զրուցակիցների մեջ առկա է ենթակայության կարգ: Բոլոր այն դեպքերում, երբ Կոնֆուցիոնը դիմում է իշխաններին, կիրառվում է գրառման այս ձևը:

③ «错诸枉» - «ծոերից վեր դասելով». որոշ մասնագետներ արտահայտությունը մեկնաբանում են՝ որպես «արտաքիր սխալ մարդկանց»: Սակայն Սուն Զիհեն՝ ով ապրում էր Հարավային Սուն հարստության օրոք, առաջ քաշեց «ծոերից վեր դասելով» տարբերակը: Վաճ Զինլինը և Զու Իդունը ևս գտնում են, որ առավել ձգգրիտ է Սուն Զիհեյի տարբերակը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2.0 季康子①问：“使民敬、忠以②劝，如之何？”子曰：“临之以庄，则敬；孝慈，则忠；举善而教不能，则劝。”

Զի Քանձին հարցուեց.

- Ի՞նչ ամել, որպեսզի մարդիկ լինեն հարգալից, հավատարիմ ու նվիրված:

Ուսուցիչն ասաց.

- Եթե մարդկանց հետ վարվես խստորեն, հարգալից կլինեն: Եթե որդիական պատկառանք ու ծնողական սեր ցուցաբերենս, ապա նրանք

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

հավատարիմ կլինեն: Եթե բարձրացնես շիտակներին ու ուսուցանես շիմացողներին՝ մարդիկ նվիրված կլինեն:

[Փոխադրությունը]

Զի Քանձին հարցրեց.

- Ի՞նչ պետք է անել, որպեսզի մարդիկ հարգալից ու հավատարիմ լինեն և նվիրվեն իշխանությամբ:

Քոնձին ասաց.

- Եթե դու մարդկանց հանդեպ արդար ես, ապա նրանք կհարգեն քո հրամանները: Եթե հարգես ավագներին և սիրես կրտսերներին, ապա նրանք հավատարիմ կլինեն: Եթե առաջխաղացման տանես արդարներին և կրթես թերացողներին, ապա նրանք կնվիրվեն իշխանությամբ:

[Մեկնությունը]

① «季康子» - Զի Քանձի. հայտնի նաև որպես Զի Սունֆե, Լու տերության իշխան Այի նախարարներից էր, ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը:

«康»՝ «խաղաղասեր», նրա հետմահու անունն էր:

② «以» - Ասույթում օգտագործվում է որպես շաղկապ՝ «և»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2.1 或谓孔子曰：“子奚不为政？”子曰：“《书》①云：‘孝乎惟孝，友于兄弟，施②于有政③。’是亦为政，奚其为为政？”

Ոմն մեկը հարցրեց Քոնձիին.

- Ինչո՞ւ չես կառավարում:

Ուսուցիչն ասաց.

Կոնֆուցիոս. Չրույցներ

- «Գրքում» ասվում է. «Որդիական պատկառանք դրսնորիր, երբ հարկն է, հարգիր եղբայրներիդ, այդպիսով կկառավարես»: Դա է կառավարումը, այնպես չէ:

[Փոխադրությունը]

Ինչոր մեկը հարցրեց Քունձիին.

- Ինչո՞ւ չես մասնակցում պետության կառավարմանը:

Քունձին պատասխանեց.

- «Պատումների գրքում» ասվում է. «Որդիական պատկառանքն ու եղբայրական սերն են ընկած ծշմարիտ կառավարման հիմքում»: Դրանք դրսնորելով՝ ես մասնակում եմ կառավարմանը: Միթե անպատճառ պետք է պետական պաշտոնյա լինել՝ կառավարմանը մասնակցելու համար:

[Մեկնությունը]

① «施» - «Գիրք». նկատի ունի «Պատումների գիրքը», բնագրում թերված նախադասությունը մեջբերված է դրա «Վասն Ձյունչենի» հատվածից:

② «施» - «Հնորհեել», «տալ». ասույթի մեջ կիրառված է որպես օժանդակ բառ, որը նշանավորում է կառավարման տևականությունը:

③ «施于有政» - «այդպիսով կկառավարես». բառացի արտահայտությունը բարդ է փոխարդել, պատճառը «有» գաղափարագրի կիրառումն է, գոյականներից առաջ դրվելով՝ գոյականը դարձնում է բայ: Այդ մասին առավել մանրամասն նկարագրված է իմ «Դասական լեզվի թերականություն» աշխատության մեջ:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2.2 子曰：“人而无信①，不知其可也。大车无輗，小车无軏②，其何以行之哉？”

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Մարդ առանց հավատի. չգիտեմ՝ կա՞ն այդախիք: Մեծ սայլն առանց առեղի, փոքր սայլն առանց լծի, մի՞թե այդպես կարող են շարժվել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Չգիտեմ՝ կա՞ն արդյոք անհավատ մարդիկ: Դա նոյնն է, ինչ մեծ սայլն առանց առեղի, կամ փոքր սայլն առանց լծի: Ինչպես կարող ենք շարժվել»:

[Մեկնությունը]

① «人而无信» - «Մարդ առանց հավատի». որոշ մասնագետներ փոխադրել են այս հատվածը որպես «մարդիկ չեն հավատում», սակայն իին չինարենի շարահյուսությանն առավել բնորոշ է «մարդ առանց հավատի» տարրերակը:

② «汎, 洪» - «առեղ, լուծ». հնում սայլերի, մարտակառքերի մասեր էին, որոնց լծվում էին գրաստները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2.3 子张问：“十世可知也①？”子曰：“殷因于夏礼，所损益，可知也；周因于殷礼，所损益，可知也。其或继周者，虽百世，可知也。”

Զիջանը հարցուեց.

- Կարելի՞ է իմանալ, թե ինչ կլինի տաս սերունդ հետո:

Ուսուցիչն ասաց.

- Ինը ժառանգեց Սյայի ծեսերը: Ինչ է պակասեցրել ու ավելացրել, հայտնի է: Զոռուն ժառանգեց Ինի ծեսերը: Ինչ է պակասեցրել ու ավելացրել, հայտնի է: Վյդպես Էլ կարելի է իմանալ նաև Զոռի ժառանգորդների մասին, թեկուզ հարյուր սերունդ Էլ փոխավի:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Ձիջանը հարցրեց.

- Կարող ենք, արդյոք, իմանալ, թե ինչպիսին կլինեն օրենքները տաս սերունդ հետո:

Քոնձին ասաց.

- Ին հարստությունը ժառանգել էր Սյա հարստության օրենքները: Ինչոր բան վերացվեց, ինչոր բան ավելացվեց և այդ մասին ամեն ինչ գիտենք: Զոր հարստությունը ժառանգեց Ին հարստության օրենքները: Ինչոր բան վերացվեց, ինչոր բան ավելացվեց և այդ մասին ևս ամեն ինչ գիտենք: Այդ պատճառով Էլ կարող ենք իմանալ նաև Զոր հարստության ժառանգների մասին, նույնիսկ եթե հարյուր սերունդ փոխվի:

[Մեկնությունը]

① «十世可知也» - «Կարելի՞ է իմանալ, թե ինչ կլինի տաս սերունդ հետո». Կոնֆուցիոսի պատասխանից կարելի է եզրակացնել, թե ինչ է նկատի ունեցել Ձիջանը նման հարցադրում անելով, ուստի փոխադրված տարբերակում ավելացվել է «օրենքներ» բառը:

ԿՈՆՖՈՒՅՈՒՍԻ ԲՆԱԳԻՐԸ

2.2.4 子曰：“非其鬼①而祭②之， 谄③也。 见义不为， 无勇也。”

Ուսուցիչն ասաց. «Այլոց նախնիների ոգիներին զոհեր մատուցելը շողոքորթություն է: Անարդարություն տեսնելով՝ չգործելը փոքրողություն է»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Դու չպիտի զոհեր մատուցես ուրիշների նախնի-

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

ների ոգիներին, դա շողբորթություն է: Եթե տեսմում ես, թե ինչ է լինելու և անգործության ես մատնված՝ դա վախկոտություն է»:

[Մեկնությունը]

① «鬼» - «Ոգի», «ուրվական». հնում եղել է նախնիների ոգիների պաշտամունք: «Ոգի» ասելով սովորաբար նկատի են ունեցել հանգույց-յալ հարազատներին:

② «祭» - «Զոհ», «զոհաբերություն». նախնիների ոգիներին զոհեր մատուցել են, որպեսզի արժանանան նրանց բարեհաձությանը և օրինություններին:

③ «謳» - «Շողբորթել», «հաձոյանալ». հնչում է՝ «չան»:

Գլուխ 3. Ութ շաբք Հնդամենը 26 ասույթ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1 孔子谓季氏①, “八佾②舞于庭, 是可忍③也, 孰不可忍也? ”

Քոնճին ասաց Զի տոհմի մասին. «Ութ շաբքով պարում են նախնաց սրահում, եթե դրան կարելի է դիմանալ. կա՞ բան, ինչին դիմանալ չի կարելի»:

[Փոխադրությունը]

Պատմելով Զի տոհմից մի պաշտոնյայի մասին՝ Քոնճին ասաց. «Նրա համար բակում վաթսունչորս մարդ են երգում ու պարում: Եթե նա այդքան անսիրտ է դա անելիս, ապա ե՞րբ կարող է անսիրտ չինել»:

[Մեկնությունը]

① «季氏» - «Զի տոհմ». համաձայն «Զույյի մեկնաբանությունների»՝ Զառ իշխանի կառավարման քանիհնգերորդ տարվա նկարագրության և Լու Սյանչուանի «Պատմագրության», Կոնֆուցիոսը նկատի է ունեցել Զի Փինճիին, սակայն որոշ մասնագետներ գտնում են, որ խոսքը Լու տերության աստիճանավոր Զի Քանճիի մասին է, ոնանք կարծում են, թե Կոնֆուցիոսը խոսում է մեկ այլ աստիճանավոր Զի Սյուանճիի մասին:

② «八佾» - «Ութ շաբք». հնում նախնիների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար ծխական պարեր էին պարում, ութ հոգի՝ մի շաբքում: Կայսրը կարող էր ութ շաբքով պարողներ ունենալ՝ վաթ-

սունչորս հոգի, իշխանները՝ վեց շարքով՝ քառասունութ պարողներ, իսկ աստիճանավորները՝ չորս շարքով՝ 32 հոգու: Զին պետք է չորս շարքով պարողներ ունենար, ութ շարք պարող ունենալով՝ նա խախտել էր ծիսակարգը:

③ «忍» - «Դիմանալ», «տանել», «հանդուրժել». որոշ մասնագետներ մեկնաբանում են նշված գաղափարագիրը որպես «համբերություն» կամ «համբերել»: Սակայն եթե հաշվի առնենք այն, որ Զի տոհմը խարխել էր Լու տերության տնտեսությունը, ապա կարելի է ենթադրել, որ Կոնֆուցիոսը «忍» գաղափարագիրը կիրառել է «դիմանալ», «հանդուրժել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2 三家①者以《雍》②彻。子曰：“‘相③维辟公，天子穆穆’，奚取于三家之堂？”

Երեք տոհմերը կատարում էին «Ներդաշնակ» ձոնը: Ուսուցիչն ասաց. «Երկնի Որդին՝ քրմերով ու իշխաններով շրջապատված, վսեմաշուր կատարում էր ծեսը: Միթե դա կարելի է անել երեք տոհմերի նախնյաց սրահներում»:

[Փոխադրությունը]

Զուն, Շու և Զի տոհմերը իրենց նախնիներին զոհեր մատուցելու ծեսի ժամանակ երգում էին կայսերական «Ներդաշնակ» ձոնը: Քունձին ասաց. «Կայսրը՝ շրջապատված արքունիքով, զոհ է մատուցում նախնիներին «Ներդաշնակ» ձոնի ներքո: Արժե՞ դա հնչեցնել երեք տոհմերի սրահներում»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԼԱՆՈՒԹՅՈՒՆ]

① «三家» - «Երեք տոհմ». Լու տերության երեք ազդեցիկ ազնվական տոհմերը նկատի ունի:

② «雍» - «Ներդաշնակ». ձռն է «Երգերի գրքից», կատարվել է զոհաբերությունների ժամանակ:

③ «相» - «Քուրմ». ծիսակարգերի կատարման պատշաճությանը հետևող հոգևորականներ:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

3.3 子曰：“人而不仁，如礼何？人而不仁，如乐何？”

Ուսուցիչն ասաց. «Եթե մարդը մարդկայնություն չունի, Էլ ի՞նչ ծես: Եթե մարդը մարդկայնություն չունի, Էլ ի՞նչ երաժշտություն»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քոնճին ասաց. «Եթե մարդը չունի մարդկայնություն, ի՞նչ պատշաճության մասին է խոսքը: Եթե մարդը չունի մարդկայնություն, ի՞նչ երաժշտության մասին է խոսքը»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

3.4 林放①问礼之本。子曰：“大哉问！礼，与其奢也，宁俭；丧，与其易②也，宁戚。”

Լին Ֆանը հարցրեց ծեսերի մասին: Ուսուցիչն ասաց. «Շատ կարևոր հարց է. ծեսի ժամանակ ավելի լավ է պարզություն, քան շրեղություն, իսկ սպիտակ ժամանակ ավելի լավ է ողբ, քան բծախնդրություն»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Լին Ֆանը հարցրեց ծեսերի բնույթի մասին: Քունձին ասաց. «Քո հարցը խորիմաստ է: Առօրեական ծեսերի ժամանակ ավելի լավ է պարզ ու հասարակ լինել, քան շոայլ ու վատնող: Սգո արարողությունների ժամանակ ավելի լավ է ողբար, քան հետևել ծիսակարգին»:

[Մեկնությունը]

① «林放» - Լին Ֆան. Նրա մասին հայտնի է միայն, որ Լու տերության հպատակ է եղել:

② «易» - «Հեշտ», «զվարձալի», «փոխել», «փոփոխություն». «Ծեսերի գրքում՝ «Թան իշխանի մասին» հատվածում, ասվում է. «Ես լսել եմ աստիճանավորներին, որոնք ասում են, որ սգի ժամանակ պիտի պահել ծիսակարգը, սակայն եթե չկա վիշտ, ել ինչի՞ են պետք ծեսերը»:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

3.5 子曰：“夷狄之有君，不如①诸夏之亡②也。”

Ուսուցիչն ասաց. «Յին և Դին տիրակալներ ունեն, սակայն չեն համեմատվի նույնիսկ անտեր Սյայի հետ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Թեև բարբարոս երկրներն էլ ունեն իրենց արքաները, սակայն դրանք չեն համեմատվի նույնիսկ արքա չունեցող Զինաստանի հետ»:

[Մեկնությունը]

① «夷狄之有君，不如» - «Յին և Դին տիրակալներ ունեն, սակայն

Կոնֆուցիոս. Զրույցներ

չեն...». պարոն Յան Յուփուի «Զրույցների մեկնություններում» նշվում է, որ Յիի և Դիի տիրակալներ ասելով Կոնֆուցիոսը նկատի է ունեցել համապատասխանաբար Չուցուան և Ուվան արքաներին, որոնք կառավարում էին նշյալ «բարբարոս» տերությունները:

② «亡» - «մեռնել», «կորցնել». ասույթում կիրառվում է ինչ-որ երևույթ ժխտելու իմաստով, տվյալ դեպքում՝ Սյայի տիրակալ չունենալը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.6 季氏旅①于泰山。子谓冉有②曰：“女弗能救与？”对曰：“不能。”子曰：“呜呼！曾谓泰山不如林放乎？”

Զիշին ուղևորվում էր Թայ լեռանը զոհ մատուցելու: Ուսուցիչը հարց-րեց Ժանյուին.

- Հնարավի՞ր է հետ պահել նրան:
- Անհնար է, - պատասխանեց նա:
- Ավանդ, - ասաց Ուսուցիչը, - մի՞թե Տայ լեռը զիջում է Լին ֆանին:

[Փոխադրությունը]

Զիշին ուզում էր զնալ Թայ լե՞՝ զոհաբերություն ամելու: Քունձին հարցրեց Ժանյուին.

- Կարո՞ղ ես հետ պահել նրան:
- Չեմ կարող, - պատասխանեց Ժանյուն:
- Ավսոս, - ասաց Քունձին, - մի՞թե կարող ես ասել, որ Թայ լեռան ողին զիջում է Լին ֆանին:

[Մեկնությունը]

① «旅» - «Ուղևորություն», «ճամփա ընկնել». այն ժամանակ Թայ

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

լեռանը զոհ մատուցելու իրավունք ունեին միայն կայսրերը: Զիշին ընդամենը Լու տերության աստիճանավոր էր և լեռանը զոհ մատուցելով՝ խախտում էր ծիսակարգը:

② «冉有» - Ժանյո. Կոնֆուցիոսի սանն էր, հայտնի՝ նաև որպես Ժան Ցյու: Կոնֆուցիոսից փոքր էր քանինը տարով: Ծառայում էր Զի տոհմին, այդ պատճառով է Կոնֆուցիոսը նրան էր խնդրում հետ պահել Զիշիին սխալ քայլ անելուց:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

3.7 子曰：“君子无所争。必也射乎！揖让而升，下而饮。其争也君子①。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը չի մրցում: Միայն նետաձգություն: Ձեռքերը միացրած ողջունելով՝ բարձրանում է հարթակին, իշնելիս խմում է այլոց հետ: Դա ազնվայրին արժանի մրցություն է»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ազնիվ մարդը չունի մրցելու կարիք: Սակայն եթե պետք է մրցել, ապա դա անում է նետաձգությամբ: Միմյանց հանդեպ պատկառանքով լի՝ բարձրանում են նետաձգության հարթակ, իշնելուց հետո խմում են: Սա է բարեկիրթ մրցման ձևը»:

[Մեկնությունը]

① «其争也君子» - «Դա ազնվայրին արժանի մրցություն է». այս մասին մանրամասն ներկայացված է «Ծեսեր և արարողություններ» գրքի «Մեծ նետաձգության արարողություն» հատվածում. հնում ավանդույթ կար՝ առավել քիչ թիրախներ խոցած նետաձիգին «պատժում էին խմիչքով», այսինքն՝ նա ստիպված էր գինի խմել:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.8 子夏问曰：“巧笑倩①兮，美目盼②兮，素以为绚③兮。”何谓也？”子曰：“绘事后素。”曰：“礼后④乎？”子曰：“起⑤予者商也！始可与言《诗》已矣。”

Զիսան հարցրեց.

- Ի՞նչ են նշանակում հետևյալ խոսքերը. «Զքնաղ ժախտդ գրավում է, դյութում են գույներով գեղեցիկ աչքերդ։ Ներկով է ծածկվում ձեր-մակդ։»

Ուսուցիչն ասաց.

- Ներկում են ձերմակեցնելուց հետո:

Զիսան հարցրեց.

- Ծեսերը հաջորդում են դրան:

Ուսուցիչն ասաց.

- Միայն դու ես հասկանում ինձ, Շան: Այժմ քեզ հետ կարելի է խոսել «Երգերի» մասին:

[Փռխադրությունը]

Զիսան հարցրեց.

- «Դեմքիդ ժախտը լուս է ձառագում, սև աչքերդ դյութում են իրենց գեղեցկությամբ։ Շաղիկներ են պատկերված զգեստիդ ձերմակին»: Ի՞նչ են նշանակում բանաստեղծության այս բառերը:

Քոնձին ասաց.

- Շաղիկներ նկարում են ձերմակի վրա:

Զիսան հարցրեց.

- Միթե դա նշանակում է, որ ծեսերը պիտի հաջորդեն մարդկայնությանը:

Քոնձին ասաց.

- Կեցցես, Շան: Դու իսկապես ուրախացրիր ինձ: Հիմա մենք կարող ենք քննարկել «Երգերի գիրքը»:

[Մեկնությունը]

① «情» - «չքնաղ», «գեղատեսիլ»:

② «盼» - Ունի «հուսադրել», «սպասել» իմաստները, սակայն հնում կիրառվել է նաև «գրավել», «դյութել», «հմայել» իմաստներով:

③ «绚» - «Ճքեղ», «փայլուն», «երփներանգ». ասույթում կիրառված է «ներկել», «գունավորել» իմաստներով: Բանաստեղծության երեք տողերից «Երգերի գրքում» կան առաջին երկուսը: Երրորդ տողն ըստ երևույթին Վան Սյանցյանի «Երեք տոհմերի երգեր» գրքից է:

④ «礼后» - «Ծեսերը հաջորդո՞ն են». «ծեսերը» բառից հետո բնագրում ոչինչ չկա. «մարդկամություն» բառը գրեթե բոլոր մեկնաբանողների կողմից մտցվել է ավելի ուշ:

⑤ «起» - «Բարձրանալ», «սկսել», «հայտնվել», «ստանալ» և այլն. ասույթում կիրառված է «հասկանալ» իմաստով: Առավել մանրամասն կարելի է կարդալ Սուն Քայդիի մեկնության մեջ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.9 子曰：“夏礼，吾能言之，杞①不足征也；殷礼，吾能言之，宋②不足征也。文献③不足故也。足，则吾能征之矣。”

Ուսուցիչն ասաց. «Սյայի ծեսերի մասին ես կարող եմ պատմել, Յիի մասին վկայությունները բավական չեն: Ինի ծեսերի մասին ես կարող եմ պատմել, Սունի մասին վկայությունները բավական չեն: Հնամենի գրերը քիչ են, բավական լինեին՝ ես հիմք կունենայի ծեսերի մասին պատմելու»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ես կարող եմ պատմել Սյա հարստության ծեսերի մասին, սակայն Յի տերության ծեսերի մասին տեղեկությունները

Կոնֆուցիոս. Զրույցներ

բավական չեն: Ես կարող եմ պատմել ին հարստության ծեսերի մասին, սակայն Սուն տերության ծեսերի մասին տեղեկությունները բավական չեն: Պատճառը նրանց պատմական մատյանների և իմաստունների պակասն է: Եթե դրանք բավական լինեին, ես կկարողանայի պատմել Ձի և Սուն տերությունների ծեսերի մասին»:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «杞» - «ঢ়ী». տերության անվանում է, համարվել է Սյայի ժառանգորդը: Զոր թագավորության և արքայի ավատն էր՝ ներկայիս Հենան և Շանդուն նահանգների տարածքում: Ժուլանալով՝ մասնատվեց շրջապատող տերությունների միջև, իսկ բնակչության մի ստվար հատված գաղղրեց:

② «宋» - «Սուն». տերության անվանում է, համարվել է Շանի ժառանգորդը: Գտնվել է ներկայիս Հենան և Ջանսու նահանգների տարածքում: Պատերազմող տերությունների դարաշրջանում ոչնչացվել է Ձի, Վե և Չո տերությունների կողմից:

③ «文献» - «փաստաթուղթ», «գիր». «Զրույցներում» «文献» բառակապակցությունը կիրառված է որպես «հնամենի գիր», թեև ներկայումս գործածության մեջ է որպես «պատմական փաստաթուղթ»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.0 子曰：“禘①自既灌②而往者，吾不欲观之矣。”

Ուսուցիչն ասաց. «Ես չեմ ուզում հետևել «դի» ծեսին՝ գինին հեղելուց հետո»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ես չեմ ուզում նայել, թե ի՞նչ կլինի «դի» արարողության ժամանակ գինի թափելուց հետո»:

[Մեկնությունը]

① «禘» - «Դի». զոհաբերության կարևորագույն արարողություն էր, ինչի անցկացման իրավունքը ուներ միայն կայսրը՝ Երկնքի որդին: Այնուամենայնիվ, Զոտի տիրակալ Չեմը թույլ էր տվել Զոռոյի իշխաններից մեկին՝ որպես տերությանը խոշոր ծառայություններ մատուցած անձի, իրականացնել այդ ծեսը: Հետագայում այդ արարողակարգը շարունակեցին Լու տերության տիրակալները, ինչը Կոմֆուջիոնը համարում էր ծեսի խախտում, այդ պատճառով է չէր ցանկանում ներկա գտնվել դրան:

② «灌» - «Հեղել», «թափել», «ոռոգել». կայսերական «դի» ծիսակատարության ժամանակ հատուկ թրմված հոտավետ գինի էր թափվում գետնին, ինչից հետո մասնակիցները մտնում էին տաձար և տեղադրում նախանձների անուններով տախտակները:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.1 或问禘之说。子曰：“不知也①；知其说者之于天下也，其如示②诸斯乎！”指其掌。

Ոմն մեկը հարցրեց «դի» ծեսի մասին. Ուսուցիչն ավել պարզեց և ասաց. «Զգիտեմ. նա, ով գիտի դրա իմաստը, կարող է ցույց տալ, թե ինչպես կառավարել Երկնայինը»:

[Փոխադրությունը]

Ինչոր մեկը հարցրեց Քունձին «դի» արարողության իմաստի մասին: Քունձին ասաց. «Ես չգիտեմ: Դա իմացող մարդկանց համար տերությունը կառավարելը նույնքան հեշտ կլինի, որքան սրան նպելը»: Այդ ասելով՝ նա ցույց տվեց իր ավիը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «不知也» - «Չգիտեմ». «դի» ծեաը կայսերական արարողություն էր, ինչի անցկացման իրավունք Լու տերության արքաները չունեին: Այդ պատճառով էլ Կոնֆուցիոնը խուսափում է ուղղակի պատասխանից:

② «示»- «ցույց տալ», «բացահայտել». ունի նույն իմաստը, ինչ «视» զաղափարագիրը՝ «սահմանել»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3 . 1 2 祭如在，祭神如神在。子曰：“吾不与祭，如不祭①。”

Զոհաբերություն էր անում, ասես ոգիները կենդանի լինեին: Ուսուցիչն ասաց. «Եթե ես չեմ անում զոհաբերությունը, ասես զոհաբերություն չլինի»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին այնպես էր զոհ մատուցում նախնիներին, ասես նրանք կենդանի լինեին, այնպես էր զոհ մատուցում ոգիներին, ասես նրանք ներկա լինեին: Քունձին նաև ասում էր. «Եթե ես չեմ մասնակցում արարողությանը, դա կարծես զոհաբերություն չլինի»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① Որոշ մեկնաբանողներ ասույթը փոխադրել են հետևյալ կերպ. «Եթե ես համաձայն չեմ ծիսակատարության հետ, դա նույնն է, ինչ զոհաբերություն չանելը»: Սակայն սա ազատ փոխադրություն է և չի համապատասխանում ասույթի բովանդակությանը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.3 王孙賈①問曰：“与其媚于奥，宁媚于灶②，何謂也？”
子曰：“不然；获罪于天，无所祷也③。”

Վանսուն Զյան հարցրեց.

- Ասուն են՝ «Ավելի լավ է երկրպագել «առ» ոգուն, քան օջախի ոգուն»։ Ճշմարիտ է։

Ուսուցիչն ասաց.

- Այդպես չէ։ Եթե դու մեղանչել ես Երկնքի դեմ, երկրպագելը զուր է։

[Փոխադրությունը]

Վանսուն Զյան հարցրեց.

- Այսպիսի մի խոսք կա. «Ավելի լավ է երկրպագել տան հարավ-արևմտյան հատվածի ոգուն, քան օջախի ոգուն»։ Ո՞րն է ձիշտ։

Քունձին ասաց.

- Ձիշտ չեն։ Եթե քո վարքով վիրավորել ես Երկնքին, ապա երկրպագությունն անօգուտ է։

[Մեկնությունը]

① «王孙賈» - Վանսուն Զյա. Վեյ տերության իշխանի խորհրդականն էր։

② «与其媚于奥，宁媚于灶» - «Ավելի լավ է երկրպագել «առ» ոգուն, քան օջախի ոգուն»։ Տան հարավ-արևմտյան հատվածը կոչվում էր «առ», հավատում էին, որ այն ունի իր ոգին։ Տան օջախը կոչվում էր «ձառ», դրա մոտ ևս կար ոգուն երկրպագելու անկյուն։

③ Վանսուն Զյան և Կոնֆուցիոսը իրենց գրուցում օգտագործում էին փոխադրություններ, և մենք կարող ենք միայն ենթադրել, թե նրանք ի՞նչ են ուզում ասել։ Ոմանք ասում են, որ «առ» հատվածի «ոգի» ասելով նկատի ունեն Վեյի տիրակալին, իսկ «օջախի ոգին», ըստ

Կոնֆուցիոս. Զրույցներ

Երևույթին, Լին տիրակալի սիրելի հարձին էր խորհրդանշում՝ Նանձիին: Խառնակ ժամանակներ էին և երկրում իշխանությունը փաստացի Նանձիի ձեռքում էր: Եվ ըստ երևույթին Վաճառուն Զյայի՝ Կոնֆուցիոսին տրված հարցի իմաստը հետևյալն էր. «Ավելի լավ է հավատարմություն ցույց տալ տիրակալին, թե՛ Նանձիին»: Իսկ Կոնֆուցիոսի պատասխանի իմաստը հետևյալն էր. «Եթե դու հանցանք ես գործել, ապա էական չէ, թե ուս հավատարմություն ցույց տաս»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.4 子曰：“周监于二代①，郁郁乎文哉！吾从周。”

Ուսուցիչն ասաց. «Զոռուն երկու տոհմերի վրա է հիմնված: Ինչ գումեղ են դրա ծեսերը: Ես հետևում եմ դրանց»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զոռու հարստության ծեսերի հիմքում ընկած են Սյաև Չան հարստությունների ծեսերը: Ինչ հարուստ գումեր ունեն դրանք: Ես կողմ եմ Զոռու հարստության ծեսերին»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «二代» - «Երկու տոհմ»: Ակատի ունի Սյաև և Չան հարստությունները:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.5 子入太庙①，每事问。或曰：“孰谓鄹人之子②知礼乎？入太庙，每事问。”子闻之，曰：“是礼也。”

Ուսուցիչը մտավ մեծ տաճար և սկսեց ամեն ինչի մասին հարցությունը անել:

Ոմն մեկն ասաց.

- Ո՞վ էր ասում, թե Զոռովի տիրոջ որդին գիտի ծեսերը: Մեծ տաճար է մտել և ամեն ինչի մասին հարցնում է:

Դա լսելով՝ Ուսուցիչն ասաց.

- Դա նույնապես ծես է:

[Փոխադրությունը]

Մտնելով Զոռովի տիրակալի տաճար՝ Քունձին սկսեց ամեն ինչի մասին հարցեր տալ: Ինչոր մեկն ասաց.

- Ո՞վ էր ասում, թե Շովյան Հեթի որդին հասկանում է ծեսերը: Նա մտել է Մեծ տաճար և ամեն ինչի մասին ուզում է իմանալ ուրիշներից:

Այդ ամենը լսելով՝ Քունձին ասաց.

- Դա նույնապես ծես է:

[Մեկնությունը]

① «太庙» - «Մեծ տաճար». այդպես էր կոչվում Զոռովի տիրակալի տաճարը: Հնում այն հիմնել էր Թավձու տիրակալը, այդ պատճառով էլ այն կոչվում էր «Մեծ տաճար»՝ «太»՝ «թայ» բառից, որ նշանակում է «մեծ»:

② «鄰人之子» - «Զոռովի տիրոջ որդի»: Զոռու տեղանուն է, գտնվել է Աերկայիս Շանդուն նահանգի տարածքում: «Քունձիի տոհմի պատմություն» աշխատության մեջ նշվում է, որ Կոնֆուցիոսը ծնվել է Լու տերության Փինայան գավառի Զոռու ավանում, այն Աերկայիս Շանդուն նահանգի Ցույֆու գավառի տարածքում է: «Զոռովի բնակիչ» ասելով նկատի ունեն Շովյան Հեթին՝ Կոնֆուցիոսի հորը, որը ուսումնական աստիճանավոր էր և որպես իր ծառայությունների պարզ ստացել էր Զոռու ավանը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.6 子曰：“射不主皮①，为②力不同科③，古之道也。”

Ուսուցիչն ասաց. «Նետ արձակելիս կաշին բոլորը չեն խոցում, քանզի ուժերը հավասար չեն։ Դա է հին ուղին»։

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Նետաձգության ժամանակ նշանակետի կենտրոնը խոցելը պարտադիր չէ, որովհետև մարդկանց ուժերը նույնը են։ Դա հին օրենք է»։

[Մեկնությունը]

① «射不主皮» - «Նետ արձակելիս կաշին բոլորը չեն խոցում»։ Ինում նշանակետերը պատրաստվում էին ծիգ կտորներից, որոնց կենտրոնում կաշվի կտոր էր դրվում։ Նետաձգությունը երկու տեսակի էր դասվում՝ ուազմական և քաղաքացիական։ Տվյալ ասույթում Կոնֆուցիոնը նկատի ունի քաղաքացիական նետաձգությունը, ուր ոչ այնքան կարևոր էր նշանակետի խոցումը, որքան նետաձիգի հանդարտ ու գեղեցիկ շարժումները, դեմքի արտահայտությունը և այլն։

② «为» - «որովհետև», «քանզի»։ Աերկայումս կիրառելի է նույնինաստ «因为» տարրերակով։

③ «同科» - «նույն», «միանման»։ Աերկայումս կիրառելի է նույնինաստ «同等» տարրերակով։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.7 子贡欲去①告朔之饩羊②。子曰：“赐也！尔爱③其羊，我爱其礼。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Զիգունը ցանկանում էր վերջ տալ ամսվա առաջին օրը խոյ զոհաբերելու ծեսին:

Ուսուցիչն ասաց.

- Տուր, դու սիրում ես խոյին, ես սիրում եմ ծեսը:

[Փոխադրությունը]

Զիգունը այլս չէր ուզում ամսվա առաջին օրը Լու տերության տաճարում խոյ զոհաբերել:

Քունձին ասաց.

- Տուր ինձ այս: Դու ափսոսում ես խոյը, ես ափսոսում եմ ծեսը:

[Մեկնությունը]

① «去» - «գնալ», «տնել», «անցնել», «վերջ տալ». ասույթում կիրառվում է որպես անցումային բայ, որն արտահայտում է ինչ-որ բան անելու պատրաստակամություն:

② «告朔之饩羊» - «վերջ տալ ամսվա առաջին օրը խոյ զոհաբերելու ծեսին». ամսվա առաջին օրը տաճարում խոյ զոհաբերելու ավանդույթ կար: Տիրակալը երեք տարեկան խոյ էր զոհաբերում նախնիների ոգիներին, իսկ հետո խոսում էր ժողովրդի հետ և խրատներ տալիս: Կոնֆուցիոսի ժամանակ այդ ծեսն արդեն սպառել էր իրեն, այդ պատճառով էլ Զիգունը կոչ էր անում հրաժարվել դրանից: Իսկ Կոնֆուցիոսը կարծում էր, որ ավելի լավ է գոնե պահպանել ծեսի ձևական կողմը, բան ոչինչ չանել:

③ «爱» - «սեր», «սիրել». ասույթում կիրառված ես «ափսոսալ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅՈՒՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.8 子曰：“事君尽礼，人以为谄也。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Տիրակալին ծառայելիս կատարում ես ծեսերը, իսկ մարդիկ դա շողոքորթություն են համարում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթք տիրակալին ծառայելիս վարվում ես ծիսակարգին համաձայն, մարդիկ կարծում են, թե դու շողոքորթ ես»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.1.9 定公①问：“君使臣，臣事君，如之何？”孔子对曰：“君使臣以礼，臣事君以忠。”

Դին իշխանը հարցրեց.

- Ինչպես պիտի տիրակալը ծառայեցնի պաշտոնյաներին և ինչպես պիտի պաշտոնյաները ծառայեն տիրակալին:

Քունձին պատասխանեց.

- Տիրակալը պիտի ծառայեցնի պաշտոնյաներին ըստ ծեսերի, իսկ պաշտոնյաները պիտի ծառայեն հավատարմորեն:

[Փոխադրությունը]

Լուի տիրակալ Դինը հարցրեց.

- Ինչպես պիտի տիրակալն օգտագործի պաշտոնյաներին, և ինչպես պիտի պաշտոնյաները ծառայեն տիրակալին:

Քունձին պատասխանեց.

- Տիրակալը պիտի օգտագործի պաշտոնյաներին համաձայն կանոնների, իսկ պաշտոնյաները պիտի ծառայեն հավատարմությամբ:

[Մեկնությունը]

① «定公» - Դին իշխան. Լու տերության տիրակալն էր, Սուն տոհմից, Զառ իշխանի կրտսեր եղբայրը, զահակալել է տասնինգ տարի՝ մթա. 509-495 թվականներին: Դինը նրա հետմահու պատվանունն էր:

ԿՈՆՖՈՒՅ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

3 . 2 0 子曰：“《关雎》①，乐而不淫②，哀而不伤。”

Ուսուցիչն ասաց. «Հարսնացուի դիմավորումը» ուրախացնում է, բայց չի այլասերում, տիրեցնում է, բայց չի վնասում»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. ««Հարսնացուի դիմավորման երգը» լսելիս ուրախանում ես առանց հեշտապիրության, տիրում ես՝ առանց ցավի»»:

[Մեկնությունը]

① «关雎» - «Հարսնացուի դիմավորում». հատված է «Երգերի գրքի» առաջին գլխից, սակայն այնտեղ «տիրեցնող» հատվածներ չկան: Իսկ Լյու Շայգունի ««Չրուցների» մեկնությունը» աշխատության մեջ նշվում է, որ «Հարսնացուի դիմավորում» երգ կա և «Երգերի գրքում», և «Երաժշտության գրքում». ասույթում հղում է արվում «Երաժշտության գրքի» հատվածին: Վերջինս չի պահպանվել:

② «淫» - «ավելորդ», «խայտառակ», «այլասերող», «անպարկեշտ» և այլն. հնում հակված էին չափազանցնելու որոշ երևոյթներ, և «淫» գաղափարագիրը հաձախ էր նման կիրառություն ստանում, մասնավորապես՝ «淫祀»՝ «անպարկեշտ ծես» անվանում էին ձևականության համար արվող ծեսերը, իսկ «淫雨»՝ «անպարկեշտ անձրև» անվանում էին «ավելորդ», վարուցանքին վնասող անձրևը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2.1 哀公問社①于宰我②。宰我对曰：“夏后氏以松，殷人以柏，周人以栗，曰，使民战栗。”子闻之，曰：“成事不说，遂事不谏，既往不咎。”

Այ իշխանը հարցրեց Զայվոյին հողի աստծոն մասին։ Զայվոն ասաց.

- Մյաի օրոք տնկում էին սոձիներ, ինի օրոք՝ նոձիներ, Զոռովի օրոք՝ շագանակենիներ, որպեսզի մարդիկ դողան։

Դա լսելով՝ Ռատուցիչն ասաց.

- Եղածի մասին չեն խոսում։ Պետք չէ ընդդիմանալ դրան, անցյալի համար չեն մեղադրում։

[Փոխադրությունը]

Լուի տիրակալ Այը հարցրեց Զայվոյին, թե ինչ ծառեր տնկի հողի աստծոն զոհարանի տարածքում։ Զայվոն պատասխանեց։

- Մյա հարստության օրոք տնկում էին սոձիներ, ին հարստության օրոք՝ նոձիներ, Զոռու հարստության օրոք՝ շագանակենիներ, որպեսզի մարդիկ վախենան։

Լսելով այդ ամենը՝ Քունձին ասաց.

- Բարդ է բացատրել այն, ինչ արդեն եղել է, բարդ է պահպանել արդեն եղածը, բարդ է հանցանք փնտրել նրանում, ինչ արդեն եղել է։

[Մեկնությունը]

① «社» - «հողի աստված»։ Ինում ամեն մի կառավարող հարստություն իր տաձարմներում և զոհարաններում զետեղվող նախնիների անուններով գրությունները փորագրել էր տալիս հատուկ ծառատեսակի տախտակների վրա։ Առավել մանրամասն այդ մասին կարելի է կարդալ Յու Չենսիի «Գույսի մատյան» աշխատության մեջ։

② «宰我» - Զայվոն։ Կոնֆուցիոնի սամն էր՝ Յու տոհմից։

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2.2 子曰：“管仲①之器小哉！”

或曰：“管仲俭乎？”曰：“管氏有三归②，官事不摄③，焉得俭？”“然则管仲知礼乎？”曰：“邦君树塞门④，管氏亦树塞门。邦君为两君之好⑤，有反坫⑥，管氏亦有反坫。管氏而⑦知礼，孰不知礼？”

Ուսուցիչն ասաց.

- Գուանջունի կարողությունները փոքր են:
Ուն մեկը հարցրեց.
 - Գուանջունը խնայո՞ղ էր:
 - Նա երեք կին ուներ ու բազում վատնող ծառաներ, մի՞թե դա խնայել է, պատասխանեց Ուսուցիչը:
 - Իսկ Գուանջունը գիտե՞ր ծեսերը:
 - Միայն տիրակալն է իր դարպասների դիմաց փայտե պատճեշ կառուցում, նույն արել էր Գուանջունը: Եթե տիրակալները հանդիպելով՝ հյուրափրում են իրար, գիմու գավերը դնում են հորեւ պան վրա. Գուանջունը նոյնպես այդ սյունից էր սարքել: Եթե Գուանջունը գիտի ծեսերը, ապա ովք չգիտի:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Գուանջունի ընդունակությունները համեստ են:
Ինչոր մեկը հարցրեց.
 - Արդյո՞ք Գուանջունը խնայող էր:
- Քունձին պատասխանեց.
 - Նա երեք հարկերն է հավաքում ու բազմաթիվ ենթականեր ունի, որոնք մի բան են անում, դա խնայել է:
 - Գուանջունը իսկապէս գիտի ծեսերը:
 - Միայն տիրակալն իրավունք ուներ փայտե պատճեշ կառուցել

ապարանքի դարպասների մոտ, Գուանջունը նույնպես կառուցել էր: Միայն տիրակալը կարող էր հարևան տերությունների իշխաններին հյուրասիրելուց հետո զինու գավաթները զետեղելու համար հողե պատվանդան ունենալ, Գուանջունը նույնպես նման պատվանդան ուներ: Եթե Գուանջունը գիտի ծեսերը, ապա կա՞ մեկը, որ չգիտի, պատասխանեց Քունձին:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «管仲» - Գուանջուն. հայտնի էր նաև որպես Յիու, Գուանձի: «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանի Յի տերության աստիճանավոր էր, գլխավոր խորհրդական, այնուհետև՝ նախարարապետ:

② «三归» - իին մեկնությամբ՝ «երեք կին», «երեք կալվածք», «երեք ընտանիք»: Տեսակետ կա, ըստ որի Յիի տիրական ամուսնացել էր հարևան երեք տերությունների արքայադուստրերի հետ, Գուանջունը նույնպես երեք կին ուներ: Խուան Յիզունի տեսակետի համաձայն՝ ասույթում «三归» բառակապակցությունը խորհրդանշում է Գուանջունի երեք կալվածքները, բայց դա ոչ մի կերպ չի հիմնավորվում: Սակայն մի շարք աղբյուրներ, մասնավորապես՝ «Հան Ֆեյձի», «Պատերազմող տերությունների պատմություն», «Հան տերության պատմություն» աշխատությունները փաստում են, որ խոսքը երեք հարկատեսակների մասին է, որոնք հավաքում էին Գուանջունի հարկահանները: Նա հարկային բարեփոխումներ էր նախաձեռնել, և Կոնֆուցիոնը կարծում էր, որ Գուանջունը չէր կարողացել դիմանալ գայթակղությանը՝ հարկերից իրեն մասնաբաժին վերցնելով:

③ «摄» - ասույթում կիրառված է «վատնող» իմաստով:

④ «树塞门» - «փայտ պատճեց դարպասի մոտ». ամրաշինական կառույց է եղել, կարելի է համեմատել այսօրվա ցանկապատերի հետ:

⑤ «好» - «լավ». ասույթում կիրառված է «հյուրասեր» իմաստով:

⑥ «反坫» - «հողե պյուն». հողից պատրաստվող պատվանդաններ

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

էին, մեկական կանգնեցնում էին դահլիճների դիմաց, դրանց վրա դրվում էին դատարկ գինու գավաթները:

⑦ «而» - Ենթադրական կապ է, նման «եթե..., ապա...» կառուցին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2.3 子语①鲁大师②乐, 曰: “乐其可知也: 始作, 翩③如也; 从④之, 纯如也, 睇⑤如也, 绂如也, 以成。”

Ուսուցիչը Լուի մեծ վարպետի հետ երաժշտության մասին զրուցելիս ասաց. «Երաժշտությունը կարելի է հասկանալ: Սկզբում այն միաձուլված է, ընթացքում՝ ներդաշնակ է ու խիստ հստակ, բարձրանալով՝ ավարտվում է»:

[Փոխադրությունը]

Քունձին, զրուցելով Լու տերության երաժշտության մեծ վարպետի հետ, ասաց. «Երաժշտություն, դա այն է, ինչ կարելի է հասկանալ: Այն սկսում ես խանդավառությամբ, շարունակում հստակ ներդաշնակությամբ և աստիճանաբար բարձրանալով՝ ավարտում»:

[Մեկնությունը]

① «语» - «լեզու», ասույթում կիրառված է «պատմել», «զրուցել» իմաստներով:

② «大师» - «Մեծ վարպետ». Ըկատի ունի Լու տերության ավագ երաժշտագետին:

③ Երաժշտական եղրույթ է: Ստորև բերված երկու ծանոթությունները ևս վերաբերում են չինական երաժշտական համակարգի տոներին:

④ «从» - «անցնել», «հետևել», «շարունակել», «ընթացք»:

⑤ «睇» - «պայծառ», «հստակ»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2.4 仪封人①请见②，曰：“君子之至于斯也，吾未尝不得见也。 ”从者③见之。出曰：“二三子何患于丧④乎？天下之无道也久矣，天将以夫子为木铎⑤。 ”

Յիի սահմանային աստիճանավորը, խնդրելով հանդիպել Ուսուցչին՝ ասաց.

- Երբ այստեղ ազնվայրեր են ժամանում, ես անպատճառ տեսակցում եմ նրանց:

Սաները խնդրեցին Ուսուցչին՝ ընդունել նրան:

Դուքս գալով՝ նա սաներին ասաց.

- Ինչո՞ւ եք վշտանում տիրակալի բարեհաձությունից զրկվելու համար։ Երկնայինը վաղուց շեղվել է իր Ուղուց, շուտով Երկինքը ձեր Ուսուցչին փայտե կոչնակ կդարձնի։

[Փոխադրությունը]

Յի իշխանության սահմանապահը ցանկանում էր հանդիպել Քունձիին։ Նա ասաց.

- Ես միշտ տեսակցում եմ այստեղ ժամանած ազնվայրերին։

Քունձիին ուղեկցող սաները խնդրեցին Քունձիին՝ ընդունել նրան։ Ընդունելության ավարտից հետո նա ասաց սաներին.

- Ինչո՞ւ եք տիրում ձեր պաշտոնները կորցնելու համար։ Տերությունում հիմա օրենք չկա, և վաղ թե ուշ Երկինքը ձեր Ուսուցչին ժողովրդի համար զանգ կդարձնի։

[Մեկնությունը]

① «仪封人» - «Յիի սահմանային աստիճանավոր»։ Յիի գտնվելու վայրը հայտնի չէ, համարում են, որ ներկայիս Կայքեն քաղաքի շրջակայքում է եղել։

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

② «请见» - «խնդրելով հանդիպել». հնում ընդունված կարգ էր՝ Ուսուցիչն կարող էին մոտենալ միայն սաների միջնորդությամբ, նրանց ներկայացնելուց հետո, առանց նշյալ միջնորդության Ուսուցիչն մոտենալն ամբաղաքավարի էր համարվում:

③ «从者» - «հետևորդ», «սան»:

④ «喪» - «Վշտանալ», «ողբալ». ասույթում կիրառված է «Վշտանալ դիրքը կորցնելու համար» իմաստով:

⑤ «木铎» - «փայտե կոչնակ». մեծ զանգ էր՝ պղնձե թակով, որ խփում էին ժողովրդին հավաքելու համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2.5 子谓《韶》①，“尽美②矣，又尽善③也”。谓《武》③，“尽美矣，未尽善也”。

Ուսուցիչն ասաց «Շաոյի» մասին.

- Այն ամբողջովին գեղեցիկ է և կատարյալ:

«Ռի» մասին ասաց.

- Այն ամբողջովին գեղեցիկ է, սակայն կատարյալ չէ:

[Փոխադրությունը]

Խոսելով «Շաոյի» մասին, Քունձին ասաց.

- Այն շատ գեղեցիկ է և շատ բարի:

Խոսելով «Ռի» մասին՝ ասաց.

- Այն շատ գեղեցիկ է, բայց այնքան էլ բարի չէ:

[Մեկնությունը]

① «韶» - Շուն կայսեր իշմնի անվանումն է:

② «美，善» - «գեղեցիկ, կատարյալ». «美» գաղափարագիրը

Կոնֆուցիոս. Զրույցներ

կիրառված է հիմնի խոսքերը բնորոշելու համար, իսկ «善» գաղափարագիրը՝ հիմնի բովանդակությունը բնորոշելու համար։ Շուն կայսրը իր օրինական իշխանությունը ստացել էր առասպելական կայսր Յաոյից։ Ժեն Կոնֆուցիոսը համաձայն էր, որ Շան կայսերը հաղթած Ու արքան իշխանության է եկել ազնիվ պայքարի միջոցով, բայց ամեն դեպքում՝ պատերազմով, այդ պատճառով էլ Կոնֆուցիոսը գերադասում էր Շուն կայսեր հիմնը։

③ «武» - Զոու տերության Ու արքայի հիմնը։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

3.2 6 子曰：“居上不宽，为礼不敬，临丧不哀，吾何以观之哉？”

Ուսուցիչն ասաց. «Գտնվելով վերևում՝ մեծահոգի չեն, ծեսերը կատարելին՝ պատկառանք չունեն, հուղարկավորության ժամանակ չեն ողբում. ինչպես կարող են վերաբերել նրանց»։

[Փոխադրությունը]

Քոնֆուցիոնի ասաց. «Իշխանություն ունենալով՝ մեծահոգի չեն, ծիսակատարությունների ժամանակ անլուրջ են, իսկ հուղարկավորություններին մասնակցում են առանց վշտանալու։ Ինչպես կարող են վերաբերել նրանց»։

Գլուխ 4. Համայնք և մարդկայնություն Բնդամենք 26 ասույթ

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1 子曰：“里①仁为美。择不处②仁，焉得知③？”

Ուսուցիչն ասաց. «Եթե համայնքում մարդկայնություն է տիրում, հրաշալի է: Մի՞թե իմաստուն է նա, ով ընտրում է այն վայրը, որ մարդկայնություն չկա»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Լավ է ապրել այնտեղ, որ առաքինությունն է տիրում: Ինչպես կարող ես իմաստուն համարվել, եթե ապրելու համար ընտրում ես այն տեղն, որ առաքինություն չկա»:

[Մեկնությունը]

① «里» - «ներքին». ասույթում կիրառված է «համայնք» իմաստով, ինում այդպես էին անվանում 20-25 ընտանիքներից բաղկացած վարչական միավորը: Կարելի է կիրառել նաև որպես բայ՝ «ապրել»:

② «处» - «բնակվել», «ապրել». հայտնի չէ, թե Կոնֆուցիոսն ինչ իմաստով է կիրառել գաղափարագիրը: Այն նույն հաջողությամբ կարող էր կիրառվել «ընտրել բնակվելու տեղ», «բնակվել դրացիների հետ» կամ «բնակվել ընկերների հետ» արտահայտություններում:

③ «知» - «գիտելիք», «իմաստություն». այս գաղափարագիրը «Զրույցներում» կիրառվել է «智» գրելաձևով: «Մենձի» «Գունսուն Զոու» գլխում նշվում է հետևյալը. «Մի՞թե նետ պատրաստող վարպետ-

Կոնֆուցիոս. Զրույցներ

Աերն ավելի կանխակալ էն, քան զրահ պատրաստողները: Նետ պատրաստողները վախենում են, որ իրենց նետերը չեն խոցի մարդկանց, իսկ զրահ պատրաստողները վախենում են, որ իրենց զրահները չեն պաշտպանի մարդկանց: Քունձին ասում էր. «Եթե համայնքում մարդկայնություն է տիրում, հրաշալի է: Միթե իմաստուն է նա, ով ընտրում է այն վայրը, որ մարդկայնություն չկա»: Իսկ իմաստուն կիհնես այն դեպքում, եթե կափառանես մարդկայնությունն անկախ համայնքից:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.2 子曰：“不仁者不可以久处约，不可以长处乐。仁者安仁，知者利仁。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկայնությունից զուրկը երկար չի կարող աղքատ մնալ, բայց և չի կարող ուրախ լինել: Մարդկայնություն ունեցողը համգաստություն է գտնում, իսկ իմաստումին մարդկայնությունն օգուտ է բերում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Չար մարդը երկար չի ապրի աղքատության մեջ, սակայն խաղաղություն չի ունենա: Առաքինի մարդն ապրում է խաղաղ, իսկ իմաստումն առաքինությունից մեծ օգուտներ է քաղում»:

ԿՈՆՖՈՒՑԻओՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.3 子曰：“唯仁者能好人，能恶人①。”

Ուսուցիչն ասաց. «Միայն մարդկայնություն ունեցողը կարող է նաև սիրել մարդկանց, և ատել»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Միայն մարդկայնություն ունեցող այրը կարող է սիրել ու ատել մարդկանց»:

[Մեկնությունը]

① «Ուշ Հանի պատմություն» աշխատության «Ուժ արքաների մասին» գլուխ նշվում է հետևյալը. «Քունձին ասել է. «Միայն մարդկայնություն ունեցողը կարող է ն սիրել մարդկանց, ն ատել». Դա նշանակում է, որ ազնվայրին խորթ չեն զգացմունքները»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.4 子曰：“苟志于仁矣，无恶也。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկայնության ձգտողը չարիք չի գործի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե դու նպատակ ունես առաքինի լինել՝ չարիք չես գործի»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.5 子曰：“富与贵，是人之所欲也；不以其道得之，不处也。贫与贱，是人之所恶也；不以其道得之①，不去也。君子去仁，恶乎②成名？君子无终食之间违③仁，造次必于是，颠沛必于是。”

Ուսուցիչն ասաց. «Հարստություն և ազնվականություն. բոլոր մարդիկ ձգտում են դրանց: Եթե չհետևես ձշմարիտ ուղուն, չես հասնի

Կոնֆուցիոն. Զրույցներ

դրանց: Աղքատություն և ստորադասություն. բոլոր մարդիկ ատում են դրանք: Եթե չհետևես ծշմարիտ ուղուն, չես ազատվի դրանցից: Եթե ազնվայրը կորցնի մարդկայնությունը, դա կվճասի նրա պատվելի անունը: Մարդկայնությունը միշտ պիտի ուղեկցի ազնվայրին, անգամ՝ սնվելիս: Ազնվայրը չպիտի մոռանա մարդկայնության մասին, եթք նույնիսկ հոգսեր ունի և վնաս է կրում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Շատ փող և բարձր դիրք. ահա դրանց են ձգտում մարդիկ: Դրանք կարելի է ստանալ արդար միջոցներով, այլ կերպ վայել չէ ազնիվ մարդուն: Աղքատություն և ցածր դիրք. ահա դրանք են ատում մարդիկ: Դրանցից կարելի է ազատվել արդար միջոցներով, այլ կերպ վայել չէ ազնիվ մարդուն: Եթե ազնիվ մարդը կորցնի առաքինությունը, ինչպես կարող է հեղինակություն ունենալ: Ազնիվ մարդը պիտի ամենուր պահպանի մարդկայնությունը, նույնիսկ ուտելիս, հոգսաշատ ժամանակ և անհաջորդություն ունենալիս:

[Մեկնությունը]

① Ասույթի առաջին հատվածում «հասնել» բայց ներկայացված է «得» գաղափարագրով: Փոխադրության մեջ «հասնել» բայց փոխարինել ենք «ստանալով», այն համահունչ է թարգմանության ոգուն:

② «惡乎» - «վնասել», «չար»: Փոխադրության մեջ փոքր-ինչ փոխել ենք արտահայտության միտքը՝ կիրառելով «怎样»՝ «ինչպես» իմաստով:

③ «违» - «կորցնել», «խախտել», «բաժանել», «ընդդիմանալ». այս ասույթում կիրառված է «կորցնել» իմաստով, իսկ «Զրույցների» հինգերորդ՝ «Գունյե Զան» գլխում «违» գաղափարագիրը կիրառված է «բաժանել» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.6 子曰：“我未见好仁者，恶不仁者。好仁者，无以尚①之；恶不仁者，其为仁矣②，不使不仁者加乎其身。有能一日用其力于仁矣乎？我未见力不足者。盖③有之矣，我未之见也。”

Ուսուցիչն ասաց. «Ես չեմ տեսել նրանց, ովքեր սիրում են մարդկայնությունը և ատում այն, ինչ մարդկային չէ։ Մարդկայնությունը սիրողների համար չկա ոչինչ ավելի բարձր։ Անմարդկայինն ատողները դրսևորում են մարդկայնություն և հեռու են այն ամենից, ինչն անմարդկային է։ Հնարավոր է ողջ օրվա ընթացքում պահպանել մարդկայնությունը։ Ես չեմ տեսել նրանց, ում ուժը չի հերիքի դրա համար։ Նրանք երևի կան, սակայն ես նրանց չեմ տեսել»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես երբեք չեմ հանդիպել մարդկանց, ովքեր սիրում են առաքինությունն ու մարդկանց, ովքեր ատում են այն, ինչ առաքինի չէ։ Նրանք, ովքեր սիրում են առաքինությունը, համարում են, որ լավագույնն են։ Նրանք, ովքեր ատում են այն, ինչ առաքինի չէ, առաքինի են և չարիք չեն գործում։ Ո՞վ կարող է մի ամբողջ օր պահպանել առաքինությունը։ Ես չեմ հանդիպել նրանց, որոնց ուժերը չբավականացնեն դրա համար։ Հավանաբար կան այդպիսիք, բայց ես նրանց չեմ հանդիպել»։

[Մեկնությունը]

① «尚» - մակրայ է, ունի «դեռ» իմաստը, սակայն ասույթում կիրառված է «ավելի» իմաստով։

② «矣» - եղել է անցյալը ցույց տվող մասնիկ՝ ժամանակակից «了» գաղափարագրի նման, ասույթում ցույց է տալիս խորի ընթացքում տրվող դադար։

③ «盖» - մակրայ է, կիրառված է «հավանաբար» իմաստով։

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.7 子曰：“人之过也，各于其党。观过，斯知仁①矣。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկանց սխալների մասին դատում են իրենց համայնքներում: Սխալների մասին դատելով են որոշում մարդկայնությունը»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Մարդիկ տարբեր են, տարբեր են նաև նրանց սխալները: Սխալները բազմակողմանի քննելով որոշում են, թե ինչպիսի մարդ է սխալվողը»:

[Մեկնությունը]

① «仁» - այս ասուլյում կիրառված է «մարդ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.8 子曰：“朝闻道，夕死可矣。”

Ուսուցիչն ասաց. «Առավոտյան ձանաչելով Ուղին՝ երեկոյան կարող ես մեռնել»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե առավոտյան հասկանամ Ուղին, երեկոյան ես կարող եմ մեռնել»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.9 子曰：“士志于道，而耻恶衣恶食者，未足与议也。”

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Ուսպալը ցանկանում է ձանաչել Ուղին, սակայն ամաչում է ցնցոտիներից և վատ կերակրից. նրա հետ անգամ զրուցել չարժե»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Գրագետ մարդը ցանկանում է ըմբռնել ձշմարտությունը, սակայն ամաչում է ձավարեղին ուտելուց և հմամաշ հագուստից: Նման մարդիկ նոյնիսկ արժանի չեն, որ իրենց հետ զրուցեն»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 1 0 子曰：“君子之于天下也，无适①也，无莫①也，义之与比②。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրի համար Երկնայինում գոյություն չունի լավ ու վատ, արդարությամբ է որոշում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը Երկնայինի գործերը քննելիս ոչինչ չի հաստատում, ոչինչ չի ժխտում, անում է այն, ինչ խելամիտ է ու տեղին, ինչպես որ կա»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «适，莫» - Այս գաղափարագրերը տարբեր կիրառություն են ումեցել՝ «լավ, վատ», «բարիք, չարիք», «ձիշտ, սուտ». Զու Սիի «Մեկնություններում» կիրառված է «թշնամի և բարեկամ» իմաստներով:

② «比» - ասուլյում կիրառված է խոսրին բացականչական երանգ հաղորդելու համար: Գաղափարագրերը հաճախ կիրառվել են ան որպես գերադրական մասնիկ:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.1 子曰：“君子怀德，小人怀土①；君子怀刑②，小人怀惠。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը հոգում է առարինության մասին, նվաստը հոգում է հողի մասին։ Ազնվայրը հոգում է օրենքի մասին, նվաստը հոգում է շահի մասին»։

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդը մտածում է բարոյականության մասին, նվաստը՝ հողերի մասին։ Ազնվայրը հոգում է օրինապահության մասին, նվաստը՝ շնորհների մասին»։

[Մեկնությունը]

① «土» - «երկիր», «հող»;
② «刑» - «պատիժ», «տուգանք»։ ասուլյառում կիրառված է «օրենք» իմաստով։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.2 子曰：“放①于利而行，多怨。”

Ուսուցիչն ասաց. «Շահերից ելնելով՝ գործողին շատ են ատում»։

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե գործես քո անձնական շահին համապատասխան, մեծ վրդովմունք կառաջացնես»։

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «放» - Աերկայում «տեղադրել», «տեղավորել», «բաց թռնել», «վտարել» իմաստներն ունի, ասուլքում ունի «ելնել» իմաստը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.3 子曰：“能以礼让为国乎？何有①？不能以礼让为国，如礼何②？”

Ուսուցիչն ասաց. «Հնարավ՞նը է տերությունը կառավարել ծեսերով ու ձկունությամբ։ Դժվար է։ Եթե անհնար է տերությունը կառավարել ծեսերով ու ձկունությամբ, էլ ինչի՞ են պետք ծեսերը»։

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քունձին ասաց. «Կարելի՞ է, արդյոք, պետությունը կառավարել քաղաքավարությամբ։ Ո՞րն է դրա դժվարությունը։ Եթե անկարելի է պետությունը կառավարել քաղաքավարությամբ, էլ ինչի՞ համար են օրենքները»։

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «何有» - այս արտահայտությունը «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում կիրառվել է «դժվար է» կամ «ինչո՞ւ է խնդիրը» իմաստներով։ Հուան Շիսանի «Զրույցների մեկնություն» և Լյու Բանանի «Արդար զրույցներ» աշխատություններում նշված արտահայտությունը փոխադրվել է որպես «ամենին դժվար չէ»։

② «如礼何» - Կոնֆուցիոսի կարծիքով՝ պետական կառավարման համակարգում գերակա պետք է լինի ծեսերից բխող ձկունությունը, ինչն, ըստ էության, համարում էր ձևի և բովանդակության միասնու-

Կոնֆուցիոն. Զրույցներ

թյուն: Եթե պահպանվեին ծեսերի միայն ձևական կողմերը՝ բովանդակությունից զերծ, ոչինչ արդյունք չէր ունենա:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 1 4 子曰：“不患无位，患所以立①。不患莫已知，求为可知也。”

Ուսուցիչն ասաց. «Մի վշտացիր, որ պաշտոն չունես, վշտացիր, որ չես ամրապնդում գիտելիքներդ: Մի վշտացիր, որ քեզ չեն ձանաչում, եթե ձգտես կատարելության՝ կձանաչեն»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Մի տիսրիր, որ բարձր դիրք չես զբաղեցնում, պիտի տիսրես, եթե ընդունակություններդ չեն համապատասխանում դիրքիդ: Մի տիսրիր, որ հայտնի չես մարդկանց, հենց սկսես կատարելագործվել մարդիկ կձանաչեն քեզ»:

[Մեկնությունը]

① ~ Այս ասույթում «位» և «立» գաղափարագրերը կիրառված են համապատասխանաբար՝ «դիրք», «պաշտոն» և «ամրապնդել», «իմ-նավորել» իմաստներով, դա բնորոշ է «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանին:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 1 5 子曰：“参乎！吾道一以贯①之。”曾子曰：“唯。”
子出，门人问曰：“何谓也？”曾子曰：“夫子之道，忠恕②而已矣。”

Ուսուցիչն ասաց.

- Ցան, իմ ուղին մի կարևոր բան է ընդգրկում:
- Այո, - ասաց Յենձին:
- Երբ ուսուցիչը գնաց, սամերը հարցրեցին.
- Ի՞նչ է դա նշանակում:
- Ուսուցչի ուղին հավատարմությունն է ու կարեկցանքը, - պատասխանեց Յենձին:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Ցան: Իմ ուսմունքում մի կարևոր գաղափար կա:
- Այո, - ասաց Յենձին:
- Քունձիի գնալուց հետո սամերը հարցրեցին Յենձին.
- Ո՞րն է նրա ասածի իմաստը:
- Ծերունու ուսմունքի իմաստը հավատարմությունն ու կարեկցանքն են, - պատասխանեց Յենձին:

[Մեկնությունը]

- ① «**貫**» - «թափանցել», «անցնել». Ժուանի «Փառաբանությունների գրքում» նշվում է, որ «**貫**» գաղափարագիրը կիրառվել է նաև «**行**» և «**事**» իմաստներով՝ «անել» և «բան»:

- ② «**忠 恕**» - «հավատարմություն և կարեկցանք». Կոնֆուցիոնը այսպես էր նկարագրում կարեկցանքը. «չանել մարդկանց այն, ինչ չես ցանկանում, որ քեզ անեն»: Նա կարծում էր, որ «**忠**»՝ «հավատարմությունը» արտաքին դրսնորումն է «**恕**»՝ «կարեկցանքի»: Նաև շեշտում էր հետևյալը. «Եթե ուզում ես բարգավաճել, եղիր կարեկից մարդկանց հանդեպ»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.6 子曰：“君子①喻于义，小人①喻于利。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը մտածում է միայն արդարության մասին, նվաստը՝ միայն շահի»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդը մտածում է միայն արդարության մասին, իսկ նվաստը՝ միայն սեփական շահի»:

[Մեկնությունը]

① «君子，小人» - «ազնվայր，նվաստ». հայտնի չէ,թե Կոնֆուցիոսը այս գաղափարագրերը կիրառում է «Զրույցներին» քնորոշ իմաստով, թե՞ ոչ: «Հանի պատմություն» աշխատության մեջ մեջբերում են Դուն Զունշունին. «Արդարություն փնտրողները հաձախ վայսենում են պաշտոնյաներից, իսկ նվաստ մարդիկ քծնում են նրանց»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.7 子曰：“见贤思齐焉，见不贤而内自省也。”

Ուսուցիչն ասաց. «Իմաստունին հանդիպելով՝ փորձիր հավասարվել նրան, իմաստություն չունեցողին հանդիպելով՝ քննիր ինքդ քեզ»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե տեսնում ես իմաստունին, պետք է ձգտես հավասարվել նրան, եթե տեսնում ես տգետին, պետք է քննես ինքդ քեզ»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.8 子曰：“事父母几①谏，见志不从，又敬不违②，劳③而不怨。”

Ուսուցիչն ասաց. «Ծառայիր ծնողներիդ խոնարհությամբ, եթե նրանք համաձայն չեն՝ պատկառանք դրսնորիր և մի հակառակվիր, նույնիսկ եթե հոգնել ես՝ մի տրտնջա»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ծնողներիդ ծառայելիս վարվիր նրանց հետ հարգալից, եթե նրանք սխալ են, առարկիր մեղմորեն, կոպտորեն մի հակաձառիր, անզամ եթե հոգնել ես՝ մի բողոքիր»:

[Մեկնությունը]

① «几» - ձայնարկություն է:

② «违» - «հակառակվել», «ընդդիմանալ»:

③ «劳» - «ջանք», «աշխատանք». Վան Ինչիի «Մեկնություններում» այս գաղափարագիրը կիրառված է «տառապանք» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.1.9 子曰：“父母在，不远游，游必有方。”

Ուսուցիչն ասաց. «Ծնողներդ ողջ են՝ մի հեռացիր, հեռացել ես՝ մնա նոյն տեղում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե ծնողներդ ողջ են, մի հեռացիր նրանցից, իսկ եթե պետք է հեռանաս, ապրիր նոյն վայրում»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.2.0 子曰：“三年无改于父之道，可谓孝矣①。”

Ուսուցիչն ասաց. «Եթե հոր մահից հետո որդին երեք տարի անփոփոխ է թողնում Ուղին, դա կարելի է որդիական պատկառանք համարել»:

[ՄԵԿԱՌՈՒԹՅՈՒՆ]

① - Տես «Զրույցների» առաջին գլխի տասնմեկերորդ ասույթը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.2.1 子曰：“父母之年，不可不知也。一则以喜，一则以惧。”

Ուսուցիչն ասաց. «Զի կարելի չիմանալ ծնողների տարիքը: Մի կողմից՝ ուրախանալու համար, մյուս կողմից՝ տագնապելու»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քունձին ասաց. «Ծնողների տարիքը պետք է ժամանակ առ ժամանակ մտաբերել: Մի կողմից դու ուրախանում ես նրանց երկարակեցության համար, մյուս կողմից՝ վախճանում ես նրանց համար»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4.2.2 子曰：“古者言之不出，耻①躬之不逮②也。”

Ուսուցիչն ասաց. «Հնում բառերը զուր չեն արտաքերում, քանզի ամոթ կլիներ դրանք կյանքի չկոչել»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Հին ժամանակներում մարդիկ զգուշ էին արտահայտվում, որովհետև վախենում էին, որ չեն անի այն, ինչ ասել են»:

[Մեկնությունը]

① «耻» - «ամոթ», «ամոթալի». ասույթում կիրառված է որպես բայ:

② «逮» - «բռնել», «գրավել». ասույթում կիրառված է «անել», «իրականացնել», «կյանքի կոչել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 2 3 子曰：“以约①失之者鲜矣。”

Ուսուցիչն ասաց. «Զուսպ այրը հազվադեա է սխալվում»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Հազվադեա է պատահում, որ սխալներ գործի զապվածություն ունեցող անձը»:

[Մեկնությունը]

① «约» - «չափավորություն», «ժուժկալություն», «զսպվածություն». «Զրուցներում» կիրառված է «սակավապես» և «զուսպ» իմաստներով: «Զախավոր» իմաստով կիրառված է «Սյունձի» տրակտատում:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 2 4 子曰：“君子欲讷①于言而敏于行②。”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը դանդաղ խոսում է, սակայն գործում է արագ»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ազնիվ մարդը խոսում է զուսպ ու դանդաղ, գործում է ջանափրաբար ու արագ»:

[Մեկնությունը]

① «讷» - կարդացվում է «նե», ունի «դանդաղ խոսել» իմաստը:

② արտահայտությունը ունի գրեթե նոյն իմաստը, ինչ «Զրույցների» առաջին գլխի տասնչորսերրորդ ասույթի «ուշադիր է գործերում և զգուշավոր՝ խոսքերում» հատվածը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 2 5 子曰：“德不孤，必有邻①。”

Ուսուցիչն ասաց. «Առաքինին միայնակ չի մնա, անպայման կունենա աշակիցներ»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Բարյական մարդը երբեք միայնակ չի մնա, նա միշտ համախոհներ կունենա»:

[Մեկնությունը]

① «Փոփոխությունների գրում» նշվում է հետևյալը. «Համայնքները միավորվում են ըստ դասերի, իրերը տարբաժանվում են ըստ տեսակների»: Նոյն աշխատության «Գան» եռատողի մեկնաբանության

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

հատվածում նշվում է հետևյալը. «Նույն բանի մասին բարբառողմերը ի վերջո միավորվում են»: Նշված մեջբերումները բովանդակությամբ մոտ են Կոնֆուցիոսի ասույթին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

4 . 2 6 子游曰：“事君数①，斯辱矣；朋友数①，斯疏矣。”

Զիյոն ասաց. «Տիրակալին ծառայելիս քծնելն անպատվություն կրերի, բարեկամներին քծնելը կվանի նրանց»:

[Փոխադրությունը]

Զիյոն ասաց. «Եթե չափազանց շատ ջանքեր գործածես տիրակալին ծառայելու ժամանակ, դա անպատվաբեր կլինի, եթե շատ ջանաս՝ հոգ տանել ընկերներիդ, դա կիեռացնի նրանց»:

[Մեկնությունը]

① «数» ~ «հաշվել», «համարակալել», «դասել», «քննադատել». կարդացվում է «շուտ»: Ասույթի ենթատերստը հաշվի առնելով՝ պետք է նշենք, որ կիրառված է հաձախակի գործածություն ունեցող տհաձ վարքի որևէ ձև նշելու համար: «Քրույցների» տասներկուերորդ գլխի բանչորսերորդ ասույթում նշվում է նույնաբովանդակ մի միտք:

Գլուխ 5. Գունյե Զան Հնդամենը 28 ասույթ

(Գրքի որոշ տարբերակներ ներառում են 27 կամ 29 ասույթ,
քանի որ կան ասույթներ, որոնք միավորված են մեկում,
կամ բաժանված են երկուսի)

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1 子谓公冶长①, “可妻②也。虽在缧绁③之中，非其罪也”。以其子④妻之。

Ուսուցիչն ասաց Գունյե Զանի մասին. «Կարելի է ամուսնացնել: Թեև բանտում է եղել, սակայն մեղք չուներ»: Եվ իր դստերը կնության տվեց նրան:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց Գունյե Զանի մասին. «Նա կարող է կնության առնել դստերս: Չնպած բանտարկված է եղել, սակայն մեղավոր չէր»: Եվ իր դստերն ամուսնացրեց նրա հետ:

[Մեկնությունը]

① «公治长» - Գունյե Զան. Կոնֆուցիոսի սանն էր, Յի տերության հպատակ:

② «妻» - «կին». ասույթում կիրառված է որպես բայ՝ «կնության տալ», «ամուսնացնել» իմաստով:

③ «缧绁» - «պարանով կապված», «կալանված», «բանտված»:

④ «子» - ասույթում կիրառված է «դուստր» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2 子谓南容①, “邦有道, 不废; 邦无道, 免于刑戮”。以其兄之子妻之②。

Ուսուցիչն ասաց Նանժունի մասին. «Եթե պետությունն Ուղի ունենա, նա անօգուտ չի լինի: Եթե պետությունն Ուղի չունենա, նա չի պատժվի»: Եվ իր ավագ եղբոր դստերը կմոլոյան տվեց նրան:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց Նանժունի մասին. «Եթե պետական քաղաքականությունը հստակ է, նա չի անտեսվի: Եթե պետության քաղաքականությունը երերուն է, նա չի պատժվի»: Եվ իր զարմուհուն ամուսնացրեց նրա հետ:

[Մեկնությունը]

① «南容» - Նանժուն. Կոնֆուցիոսի սանն էր՝ Լու տերության հպատակ, Զիժուն անունով:

② «兄之子» - «ավագ եղբոր դուստր». Ակատի ունի Կոնֆուցիոսի ավագ եղբոր՝ Մենիիի դստերը: Նա մահացած էր այդ ժամանակ, և Կոնֆուցիոսն ինքն ամուսնացրեց նրա դստերը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.3 子谓子贱①, “君子哉若人! 鲁无君子者, 斯焉取斯? ”

Ուսուցիչն ասաց Զիձյանի մասին. «Ազնվայր է նա: Եթե Լու տերության մեջ ազնվայրեր չինեին, որտեղից այդքան արժանիքներ կունենար»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց Զիձյանի մասին. «Այդ մարդն ազնիվ է: Եթե Լու տերության մեջ ազնիվ մարդիկ չլինեին, որտեղից նա այդքան առաքինություններ կունենար»:

[Մեկնությունը]

① «子贱» - Զիձյան. Կոնֆուցիոսի սանն էր՝ Լու տերության հպատակ, Բուցի անունով, Կոնֆուցիոսից փոքր էր 49 տարով, ծնվել է մթա. 521 թվականին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.4 子贡问曰：“赐也何如？”子曰：“女，器也。”曰：“何器也？”
曰：“瑚琏①也。”

Զիգունը հարցրեց.

- Ինչպես կը նորոշես ինձ:

Ուսուցիչն ասաց.

- Դու անոթ ես:

- Ի՞նչ անոթ, - հարցրեց Զիգունը:

- Ծիսական անոթ, - ասաց ուսուցիչը:

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Իսկ ինչպիսի՞ մարդ ես ես:

Քունձին ասաց.

- Դու անոթ ես:

- Ի՞նչ տեսակի անոթ, - հարցրեց Զիգունը:

- Զուն տաձարի ծիսական անոթ, - պատասխանեց Քունձին:

[Մեկնությունը]

① «瑚琏» - «Ծիսական անոթ». հասպիսով երիզված հնդկեղեգյա անոթ, որ օգտագործում էին տաձարներում՝ ծեսերի ժամանակ, դրանցով էին մատուցում հացահատիկերենի նվիրաբերությունները: Նման անոթի հետ համեմատելով՝ Կոնֆուցիոսը ուզում էր ընդգծել իր սանի ընդունակությունները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.5 或曰：“雍①也仁而不佞②。”子曰：“焉用佞？御人以口给③，屡憎于人。不知其仁④，焉用佞？”

Ոմն մեկն ասաց.

- Յունը մարդկայնություն ունի, սակայն պերճախոս չէ:

Ուսուցիչն ասաց.

- Ինչի՞ն է պետք պերճախոսությունը։ Գեղեցիկ ձառերը կարող են մարդկանց ատելությունն առաջացնել։ Զգիտեմ՝ մարդկայնություն ունի, արդյոք, սակայն նրա ինչի՞ն է պետք պերճախոսությունը։

[Փոխադրությունը]

Ինչ-որ մեկն ասաց.

- Ժանյունն առաքինի է, սակայն պերճախոս չէ:

Քունձին ասաց.

- Մի՞թե անհրաժեշտ բան է պերճախոսությունը։ Դա հանգեցնում է վիճաբանության, ինչը մարդկանց ատելությունն է առաջացնում։ Ժանյունն առաքինի է թե ոչ, չգիտեմ, բայց մի՞թե նրան պետք է պերճախոսություն։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Մեկնությունը]

① «雍» - Յուն. Կոնֆուցիոսի սամն էր՝ Լու տերության հպատակ, հայտնի նաև Ժանյուն և Ջունգուն անուններով:

② «佞» - բառացի՝ «շատախտություն», սակայն ասովյթում կիրառված է «պերճախտություն» իմաստով:

③ «口給» - կիրառված է «վիճարանություն» իմաստով:

④ «不知其仁» - «Չզիտեմ՝ մարդկայնություն ունի՞, արդյոք». Կոնֆուցիոսն ասում է, որ չզիտի, սակայն դա չի նշանակում, որ նա իսկապես չզիտի: Դա ուղղակի նշանակում է, որ Կոնֆուցիոսի կարծիքով Ժանյունը դեռևս չուներ անհրաժեշտ առաքինությունները: «Զրույցներում» նման խուսափողական պատասխան Կոնֆուցիոսը տալիս է նաև Մեն Ուրոյի հարցին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.6 子使漆雕开①仕。对曰：“吾斯之未能信②。”子说。

Ուսուցիչն ուղարկում էր Յիդյառ Քային ծառայության:

Նա ասաց.

- Ես վստահ չեմ, որ կկարողանամ:

Ուսուցիչը գոհ մնաց:

[Փոխադրությունը]

Քունձին խնդրեց, որ Յիդյառ Քայը ծառայության անցնի որպես աստիճանավոր:

Նա պատասխանեց.

- Ես դեռ համոզված չեմ, որ կարող եմ դա անել:

Դա ուրախացրեց Քունձիին:

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

[Մեկնությունը]

① «漆雕开» - Ցիյյառ Քայ. Կոնֆուցիոսի սամն էր՝ Ցիյյառ տոհմից, Քայ ամունով:

② «吾斯之未能信» - «Ես վստահ չեմ, որ կվարողանամ». Սանը համեստություն էր անում. նման պատասխանը ենթադրում է, որ ծառայության մեջ կատարելագործվելը տևական գործընթաց է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.7 子曰：“道不行，乘桴①浮于海。从②我者，其由与？”子路闻之喜。子曰：“由也好勇过我，无所取材③。”

Ուսուցիչն ասաց. «Վյատեղ Ուղի չկա, լաստ կնատեմ ու կլողամ դեալի ծով: Ո՞վ կիետսի ինձ. թերևս՝ Յուն»:

Ցիլուին դա դուր եկավ: Ուսուցիչն ասաց. «Յոուն ավելի քաջ է, քան ես, սակայն նյութ չկա»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Մեր դիրքորոշումները այստեղ հաշվի չեն առնում: Ես ուզում եմ մի լաստ նատել ու լողալ դեալի ծով: Վախենամ՝ միայն Զունոուն հետսի ինձ»:

Դա լսելով՝ Ցիլուն շատ ուրախացավ:

Քոնձին ասաց. «Զունոուն շատ քաջ է, նրա քաջությունը զարմացնում է ինձ, սակայն դա բավական չէ»:

[Մեկնությունը]

① «桴» - «լաստ». պատրաստվում էր հնդկեղեգմից կամ փայտից:

② «从» - «միանալ», «անցնել», «հետևել» և այլն. ասույթում կիրառված է «հետևել» իմաստով:

③ «材» - «նյութ», «շինանյութ», «Զրույցների» որոշ աղբյուրներում այս գաղափարագիրը թարգմանված է որպես «գերան» կամ «փայտ», այսինքն՝ Կոնֆուցիոսն ասել էր, որ չգիտի, թե որտեղից լաստի համար գերան գտնի: Սակայն մեկնողների մեծամասնությունը գտնում է՝ նա նկատի է ունեցել, որ միայն քաջությունը բավական չէ: Յոռն քաջ լինելով՝ անհամբեր էր, իսկ դա բացասական որակ էր համարվում ազնվայրի համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.8 孟武伯问子路仁乎？子曰：“不知也。”又问。子曰：“由也，千乘之国，可使治其赋①也，不知其仁也。”“求也何如？”子曰：“求也，千室之邑②，百乘之家③，可使为之④宰⑤也，不知其仁也。”“赤也何如？”子曰：“赤也，束带立于朝，可使与宾客⑥言也，不知其仁也。”

Մեն Ուրոն հարցրեց՝ արդյո՞ք Ձիլուն մարդկայնություն ունի:
Ուսուցիչն ասաց.

- Չգիտեմ:

Նա կրկնեց հարցը:

Ուսուցիչն ասաց.

- Յոռն կարող է հազար մարտակառք մարտի դաշտ հանող տերության զորքն առաջնորդել, սակայն չգիտեմ՝ մարդկայնություն ունի՞:

- Ի՞նչ կասես Ցյուի մասին:

Ուսուցիչն ասաց.

- Ցյուն կարող է հազար ծոլս ունեցող համայնք ղեկավարել, որ հարյուր մարտակառք է հանում մարտի, սակայն չգիտեմ՝ մարդկայնություն ունի՞:

- Ի՞նչ կասես Չիի մասին:

Ուսուցիչն ասաց.

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

- Եթե նրան ծխական հանդերձներ հազցնես, կարող է հարևան տերություններից պատվիրակներ ընդունել, սակայն չգիտեմ՝ մարդկայնություն ունի՞:

[Փոխադրությունը]

Մեն Ուրոն հարցրեց Քունձիին՝ արդյոք Զիլուն առաքինի է, թե՞ ոչ:
Քունձին ասաց.

- Չգիտեմ:

Մեն Ուրոն կրկնեց հարցը:
Քունձին ասաց.

- Չունյոուն կարող է հազար մարտակառք մարտի դաշտ հանող տերության զորքն առաջնորդել, սակայն չգիտեմ՝ նա առաքինի՞ է, թե՞ ոչ:

- Ի՞նչ կասես Ցյուի մասին, - շարունակեց Մեն Ուրոն:
Քունձին ասաց.

- Նա կարող է հազար տնտեսություն ունեցող համայնք ղեկավարել և մարտի առաջնորդել հարյուր մարտակառք, սակայն չգիտեմ՝ նա առաքինի՞ է, թե՞ ոչ:

- Ի՞նչ կասես Գունսի Զիի մասին:
Քունձին ասաց.

- Եթե Զին արքունական հանդերձներ կրի, կարող է նստել ապարանքում և հարևան տերությունների պատվիրակներին ընդունել ու բանակցություններ վարել, սակայն չգիտեմ՝ նա առաքինի՞ է, թե՞ ոչ:

[Մեկնությունը]

① «賦» - իին զինվորական ծառայության համակարգը ներառում էր ռազմական ու քաղաքական աշխատանքներ:

② «邑» - «համայնք». այդպես էին կոչվում հիմնականում գյուղաքաղաքները: «Զույյի մեկնություններ» աշխատության՝ Զուան իշխանի կառավարման քանութերորդ տարվա մասին հատվածում նշվում է

Կոնֆուցիոս. Զրույցներ

հետևյալը. «Ֆան համայնքում իին տիրակալների ոգիներին նվիրված տաձար կար»:

③ «家» - «տուն», «ընտանիք». հնում պաշտոնյաները նշանակվում էին վարչական միավորներում՝ հարկ հավաքելու և վարչարարական գործառույթներով: Այդ վարչական միավորները կոչվում էին «ցայդի» կամ «ցայի», «家» գաղափարագիրը կիրառված է հենց այդ իմաստով:

④ «之» - պատկանելություն ցուց տվող բառամասնիկ է:

⑤ «宰» - արքունական աստիճանավոր, կառավարիչ:

⑥ «宾客» - «հյուր», «այցելու». ասույթում կիրառված է «պատվիրակ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.9 子谓子贡曰：“女与回也孰愈？”对曰：“赐也何敢望回？回也闻一以知十，赐也闻一以知二。”子曰：“弗如也；吾与①女弗如也。”

Ուսուցիչը հարցրեց Զիգունին.

- Ո՞վ է առավել՝ դու՝, թե՞ Հուեյը:

Նա պատասխանեց.

- Միթե կարող եմ համեմատվել Հուեյի հետ։ Հուեյը լսելով մեկը՝ իմանում է տասը, իսկ ես լսելով մեկը, իմանում եմ երկուսը։

Ուսուցիչն ասաց.

- Համեմատելի չեք։ Ես համաձայն եմ, որ համեմատելի չեք։

[Փոխադրությունը]

Քոնձին հարցրեց Զիգունին.

- Ո՞վ է ավելի ընդունակ, դու՝, թե՞ Յան Հուեյը:

Զիգունը պատասխանեց.

- Միթե ես կարող եմ համեմատվել Հուեյի հետ։ Լսելով մի բան՝ նա

կարող է եզրակացնել տասը, մինչդեռ ես լսելով մի բան՝ կարող եմ եզրակացնել երկուսը:

Քոնձին ասաց.

- Չեմ ժխտի: Ես համաձայն եմ ասածիդ, չեմ ժխտի:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «与» - «Ա», «միասին». ասույթում կիրառված է որպես համաձայնություն արտահայտող բայ:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1.0 宰予昼寝。子曰：“朽木不可雕也，粪土之墙不可圬①也；于予与何诛②？子曰③：“始吾于人也，听其言而信其行；今吾于人也，听其言而观其行。于予与改是。”

Զայ Յուն օրը ցերեկով քնած էր: Ուսուցիչն ասաց.

- Փտած փայտի վրա չեն փորագրում, աղբաշեն պատը չեն ներկում: Ինչո՞ւ պիտի հանդիմանեմ Յուին:

Ուսուցիչը նաև ասաց.

- Նախկինում ես լսում էի, թե ինչ են ասում մարդիկ և հավատում էի, որ կանեն դա: Հիմա լսելով մարդկանց ասածը՝ ես հետևում եմ՝ կանեն նրանք դա, թե՞ ոչ: Այդ փոփոխության պատճառը Յուն է:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Զայ Յուն ցերեկով քնած էր: Քոնձին ասաց. «Փտած փայտը պիտանի չէ փորագրելու համար, գոմաղբով ծեփված պատը չեն ներկում: Չեմ հանդիմանի Զայ Յուին»:

Այնուհետև նա ասաց. «Նախկինում լսելով մարդկանց՝ ես հավատում էի նրանց, իսկ հիմա լսելով մարդկանց՝ ես ստուգում եմ նրանց: Դրա պատճառը Յուի հետ տեղի ունեցածն էր»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Մեկնությունը]

① «朽» - «սվաղել». հնում այդպես էին անվանում նաև որմնադրի սվաղող, հարթեցնող գործիքը, սակայն ասուլթում կիրառված է «ներկել» իմաստով:

② «何诛» - բառացի նշանակությունն է՝ «ինչո՞ւ հանդիմանել»:

③ «子曰» - «Ուսուցիչն ասաց». ասուլթում կիրառված է երկու անգամ, առաջինը՝ ուրաքի նշանակությամբ, երկրորդը՝ «այնուհետև ուսուցիչն ասաց» իմաստով՝ դեպքերի հաջորդականությունը նշելու համար: Հնում հաձախսկի հանդիպող հռետորաբանական կանոն էր, առավել մանրամասն նկարագրված է Յու Յունի «Հին գրերի շարադրման առանձնահատկությունները» աշխատության մեջ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1 1 子曰：“吾未见刚者。”或对曰：“申枨①。”子曰：“枨也欲，焉得刚？”

Ուսուցիչն ասաց.

- Ես դեռ չեմ հանդիպել հաստատուն մարդու:

Ուն մեկը հարցրեց.

- Հապա Շեն Չենը:

Ուսուցիչն ասաց.

- Չենը տարված է կրքերով, ինչ հաստատություն:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց.

- Ես դեռ չեմ տեսել վճռական ու անսխալ մարդու:

Ինչո՞ր մեկը հարցրեց.

- Շեն Չենը հենց այդպիսի մարդ է:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

Քոնճին ասաց.

- Շեն Զենը չափազանց շատ կրքեր ունի, ինչպես կարող է վծոական համարվել:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «申枨» - Շեն Զեն. Կոնֆուցիոսի սանն էր՝ Լու տերության հպատակ: «Չուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակված է Շեն Դան անունով:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

5.1.2 子贡曰：“我不欲人之加①诸我也，吾亦欲无加诸人。”子曰：“赐也，非尔所及也。”

Զիգունն ասաց.

- Այն, ինչ ես չեմ ցանկանում անել մարդկանց, ես ցանկանում եմ, որ մարդիկ ինձ չանեն:

Ուսուցիչն ասաց.

- Ցի, դա անհնար է անել:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Զիգունն ասաց.

- Ես չեմ ցանկանում բռնանալ մարդկանց վրա, և չեմ ցանկանում, որ մարդիկ բռնանան ինձ վրա:

Քոնճին ասաց.

- Ցի, դրան անհնար է հասնել:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «加» - ունի «կիրառել», «անել», «ավելացնել» իմաստները, սակայն ասուլթում ունի «վիրավորել», «նվաստացնել» իմաստները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1.3 子贡曰：“夫子之文章①，可得而闻也；夫子之言性②与天道③，不可得而闻也。”

Զիգունն ասաց. «Ուսուցչի մտքերը մշակույթի մասին հայտնի են, սակայն ուսուցչի խոսքերը Երկնքի Ուղու բնույթի մասին հայտնի չեն»:

[Փոխադրությունը]

Զիգունն ասաց. «Ուսուցչի դատողությունները գրականության մասին մենք կարող ենք լսել, սակայն մենք չենք կարող լսել նրա դատողությունները բնույթյան ուղու մասին»:

[Մեկնությունը]

① «文章» - բառացի՝ «գիր», «հոդված». Կոնֆուցիոսը իին մշակույթի տարածողմաներից էր: Վս ասույթում «文章» բառակապակցությունը վերաբերում է մշակույթի իմացությանը: «Զրոյցներում» մեծ տեղ է հատկացվում բանաստեղծությանը, երաժշտությանը, գրերին, պատմությանը, ծեսերին և վարպելակարգին:

② «性» - բառացի՝ «սեռ». ասույթում կիրառված է «բնույթ» իմաստով: Հնում չկար տիպական պատկերացում մարդկային բնույթի մասին: Կոնֆուցիոսը, Մենածին և Սյունածին ունենին իրենց պատկերացումները: «Զրոյցների» տասնյոթերորդ գլուխ Երկրորդ ասույթում ներկայացված է Կոնֆուցիոսի տեսակետը մարդկային բնույթի մասին:

③ «天道» - բառացի՝ «Երկնքի ուղի», հնում այդ հասկացության մեջ ամփոփված էին «բնություն-մարդ» փոխհարաբերությունները: Իսկ «Զույի մեկնություններ» աշխատության՝ Զատ իշխանի կառավարման տասնութերորդ տարվա մասին հատվածում Զեն Գոռուձին նշում է հետևյալը. «Երկինքը հեռու է մարդկանցից», այդ արտահայտությամբ ասես Ժխտելով բնության և մարդկային հասարակության միջև ներ-

Յան Բոնունի փոխադրությունը և մեկնությունը

դաշնակ փոխարաքերությունների անհրաժեշտությունը: Իսկ «Զույի մեկնություններ» աշխատության՝ Զառ իշխանի կառավարման քանվեցերորդ տարվա մասին հատվածում Յան Յինն ասում է հետևյալը: «Երկնքի ուղի չկա»: Կոնֆուցիոսի ժամանակաշրջանին բնորոշ էր նման մտածելակերպը, այդ պատճառով էլ նրա սանը նման տեսակետ էր հայտնում:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

5.1.4 子路有闻，未之能行，唯恐有①闻。

Զիլուն լսելով այն, ինչում չէր հաջողել, վախենում էր կրկին լսելուց:

[Փոխադրությունը]

Երբ Զիլուն լսում էր մի բանի մասին, ինչն ինքը չի կարող անել, վախենում էր դրա մասին նորից լսելուց:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «有»՝ բառացի՝ «ունենալ», «լինել», սակայն ասույթում կիրառված է «կրկին» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

5.1.5 子贡问曰：“孔文子①何以谓之‘文’也？”子曰：“敏而好学，不耻下问，是以谓之‘文’也。”

Զիգունը հարցրեց.

Հնչու՞ Քուն Վեճձիխ «Վեն» կոչեցին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց.

- Իմաստուն էր և ուսումնասեր, չէր ամաչում խորհուրդ հարցնել ստորադասներից, դրա համար էլ «Վեճ» կոչեցին:

[Փռխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Ինչի՞ համար Քոն Վեճնձիին շնորհեցին «Վեճ» պատվանունը:
Քոնձին պատասխանեց.
- Նա իմաստուն էր, ձկուն, սիրում էր սովորել, համեստ էր, չէր ամաչում ենթականերից խորհուրդ հարցնել, այդ պատճառով էլ նրան շնորհեցին «Վեճ» պատվանունը:

[Մեկնությունը]

① «孔文子» - Քոն Վեճնձի. Վեճ տերության աստիճանավոր էր:
Կոնֆուցիոսի ժամանակակիցն էր, վախճանվել է Լու տերության Այիշխանի կառավարման տասնինգերորդ տարում: Նրանից մեկ տարի հետո մահացել է Կոնֆուցիոսը, այսինքն՝ այս հարց ու պատասխանը տեղի է ունեցել Այիշխանի կառավարման տասնինգերորդ տարում կամ տասնվեցերորդ տարվա սկզբին:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1.6 子谓子产①, “有君子之道四焉: 其行己也恭, 其事上也敬,
其养民也惠, 其使民也义。”

Ուսուցիչն ասաց Զիշանի մասին. «Ունի ազնվայրի ուղու չորս որակները. Վարքում հարգալից է, ավագներին ծառայելիս՝ լի պատկառանքով, առատաձեռն է ժողովրդի հանդեպ ու մարդկանց ծառայեցնում է արդարությամբ»:

[Փոխադրությունը]

Քոնձին Զիշանի մասին պատմելիս ասաց. «Նա չորս վարվեակերպ ունի, որոնք ներդաշնակ են ազնիվ մարդու էությանը. գործում է ինքն իրեն հարգելով, ծառալության մեջ պատասխանատու է, բարի է մարդկանց նկատմամբ և նրանց կառավարում է արդարությամբ»:

[Մեկնությունը]

① «*子产*» - Զիշան. Զեն տերության նախարարապետն էր, հայտնի նաև որպես Գունսուն Ցյառ, ապրել է «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում, Զենի տիրակալ Մուի թոռն էր, պաշտոնավարել է քաներկու տարի: Նա հաջողությամբ կարողանում էր ղեկավարել տերությունը բարդ քաղաքական պայմաններում և Հին Չինաստանում հայտնի էր որպես հիանալի պետական գործիչ և դիվանագետ:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.1.7 子曰：“晏平仲①善与人交，久而敬之②。”

Ուսուցիչն ասաց. «Յան Փինջունը լավ էր վերաբերում մարդկանց, ուստի հարգանք էր վայելում»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Յան Փինջունը կարողանում էր լնկերություն անել մարդկանց հետ, և որքան տևական էր լինում դա, այնքան նրան ավելի էին հարգում»:

[Մեկնությունը]

① «*晏平仲*» - Յան Փինջուն. Ցի տերության աստիճանավոր էր,

Կոնֆուցիոն. Զրույցներ

հայտնի նաև Յան Ին ամունով: Նրա կենսագրությունը նկարագրված է «Պատմագրության» վաքսուներկուերորդ հատորում: Շատերը նրան էին վերագրում «Յանձիի Գարուն և Աշուն» աշխատության հեղինակությունը, սակայն ներկայումս պարզել է, որ այդ աշխատությունը գրվել է Արևմտյան Հան տերության ժամանակ:

② «久而敬之» - բառացի՝ «ուստի հարգանք էր վայելում». Նպատակահարմար է փոխադրել որպես՝ «որքան տևական էր լինում ընկերությունը, այնքան նրան ավելի էին հարգում»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5 . 1 8 子曰：“臧文仲①居蔡②，山节藻棁③，何如其知④也？”

Ուսուցիչն ասաց. «Զան Վենջունը կրիա էր պահում մի սրահում, որի պուների գլխամասերին լեռներ էին քանդակված, իսկ հիմքերում՝ ջրիմուներ: Մի՞թե դա իմաստնություն է»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զան Վենջունը տուն է կառուցել Ցայ կոչվող մեծ կրիայի համար, դրա այուների վերին հատվածում լեռներ են քանդակված, իսկ ներքևում՝ ջրիմուներ: Ինչպես կարելի է նրան խելացի համարել»:

[Մեկնությունը]

① «臧文仲» - Զան Վենջուն. Լու տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Զան Սունչեն:

② «居蔡» - «Ջուցայ». ինում «ձուցայ» կամ «ցայ» էին անվանում մեծ կրիաներին: «Հուայնանի իմաստուններ» աշխատության մեջ նշվում է. «Մեծ կրիան դուրս եկավ լձակից»: Գառ Յուն իր մեկնություն-

ներում նշում է՝ «Դացայր տեղանուն է, հավանաբար՝ Զան Վենցունի բնակավայրը»: Սակայն այդ տեսակետը այնքան էլ իրականությանը չի համապատասխանում: Հնում կրիաների պաշտամունք կար և Վենցունն իր կրիայի համար շրեն պայմաններ էր ապահովել, ինչը Կոնֆուցիոսը սնահավատություն ու ցուցամոլություն էր համարում:

③ «山 节 藻 梢» - արտահայտությունը վերաբերում է վերևում և ներքում արված պունարանդակներին:

④ «知» - «իմանալ». ասույթում կիրառված է «智»՝ «իմաստնություն», «գիտելիք», «խելք» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

5.1.9 子张问曰：“令尹子文①三仕②为令尹，无喜色；三已之，无愠色。旧令尹之政，必以告新令尹。何如？”子曰：“忠矣。”曰：“仁矣乎？”曰：“未知③；—焉得仁？”“崔子弑齐君④，陈文子⑤有马十乘，弃而违之。至于他邦，则曰：‘犹吾大夫崔子也。’违之。之一邦，则又曰：‘犹吾大夫崔子也。’违之。何如？”子曰：“清矣。”曰：“仁矣乎？”曰：“未知③；—焉得仁？”

Զիջանը հարցրեց.

- Նախարարապետ Զիվենը երեք անգամ նշանակվել է պաշտոնի, սակայն առանց որպահանապու, երեք անգամ զրկվել է որունցից՝ առանց վշտանալու: Իրեն փոխարինած նախարարապետին նա ամեն անգամ ծանոթացնում էր տերունական գործերին: Ինչպիսի՞ն է:

Ուսուցիչն ասաց.

- Հավատարիմ է:

- Մարդկայի՞ն է, արդյոք, հարցրեց Զիջանը:

- Զգիտեմ, մարդկայի՞ն է,թե՞ ոչ, պատասխանեց ուսուցիչը:

Զիջանը հարցրեց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Ցույձին սպամեց Ցիհ տիրակալին: Զեն Վենձին, ով չորս տասնյակ նժույզ ուներ, հեռացավ Ցիից: Գալով այլ տերություն՝ նա ասաց. «Տեղի տիրակալը նման է Ցույձիին»: Գնալով այլ տերություն՝ նա ասաց. «Տեղի տիրակալը նման է Ցույձիին»: Ինչպիսի՞ն է:

Ուսուցիչն ասաց.

- Ազնիվ է:

- Մարդկայի՞ն է, արդյոք, հարցրեց Զիջանը:

- Զգիտեմ՝ մարդկայի՞ն է, թե՛ ոչ, պատասխանեց ուսուցիչը:

[Փոխադրությունը]

Զիջանը հարցրեց.

- Չու տերության նախարարապետ Զիվենը երեք անգամ նշանակվել է բարձր պաշտոնի, սակայն առանց ուրախության նշույլի, երեք անգամ պաշտոնանկ է արվել՝ առանց տիկրության նշույլի: Ամեն անգամ նա իրեն փոխարինող նախարարապետին տեղեկացրել է պետական գործերի մասին: Ի՞նչ ասես նրա մասին:

- Նա հավատարիմ է տերությանը, ասաց Քունձին:

- Նա կարող է առաքինի համարվել, հարցրեց Զիջանը:

- Զգիտեմ, կարող է առաքինի համարվել, պատասխանեց Քունձին:

Զիջանը հարցրեց.

- Երբ Ցույձին առանց պատճառի սպամեց Ցիհ տիրակալ Զուանին, Զեն Վենձին, ով քառասուն ձի ուներ, քողեց ամեն ինչ ու հեռացավ Ցի տերությունից: Գալով այլ տերություն՝ նա ասաց. «Այստեղի տիրակալը նման է մեր Ցույձիին»: Եվ կրկին հեռացավ: Գնալով մեկ այլ տերություն, նա ասաց. «Այստեղի տիրակալը նման է մեր Ցույձիին»: Եվ կրկին հեռացավ: Ի՞նչ կասես նրա մասին:

- Նա արդարամիտ է, ասաց Քունձին:

- Նա կարող է առաքինի համարվել, հարցրեց Զիջանը:

- Զգիտեմ՝ կարող է առաքինի համարվել, պատասխանեց Քունձին:

[Մեկնությունը]

① «令尹子文» - նախարարապետ Զիվեն. Չու տերության նախարարապետը (վարչապետը) կոչվում էր «令尹»: Զիվենը հայտնի էր նաև որպես Դոռ Գու և Յու Ի: «Զուոյի մեկնություններում» նշվում է, որ Զիվենը նախարարապետ է դարձել Զուան տիրակալի կառավարման երեսուներորդ տարում և իր պաշտոնը զիջել է Զիյունի՝ Գուն տիրակալի կառավարման քամերեքերորդ տարում: «Տերությունների ժամանակագրություն» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Սի Զիվենը երեք անգամ նախարարապետ է եղել, սակայն ոչինչ չի կուտակել»:

② «三仕» - «երեք անգամ նշանակվել». այստեղ «երեք» թիվն իրականում ունի «քանից», «քազմից» նշանակությունները:

③ «未知» - «հայտնի չի»: ասույթում կիրառված է «չգիտեմ» իմաստով: Հանդիպում է նաև «Զրուցների» հինգերորդ և ութերորդ գլուխներում:

④ «崔子弑齐君» - «Ցույձին սպանեց Ցիի տիրակալին». Ակատի ունի Ցի տերության աստիճանավոր, «արքայասպան» Ցույձիին, ով նաև հայտնի էր Ցիշուն, Ցի Զուանգուն, Մինգուան անուններով: «弑» գաղափարագրով նշվում էր տիրակալի կամ ծնողի սպանությունը: Ցույձի իրականացրած սպանության մասին հիշատակված է նաև «Զուոյի մեկնություններում»:

⑤ «陈文子» - Չեն Վենձի. նա ևս Ցի տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Սյու Ու: Երբ Ցույձին սպանեց Ցիի տիրակալին, Չեն Վենձին հեռացավ տերությունից և վերադարձավ Երկար դեգերումներից հետո, երբ իշխանության դեկն արդեն Ցույձիի ձեռքում չէր:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

5 . 2 0 季文子①三思②而后行。子闻之，曰：“再③，斯可矣。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Զի Վենձին երեք անգամ մտածում էր, հետո գործում: Լսելով դրա մասին՝ Ուսուցիչն ասաց. «Երկու անգամը բավական է»:

[Փոխադրությունը]

Զի Վենձին մինչև գործելը բազմիցս կշռադատում էր անելիքը: Այդ մասին լսելով՝ Քունձին ասաց. «Երկու անգամ ծանրութեթև անելը բավական կլինի»:

[Մեկնությունը]

① «季文子» - Լու տերության աստիճանավոր էր, համարվում էր «քաղաքական երկարակյաց», քանզի պաշտոնավարել էր Վեն, Սյուան, Չեն և Սյան տիրակալների օրոք:

② «三思» - «Երեք անգամ մտածել». հնում «երեք» թիվը հաձախ կիրառվել է բազմակիություն նշելու համար:

③ «再» - բառացի՝ «նորից», «կրկին». ասուլյատում կիրառված է «կրկին մտածել» իմաստով, փոխարինում է «思» գաղափարագրին: Թան հարստության օրոք գրված «蒼ի գրառումներ» աշխատության մեջ նշվում է, որ երկու անգամ մտածելու առավելությունն առավել արագ ու դյուրին որոշում կայացնելն է:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.1 子曰：“宁武子①，邦有道，则知；邦无道，则愚②。其知可及也，其愚不可及也。”

Ուսուցիչն ասաց. «Երբ տերությունն Ուղի ուներ, Նին Ուձին իմաստուն էր, երբ տերությունն Ուղի չուներ՝ հիմար էր: Նրա իմաստությունը կարելի էր չափել, սակայն հիմարությունն անչափելի էր»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Նին Ուձին իմաստուն էր երկրի բարօրության օրոք, սակայն հիմար էր ձևանում, երբ երկիրն ընկղմվում էր խավարի մեջ: Նրա իմաստությանը հնարավոր էր հասնել, սակայն հիմարությունն անմրցելի էր»:

[Մեկնությունը]

① «*宁武子*» - Նին Ուձի. Վեյ տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Նին Յու:

② «*愚*» - «*հիմարանալ*», «*հիմար*». Քուն Անգոն կարծում էր, որ առավել տեղին է զաղափարագիրը փոխադրել որպես «*ձևանալ հիմար*», քանզի առավել հավանական է, որ Նին Ուձին հիմար էր ձևանում՝ ապաշնորհ տիրակալի քաղաքականության պատասխանատվության մասը չստանձնելու համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2 2 子在陈①，曰：“归与！归与！吾党之小子狂简，斐然成章，不知所以裁之②。”

Երբ Ուսուցիչը Զենում էր, ասաց. «Վերադառնանք: Վերադառնանք: Իմ տան կրտսերները բիրտ են ու անփույթ, նրանք ուսյալ են, սակայն ես չգիտեմ, թե ինչպես կարելի է նրանց զապել»:

[Փոխադրությունը]

Երբ Քոնձին գտնվում էր Զեն տերությունում, ասաց. «Պետք է վերադառնանք: Պետք է վերադառնանք: Մեր սամերը հավակնուտ են ու մեծամիտ, և թեև նրանց զիտելիքները տպավորիչ են, ես դժվարանում եմ ուղղորդել նրանց»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Մեկնությունը]

① «陈» - Չեն. տերության անվանում է: Երբ Զոռու տերության Ու արքան նվաճեց Շուն տերությունը, պարտված արքայատոհմի ժառանգորդ Գույ Մինին նվիրաբերեց Գույ զավառը, որտեղ էլ ձևավորվեց Չենը: Տեղակայված է եղել ներկայիս Հենան նահանգում՝ Կայֆենից արևելք և Անհոյ նահանգի Յիսի շրջանի հյուսիսում: Ոչնչացվել է «Դարնան և Աշնան» ժամանակաշրջանի վերջում, Զու տերության կողմից:

② «不知所以裁之» - «չզիտեմ, թե ինչպես կարելի է նրանց զավել». «Զուննի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակված է նշված արտահայտությունը, որը փոխադրված է հետևյալ կերպ. «Զգիտեմ, թե ինչպես ուղղորդեմ նրանց»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5 . 2 3 子曰：“伯夷、叔齐①不念旧恶②，怨是用希。”

Ուսուցիչն ասաց. «Բո Յին և Շու Յին չէին հիշում նախկին չարիքները, և հազվադեպ են վրդովեցնում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Բո Յին և Շուցին ատելություն չեն կրում սրտերում, այդ պատճառով էլ քչերին են վրդովեցնում»:

[Մեկնությունը]

① «伯夷、叔齐» - Բո Յի, Շու Յի. Գու Զու տիրակալի երկու որդիներն էին, որոնք հոր մահից հետո փոխանցում էին զահը միմյանց, մինչև որ Զոռու տերության Ու արքայի զորքը նվաճեց նրանց տերու-

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

թյունը: Եղբայրները հացադոլ հայտարարեցին՝ հրաժարվելով Զոռին պատկանող սննդից և սովամահ եղան Շոռոյան լեռան ստորոտում:

② «惡» - «չարիք». ասույթում կիրառված է «թշնամություն», «ատելություն» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.4 子曰：“孰謂微生高①直？或乞醯②焉，乞諸其鄰而與之。”

Ուսուցիչն ասաց. «Ո՞վ է ասել, որ Վելշեն Գառն ազնիվ է: Ոմն մեկը նրանից քացախ էր խնդրել, իսկ նա հարևանից էր վերցրել ու տվել»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ո՞վ է ասել, որ Վելշեն Գառն ուղամիտ է: Ինչ-որ մեկը նրանից քացախ էր խնդրել, և նա, ամաչելով ասել, որ չունի, հարևանից պարտք էր վերցրել ու տվել»:

[Մեկնությունը]

① «微生高» - Վելշեն Գառ. Լու տերության հպատակ էր: Զուանձին մի պատմություն է հիշատակում Վելշեն Գառյի հուսալիության մասին: Նա ժամադրվել էր մի օրիորդի հետ կամրջի տակ և սպասում էր նրան: Օրիորդը ուշանում էր, իսկ ջուրը՝ բարձրանում: Ի վերջո՝ օրիորդն այդպիս էլ չեկավ, և Վելշեն Գառն խեղդվեց, որովհետև որոշել էր սպասել մինչև վեր:

② «醯» - «քացախ»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.5 子曰：“巧言、令色、足①恭，左丘明②耻之，丘亦耻之。匿怨而友其人，左丘明耻之，丘亦耻之。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Ճռո՞ն բառերից, շինծու շարժուձևից ու ավելորդ պատկառանքից ամաչում էր Զուռ Ցյումինը, ամաչում եմ և ես: Թշնամանքը թաքցներով՝ բարեկամանալուց ամաչում էր Զուռ Ցյումինը, ամաչում եմ և ես»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Գերեցիկ ձառերը, կեղծ վարվելավերավը և ցուցադրական հարգալիրությունն ամոթալի էր համարում Զուռ Ցյումինը, ամոթալի եմ համարում և ես: Սրտում թշնամանք թաքցրած՝ ընկերանալը ամոթալի էր համարում Զուռ Ցյումինը, ամոթալի եմ համարում և ես»:

[Մեկնությունը]

① «足» - բառացի՝ «ոտք»: Հնում կիրառվել է նաև «չափազանց», «ավելորդ» իմաստներով:

② «左丘明» - Զուռ Ցյումին. ըստ երևոյթին «Զուռյի մեկնությունների» հեղինակի հետ նույն անունն ունեցող անձ է: Այդ տեսակետի կողմնակիցն է նաև Սիմա Ցյանը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.6 颜渊季路侍①。子曰：“盍②各言尔志？”

子路曰：“愿车马衣轻轻字当删裘与朋友共敝之而无憾③。”

颜渊曰：“愿无伐善，无施④劳。”

子路曰：“愿闻子之志。”

子曰：“老者安之，朋友信之，少者怀之⑤。”

Յանուանը և Զիլուն Ուսուցիչ մոտ էին: Ուսուցիչն ասաց.

- Ինչո՞ւ չպատմել յուրաքանչյուրիդ ցանկությունների մասին:

Զիլուն ասաց.

- Կցանկանայի, որ բարեկամներս վարեն իմ կառքն ու երիվարները, կրեն թեթև ու մորթեղեն հանդերձները, և եթե փչացնեն դրանք՝ չափսայի:

Յանյուանն ասաց.

- Չէի ցանկանա պարծենալ իմ առաքինություններով և ի ցույց դնել ծառայություններս:

Զիլուն ասաց.

- Կցանկանայինք լսել Ուսուցչի ցանկությունները:

Ուսուցիչն ասաց.

- Ավագները խաղաղ ապրեն, բարեկամները ուղղախոս լինեն, կրտսերները՝ հոգատար:

[Փոխադրությունը]

Քունձին նստած էր, իսկ Յանյուանը և Զիլուն կանգնած էին նրա մոտ: Քունձին ասաց.

- Ինչո՞ւ չխսենք մեր ցանկությունների մասին:

Զիլուն ասաց.

- Կցանկանայի, որ ընկերներս օգտվեին իմ կառքից ու ձիերից, հագուստներից, և եթե նրանք վճասեին դրանք, ես չէի ափսոսա:

Յանյուանն ասաց.

- Չէի ցանկանա պարծենալ իմ արժանիքներով և ի ցույց դնել այլոց մատուցած ծառայություններս:

Զիլուն ասաց Քունձիին.

- Հոսով եմ՝ կյսենք նաև Ձեր ցանկությունները:

Քունձին ասաց.

- Ես կցանկանայի, որ ծերերն ապրեն խաղաղության մեջ, ընկերներն ազնիվ ու վտահելի լինեն, իսկ երիտասարդները՝ հոգատար:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «侍» - «ծառայել». «Զրույցներում» բավականին հաճախ կիրառվող գաղափարագիր է, կիրառվում է «ծառայելուն պատրաստակամ կանգնել» իմաստով: Եթե կիրառվում է «侍坐» ձևով, նշանակում է, որ Կոնֆուցիոսը նստած է, իսկ սաները՝ կանգնած:

② «盍» - ունի «ինչո՞ւ ոչ» իմաստը:

③ Լյու Բատնանի «ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» նշվում է, որ նշված արտահայտության մեջ կիրառված «轻»՝ «թեթև» բառը կիրառության մեջ է մտել Թաճ հարստության օրոք, այսինքն՝ ավելացվել է «Զրույցների» բնագրին շատ ավելի ուշ:

④ «施» - «շնորհ», «մատուցած ծառայություն». «Հուայնանի իմաստուններ» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Աշխարհը լի է շնորհներով, և դրանք չեն ցուցադրում իրենց գեղեցկությունը»: «Ծեսերի գրքում» նշվում է. «Ծառայությունները պետք է մատուցել համեստորեն»:

⑤ «信之, 怀之» - ասույթում կիրառված են համապատասխանաբար «ուղղախոս, հոգատար» իմաստուններով:

ԿՈՆՖՈՒՅԻՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.7 子曰：“已矣乎，吾未见能见其过而内自讼者也。”

Ուսուցիչն ասաց. «Ահա և վերջ: Ես չեմ հանդիպել մեկին, ով կարող էր տեսնել իր սխալներն ու քննադատել իրեն»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Մոռացեք: Ես դեռ չեմ տեսել մեկին, ով կտեսնի իր սեփական սխալներն ու դրանց համար կմեղադրի ինքն իրեն»:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

5.2.8 子曰：“十室之邑，必有忠信如丘者焉，不如丘之好学也。”

Ուստիշն ասաց. «Տաս ծխից բաղկացած համայնքում էլ կգտնվեն ինձ նման հավատարիմ և վստահելի մարդիկ, սակայն նրանք չեն սիրում ուսմունքն ինձ նման»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Նույնիսկ տաս տնտեսությունից բաղկացած զյուղակում կգտնվեն մարդիկ, ովքեր կհավասարվեն ինձ՝ տիրակալին հավատարմությամբ ու վստահելիությամբ, սակայն նրանք չեն կարող հավասարվել ինձ ուսման հանդեպ ունեցած սիրով»:

Գլուխ 6. Յունի մասին Ընդամենը 30 ասույթ

(Չու Սիի «Մեկնություններում» 28 ասույթ են,
որովհետև մի քանի ասույթ միավորված են)

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1 子曰：“雍也可使南面①。”

Ուսուցիչն ասաց. «Յունը կարող է բազմել դեմքով դեպի հարավ»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ժան Յուն. այս այրը կարող է բարձր դիրք գրադարձեց-
նել կամ գավառ կառավարել»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «南面» - «Հարավ». Ինում կայսրերն ու արքաները բազմում էին
գահին՝ դեմքով դեպի հարավ: Հետագայում դեմքով դեպի հարավ
նստելը համարվում էր ազնվականությանը և պետական աստիճա-
նավորներին բնորոշ դիրք: Այդ մասին հիշատակվել է Վան Ինչիի
«Հնամենի աշխատությունների ուսումնասիրություն» և Լին Ծինքանի
«Ծեսերի գրքի մեկնություններ» աշխատություններում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2 仲弓问子桑伯子①。子曰：“可也简②。”仲弓曰：“居敬而行
简，以临其民，不亦可乎？居简而行简，无乃③大④简乎？”子曰：“雍
之言然。”

Յան Բոնունի փոխադրությունը և մեկնությունը

Զուն Գունը հարցրեց Ձիսան Բայձիի մասին: Ուսուցիչն ասաց.

- Ընդունակ է, նաև՝ պարզ:

Զուն Գունն ասաց.

- Պետք է պահպանել պատկառանքն անգործության մեջ և պարզությունը՝ գործելիս, երբ կառավարում ես մարդկանց, միթե այդպես չէ: Եթե պարզ ես անգործության մեջ և գործելիս, միթե դա չէ պարզության մեջությունը:

Ուսուցիչն ասաց.

- Յուն, ձշմարիտ ես:

[Փոխադրությունը]

Զուն Գունը հարցրեց ոմն Ձիսան Բայձիի մասին: Գունձին ասաց.

- Նա չափազանց պարզ մարդ է:

Զուն Գունը հարցրեց.

- Կարելի է կառավարել ժողովրդին պարզությամբ ու լրջությամբ՝ պահպանելով օրենքները, այնպես չէ: Պահպանել պարզությունն ամեն ինչում, միթե դա չէ պարզության վեհությունը:

Քունձին ասաց.

- Դու ձիշտ ես:

[Մեկնությունը]

① «子桑伯子» - Ձիսան Բայձի. հայտնի չէ, թե ում մասին է խոսքը: Ոմանք կարծում են, որ Զուանձիի աշխատության գործող անձանցից մեկն է՝ Ձիսան Խուն, ոմանք հակված են ենթադրել, որ խոսքը Ցին տերության Մու տիրակալի կառավարման տարիներին գործած աստիճանավոր Ձիսանի մասին է՝ Գունսուն Ձիի որդու:

② «箇» - «պարզ», «պարզունակ». «Պատմությունների այգի» աշխատության մեջ Ձիսան Բայձիի մասին մի պարբերություն կա, որտեղ նշվում է հետևյալը՝ «Նա թագ չէր կրում», սակայն որոշ վերլուծողներ

Կոնֆուցիոս. Զրույցներ

գտնում են, որ Կոնֆուցիոսի «Զրույցների» ոգուն ավելի բնորոշ է «ընդունակ, բայց ոչ ուսյալ» տարրերակը. հենց դա է նկատի ունեցել Կոնֆուցիոսը «պարզ» որակելով Զիսան Բայձիին:

③ «无乃» - կիրառված է «մի՞թե այդպիս չէ» իմաստով:
④ «大» - «մեծ». ասույթում կիրառված է «մեծություն», «վեհություն» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.3 衰公问：“弟子孰为好学？”孔子对曰：“有颜回者好学，不迁怒，不贰过。不幸短命①死矣，今也则亡，未闻好学者也。”

Այ իշխանը հարցրեց.

- Սաներիցդ ով է ամենաուսումնասերը:

Քոնձին ասաց.

- Սան ունեի՝ Յան Հուեյը, չէր վրդովվում, չէր կրկնում սխալները: Ավաղ, նա շատ վաղ մահացավ, հիմա նրա նման ուսումնասեր մարդիկ չկան:

[Փռխադրությունը]

Լու տերության իշխան Այը հարցրեց.

- Ձեր սաներից ով էր ամենաջանասերը:

Քոնձին ասաց.

- Յան Հուեյ անունով մի սան ունեի, նա շատ լավ էր սովորում, չէր զայրանում այլոց վրա, երբեք չէր կրկնում սխալները: Դժբախտաբար, նա շատ կարծ կյանք ունեցավ: Այժմ նրա նման մարդիկ չկան, չեմ լսել, որ ինչ-որ մեկը նրա նման սիրեր սովորել:

[Մեկնությունը]

① «短命» - «վաղ մահանալ». «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանի «Գունյանի կենսագրություն» աշխատության մեջ նշվում է, որ Յան Հուեյը մահացել է Լու տերության իշխան Այի կառավարման տասնչորսերրորդ տարում: Այդ ժամանակ Կոնֆուցիոսը յոթանասունմեկ տարեկան էր: Բայտ «Չուննիի սամերի պատմագրության»՝ Յան Հուեյը մահացել է երեսունը չքոլորած: «Քուննիի տոհմի պատմություն» աշխատության մեջ նշվում է, որ Յան Հուեյը մահացել է երեսունմեկ տարեկանում, նույնը նշվում է Մատ Ցիլինի «Զրուցների վերլուծություն» աշխատության մեջ:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՇԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.4 子华①使②于齐，冉子③为其母请粟④。子曰：“与之釜⑤。”
请益。曰：“与之庾⑥。”冉子与之粟五秉⑦。
子曰：“赤之适齐也，乘肥马⑧，衣⑨轻裘。吾闻之也：君子周急不
继富。”

Երբ Զիհուան ձանապարհ ընկավ Ցի, Ժանձին եկավ նրա մոր համար կորեկ խնդրելու:

Ուսուցիչն ասաց.

- Վերցրու մեկ ֆու:

Ժանձին ավելին խնդրեց: Ուսուցիչն ասաց.

- Վերցրու մեկ յու:

Ժանձին վերցրեց հինգ բին:

Ուսուցիչն ասաց.

- Երբ Զին ձանապարհվեց Ցի, նրա կառքին լծված էին կուշտ ձիեր, և նա մորթե աստառով հանդերձներով էր: Ես լսել եմ, որ ազնվայրն օգնում է կարիքավորներին, չի հարստացնում ուներներին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Գունսի Հուան որպես դեսպան ձանապարհվեց Ցի տերություն: Ժամանուն եկավ Քունձիի մոտ՝ նրա մոր համար կորեկ խնդրելու:

Քունձին ասաց.

- Տվեք նրան վեց դոռ և չորս շեն կորեկ:
Ժամանուն ավելին խնդրեց.

Քունձին ասաց.

- Տվեք նրան ևս երկու դոռ և չորս շեն:
Ժամանուն վերցրեց ութսուն դան կորեկ:
Քունձին ասաց.

- Եթք Գունը ձանապարհվում էր Ցի, նրա կառքին լծված էին գեր ձիեր, և նա կրում էր մորթեկար տաք ու շքեղ հագուստ: Ես լսել եմ, որ ազնիվ մարդիկ օգնում են աղքատներին, ոչ թե հարուստներին:

[Մեկնությունը]

① «子华» - Ձիհուա. Կոնֆուցիոսի սամն էր՝ Գունսի տոհմից, Զի անունով, հայտնի նաև որպես Ձիհուա: Կոնֆուցիոսից փոքր էր քառասուներկու տարով:

② «使» - «ուղևորվել», «լիազորել», «սուրհանդակ». ասույթում կիրառված է առաքելություն կատարել իմաստով:

③ «冉子» - Ժանձի. «Ձրուցներում» «子» գաղափարագրով նշվում էին Կոնֆուցիոնի սամերից ոմանք: Ասույթի հերոս Ժանձին նույն ինքը Ժամանուն է:

④ «栗» - «կորեկ». իրականում նկատի ունի ոչ թե հենց կորեկը, այլ շքեփահամված բրինձը: Հնամենի մատյաններում այս գաղափարագրով է նշվել բրինձը:

⑤ «釜» - «ֆու». հին չափի միավոր: Հավասար է մեկ դոռուի և չորս շեմի՝ մոտավորապես 166 լիտրի:

⑥ «庚» - «յու». հին չափի միավոր: Հավասար է երկու դոռուի և չորս շեմի:

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

⑦ «秉» - «բին». իին չափի միավոր: Հավասար է տասնվեց դոսի: Մեկ դոսուն հավասար է մոտ տաս և կես լիտրի: Զոռու և Ցին հարստությունների օրոք տարածված հացահատիկի չափման միավոր էր դանը: Մեկ դանը հավասար էր տաս դոսոյի:

⑧ «乘肥马». բառացի՝ «քշել ձարպոտ ձի». նկատի ունի կառքին լծված ձիերին վարելը: Հագուստը, որ աստիճանավորները կրում էին հնում, երկար թևեր ու քղանցքներ ուներ և հարմար չէր ձիավարության համար: Իսկ հեծելազորը լայնորեն սկսեց կիրառվել «Պատերազմող տերությունների» ժամանակաշրջանում, Զատ տերության Ուլին արքայի բարեփոխումներից հետո:

⑨ «衣» - «հանդերձ», «հագուստ». ասույթում կիրառված է «穿»՝ «հագնել», «կրել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.5 原思①为之②宰，与之粟九百③，辞。子曰：“毋！以与尔邻里乡党④乎！”

Յուան Սին կառավարիչ նշանակվեց և նրան պիտի ինը հարյուր չափ կորեկ բաժին հասներ, սակայն նա հրաժարվեց:

Ուսուցիչն ասաց.

- Ոչ: Կարող ես բաժին հանել հարևան ծխերին և համայնքներին:

[Փոխադրությունը]

Յուան Սին նշանակվեց Քունձիի կալվածքի կառավարիչ, և Քունձին նրան ինը հարյուր չափ կորեկ բաժին հանեց, բայց Յուան Սին հրաժարվեց վերցնել:

Քունձին ասաց.

- Վերցրո: Եթե շատ ես համարում, կարող ես բաժանել կարիքավոր հարևաններին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «原思» - Յուան Սի. Կոնֆուցիոսի սանն էր, հայտնի նաև որպես Զի Սի:

② «之» - Ժամանակակից «其»՝ «նրա», «նրանց» գաղափարագիրն է, նկատի ունի Կոնֆուցիոսին:

③ «九百» - «ինը հարյուր». ասովթում նշված չէ կոնկրետ չափման միավորը:

④ «邻里乡党» - «լինի, սյան, դան». այս անուններով են կոչվել համակեցություններն ու համայնքները՝ կախված իրենց մեծությունից:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.6 子谓仲弓，曰：“犁牛①之子骍②且角③，虽欲勿用④，山川其⑤舍诸⑥？”

Ուսուցիչն ասաց Զուն Գունի մասին. «Եթե շիկակարմիր ու հավասար եղջյուրներով լծկան եզանը մարդիկ չզոհաբերեն, մի՞թե լեռների ու գետերի ոգիները կիրաժարվեն դրանից»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին խոսելով ժամյունի մասին՝ ասաց. «Կարմիր կաշի և ուղիղ եղջյուրներ ունեցող լծկան եզանը գուցե մարդիկ չզանկանան զոհաբերել, բայց մի՞թե լեռների ու գետերի աստվածները չեն ընդունի զոհը»:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «犁牛» - «լծկան եզ». այդ ժամանակաշրջանում լծկաններն արդեն լայնորեն կիրառվում էին գյուղատնտեսության բնագավառում:

② «骍» - «շիկակարմիր». նոյնն է՝ ինչ կարմիր զոյմը:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

③ «角» ~ «եղջյուր». ասույթում ունի «հավասար եղջյուրներ» իմաստը:

④ «用» ~ «կիրառել», «օգտագործել». ասույթում ունի «զրհաքերել» իմաստը, նույնանման կիրառություն կա նաև «Զույի նոթերում»: «Զուննի սաների պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ Զուն Գունի հայրը հասարակ հողագործ էր: Իսկ Զուն Գունը տաղանդավոր և նպատակասար էր: Վյո պատճառով էլ Կոնֆուցիոնը մեշքերում է ծծկան եզան փոխաքերությունը. ծծկան եզներին չէին զրհաքերում: Բայց Կոնֆուցիոնը գտնում էր, որ շիկակարմիր և հավասարաչափ եղջյուրներով «ծծկան եզան» զրհաքերությունը կընդունվի ոգիների կողմից, այսինքն՝ իմաստնությամբ օժտված հողագործի զավակը կարող է հասնել բարձունքի:

⑤ «其» ~ «նրա», «դրա». ասույթում կիրառված է «միթե» իմաստով:

⑥ «諸» ~ «այդ ամենից», «դրանից»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.7 子曰：“回也，其心三月①不违仁，其余则日月①至焉而已矣。”

Ուսուցիչն ասաց. «Հուեյը սրտանց կարող է մարդկային մնալ երեք ամիս, մինչդեռ մյուսները կարողանում են մի օր կամ ամիս»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Յան Հուեյը երկար ժամանակ կարող է առաքինի մնալ, իսկ մնացած սաները միայն պատահաբար են մտաքերում այդ մասին»:

[Մեկնությունը]

① «三月, 日月» ~ «երեք ամիս, օր, ամիս». ասույթում «երեք ամիս»

Կոնֆուցիոն. Զրույցներ

արտահայտությունը կիրառված է ընդամենը տևական ժամանակ նշելու համար: «日»ն «月» գաղափարագրերը բառացի նշանակում են «արև» և «լուսին», սակայն ասուլթում կիրառված են համապատասխանաբար «օր» և «ամիս» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԸ ԲՆԱԳԻՐԸ

6.8 季康子问：“仲由可使从政也与？”子曰：“由也果，于从政乎何有？”

曰：“赐也可使从政也与？”曰：“赐也达，于从政乎何有？”

曰：“求也可使从政也与？”曰：“求也艺，于从政乎何有？”

Չի Քանձին հարցրեց.

- Զուն Յուն կարող է պաշտոնավարել:

Ուսուցիչն ասաց.

- Յուն վճռական է, կասկած կա՞, որ նա կարող է պաշտոնավարել:

- Յին նույնական կարող է պաշտոնավարել, հարցրեց Քանձին:

- Յին խելացի է, կասկած կա՞, որ նա կարող է պաշտոնավարել, պատասխանեց ուսուցիչը:

- Յյուն նույնական կարող է պաշտոնավարել, հարցրեց Քանձին:

- Յյուն տաղանդավոր է, կասկած կա՞, որ նա կարող է պաշտոնավարել, պատասխանեց ուսուցիչը:

[Փոխադրությունը]

Չի Քանձին հարցրեց Քունձիին.

- Զուն Յուին կարելի՞ է մասնակից դարձնել տերության կառավարմանը:

- Զուն Յուն վճռական է որդշումներ կայացնելիս, ի՞նչոք կարող է խանգարել նրան տերության կառավարմանը մասնակից դառնալուն, ասաց Քունձին:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

- Դուանմու Ցիհն ևս կարելի՞ է մասնակից դարձնել տերության կառավարմանը,՝ հարցրեց Քանձին:
- Դուանմու Ցիհն ողջամիտ է և իմաստուն, ի՞նչը կարող է խանգարել նրան՝ տերության կառավարմանը մասնակից դառնալ,՝ ասաց Քունձին:
- Իսկ ժան Ցյուին կարելի՞ է մասնակից դարձնել տերության կառավարմանը:
- Ժան Ցյուն օժտված է բազում շնորհներով, ի՞նչը կարող է խանգարել նրան՝ տերության կառավարմանը մասնակից դառնալ,՝ ասաց Քունձին:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.9 季氏使闵子骞①为费②宰。闵子骞曰：“善为我辞焉！如有复我者，则吾必在汶上③矣。”

Զիշին միտք ուներ Մին Զիցյանին նշանակել ֆեյի կառավարիչ։ Մին Զիցյանն ասաց պատվիրակին։ «Իմ անունից սիրալիր հրաժարվիր։ Եթե իմ հետևից կրկին մեկին ուղարկեն, ստիպված կիեռանամ Վեն գետից այն կողմ»։

[Փոխադրությունը]

Զիշին ցանկանում էր Մին Զիցյանին նշանակել ֆեյ ավանի կառավարիչ։ Իր հետևից եկած պատվիրակին Մին Զիցյանն ասաց։ «Բարի եղիր, քաղաքավարի փոխանցիր, որ ես հրաժարվում եմ։ Եթե իմ հետևից նորից մարդ ուղարկեն, ես ստիպված կլինեմ հեռանալ Վեն գետից հյուսիս»։

[Մեկնությունը]

① «闵子骞» - Մին Զիցյան։ Կոնֆուցիոնի սանն էր, հայտնի նաև

Կոնֆուցիոս. Զրույցներ

որպես Մին Սուն և Զի Ցյան: Կոնֆուցիոսից փոքր էր տասնինգ տարով (ծնվել է մթա. 515 թվականին, մահվան տարեթիվը հայտնի չէ):

② «费» - Ֆել. իին տեղանուն է, գտնվել է Շանդուն նահանգի Փինյի քաղաքից յոթանասուն մղոն հարավ-արևելք:

③ «汶上» - բառացի՝ «Վենի ափ». նկատի ունի Շանդուն նահանգի Դավեն գետը: Դրանից այն կողմ Ցի տերությունն էր:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 1 0 伯牛①有疾，子问之，自牖执其手，曰：“亡之②，命矣夫！斯人也而有斯疾也！斯人也而有斯疾也！”

Բոնյուն հիվանդացել էր: Ուսուցիչն այցելեց նրան և լուսամուտից սեղմելով նրա ձեռքն՝ ասաց. «Մահ է վիճակված: Ինչպիսի այր է և ինչպիսի ախտով է տառապում: Ինչպիսի այր է և ինչպիսի ախտով է տառապում»:

[Փոխադրությունը]

Բոնյուն հիվանդ էր և Քունձին այցելեց նրան: Լուսամուտի միջով բռնելով նրա ձեռքը՝ Քունձին ասաց. «Ծանր վախճան է ձակատագիրը բաժին հանել նրան: Այսպիսի մարդ և այսպիսի հիվանդություն: Այսպիսի մարդ և այսպիսի հիվանդություն»:

[Մեկնությունը]

① «伯牛» - Բոնյու. Կոնֆուցիոսի սանն էր, հայտնի նաև որպես Ժան Գեն:

② «亡之» - «մահ». «之» գաղափարագիրն այստեղ կիրառված չէ որպես դերանուն, այն ձայնարկություն է՝ խոսքին բացականչական երանգ հաղորդելու համար: Առավել մանրամասն տես՝ «Դասական լեզվի քերականություն» աշխատության մեջ:

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.1 子曰：“贤哉，回也！一箪①食，一瓢饮，在陋巷，人不堪其忧，回也不改其乐。贤哉，回也！”

Ուսուցիչն ասաց. «Օ՛, ինչ առաքինի է Հուեյը: Ուտում է մի թաս կերակոր, խմում մի գավ ջուր, ապրում է հյուղակում. ուրիշները չեն կարող դիմանալ այդ գրկամքներին, իսկ Հուեյը գոհ է: Օ՛, ինչ առաքինի է Հուեյը»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Օ՛, ինչ իմաստուն է Յան Հուեյը: Ուտում է մի հնդկեղեգե թաս բրինձ, խմում է մի կում ջուր դղմասափորից, ապրում է խղձուկ հյուղակում: Ուրիշ ոչ ոք չի կարող ապրել այդ աղքատիկ պայմաններում, իսկ Յան Հուեյը չի տրտմում և միշտ երջանիկ է: Օ՛, ինչ իմաստուն է Յան Հուեյը»:

[Մեկնությունը]

① «簞» ~ «հնդկեղեգե թաս». սպասքի հին մաս է՝ կլոր տարա՝ հնդկեղեգմից պատրաստված:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.2 冉求曰：“非不说子之道，力不足也。”子曰：“力不足者①，中道而废。今女画②。”

Ժան Ցյուն ասաց.

~ Զեի ասի, թե Ուսուցչի ուղին լավը չէ, ուժերս չեն հերիքում:
Ուսուցիչն ասաց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Նրանք, ում ուժերը չեն հերիքում, հիասթափվում են ձանապարհի կեսին: Այսօր դու կանգ ես առել:

[Փոխադրությունը]

Ժան Ցյուն ասաց.

- Այնպես չէ, որ ես չեմ հավանում քո ուսմունքը, ուղղակի ես բավականաշափ ընդունակ չեմ դրա համար:

Քունձին ասաց.

- Նրանք, ովքեր համարում են, որ բավականաշափ ընդունակ չեն, ուրեմն կանգ են առել ձանապարհի կեսին: Սակայն դու մի քայլ անգամ չես արել:

[Մեկնությունը]

① «力不足者» - «Նրանք, ում ուժերը չեն հերիքում». «者» գաղափարագիրն այստեղ կիրառված է որպես դերանուն, թեև հնում գործածվել է նաև խոսքի մեջ դադար նշելու համար:

② «画» - «գծել», «նկարել». ասույթում կիրառված է «կանգ առնել» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՈՒՄԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 1 3 子谓子夏曰：“女为君子儒！无为小人儒！”

Ուսուցիչն ասաց Զիսյային. «Եղիր ուսյալ ազնվայր: Մի եղիր ուսյալ նվաստ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց Զիսյային. «Ուսանիր ինչպես ազնիվ մարդը, ոչ թե ինչպես նվաստը»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.4 子游为武城①宰。子曰：“女得人焉耳②乎？”曰：“有澹台灭明者③，行不由径，非公事，未尝至于偃之室也。”

Զիյոնուն նշանակվեց Ուչենի կառավարիչ: Ուսուցիչը հարցրեց.

- Այնտեղ գոնե մի արժանի մարդ գտա՞ր:

- Գտա Թանթայ Մյեմինին, նա չի մտնում հետին դարպասներով և զալիս է ինձ մոտ միայն պաշտոնական հարցերով, - ասաց Զիյոնուն:

[Փոխադրությունը]

Զիյոնուն նշանակվեց Ուչեն քաղաքի կառավարիչ: Քունձին հարցրեց նրան.

- Հանդիպեցի՞ր այնտեղ շնորհալի մեկին:

Զիյոնուն պատասխանեց.

- Թանթայ Մյեմին անունով մի մարդ կա, նա զարտուղի արահետներով չի քայլում և այցելում է ինձ միայն պետական գործերը քննարկելու համար:

[Մեկնությունը]

① «武城» - Ուչեն. իին բնակավայր, Լու տերության քաղաքներից մեկը, գտնվել է ներկայիս Շանհանգի Ֆեյսի գավառի հարավարևմտություն:

② «耳» - բառացի՝ «ականջ», «ունկ». դասական լեզվում կիրառվել է «գեթ», «գոնե» «այդ է ամենը» իմաստներով: Նման կիրառություն հանդիպում է նաև Զիյիի և Սունի «Երգերի գրքի» մեկնություններում, Հուանքանի «Ճշմարտի մեկնություն» աշխատության մեջ:

③ «有澹台灭明者» - «Գտա Թանթայ Մյեմինին». Թանթայ Մյեմինը «Քունձի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակվում է Զիյու անվամբ: Սակայն դատելով Զիյոնի խոսքերի բովանդա-

Կոնֆուցիոս. Զրույցներ

կությունից՝ Թանթայ Մյեմինը դեռ չէր աշակերտել Կոնֆուցիոսին, թեև «Պատմագրության» մեջ նշված է, որ նա Կոնֆուցիոսի սանն էր մինչև այս ասուլյում արծարծվող ժամանակաշրջանը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.5 子曰：“孟之反①不伐，奔而殿，将入门，策其马，曰：‘非敢后也，马不进也。’”

Ուսուցիչն ասաց. «Մեն Զիֆանը չէր պարծենում: Նահանջելիս գնում էր վերջում՝ պաշտպանելով մուտքը և ի վերջո խթանելով նժույզն՝ ասաց. «Ես չի համարձակվի հետ մնալ, նժույզս չէր ուզում առաջ գնալ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Մեն Զիֆանը չէր պարծենում սիրազործություն-ներով: Յի տերության դեմ մղված ձակատամարտում, երբ զորքի աջ թևը ջարդվեց, նա պաշտպանում էր նահանջողներին և իր ձին խթանեց միայն այն ժամանակ, երբ վերջին ռազմիկը մտավ քաղաք, ասելով՝ «Ես չի, որ հետ մնացի, այդ ձիս էր, չէր ուզում առաջ շարժվել»:

[Մեկնությունը]

① «孟之反» - Մեն Զիֆան. Լու տերության ազնվական էր, հայտնի նաև որպես Մեն Սե, «Զուոյի նոթերի» մեջ հիշատակվում է Այ իշխանի կառավարման տասնմեկերրորդ տարվա մասին նկարագրության մեջ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.6 子曰：“不有①祝浹②之佞，而③有宋朝④之美，难乎免于今之世矣。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Զիմեր Զու Թոյի պերձախոսությունը՝ միայն Սունի Զառյի գեղեցկությամբ դժվար կլիներ խուսափել մեր ժամանակ-ների սպառնալիքներից»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե չիներ Զու Թոյի ձարտասանության շնորհը, միայն Սուն տերության Զառ արքայորդու գեղեցկությամբ, վախենամ, մեր օրերում չափազանց բարդ կլիներ խուսափել վնասներից»:

[Մեկնությունը]

① «不有» - «չկա», «ոչ». ասույթում կիրառված է «Եթե չիներ» իմաստով, խոսքի հիպոթետիկ բնույթը նշելու համար:

② «祝洋» - Զու Թո. Վեյ տերության բարձրաստիճան պաշտոնյա, խորհրդական էր և հրաշալի դիվանագետ: Նրա մասին հիշատակվում է «Չուոյի նորերի»՝ Դիմ իշխանի կառավարման չորրորդ տարվա նկարագրության մեջ:

③ «而» - կիրառվել է «և», «սակայն», «դեռ» իմաստներով: Վան Ինչիփ «Հնամենի աշխատությունների ուսումնասիրություն» աշխատության մեջ կիրառված է «և ..., և...» ձևաչափով՝ «և Զու Թոյի պերձախոսությունը, և Սունի արքայազնի գեղեցկությունը դժվար թե գերծ պահեն պատուհասից»: Շատ մասնագետներ համաձայն են նման մեկնության հետ, սակայն կարծում են, որ դա ամբան էլ ձիշտ չէ:

④ «宋朝» - Սունի Զառ. Ակատի ունի Սուն տերության արքայորդի Զառյին, ով հայտնի էր իր գեղեցկությամբ և թեթևաբար վարքով: Ըստ «Չուոյի նորերի»՝ նա սիրային կապի մեջ էր իր ազգականուին հետ, ով Վեյ տերության արքայի սիրելի հարձն էր:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 1 7 子曰：“谁能出不由户？何莫由斯道也？”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Ո՞վ կարող է դուրս գալ առանց դուռը բացելու: Ինչո՞ւ չկան այնպիսիք, որ հետևում են իմ Ուղուն»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Միթե կա մեկն, ով կարող է դուրս գալ տնից՝ առանց դուռը բացելու: Այդ դեպքում ինչո՞ւ ոչ ոք չի բայլում իմ ձանապարհով»:

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.8 子曰：“质胜文则野，文胜质则史。文质彬彬①，然后君子。”

Ուսուցիչն ասաց. «Երբ բնույթը հաղթում է մշակույթին, ի հայտ է գալիս զռեհկությունը: Երբ մշակույթն է հաղթում բնույթին, ի հայտ է գալիս զուտ ուսալությունը: Մշակույթի ու բնույթի ներդաշնակմամբ է ի հայտ գալիս ազնվայրը»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Երբ մարդն ավելի պարզ է, քան կրթված, նա դառնում է բոի: Երբ կրթվածությունն ավելին է, քան պարզությունը, նա դառնում է ստորաքարշ: Կրթվածության և պարզության համադրմամբ է տարբերվում ազնիվ մարդը»:

[Մեկնությունը]

① «文 质 彬 彬 » ~ «Մշակույթի և բնույթի ներդաշնակում». այս ասույթում Կոնֆուցիոնը կարևորում է մարդու համաշահ զարգացումը՝ ըստ անձնային բնորոշիչների և կրթվածության: Նրա պատկերացմամբ՝ ազնիվ մարդը քաղաքակիրթ է ու հասարակ:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.1.9 子曰：“人之生也①直，罔②之生也幸而免。”

Ուսուցիչն ասաց. «Մարդն ի ծնե ուղղամիտ է, եթե մոլորվելով ապրում է, ուրեմն ձակատագիրը բարի է»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Մարդը գոյատևում է շնորհիվ արդարամտության: Անիրավները նույնական ապրում են, բայց պատուհասներից խուսափում են միայն ձակատագրի շնորհիվ»:

[Մեկնությունը]

① «也» - «և», «նաև». ասույթում կիրառված է որպես մոդալ մասնիկ, որը կապակցում է «մարդն ի ծնե» և «ուղղամիտ է» արտահայտությունները:

② «罔» - «մոլորվել». նկատի ունի ոչ ուղղամիտ, անիրավ մարդկանց:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.0 子曰：“知之者不如好之者，好之者不如乐之者。”

Ուսուցիչն ասաց. «Իմացողները չեն հավասարվի նրանց, ովքեր սիրում են, նրանք, ովքեր սիրում են, չեն հավասարվի նրանց, ովքեր հաձույք են ստանում արածից»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ճանկացած բնագավառում նրանք, ովքեր գիտեն

Կոնֆուցիոս. Չրույցներ

իրենց գործը, զիջում են նրանց, ովքեր սիրում են իրենց գործը, իսկ նրանք, ովքեր սիրում են իրենց գործը, զիջում են նրանց, ովքեր հաձույք են ստանում իրենց գործից»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.1 子曰：“中人以上，可以语上也；中人以下，不可以语上也。”

Ուսուցիչն ասաց. «Նրանց հետ, ովքեր միջակություններից բարձր են, կարելի է զրուցել բարձրի մասին։ Նրանց հետ, ովքեր միջակություններից ցածր են, չի կարելի զրուցել բարձրի մասին»։

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Նրանց հետ, ովքեր իրենց ուսուցմամբ գերազանցել են միջակություններին, կարելի է զրուցել վեհ երևույթների մասին։ Նրանց հետ, ովքեր իրենց ուսուցմամբ չեն գերազանցել միջակություններին, չի կարելի զրուցել վեհ երևույթների մասին»։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.2 樊迟问知。子曰：“务民之义，敬鬼神而远之①，可谓知矣。”问仁。曰：“仁者先难②而后获，可谓仁矣。”

Ֆան Զին հարցրեց իմաստության մասին։ Ուսուցիչն ասաց. «Ծառայել մարդկանց, երկրպագել ոգիներին ու աստվածներին՝ հեռու մնալով նրանցից։ կարելի է ասել՝ դա է իմաստությունը»։

Հարցրեց մարդկայնության մասին։ Ուսուցիչն ասաց. «Սկզբից խընդոտներ հաղթահարել, հետո հաջողել, կարելի է ասել՝ դա է մարդկայնությունը»։

[Փոխադրությունը]

Ֆան Չին հարցրեց, թե որն է իմաստությունը: Քունձին ասաց. «Անձնվիրաբար ծառայել մարդկանց և երկրպագել ոգիներին ու աստվածներին՝ չմոտենալով նրանց. կարծում եմ՝ դա է իմաստությունը»:

Ֆան Չին հարցրեց մարդկայնության մասին: Քունձին ասաց. «Բազում ջանքեր ներդնել՝ հետո դրանց պտուղները քաղել. կարծում եմ՝ դա է մարդկայնությունը»:

[Մեկնությունը]

① «远之» - «հեռանալ», «օտարվել». Կոնֆուցիոսի կարծիքով՝ ոգիներին և աստվածներին երկրպագելով՝ նրանցից հեռու մնալը մարդուն զերծ է պահում սնահավաստությունից և մոլեռանդությունից:

② «先 难» - բառացի՝ «սկզբից դժվարություններ». իմաստը հետևյալն է՝ առանց ջանք թափելու անհնար է հասնել ինչ-որ բանի: Նույնիսկ մարդկայնություն ունենալու համար անհրաժեշտ է ջանքեր թափել: Նույնարովանդակ մի ասույթ կա «Զրույցների» տասներկուներորդ գլխում, որտեղ կրկին Ֆան Չիի և Կոնֆուցիոսի զրույցն է մարդկայնության մասին:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 2 3 子曰：“知者乐水，仁者乐山。知者动，仁者静。知者乐，仁者寿。”

Ուսուցիչն ասաց. «Իմաստունը հիանում է գետերով, մարդկայինը հիանում է լեռներով: Իմաստունը շարժվում է, մարդկայինը հանդարտ է: Իմաստունը երջանիկ է, մարդկայինը՝ երկարակյաց»:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

[Փռխաղբությունը]

Քունձին ասաց. «Իմաստուն մարդիկ հիանում են զետերով, առարինի մարդիկ՝ լեռներով։ Իմաստուն մարդիկ շարժման մեջ են, առարինի մարդիկ՝ խաղաղ։ Իմաստուն մարդիկ ուրախ են, իսկ առարինի մարդիկ երկար են ապրում»։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.4 子曰：“齐一变，至于鲁；鲁一变，至于道。”

Ուսուցիչն ասաց. «Մի փոփոխություն Ցիում՝ այն կնմանվի Լուին, մի փոփոխություն Լուում՝ այնտեղ կտիրի Ուղին»։

[Փռխաղբությունը]

Քունձին ասաց. «Երբ Ցի տերության մեջ մի բարեփոխում լինի, այն կնմանվի Լու տերությանը։ Երբ Լու տերության մեջ բարեփոխում լինի, այնտեղ կտարածվի Ուղին»։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.5 子曰：“觚①不觚，觚哉？觚哉？”

Ուսուցիչն ասաց. «Գավաթ է, թե՞ն ոչ։ Միթե գավաթ է։ Միթե գավաթ է»։

[Փռխաղբությունը]

Քունձին ասաց. «Եթե գավաթը նման չէ գավաթի, ապա ի՞նչ է դա։ Դա միթե գավաթ է։ Դա միթե գավաթ է»։

[Մեկնությունը]

① «觸» - «գավաթ»։ հնում հատուկ ոգելից խմիչքներ ըմպելու համար պատրաստված գավաթ էր՝ բառանկյուն և չորս ստիլներով։ Թերևս Կոնֆուցիոնը տեսել էր ավանդական գավաթին ոչ նման՝ կլր գավաթ։ Կա տեսակետ, ըստ որի Կոնֆուցիոնին վրդովեցրել էր գավաթի պարունակությունը կամ ըմպելիքի որակը։ հնում ալկոհոլի պարունակությունը շատ քիչ էր գինիներում, նույնիսկ երկու կամ երեք լիտր գինին աննշան ալկոհոլ էր պարունակում։ Հուայձիի «Պատմական գրառումներում» հիշատակվում է Չունյու Քունի մասին, ով կարող էր խմել մեկ դան (մոտ հարյուր լիտր), թեև պարզ է, որ թիվը չափազանց ված է։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.6 宰我问曰：“仁者，虽告之曰：‘井有仁①焉。’其从之也？”子曰：“何为其然也？君子可逝②也，不可陷也；可欺③也，不可罔④也。”

Զայվոն հարցրեց։

- Եթե ինչ-որ մեկն ասի մարդկայինին, որ մեկ այլ մարդկային ընկել է ջրհորը, նա կնետվի՞ նրան փրկելու։

Ուսուցիչն ասաց։

- Ո՞րն է դրա իմաստը։ Ազնվայրը կարող է մեռնել, եթե ջրհորը նետվի։ Նրան կարող են խաբել, սակայն չեն կարող մոլորեցնել։

[Փոխադրությունը]

Զայվոն հարցրեց։

- Եթե առաքինի մարդուն ասեն, որ մեկ այլ առաքինի ընկել է ջրհորը, նա կնետվի՞ ջրհորի մեջ, որպեսզի փրկի նրան։

Քոնձին ասաց.

- Ինչի՞ համար պիտի նա այդպես վարվի: Ազնիվ մարդն օգնության կշտապի, բայց չի նետվի ջրհորի մեջ: Նրան կարող են խարել, սակայն նա չի մոլորվի:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «仁» - «մարդկայնություն», ասույթում կիրառված է «նա, ով մարդկայնություն ունի» իմաստով:

② «逝» - «մահ», «վախճան», «մեռնել». ասույթում կիրառված է ոչ թե իր ուրակի իմաստով, այլ որպես «往»՝ «ընդառաջ գալ», «մոտենալ» իմաստներով: Յու Յուեի «Դասական աշխատությունների մեկնություն» աշխատության մեջ նշվում է, որ նյութի բովանդակությունից կախված «逝» և «往» գաղափարագրերը կարող են ունենալ նույն իմաստը: Իմ փոխադրության մեջ ես պահպանել եմ նման կիրառությունը:

③ «欺,罔» - «խարել, մոլորեցնել». այս բառերի կիրառմամբ նմանատիպ մի պարբերություն կա նաև Մենձիի աշխատության «Վաճանի մասին» գլխում. «Մի մարդ Ձենի իշխան Զիշանին կենդանի ծովկ նվիրեց: Զիշանը կանչեց իր կալվածքի տնտեսին և հրամայեց ձուկը բաց թողնել ավագանում: Տնտեսը եփեց ձուկն ու կերավ, իսկ Զիշանին խարեց, ասելով՝ «Երբ ես այն բաց թողեցի, սկզբում թույլ էր ու անշարժ, հետո սկսեց խլրտալ: Զիշանը բացականչեց. «Նա գտավ իր տեղը: Նա գտավ իր տեղը: Ես եփեցի ու կերա ձուկը, իսկ նա ասաց. «Նա գտավ իր տեղը: Նա գտավ իր տեղը»»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 2 7 子曰：“君子博学于文，约之以礼①，亦可以弗畔②矣夫！”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը, ով մշակույթի գիտակ է և հետևում է ծեսերին, չի կարող խախտել դրանք»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդն, ով խորությամբ ուսումնասիրել է մշակույթն ու հետևում է օրենքներին, երբեք չի դավաձանի իր սկզբունքներին»:

[Մեկնությունը]

① «君子博学于文，约之以礼» - «ազնվայրը, ով մշակույթի գիտակ է և հետևում է ծեսերին». նոյնարովանդակ մի հատված կա «Զրոյց-ների» իններորդ գլուխ տասնմեկերորդ ասուլյառում՝ Յան Յուանի խոսքում, որտեղ ասվում է. «Ուսուցիչն ինձ զարգացնում էր մշակույթով և զսպում ծեսերով»:

② «畔» - բառացի՝ «սահման», «եզր», «ափ». ասուլյառում կիրառված է «խախտել», «դավաձանել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6.2.8 子见南子①，子路不说。夫子矢之曰：“予所②否者，天厌之！天厌之！”

Ուսուցիչը պիտի հանդիպեր Նանձիին, և Զիլուն դժգոհ էր: Ուսուցիչն ասաց. «Եթե ես իրավացի չեմ, թող երկինքը պատժի: Թող երկինքը պատժի»:

[Փոխադրությունը]

Քոնճին գնում էր Նանձիին հանդիպելու և դա դուր չեկավ Զիլուին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Քունձին երդվեց. «Եթե ես սխալվեմ, թող աստվածները պատժեն ինձ: Ժող աստվածները պատժեն ինձ»:

[Մեկնությունը]

① «南子» - Նանձի. Վեյի տիրակալ Լինի հարձն էր, ով փաստացի կառավարում էր Վեյը և ուներ վավաշոտ ու թերևաբար կնոջ համբավ: «Զուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ այդ հանդիպումը չի կայացել, սակայն ժամանակակից հետազոտողների մեծամասնությունը գտնում է, որ հանդիպում եղել է:

② «所» - «եթե». այս ձևով կիրառվել է միայն երդումների ժամանակ: Առավել մանրամասն տես՝ Յան Ժոուցյուի «Չորս գրքերի մեկնություն» աշխատության մեջ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

6 . 2 9 子曰：“中庸①之为德也，其至矣乎！民②鲜久矣。”

Ուսուցիչն ասաց. «Անփոփոխ միջինն ամենաբարձր առաքինությունն է: Մարդիկ հազվադեպ են ունակ հետևելու դրան»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Անփոփոխ միջինը պիտի համարվի բարձրագույն առաքինություն: Բոլորն են հեռացել դրանից»:

[Մեկնությունը]

① «中庸» - «անփոփոխ միջին». ունի ժամանակակից «ոսկե միջին» նշանակությունը: Կոնֆուցիոսն այն սահմանել էր որպես բարոյականության, առաքինության բարձրագույն չափանիշ: «中»՝ «միջին»

գաղափարագիրն այստեղ ունի «իդեալական» և «ներդաշնակ» իմաստները, իսկ «庸»՝ «հասարակ» գաղափարագիրն ունի «անփոփոխ», «հարատև» իմաստները: Կոնֆուցիոսի կողմից հիշատակման ժամանակ այս գաղափարն այլոց համար կորցրել էր իր նախնական նշանակությունը և ընկալվում էր որպես սովորական, առօրեական, աննշան երևույթ: Գաղափարն իր հետագա զարգացումն ունեցավ կոնֆուցիականների շնորհիվ: Արևմտյան Հան հարստության ժամանակ Դայ Շենը ներառեց այդ գաղափարը «Ծեսերի գրքի» մեջ, իսկ Հարավային Սունի ժամանակ՝ Զու Սին՝ «Չորս գրքերի» մեջ: Սինա Ցյանը հիշատակում է նաև Զիսիի անունը, սակայն դա այնքան էլ արժանահավատ տեղեկություն չէ:

② «民» - «ժողովուրդ», «մարդիկ». ասույթում կիրառված է «բոլոր» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

6.3.0 子贡曰：“如有博施①于民而能济众，何如？可谓仁乎？”子曰：“何事于仁！必也圣乎！尧舜②其犹病诸！夫③仁者，己欲立而立人，己欲达而达人。能近取譬，可谓仁之方也已。”

Զիգունը հարցրեց.

- Եթե գտնվի մեկը, ով առաստություն ու բարգավաճում կրերի ժողովրդին, կարող ենք նրան մարդկային կոչել:

Ուսուցիչն ասաց.

- Կարող ենք մարդկային կոչել: Կարող ենք նաև իմաստուն կոչել: Յառին և Շունին էլ կգերազանցեր: Ի՞նչ է մարդկայինը: Եթե ուզում ես հաստատուն լինել, օգնիր, որ մարդիկ էլ հաստատուն լինեն: Ուզում ես հաջողակ լինել, օգնիր, որ մարդիկ էլ հաջողեն: Այդպես օրինակ կծառայես և կարելի կլինի ասել, որ մարդկային ես:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Եթե գտնվի այնպիսի մեկը, ով կարող է բարօրություն քերել ժողովրդին և օգնել նրանց ավելի լավ ապրել, ապա կարո՞ղ ենք ասել, որ նա մարդկային է:

Քոնձին ասաց.

- Ինչո՞ւ միայն մարդկային: Նրան կարելի է և իմաստուն կռչել: Նույնիսկ Յառն և Շունը չէին հավասարվի նրան: Մարդկայնությունն ի՞նչ է: Այն է, երբ հաստատուն կանգնած ես ոտքերիդ վրա և օգնում ես ուրիշներին կամգնեն: Այն է, երբ գործում ես հաջողությամբ և օգնում ես ուրիշներին կայանալ: Մարդկայնությունը քայլ առ քայլ կայանալու և այլոց համար օրինակ հանդիսանալու եղանակ է:

[Մեկնությունը]

① «施» - «շնորհել», «տալ», «ընծայել», «քերել»:

② «堯舜» - «Յառ և Շուն». առասպելական կայսրերի անուններ են, որոնք նույնական իդեալներ էին Կոնֆուցիոսի համար:

③ «夫» - «այր», «ամուսին». դասական չինարենում երբեմն կիրառվել է խոսքին բացականչական երանգ հաղորդելու համար:

Գլուխ 7. «Փոխանցում եմ...» Բնդամենը 38 ասույթ

(Չու Սիի «Մեկնություններում» 37 ասույթ են,
որովհետև 9-րդ և 12-րդ ասույթները միավորված են)

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1 子曰：“述而不作，信而好古①，窃比于我老彭②。”

Ուսուցիչն ասաց. «Փոխանցում եմ, չեմ արարում, հավատում եմ հնին
և սիրում եմ դա: Համարձակվում եմ համեմատվել Լառ Փենի հետ»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ես ուսմունք եմ փոխանցում առանց նորը ստեղծելու: Ես հավատում եմ իին մշակույթին և սիրում եմ դա: Դրանում ես նման եմ Լառ Փենին»:

[Մեկնությունը]

① «作, 好古» ~ «արարել, սիրել հինը». ասույթում «作» գաղափարագիրը կիրառված է «արարել», «ստեղծել» իմաստներով: Կա տեսակետ, համաձայն որի նշված գաղափարագիրը կիրառված է որպես «գործել՝ առանց իմանալու»: Սույն գլխի քանութերորդ ասույթում նշվում է հետևյալը. «Կան այնպիսիք, որ գործում են՝ առանց իմանալու: Ես այդպիսին չեմ»: Սակայն դժվար է եզրակացնել, որ Կոնֆուցիոնի ուսմունքը կաղապարված գիտելիքների համալիր էր, որ տեղ չկար ստեղծարարությանը: «好古»՝ «սիրել հինը» բառակապակցությունն

Կոնֆուցիոս. Զրույցներ

արտահայտում է Կոնֆուցիոսի վերաբերմունքը ծեսերի և ավանդույթ-ների նկատմամբ: Նույնաբովանդակ մի միտք կա նաև քաններորդ ասույթում, որտեղ նշված է. «Սիրելով հինը՝ ես սովորեցի»:

② «老彭» - Լառ Փեն. անձնանուն է: Ոմաճը կարծում են, որ Կոնֆուցիոսը նկատի ունի երկու հոգու՝ Լառձիին և Փեն Զուին: Մյուսները գտնում են, որ խոսքը Շան հարստության օրոք ապրած պետական գործիչ Փեն Զուի մասին է: Սակայն առավել հավանական է, որ նա Կոնֆուցիոսի ժամանակակիցն էր, նրա մերձավորներից մեկը:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

7.2 子曰：“默而识①之， 学而不厌， 诲人不倦， 何有于我哉②？”

Ուսուցիչն ասաց. «Լուր մտապահել, սովորել առանց ձանձրանալու, սովորեցնել առանց հոգմելու. ո՞րն եմ ես անում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Սրտի խորքում պահել տեսածն ու լսածը, սովորել ջանափրաբար և սովորեցնել առանց հոգմելու. Սրանցից ո՞րն եմ ես անում»:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «识» - «իմանալ», «ձանաչել». ասույթում կիրառված է «հիշել», «մտապահել» իմաստներով:

② «何有于我哉» - «ո՞րն եմ ես անում». «何有» բառակապակցությունը հին աշխատություններում լայնորեն կիրառվում է, իմաստը պայմանական է նախադասության բովանդակությամբ: Ոմաճը գտնում են, որ արտահայտությունն ունի «միթե դժվար է ինձ համար» իմաստը: Սակայն կարծում եմ՝ այդ փոխադրությունը համահունչ չէ «Զրույցների» ոգուն:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3 子曰：“德之不修，学之不讲，闻义不能徙，不善不能改，是吾忧也。”

Ուսուցիչն ասաց. «Երբ առաքինությունը չի զարգանում, ուսուցման մեջ չեն խորանում, անարդարության մասին լսելով՝ չեն խոչընդոտում դրան, անընդունակ են լինում փոխել վատը, ես տրտմում եմ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ բարոյականությունը չի խրախուսվում, կրթությունն անտեսվում է, երբ պարտքն իմանալով հանդերձ՝ չեն հետևում դրան, չեն կարողանում ուղղել սխալները. դրանք են խաթարում իմ անդորրը»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.4 子之燕居，申申①如也，夭夭②如也。

Երբ ուսուցիչը հանգստանում էր, նա մեղմաբարո էր ու անվրդով:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին տանն էր, նա հանդարտ էր, ուրախ ու անվրդով:

[Մեկնությունը]

① «申申» - hեq, մեղմաբարո:

② «夭夭» - hանգիստ, անվրդով

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.5 子曰：“甚矣吾衰也！久矣吾不复梦见周公①！”

Ուսուցիչն ասաց. «Ինչ ցավալի է, ես վաղուց երազում չեմ տեսնում Զոռու իշխանին»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Շատ եմ ծերացել ու տկարացել։ Վաղուց է, ինչ երազում չեմ տեսել Զոռու իշխանին»:

[Մեկնությունը]

① «周公» - Զոռու իշխան. Զի արքայատոհմից, Դան անունով։ Զոռոյի Վեն արքայի որդին էր, Ու արքայի եղբայրը, Զեն արքայի հորեղբայրը, Լու տերության առասպեկտական հիմնադիրը։ Կոնֆուցիոսը նրան համարում էր հին ժամանակների լավագույն տիրակալներից մեեւր։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.6 子曰：“志于道，据于德，依于仁，游于艺①。”

Ուսուցիչն ասաց. «Կամքդ ուղղորդիր Ուղուն, Եղիր առաքինի, հենվիր մարդկայնության վրա և վարժվիր արվեստներում»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Նպատակ դիր շարժվել Ուղիով, հիմնվիր առաքինության և մարդկայնության վրա, վարժվիր վեց արվեստներում՝ ծեսերում, երաժշտության, նետաձգության, մարտակառքի վարման, գրականության մեջ և հաշիվներում»։

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

[Մեկնությունը]

① «游于艺» - «վարժվիր արվեստներում». «Ծեսերի գրքում» նշված է. «Եթե չես ուրախանում արվեստներում վարժվելով՝ չես կարող սովորե: Ազնվայրը սովորում է, գիտելիքներ ամբարում, թարմացնում դրանք և վարժվում»: «Վարժվել արվեստներում» արտահայտությունն ունի «մշտապես կատարելագործվել, զարգանալ» իմաստը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.7 子曰：“自行束脩①以上，吾未尝无诲焉。”

Ուսուցիչն ասաց. «Անգամ եթե ինձ մի կապ ապիստած միս բերեն, ես չեմ հրաժարվի սովորեցնել»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Նույնիսկ եթե ինձ շատ փոքր վարձատրություն տան, ես չեմ հրաժարվի սովորեցնել»:

[Մեկնությունը]

① «束脩» - «ապիստած մսի կապ». չորացրած մսի կապ, որով հաճախ վարձատրում էին ուսուցիչներին: Ասույթում դրա հիշատակումը ցույց է տալիս, որ Կոնֆուցիոսի համար էական չէր վարձատրության չափը, նա պատրաստ էր սովորեցնել մարդկանց, եթե նրանք ձգտում էին սովորելու:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.8 子曰：“不愤①不启，不悱②不发③。举一隅不以三隅反，则不复也。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Զի ձգտում՝ չեմ ուղղորդում, չի կարողանում խոսել՝ չեմ օգնում: Մի կողմը տեսմելով՝ չի հասկանում մնացած երեքը, չեմ սովորեցնում»:

[Փռխաղբությունը]

Քունձին ասաց. «Եթե սանը սովորելու ցանկություն չունի՝ չեմ ուղրորդի նրան, եթե նա անընդունակ է արտահայտել իր մտքերը՝ չեմ օժանդակի նրան: Եթե ցուց ես տախս նրան արևելքը, սակայն նա չի հասկանում, թե որտեղ են արևմուտքը, հյուսիսն ու հարավը, չեմ սովորեցնի»:

[Մեկնությունը]

① «憤» - «ձգտում». նկատի ունի ինչ-որ բան փնտրելու, ձանաչելու սրտանց ցանկությունը:

② «惣» - այս գաղափարագիրն ունի «ցանկանալ, բայց չկարողանալ խոսել» իմաստը:

③ «不启, 不发» - «չեմ ուղղորդում, չեմ աջակցում». Կոնֆուցիոսի ուսուցման մեթոդիկայի էությունն է: Ուսուցանվողը սկզբից պիտի բարդություններ ունենա, այնուհետև՝ դրանք հաղթահարելու ձգտում, իսկ հետո՝ կատարելագործվելու և կայանալու ներշնչանք: Նման կերպով ավելի արդյունավետ էր դառնում ուսուցումը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.9 子食于有丧者之侧，未尝饱也。

Երբ ուսուցիչն ուսում էր սգավորի հետ, երբեք չէր փորձում կշտանալ:

[Փոխադրությունը]

Եթք Քունձին ուսում էր հանգուցյալի հարազատների մոտ, երբեք կուշտ չէր ուսում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.0 子于是日哭， 则不歌。

Այն օրը, եթք ուսուցիչն արտասվում էր՝ չէր երգում:

[Փոխադրությունը]

Եթե Քունձին արտասվում էր, նա այդ օրը այլս չէր երգում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.1 子谓颜渊曰：“用之则行， 舍之则藏， 惟我与尔有是夫！”
子路曰：“子行三军， 则谁与①？”

子曰：“暴虎冯河②， 死而无悔者， 吾不与也。必也临事而惧， 好谋而成者也。”

Յանյուանի հետ զրուցելիս ուսուցիչն ասաց.

- Օգտագործո՞ւ՞մ եմ՝ զրոժիր, անտեսո՞ւ՞մ եմ՝ հեռացիր: Միայն ես և դու ենք այդպիսին:

Զիլուն հարցրեց.

- Եթե ուսուցիչը երեք բանակներն առաջնորդի, ո՞ւ՞մ կվերցնի իր հետ:

Ուսուցիչն ասաց.

- Անզեն՝ վագրի վրա հարձակվողներին, լողալով գետն անցնողներին և առանց ափսոսանքի զոհվողներին ես չի վերցնի: Կվերցնեի

Կոնֆուցիոս. Զրույցներ

նրանց, ովքեր զգուշ են, սիրում են նպատակներ դնել և հասնել հաջողության:

[Փոխադրությունը]

Քունձին Յանյուանի հետ զրուցելիս ասաց.

- Եթե ինձ օգտագործում են՝ ջանում են, չեն օգտագործում՝ հեռանում են: Միայն ես ու որու կարող ենք արդաւս անել:

Զիլուն հարցրեց.

- Եթե Դուք մեծ բանակ առաջնորդեիք, ու՞ն հետ կցանկանայիք գործ ունենալ:

Քունձին ասաց.

- Վագրերի հետ անզեն ձեռքով մարտնչողների, առանց նավակի գետն անցնողների, նրանց հետ, ովքեր կարող են առանց ափառապու զոհվել, ես գործ չէի ունենա: Ես գործ կունենայի նրանց հետ, ովքեր զգն են ու զգուշավոր, կարող են մարտավարություն մշակել և հաջողությամբ կյանքի կոչել դա:

[Մեկնությունը]

① «子行三军， 则谁与» - «Եթե ուսուցիչը երեք բանակներն առաջնորդի, ու՞ն կվերցնի իր հետ». «行» գաղափարագիրը հնում լայնորեն կիրառվել է «անել», «գնալ», «քայլել» և այլ իմաստներով: «行军» բառակապակցությունն այստեղ օգտագործվում է «առաջնորդել բանակը» իմաստով: Գուշակությունների համար օգտագործվող «Փոփոխությունների գրքի» «Համեստության եռատողի մասին» հատվածում նշվում է հետևյալը. «Առաջնորդելով բանակը՝ կնվաճես տերությունը», իսկ «Նահանջի եռատողի մասին» նշվում է հակառակը. «Առաջնորդելով բանակը՝ զարհուրելի պարտություն կկրես»: Կոնֆուցիոսի սան Զիլուն հայտնի էր որպես հմուտ ուազմիկ և պատահական չէ, որ նման հարց էր տալիս իր ուսուցչին:

② «暴虎冯河» - այս արտահայտությունը շատ հիմն ծագում ունի և իր կիրառությունն է գտել հնամենի մի շարք աշխատություններում: Ներկայումս տարածված է որպես ասույթ, որով բնորոշում են անմիտ խիզախություն դրսնորող, մահվան վտանգն արհամարհող մարդկանց: Որոշ մարդիկ կարծում են, որ «河»՝ «գետ» գաղափարագիրն այս ասույթում վերաբերում է Հուանհե գետին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.2 子曰：“富而①可求也，虽执鞭之士②，吾亦为之。如不可求，从吾所好。”

Ուսուցիչն ասաց. «Եթե հնարավոր լիներ հարստանալ, կցանկանայի լինել թեկուզ խարազանակիր ծառա: Եթե անհնար է, կանեմ այն, ինչ դուրս է գալիս»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե հնարավոր լիներ հարստանալ Ուղուն համահունց, ես կանեի դա, նույնիսկ եթե շուկայի պահնորդ լինեի: Եթե դա անհնար է, կզբաղվեմ նրանով, ինչով ուզում եմ»:

[Մեկնությունը]

① «而» - ունի նույն նշանակությունը, ինչ «如» գաղափարագիրը՝ «եթե», «և», «որպես», իսկ ասույթում ցույց է տալիս պատճառահետևանքային կապ: Գաղափարագիրը նախադասության մեջ առանձին, որպես կանոն, չի կիրառվել:

② «执鞭之士» - «խարազանակիր ծառա». «Ջոոյի ծեսեր» աշխատության մեջ նշվում է, որ կայսրին և իշխաններին ուղեկցողներից երկու շարք՝ ամեն մեկում ութ հոգով, անցնում էին շքախմբի դիմացից՝ ձեռ-

Կոնֆուցիոն. Զրույցներ

քերում խարազաններ բռնած, ձանապարհը բացելու համար: Ոմանք գտնում են, որ «խարազանակիր ծառա» արտահայտությունը վերաբերում է շուկայի պահնորդներին, քանի որ նրանք ևս խարազաններ էին կրում: Նրանք վաճառականներից գումար էին վերցնում պահպանության համար, իսկ շուկայում էր հավաքված ողջ «հարստությունը», և այնտեղ առավել հեշտ էր հարստանալ:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.3 子之所慎: 齋①, 战, 疾②。

Ուսուցիչը զգուշությամբ էր վերաբերվում ծոմապահությանը, պատերազմին և հիվանդություններին:

[Փոխադրությունը]

Քոնձին մեծ զգոնությամբ էր վերաբերվում երեք բանի՝ ծոմապահությանը, պատերազմին և հիվանդություններին:

[Մեկնությունը]

① «齐» ~ «ծոմ». հնում ծոմ պահելուց առաջ մարդիկ «մաքրող» հոգևոր և ֆիզիկական վարժանքներ էին անում: «Զրույցների» տասներորդ գլխի յոթերորդ ասույթում նշվում է հետևյալը. «Ծոմապահության ժամանակ Ուսուցիչը ուսուում էր այլ կերակուր և քնում էր այլ տեղում»:

② «战, 疾» ~ «պատերազմ, հիվանդություններ»: Պատերազմի վերաբերյալ Կոնֆուցիոնի պատկերացումների մասին հիշատակվել է նախորդիվ, եթե խոսք էր գնում բանակի անձնակազմի ընտրության նրա սկզբունքների մասին: Իսկ նրա վերաբերմունքը հիվանդության հանդեպ ևս ներկայացված է «Զրույցների» տասներորդ գլխում:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.4 子在齐闻《韶》，三月不知肉味，曰：“不图为乐之至于斯也。”

Ցիում եղած ժամանակ Ուսուցիչը լսեց «շառ» մեղեղին, երեք ամիս շիմացավ մսի համը, հետո ասաց. «Զի՞ պատկերացնի, որ երաժշտությունը կարող է այսպես ոգևորել»:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին գտնվում էր Ցի տերությունում, «շառ» կոչվող մեղեղին լսեց. երկար ժամանակ նա մոռացավ մսի համը, հետո ասաց. «Անսպասելի էր, որ երաժշտությունը կարող է այսպիսի ոգեշնչել»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.5 冉有曰：“夫子为①卫君②乎？”子贡曰：“诺；吾将问之。”入，曰：“伯夷、叔齐何人也？”曰：“古之贤人也。”曰：“怨乎？”曰：“求仁而得仁，又何怨？”出，曰：“夫子不为也。”

Ժամանուն հարցրեց.

- Ուսուցիչը Վեյի տիրակալի կողմնակից է:

Զիգումն ասաց.

- Խոստանում եմ՝ կհարցնեմ նրան:

Մտնելով՝ հարցրեց.

- Բո Ցին և Շու Ցին ովքեր են:

- Հին ժամանակների վեհագույն մարդիկ, ասաց Ուսուցիչը:

- Տրտնջում էին:

- Փնտրում էին մարդկայնություն և գտան դա, ասաց Ուսուցիչը, ինչպես կարող էին տրտնջալ:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Վերադառնալով՝ Ձիգունն ասաց.
- Ուսուցիչը նրան կողմնակից չէ:

[Փոխադրությունը]

Ժամանուն ասաց.

- Ուսուցիչը հավանու՞մ է Վեյի տիրակալին:

Ձիգունն ասաց.

- Լավ, ես կհարցնեմ նրան:

Մտնելով Քունձիի տուն, Ձիգունը հարցրեց.

- Ինչպիսի՞ մարդիկ էին Բո Յին և Շու Յին:

Քունձին ասաց.

- Հին ժամանակների ազնվագույն մարդկանցից էին:

Ձիգունը հարցրեց.

- Այդ երկուսը միմյանց էին փոխանցում Գու Զու տերության գահը, իետոն իրաժարվեցին դրանից և կորցրեցին ամեն ինչ: Նրանք զղջու՞ն էին դրա համար:

Քունձին ասաց.

- Նրանք առարինի էին և մնացին այդպիսին: Ինչ՞ համար զղջային:

Հետ գալով՝ Ձիգունն ասաց.

- Ուսուցիչը Վեյի տիրակալին չի հավանում:

[Մեկնությունը]

① «为» - «անել», «լինել». ասույթում կիրառված է «համակրել», «համաձայնել», «կողմնակից լինել» իմաստներով:

② «卫君» - Վեյի տիրակալ. նկատի ունի աքսորյալ իշխան Չուին՝ Լին իշխանի թոռանը, Լիի որդուն, ով գահակալական պայքար էր մղում հոր դեմ: Նա գայթակղել էր Լին իշխանի սիրելի հարձին՝ Նանձիին, այնուհետև փախել էր Զին տերություն: Զինի տիրակալն ընդունել էր նրան և մերժել էր Լինի պատվիրակների՝ նրան վերադարձնելու

խնդրանքը: Եվ իշխան Զուն սկսել էր պայքարել հոր դեմ՝ Վեյի գահին տիրանալու համար: Պատահական չէ, որ Զիզունը բերում է թագաժառանգ եղբայրներ Բո Յիի և Շու Յիի օրինակը. նրանք երկուսն էլ հրաժարվել էին գահից: Կոնֆուցիոնը բարձր էր դասում նրանց, այդ պատճառով էլ Զիզունը եղբակացրեց, որ ուսուցիչը չէր կարող հավանել Վեյի գահի համար պայքարող իշխան Զուին:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.6 子曰：“饭疏食①饮水②， 曲肱③而枕④之， 乐亦在其中矣。不义而富且贵， 于我如浮云。”

Ուսուցիչն ասաց. «Ուսել պարզ կերակուրմներ, խմել ջուր, ծալված արմունկը՝ բարձի փոխարեն. դրանում ևս երջանկություն կա: Առանց արդարության ձեռք բերված հարստությունն ու դիրքն ինձ հիշեցնում են լողացող ամպերի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զմաքրած ձավար ուտելը, սառը ջուր խմելը, քնելը՝ ձեռքը բարձի փոխարեն գլխի տակ դրած. դրանում էլ երջանկություն կա: Հարստությունն ու դիրքը, որոնց հասել են անարդարությամբ, ես համարում եմ լողացող ամպեր»:

[Մեկնությունը]

① «疏食» - «պարզ կերակուրմներ». սույն արտահայտության երկու տարածված բացատրություն կա: Առաջինը մեկնաբանում է այն որպես չթեփակերծած, չմաքրած բրինձ և ապիտած, չորացրած միս, որոնք հասարակ մարդկանց կերակուրմներ էին: Ըստ երկրորդ տեսակետի՝ խոսքը ցածր տեսակի շագանակագույն բրնձի մասին է:

Կոնֆուցիոս. Զրույցներ

② «水» - «ջուր». հնում այս գաղափարագիրը օգտագործվել է նաև որպես հոմանիշ:

«湯» գաղափարագիրը, որն ունի «ապուր», «եփուկ», «թուրմ» իմաստները:

③ «肱» - «արմուճկ». արտասանվում է «գուն», կիրառված է «բազուկ» իմաստով:

④ «枕» - «բարձ». ասություն կիրառված է որպես բայ, ունի «քնել» իմաստը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.7 子曰：“加我数年，五十以学《易》①，可以无大过矣。”

Ուսուցիչն ասաց. «Եթե կյանքիս մի քանի տարի գումարվեր, հիսունում ես «Փոփոխությունների գիրքը» ուսումնասիրած կլինեի և կկարողանայի խուսափել մեծ բաղդադրումներից»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե իմ կյանքին մի քանի տարիներ ավելացվեին, մինչև հիսուն տարեկան դառնալը ես կուսումնասիրեի «Փոփոխությունների գիրքը» և կկարողանայի խուսափել մեծ սխալներից»:

[Մեկնությունը]

① «易» - «Փոփոխություններ». նկատի ունի «Ի Զին» աշխատությունը՝ «Փոփոխությունների գիրքը», ինչը հնում օգտագործվում էր գուշակությունների համար: Դրա մի շարք հղումներ առկա են «Զրույցներում»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.8 子所雅言①， 《诗》、《书》、执礼， 皆雅言也。

Ուսուցիչը հասկանալի բարբառով էր խոսում «Երգերի գրքի» և «Պատմագրության» մասին, ծեսերի ժամանակ ևս խոսում էր հասկանալի բարբառով:

[Փոխադրությունը]

Քունձին համընդհանուր լեզվով էր խոսում, երբ ընթերցում էր «Երգերի գիրքը» և «Պատմագրությունը», ծիսակատարությունների ժամանակ ևս խոսում էր համընդհանուր լեզվով:

[Մեկնությունը]

① «雅言» ~ «հասկանալի բարբառ». հնում՝ «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում, չինական բոլոր տերություններն ունեին իրենց բարբառները: Դա են ապացուցում նաև բոլոր հին աշխատությունները: Ամենատարածված բարբառը հենց «յայանն» էր՝ «հասկանալի բարբառը», նման ժամանակակից «փութունիուային»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.1.9 叶公①问孔子于子路，子路不对。子曰：“女奚不曰， 其为人也， 发愤忘食， 乐以忘忧， 不知老之将至云尔②。”

Չեի իշխանը հարցրեց Զիլուին, թե ով է Քունձին: Զիլուն չպատասխանեց: Ուսուցիչն ասաց.

- Ինչո՞ւ այսպես չասացիր՝ «Նա այր է, ով այնքան եռանդուն է, որ մոռանում է սնվելու մասին, երջանկության մեջ մոռանում է հոգսերը և չի մտածում մոտեցող ծերության մասին»: Այդքանը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փոխադրությունը]

Շեի իշխանը հարցրեց Զիլուին, թե ինչպիսի՞ մարդ է Քունձին: Զիլուն ոչինչ չպատասխանեց: Լսելով դա՝ Քունձին ասաց Զիլուին.

- Ինչո՞ւ այսպես չասացիր. «Նա մի մարդ է, ով ջանապիրաբար աշխատելիս մոռանում է ուտելու մասին, երջանկության մեջ մոռանում է հոգսերն ու չգիտի անգամ, որ ծերությունն է մոտենում»: Այդքան բան:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «叶公» - Շեի իշխան. գաղափարագիրը ներկայումս կարդացվում է «յե», նախկինում կարդացվել է «շե»: Տեղանուն է, Զու տերության գավառներից մեկն է եղել, գտնվել է ներկայիս Հենան նահանգի Յեյան գավառի տարածքում: Շեի իշխանը այդ տարածքի կառավարիչն էր՝ Զուի տիրակալի նշանակած պաշտոնյան: Ենթադրվում է, որ խոսքը գնում է Զեն Չուկ յանի մասին, ով բարձրաստիճան պաշտոնյա էր և նրա մասին հիշատակություններ առկա են «Զույի մեկնությունների»՝ Դին և Այ իշխանների տիրապետության նկարագրությանը վերաբերող հատվածներում:

② «云尔» - «այնպես որ». ասույթում ունի «այսքան բան» իմաստը:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.0 子曰：“我非生而知之者，好古，敏以求之者也。”

Ուսուցիչն ասաց. «Ես գիտուն չեմ ծնվել, իինը սիրելն ու ջանափրությունն են ինձ այսպիսին դարձել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես չեմ ծնվել գիտելիքներով, ինձ գիտուն են դարձրել սերը իին մշակութի նկատմամբ և եռանդուն սովորելը»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.1 子不语怪， 力， 乱， 神。

Ուսուցիչը չէր խոսում մոգության, ուժի, խռովության և ոգիների մասին:

[Փոխադրությունը]

Քունձին չէր խոսում հրաշքների, քաջության, ընդգումների և ոգիների մասին:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.2 子曰：“三人行，必有我师焉：择其善者而从之，其不善者而改之①。”

Ուսուցիչն ասաց. «Երեք քայլող մարդկանց մեջ կգտնվի մեկը, ով կարող է իմ ուսուցիչը լինել. բարին ընտրելով՝ հետևում եմ դրան, իսկ այն, ինչ բարի չէ՝ օգնում է ինձ փոխվել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Միասին քայլող մարդկանց մեջ միշտ կգտնվի մեկը, ով կարող է իմ ուսուցիչը լինել: Ես առանձնացնում եմ նրա առավելություններն ու սովորում, իսկ թերությունները տեսնելով՝ շտկում եմ ինը»:

[Մեկնությունը]

① «Զրուցմերի» տասնիններորդ գլուխ քաններկուերորդ ասույթում Զիգունը նշում է, որ իր ուսուցիչը չի աշակերտել որոշակի մեկին: Դա

նշանակում էր, որ ուսուցիչները ամենուր են, ամենուր կան մարդիկ, որոնք կարող են ինչ-որ բան սովորեցնել: Լառձին իր «Ռողու և առաքի-նության գրքի» քանյոթերորդ ասույթում նշում է՝ «Բարին չարի ուսուցիչն է, չարը՝ բարու հենարանը»: Այսինքն՝ սովորել կարելի է ոչ միայն դրական, այլև բացասական օրինակները հիմք ընդունելով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.3 子曰：“天生德于予， 桓魋①其如予何②？”

Ուսուցիչն ասաց. «Երկինքն է իմ մեջ առաքինություն ծնել, Հուան Թույն ինչ կարող է անել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երկինքն է իմ մեջ այսպիսի բարոյականություն ծնել, ինձ ի՞նչ կարող է անել Հուան Թույը»:

[Մեկնությունը]

① «桓 魁» - Հուան Թույ. Սուն տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Սիմա Սյանգու:

② «桓魋其如予何» - «Հուան Թույն ինչ կարող է անել». «Զուննիի սամերի պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ Կոնֆուցիոնը իր սաների հետ տեղափոխվել էր Սուն տերություն և դպրոց էր հիմնել այնտեղ, իսկ Հուան Թույ անունով աստիճանավորը փորձում էր վնասել նրան: Երբ սամերը սկսեցին համոզել Կոնֆուցիոնի տեղափոխվել նա ասաց. «Երկինքն է իմ մեջ առաքինություն ծնել, Հուան Թույն ինչ կարող է անել»:

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.4 子曰：“二三子以我为隐乎？吾无隐乎尔。吾无行而不与二三子者，是丘也。”

Ուսուցիչն ասաց. «Իմ սաներ, կարծում եք՝ ես ձեզնից ինչոր բան եմ թաքցնում։ Ես ոչինչ չեմ թաքցնում։ Ես ոչինչ չեմ անում առանց իմ սաների, այդպիսին է Ցյուն»։

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Դուք՝ սաներս, միշտեւ կարծում եք, որ ես ձեզնից ինչոր բան եմ թաքցնում։ Ես ձեզնից ոչինչ չեմ թաքցնում։ Ես ոչինչ չեմ անում առանց ձեզ. այդպիսին եմ ես՝ Քուն Ցյուն»։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.5 子以四教：文， 行①， 忠， 信。

Ուսուցիչը չորս բան էր սովորեցնում՝ գիր, վարվեցողություն, հավատարմություն և ուղղամտություն։

[Փոխադրությունը]

Քոնճին չորս բան էր սովորեցնում՝ իին գրականություն, վարվելակերպ, լինել հավատարիմ մարդկանց և նրանց հետ անկեղծ լինել։

[Մեկնությունը]

① «行» - «քայել», «զբոսնել», «ձամփորդել», «անել», «կատարել», «վարք». ասույթում կիրառված է «վարվեցողություն» իմաստով։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.6 子曰：“圣人，吾不得而见之矣；得见君子者，斯可矣。子曰：“善人，吾不得而见之矣；得见有恒①者，斯可矣。亡而为有，虚而为盈，约而为泰②，难乎有恒矣。”

Ուսուցիչն ասաց. «Իմաստուն մարդու ես չեմ հանդիպել, եթե ազնվայրի հանդիպել՝ բավական կլիներ»: Հետո Ուսուցիչն ասաց. «Բարի մարդու ես չեմ հանդիպել, եթե հանդիպելի կայունություն ունեցող մեկին՝ բավական կլիներ: Անհետացումը բերում է հայտնության, դատարկությունը բերում է լիության, ժուժկալությունը բերում է շոայության. դժվար է կայուն լինելը»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Ես չեմ հանդիպել իմաստուն մարդու, եթե հանդիպելի ազնիվ մի մարդու, դա էլ լավ կլիներ»: Հետո նա ասաց. «Ես չեմ հանդիպել բարի մարդու, եթե հանդիպելի մի հաստատուն մարդու, դա էլ լավ կլիներ: Ոչինչ չունենալով՝ ձևացնել, թե ունես, դատարկ լինելով՝ ձևացնել, թե լի ես, աղքատ լինելով՝ ձևացնել, թե հարուստ ես. դժվար կլինի հաստատուն մնալը»:

[Մեկնությունը]

① «有恒» - «ունենալ կայունություն». «恒» գաղափարագիրը ունի մի շարք իմաստներ՝ «կայուն», «հաստատուն», «կանոն»: Նույնաբռվանդակ մի արտահայտություն կա Մենձի «Լյանի Հուեյ արքան» աշխատության մեջ, ուր նշվում է հետևյալը՝ «Անկայունությունից է ծնվում կայունությունը»:

② «泰» - «ապահով», «խաղաղ», «հարուստ», «շռայլ», «շքեղ»: Սյունձիի աշխատության մեջ հանդիպում է հետևյալ արտահայտությունը՝ «Շռայլի փողերը՝ ունաոր երևալու համար», ինչն ունի «անխնաև չմտածված գումար շռայլել» իմաստը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.7 子钓而不纲①，弋②不射宿③

Ուսուցիչը ձուկ էր բռնում կարթով և ոչ ցանցով, չէր նետահարում բռնում թառածներին:

[Փոխադրությունը]

Քոնճին ձուկ էր բռնում կարթով, ոչ թե ցանցով, նետահարում էր թռչող թռչուններին, ոչ թե բռնում թառածներին:

[Մեկնությունը]

① «纲» - «ձկնորսական ցանց». հնում լավագույն ցանցերը հյուսվում էին անմշակ, յուղած մետաքսաթելից:

② «弋» - «նետահարել». օգտագործվում էր հատուկ նետ, ինչի հետևից կապվում էր մետաքսաթել: Դա արփում էր նետը չկորցնելու և արագ հետ բերելու համար:

③ «宿» - հնում կիրառվել է «գիշերակաց», «հանգիստ» իմաստներով. ասություն ունի «բռնում թառած» իմաստը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.8 子曰：“盖有不知而作之者，我无是也。多闻，择其善者而从之；多见而识之；知之次也①。”

Ուսուցիչն ասաց. «Կան այնպիսիք, որ գործում են՝ չիմանալով. ես այդպիսին չեմ: Շատ եմ լսում՝ ընտրելով լավագույնը՝ հետևելու համար, շատ եմ դիտում՝ մտապահելու համար. գիտելիքը հաջորդում է դրան»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Կան մարդիկ, որոնք ոչինչ չիմանալով հանդերձ՝ գործում են: Ես նրանց նման չեմ: Շատ եմ լսում, որպեսզի ընտրեմ լավագույնն ու ընդունեմ դա, շատ եմ դիտարկում, որպեզի պահեմ ամենն իմ մտքում: Գիտելիքն ի հայտ է զալիս հաջորդիվ»:

[Մեկնությունը]

① «次» - «հաջորդել», «երկրորդ», «երկրորդային». գաղափարագիրը «Զրույցներում» հանդիպում է ութ անգամ: Կոնֆուցիոսը գտնում էր, որ կա նախնական, սկզբնական գիտելիք, որը դրանորվում է ի ծնե, և երկրորդային գիտելիք, ինչը ձեռք է բերվում կյանքի ընթացքում:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

7.2.9 互乡①难与言， 童子见， 门人惑。子曰：“与其进也， 不与其退也， 唯何甚？人洁已以进， 与其洁也， 不保②其往也。”

Հույանի մարդկանց հետ բարդ էր խոսելը, և երբ այնտեղից մի պատանի հայտնվեց, սաներն ապշեցին: Ուսուցիչն ասաց. «Ավելի լավ է ընդունել նրան, քան մերժել, ինչ կա դրանում: Մարդը մաքրել է ինքն իրեն, պիտի ընդունենք որպես մաքուր և չիշենք անցյալը»:

[Փոխադրությունը]

Բարդ էր խոսելը Հույանի բնակիչների հետ: Երբ այնտեղից մի տղահայտնվեց ու ցանկացավ հանդիպել Քունձիին, սաները զարմացան: Քունձին ասաց. «Մենք պիտի օգնենք նրան կրթվել, չենք նայի նրագոհեկությանը: Միթե մեծ քան է: Երբ մարդիկ մաքուր են և զալիս, մենք պիտի ընդունենք նրանց մաքուր և չիշենք նրանց անցյալը»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Մեկնությունը]

① «互乡» - Հուայան. տեղանուն է: Գտնվելու վայրը ներկայումս անհայտ է:

② «保» - բառացի՝ «պաշտպանել», «երաշխավորել», «ապահովել». ասուլյթում կիրառված է «անցյալը հիշել» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.0 子曰：“仁远乎哉？我欲仁，斯仁至矣。”

Ուսուցիչն ասաց. «Միջեւ հեռու է մարդկայնությունը: Եթե ես ձգտում եմ մարդկայնության, մարդկայնությունը հայտնվում է»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Արդյոք առաքինությունը շատ հեռու է մեզնից: Եթե ես ձգտում եմ դրան, այն հայտնվում է»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.1 陈司败①问昭公②知礼乎，孔子曰：“知礼。”孔子退，揖巫马期③而进之，曰：“吾闻君子不党，君子亦党乎？君取于吴④，为同姓⑤，谓之吴孟子⑥。君

而知礼，孰不知礼？”巫马期以告。子曰：“丘也幸，苟有过⑦，人必知之。”

Զեն Սիբայը հարցրեց՝ արդյոք իշխան Զատն գիտի ծեսերը: Քունձին ասաց.

- Գիտի ծեսերը:

Կոնֆուցիոն. Չրույցներ

Երբ Քունձին հեռացավ, ողջումներով մտնող Ումա Ցիին, Զեն Սիբայն ասաց.

- Ես լսել եմ, որ ազնվայրը կողմնակալ չի լինում, պարզվում է՝ ազնվայրը կողմնակալ է: Տիրակալը կնության է առել Ուից մեկին, ով նոյն տոհմից է, անվանում են նրան Ու Մենձի: Եթե տիրակալը գիտի ծեսերը, ապա ո՞վ չգիտի:

Ումա Ցին պատմեց այդ մասին Ուսուցչին, ով ասաց.

- Ցյուի բախտը բերել է: Եթե սխալ ունենա, մարդիկ կզգուշացնեն նրան:

[Փոխադրությունը]

Զեն Սիբայը հարցրեց Քունձիին՝ արդյո՞ք Լու տերության իշխան Զառն գիտի ծեսերը: Քունձին պատասխանեց.

- Նա գիտի ծեսերը:

Երբ Քունձին դուրս եկավ, Զեն Սիբայը խոնարհվեց Ումա Ցիին՝ խնդրելով մոտենալ և ասաց.

- Ես լսել եմ, որ ազնիվ մարդը կողմնակալ չի լինում, ինչու^① է Քունձին կողմնակալություն անում: Լուի տիրակալը ամուսնացել է Ու տերությունից մի աղջկա հետ, իսկ Ու և Լու տերությունները կառավարում է նոյն տոհմը: Քանի որ չէր կարող կոչել նրան Ու Ձի, նրան անվանեցին Ու Մենձի: Եթե Լուի տիրակալը գիտի ծեսերը, ապա ո՞վ չգիտի:

Ումա Ցին այդ մասին տեղեկացրեց Քունձիին:

- Ես հաջողակ մարդ եմ, ասաց Քունձին, եթե ես սխալվեմ, մարդիկ մատնացուց կանեն սխալ:

[Մեկնությունը]

① «陈司败» - Զեն Սիբայ. անուն է: Ոմանք կարծում են, թե «Սիբայը» արքունական աստիճանավորի կոչում է, մյուսները հակված են ենթադրել, որ ուղղակի անձնանուն է: Ներկայում ուղղակի անհնար է պարզել, թե ում մասին է խոսքը:

② «昭公» - Զառգուն կամ իշխան Զառ. Լու տերության իշխանն էր՝ տիրակալ Սյանի ապօրինի զավակը, ով հետագայում ինքը դարձավ միապետ: Հայտնի չէ, թե Զեն Սիբայը իր հարցադրումն անուն է նրա կենդանության օրոք, թե մահվանից հետո: Կենդանության օրոք «Իշխան Զառն զիսի ծեսերը» արտահայտությունը հարցական կինչեր, իսկ մահվանից հետո՝ հաստատական:

③ «巫马期» - Ումա Ֆի. Կոնֆուցիոսի սանն էր՝ Ումա տոհմից, Շի անունով, պատվաճառունը՝ Ֆի: Կոնֆուցիոսից փոքր էր երեսուն տարով:

④ «君取于吴» - «Տիրակալը կնության է առել Ուից մեկին». «取»՝ «վերցնել» բայն այստեղ կիրառված է «կնության առնել» իմաստով: Իսկ «吳»՝ «Ու», տերության անուն է: Գտնվել է Անրկային Ջեձյան նահանգի տարածքում: Կործանվել է Յուե տերության արքա Գոուձյանի կողմից:

⑤ «为同姓» - «նոյն տոհմից է». Լուի իշխան Զառն և Ուի իշխանը արյունակից էին, նոյն Ձի տոհմից:

⑥ «吴孟子» - Ու Մենձի. «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում տիրակալի կնոջը տրվում էր այն տերության անունը, որտեղ նա մեծացել էր, դրան կցվում էր նրա իրական տոհմանունը: Լուի իշխանի կինը Ու տերությունից էր և Ձի տոհմից, հետևաբար՝ պիտի անվանվեր Ու Ձի: Քանի որ Զոոյի ծիսակարգն արգելում էր տոհմակիցների ամուսնությունը, իշխան Զառն ստիպված էր կնոջն այլ անուն տալ՝ Ու Մենձի:

⑦ «苟有过» - «Եթե սխալ ունենա». Սյունձիի աշխատության և «Զունիի սաների պատմագրության» մեջ նոյնաբովանդակ մի արտահայտություն է հանդիպում՝ «Ազնվայրը չի կարող լինել կողմնակալ»: Այն, որ Կոնֆուցիոսը իշխան Զառին համարում էր քաջատեղյալ ծեսերից, Զեն Սիբայի կողմից որակվեց որպես կողմնակալ վերաբերմունք: Իսկ Կոնֆուցիոսն ընդունեց իր բացթողումը՝ ուրախանալով, որ կան մարդիկ, որոնք կարող են մատնանշել իր սխալները:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.2 子与人歌而善，必使反之，而后和之。

Երբ Ուսուցչին դուր էր գալիս ինչ-որ մեկի երգը, նա խնդրում էր կրկնել, այնուհետև միանում էր նրան:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին հավանում էր ինչ-որ մեկի երգը, խնդրում էր, որ կրկնի երգը, իսկ հետո ձայնակցում էր նրան:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.3 子曰：“文，莫①吾犹人也。躬行君子，则吾未之有得。”

Ուսուցիչն ասաց. «Կրթվածությամբ ես կարող եմ համեմատվել այլ այրերի հետ։ Վարվել ազնվայրի պես՝ դրան ես դեռ չեմ հասել»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Իմ գրագիտությամբ կարող եմ համեմատվել շատերի հետ, սակայն ես դեռ չեմ հաջողել որպես ազնվայր»։

[Մեկնությունը]

① «文，莫» - այս արտահայտությունը նախկինում հստակ նշանակություն չուներ։ Պարոն Ու Ջյանջայը գտնում էր, որ «文» գաղափարագրով պյատեղ նշված են «գրագիտություն», «կրթվածություն» հասկացությունները։ «莫» գաղափարագիրը արտահայտում է վերաբերմունք, համեմատություն։ Զու Սիի «Մեկնություններում» վերոնշյալ գաղափարագիրը փոխադրված է որպես խոսքին կասկածելի երանգ հաղորդող բառ։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.4 子曰：“若圣①与仁，则吾岂敢？抑为之不厌，诲人不倦，则可谓云尔已矣。”公西华曰：“正唯弟子不能学也。”

Ուսուցիչն ասաց.

- Իմաստուն և մարդկային. մի՞թե ես արժանի եմ այդպիսին համարվելու: Ընդամենը անխոնց ջանում եմ և ուսուցանում առանց հոգմության: Ահա ամենն, ինչ կարելի է ասել իմ մասին:

Գունափ Հուան ասաց.

- Հենց դա է, որ սաներդ չեն կարող սովորել:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Իմաստուն և մարդկային լինելու մասին... Ինչպես կիամարձակվեմ ինձ այդպիսին համարել: Ես ընդամենը ջանափրաբար գործում եմ, սովորում և սովորեցնում առանց հոգմելու, ահա և վեր:

Գունափ Հուան ասաց.

- Հենց դրան է, որ մենք՝ սաներդ, չենք կարողանում հասնել:

[Մեկնությունը]

① «圣» - «սուրբ», «իմաստուն». «Մենձի» աշխատության «Գունասուն Չոռու» գլխում կա մի հատված, որը վերոնշյալ ասույթի վերաշարադրումն է. «Զիգունը հարցորեց Քունձիին. «Դու իմաստո՞ն ես»: Քունձին պատասխանեց. «Իմաստո՞ն: Իմ ունակությունները համեստ են: Ես ընդամենը մեկն եմ, որ չի հոգնում սովորելուց և սովորեցնելուց»: Զիգունն ասաց. «Սովորել առանց հոգմելո՛ իմաստնություն է: Սովորեցնել առանց հոգմելո՛ մարդկայնություն: Իմաստուն և մարդկային. Ուսուցիչ, դու, հիրավի, ամենահմաստունն ես»: Այսինքն՝ Կոնֆուցիոսի սաները նրան համարում էին ամենահմաստունն են»: Այսինքն՝ Կոնֆուցիոսի սաները

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.5 子疾病①， 子路请祷。子曰：“有诸？”子路对曰：“有之；《诔》②曰：‘祷尔于上下神祇③。’”子曰：“丘之祷久矣。”

Ուսուցիչը հիվանդացավ և Զիլուն խնդրեց նրան աղոթել։ Ուսուցիչն ասաց.

- Ընդամենը։
- Ընդամենը դա, ասաց Զիլուն, «Աղոթքներում» գրված է՝ աղոթիր վերին և ստորին ողիներին։
- Ես վաղուց եմ աղոթում, ասաց Ուսուցիչը։

[Փռխաղբությունը]

Քոնձին ծանր հիվանդ էր և Զիլուն խնդրեց նրան աղոթք անել։ Քոնձին ասաց.

- Միթե այդպես են վարվում։
- Այս, ասաց Զիլուն, «Աղոթագրում» գրված է՝ «Աղոթիր քեզ համար Երկնքի և Երկրի ողիներին»։
- Ես շատ վաղուց եմ աղոթում, ասաց Քոնձին։

[Մեկնությունը]

① «疾病» - «հիվանդանալ». ասուլյում կիրառված է «ծանր հիվանդանալ» իմաստով։

② «诔» - «Աղոթքներ»։ Ակատի ունի հնում գործածվող «Աղոթագիրք», ինչը պարունակում էր աղոթքներ, օրինաբանություններ և եղերերգեր։ Ներկայումս ամբողջությամբ պահպանված չէ։

③ «祇» - սույն գաղափարագրով նշվում է Երկրի ողին։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.6 子曰：“奢则不孙①， 俭则固②。与其不孙也， 宁固。”

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Զեխությանը անպատկառություն է հետևում, խնայողությանը՝ ժուժկալություն: Լավ է ժուժկալ լինել, քան անպատկառ»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Շռայլությունը պարծենելու տույժություն է ծնում, իսկ չափավորությունը՝ համեստություն: Ավելի լավ է լինել համեստ, քան պարծենելու»:

[Մեկնությունը]

① «孙» - ատլյում կիրառված է «逊»՝ «պատկառանք ունեցող», «հարգալից», «համեստ» իմաստներով: «孙» գաղափարագրի դիմաց դրվող «不» գաղափարագիրը կիրառված է որպես ժխտական նախածանց, այնինքն՝ «不孙»՝ «անպատկառ», «անպատկառություն»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.7 子曰：“君子坦蕩蕩，小人長戚戚。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը պարզ է ու անվրդով, իսկ նվաստը՝ միշտ տագնապած»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդը սրտաբաց է ու հանդարտ, իսկ նվաստը՝ սահմանափակ է ու մշտապես անհանգիստ»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

7.3.8 子溫而厉，威而不猛，恭而安。

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչը մեղմ էր, սակայն՝ խիստ, ազդեցիկ էր, սակայն՝ ոչ դաժան, հարգալիր էր և գուսավ:

[Փռխաղը բությունը]

Քունձին փափկասիրտ էր, բայց նաև խիստ, պատկառելի էր, բայց ոչ ցասկոտ, արժանապատիվ էր և հանդարտ:

Գլուխ 8. «Թայ Բո» Ընդամենը 21 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1 子曰：“泰伯①，其可谓至德也已矣。三以天下②让，民无得而称焉。”

Ուսուցիչն ասաց. «Թայ Բո. նրա մասին կարել է ասել, որ առաքինի էր: Երեք անգամ կարող էր կառավարել Երկնայինը, և մարդիկ խոսքեր չէին գտնում նրան փառաբանելու համար»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Թայ Բոն, կարելի է ասե՛՝ ծայրաստիճան բարոյական էր: Մի քանի անգամ կարող էր կառավարել Երկնայինը, սակայն իրաժարվեց և ժողովուրդը չէր կարողանում հարմար խոսքեր ընտրել նրան փառաբանելու համար»:

[Մեկնությունը]

① «泰伯» - Թայ Բո. Վերջինիս ամունը ուներ նաև «太伯» գրեպանը, ինչը նույն հնչողությունն ունի: Զուու հարստության հիմնադիր Գու իշխանի անդրանիկ որդին էր: Գու իշխանը երեք որդի ուներ՝ Թայ Բոն, Զուն Յունը և Զի Լին: Զի Լիի որդին Զի Զանն էր, ով հետագայում դարձավ Զույի արքան և կրում էր Վեն անունը: Հատ առասպեկի՝ Գու իշխանը կանխագուշակել էր Զի Զանի մեծ ապագան, և որոշել էր ավագության կարգին հակառակ իշխանությունը փոխանցել կրտսեր որդուն՝ Զի Լիին, որպեսզի Զի Զանը նրանից ժառանգի գահը: Թայ Բոն և Զուն

Յունը հեռացան մայրաքաղաքից՝ չհակառակվելով հոր ցանկությանը: Արդյունքում՝ Վեճ արքան՝ Ձի Զանը, կարողացավ նվաճել Զինաստանի երկու երրորդ մասը, իսկ նրա որդին՝ Ու արքան, կարողացավ տապալել Ին հարստությունը և միավորել Զինաստանը:

② «天下» - բառացի՝ «Երկնքի տակ», «Ամենն, ինչ Երկնքի տակ է», «Երկնային». Գու իշխանի և Թայ Բոյի ժամանակների Զոռու փոքր իշխանություն էր և չէր կարող կոչվել «Երկնային»: Ոնանք կարծում են, որ «天下» արտահայտությունը վերաբերում է Վեճ և Ու արքաների միավորած միացյալ պետությանը, որ զբաղեցնում էր ողջ Կենտրոնական հարթավայրը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.2 子曰：“恭而无礼①则劳，慎而无礼则葸②，勇而无礼则乱，直而无礼则绞③。君子笃于亲，则民兴于仁；故旧不遗，则民不偷④。”

Ուսուցիչն ասաց. «Պատկառանքն առանց ծեսի հոգնություն է ծնում, զգուշավորությունն առանց ծեսի տագնապ է ծնում, խիզախությունն առանց ծեսի խոռվություն է ծնում, ուղղամասությունն առանց ծեսերի կոպություն է ծնում: Եթե ազնվայրը հավատարիմ է հարազատներին, ժողովրդի մեջ ծաղկում է մարդկայնությունը, եթե հին բարեկամները մոռացված չեն, ժողովուրդը չի չարանում»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Հարգալիրությունն առանց ծեսերի հոգնեցնում է: Զգուշավորությունն առանց ծեսերի փոքրոգություն է առաջացնում: Քաջ ու համարձակ գործելն, առանց ծեսերի, անխոհենություն է: Ճշմարտախոսությունն առանց ծեսերի կարող է վիրավորել մարդկանց: Եթե տիրակալը սիրում է իր հարազատներին, ժողովուրդը կձգտի

Յան Բոհունի փոխադրությունը և մեկնությունը

մարդկայնության: Երբ տիրակալը չմոռանա իր մտերիմներին ու քարեկամներին, մարդիկ անտարբեր չեն լինի միմյանց նկատմամբ»:

[Մեկնությունը]

① «礼» - «ծես». ասույթում նշվում է ծեսերի իրական՝ ձևականություններից զերծ բնույթը:

② «蕙» - «տագնապել». ասույթում ունի «երկչոտություն», «փոքրություն», «վախկոտություն» իմաստները:

③ «绞» - բառացի՝ «թեքել», «սխալվել», «խառնել». ասույթում կիրառված է «կոպտել», «կոպտություն», «անտաշություն» իմաստներով:

④ «偷» - բառացի՝ «գողություն», «հափշտակություն», «չարագործություն». ասույթում կիրառված է «անտարբեր չլինել» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.3 曾子有疾，召門弟子曰：“启①予足！启予手！诗》云②：“战战兢兢，如临深渊，如履③薄冰。”而今而后，吾知免夫！小子！”

Յենձին հիվանդ էր և սաներին հավաքելով՝ ասաց. «Նայեք ոտքերիս: Նայեք ձեռքերիս: «Երգերում» ասվում է. «Զգուշ եղիր, ասես անդունդի եղրին ես կամ քայլում ես բարակ սառույցի վրայով»: Այնժամ ես հասկացա, թե ինչպես խուսափել պատուհասից, իմ սաներ»:

[Փոխադրությունը]

Երբ Յենձին հիվանդ էր, հավաքեց իր սաներին և ասաց. «Հապանայեք իմ ոտքերին: Հապանայեք իմ ձեռքերին: «Երգերի գրքում» ասվում է. «Զգուշացիր... Ասես քայլում ես անդունդի եղրով կամ ոտք ես դնում բարակ սառույցին»: Միայն դրանից հետո ես հասկացա, թե ինչպես ազատվել դժբախտությունից, իմ սաներ»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «启» - բառացի՝ «բացել», «սկսել», «արթնանալ». ասույթում կիրառված է «ուշադիր նայել», «զննել» իմաստներով։ Վյտ մոտեցումը հաստատվում է նաև Վան Նյանսունի «Հնամենի մատյանների մեկնություն» աշխատության մեջ։

② «诗» 云՝ «Երգերում» ասվում է։ մեջքերված է երեք տող «Երգերի գրքից», երկու գիսավոր գլուխներից։

③ «履» - «քայլել», «ոտք դնել»։ այդ անվամբ գլուխ կա նաև «Փոփոխությունների գրքում», որը ներկայացվում է համապատասխան եռասողոր։ Նշված զաղափարագիրը կիրառվում է հետևյալ հատվածում։ «Կույրը կարող է տեսնել, անդամալույթը կարող է քայլել»։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.4 曾子有疾，孟敬子①问之。曾子言曰：“鸟之将死，其鸣也哀；人之将死，其言也善。君子所贵乎道者三：动容貌，斯远暴慢②矣；正颜色，斯近信矣；出辞气，斯远鄙倍③矣。笾豆之事④，则有司⑤存。”

Ցենձին հիվանդ էր և Մեն Զինձին այցելեց նրան։ Ցենձին ասաց. «Մեռնող թռչնի կոնչյունը նման է ողբի, մեռնող մարդը խոսում է բարու մասին։ Ազնվայրը Ըլդու վրա երեք բան է զնահատում. հետևում է կեցվածքին՝ խուսափելու համար կոպությունից և գոռողությունից, խաղաղ է՝ որպեսզի մարդիկ վստահեն, խոսելիս զգուշ է՝ խուսափելու համար սխալներից ու անխոհեն խոսքերից։ Իսկ ծիսական անոթների համար հոգ տանող պաշտոնյաներ կան»։

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Ցենձին հիվանդ էր և Մեն Զինձին այցելեց նրան։ Ցենձին ասաց.

«Երբ թշնի մահը մոտենում է, նրա երգը տխոր է դառնում, երբ մարդն է զգում մոտալուս մահը, սկսում է բարին խոսել: Ազնիվ մարդը երեք բանի վրա է ուշադրություն դարձնում. լուրջ է և հանդարտ՝ կոպտությունից ու գոռողությունից խոսափելու համար, նրա դեմքի արտահայտությունը մարդկանց վստահություն է ներշնչում, խոսքերում ուշադիր է, որպեսզի խոսափի վխաղներից ու գրեհկությունից: Իսկ ծիսակարգային մանրութների համար հոգ կտանեն պաշտոնյաները»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «孟敬子» - Մեն Զինձի. Լու տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Զունսուն Ձե:

② «暴慢» - բառացի՝ «կոպիտ և դանդաղ». ասույթում կիրառված է «կոպտություն և գոռողություն» իմաստով:

③ «鄙倍» - բառացի՝ «արհամարհական», «նվաստ». ասույթում կիրառված է «սխալ և անխիեն» իմաստով:

④ «笾豆之事» - «ծիսական անորթների համար...». նկատի ունի նվիրատվությունների համար նախատեսված «բյան» և «դոռու» կոչողն ծիսական անորթները, որոնք պատրաստվում էին փայտից և հնդկեղեգնից: Դրանցում պահվում էին բուսական ծագում ունեցող բարիքները՝ հացահատիկը, տարատեսակ պտուղներ:

⑤ «有司» - բառացի՝ «կան պաշտոնյաներ». նկատի ունի ծիսակարգի որոշակի տարրերի համար պատասխանատու պաշտոնյաներին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.5 曾子曰：“以能问于不能， 以多问于寡； 有若无， 实若虚； 犯而不校。昔者吾友①尝从事于斯矣。”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ցենձին ասաց. «Թեև ընդունակ էր, կարող էր հարցնել անընդունակին, ուստի՝ բայց կարող էր սովորել թիշ խմացողից, ունենալով՝ համարում էր, որ չունի, լի լինելով՝ համարում էր, որ դատարկ է, եթե վիրավորում էին. Վրեժխնդիր չէր լինում. Նախկինում այդպես էր վարվում իմ բարեկամը»:

[Փոխադրությունը]

Ցենձին ասաց. «Ընդունակ լինելով հանդերձ՝ խորհրդակցում էր անընդունակների հետ, գիտուն էր, բայց կարող էր սովորել թերացողներից, իմաստնություն ունենալով՝ համարում էր, որ չունի, լի էր գիտելիքներով, սակայն համարում էր, որ դատարկ է: Նույնիսկ եթե վիրավորում էին ճրան, չէր փորձում հաշիվ մաքրել: Ահա այդպիսին էր իմ վաղեմի ընկերը»:

[Մեկնությունը]

① «吾友» - «իմ բարեկամը». Վերլուծաբանների մեծամասնությունը կարծում է, որ Ցենձին նկատի ուներ Յան Հուեյին:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

8.6 曾子曰：“可以托六尺①之孤， 可以寄百里之命， 临大节而不可夺也~君子人与？ 君子人也。”

Ցենձին ասաց. «Նա, ով կարող է խնամել վեց չի հասակ ունեցող որբին, կարող է կառավարել հարյուր լի մեծությամբ տերությունը, մեծ արհավիրքների դիմաց չի ընկրկում. այդ մարդն ազնվայր է: Այդ մարդն ազնվայր է»:

[Փոխադրությունը]

Ցենձին ասաց. «Նա, ով կարող է խնամել որբին և պետություն կառավարել, ով դիմակայում է արհավիրքներին և հաղթահարում դրանք. ազնիվ մարդ է, թե՞ ոչ: Հարկավ, ազնիվ մարդ է»:

[Մեկնությունը]

① «六尺» - «վեց չի». Երկարության հին միավոր. վեց չին հավասար է մոտ հարյուր երեսունութ սանտիմետրի: Այդ բարձրության հասակ ունեցողը դեռ երեխա էր՝ տասնհինգ տարեկանից ցածր:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.7 曾子曰：“士不可以不弘毅①，任重而道远。仁以为己任，不亦重乎？死而后已，不亦远乎？”

Ցենձին ասաց. «Ուսալ այրը չի կարող չլինել լայնախոն և հաստատական, նրա քեռը ծանր է և ուղին՝ երկար: Մարդկայնություն է սկսում. միշտ ծանր չէ: Մահն է կանգնեցնում նրան. միշտ երկար չէ»:

[Փոխադրությունը]

Ցենձին ասաց. «Ուսալ մարդը չի կարող չլինել ուժեղ և վճռական, քանզի նրա քեռը ծանր է և ուղին՝ երկար: Նա մարդկայնություն ու առաքինություն է տարածում աշխարհում, միշտ դա ծանր չէ: Նրան միայն մահն է կանգնեցնում, միշտ դա երկար չէ»:

[Մեկնությունը]

① «弘毅» - «լայնախոն և վճռական». սույն արտահայտության առաջին գաղափարագիրը կիրառված է «强»՝ «ուժեղ» իմաստով:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Պարոն Զան Թայյանը (Զան Բինլին) իր ««Զրույցների» մեկնություններ» աշխատության մեջ նշում է. «« 强 » գաղափարագիրը նախկինում կիրառվել է «强» իմաստով: Ծանր բեռ կրելու համար պետք է ուժեղ և հաստատակամ լինել, այլապես չես հաջողի»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.8 子曰：“兴于《诗》，立于礼，成于乐①。”

Ուսուցիչն ասաց. «Ոգեշնչվում եմ «Երգերով», հենվում ծեսերի վրա և զարգանում երաժշտությամբ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երգերը ոգեշնչում են ինձ, ծեսերի միջոցով ես ավելի ամուր եմ կանգնում ոտքերիս վրա և երաժշտությամբ կատարյալ եմ դարձնում իմ ուսմունքը»:

[Մեկնությունը]

① «成于乐» ~ «զարգանում եմ երաժշտությամբ». Կոնֆուցիոսը անբաժան էր համարում երաժշտության բովանդակությունն ու էությունը ծեսերից: Լինելով երաժշտության մեջ գիտակ՝ Կոնֆուցիոսը գտնում էր, որ այն ուսուցման մեջ կատարելագործվելու ուղիներից մեկն է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.9 子曰：“民可使由之，不可使知之。”①

Ուսուցիչն ասաց. «Մարդկանց կարելի է ստիպել հետևել, չի կարելի ստիպել հասկանալ»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Հասարակ ժողովրդին կարող ենք ստիպել հետևել մեր ուղուն, սակայն չենք կարող ստիպել՝ նրանց գիտակցել, թե ինչո՞ւ»:

[Մեկնությունը]

① «子曰：“民可使由之，不可使知之。”» - «Մարդկանց կարելի է ստիպել հետևել, չի կարելի ստիպել հասկանալ». այս ասույթը «Զրոյցների» ամենաշատ քննարկված և մեկնաբանված ասույթներից մեկն է: Տեսակետ կա, որ այս երկու նախադասությունը կապված են Սիմա Ցյանի «Պատմագրության» «Զավեշտալի գրառումներ» հատվածում առկա հետևյալ արտահայտության հետ. «Ժողովուրդը կարող է երջանիկ լինել չիմացության մեջ»: Արտահայտության պյորինակ մեկնաբանությունն անընդունելի են համարում այն մարդիկ, որոնք Կոնֆուցիոնին «սուրբ» են համարում: Նրանք գտնում են, որ Կոնֆուցիոնը երբեք նման արհամարհական վերաբերմունք չէր ցուցաբերի ժողովրդի նկատմամբ և դա հակասում է նրա ուսմունքի՝ «մարդկանց կրթելու» սկզբունքին: Սակայն պետք չէ մոռանալ, որ ստրկատիրական հասարակարգի պայմաններում հասարակ մարդիկ կրթություն ստանալու հնարավորություն գրեթե չունեին, և առավելագույնը՝ ինչ կարող էին նրանք անել, ծեսերին հետևելին էր՝ հաճախ նույնիսկ առանց դրանց իմաստը գիտակցելու: Նույնիմաստ մի հատված կա «Փոփոխությունների գրքում»: «Մարդիկ ամեն օր անում են դա, չինանալով՝ թե ինչո՞ւ»: Շատ հավանական է, որ Կոնֆուցիոն այս ասույթում դրել է հենց այդ իմաստը: Ինչ վերաբերում է նրա տեսակետների փոփոխություններին. պատահական չէ, որ Կոնֆուցիոնին անվանում էին «Ժամանակի իմաստուն», այն պատճառով, որ նա տարիների ընթացքում փոխում է իր մոտեցումները այս կամ այն երևույթի նկատմամբ: Զուանձին նրա մասին այսպիսի մի հատված ունի. «Երբ Քոնձին դարձավ վաթսոն տարեկան, նրա հայացքները փոխվեցին. այն, ինչ նա համարում էր

Կոնֆուցիոն. Զրույցներ

ձշմարիտ, սկսեց համարել սուտ: Ո՞վ գիտի, ձշմարիտ էր արդյոք այն, ինչ նա ասում էր իիսուն տարիների ընթացքում»: Լյու Բատնանը գտնում էր, որ ասույթում «民»՝ «մարդիկ», «ժողովուրդ» գաղափարագիրը կիրառված է «弟»՝ «սան», «աշակերտ» իմաստով: Հուան Մայունի «Չրուցների մեկնություններում» նշված է ասույթի հետևյալ մեկնությունը. «Ստիպիր մարդկանց հետևել քեզ, եթե համաձայն չեն՝ ստիպիր հասկանալ»: Մեկնաբանողը ենթադրում է, որ ասույթը վերաբերում է տիրակալ-ժողովուրդ հարաբերություններին: Սակայն այդ տեսակետն այնքան էլ արժանահավատ չէ: Ամենայն հավանականությամբ՝ գործ ունենք քերականական և շարահյուսական թնջուկի հետ, ինչը դեռ երկար տարիներ քննարկումների տեղիք կտա:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1 0 子曰：“好勇疾贫，乱也。人而不仁，疾之已甚，乱也。”

Ուսուցիչն ասաց. «Մեծարում են խիզախությունն ու պախարակում աղքատությունը՝ խոռվություն կիմի: Պախարակում են մարդկայնությունից գորկ մարդկանց՝ խոռվություն կիմի»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Քաջ ու ինքնազնի լինել և ատել աղքատությունը. դա խոռվության կրերի: Ատել նրանց, որոնք մարդկայնությունից գորկ են. դա խոռվություն կրերի»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1 1 子曰：“如有周公之才之美，使骄且吝，其余不足观也已。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Եթե ունես Զոռու իշխանի շնորհները, սակայն գոռող ես և գծուծ, մնացյալ որակներդ ոչինչ չարժեն»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե Զոռու իշխանի պես տաղանդավոր լինելով հանդերձ՝ ինքնահավան ես և Ժլատ, ապա մնացյալ քո որակները արժանի չեն ուշադրության»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.2 子曰：“三年学，不至①于谷②，不易得也。”

Ուսուցիչն ասաց. «Երեք տարի սովորելուց հետո նրանց, որոնք չեն ձգտում բարիքի, դժվար է գտնել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Նրանց, որոնք երեք տարի սովորելուց հետո չեն ձգտում դառնալ պետական աստիճանավոր, շատ դժվար է գտնել»:

[Մեկնությունը]

① «至» - «հասնել», «մինչև». ասույթում կիրառված է «ձգտել» իմաստով: Գաղափարագիրը հանդիպում է նաև «Զրույցների» վեցերորդ գլուխ յոթերորդ ասույթում, որը կիրառված է «մինչև» իմաստով:

② «谷» - բառացի՝ «հացահատիկ». ասույթում կիրառված է «բարիք» և «ոռձիկ» իմաստով: Հնում հաձախ պաշտոնյաների վարձատրության մաս էր կազմում հացահատիկեղենը: Այդ մասին հիշատակվում է նաև «Զրույցների» տասնչորսերորդ գլուխ առաջին ասույթում, որտեղ Կոնֆուցիոսը նշում է, որ աստիճանավորները մտածում են միայն ոռձիկի մասին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.3 子曰：“笃信①好学，守死善道。危邦不入，乱邦不居②。天下有道则见③，无道则隐。邦有道，贫且贱焉，耻也；邦无道，富且贵焉，耻也。”

Ուսուցիչն ասաց. «Ձերմորեն հավատա և եռանդով սովորիր՝ մինչ մաս պահպանելով առաքինի Ուղին։ Մի անցիր վտանգավոր երկրով, մի ապրիր խռովյալ երկրում։ Երկնայինում հետևում են Ուղուն՝ երևա, չեն հետևում Ուղուն՝ թարմվիր։ Եթե տերությունում հետևում են Ուղուն, ապա ամորալի է լինել աղքատ ու աննշան։ Եթե տերությունում չեն հետևում Ուղուն, ապա ամորալի է լինել հարուստ ու անվանի։»

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հաստատուն եղիր հավատիդ մեջ և ջանասիրաբար ուսումնասիրիր մեր ուսմունքը, անձնվիրաբար պաշտպանիր դա։ Մի այցելիր այն տերություն, ուր վտանգ կա։ Մի ապրիր այն տերությունում, ուր ընդվզումներ կան։ Երկրում խաղաղի է՝ գործիր, խաղաղ չէ՝ մեկուսացիր։ Եթե պետության մեջ արդարություն է տիրում՝ ամորալի է աղքատ ու նվաստ մեկը լինելը։ Եթե պետության մեջ անարդարություն է տիրում, ամորալի է հարուստ ու նշանավոր լինելը։»

[Մեկնությունը]

① «笃信» - «Ձերմորեն հավատալ»։ այս արտահայտության գրեթե նույն բովանդակությամբ մի պարերություն առկա է «Զրույցների» տասնիններորդ գլուխ երկրորդ ասույթում, որտեղ ներկայացված է «անվարան հետևել Ուղուն» ձևով։

② «危邦不入，乱邦不居» - «Մի անցիր վտանգավոր երկրով, մի ապրիր խռովյալ երկրում»։ Կոնֆուցիոսի ուսմունքի հիմնաքարերից մեկը պետականության կայունության անհրաժեշտության գաղափարն

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

է: Շատերն այս պարբերությանը վերաբերվում են որպես տերության կառավարմանը վերաբերող Կոնֆուցիոսի ցուցումներից մեկը: Նույնարովանդակ մի արտահայտություն ունի նաև Բան Սյանը, ով նշում էր. «Այնտեղ, որ ծառաները սպանում են տերերին և որդիները՝ հայրերին, խոռվություն կլինի: Այնտեղ, որ մշտական վտանգ կա՝ խոռվություն կլինի»:

③ «见» ~ բառացի՝ «տեսնել», «հանդիպել». ասույթում կիրառված է «现»՝ «հայտնվել», «երևալ» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

8.1.4 子曰：“不在其位，不谋其政。”

Ուսուցիչն ասաց. «Եթե նրա տեղում չես, մի խառնվիր նրա գործերին»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե պետական պաշտոն չես զբաղեցնում, մի խառնվիր կառավարման գործերին»:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

8.1.5 子曰：“师挚之始①，《关雎》之乱②，洋洋乎盈耳哉！”

Ուսուցիչն ասաց. «Երբ վարպետ Զին սկսում է, մինչև «Որորների երգի» ավարտը բավականություն է ունենալի համար»:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ մեծ վարպետ Զին սկսում է նվազել, սկզբից մինչև «Որորների երգի» ավարտն ականջդ է շոյում քաղցր մեղեղին»:

[Մեկնությունը]

① «师 挚 之 始 ». «Երբ վարպետ Զին սկսում է», այստեղ «始 »՝ «սկսել» գաղափարագիրը վերաբերում է նվազել սկսելուն: Վրունական ծեսերի ժամանակ հաձախ էր երաժշտություն հնչում: Ասույթում հիշատակված Վարպետ Զին Լու տերության պալատական երաժիշտն էր՝ հայտնի ողջ տերությունով մեկ:

② «关雎» 之乱 ». «Մինչև «Որորների երգի» ավարտը». Եթե «始 » գաղափարագրով նշվում էր երաժշտության սկզիրը, ապա «乱 »՝ «խոռվություն», «ընդվզում», «քառոս» գաղափարագրով նշվում էր երաժշտության ավարտը, ինչն ըստ ծեսի՝ «Որորների երգի» կատարումն էր:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.6 子曰：“狂而不直， 侗而不愿， 惇愷而不信， 吾不知之矣。”

Ուսուցիչն ասաց. «Գոեհիկ և անարդար, հիմար և չկամեցող, պարզամիտ և անվստահելի. ես չեմ հասկանում նրանց»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Նրանց, ովքեր ամբարտավան են ու անարդար, միամիտ ու անազնիվ, անընդունակ ու անլուր, ես չեմ հասկանում»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.7 子曰：“学如不及， 犹恐失之。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Սովորիր՝ ասես չես հասցնի, վախեցիր, որ կկորցնես»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Սովորիր այնպես, ասես երե ես հալածում և վախենում ես, որ չես բռնի, իսկ սովորելով ավարտելուց հետո վախեցիր, որ բաց կթողնես որսր»:

ԿՈՆՖՈՒՅ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.8 子曰：“巍巍乎，舜禹①之有天下也而不与②焉！”

Ուսուցիչն ասաց. «Ինչպիսի՞ վեհություն. Շունը և Յուն տիրում էին Երկնայինին՝ ոչինչ չանելով»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Շունը և Յուն իսկապես վեհ էին. Անվանի կայսրեր էին, տիրում էին ողջ երկին և ունեին ամեն ինչ, սակայն օրինքուն շանում էին ժողովրդի համար, ոչ թե՝ սեփական անձի»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «禹» - Յու. Սյա հարստության առասպելական հիմնադիրն էր, Զինաստանի ամենահարգված տիրակալներից մեկը: Հստ ավանդության՝ Յառն նաև առաջին ջրանցքների և ոռոգման համակարգի կառուցողն էր: Նա իր գահը փոխանցեց Շունին, ով հասարակ գեղջուկ էր:

② «与» - ունի մի շարք իմաստներ՝ «և», «տալ», «միավին». ասույթում կիրառված է «享受»՝ «անհոգ ապրել», «վայելել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.1.9 子曰：“大哉尧之为君也！巍巍乎！唯天为大，唯尧则之。荡荡乎，民无能名焉。巍巍乎其有成功也，煥乎其有文章！”

Ուսուցիչն ասաց. «Հիրավի մեծ էր տիրակալ Յառն: Ինչպիսի վեհություն: Մեծ է Երկինքը և Յառն նման էր դրան: Ինչպիսի առատաձեռնություն: Ժողովուրդը խոսքեր չուներ նրան փառաբանելու համար: Ինչ վեհ էին նրա գործերը, որքան փառավոր էր նրա իմաստությունը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Տիրակալ Յառն իսկապես մեծ էր: Իսկապես վեհ էր: Նրա վեհությունը համեմատելի էր Երկնքի վեհության հետ: Նա այնքան առատաձեռն էր: Մարդիկ նույնիսկ բառեր չեն կարողանում գտնել՝ նրան փառաբանելու համար: Նրա արժանիքները բարձր էին և իմաստությունը՝ փառավոր»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.2.0 舜有臣五人而天下治。武王曰：“予有乱臣①十人。”孔子曰：“才难，不其然乎？唐虞之际，于斯为盛。有妇人焉，九人而已。三分天下有其二②，以服事殷。周之德，其可谓至德也已矣。”

Չունը հինգ խորհրդական ուներ և Երկնայինը կառավարվում էր: Ու արքան ասաց.

- Ես տաս շնորհալի խորհրդական ունեմ:

Դա լսելով՝ Քունձին ասաց.

- Տաղանդներին գտնելը դժվար է, այնպես չէ: Թանից մինչև Յու շատ տաղանդներ են եղել: Ու արքան ուներ մեկ կին և ինը տղամարդ նախարարներ: Երկնայինի երկու երրորդին տիրելով հանդերձ՝ նա Ինի

հպատակ էր: Զոռովի առաքինությունը, կարելի է ասել՝ հասել էր իր գագաթնակետին:

[Փոխադրությունը]

Շունը իինզ խորհրդական ուներ և Երկնայինը խաղաղության մեջ էր: Ու արքան ասաց.

- Ես Երկնայինը կառավարելու ընդունակ տաս խորհրդական ունեմ:
Այդ մասին լսելով՝ Քունձին ասաց.
- Բարդ է ընդունակ մարդկանց գտնելը, այնպես չէ: Թաճից մինչև Յու շատ ընդունակ մարդիկ են Եղել: Ու արքայի տաս տաղանդներից մեկը կին էր, մնացյալը՝ տղամարդիկ: Վեն արքան տիրում էր Երկնայինի երկու երրորդին և այնուհանդերձ՝ Ինի հպատակ էր: Մեծ էր Զոռովի առաքինությունը, կարելի է ասել՝ այն հասել էր իր գագաթնակետին:

[Մեկնությունը]

① «乱臣» - «խորհրդական», «աստիճանավոր». Կիրառվել է նաև «նախարար», «կառավարիչ» իմաստներով: «Զուոյի նորերի» Զառ իշխանի կառավարման քանչօրսերրորդ տարվա նկարագրության մեջ կա այսպիսի մի հատված. «Տաս խորհրդականները միակամ են և առաքինի»: Ժամանակակից գրականագետներից Զոռու Գուչենը կարծում էր, որ նշված արտահայտությունը կարելի է մեկնաբանել որպես «մերձավոր խորհրդական» կամ «վատահելի խորհրդական»: Հիմք ընդունելով նաև Մենձիի «Լյանի Հուեյ արքան» աշխատությունը, պարոն Զոռու Գուչենը ենթադրում էր նաև, որ խոսքը գնում է այն խորհրդականների մասին, որոնք տիրակալի հետ արյունակցական կապ ունեն:

② «三分天下有其二» - «Երկնայինի երկու երրորդին տիրելով». Զոռու հարստության Վեն արքան նվաճել էր Զինաստանի երկու երրորդը, իսկ նրա որդի Ու արքան կարողացավ միավորել երկիրը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

8.2.1 子曰：“禹，吾无间然矣。菲饮食而致孝乎鬼神，恶衣服而致美乎黻冕①，卑宫室而尽力乎沟洫②。禹，吾无间然矣。”

Ուսուցիչն ասաց. «Յուի մասին ես ոչինչ չունեմ ասելու: Նա չափավոր էր ուսում, սակայն առատ նվիրաբերություններ էր անում ոգիներին ու աստվածներին, աղքատիկ հագուստ էր կրում, սակայն նրա ուլունքազարդ խույրը շքեղ էր: Ապրում էր հյուղակում և իր ողջ ուժը ուղղում էր ջրանցք փորելուն: Յուի մասին ես ոչինչ չունեմ ասելու»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես չեմ կարող քննադատել Յուին: Նա վատ էր սնվում, սակայն առատ նվիրաբերություններ էր անում ոգիներին ու աստվածներին: Վատ էր հագնվում, սակայն նրա ծիսական թագը շքեղ էր: Ապրում էր տնակում և ամբողջ օրը ջանասիրաբար աշխատում էր ջրանցքներում: Ես չեմ կարող քննադատել Յուին»:

[Մեկնությունը]

① «黻冕» - «ուլունքազարդ խույր». ծիսական հանդերձանքի մաս էր, թագի նման, դիմացից և հետևից՝ ուլունքաշար կախազարդերով: Հետագայում նման կերպ սկսեցին կոչվել իշխանական և կայսերական գլխանոցները:

② «沟洫» - «ջրանցք». այստեղ նկատի ունի դաշտերի և այգիների ոռոգման համար օգտագործվող ջրատար համակարգը:

Գլուխ 9. «Ուսուցիչը հազվադեպ էր...» Ընդամենը 31 ասույթ

(Չու Սիի «Մեկնություններում» 30 ասույթ են,
որովհետև 6-րդ և 7-րդ ասույթները միավորված են)

ԿՈՆՖՈՒՅԻՆԾԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1 子罕①言利与命与仁。

Ուսուցիչը հազվադեպ էր խոսում շահի, ձակատագրի ու մարդկայնության մասին:

[Փոխադրությունը]

Քունձին հազվադեպ էր խոսակցություն բացում օգուտի, ձակատագրի և բարոյականության մասին:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «罕» - «հազվադեպ». մակրայ է, գաղափարագիրը կիրառվել է որոշակի գործողության հաձախականություն նշելու համար: «Զրոյցներում» շահի մասին խոսվում է վեց անգամ, իսկ ձակատագրի մասին՝ ութ կամ ինն անգամ, հետևաբար, կարելի է ասել, որ Կոնֆուցիոսը դրանց մասին խոսում է հազվադեպ: «Զրոյցների» հինգերորդ գլխի տասներեքերորդ ասույթում Կոնֆուցիոսի սան Զիգունը ասում է հետևյալը. «Ուսուցի խոսքերը Երկնքի Ուղու բնույթի մասին հայտնի չեն»: Ինչ վերաբերում է «մարդկայնություն» հասկացությանը, այն Կոնֆուցիոսի ուսմունքի հիմնաքարային դրույթներից է և «Զրոյցներում»

դրա մասին հիշատակվում է հարյուր ինը անգամ: Հետևաբար՝ «հազվադեպ է խոսում մարդկայնության մասին» արտահայտության մեկնությունը շատ բարդ է և տարբեր ուսումնասիրողների կողմից փոխադրվել է յուրովի: Ձին հարստության ժամանակակից Վան Ժուսույցը և Ցին հարստության ժամանակակից Շի Շենձուն գտնում էին, որ այս արտահայտությունը պետք է փոխադրել հետևյալ կերպ. «Ուսուցիչը հազվադեպ էր խոսում շահի և ձակատագրի մասին, սակայն հավանություն էր տալիս մարդկայնության մասին զրույցներին»: Հուան Շիանի ««Զրույցների» մեկնություն» աշխատության մեջ նշվում է, որ «𦩥» գաղափարագրի փոխարեն պետք է լիներ «軒» գաղափարագիրը, ինչն ուներ «պարզ», «հստակ» իմաստները: Ըստ նման մոտեցման՝ ասույթը պիտի ունենա հետևյալ ձևը. «Ուսուցիչը հստակորեն էր խոսում շահի, ձակատագրի ու մարդկայնության մասին»: Պարոն Յան Յուֆուն կարծում էր, որ մարդկայնության մասին զրույցների նախաձեռնողները եղել են Կոնֆուցիոնի սաները՝ Ձիգունը, Ձիլուն, Ժանյուն, Գունսի Հուան, իսկ ինքը՝ Կոնֆուցիոնը, հազվադեպ է զրույցներ սկսել մարդկայնության մասին: Այսինքն՝ մարդկայնության մասին հիշատակումները ««Զրույցներում» հիմնականում հարց ու պատասխանի ձևաչափով են: Անհնար է ժխտել, որ Կոնֆուցիոնի ժառանգությունը շատ ավելին է, քան ««Զրույցներում» ամփոփվածը, և ««մարդկայնություն» հասկացությունը կոնֆուցիականության շրջանակներում շատ ավելի հանգամանալից է ներկայացված, քան ««Զրույցներում»»:

Իսկ Յու Սինուն կարծում էր, որ «仁»՝ «մարդկայնություն» գաղափարի փոխարեն պետք է լիներ «𦩥» գաղափարագիրը, որով նշվում էին հյուսիսի «բարբարոս» ցեղերը, հետագայում՝ կայսրության ազգային փոքրամասնությունները, սակայն այս տեսակետն արժանահավատ չէ:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2 达巷党①人曰：“大哉孔子！ 博学而无所成名。”子闻之，谓门弟子曰：“吾何执？ 执御乎？ 执射乎？ 吾执御矣。”

Դասյան համայնքից մեկն ասաց.

- Ինչ մեծ է Քունձին։ Իմաստուն է, թեև՝ չփառաբանված։

Դա լսելով՝ Ուսուցիչն ասաց սաներին.

- Ի՞նչ անեմ։ Կանք վարեմ։ Նետ արձակեմ։ Ես կառք կվարեմ։

[Փոխադրությունը]

Դասյանի բնակիչներից մեկն ասաց.

- Քունձին իսկապես մեծ է։ Նրա իմաստությունը սահման չունի, սակայն, դժբախտաբար, նա չի փառաբանվում։

Այդ մասին լսելով՝ Քունձին ասաց իր սաներին.

- Ինչո՞վ զբաղվեմ։ Գուցե կանք վարեմ։ Կամ նետաձգությամբ զբաղվեմ։ Ավելի լավ է ես կառք վարեմ։

[Մեկնությունը]

① «达巷党» - «Դասյան համայնք»։ «党» գաղափարագրով էր նշվում հինգ հարյուր ընտանիքից բաղկացած համայնքը, ինչը կոչվում էր «դան»։ Գաղափարագիրը հիշատակվում է նաև «Ծեսերի գրքում», սակայն այլ՝ «ծառուղի» իմաստով։

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.3 子曰：“麻冕①，礼也；今也纯②，俭③，吾从众。拜下④，礼也；今拜乎上，泰也。虽违众，吾从下。”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Հստ ծեսերի՝ խովրը պիտի լինի կանեփից. հիմա մետաքսից է, էժան է, և ես հետևում եմ բոլորին: Հստ ծեսերի՝ պիտի խոնարհվել սրահ մտնելիս, հիմա խոնարհվում են, երբ բարձրանում է: Այնուհանդերձ, ես խոնարհվում եմ ներքսում՝ ընդդիմանալով բոլորին»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ծիսական խովրերը հյուսվում էին կանեփի մանրաթելերից. դա էին պահանջում ծեսերը: Այժմ դրանք հյուսելու համար բոլորը մետաքսաթել են օգտագործում. էժան է, և ես վարվում եմ՝ ինչպես բոլորը: Տեսմերվ տիրակալին սրահի մուտքի մոտ՝ բոլորը խոնարհվում էին. դա էին պահանջում ծեսերը: Այժմ խոնարհվում են, երբ տիրակալը բարձրանում է դեպի գահավորակը. դա գոռողության նշան է: Ես խոնարհվում եմ ներքսում, նույնիսկ եթե դա շատերի սրտով չէ»:

[Մեկնությունը]

① «麻冕» - «կանեփյա խովր». հնում՝ ծիսակարգերի ժամանակ օգտագործվող զլսարկ էր, որ հյուսվում էր կոշտ կտորից: Այն պիտի կրեին ծեսերին մասնակցող քանի տարեկանից բարձր անձինք:

② «純» - բառացի՝ «մաքուր», «պարզ». նկատի ունի սև գույնի մետաքսը:

③ «儉» - «չափավոր», «էժան». Կանեփի թելով խովրեր հյուսերը ավելի բարդ ու աշխատատար էր, քանի որ թելերը հաստ էին, ի տարբերություն մետաքսի թելերի, որոնցով առավել հեշտ էր գործել:

④ «拜下» - «խոնարհվել». նկատի ունի տիրակալին ողջունելու արարողությունը: Հենց նա երևում էր սրահի մուտքի մոտ, բոլոր արքունականները խոնարհվում էին և մնում այդ դիրքում, մինչև տիրակալը կհասներ իր գահավորակին: Կոնֆուցիոնի կենդանության օրոք այդ ծեսն արդեն աղավաղվել էր և տիրակալին խոնարհվում էին, երբ նա մտնում էր սրահ և առաջ գալիս: «Չուոյի նոյներում» մի հատված կա,

Յան Բոնունի փոխադրությունը եւ մեկնությունը

որտեղ նկարագրվում է, թե ինչպես է Ցի տերության իշխանը տեղի տալիս և ի նշան հպատակության՝ խոնարհվում է Զոռու տերության Սյան արքային:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.4 子绝四—毋意，毋必，毋固，毋我。

Ուսուցչին խորթ էին չորս բան՝ կասկածամտությունը, կտրականությունը, համառությունն ու ինքնամեծարումը:

[Փոխադրությունը]

Քունձին զերծ էր չորս արատներից՝ կասկածամտությունից, անառարկելիությունից, կամակորությունից ու ինքնագովությունից:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.5 子畏于匡①，曰：“文王既没，文不在兹乎？天之将丧斯文也，后死者②不得与③于斯文也；天之未丧斯文也，匡人其如予何？”

Երբ Ուսուցչին սպառնում էին Կուանում, ասաց. «Վեն արքայի մահից հետո միթե վերացավ մշակույթը: Եթե Երկինքը կամենար վերացնել մշակույթը, նրանք, ովքեր եկան մահից հետո, այն չէին կրի իրենց մեջ: Եթե Երկինքը չի կամեցել վերացնել մշակույթը, ինչ կարող են անել ինձ Կուանի բնակիչները»:

[Փոխադրությունը]

Երբ Կուանի բնակիչները շրջափակել էին Քունձին, նա ասաց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

«Վեն արքայի մահից հետո մի՞թե ես չեմ ժառանգել մշակույթը: Եթե Երկինքը կամենար վերացնել մշակույթը, մի՞թե ես այն կրեի իմ մեջ: Եթե Երկինքը չի կամեցել վերացնել մշակույթը, ապա ի՞նչ կարող են անել ինձ Կուանի բնակիչները»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «子畏于匡» - «Եթր Ուսուցին սպառնում էին Կուանում». ըստ «Պատմագրություն. Քունձի ուսմունքը» աշխատության, եթր Կոնֆուցիոսը լրեց Վեյ տերությունը և ճանապարհվեց Չեն տերություն, նա պիտի անցներ Կուան ավանով: Կուանի բնակիչները շփոթել էին Կոնֆուցիոսին Լու տերության գորապետ Յան Հոյի հետ, ով ասույթում հիշատակված դեպքերից մի քանի տարի առաջ ասպատակել էր ավանը: Նրանք շրջափակեցին Կոնֆուցիոսին ու նրա սաներին, և ըստ Սիմա Ցյանի՝ ինձն օր պահեցին շրջափակման մեջ: Կուան ավանը գտնվում էր ներկայիս Հենան նահանգի Չենյուան գավառի հարավ-արևմտյան հատվածում:

② «后死者» - «մահից հետո եկածները». Կոնֆուցիոսը նկատի ուներ ինքն իրեն, կարծելով, որ Վեն արքայի ժառանգորդն է՝ մշակույթի կրման տեսանկյունից: Վեն արքայի անուն՝ «文», նույն գաղափարագիրն է, որով նշվում է մշակույթը կամ գիրը:

③ «与» - «և», «հետ», «միասին». հնչում է «յու», ասույթում կիրառված է «կրել ներսում» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.6 太宰①问于子贡曰：“夫子圣者与？何其多能也？”子贡曰：“固天纵之将圣，又多能也。”子闻之，曰：“太宰知我乎！吾少也贱，故多能鄙事。君子多乎哉？不多也。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Նախարարապետը հարցրեց Զիգունին.

- Ուսուցիչը սու՞՞թ է: Որտեղից նրան այդքան շնորհներ:
- Զիգունն ասաց.
- Երկինքն է նրան սրբացրել և օժտել այդքան շնորհներով:
Լսելով դա՝ Ուսուցիչն ասաց.
- Նախարարապետը զիտի ինձ: Ես աղքատ էի երիտասարդ ժամանակ և ցածրարժեք շատ բան եմ յուրացրել: Ազնվայրը պիտի՝ բազմաշնորհ լինի: Ոչ:

[Փոխադրությունը]

Նախարարապետը հարցրեց Զիգունին.

- Պարոն Քունառն սու՞՞թ է: Որտեղից նրան այդքան շնորհներ:
- Զիգունն ասաց.
- Նրան Երկինքն է սուրբ դարձրել ու օժտել այսքան շնորհներով:
Լսելով այդ մասին՝ Քունձին ասաց.
- Նախարարապետը ձանաշում է ինձ: Երբ պատաճի էի, ապրում էի աղքատիկ կյանքով և ստիպված էի անարժեք բաներ սովորել: Բայց միթե ազնիվ մարդը պիտի շատ շնորհներ ունենա: Կարծում եմ՝ այդպես չէ:

[Մեկնությունը]

① «太宰» ~ «Նախարարապետ»: բարձրաստիճան պաշտոնյա էր: Մինչ այժմ հայտնի չէ նրա ով լինելը և թե ո՞ր տերության նախարարապետն էր նա:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.7 牢①曰：“子云，‘吾不试②，故艺’。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Լառն ասաց. «Ուսուցիչն ասել է. «Ինձ չեն շահագործել, հետևաբար շնորհաշատ եմ»»:

[Փոխադրությունը]

Լառն ասաց. «Քունձին ասել է. «Ես երբեք չեմ ծառայել տերությանը, այդ պատճառով էլ շատ բան եմ սովորել»»:

[Մեկնությունը]

① «牢» - Լառ. ըստ Ջեն Սյուամի՝ Կոնֆուցիոսի սամն էր: Սակայն նրա մասին չի հիշատակվում «Զուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ: Ըստ Վան Սոփի՝ հիշատակված Լառն նույն ինքը ծինլառն է, Վեյ տերության հպատակ սանը, հայտնի նաև որպես Զիբայ:

② «弑» - բառացի՝ «փորձ», «փորձել». ասույթում կիրառված է «օգտագործել», «շահագործել» իմաստներով: Վան Զունի «Զրույցների թննադատություն» աշխատության մեջ նման մի հատված կա՝ «Յառն ասաց. «Ես կփորձեմ դա»»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.8 子曰：“吾有知乎哉？无知也。有鄙夫问于我，空空如也。我叩其两端而竭焉。”

Ուսուցիչն ասաց. «Ես գիտելիք ունեմ: Զուննեմ: Եթե գեղջուկն ինձ հարց տա՝ դատարկ կլինեմ: Պատասխանելու համար ես պիտի երկու կողմից նայեմ ու չանամ»:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ես գիտելիք ունեմ: Չունեմ: Եթե մի զյուղացի հարց տա ինձ, չեմ իմանա՝ ինչ պատասխանել: Ես կրնեմ նրա հարցը սկզբից մինչև վերջ, կխորհիեմ և կասեմ այն, ինչ կհասկանամ»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.9 子曰：“凤鸟①不至， 河不出图①， 吾已矣夫！”

Ուսուցիչն ասաց. «Փյունիկը չի գալիս, գետի վրա պատկեր չկա, կարծում եմ՝ սա վերջն է»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Փյունիկն այլս չի սավանում, Հուանին գետի վրա պատկերներ չեն երևում: Ես կարծում եմ՝ կյանքն ավարտվել է»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «凤鸟, 河图» - «փյունիկ, գետի պատկեր». ըստ իին առասպել-ների՝ փյունիկն աստվածային թռչուն էր՝ Երկնքի բարեհաձության բարեխոսը: Եվ եթե հայտնվում էր փյունիկը և Հուանին գետի վրա գծագրվում էր վիշապաձիու պատկերը, նշանակում էր, որ Երկրի գլուխ է կանգնած արժանավոր, առաքինի տիրակալ, ով վայելում է Երկնքի բարեհաձությունը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.10 子见齐衰①者、冕衣裳者②与瞽者， 见之， 虽少， 必作； 过之， 必趋③。

Կոնֆուցիոն. Զրույցներ

Երբ Ուսուցիչը տեսնում էր սգազգեստ, ծիսական խովրերով ու հանդերձներով մարդկանց և կույրերի, անպայման ոտքի էր կանգնում, նույնիսկ եթե նրանք երիտասարդ էին, իսկ նրանց մոտով քայլելիս՝ արագացնում էր ընթացքը:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին տեսնում էր սգազգեստ, ծիսական խովրերով ու հագուստներով մարդկանց և կույրերի, անպատճառ ոտքի էր կանգնում, նույնիսկ եթե նրանք ավելի երիտասարդ էին, իսկ նրանց մոտով քայլելիս՝ արագացնում էր քայլերը:

[Մեկնությունը]

① «齐衰» - «սգազգեստ». սգո հանդերձները կարվում էին կոշտ կտավից: Մահվան երեք տարին լրանալու հիշատակի արարողության համար կային առանձին հանդերձներ, կային նաև մեկ տարվա և հինգ ամսվա սգո հանդերձների տարբերակներ: Դա առնչվում էր նաև հանգույցայի հետ հարազատության աստիճանին: Օրինակ՝ ընդունված էր, որ որդին սգում է հոր կամ մոր մահը երեք տարի:

② «冕衣裳者» - «ծիսական խովրերով և հագուստներով». Ակատի ունի արքունականներին, որոնք ծեսերի ժամանակ կրում էին ուլունքաշար կախազարդերով խովրեր և շքեղ հանդերձներ:

③ «作, 趋» - «կանգնել, արագացնել». դա հարգանքի նշան էր:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.1 颜渊喟然叹曰：“仰之弥高，钻之弥坚。瞻之在前，忽焉在后。夫子循循然善诱人，博我以文，约我以礼，欲罢不能。既竭吾才，如有所立卓尔。虽欲从之，未由也已。”

Յան Բոնունի փոխադրությունը և մեկնությունը

Յան Յուանը հոգոց հանելով ասաց. «Որքան շատ եմ նայում, այնքան բարձր է թվում, որքան շատ եմ փորձում թափանցել դրա մեջ, այնքան կարծր է թվում: Տեսնում ես այն դիմացդ, հանկարծ հայտնվում է թիկունքում: Ուսուցիչը գրավում է և ուղղորդում դեպի բարություն, զարգացնում է ինձ կրթությամբ և զապում ինձ ծեսերով, ուզում եմ կանգ առնել, բայց չեմ կարողանում: Արդեն սպառել եմ շնորհներս, թվում է, թե ուսմունքն իմ դիմաց է, ուզում եմ հետևել, սակայն չեմ կարողանում»:

[Փոխադրությունը]

Յան Յուանը հոգոց հանեց և ասաց. «Որքան շատ եմ նայում Ուսուցիչը Ուղուն, այնքան բարձր է թվում այն, որքան շանասիրաբար եմ ուսումնասիրում, այնքան խորն է թվում այն: Նայում ես՝ թվում է այն դիմացդ է և հանկարծ հայտնվում է հետևում: Թեև այն բարդ է յուրացնել, Ուսուցիչը հմտորեն գրավում է և ուղղորդում, տարբեր գիտելիքներով հարստացնում է իմ միտքը, զապում ինձ ծեսերի միջոցով, և անհնար է դարձնում դադարեցնել ուսումնասիրելը: Ես արդեն սպառել եմ իմ ուժերը, թվում է, թե կարող եմ ինքնուրույնաբար ուսումնասիրել, սակայն երբ ուզում եմ առաջ գնալ, չեմ կարողանում»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.2 子疾病，子路使門人为臣①。病间，曰：“久矣哉，由之行詐也！无臣而为有臣。吾谁欺？欺天乎！且予与其死于臣之手也，无宁②死于二三子之手乎！且予纵不得大葬，予死于道路乎？”

Երբ Ուսուցիչը հիվանդացավ, Զիլուն մի քանի սաների ուղարկեց, որ ծառայեն նրան: Առողջանալուց հետո Ուսուցիչն ասաց. «Վաղուց է, ինչ Յուն խորամանկում է: Սպասավորներ չունենալով ձևացնեմ, թե ունեմ՝ ո՞մ եմ խաբում: Երկնքին: Ավելի լավ է մահանամ երկու-երեք սաներիս

Կոնֆուցիոն. Չլույցներ

ձեռքերի վրա, քան թե տան սպասավորների: Նովճիսկ եթե չարժանանամ ձոխ հուղարկավորության, մի՞թե ես կմահանամ ձամփեզրին»:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին ծանր հիվանդացավ, Զիլուն հրամայեց Քունձիի սաներից ոմանց պատրաստվել հուղարկավորության ծեսին, որպեսզի նրան հուղարկավորեն այնպես, ինչպես արքունականի: Ելք Քունձին գրեթե առողջացել էր, նա ասաց. «Ձուն Յուն վաղուց է անմարուր գործեր բռնում: Եթե ես արքունական չեմ, ինչո՞ւ ձևացնեմ, թե այդպիսին եմ: Ու՞՞մ եմ խարում: Երկմքին: Ավելի լավ է մահանամ սաներիս ձեռքերի վրա, քան թե ծիսական ողբասացների: Նովճիսկ եթե ձոխ հուղարկավորություն չկազմակերպեն, մի՞թե ես կմահանամ ձանապարհի վրա»:

[Մեկնությունը]

① «为臣» - բառացի՝ «ծառայել». ասույթում այս արտահայտությունն ունի «հուղարկավորության ծիսակարգ կազմակերպել» իմաստը: Հնում միայն իշխաններն ու տիրակալների մերձավոր արքունականները կարող էին իրենց թույլ տալ ձոխ հուղարկավորություն, ինչին, բացի հարազատներից ու ծառաներից, մասնակցում էին նաև մեծաթիվ ծիսական պարողներ ու ողբասացներ, դերձակներ ու սափրիչներ, կատարվում էին զոհաբերություններ: Զիլուն ուզում էր Կոնֆուցիոն արժանին հասուցել՝ նրան արքունականի պես հուղարկավորելով, սակայն Կոնֆուցիոնը հրաժարվեց դրանից, քանզի իր աստիճանով չէր համապատասխանում ծեսի պահանջներին:

② «无宁» - ասույթում ունի «ավելի լավ է», «գերադասելի է» իմաստները: «Ձուոյի նոթերի» Ին իշխանի կառավարման տասնմեկերրդ տարվա նկարագրության մեջ նշվում էր հետևյալը. «Ավելի լավ է իշխանը խստորեն կառավարի տերությունը, քան թողնի բախսի քմահաձույքին»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.3 子贡曰：“有美玉于斯，韫椟而藏诸？求善贾①而沽诸？”子曰：“沽之哉！沽之哉！我待贾者也。”

Զիգունն ասաց.

- Մի սքանչելի հասպիս ունեմ, թաքցնե՞մ այն արկղիկում, թե՞ առատաձեռն վաճառական փնտրեմ՝ այն վաճառելու համար:

Ուսուցիչն ասաց.

- Վաճառիր: Վաճառիր: Ես սպասում եմ առաջարկի:

[Փոխադրությունը]

- Մի գեղեցիկ հասպիս ունեմ, չզիտեմ՝ թաքցնե՞մ դա արկղիկում, թե՞ փնտրեմ գործից հասկացող մեկին՝ այն վաճառելու համար:

Քոնճին ասաց.

- Վաճառիր: Վաճառիր: Ես սպասում եմ գնորդի:

[Մեկնությունը]

① «贾» - «վաճառական». Ասույթում «հասպիսը» հենց Կոնֆույիոսն է: Նա սպասում էր, որ տիրակալներից ինչ-որ մեկը կառաջարկի նրան իր մոտ ծառայության անցնել:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.4 子欲居九夷①。或曰：“陋，如之何？”子曰：“君子居之，何陋之有②？”

Ուսուցիչը մտադրվել էր բնակվել Յիի ինը ցեղերի տարածքում: Ոմն մեկն ասաց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Գոեհիկ են, ինչպես կարելի է:
Ուսուցիչն ասաց.
- Այնտեղ, ուր բնակվում է ազնվայրը, մի՞թե կարող է գոեհկություն լինել:

[Փռխադրությունը]

Քունձին ցանկանում էր տեղափոխավել Յիի ինը ցեղերի տարածքում բնակվելու: Ինչ-որ մեկն ասաց.

- Նրանք գոեհիկ են, ինչպես կարելի է այնտեղ ապրել:
Քունձին ասաց.
- Այնտեղ, ուր ազնվայրն է ապրում, գոեհկություն չի կարող լինել:

[Մեկնությունը]

① «九夷» - բառացի՝ «ինը Յի»: Ակատի ունի Յի ցեղային միությունը, ինչը բաղկացած էր ինը ցեղերից: «Հան Ֆեյձի» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Չոռուի տիրակալը հարձակվեց Յիի ինը ցեղերի վրա և Շանգայը ընկապվ»: Շանգայը ներկայիս Շանսին է: Յի ցեղային միությունն ապրում էր Լու տերության տարածքում: Չոռուի տիրակալը նվաճել էր նրանց և հարկատու դարձրել: Դրանից հետո Յի ցեղային միությունը տարածվեց դեպի Չին և Յան, սահմանակցելով Յի և Լու տերություններին:

② «何陋之有» - «մի՞թե կարող է գոեհկություն լինել». այս արտահայտությունը փոխադրելիս կարելի է ազատ լինել, «գոեհկությունը» փոխարինել «պարզունակություն», «անտաշություն» բառերով կամ այլ հոմանիշներով:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.5 子曰：“吾自卫反鲁①，然后乐正，雅》、《颂》各得其所②。”

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Ես Վեյից վերադարձա Լու, այնուհետև շոկեցի երգերը, «Հիմները» և «Զոները» ընկան իրենց տեղերը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես Վեյ տերությունից վերադարձա Լու, ինչից հետո շոկեցի «Երգերի գիրքը». դրա «Հիմներ» և «Զոներ» գլուխներն այժմ իրենց տեղերում են»:

[Մեկնությունը]

① «吾自卫反鲁» - «Ես Վեյից վերադարձա Լու». ըստ «Զույի նոթերի»՝ Կոնֆուցիոսը վերադարձել է Վեյ տերությունից Լու, երբ արդեն 69 տարեկան էր. դա տեղի էր ունեցել Լուի Այ իշխանի կառավարման տասնմեկերրդ տարում:

② «雅»、«颂»各得其所» - ««Հիմները» և «Զոները» ընկան իրենց տեղերը». «Հիմները» և «Զոները» բացի «Երգերի գրքի» գլուխներ լինելուց, նաև երաժշտական ոճերի դասակարգումներ էին: Որպես գլուխներ՝ դրանք առկա են նաև «Երգերի գրքի» ժամանակակից տարբերակում, սակայն այսօր անհնար է պարզել, թե երաժշտական ո՞ր ոճերի դասակարգումներն են, քանի որ այդ մասին վկայություններ չկան, «Երաժշտության գիրքը» պահպանված չէ: Կոնֆուցիոսը, կարելի է ասել՝ խմբագրեց «Երգերի գիրքը»՝ համակարգելով երգերն ըստ գլուխների: Ժայ Շիգունն իր «Քունձիի ուսմունքը» աշխատության մեջ նշում է, որ Կոնֆուցիոսը խմբագրելիս ջնջել է երեք հարյուրից ավելի երգ, սակայն այդ տեսակետը արժանահավատ չէ:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

9 . 1 6 子曰：“出则事公卿，入则事父兄①，丧事不敢不勉，不为酒困，何有于我哉②？”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Դրսում ծառայել տիրակալին ու աստիճանավոր-ներին, ներսում ծառայել հորն ու ավագներին, չհանդգնել ջանալ հու-դարկավորության ծեսերի ժամանակ, չհարբել զինուց. ո՞րն է դժվար ինձ համար»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Դրսում ծառայել տերության պաշտոնյաներին, ներսում ծառայել հորն ու ավագ եղբայրներին, հուղարկավորության ժամանակ չհամարձակվել խախտել ծիսակարգը, չհարբել զինուց. սրանցից ո՞րն անելն է բարդ ինձ համար»:

[Մեկնությունը]

① «父兄» - «հայր և ավագներ». Կոնֆուցիոնի հայրը վաղ էր մահացել, և նրան խնամել էր ավագ եղբայր Մենփին: Այս երկու գաղափարները կարելի է մեկնաբանել ուղղակի որպես «ավագներ»:

② «何有于我哉» - բառացի՝ «ո՞րն է դժվար ինձ համար». ունի «սրանցից ո՞րն անելն է բարդ ինձ համար» իմաստը: Նախադասությունն ունի ինքնազնահատողական բնույթը:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.7 子在川上， 曰：“逝者如斯夫！ 不舍①昼夜。”

Գետափին կանգնած՝ Ուսուցիչն ասաց. «Ամեն ինչ անցնում է այս-պես: Առանց կանգնելու, օր ու գիշեր»:

[Փոխադրությունը]

Քունձին գետի ափին կանգնած՝ ասաց. «Ժամանակը հոսում է այս գետի ջրերի պես. այն հոսում է օրնիբուն, առանց կանգ առնելու»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «舍» - բառացի՝ «դադար», «կանգնել». Կոնֆուցիոսին վշտացնում էր այն, որ ծերացել է և բազում նպատակներ թողել չիրականացված: Մենձին, Սյունձին և Դուն Զունշուն ունեն այս ասույթի իրենց մեկնությունները, սակայն զերադասում ենք բնագրին հավատարիմ մնալ:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.8 子曰：“吾未见好德如好色者也。”

Ուսուցիչն ասաց. «Ես չեմ հանդիպել մեկին, ով առաքինությունը սիրի հաձույքներից ավելի»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ես դեռ չեմ հանդիպել մեկին, ով առաքինությունը սիրի շատ ավելի, քան զեղեցիկը»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.1.9 子曰：“譬如为山，未成一篑，止，吾止也。譬如平地，虽覆一篑，进，吾往也。”^①

Ուսուցիչն ասաց. «Դիցուք՝ բլուր եմ կանգնեցնում և ավարտին մի կողով է պակասում, կանգնում եմ, դա ես եմ կանգնում: Դիցուք՝ գետինը հարթեցնելիս մի կողով եմ լցնում և առաջ գնում, դա ես եմ առաջ գնում»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Դիցոք՝ ես բլուր եմ կանգնեցնում և գործի ավարտին ընդամենը մի կողով հող է պակասում. կանգ առա, և ես կիմեմ կանգ առնողը: Դիցոք՝ գետիմն եմ հարթեցնում, ընդամենը մի կողով հող եմ լցնում և առաջ շարժվում. դա ես եմ առաջ շարժվում»:

[Մեկնությունը]

① Ասույթում արծարծվում է Կոնֆուցիոսի վերաբերմունքը անձնական պատասխանատվության և սեփական բարօրության համար ինքնուրույն որոշում կայացնելու նկատմամբ:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.0 子曰：“语之而不惰者，其回也与！”

Ուսուցիչն ասաց. «Եթք խոսում եմ, առանց հոգմելու լսում է միայն Հուկը»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթք ես խոսում եմ, ինձ առանց ձանձրույթի լսում է թերևս միայն Յան Հուկը»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.1 子谓颜渊，曰：“惜乎！吾见其进也，未见其止也。”

Յան Հուանի մասին խոսելիս Ուսուցիչն ասաց. «Ավանդ: Ես տեսել եմ, որ նա առաջ է ընթանում և չեմ տեսել, որ կանգ առնի»:

[Փոխադրությունը]

Խոսելով Յան Յուանի մասին՝ Քունձին ասաց. «Ավաղ, նա վախճանվեց: Ես միայն տեսել եմ, որ նա առաջ է գնում և երբեք չեմ տեսել, որ կանգ առնի»:

ԿՈՆՖՈՒՅ-ՅԻ-ԸՆ-ԲՆԱԳԻՐԸ

9.2.2 子曰：“苗而不秀①者有矣夫！ 秀而不实者有矣夫！”

Ուսուցիչն ասաց. «Լինում է, որ բողբոջում են, բայց չեն ծաղկում: Ծաղկում են, բայց չեն պտղավորվում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Բողբոջում են, բայց չեն ծաղկում. լինում է այդպես: Ծաղկում են, բայց պտուի չեն տալիս. լինում է այդպես»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «秀» - բառացի՝ «գերեցիկ», «նրագեղ», «սրանչելի». ասույթում գաղափարագիրը կիրառված է «ծաղկել», «փթթել», «ծլարձակել» իմաստներով: «Երգերի գրքում» նշվում է հետևյալը. «Սերմերը ծիլ են արձակել, առաս բերք կլինի»: Որպես մեկնվող գաղափարագրի հոմանիշ՝ այժմ կիրառելի է նաև «秀穗» տարբերակը: Սակայն շատերը կարծում են, որ իրականում ասույթը փոխաբերական իմաստ ունի: Մասնավորապես՝ Հան և Ծան Ժամանակաշրջանների մեկնությունը կարծում է, որ այն խորհրդանշում է Յան Հուեյի (նոյն ինքը՝ Յան Յուան) կարձ կյանքը: Ժամանակակից մասնագետներից շատերը հակադրվում են այդօրինակ մեկնությանը, համարելով այն թերի և փորձելով հիմնավորել իրենց տեսակետը հետևյալ կերպ.

Կոնֆուցիոն. Զրոյցներ

Եթե «ծաղկողը» Յան Հուելն է, ապա նվ է «բողբոջողը»: Այժմ քարդ է եզրակացնել, թե որն է ասույթի իրական նշանակությունը, այդ պատճառով էլ գերադասում ենք թողնել այն բնագրային ձևով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.3 子曰：“后生可畏，焉知来者之不如今也？四十、五十而无闻焉，斯亦不足畏也已。”

Ուսուցիչն ասաց. «Պիտի հարգել երիտասարդներին, նվ իմանա՝ գուցե նրանք գերազանցեն մեզ: Սակայն եթե քառասուն, հիսուն տարեկանում նրանք դեռ անհայտ կլինեն, ապա չարժե նրանց հարգել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Պետք է հարգալից լինել երիտասարդ սերնդի համար, ի՞նչ իմանանք՝ գուցե նրանք մի օր գերազանցեն մեզ: Սակայն եթե նրանք քառասուն կամ հիսուն տարեկանում ոչնչի չհասնեն, ապա չարժե նրանց լուրջ վերաբերվել»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.4 子曰：“法语之言，能无从乎？改之为贵。巽与之言，能无说乎？绎之为贵。说而不绎，从而不改，吾末如之何也已矣。”

Ուսուցիչն ասաց. «Միթե կարելի է չհետևել արդար խորհրդին: Սակայն դրանք արժեքավոր են, եթե շտկվում ես: Միթե կարելի է չուրախանալ ցանկալի խոսքերից: Սակայն դրանք արժեքավոր են, եթե մտորում ես: Եթե ուրախանում են, բայց չեն մտորում, հետևում են խորհուրդներին, բայց չեն շտկվում, ես չգիտեմ, թե ինչ կարելի է անել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ինչպես կարելի է չհետևել խելամիտ խորհրդին: Սակայն դրանք արժեքավոր են, եթե դրանց հետևելով փոխվում են: Ինչպես կարելի է չուրախանալ հաձեռի խորքերից: Սակայն դրանք արժեքավոր են, եթե դրանք լսելով վերլուծում են: Եթե ուրախանում են, բայց չեն վերլուծում, հետևում են խորհուրդներին, բայց չեն փոխվում, ես զգիտեմ, թե ինչպես կարելի է վարվել այդպիսի մարդկանց հետ»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.5 子曰：“主忠信，毋友不如己者，过则勿惮改①。”

Ուսուցիչն ասաց. «Զգողիր հավատարիմ ու ազնիվ լինել, մի բարեկամացիր նրանց հետ, ովքեր հավասար չեն քեզ: Մխալվելով՝ մի վախեցիր փոխվել»:

[Մեկնությունը]

① Ասուցթը նույնությամբ կրկնում է «Զրույցների» առաջին գլուխ ութերորդ ասուցթի երկրորդ հատվածը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.6 子曰：“三军①可夺帅也，匹夫不可夺志也。”

Ուսուցիչն ասաց. «Երեք բանակներին կարելի է զրկել զորապետից, հասարակ մարդուն չի կարելի զրկել ձգտումներից»:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Տերության բանակին կարելի է զրկել զորապետից, սակայն ամկարելի է հասարակ մարդուն ստիպել հրաժարվել իր նպատակներից»:

[Մեկնությունը]

① «三军» - «Երեք բանակներ». Զոր հարստության ժամանակ ներդրված դասակարգում էր, տարբաժանվում էին՝ վերին, միջին և ստորին բանակներ: Բանակների զորապետեր էին նշանակվում, որպես կանոն, արքայորդիները:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.7 子曰：“衣①敝缊②袍，与衣①狐貉者立，而不耻者，其由也与？‘不忮不求，何用不臧③？’”子路终身诵之。子曰：“是道也，何足以臧？”

Ուսուցիչն ասաց. «Բամբակյա ցնցոտի հագած՝ չի ամաչում կանգնել նրանց հետ, որ աղվեսի ու ջրարջի մորթուց քուրք են կրում, մի՞թե այդպիսին չէ Յուն: «Չի նախանձում, չի շողոքորթում, մի՞թե բարի չէ»:

Զիլոն միշտ կրկնում էր այդ սողերը: Ուսուցիչն ասաց. «Դա է Ուղին, մի՞թե բավական է բարի լինելու համար»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հազած հին բամբակամեջ հագուստ՝ չի ամաչում կանգնել նրանց հետ, որոնք աղվեսի ու ջրարջի մորթիներից մուշտակներ են կրում. վախենամ՝ այդպիսին է միայն Յուն Յուն: «Երգերի գրքում» ասվում է. «Չի նախանձում, չի շողոքորթում, մի՞թե բարի չէ»:

Յան Բոնդունի փոխադրությունը եւ մեկնությունը

Դա լսելուց հետո Զիլուն միշտ կրկնում էր այդ տողերը: Քունձին ասաց. «Այդպես էլ պետք է լինի: Մի՞թե դա բավական է բարի լինելու համար»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «衣» - «հագուստ». ասույթում կիրառված է որպես բայ, փոխարինում է «穿»՝ «հագնել», «կրել» գաղափարագրին:

② «缊» - «բամբակյա». ենթադրվում է, որ նկատի ունի կոչտ, անմշակ մետաքսը, քանի որ նշված ժամանակաշրջանում բամբակն իր ժամանակակից ձևով դեռ մշակված չէր:

③ «不枝不求, 何用不臧» - «Չի նախանձում, չի շողոքորթում՝ մի՞թե բարի չէ». հատված է «Երգերի գրքի» «Քամի» հատվածից:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.8 子曰：“岁寒，然后知松柏之后凋①也。”

Ուսուցիչն ասաց. «Յուրտն ընկնելուց հետո ես իմանում, որ սոձին ու նոձին չորանում են վերջում»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քունձին ասաց. «Միայն ձմռանը՝ ցրտի զալուց հետո ես հասկանում, որ սոձին ու նոձին չորանում են վերջում»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «凋» - «չորանալ», «թառամել», «թռշմել»:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.2.9 子曰：“知者不惑，仁者不忧，勇者不惧。”

Ուսուցիչն ասաց. «Իմաստունը չի երկմտում, մարդկայինը չի տագնապում, խիզախը չի երկնչում»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Իմաստուն մարդիկ չեն երկմտում, առաքինի մարդիկ միշտ լավատես են, քաջերը չեն վախենում»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.3.0 子曰：“可与共学，未可与适道；可与适道，未可与立①；可与立，未可与权。”

Ուսուցիչն ասաց. «Կարող եք ուսանել միասին, չեք կարող միասին հետևել Ուղուն: Կարող եք միասին հետևել Ուղուն, չեք կարող միասին ամուր կանգնել: Միասին ամուր կանգնելով՝ չեք կարող միասին դիմակայել»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Կարող եք սովորել միասին, սակայն չեք կարող ունենալ նոյն նվաճումները: Կարող եք ունենալ նոյն նվաճումները, սակայն չեք կարող միասին գործել ըստ պատշաճի: Միասին պատշաճորեն գործելով՝ չեք կարող միասին կրել իշխանության ծանրությունը»:

[Մեկնությունը]

① «立» - «կանգնել», «հենվել». այս գաղափարագիրը «Զրոյց-

Յան Բոհունի փոխադրությունը և մեկնությունը

ներում» նաև ունի «ծեսերի վրա հիմնվել» իմաստը, ինչը կարելի է փոխադրել նաև որպես «գործել հավոր պատշաճի»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

9.3.1 “唐棣之华，偏其反而。岂不尔思？室是远而。”子曰：“未之思也，夫何远之有？”^①

«Ծաղկում է սալորենին,
Միթե չեմ մտածում քո մասին,
Իսկ տունը հեռու է...»
Լսելով այս երգն՝ Ռուցիշն ասաց. «Զի մտածում... Եթե մտածեր, Էլ
ինչ հեռավորություն»:

[Փոխադրությունը]

Հնում մի գեղեցիկ երգ կար.
«Ծաղկում է սալորենին,
Միթե չեմ մտածում քո մասին,
Իսկ տունը հեռու է...»
Լսելով դա՝ Քունձին ասաց. «Միթե մտածում է: Եթե մտածում է, Էլ
ինչ հեռավորություն»:

[Մեկնությունը]

① Այս ասուլյում «唐棣» արտահայտությամբ նշվում է վայրի սալորենու տեսակներից մեկը: Լյու Զին կարծում էր, որ խոսքը մասրենու մասին է, իսկ Լի Շիշենի կարծիքով՝ դա ալոձենին է: «Երգերի գրքից» այս հատվածը փոխաբերական իմաստ ունի և բնութագրում է Յան Հուեյի վերաբերմունքը Կոնֆուցիոնի ուսմունքի նկատմամբ: Յան Հուեյը կարծում էր, որ այն շատ բարդ է, դրա մասին է վկայում «Զրուցների»

սովոր գլխի տասնմեկերորդ ասուլթը, մասնավորպես հետևյալ հատվածը. «Որքան շատ եմ նայում, այնքան բարձր է թվում, որքան շատ եմ փորձում թափանցել դրա մեջ, այնքան կարծր է թվում: Տեսնում ես այն դիմացդ, հանկարծ հայտնվում է թիկոնքում»: Նրան ի պատասխան, բացի այս ասուլթում ներայացվածից, Կոնֆուցիոսի վերաբերմունքը արտացոլված է նաև «Զրույցների» յոթերորդ գլխի երեսուներորդ ասուլթում, որտեղ նշվում է. «Արդյո՞ք առաքինությունը շատ հեռու է մեզնից: Եթե ես ձգտում եմ դրան, այն հայտնվում է»: Սրանով Կոնֆուցիոսն ուզում էր շեշտել, որ ուսմունքի մեջ խորամուխ լինելու համար ընդամենը ցանկություն է պետք:

Գլուխ 10. Հայրենի ավանում Ընդամենը 27 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 孔子于乡党，恂恂①如也，似不能言者。其在宗庙朝廷，便便②言，唯谨尔。

Հայրենի ավանում Քունձին հարգալից էր և քչախոս էր թվում։ Նախնաց տաճարում և արքունիքում նա պերծախոս էր, թեև խոսում էր հակիրձ։

[Փռխադրությունը]

Հայրենի ավանում Քունձին համեստ էր և ասես ընդհանրապես խոսել չգիտեր։ Սակայն նախնիների տաճարում և տիրակալի արքունիքում նա խոսում էր սահուն և հստակ, թեև՝ շատ քիչ։

[Մեկնությունը]

① «恂 恂» ~ «հարգալից». ասույթում կիրառված է «հեզ», «համեստ» իմաստներով։

② «便 便» ~ «պերծախոս». ասույթում կիրառված է «վարժ», «սահուն» իմաստներով։

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 朝，与下大夫言，侃侃如也；与上大夫言，訚訚①如也。君在，踧躇如也，与与如也。

Կոնֆուցիոս. Զրույցներ

Արքունիքում ցածրաստիձան պաշտոնյաների հետ խոսում էր մեղմորեն, բարձաստիձան պաշտոնյաների հետ խոսում էր հարգալից: Տիրակալի ներկայությամբ նա լի էր պատկառանքով և պահում էր իրեն արժանապատվությամբ:

[Փոխադրությունը]

Արքունիքում, մինչև տիրակալի ներս մտնելը, խոսում էր ցածրաստիձան պաշտոնյաների հետ մեղմ ու ժպտուն, իսկ բարձաստիձան պաշտոնյաների հետ խոսում էր ուղիղ և հարգալից: Երբ ներս էր մտնում տիրակալը, նրա վարմուճը լի էր ակնածանքով և պահում էր իրեն խաղաղ ու արժանապատիվ:

[Մեկնությունը]

① «閭» - «հարգալից». հնչում է «ին»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 3 君召使摈，色勃如也，足蹠①如也。揖所与立，左右手，衣前后②，襢③如也。趋进④，翼如也。宾退，必复命曰：“宾不顾矣。”

Երբ տիրակալը հրամայում էր նրան պատվիրակներ ընդունել, նրա դեմքը փոխվում էր և ոտքերն ասես ծալվում էին: Երբ աջ ու ձախ խոնարհվում էր ձեռքերը կրծքին խաչած, նրա հանդերձն առջևից ու հետևից չէր ծալվում, թևաբաց ընդառաջ էր շտապում: Երբ պատվիրակները հեռանում էին, նա միշտ զեկուցում էր տիրակալին.

- Պատվիրակները հեռացան՝ հետ չնայելով:

[Փոխադրությունը]

Երբ Հովի տիրակալը հրամայում էր նրան հարևան տերությունների պատվիրակներ ընդունել, նա հանդիսավոր դեմք էր ընդունում և արագացնում էր քայլը: Երբ ողջունելիս խոնարհվում էր աշ ու ձախ, ձեռքերը կրծքի վրա խաչած, նրա հագուստը չէր ծալվում ոչ առջևից, ոչ հետևից: Նա թռչնի նման թևատարած ընդառաջ էր շտապում: Երբ պատվիրակները հեռանում էին, նա միշտ զեկուցում էր տիրակալին.

~ Պատվիրակները հեռացան՝ առանց ետ շրջվելու:

[Մեկնությունը]

① «蹠» - բառացի՝ «ծալվել». ասույթում ունի «արագացնել» իմաստը: Հուանքանը իր «ձշմարտի մեկնություն» աշխատության մեջ մեջբերում է հետևյալը. «Ժամանակն առաջ է պանում, արագացնել է պետք բանակ կերտելը»:

② «前后» - «առջևից և հետևից». կարելի է փոխադրել նաև որպես «սկզբից մինչև վերջ»:

③ «襍» - բառացի՝ «հանդերձի դիմային հատված». նկատի ունի կոկիկ և հավաք տեսքը:

④ «趋进» - «ընդառաջ շտապել». նկատի ունի պատվիրակների ընդունելության ծիսակարգի մասերից մեկը: Արագ և խոնարհումով ընդառաջ շտապելը ակնածանքի նշան էր:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 4 入公门，鞠躬如①也，如不容。立不中门，行不履阈。过位②，色勃如也，足蹠如也，其言似不足者。摄齐③升堂，鞠躬如也，屏气④似不息者。出，降一等，逞颜色，怡怡如也。没阶，趋进⑤，翼如也。复其位，踧躇如也。

Մտնելով պալատի դարպասներից՝ կռանում էր, ասես չէր կարող անցնել: Չէր կանգնում դարպասների մեջտեղում և անցնում էր՝ առանց շեմը տրորելու: Երբ մոտենում էր գահավորակին, գունատվում էր, ծնկները ծալվում էին և ասես բառեր չէր գտնում: Սրահ մտնելիս հավաքում էր քղանցքը, խոնարհվում էր և պահում շունչը, ասես շնչելով: Երբ դուրս էր գալիս և մի աստիճան իջնում, նրա դեմքը խաղաղվում էր: Արագ էր ընթանում, ասես թևավորված: Վերադառնում էր իր տեղը՝ անխոռվ և լի արժանապատվությամբ:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին ներս էր մտնում պալատի դարպասներից, կռանում էր, ասես վախենալով, որ չի կարող անցնել: Չէր կանգնում դարպասների մեջտեղում և անցնում էր՝ առանց շեմին ուոք դնելու: Երբ մոտ էր գալիս տիրակալի գահավորակին, նրա դեմքի արտահայտությունը փոխվում էր, ծնկները ծալվում էին և կարծես չէր կարողանում բառեր գտնել: Երբ անցնում էր սրահով, հավաքում էր զգեստի քղանցքը, խոնարհվում էր և պահում շունչը, ասես չէր շնչում: Երբ դուրս էր գալիս սրահից և մի աստիճան իջնում էր, նրա դեմքը հանդարտվում էր: Արագ իջնում էր ներքև՝ թռչնի նման թևատարած: Վերադառնում էր իր տեղը՝ անվլորվ և լի արժանապատվությամբ:

[Մեկնությունը]

① «鞠躬如» - «կռանալ, ասես». այս երկու գաղափարագրերը՝ «鞠躬», չի կարելի մեկնարանել զուտ որպես «կռանալ»: Այն խորիրդանշում է ակնածանքով, զգուշավորությամբ և երկյուղածությամբ լի այն տեսքը, որ պիտի ունենար պաշտոնյան արքունիքում: «Զրույցներում» մի քանի անգամ հանդիպող այս բառակապակցությունը չի կիրառվում որպես բայ, այլ բնորոշում է զործողության բնույթը:

② «过位» - «մոտենալով գահավորակին». նկատի ունի տիրակալի գահավորակը: Դրա կողքով անցնելիս, անկախ նրանից՝ տիրակալը բազմած էր, թե ոչ, պետք է պահպանվեր հասող ծիսակարգ:

③ «摄齐» - բառացի՝ «հավաքել քղանցքը». նկատի ունի պաշտոնական հանդերձի ասեղնագործված քղանցքը:

④ «屏气» - «շունչը պահել». նկատի ունի երկյուղածությամբ շունչը պահելը, չշնչել ջանալը:

⑤ «趋进» - «արագ իջնել». որոշ մեկնություններում բացակայում է «进» գաղափարագիրը, որն ունի «առաջ շարժվել», «ընթանալ», «մտնել» իմաստները, սակայն Հան և Թան ժամանակաշրջանի գրեթե բոլոր մեկնություններում այն առկա է:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 5 执圭①, 鞠躬如也, 如不胜②。上如揖, 下如授。勃如战色,
足蹜蹜如有循③。享礼④, 有容色⑤。私觌⑥, 愉愉如也。

Բոնած հասպիսե սալիկը՝ կրօնում էր, ասես չէր կարող այն պահել: Բարձրացնում էր՝ ասես ողջունելով, իջեցնում էր՝ ասես նվիրաբերելով: Լուրջ դեմքով առաջ էր գնում՝ մանր քայլերով, ասես ոտքերը գետնից չկտրելով: Ընծաներ հանձնելիս գուսապ էր, դեմ առ դեմ գրուցելիս՝ ուրախ:

[Փոխադրությունը]

Երբ Քոնձին որպես պատվիրակ մեկնում էր հարեւան տերություն, ընդունելության արարողության ժամանակ, բռնած հասպիսե սալիկը՝ զգուշորեն կրօնում էր, ասես չէր կարող այն պահել: Բարձրացնում էր այն՝ ասես ողջունելով, իջեցնում էր՝ ասես նվեր մատուցելով: Անհող-դողդ դեմքով առաջ էր գնում՝ փոքր քայլերով, ասես գծի վրայով

Կոնֆուցիոն. Զրույցներ

քայլեր: 'Նվերներ հանձնելիս զուսպ էր, իշխանների և պալատականների հետ դեմ առ դեմ զրուցելիս՝ խաղաղված ու ուրախ:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆ]

① «圭» - «հասպիսե սալիկ». տիրակալի ներկայացուցիչը լինելու վկայությունն էր, հասպիսի կտորից պատրաստված պատվանշան, թրի կորի ձև ուժեցող, ուղղանկյուն կամ կոր սալիկ, որը տրվում է բարձրաստիճան պաշտոնյաներին: Պատվիրակները այլ տերության արքունիքում գտնվելիս այն բարձր էին պահում:

② «胜» - բառացի՝ «կարողանալ բարձրացնել». նկատի ունի ծանր իրն օդում պահելու կարողությունը:

③ «足蹠蹠如有循» - «առաջ էր գնում՝ մանր քայլերով, ասես ոտքերը գետնից չկտրելով». փոքր ու նեղ, ասես գծերի վրայով քայլելը նկատի ունի. արքունիքում դրանք խոնարհության նշան էին:

④ «享礼» - «ընծաներ հանձնելիս». հնում դիվանագիտական պատվիրակությունը ընդունելության արարողության ժամանակ տարբեր նվերներ էր հանձնում ընդունող կողմին:

⑤ «有容色» - «զուսպ էր». «Ծեսեր և արարողություններ» աշխատության «Նշանագրության ընծաներ» գիծում նշվում է հետևյալը. «ընծաները հանձնիր զուսպ ու արժանապատվորեն»:

⑥ «覩» - «դեմ առ դեմ». նկատի ունի առանձնազրույցները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

10.6 君子不以绀缁饰^①, 红紫不以为亵服^②。当暑, 褪踊绤^③, 必表而出之。缁衣, 黑裘; 素衣, 麋裘; 黄衣, 狐裘^④。亵裘长^⑤, 短右袂^⑥。必有寝衣^⑦, 长一身有半。狐貉之厚以居。去丧, 无所不佩。非帷裳^⑧, 必杀之^⑨。羔裘玄冠不以吊^⑩。吉月, 必朝服而朝^⑪。

Ազնվայրը չունի մուգ կարմիրով և մոխրագույնով աստաղված հանդերձներ, կարմիր ու մանուշակագույն տնային հագուստ: Շոգ եղանակին տնից դուրս գալիս հագնում էր կոպիտ կանեփից հագուստ: Սև հանդերձի հետ կրում էր գառան մորթի, ձերմակ հանդերձի հետ՝ այծյամի մորթի, դեղին հանդերձի հետ՝ աղվեսի մորթի: Մորթե մուշտակը երկար էր, կարծ աջ թևքով: Մահձի սավանները նրա մարմնից կիսով չափ երկար էին: Տանն օգտագործում էր աղվեսի ու ջրարջի մորթիներ՝ որպես օթոց: Սպից հետո գոտուց տարբեր կախազարդեր էր կապում: Նրա զգեստները կարվում էին գործվածքի ավելացած կտորներից, բացի ծիսական հանդերձներից: Գառան մորթուց մուշտակ և սև գլխանոց չէր կրում, երբ այցելում էր ցավակցելու: Ամեն ամսվա առաջին օրը հագնում էր պաշտոնական հանդերձները և ներկայանում արքունիք:

[Փոխադրությունը]

Ազնվայրը չունի մուգ կարմիր գույնի հանդերձներ, տնային հագուստ՝ կարված կարմիր ու մանուշակագույն գործվածքից: Երբ տնից դուրս է գալիս շոգ եղանակին, հագնում է կոպիտ կանեփից վերարկու՝ տնային հագուստի վրայից: Սև հագուստի հետ կրում էր գառան մորթի, ձերմակի հետ՝ այծյամի մորթի, դեղինի հետ՝ աղվեսի մորթի: Նրա մորթե մուշտակը երկար էր, կարծ աջ թևքով: Մահձակալի ծածկոցները նրա մարմնից կիսով չափ երկար էին: Տանն օգտագործում էր աղվեսի ու ջրարջի մորթիներ՝ նատելու համար: Սպից արարողությունների ավարտից հետո կարող էր զարդարանք կրել: Նրա բոլոր զգեստները կարվում էին տարբեր գործվածքների ձորերից, բացի ծիսական հանդերձներից: Երբ այցելում էր ինչ-որ մեկին ցավակցելու, գառան մորթուց մուշտակ և սև գլխարկ չէր կրում: Ամեն ամսվա առաջին օրը հագնում էր պաշտոնական հանդերձները և ներկայանում արքունիք:

[Մեկնությունը]

① «緇溼飾» - «մուգ կարմիրով և մոխրագույնով աստառված»։ հնում պաշտոնական հանդերձները հիմնականում սև գույնի էին։ Մուգ կարմիրն ու մոխրագույնը մոտ էին սևին, այդ պատճառով տվյալ գույներով առօրյա հագուստ չէր աստառվում։

② «紅紫不以为亵服» - «չուներ կարմիր և մանուշակագույն տնային հագուստ»։ հնում կարմիրի մի գեղեցիկ և թամնկարժեք տեսակ կար՝ «朱»՝ «խրուկաներկը», ենթադրվում է, որ ասուլքում հիշատակված է հենց այդ երանգը։ Կարմիրը և մանուշակագույնը համարվում էին ավելի շատ կանացի գույներ, այդ պատճառով էլ տղամարդիկ այդ գույնի հագուստ տանը չէին կրում։

③ «袵湔絳» - «կոշտ կանեփից հագուստ»։ բարակ ու անմշակ կանեփաթելից հյուսված զործվածք։

④ Երեք գույների օրինակը խորհրդանշում էր այն, որ տարագի տարրերը պիտի լինեն համահունչ։ Սև հագուստի հետ կրում էին սև գառան մորթուց մուշտակ կամ բածկոնակ, սպիտակի հետ՝ այծյամի մորթի, քանի որ այն նույնական սպիտակ էր, իսկ դեղին գույնի հանդերձների հետ՝ աղվեսի մորթի։ Մորթեղեն հագուստները կրում էին մազը դեպի դուրս, երբեմն մորթու վրայից կրում էին նաև երկար վերարկուներ ու թիկնոցներ։

⑤ «亵裘長» - «մորթե մուշտակը երկար էր»։ հնում վերնազգեստը չէր ծածկում անդրավարտիքը, այդ պատճառով էլ վերարկուներն ու մուշտակները երկար էին։

⑥ «短右袂» - «կարձ աջ թևք»։ ենթադրվում է, որ աջ թևքը կարձ է կարվել, որպեսզի չխանգարի որոշ զբաղմունքների, մասնավորապես՝ նետաձգությանը, սրամարտին կամ գեղագրությանը։ Որոշ մեկնողներ չեն վերլուծել այս արտահայտությունը, դրան առանձնապես նշանակություն չտապով։

⑦ «寢衣» - «սավան»։ հնում մեծ սավանը կոչվում էր «衾»՝ «ցին», իսկ փոքր սավանը՝ «被»՝ «բեյ»։

⑧ «帷裳» - «ծիսական հանդերձ». հոլարկավորության արարողությունների և զոհաբերությունների ժամանակ կրվող հանդերձն էր, որ կարվում էր ամբողջական գործվածքից, ինչից ավելացած կտորներից կարվում էր տնային հագուստ, որն իր տեսքով նման էր ժամանակակից շրջազգեստին:

⑨ «杀» - բառացի՝ «սպանել». ասույթում նկատի ունի «կրծատել», «խնայել» իմաստը: Այսինքն՝ գործվածքի սակավության և թանկության պատճառով ոչ մի կտոր դեռ չէր նետվում, այլ կիրառվում էր ներքնաշրեր և տնային զգեստ կարելու համար:

⑩ «Գառան մորթուց մուշտակ և սև գլխանց չէր կրում». հնում սգն արարողությունների ժամանակ կարվում էր հատուկ ծիսական հագուստ, ամենօրյա կամ պաշտոնական հագուստ կրելը անհարգաից վերաբերմունքի նշան էր:

⑪ «吉月» - այս արտահայտության երկու տարբեր մեկնություն կա: Ըստ առաջինի՝ ասույթում այն կիրառված է «ամսվա առաջին օր» իմաստով: Ըստ երկրորդի՝ «吉» գաղափարագիրը սխալ է մեկնված և խորիրդանշում է ամսվա վերջին օրը: «Զրովցների» հին մեկնությունների հեղինակների մեծամասնությունը՝ Վան Ինչին, Յու Յուեն, Չեն Շուդեն փոխադրել են արտահայտությունը որպես «ամսվա առաջին օր», ես ևս կողմնակից եմ այդ տեսակետին:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 7 齐①, 必有明衣, 布②。齐必变食③, 居必迁坐④。

Պահքի ժամանակ հագնում էր մաքուր կտավից հագուստ: Պահքի ժամանակ փոխում էր կերակուրները և տեղափոխվում այլ սենյակ:

[Փոխադրությունը]

Պահքի ժամանակ լրդանում էր և հագնում մաքուր կտավից հագուստ: Պահքի ժամանակ հրաժարվում էր սովորական կերակորմներից և տեղափոխվում այլ սեմյակ, որպեսզի հեռու լիներ կնոջից և հարձերից:

[Մեկնությունը]

① «斎» - բառացի՝ «կոկիկ». ասույթում կիրառված է «齋»՝ «պահք» իմաստով:

② «布» - բառացի «բամբակյա». ասույթում նկարագրված ժամանակաշրջանում բամբակը դեռ մշակված չէր, ենթադրվում է, որ նկատի ունի կտավը: Վաճ Ֆուջին կարծում էր, որ խոսքն անմշակ մետաքսի մասին է: Մետաքսի այդ տեսակը բավականին տարածված էր, և պալատական աստիճանավորների հանդերձանքը հաձախ կարվում էր այդ կտորից: Զատ Յին կարծում էր, որ իրականում խոսքը գնում է ոչ թե մետաքսի, այլ վուշի կամ կանեփի գործվածքի մասին:

③ «变食» - «փոխել կերակորմները». այս արտահայտությունը մեկնության մի քանի տարբերակ ունի: Մասնավորապես՝ Զուանձին մեջքերում է Յան Հուեյի հետևյալ հարցը՝ ուղղված Կոնֆուցիոնին. «Իմ ընտանիքն աղքատ է, մենք ամիսներով միս չենք ուտում և գինի չենք խմում. դա կարելի՞ է պահք համարել»: Ինչին ի պատասխան Կոնֆուցիոն ասում է. «Կարելի է դա անվանել պահք զոհաբերությունից առաջ, սակայն չի կարելի համարել սրտանց պահք»: Այսինքն՝ շատերի համար պահքը մսեղեն կերակորմներից, ոգեից ընպելիքներից, ինչպես նաև՝ սոխից, սխտորից, կոճապղպեղից և քիմքը գրգռող այլ համեմունքներից հրաժարվելու էր: Ըստ երկրորդ տեսակետի՝ «变食» արտահայտությունը վերաբերում է թարմ կերակուր ուտելուն. որպես այս տեսակետի հիմնավորում՝ «Քոոյի ծեսեր» աշխատությունից մեջքերում են հետևյալ տողերը. «Արքան ուտում է օրը երեք անգամ, սակայն

կենդանի սպանում են միայն օրը մեկ անգամ»: Այսինքն՝ նույնիսկ արքայական խոհանոցում ընթրիք պատրաստելու համար կարող էին օգտագործել այն կենդանու միսը, որ սպանել էին առավոտյան: Ենթադրվում է, որ պահքի ժամանակ չէին ուսում կերակրի մնացորդները, պատրաստում էին այնքան, որքան կարող էին ուտել միանգամյա: Հստերրորդ տեսակետի, որի կողմնակիցն է Զին Էն, պահքի արգելքը վերաբերում էր մսեղենին, ձկնեղենին, ոգելից ընազիքներին, թույլատրվում էր ուտել բանջարեղեն և ձավարեղեն:

④ «*迁坐*» - բառացի՝ «փոխել նստելու տեղը». նկատի ունի ննջասենյակը փոխելը: Հնում պահքին հետևող ազնվականներն ու աստիճանավորները տեղափոխվում էին այսպես կոչված «արտաքին ննջասենյակ», որը քնում էին մինչև պահքի ավարտը՝ առանց կնոջ կամ հարձերի: Թան հարստության ժամանակ ծիսակարգը փոխվեց և աստիճանավորները կարող էին վեյցի խաղալ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 8 食不厌精，脍不厌细。食湩而油①，鱼馁而肉败②，不食。色恶，不食。臭恶，不食。失饪，不食。不时③，不食。割不正④，不食。不得其酱，不食。肉虽多，不使胜食气⑤。唯酒无量，不及乱⑥。沽酒市脯不食。不撤姜食，不多食。

Չէր ուսում, եթե ընտիր չէր, միաը մանր կտրտված չէր: Եթե կերակուրը դառնահամ էր, ձուկն ու միսը՝ փշացած, չէր ուսում: Անախորժ տեսք ունեցող կերակուր չէր ուսում: Վաս հոտ ունեցող կերակուր չէր ուսում: Կիսաեփի կերակուր չէր ուսում: Եթե ժամանակը չէր, չէր ուսում: Եթե խնամքով մասնատված չէր, չէր ուսում: Առանց կարգին թանձրուկի չէր ուսում: Նույնիսկ եթե միս շատ կար, հատիկեղենից ավելի չէր ուսում: Գինին չէր սահմանափակում, սակայն չէր հարբում: Շուկայից

գնված գիճի և ապուխտ չէր ուսում: Չէր հրաժարվում կոձապղեղով համեմված կերակուրներից, ուսում էր քիչ:

[Փոխադրությունը]

Եթե հատընտիր բրիճն չէր, չէր ուսում: Եթե ձուկն ու միսը մանր կտրտված չէին, չէր ուսում: Եթե շիլան դառը համ ուներ, ձուկն ու միսը փչացած էին, չէի ուսում: Եթե կերակուրն անախորժ տեսք ուներ, չէր ուսում: Եթե կերակրից վատ հոտ էր գալիս, չէր ուսում: Վատ եփած կերակուր չէր ուսում: Եթե ուտելու ժամը չէր, չէր ուսում: Եթե ձիշտ մասնատված չէր, չէր ուսում: Առանց սոյալի թանձրուկի և քացախի կերակուրներ չէր ուսում: Նույնիսկ եթե սեղանի վրա միս շատ կար, այն ձավարեղենից ավելի չէր ուսում: Միայն զինին չէր սահմանափակում, սակայն չէր հարրում: Շուկայից գնված գիճի և ապիստած միս չէր ուսում: Չէր հրաժարվում կոձապղեղով համեմված կերակուրներից, թեև ուսում էր քիչ:

[Մեկնությունը]

① «食滿而油» ~ «Եթե կերակուրը դառնահամ էր». Ակատի ունի երկար պահելուց համը փոխած կերակուրը:

② «餒,敗» ~ «փչացած». Երկու գաղափարագրերն էլ ունեն նույն իմաստը՝ «փչացած», սակայն մեկը կիրառված է ձկան, մյուսը՝ մսի վերաբերյալ:

③ «不時» ~ բառացի՝ «ոչ ժամանակին»: Ասույթում կիրառված է «եթե ուտելու ժամը չէր» իմաստով: Սակայն կա այս արտահայտության մեկնության երկու տարածված տարբերակ: Ըստ առաջինի՝ արտահայտությունն ունի «ոչ թարմ» իմաստը: Մշտապես թարմ մթերք՝ պտուղներ և բանջարեղեն կարող էին իրենց թույլ տալ միայն տիրակալը, ազնվականները և հարուստ վաճառականները: Մշակվել էր ժայգուան կոչվող այգին, ինչը կլոր տարին ապահովում էր արքայական խոհա-

նոցը մթերքով: Սակայն Կոնֆուցիոնը հնարավորություն չուներ դրանից օգտվելու, և ջերմոցներ այն ժամանակ դեռ չկային, այդ պատճառով էլ այս տարբերակն արժանահավատ չէ: Բայտ երկրորդ տարբերակի՝ արտահայտությունն ասույթում կիրառված է «ուտելու ժամը չէ» իմաստով: Լյու Շիի «Գարնան և Աշնան գրառումներ» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Երբ ուտում ես ժամանակին, մարմինդ առողջ կլինի»:

④ «割不正» - «մասնատված ոչ ձիշտ»: Արտահայտությունը վերաբերում է խոզի, տավարի և ոչխարի մսի մասնատմանը և ուկրագերծմանը: Հնում մսի մասնատման հասողության կար, ինչը շպահապանելու դեպքում միսը համարվում էր «ոչ ձիշտ մասնատված» և ավելի էժան էր գնահատվում:

⑤ «食氣» - «հատիկեղեն կերակուր»: Ենթադրվում է, որ «氣»՝ «օդ» գաղափարագիրը կիրառվել է «饩» գաղափարագրի փոխարեն, ինչն ունի «հատիկեղեն» կամ «զոհաբերության մսացու» իմաստները:

⑥ «乱» - «հարքած», «այլասերված», «ըմբռստ». «Զույի նորերի»՝ Սյուան իշխանի կառավարման տասնինգերորդ տարվա նկարագրության մեջ հիշատակվում է հետևյալը. «Հարքելն ախտ է, որ խոռվություն է ծնում»:

ԿՈՆՖՈՒՅԻՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 9 祭于公， 不宿肉①。 祭肉②不出三日。 出三日， 不食之矣。

Իշխանական զոհաբերության ժամանակ չէր թողնում, որ մսեղիքը մնա գիշերը: Զոհաբերության մսեղիքը երեք օրից ավելի չէր թողնում: Երեք օր մնացած միսը չէր ուտում:

[Փոխադրությունը]

Տերունական զոհաբերության ծեսերին մասնակցելիս չէր թողնում,

Կոնֆուցիոն. Զրույցներ

որ զոհաբերության մսեղիքը մնա մինչև հաջորդ օրը: Այլ զոհաբերությունների մսեղիքը երեք օրից ավել չէր պահում: Երեք օրից ավել մնացած միսը չէր ուսում:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «不宿肉» - «չէր թողնում, որ մսեղիքը մնա գիշերը». հնում պետական աստիճանավորները և ուսալ այրերը տերունական զոհաբերությունների ժամանակ ներկայանում էին իրենց մսեղիքով: Մսացուն մորթպում էր վաղ առավոտյան: Այնուհետև սկսվում էր ծեսը, և յուրաքանչյուր պաշտոնյա՝ ըստ աստիճանակարգի, գոհ էր մատուցում: Նման հերթականությունը կանոնակարգում էր արարողությունը, և բոլորը կարողանում էին զոհաբերություն անել, այսինքն՝ միսը չէր մնում հաջորդ օրվան:

② «祭肉» - «զոհաբերության մսեղիք». ի տարբերություն ասույթի առաջին պարբերության մեջ հիշատակվող տերունական զոհաբերության մսեղիքի, այստեղ խոսքը սեփական տոհմի նախնիների հիշատակին մատուցվող զոհերի մասին է:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 0 食不语， 寢不言。

Ուտելիս չէր խոսում: Պառկած չէր խոսում:

[Փոխադրությունը]

Ուտելու ընթացքում չէր զրուցում: Պառկած չէր խոսում:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 1 虽疏食菜羹， 瓜祭①， 必齐如也。

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Նոյնիսկ եթե ուտում էր բանջարեղենով ապուր, անպայման հանդիսավորությամբ բաժին էր հանում նվիրաբերության համար:

[Փոխադրությունը]

Նոյնիսկ եթե կերակուրը կոչտ բրինձ էր կամ բանջարեղենով ապուր, նա սկզբից անպայման առանձնացնում էր նվիրաբերության համար նոյն հանդիսավորությամբ, ինչ պահի ժամանակ:

[Մեկնությունը]

① «瓜祭» - բառացի՝ «դդմի զոհաբերություն». «Զրուցների» մեկնողների մեծամասնությունը կարծում է, որ այսուեղ ուղղակի սխալ է կիրառված «瓜» գաղափարագիրը: Ասույթում նկարագրված նվիրաբերության իմաստը հետևյալն էր. տարատեսակ կերակուրներից առանձնացնում էին փոքր բաժիններ, որոնք լցվում էին հատուկ ամանների մեջ և դրվում սեղանի ծայրին: Դա կատարվում էր նախնիների հիշատակը հարգելու համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 2 席①不正， 不坐。

Խսիրը սխալ էր՝ չէր նատում:

[Փոխադրությունը]

Եթե խսիրը փոքր էր ծեսի պահանջներին հակառակ՝ չէր նատում:

[Մեկնությունը]

① «席» - «խսիր». հնում աթոռները և աթոռակները լայնորեն տա-

բածված չէին, այդ պատճառով էլ նստելու համար փոռում էին խսիրներ և զորգեր: Նույնիսկ արքունիքում զահավորակ ուներ միայն տիրակալը, ազնվականները և աստիճանավորները նստում էին խսիրների վրա: Խսիրները հյուսվում էին ծղոտից, ձահձախոտից, հնդկեղեգմից, նույնիսկ՝ բրնձի ցողուններից: Հիմա խսիրներին նստելու սովորությունը պահպանում են ձապնացիները: Ասույթի բովանդակությանը մոտ մի տող կա նաև Մոճիի աշխատության մեջ. «Իշխան Այլ ողջունեց Քունձիին, սակայն նա չնստեց իրեն առաջարկված տեղում, քանզի այն պատշաճ չէր իր դիրքին»: Կա տեսակետ, ըստ որի «պասլ խսիր» արտահայտությունը վերաբերում է ոչ թե խսիրը փոելու ձևին, այլ աստիճանավորների նստելու կարգին. որքան բարձր էր աստիճանը, այնքան տիրակալի զահավորակին ավելի մոտ էր փոփում խսիրը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 3 乡人饮酒①, 杖者出, 斯出矣。

Երբ գյուղացիները գինի էին խմում, դուրս էր գալիս միայն ծերունիների դուրս գալուց հետո:

[Փոխադրությունը]

Գյուղում գինի խմելու արարողության ժամանակ սպասում էր այնքան, որ դուրս գան տարեց մարդիկ, այնուհետև ինքն էր դուրս գալիս:

[Մեկնությունը]

① «乡人饮酒» - «Երբ գյուղացիները գինի էին խմում». հնում կար գինի խմելու արարողություն, որն անց էր կացվում տոնախմբությունների ժամանակ: Այդ մասին հիշատակված է նաև «Ծեսերի գրքում»: Ըստ ծեսի՝ երիտասարդները պիտի սպասեին այնքան, մինչև ծերու-

Աիները դուրս գային: «乡»՝ «պան» գաղափարագիրը կիրառվել է մի շարք հմաստներով՝ «զյուղ», «ավան», «գավառ»: Շատ աղբյուրներում «սյանը» հիշատակվում էր որպես 12500 ընտանիքներից բաղկացած վարչատարածքային միավոր (գավառ) կամ ավատական տիրույթ, իսկ «乡人»՝ արտահայտությունը փոխադրվում է որպես «գավառապետ»: Այդ պատճառով էլ որոշ մեկնողներ այս արտահայտությունը փոխադրում են հետևյալ կերպ. «Երբ գավառապետը գինի էր հյուրավիրում»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 4 乡人雜①, 朝服而立于阼阶②。

Երբ զյուղացիները դուրս էին քշում դսերին, հազնում էր պալատական հանդերձն ու կանգնում արևելյան դռան աստիճաններին:

[Փոխադրությունը]

Երբ տեղացիները երկրպագում էին աստվածներին և դուրս քշում չար ոգիներին, նա հազնում էր պաշտոնական հազուստն ու կանգնում դեպի արևելյան դուռը տանող աստիճանների մոտ:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «雜»՝ «դուրս քշել դսերին». ինչի նպատակը տանը կամ հիվանդների մեջ «բույն դրած» չար հոգիներին քշելն էր: Սովորաբար հաջորդում էր նախնիների և աստվածների երկրպագության ժեսին: Դեռ մինչև սույն դարի սկիզբը մարդիկ շարունակում էին վարձել հերիմներ, որոնք հիվանդների հետ անց էին կացնում դսերը դուրս քշելու ժեսը:

② «阼阶»՝ «արևելյան դռան աստիճաններ». տան այն մասն էր, որ հյուրերին դիմավորելու համար կանգնում էր տանտերը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 5 问①人于他邦， 再拜②而送之。

Երբ ողջուններ էր փոխանցում հարևան տերությունում գտնվող մեկին, երկու անգամ խոնարհվում էր սուրհանդակին, հետո ձանապարհում:

[Փոխադրությունը]

Երբ սուրհանդակ էր ուղարկում հարևան տերությունում ապրող իր բարեկամների մոտ, ընծաններ տալուց բացի երկու անգամ խոնարհվում էր նրան՝ ի նշան ողջունի փոխանցման:

[Մեկնությունը]

① «问» ~ բառացի՝ «հարցնել». ասույթում կիրառված է «问讯» և «问好» իմաստներով, որպես «ողջունել» և «բարևել»: Քանի որ ողջունների փոխանցումը, որպես կանոն, զուգակցվում էր ընծանների հանձնմամբ, տեղին եմ համարել փոխադրության մեջ ավելացնել «ընծաններ» բառը:

② «拜» ~ «խոնարհվել». ողջունի ձև էր՝ ձեռքերն առջևում աղեղնաձև ագուցած խոնարհումը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 6 康子馈药， 拜而受之。曰：“丘未达， 不敢尝。”

Երբ Քանձին բալասան բերեց, խոնարհումով ընդունեց՝ ասելով. «Ձյուն ծանոթ չէ սրա հատկություններին, չի համարձակվի փորձել»:

[Փոխադրությունը]

Երբ Զի Քանձին դեղորայք բերեց, Քունձին խոնարհումով ընդունեց դա՝ ասելով. «Ես այս դեղի մասին շատ բան չգիտեմ, չեմ համարձակվի փորձել»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 7 厥焚。子退朝，曰：“伤人乎？”不问马。

Երբ ախոռն այրվեց, արքունիքից վերադառնալով՝ Ուսուցիչը հարցրեց. «Մարդիկ վնասվել են»: Չհարցրեց ձիերի մասին:

[Փոխադրությունը]

Երբ Քունձիի ախոռն այրվեց, արքունիքից վերադառնալով՝ նա հարցրեց. «Մարդիկ վնասվել են»: Չհարցրեց ձիերի մասին:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 8 君賜食，必正席先尝之。君賜腥，必熟而荐①之。君賜生，必畜之。侍食于君，君祭，先饭。

Երբ տիրակալը կերակուր էր ուղարկում, միանգամից փոռում էր խսիրն ու փորձում: Երբ տիրակալը մսեղիք էր ուղարկում, եփում էր այն ու նվիրաբերություն անելուց հետո փորձում: Երբ տիրակալը կենդանի էր ուղարկում, պահում էր դրան: Տիրակալի մոտ խնջույքի ժամանակ, երբ տիրակալը զոհաբերություն էր անում, առաջինն էր ուսում:

Կոնֆուցիոս. Չրույցներ

[Փոխադրությունը]

Երբ տիրակալը կերակուր էր ուղարկում, Քունձին միանգամից փոռում էր խսիրն ու փորձում: Երբ տիրակալը հում միս էր ուղարկում, եվում էր այն ու նախնիներին նվիրաբերություն ամելուց հետո փորձում: Երբ տիրակալը կենդանի էր ուղարկում, պահում էր դրան և կերակրում: Տիրակալի մոտ, խնջույքի ժամանակ, երբ տիրակալը զոհաբերություն էր ամում, առաջինն էր ուսում:

[Մեկնությունը]

① «荐» - «նվիրաբերություն». նախնիների հիշատակին արվող սննդի նվիրաբերությունն էր, պետք չէ շփոթել այն կենդանիների զոհաբերության հետ:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 1 9 疾, 君视之, 东首①, 加朝服, 拖绅②。

Երբ հիվանդ էր և տիրակալն այցելեց նրան, պառկած էր՝ գլուխը դեպի արևելք, պալատական հանդերձով և գոտևորված:

[Փոխադրությունը]

Երբ Քունձին հիվանդ էր և տիրակալն այցելեց նրան, նա պառկած էր՝ գլուխը դեպի արևելք, պաշտոնական հագուստով ծածկված, վրայից գցած լայն գոտին:

[Մեկնությունը]

① «东首» - «գլուխը դեպի արևելք». հնում ննջարանները տան արևմտյան կամ հարավային կողմում էին, իսկ հյուրերը մտնում էին

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

արևելյան կողմից, այդ պատճառով էլ հիվանդ Կոնֆուցիոսը պառկած էր գլուխը դեպի արևելք, որպեսզի որպես տաճտեր դիմավորի տիրակալին:

② «加朝服， 拖紳» - «պալատական հանդերձով և գոտևորված». քանի որ Կոնֆուցիոսը հիվանդ էր և չէր կարող հագնել պալատական հանդերձը, նրան դրանով ուղղակի ծածկել էին և վրայից զցել լայն գոտին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 0 君命召， 不俟駕行矣。

Երբ տիրակալը հրամայում էր ներկայանալ, չէր սպասում, որ կառը պատրաստեն, գնում էր ոտքով:

[Փոխադրությունը]

Երբ տիրակալը հրամայում էր ներկայանալ, Քունձին չէր սպասում, որ ձիերը լծեն կառքին, այլ անմիջապես ձանապարհ էր ընկնում ոտքով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 1 入太庙， 每事问①。

Մտնելով մեծ տաճար՝ հարցնում էր ամեն ինչի մասին:

[Մեկնությունը]

① Տես՝ «Քրույցների» երրորդ գլխի տասնինգերորդ ասույթը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 2 朋友死，无所归，曰：“于我殡①。”

Երբ բարեկամը մահացավ և չկար մեկը, որ հոգ տաներ, ասաց. «Ես կհուղարկավորեմ»:

[Փռխադրությունը]

Երբ ընկերը մահացավ և չկար մեկը, որ հոգար հուղարկավորությունը, Քունձին ասաց. «Ես կհոգամ հուղարկավորելու ծախսերը»:

[Մեկնությունը]

① «殡» - «հուղարկավորել». այս գաղափարագիրը հաձախ կիրառվել է նաև «դագաղ» իմաստով, սակայն ասուլյում կիրառված է որպես «հուղարկավորության ծախսեր»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 3 朋友之馈，虽车马，非祭肉，不拜。

Երբ բարեկամներն ընծա էին բերում, նույնիսկ կառք ու ձիեր, բայց ոչ զոհաբերության մսեղիք, չէր խոնարհվում:

[Փռխադրությունը]

Ինչ էլ բարեկամները նվիրեին, թեկուզ կառք ու ձիեր, եթե զոհաբերության միս չէին բերում, Քունձին չէր խոնարհվում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 4 寝不尸，居不客①。

Պառկելիս մեռածի նման չէր, նստելիս հյուրի նման չէր:

[Փոխադրությունը]

Քունձին չէր քնում դիակի նման ուղիղ պառկած, իսկ երբ տաճճ էր, չէր նստում հյուրի նման:

[Մեկնությունը]

① «居不客» - «Նստելիս հյուրի նման չէր». հնում նստելու տարրեր եղանակներ կային: Հյուրերի ներկայությամբ ընդունված էր նստել խսիրի վրա, երկու ոտքերը ծալած: Սակայն այդպիս երկար նստած մնալը բավականին բարդ էր, այդ պատճառով էլ տաճճ նստում էին ազատ դիրքով: Կարող էին նստել մի ոտքը ծալած կամ կքանստած, իսկ անհարգալից համարվում էր ոտքերը լայն բացած և մարմնով հետ ընկած նստելը: Այսինքն՝ «Նստելիս հյուրի նման չէր» արտահայտությունը պետք է հասկանալ հետևյալ կերպ: Կոնֆուցիոնը տաճճ եղած ժամանակ նստում էր ազատ դիրքով:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 5 见齐衰者，虽狎，必变。见冕者与瞽者，虽亵，必以貌。
凶服者式①之。式负版②者。有盛馔，必变色而作。迅雷风烈③必变。

Երբ տեսնում էր սգո հանդերձով մարդու, նույնիսկ եթե ծանոթն էր, անպայման դիմափոխսվում էր: Երբ տեսնում էր խոսրով մեկին կամ կույրի, պատկառանք էր ցուցաբերում: Երբ կառքով գնալիս հանդիպում էր հոտարկավորների՝ ձաղերին հենվելով տեղից բարձրանում և խոնարհվում էր: Նույնն անում էր գրաբերների հանդիպելիս: Ճոխ սեղանի մոտ անպայման դիմափոխսվում էր: Որոտի ու կայծակի, քամու ժամանակ դիմափոխսվում էր:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Երբ Քունձին տեսնում էր սգո հանդերձով մարդու, նույնիսկ եթե իր ծանոթն էր, դեմքն անպայման կարեկցանք էր արտահայտում: Երբ տեսնում էր աստիճանավիրի զլիանոցով մեկին կամ կույրի՝ պատկառանք էր ցուցաբերում, նույնիսկ եթե արդեն հանդիպել էին: Երբ կառով գնալիս հանդիպում էր սգո թափորի՝ կառքի նստատեղի բազկավաներին հենվելով տեղից բարձրանում ու խոնարհվում էր: Նույնն անում էր տերունական գրությունները տանող պաշտոնյաների հանդիպելիս: Երբ ձոյն սեղանի մոտ էր, դեմքն անպայման ակնածանք էր արտահայտում: Որոտի ու կայծակի, փոթորկի ժամանակ դեմքը երկյուղածություն էր արտահայտում:

[Մեկնությունը]

① «式» - բառացի՝ «ձև», «ոճ». ասույթում կիրառված է «轼»՝ «ձաղ» իմաստով: Հնում կառքերի կողային մասերում կային ձաղեր, որոնցից բռնվելով բարձրանում էին:

② «版» - բառացի՝ «գրաքեր». Ակատի ունի այն պաշտոնյաներին, որոնք շրջում էին տերունական հանձնարարություններ կատարելով, ինչպես նաև մարդահամար անելու կամ զորահավաքի ցուցակներ կազմելու համար:

③ «迅雷风烈» - «Որոտ ու կայծակ, քամի». ասույթում կիրառված է «որոտ ու կայծակ, փոթորիկ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 6 升车，必正立，执绥。车中，不内顾，不疾言，不亲指。

Կառք բարձրանալիս անպայման բռնում էր կաշեկուկերից: Երբ կառքի մեջ էր, հետ չէր նայում, բարձր չէր խոսում և մատնացուց չէր անում:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Երբ Քունձին կառք էր բարձրանում, անպայման բռնում էր կաշեփոկերից: Երբ կառքի մեջ էր, հետ չէր նայում, բարձր չէր խսում և այս ու այն կողմ ցույց չէր տալիս:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՌՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 0 . 2 7 色斯举矣，翔而后集。曰：“山梁雌雉，时哉时哉！”子路共①之，三嗅②而作。③

Տեսնելով՝ վեր բարձրացան, թևածեցին և հետո խմբվելով իջան: Նա ասաց. «Լեռնային փասխանների մարիների ժամանակն է: Նրանց ժամանակն է»: Զիլուն միացրեց ձեռքերը, նրանք երեք անգամ հոտոտեցին ու թռան:

[Փոխադրությունը]

Մի անգամ Քունձին սաների հետ կառով բարձրանում էր լեռնային ձանապարհով և փասխանների մի երամ տեսավ: Նրանց տեսնելով՝ թռչունները վեր բարձրացան, թևածեցին և հետո երամով իջան: Քունձին ասաց. «Լեռնային փասխանների մարիների ժամանակն է»: Զիլուն ձեռքերն ազուցեց ի նշան ողջունի, իսկ փասխաները թափահարեցին թևերն ու թռան:

[Մեկնությունը]

① «共» - բառացի՝ «միասին», «կիսվել», «ընդհանուր» և այլն. ենթադրվում է, որ վրիպակ է, դրա փոխարեն ասույթում պիտի կիրառվեր «拱» գաղափարագիրը, ինչը նշանակում է «ձեռքերն ազուցել իրար ի նշան ողջունի»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

② «嗅» ~ «հոտոտել», «հոտ քաշել». հայտնի չէ գաղափարագրի կիրառման իմաստը:

③ «Զրույցների» ամենաբարդ ասույթներից մեկն է: Դեռ հնուց Կոնֆուցիոսի բոլոր վարքագիրներն ու մեկնողները դժվարանում են մեկնել կամ փոխադրել այս ասույթը: Ենթադրվում է, որ արտագրության ժամանակ մի քանի գաղափարագրի վրիպակ է եղել, ինչի հետևանքով իմաստը մասնակիորեն աղավաղվել է:

Գլուխ 11. Նրանք, որ սկզբից ուսումնասիրում են... Ընդամենը 25 ասույթ

(Զու Սիի «Մեկնություններում» երկրորդ և երրորդ ասույթները
միավորված են, իսկ Լյու Բառնանը միավորել էր տասնութերորդ
և տասնիներորդ, քաներորդ և քսանմեկերորդ ասույթները)

ԿՈՆՖՈՒՅԻՉԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1. 1 子曰：“先进①于礼乐，野人也；后进①于礼乐，君子也。
如用之，则吾从先进。”

Ուսուցիչն ասաց. «Նրանք, որ սկզբից ուսումնասիրում են ծեսեր ու
երաժշտություն, հասարակ մարդիկ են, նրանք, որ հետո են ուսումնա-
սիրում ծեսեր ու երաժշտություն՝ ազնվայրեր են։ Եթե պետք լիներ
բանեցնել, ես կընտրեի նրանց, որ սկզբից են ուսումնասիրում»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Նրանք, որ սկզբից ուսումնասիրում են ծեսեր ու
երաժշտություն, իսկ հետ դառնում են պաշտոնյա, հասարակ մարդիկ
են, իսկ նրանք, որ պաշտոնյա դառնալուց հետո են ուսումնասիրում
ծեսեր ու երաժշտություն՝ աստիճանավորների զավակներ են։ Եթե
պետք լիներ ընտրել շնորհալիների, ես կընտրեի նրանց, որ սկզբից են
ուսումնասիրում ծեսերն ու երաժշտությունը»։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Մեկնությունը]

① «先进, 后进» - «սկզբից, հետո». այս երկու արտահայտությունները մեկնվել են տարրեր իմաստներով: Լու Բառնանի ««Զրույցների» ձշմարիտ մեկնություններ» աշխատության մեջ նշվում է, որ Կոնֆուցիոսը կողմնակից էր հետևյալ մոտեցմանը. «Ուսուցման մեջ շնորհապին կարող է դառնալ պաշտոնյա»: Մենձի աշխատության մեջ արտացոլվում է երկու առանցքային արտահայտություն՝ «պաշտոնյաներ չեն ծնվում» և «պաշտոնյաներին պետք է ընտրել»: Կոնֆուցիոսը առաջնահերթությունը տալիս էր «սկզբում ուսումնասիրածներին» շատ պարզ պատճառով. հասարակ մարդիկ, որ ուսումնասիրում էին ծեսեր ու երաժշտություն, հնարավորություն ունեին դառնալ պաշտոնյա, եթե դրսևորեին բացառիկ կարողություններ: Մինչեւ արքունական պաշտոնյաների մեծամասնությունը «ցին» և «դաֆու» կոչվող ազնվականների ու աստիճանավորների զավակներ էին, որոնք ուղղակի ժառանգում էին որոշակի պաշտոններ, հետո սկսում էին ուսումնասիրել ծեսեր, արվեստներ ու գիտություններ: Պաշտոնների ժառանգարար փոխանցման ավանդույթը հետագայում դուրս մղվեց գերազանցապես «օրինականների»՝ լեզվաստների ջանքերով, և պետական պաշտոն ստանալու համար պիտի հանձնեին քննություններ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 子曰：“从我于陈、蔡①者，皆不及门②也。”

Ուսուցիչն ասաց. «Նրանք, որ ուղեկցեցին ինձ Զեն ու Յայ, այլս չեն մտնում դարպասներից»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Այն մարդիկ, որ ուղեկցեցին ինձ դեպի Զեն և Յայ տերություններ, այլս այստեղ չեն»:

[Մեկնությունը]

① «从我于陈、蔡» - «Նրանք, որ ուղեցեցին ինձ Զեն ու Ցայ». «Քունձի վարքագրություն» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Ու տերության բանակը հարձակվեց Զենի վրա. Զենին օգնության շտապեցին Զու տերության ուժերը. Քունձին այդ ժամանակ Զենի և Ցայի սահմանագլխին ինչ-որ տեղ էր, Զուի տիրակալը իր բարձրաստիճան պաշտոնաներից մեկին ուղարկեց Քունձի մոտ՝ նրան որպես խորհրդական ծառայության հրավիրելու համար. Քունձին արդեն պատրաստվում էր ձանապարհ ընկնել և հարգանքի տուրք մատուցել տիրակալին, սակայն Զենի և Ցայի պաշտոնյաները սկսեցին մտորել. «Քունձին իմաստուն է և միշտ ծիծաղում է արքունականների արատների վրա. Եթե Քունձին Զուի նման մեծ տերության պաշտոնյա դառնա, կարող է վտանգել Զենը և Ցայը»: Նրանք պայմանավորվեցին և բանտերից դուրս քողեցին ավազակների, որոնք տափաստանում շրջափակեցին Քունձին սաների հետ և ամեն կերպ խոչընդոտում էին նրանց ընթացքը. Հենց այդ ժամանակ Քունձին ու իր սաները անցան բազում դժվարությունների միջով և զրկանքներ կրեցին: Սակայն Քունձին չէր դադարում երգել ու նվագել ցինի վրա: Սաներից Զիգունին հաջողվում է ձերքել պաշարումը և հասնել Զու, որտեղ դեպքի մասին տերեկանալով՝ Զայ արքան ջոկատ է ուղարկում Քունձին դիմավորելու համար»:

② «不及門» - «չեն մտնում դարպասներից». Հան և Թան հարստությունների ժամանակ տարածված էր այս արտահայտության հետևյալ մեկնությունը՝ «Նրանք, որոնց դեռ չեն ծառայում դարպասների մոտ», ինչը վերաբերում էր Կոնֆուցիոսի այն սաներին, որոնք դեռ պետական ծառայության չին անցել: Սակայն ես կողմնակից եմ Զու Սիի մոտեցմանը: Հնում «դարպասներից ներս մտնող» անվանում էին սաներին, որովհետև ուսուցումը անց էր կացվում հիմնականում ուսուցչի տան բակում՝ մեծ դարպասների կողքին: Կոնֆուցիոսն ախտոսում էր, որ իր մոտ չեն հիմա այն սաները, որոնց հետ զրկանքներ էր կրել Զեն և Ցայ տերություններով անցնելու ժամանակը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1.3 德行： 颜渊， 阮子骞， 冉伯牛， 仲弓。 言： 宰我， 子贡。
。政事： 冉有， 季路。 文学①： 子游， 子夏。

Առաքինի վարք ունեին Յան Յուանը, Մին Զիցյանը, Ժան Բոնյոն, Զուն Գունը: Ճարտար լեզու ունեին Զայվոն և Զիգունը, տերունական գործերում հմուտ էին Ժանյուն և Զիլուն: Գրականության մեջ հմտացել էին Զիյուն և Զիսյան:

[Փոխադրությունը]

Քունձի սաներից ամեն մեկն իր ուժեղ կողմերն ուներ: Իրենց առաքինությամբ աչքի էին ընկնում Յան Յուանը, Մին Զիցյանը, Ժան Բոնյոն, Զուն Գունը: Զայվոն և Զիգունը պերձախոս էին, պետական ծառայության մեջ հմուտ էին Ժանյուն և Զիլուն: Հին գիր ու գրականության մեջ հմտացել էին Զիյուն և Զիսյան:

[Մեկնությունը]

① «文学» - «գրականություն». ասույթում նկատի ունի «Երգերի գրքի» և «Ծեսերի գրքի» իմացությունը: Բավականին վիճահարույց է ասույթում հիշատակված սաների թիվը: Զու Մին գտնում էր, որ այս տաս հոգին այն սաներն են, որոնք ուղեկցում էին Կոնֆուցիոսին Զեն տերությունից Յայ անցմելու ընթացքում: Սակայն այս տեսակետն արժանահավատ չէ: Մասնավորապես՝ ըստ «Զուոյի նոթերի», Ժանյուն այդ ժամանակ ծառայում էր Լու տերության Ձի իշխանական տանը և չէր կարող ուղեկցել Կոնֆուցիոսին: «Զուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ այդ ձամփորդության ժամանակ Կոնֆուցիոսին ուղեկցողների թվում հիշատակվում է նաև Զիշանը, որի անունն այս ասույթում բացակայում է: Զիյուն և Զիսյան Կոնֆուցիոսից փոքր էին տարիքով՝ համապատասխանաբար քառասունինգ և քառասուն-

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

չորս տարով, իսկ տվյալ ժամանակահատվածում՝ Զեմից Յայ անցման ժամանակ Կոնֆուցիոսը վաթսունմեկ տարեկան էր, հետևաբար՝ Զիյուն և Զիսյան չափազանց երիտասարդ էին նրան ուղեկցելու համար: Կարելի է ենթադրել, որ Կոնֆուցիոսի սիրելի սաներից ունանց անունները չեն հիշատակվել ասույթը գրառող մարդկանց անփութության պատճառով:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 4 子曰：“回也非助我者也，于吾言无所不说。”

Ուսուցիչն ասաց. «Հուեյը չի օգնում ինձ, չի հակառակվում իմ խոսքերին»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Հուեյն ինձ օգնական չէ, չի ընդդիմանում իմ խոսքերին»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 5 子曰：“孝哉闵子骞！人不间于其父母昆弟之言。”

Ուսուցիչն ասաց. «Ինչպիսի որդիական պատկառանք ունի Մին Զիյանը: Մարդիկ նրա մասին նույնն են ասում, ինչ նրա ծնողներն ու եղբայրները»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Մին Զիյանը հիրավի առանձնանում է իր որդիա-

Կոնֆուցիոս. Զրույցներ

կան պատկառանքով: Ոչ ոք չի կարող առարկել, եթք նրա ծնողներն ու եղբայրները գովարանում են նրան»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 6 南容三复白圭①， 孔子以其兄之子妻之。

Նան Ժունը երեք անգամ կրկնեց սպիտակ հասպիսե սալիկի մասին, Քունձին նրան կնության տվեց իր ավագ եղբոր դստերը:

[Փոխադրությունը]

Նան Ժունը մի քանի անգամ արտասանեց սպիտակ հասպիսե սալիկի մասին տողերը, ինչից հետո Քունձին նրան կնության տվեց իր ավագ եղբոր դստերը:

[Մեկնությունը]

① «白圭» ~ «սպիտակ հասպիսե սալիկ». Ակատի ունի «Երգերի գրքի» քառատողերից մեկն, ուր ասվում է.

- Վճառված է սպիտակ հասպիսե սալիկը,
Այն կարող ես հղկելով շտկել,
Բայց խոսքդ սխալ, ինչ էլ որ անես,
Զես կարող շտկել...

Ենթադրվում է, որ Կոնֆուցիոսը Նան Ժունին համարում էր խելամիտ ու զգուշավոր, խստումնալից սան, այդ պատճառով էլ կնության տվեց նրան իր ավագ եղբոր՝ Մենիիի դստերը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 7 季康子问①：“弟子孰为好学？”孔子对曰：“有颜回者好学，不幸短命死矣， 今也则亡。”

Զի Քանձին հարցրեց.

- Սաներից ով էր ամենաջանասերը:
- Քոնձին պատասխանեց.
- Յան Հուկը էր ամենքից շատ սիրում սովորել: Ավաղ, նրա կյանքը կարծ էր, մահացավ, հիմա չկան այդպիսիք:

[Փոխադրությունը]

Զի Քանձին հարցրեց.

- Քո սաներից ով էր ամենաջանասերը:
- Քոնձին պատասխանեց.
- Յան Հուկ անունով մի սան ունեի, նա բոլորից շատ էր սիրում սովորել: Ցավոք, նա կարծ կյանք ունեցավ, այժմ այլս չկան այդպիսիք:

[Մեկնությունը]

① «季康子问» ~ «Զի Քանձին հարցրեց». նույնաբովանդակ է «քրուցների» վեցերորդ գլուխ երրորդ ասուլյթը. նոյն հարցը Կոնֆուցիոսին տալիս էր Լու տերության Այ իշխանը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 8 颜渊死，颜路①请子之车以为之②椁③。子曰：“才不才，亦各言其子也。鲤④也死，有棺而无椁。吾不徒行以为之椁。以吾从大夫之后⑤，不可徒行也。”

Յան Յուանը մահացավ և Յան Լուն խնդրեց Ռւսուցից վաճառել կառը՝ քարատապանի համար: Ռւսուցիչն ասաց. «Շնորհալի են, թե ոչ, հոգում են զավակներին: Լին ևս մահացել է, թաղվել դագաղով՝ առանց քարատապանի: Ես ոտքով չեմ քայլի քարատապանի պատճառով: Ես հետևում եմ աստիճանավորներին, չի պատշաճում ոտքով քայլելը»:

[Փոխադրությունը]

Յան Յուանը մահացավ և նրա հայրը՝ Յան Լուն, խնդրեց Քունձիին վաճառել իր կառք՝ քարատապան ձեռք քերելու համար: Քունձին ասաց. «Ընդրհալի են նրանք, թե ոչ, հայրերը հոգում են զավակներին: Իմ որդին՝ Լին ևս մահացել է և թաղվել դագաղով՝ առանց քարատապանի: Ես չեմ կարող վաճառել կառք՝ քարատապան գնելու համար: Ես տերունական աստիճանավոր եմ եղել, ինձ չի պատշաճում ուրով քայլելը»:

[Մեկնությունը]

① «*顏路*» - Յան Լու. Յան Յուանի հայրն էր: «Քունձիի սաների պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ Յան Լուն Կոնֆուցիոսի առաջին սաներից մեկն էր, հայտնի նաև Զիլու և Յան Ույուն անուններով:

② «*之*» - «Նրա, դրա». ցույց է տալիս պատկանելություն, կիրառված է նույնիմաստ «*其*» գաղափարագրի փոխարեն:

③ «*檜*» - «քարատապան», «վիմատապան». հնում տոհմիկ և հարուստ մարդկանց հուղարկավորելիս օգտագործում էին երկու դագաղ՝ «մերքին» և «արտաքին»: Սովորական փայտե դագաղը տեղադրվում էր քարատապանի մեջ:

④ «*鲤*» - Լի. Կոնֆուցիոսի որդին էր, հայտնի նաև որպես Քուն Լի և Զի Բոյու: Մահացել է հիսուն տարեկանում, երբ Կոնֆուցիոսը յոթանատուն տարեկան էր:

⑤ «*以吾从大夫之后*» - քառացի՝ «Ես հետևում եմ աստիճանավորներին». Կոնֆուցիոսը Լու տերության աստիճանավոր էր եղել, սակայն այդ ժամանակ նա արդեն մի քանի տարի էր, ինչ հեռացված էր պաշտոնից: «Ես հետևում եմ աստիճանավորներին» արտահայտությունը ունի «Ես հասարակական դիրք ունեմ», «Ես աստիճանավոր եմ եղել» իմաստները:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 9 颜渊死。子曰：“噫！天丧予！天丧予①！”

Յան Յուանը մահացավ։ Ուսուցիչն ասաց. «Օ՛, Երկինքն ինձ կորուստ պատճառեց։ Երկինքն ինձ կորուստ պատճառեց»։

[Փոխադրությունը]

Երբ Յան Յուանը մահացավ, Քունձին վշտակի բացականչեց. «Օ՛, Երկինքն ինձ մահն է ուզում։ Երկինքն ինձ մահն է ուզում»։

[Մեկնությունը]

① «天丧予» - բառացի՝ «Երկինքն ինձ կորուստ պատճառեց»։ Յան Յուանը, որ հայտնի էր նաև Յան Հուեյ անունով, Զիլուի որդին էր և Կոնֆուցիոսի ամենասիրելի սաներից մեկը։ Այդ էր պատճառը, որ Կոնֆուցիոսը շատ ծանր էր տանում նրա մահը։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 0 颜渊死，子哭之恸①。从者曰：“子恸矣！”曰：“有恸乎？非夫人之为恸②而谁为？”

Յան Յուանը մահացավ և Ուսուցիչը վշտից արտասվում էր։ Սաներն ասացին.

- Ուսուցիչ, բավ է ողբավ։

Նա ասաց.

- Բավ է ողբավ։ Եթե նրա համար չողբամ, հապա էլ ո՞մ համար։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Եթք Յան Յուանը մահացել էր, Քունձին վշտից աղիողորմ արտաս-
փում էր: Սաներն ասացին նրան.

- Ուսուցիչ, այրակես մի արտասվեր:

Նա ասաց.

- Ինչպես չարտասվեմ: Եթե ոչ Յան Յուանի, հապա էլ ու՞ն համար
արտասվեմ:

[Մեկնությունը]

① «恸» - «Վիշտ»: Զեն Սյուանի «Նոթերում» նշվում է հետևյալը.
«Վիշտն այլայլում է նույնիսկ ամենախմասուններին»:

② «非夫人之为恸» - «Եթե նրա համար չողբամ». ասույթում
արտացոլված է Կոնֆուցիոսի յուրահատուկ վերաբերմունքը սիրելի
սանի նկատմամբ:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 1.1 1 颜渊死，门人欲厚葬①之。子曰：“不可。”门人厚葬之。
子曰：“回也视予犹父也，予不得视犹子也。非我也，夫二三子也。”

Յան Յուանը մահացավ և սաները ցանկանում էին շրեղորեն հու-
ղարկավորել: Ուսուցիչն ասաց.

- Չի կարելի:

Սաները շրեղորեն հուղարկավորեցին:

Ուսուցիչն ասաց.

- Հուկյն ինձ նայում էր՝ ինչպես հորը, ես չկարողացա նրան նայել՝
ինչպես որդուս: Ես չեմ մեղավոր, այլ սաներս:

[Փոխադրությունը]

Երբ Յան Յուանը մահացավ, Քոնձիի սաները ցանկանում էին շքեղորեն հուղարկավորել նրան: Քոնձին ասաց.

- Զի կարեի:

Սակայն սաները շքեղ հուղարկավորություն արեցին:

Ուսուցիչն ասաց.

- Յան Հուեյ, դու ինձ վերաբերում էիր՝ ինչպես հորդ, սակայն ես չկարողացա քեզ հոգալ՝ ինչպես որդուս: Մեղքն իմը չէ, այլ բարեկամներինդ:

[Մեկնությունը]

① «厚葬» - «շքեղ հուղարկավորություն». Կոնֆուցիոսը կարծում էր, որ ամեն ընտանիք պիտի հուղարկավորության համար ծախսեր անի ըստ իր եկամուտների: Յան Զիի ընտանիքը աղքատ էր և չէր կարող շքեղ հուղարկավորություն կազմակերպել, այդ պատճառով էր Կոնֆուցիոսը դեմ էր, որ սաներն այդ անեին, այդ պատճառով էլ հանդիմանեց նրանց:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 2 季路问事鬼神。子曰：“未能事人，焉能事鬼？”曰：“敢①问死。”曰：“未知生，焉知死？”

Զիլուն հարցուեց ոգիներին ու աստվածներին ծառայելու մասին: Ուսուցիչն ասաց.

- Զենք կարող ծառայել մարդկանց, ինչպես ծառայենք ոգիներին: Զիլուն ասաց.

- Համարձակվում եմ հարցնել մահվան մասին:

Ուսուցիչն ասաց.

- Զգիտենք, թե ինչ է կյանքը, որտեղից իմանանք, թե ինչ է մահը:

Կոնֆուցիոն. Չրույցներ

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց, թե ինչպես ծառայել ողիներին ու աստվածներին։ Քունձին ասաց.

- Մենք չենք կարող ծառայել մարդկանց, ինչպես ծառայենք ողիներին։

Երբ Զիլուն հարցրեց մահվան մասին, Քունձին ասաց.

- Մենք չգիտենք, թե ինչ է կյանքը, որտեղից իմանամք, թե ինչ է մահը։

[Մեկնությունը]

① «敢» - «համարձակվել», «հանդգնել», «խիզախել». այս գաղափարագրով նշվում է հարգալից դիմելածնը, այսինքն «敢问死» արտահայտությունը կարելի է փոխադրել որպես «համարձակվում եմ հարցնել մահվան մասին» կամ «թույլ տվեք հարցնել մահվան մասին»։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 3 阎子侍侧， 阖閔如也； 子路， 行行①如也； 冉有、子贡， 倏忽如也。子乐。“若由也， 不得其死然②。”

Ուսուցչի կողքին Մինը լի էր ակնածանքով, Զիլուն խրոխտ էր, ժամյուն և Զիգունը սիրալիր էին։ Ուսուցիչն ուրախանում էր։ Սակայն ասաց.

- Յոուի նմանները իրենց մահով չեն մահանում։

[Փոխադրությունը]

Քունձիի ներկայությամբ Մին Զիցյանը լի էր ակնածանքով, Զիլուն խրոխտ ու խիզախ տեսք ուներ, իսկ ժամյուն և Զիգունը քաղաքա-

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

վարի ու ջերմ էին: Քունձին ուրախանում էր նրանցով: Սակայն ասաց.
- Զուն Յոուի նմանները, վախենամ, լավ վախճան չունենան:

[Մեկնությունը]

① «行行» - «խրոխտ». հնում այս գաղափարագիրը կարդացվում էր «հան»:

② «不得其死然» - «իրեմաց մահով չեն մահանում»: Ենթադրվում է, որ արտահայտությունը կիրառված է «լավ վախճան չունենալ» իմաստով, այսինքն՝ սպանվել մարտի դաշտում, դավաճանի դաշույնից կամ թույնից: «Զույի նորեկում» նշվում է հետևյալը. «Սի իշխանը խաղարթյամբ հեռացավ կյանքից իր կառավարման տասնիներորդ տարում», իսկ Այ իշխանը իր կառավարման տասնվեցերորդ տարում «մահացավ ոչ իր մահով»:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՌՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 4 鲁人①为长府。闵子骞曰：“仍旧贯，如之何？何必改作？”子曰：“夫人不言，言必有中。”

Լուի բնակիչները վերակառուցում էին Զանֆուն: Մին Զիցյանն ասաց.

- Իսկ եթե հին ձևով մնար, ի՞նչ կլիներ: Ինչո՞ւ փոխել:

Ռւսուցիչն ասաց.

- Այս այրը քչախոս է, բայց միշտ ձիշտ է խոսում:

[Փռխադրությունը]

Լուի բնակիչները վերակառուցում էին Զանֆու կոչվող գանձարանը: Մին Զիցյանն ասաց.

- Իսկ եթե հին ձևով թողեին, ի՞նչ կլիներ: Ինչի՞ համար են փոխում:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Քունձին ասաց.

- Այս այրը շատ չի խոսում, բայց միշտ ծշմարտությունն է ասում:

[Մեկնությունը]

① «魯人» - «Լուի բնակիչներ». կա տեսակետ, որ արտահայտությունը վերաբերում է ոչ թե Լու տերության հպատակներին, այլ ճախարապետին, ում հրամանով վերակառուցվում էր գանձարանը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՒՄԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1.1.5 子曰：“由之瑟①奚为于丘之门？”门人不敬子路。子曰：“由也升堂矣，未入于室②也。”

Ուսուցիչն ասաց.

- Ինչո՞ւ է Յոռուն սե նվազում Յյուի դարպասների մոտ:
Սաները դադարեցին հարգել Զիլուին:

Ուսուցիչն ասաց.

- Յոռուն բարձրացել է սրահ, սակայն դեռ չի մտել ներքին սենյակ:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Զուն Յոռու, ինչո՞ւ ես նվազում դարպասներիս մոտ:

Քունձիի սաները դադարեցին հարգել Զիլուին:

Քունձին ասաց.

- Այո, նա ունի գիտելիքներ, սակայն դրանք դեռ բավականաչափ հաստատուն չեն:

[Մեկնությունը]

① «瑟» - «սե». իին լարային երաժշտական գործիք: Որոշ աղբյուրներ նշում են, որ Կոնֆուցիոսին զայրացրել է ոչ թե նվազելն ընդհանրապես, այլ այն, ինչ նվազում էր Զիլուն. դա հյուսիսի ռազմատեսնչ ցեղերից մեկի երգերից էր:

② «由也升堂矣，未入于室» - «Յոուն բարձրացել է սրահ, սակայն դեռ չի մտել ներքին սենյակ». արտահայտությունը փոխաբերական իմաստ ունի: «堂» գաղափարագիրը ունի «սրահ» իմաստը, ինչը խորհրդանշում է գիտելիքների միջին մակարդակը (նախնական մակարդակը նշվում էր «入」՝ արտահայտությամբ՝ «մտնել դարպասներից»), իսկ «室» գաղափարագրով նշվում էր «ներքին սենյակը», որ մտնելու իրավունք ունին միայն տաճարության համար: Դա խորհրդանշում էր գիտելիքների բարձր մակարդակը:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՇԻ-ԸՄԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1.1.6 子贡问：“师与商也孰贤？”子曰：“师也过，商也不及。”曰：“然则师愈与？”子曰：“过犹不及。”

Զիգունը հարցրեց.

- Ո՞վ է առավել առաքինի՝ Շին, թե՛ Շանը:

Ուսուցիչն ասաց.

- Շին անցնում է, Շանը չի հասնում:

- Ուրեմն Շին առավել առաքինի է, հարցրեց Զիգունը:

Ուսուցիչն ասաց.

- Անցնելը չհասնելուց լավ չէ:

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց Քոնձին.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Ո՞վ է ավելի առաքինի՝ Զիջանը,թե՞ Զիսյան:
Քունձին ասաց.
- Զիջանը չափից շատ է ջանում, իսկ Զիսյան թերանում է:
- Ուրեմն Զիջանը ավելի՝ առաքինի է, - հարցրեց Զիգունը:
Քունձին ասաց.
- Չափից շատ ջանալը թերանալուց լավ չէ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 7 季氏富于周公①, 而求也为之聚敛而附益之②。子曰：
“非吾徒也。小子鸣鼓而攻之， 可也。”

Զիշին ավելի հարուստ էր, քան Զոռոի իշխանը, և Ցյուն բազմապատկում էր նրա հարստությունը՝ ավելացնելով հարկերը: Ուսուցիչն ասաց.

- Այլս իմ սանը չէ: Զավակներս, կարող եք թմբուկ զարկելով հարձակվել նրա վրա:

[Փոխադրությունը]

Զիշին ավելի շատ փող ուներ, քան Զոռոի իշխանը, և Ժան Ցյուն բազմապատկում էր նրա հարստությունը՝ ավելացնելով հարկերը: Քունձին ասաց.

- Ժան Ցյուն այլս մեզմից մեկը չէ: Զավակներս, կարող եք հարձակվել նրա վրա՝ թմբուկ զարկելով:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «周公» - «Զոռոի իշխան»: Երկու տեսակետ կա. համաձայն առաջինի՝ նկատի ունի Զոռոյի իշխան Դամին: Ըստ Երկրորդ տեսակետի՝ նկատի ունի Զոռու տերության բարձրաստիճան պաշտոնյաների՝ Հեյ Զյանին և Յուե Զիին:

② «聚 敗 而 附 益 之 » ~ «քազմապատկում էր հարստությունը՝ ավելացնելով հարկերը». ըստ «Զույի նորթերի»՝ Կոնֆուցիոսի սան Ժան Ֆրանսուա Տառի ծառայում էր աստիճանավոր Զիշիին, ում հրամանով էլ հարկերը պիտի ավելացվեին: Ժան Ֆրանսուա այդ քայլի նպատակահարմարության մասին հարցրել էր Կոնֆուցիոսին: Վերջինս խորհուրդ էր տվել Ժան Ֆրանսուա չավելացնել հարկերը, գավառակի բնակիչների հոգսը չծանրացնելու համար: Սակայն Ժան Ֆրանսուա անտեսեց ուսուցչի խոսքը և հարկերն ավելացան: Ուստի Կոնֆուցիոսը ոչ միայն հրապարակայնորեն հրաժարվեց իր սանից, այլև հրամայեց իր մերձավոր սաներին հարձակվել դավաճանի վրա: Սա վկայում է այն մասին, որ կոնֆուցիականությունը դեմ էր ժողովրդի կամայական շահագործմանը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 8 柴①也愚， 参也鲁， 师也辟②， 由也淳。

Չայլ հիմար է, Շենը՝ պարզամիտ, Շին՝ անզիջում, Յոում՝ անտաշ:

[Փոխադրությունը]

Գառ Չայլ հիմար է, Ձեն Շենը՝ պարզամիտ, Զուան Սունչին՝ ծալրահեղ է, Զունյոում՝ անտաշ:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «柴» - Չայլ. Կոնֆուցիոսի սանն էր, հայտնի նաև որպես Գառ Չայլ: Կոնֆուցիոսից երիտասարդ էր երեսուն տարով (ծնվել է մթա. 521 թվականին):

② «辟» - «մերժողական», «անզիջում». գաղափարագիրը բավականին լայն կիրառություն ունի «Զույի նորթերում» և Հուան Շիսանի ««Զրուցների» մեկնություններում», կիրառվում է առավելապես «ծայրահեղ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 1 9 子曰：“回也其庶①乎，屡空②。赐不受命③，而货殖焉，亿则屡中。”

Ուսուցիչն ասաց. «Հուեյը գրեթե հասել է կատարելության, սակայն հաձախն է կարիքի մեջ լինում: Ցին չենթարկվեց ձակատագրին, հարստանում է օրեցօր և գրեթե միշտ ձիշտ է հաշվարկներում»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Յան Հուեյն իր առաքինության մեջ գրեթե հասել է կատարելության, սակայն չքավոր է և հաձախն է կարիքի մեջ լինում: Իսկ Դուաննուն չենթարկվեց ձակատագրի կամքին, հարստություն է դիզում և գրեթե չի սխալվում իր հաշվարկներում»:

[Մեկնությունը]

① «庶» ~ «գրեթե». գաղափարագիրը բավականին հաձախն է հանդիպում «Չուոյի նորթերում», «Պատմագրության» մեջ և այլ հին աշխատություններում:

② «空» ~ բառացի՝ «դատարկ». հնում կիրառվել է նաև «կարիք», «չքավորություն», «աղքատություն» իմաստներով, որպես «貧» և «窮» գաղափարագրերի հոմանիշ:

③ «賜不受命» ~ «Ցին չենթարկվեց ձակատագրին». այս արտահայտությունը տարատեսակ մեկնաբանությունների առիթ է տվել՝ գերազանցապես «命»՝ «ձակատագրի» գաղափարագրի պատճառով: Ունաճը կարծում էն, որ այդ գաղափարագիրը կիրառված է «ուսմունք» իմաստով: Այսինքն՝ Ցին հեռացավ ուսմունքից և սկսեց կարևորել կյանքի նյութական կողմը: «Չուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ նշվում է, որ Ցին (հայտնի նաև որպես Չիզուն և Դուաննու), Կոնֆուցիոսից հեռանում և ծառայության է անցնում Վեյ

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

տերությունում, այնուհետև թողնում է ծառալությունն ու սկսում առևտով զբաղվել: Որոշ մեկնողներ, մասնավորապես, Հուան Շին և Զու Մին, կարծում էին, որ Կոնֆուցիոսը «՛՛» գաղափարագիրը գործածել է «Երկնքի կամք» իմաստով: Երկու տեսակետներն էլ խելամիտ են և դժվար է նախընտրել դրանցից մեկը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 0 子张问善人之道。子曰：“不践迹，亦不入于室①。”

Զիջանը հարցրեց բարի մարդու Ուղու մասին: Ուսուցիչն ասաց. «Զիքայլում տրորված արահետով, սակայն չի մտնում ներքին սենյակներ»:

[Փոխադրությունը]

Զիջանը հարցրեց, թե ինչպիսին է բարի մարդը: Ուսուցիչն ասաց. «Բարի մարդը չի քայլում այլոց տրորած արահետներով, սակայն դժվարանում է կատարելագործվել ուսմունքում»:

[Մեկնությունը]

① «Բարի մարդ» արտահայտությունը «Զրույցներում» Կոնֆուցիոսը գործածում է երեք անգամ. Վերոհիշյալ ասույթում, ինչպես նաև յոթերորդ գլխի քսանվեցերորդ ասույթում և տասներեքերորդ գլխի տասնմեկերորդ ասույթում:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 1 子曰：“论笃是与①，君子者乎？色庄者乎？”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Անկեղծ դատողություններ անողը ազնվայր է արդյոք: Թե՞ միայն ձևացնում է»:

[Փռխադրությունը]

Քոնձին ասաց. «Արդար ու շիտակ դատողություններ անողը ազնվայր է արդյոք: Թե՞ ընդամենը ձևանում է այդպիսին»:

[Մեկնությունը]

① «论笃是与» ~ «Անկեղծ դատողություններ անողը». Կոնֆուցիոսը նկատի ուներ, որ մարդու էությունը ձանաչելու համար բավական չէ լսել նրա դատողությունները և հետևել վարքի արտաքին դրսնորումներին:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 2 子路问：“闻斯行诸？”

子曰：“有父兄在，如之何其闻斯行之？”

冉有问：“闻斯行诸？”

子曰：“闻斯行之。”

公西华曰：“由也闻斯行诸，子曰，‘有父兄在’；求也闻斯行诸，子曰，‘闻斯行之’。赤也惑，敢问。”

子曰：“求也退，故进之；由也兼人①，故退之。”

Ձիլուն հարցրեց.

- Անձն այն, ինչ լսում եմ:

Ուսուցիչն ասաց.

- Ունես հայր և ավագ եղբայր, ինչպես կարող ես անել այն, ինչ լսում ես:

Ժամանուն հարցրեց.

- Անձն այն, ինչ լսում եմ:

Ուսուցիչն ասաց.

- Արա այն, ինչ լսում ես:

Գունդի Հուան ասաց.

- Յոուն հարցրեց. «Անեմ այն, ինչ լսում եմ»: Ուսուցիչ, դու ասացիր. «Ունես հայր և ավագ եղբայր, ինչպես կարող ես անել այն, ինչ լսում ես»: Երբ Ցյուն հարցրեց նույնը, ասացիր. «Արա այն, ինչ լսում ես»: Համարձակվում եմ հարցնել, ինչո՞ւ տարբեր պատասխաններ տվեցիր:

Ուսուցիչն ասաց.

- Ցյուն դանդաղում է, խթանում եմ, Յոուն շատ է ջանում, զսպում եմ:

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց.

- Պե՞տք է ամեմ այն, ինչ լսում եմ:

Գունդին ասաց.

- Դու հայր և ավագ եղբայր ունես, ինչպես կարող ես անել այն, ինչ լսում ես:

Ժանյուն հարցրեց.

- Պե՞տք է ամեմ այն, ինչ լսում եմ:

Ուսուցիչն ասաց.

- Արա այն, ինչ լսում ես:

Գունդի Հուան ասաց.

- Երբ Զումյուն հարցրեց. «Պե՞տք է ամեմ այն, ինչ լսում եմ», դու ասացիր. «Դու հայր և ավագ եղբայր ունես, ինչպես կարող ես անել այն, ինչ լսում ես»: Երբ Ժան հարցրեց նույնը, ասացիր. «Արա այն, ինչ լսում ես»: Ժոոյլ սոոր հարցնել, ինչո՞ւ տարբեր պատասխաններ տվեցիր նրանց:

Գունդին ասաց.

- Ժան Ցյուն դանդաղ է գործում, և ես խրախուսում եմ նրան, Զումյուն չափից շատ է ջանում, և ես զսպում եմ նրան:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «兼人» - բառացի՝ «ջանասեր». Քուն Անգոն և Զու Սին իրենց մեկնություններում այս արտահպտությունը փոխադրել են որպես «հաղթող», իսկ Զան Զինֆուն առաջարկել է «խիզախ մարդ» տարրերակը, սակայն դրանք արժանահավատ փոխադրություններ չեն:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 3 子畏于匡，颜渊后。子曰：“吾以女为死矣。”曰：“子在，回何敢死？”

Երբ Ուսուցիչն սպառնում էին Քուանում, Յան Յուանը հետ ընկավ: Ուսուցիչն ասաց.

- Կարծում էի՝ դու մահացել ես արդեն:
- Նա ասաց.
- Ուսուցիչը ողջ է, Հուեյն ինչպես կհամարձակվեր մեռնել:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Երբ Քունձին սաների հետ պաշարված էր Քուանում, Յան Յուանը վերջապես եկավ: Քունձին ասաց.

- Կարծում էի՝ դու մահացել ես արդեն:
- Նա ասաց.
- Ուսուցիչը ողջ է, ես ինչպես կհամարձակվեի մեռնել:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 4 季子然①问：“仲由、冉求可谓大臣与？”子曰：“吾以子为异之问，曾由与求之间。所谓大臣者，以道事君，不可则止。今由与

求也，可谓具臣矣②。”曰：“然则从之者与？”子曰：“弑父与君，亦不从也。”

Զի Զիժանը հարցրեց.

- Զունյոուն և Ժան Ցյուն կարող են համարվել մեծ նախարարներ:
Ուսուցիչն ասաց.
- Ես կարծում էի, որ կիարցնես այլոց մասին, բայց հարցրեցիր Յոնյի և Ցյուի մասին: Մեծ նախարարներ են կոչում նրանց, որ Ուդուն հավատարիմ ծառայում են տիրակալին և հեռանում են, երբ այլս անկարող են ծառայել: Իսկ Յոնն և Ցյոն կարող են համարվել շնորհալի նախարարներ:
- Նշանակում է՝ նրանք ենթարկվող կիխնեն:
Ուսուցիչն ասաց.
- Հայրասպան և տիրասպան չեն լինի:

[Փոխադրությունը]

Զի Զիժանը հարցրեց.

- Զունյոուն և Ժան Ցյուն կարող են մեծ նախարարներ լինել:
Քունձին ասաց.
- Ես կարծում էի, որ կիարցնես այլ մարդկանց մասին, բայց դու հարցրեցիր Յոնյի և Ցյուի մասին: Մեծ նախարարներ են կոչում նրանց, որ հավատարմությամբ ծառայում են տիրակալին՝ արդար ու շիտակ միջոցներով: Երբ այլս անկարող են ծառայել՝ հրաժարվում են պաշտոնից: Իսկ Յոնն և Ցյոն կարող են դառնալ նշանակալի տաղանդներ ունեցող նախարարներ:
- Նշանակում է՝ նրանք ենթարկվող կիխնեն,՝ կրկին հարցրեց Զի Զիժանը:
- Կունձին ասաց.
- Նրանք երբեք հայրասպան և տիրասպան չեն դառնա:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «季子然» - Զի Զիժան. նախարար Զի տոհմից, որ ծառայության էր վերցրել Զունողուին և ժան Ցյուին: Նրա մասին նաև հիշատակվում է «Զունմիի սաների պատմագրության» մեջ, որը նա գրեթե նույն հարցն է տալիս Զիլուի մասին:

② Այս ասույթը իր բնույթով նման է «Զրույցների» հինգերորդ գլուխ ութերորդ ասույթին, որը Մեն Ուրոն հարցնում էր Կոնֆուցիոսին իր սաների ընդունակությունների վերաբերյալ:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 1 . 2 5 子路使子羔为费宰。子曰：“贼夫人之子。”子路曰：“有民人焉，有社稷焉，何必读书，然后为学？”子曰：“是故恶夫佞者。”

Զիլուն ուղարկեց Զիգաոյին Ֆեյ՝ որպես կառավարիչ: Ուսուցիչն ասաց.

- Այդպես կործանում ես ուրիշի որդուն:

Զիլուն ասաց.

- Այնտեղ մարդիկ կան, հողի ու հատիկի աստվածներ կան. մի՞թե ուսումը միայն զրքեր կարդալն է:

Ուսուցիչն ասաց.

- Ահա թե ինչու եմ ասում զրախոսներին:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Զիլուն հրամայեց Զիգաոյին գնալ Ֆեյյան՝ որպես գավառապետ: Քունձին ասաց.

- Այդպես կկործանես ուրիշի որդուն:

Զիլուն ասաց.

- Այնտեղ հպատակներ կան, հող կա ու աձում է հինգ տեսակի

հացահատիկ: Մի՞թե միայն զբքեր կարդալն է համարվում ուսուցում: Քունձին ասաց.

- Ահա թե ինչո՞ւ տանել չեմ կարողանում սուր լեզու ունեցող մարդկանց:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

11.2.6 子路、曾晳①、冉有、公西华侍坐。子曰：“以吾一日长乎尔，毋吾以也。居②则曰：‘不吾知也！’如或知尔，则何以哉？”子路率尔而对曰：“千乘之国，摄乎大国之间，加之以师旅，因之以饥馑；由也为之，比③及三年，可使有勇，且知方也。”夫子哂之。“求！尔何如？”对曰：“方六七十④，如⑤五六十，求也为之，比③及三年，可使足民。如其礼乐，以俟君子。”“赤！尔何如？”对曰：“非曰能之，愿学焉。宗庙之事，如会同，端章甫⑥，愿为小相⑦焉。”“点！尔何如？”鼓瑟希，铿尔，舍瑟而作⑧，对曰：“异乎三子者之撰。”子曰：“何伤乎？亦各言其志也。”曰：“莫⑨春者，春服既成⑩，冠者五六人，童子六七人，浴乎沂⑪，风乎舞雩⑫，咏而归。”夫子喟然叹曰：“吾与点也！”三子者出，曾晳后。曾晳曰：“夫三子者之言何如？”子曰：“亦各言其志也已矣。”曰：“夫子何哂由也？”曰：“为国以礼，其言不让，是故哂之。”“唯⑬ 求则非邦也与？”“安见方六七十如五六十而非邦也者？”“唯赤则非邦也与？”“宗庙会同，非诸侯而何？赤也为之小，孰能为之⑭ 大？”

Զիլոն, Զենսին, Ժանլուն և Գունսի Հուան նատած սպասում էին: Ուսուցիչն ասաց.

- Ես մեծ եմ ձեզնից և այլսա չեմ ծառայում: Միշտ ասում եք. «Մեզ չեն ձանաշում»: Իսկ ի՞նչ պիտի անեփք, որ ձեզ ձանաշեն:

Զիլոն շտապեց պատասխանել.

- Հազար մարտակառք մարտի դաշտ հանող տերություն ունենայի,

Կոնֆուցիոս. Զրույցներ

որ շրջապատված կլիներ մեծ տերություններով, տառապեր պատերազմներից ու քաղցից, ես երեք տարվա ընթացքում մարդկանց խիզախ կդարձնեի և ձանաչել կտայի ուղին:

Ուսուցիչը ժպտաց և ասաց.

- Ցյու՝ Դու ի՞նչ կանեիր:

Նա ասաց.

- Վաթում-յոթանասուն լի հոդ ումենայի, կամ հիսում-վաթում, երեք տարում մարդկանց բարգավաճում կրերեի: Իսկ ծեսերի և երաժշտության համար կսպասեի ազնվայրի:

- Չի, դու ի՞նչ կանեիր:

- Եթև կարող ասել, թե ընդունակ եմ: Կցանկանայի էի սովորել, որպեսզի նախնյաց տաճարում կամ հարևան տիրակալների ընդունելության ժամանակ ծխական հանդերձ հազնեի և սպասավորեի որպես կրտսեր աստիճանավոր:

- Դյան, իսկ դու ի՞նչ կանեիր:

Երբ լրեցին նրա նվազած սեի հնչյունները, նա ասաց.

- Ին ցանկությունները տարբեր են երեք սաների ասածներից:

Ուսուցիչն ասաց.

- Ի՞նչ վճառ դրանից: Ամեն մեկը խոսում է իր ձգտումների մասին:

- Երբ վերջանում է գարունը, և բոլորը թեթև հագուստ են հագնում, իինգ-վեց խույր կրող մարդկանց և վեց-յոթ պատանիների հետ կլողայի Յիի ջրերում, քամին կպարեր անձրևի զոհասեղանի շուրջ, և կերգեի վերադառնախիւ:

Ուսուցիչը հոգոց հանեց և ասաց.

- Ես Դյանի հետ կլինեի:

Երեք սաները հեռացան, վերջում մնաց Ձեմսին: Նա հարցրեց.

- Ինչպիսի՞ն էին երեք սաների խոսքերը:

Ուսուցիչն ասաց.

- Նրանցից ամեն մեկը խոսեց իր ձգտումների մասին:

- Հապա ինչո՞ւ ժպտացիր, երբ խոսում էր Յոռուն:

- Տերությունը կառավարում են ծեսերով, իսկ նրա խոսքն անզիջում էր, ուստի ժպտացի,- ասաց նա:

- Իսկ Յյուն մի՞թե չէր խոսում տերության կառավարման մասին:

- Վաթուն-յոթանասուն կամ հիսուն-վաթուն լի հողերը մի՞թե տերություն են,- ասաց նա:

- Մի՞թե Զին չէր խոսում տերության կառավարման մասին:

- Նախնյաց տաձարն ու արքունական ընդունելությունները մի՞թե տերունական գործեր են: Եթե Զին կրտսեր աստիճանավոր դառնա, ապա ովկ կրտսեա ավագ աստիճանավոր:

[Փոխադրությունը]

Զիլուն, Ձենսին, Ժանյուն և Գունսի Հուան նստած էին Քունձիի հետ: Քունձին ասաց.

- Ես մեծ եմ ձեզնից, և այլս չեմ ծառայում տիրակալին: Իսկ դուք միշտ բողոքում եք. «Մեզ չեն ձանաչում»: Եթե ինչ-որ մեկը զնահատեր ձեզ և ծառայության վերցներ, ինչ կանեփ:

Զիլուն պատասխանեց առանց մտածելու.

- Հազար մարտակառք մարտի դաշտ հանող տերություն լիներ, որ շրջապատված կլիներ մեծ տերություններով, դրսից դրան կրայքալին ոստիսի քանակները, ներսից կտառապեր քաղցից: Ես կկարողանայի երեք տարվա ընթացքում ամրացնել տերությունը, մարդիկ կդառնային լիզախ ու կկարողանային ձանաշել ձշմարիսլ:

Քունձին հեզնանքով ժպտաց և ասաց.

- Ժան Յյուն: Դու ի՞նչ կանեփ:

Նա ասաց.

- Վաթուն-յոթանասուն լի հող ունենայի, կամ թեկուզ հիսուն-վաթուն, երեք տարում մարդկանց կյանքը բարօրությամբ կլցնեի և կսպասեի ազնվայրի:

- Գունսի Հուա, դու ի՞նչ կանեփ:

- Չեմ կարող ասել, թե շնորհայի եմ, բայց ցանկանում եմ սովորել, որպեսզի նախնյաց տաճարում կամ հարևան տիրակալների ընդունելության ժամանակ ծիսական հանդերձ ու ուրունքազարդ խույր հագնեի և սպասավորեի որպես ծիսակարգի կրտսեր աստիճանավոր:

- Չեմ Դյան, իսկ դու ինչ կանեիր:

Նա նվազեց երաժշտության վերջնամասը, մի կողմ դրեց սեն, կանգնեց և ասաց.

- Իմ ցանկությունները տարբերվում են երեք սաների ցանկություններից:

Քունձին ասաց.

- Հետո ինչ: Յուրաքանչյուրը խոսում է իր հավակնությունների մասին:

- Գարնան ավարտին՝ երրորդ ամսում, երբ բոլորը թեթև հագուստ են հագնում, հինգ-վեց տղամարդկանց և վեց-յոթ երեխաների հետ կլողայի Յի գետի ջրերում, կլսեի, թե ինչպես է քամին պարում անձրևի զոհասեղանի շուրջ, և կվերադառնայի՝ ողջ ձանապարհին երգեր երգելով:

Քունձին հոգոց հանեց և ասաց.

- Ես համամիտ եմ Ձեն Դյանին:

Զիլուն, Ժանյուն և Գունսի Հուան հեռացան, վերջում մնաց Ձենսին: Նա հարցրեց.

- Ինչպիսի՞ն էին երեք սաների խոսքերը:

Քունձին ասաց.

- Նրանցից ամեն մեկը խոսեց իր հավակնությունների մասին:

- Հապա ինչո՞ւ ժպտացիք, երբ խոսում էր Յոուն:

- Տերությունը կառավարում են ծեսերով, իսկ նրա խոսքն անհամեստ էր, այդ պատճառով էլ ժպտացի, ասաց նա:

- Իսկ Ժան Ֆյուն մի՞թե չէր խոսում տերության կառավարման մասին:

- Ի՞նչ ես կարծում, վաթսուն-յոթանասուն կամ հիսուն-վաթսուն լի հողերը մի՞թե բավական են տերություն համարվելու համար, ասաց Քունձին:

- Մի՞թե Զին չէր խոսում տերության կառավարման մասին:
- Նախնյաց տաճարն ու արքունական ընդունելությունները մի՞թե տերունական գործեր են: Ես Ժպտացի, երբ Զիլուն խոսում էր, ոչ թե այն պատճառով, որ նա անկարող է տերություն կառավարել, այլ նրա խոսքի անհամեստ ձևի պատճառով: Գունսի Հուան հրաշալի գիտի ծեսերը, սակայն ցանկանում է ընդամենը ծիսակարգի կրտսեր աստիճանավոր լինել: Եթե նա կրտսեր աստիճանավոր դառնա, ապա ո՞վ կդառնա ավագ աստիճանավոր:

[Մեկնությունը]

① «曾晳» - Զենսի. հայտնի էր նաև որպես Դյան, Զենշանի հայրն էր, Կոնֆուցիոսի սաներից մեկը:

② «居» - գաղափարագիրը մի շարք իմաստներ ունի, սակայն ասույթում կիրառված է ամենաքիչ հանդիպող իմաստով՝ «միշտ», «ամենօրյա»: Թաճ և Սուճ հարստությունների օրոք գործածական է եղել նոյնիմաստ «平居» ձևով:

③ «比» - ասույթում կիրառված է ժամանակ նշող բառերի հետ, ունի «այսքան ժամանակից հետո» իմաստը:

④ «方六七十» - «վարչուն-լորանասուն լի հող». հնում տարածքի չափման միավոր էր: Ասույթի բնագրում բուն չափման միավորը՝ «լին», գրառված չէ:

⑤ «如» - ասույթում կիրառված է «կամ» իմաստով:

⑥ «端章甫» - «ծիսական հանդերձ». հնում արարողությունների ժամանակ պարտադիր էր հազնել որոշակի հազուստ, այն բաղկացած էր լինում հիմնականում կապայից և խովրից:

⑦ «相» - «աստիճանավոր». հնում այս գաղափարագրով են նշվել արքունիքում զանազան արարողակարգային պաշտոններ գրադեցնող անձինք:

⑧ «舍瑟而作» - բառացի՝ «թողնելով սե նվագելը». ասույթում

կիրառված է «ոտքի կանգնել» իմաստով: Ձեն Դյանը ոտքի կանգնեց, երբ պատասխանում էր ուսուցչի հարցին: Ամենայն հավանականությամբ մնացյալ սաները ևս ոտքի էին կանգնում պատասխանելու ժամանակ, սակայն այդ մասին ասույթում նշված չէ:

⑨ «莫» - բառացի՝ «չկա մեկը, ով...». ասույթում կիրառված է «վերջ», «ավարտ» իմաստով:

⑩ «成» - «փոխվել». նկատի ունի ավելի թերև հագուստ կրել սկսելը:

⑪ «汎» - Յի. գետի անուն է, հոսում է Շանդուն նահանգի Զոռ գավառի հյուսիս-արևելքով, անցնում Ցյուֆույի միջով՝ միանալով Զու գետին:

⑫ «舞雩» - բառացի՝ «պարել անձրևի համար զոհաբերության ժամանակ». ասույթում նկատի ունի ոչ թե բուն արարողությունը, այլ դրա համար հասուկ ստեղծված զոհասեղանը: Այդ մասին հիշատակություն կա նաև «Նոթեր «Գետերի գրքի մասին»» աշխատության մեջ, ուր նշվում է գետերի ափերին հաճախակի հանդիպող երեք ոտնաչափ բարձրությամբ քարեղեն զոհասեղանների մասին:

⑬ «唯» - հաստատական մասնիկ է, սակայն ասույթում դրա կիրառությունը հասկանալի չէ:

⑭ «之» - ունի նույն կիրառությունը, ինչ «其» զաղափարագիրը՝ «նրա», «դրա», «դրանց», «այդպիսին», «ով»:

Գլուխ 12. Յան Յուանը Բնդամենը 24 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 颜渊问仁。子曰：“克己复礼为仁①。一日克己复礼，天下归仁②焉。为仁由己，而由人乎哉？”颜渊曰：“请问其目。”子曰：“非礼勿视，非礼勿听，非礼勿言，非礼勿动。”颜渊曰：“回虽不敏，请事斯语矣。”

Յան Յուանը հարցրեց մարդկայնության մասին։ Ուսուցիչն ասաց.

- Ինք քեզ հաղթահարելն ու ծեսերին վերադառնալը մարդկայնություն է։ Եթե մի օր հաղթահարես ինք քեզ և վերադառնաս ծեսերին, բոլորը Երկնքի տակ կիմանան քո մարդկայնության մասին։ Մարդկայն լինելը քեզնից է կախված, ինչպես կարող է ուրիշներից կախված լինել։

Յան Յուանը հարցրեց.

- Թույլ տուր հարցնել, ինչպես հասնել դրան։

Ուսուցիչն ասաց.

- Հակառակ է ծեսերին՝ մի նայիր, հակառակ է ծեսերին՝ մի լսիր, հակառակ է ծեսերին՝ մի խոսիր, հակառակ է ծեսերին՝ մի արա։

Յան Յուանը ասաց.

- Թեև Հուեյը խելացի չէ, թույլ տուր վարվել այնպես, ինչպես ասացիր։

[Փոխադրությունը]

Յան Յուանը հարցրեց մարդկայնության մասին։ Քունձին ասաց.

- Հաղթահարիր ինքը քեզ և խոսքերդ ու գործերդ համապատասխանեցրու ծեսերին. դա է մարդկայնությունը: Երբ անես այդ ամենը, բոլորը քեզ մարդկային կհամարեն: Մարդկային լինելը կախված է միայն քեզնից, ինչպես կարող է ուրիշներից կախված լինել:

Յան Յուանը հարցրեց.

- Խնդրում եմ ասել, թե ինչպես կարող եմ հասնել դրան:

Ուսուցիչն ասաց.

- Մի նայիր այն ամենին, ինչ հակառակ է ծեսերին, մի լսիր այն ամենը, ինչ հակառակ է ծեսերին, մի խոսիր այն ամենի մասին, ինչ հակառակ է ծեսերին, մի արա այն, ինչ հակառակ է ծեսերին:

Յան Յուանը ասաց.

- Թեև ես ծանրամիտ եմ, կջանամ անել այնպես, ինչպես ասացիր:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «克己复礼» - «Ինքը քեզ հաղթահարելն ու ծեսերին վերադառնալը». «Զուոյի նորթերի» Զատ իշխանի կառավարման տասներկուերորդ տարվա մասին հատվածում նշվում է. «Զուննին ասաց. «Հնում այնքան նպատակամետ էին. ինքը քեզ հաղթահարելն ու ծեսերին վերադառնալը մարդկայնություն էր համարվում»: Այսինքն՝ Կոնֆուցիոն իրականում մեջբերում էր իր նախորդների մոտեցումը:

② «归仁» - «կիամարեն մարդկային». ոնի «մարդկային կանվանեն» իմաստը: Այս մոտեցման կողմնակիցներից էին Մատ Ցիլինը և Զու Սին:

ԿՈՆՖՈՒՅԻՆՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 2 仲弓问仁。子曰：“出门如见大宾，使民如承大祭。己所不欲，勿施于人。在邦无怨，在家①无怨。”仲弓曰：“雍虽不敏，请事斯语矣。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Զուն Գունը հարցրեց մարդկայնության մասին: Ուսուցիչն ասաց.

- Դարպասներից դուքս գալով վարվիր այնպես, ասես հանդիպել ես թանկ հյուրերի, բանեցրու մարդկանց այնպես, ասես մեծ զրհաբերություն ես անում: Ինչը քեզ չես ցանկանա՝ մի անիր ուրիշներին: Այնժամ տերության մեջ գանգատներ չեն լինի, ընտանիքում գանգատներ չեն լինի:

Զուն Գունն ասաց.

- Թեև Յունը խելացի չէ, թույլ տուր վարվել այնպես, ինչպես ասացիր:

[Փռխադրությունը]

Զուն Գունը հարցրեց մարդկայնության մասին: Քունձին ասաց.

- Տնից դուքս գալով քեզ պահիր այնպես, ասես գնում ես դիմավորելու թանկ հյուրերի, բանեցրու մարդկանց լրջորեն և զգուշությամբ, այնպես, ասես մեծ զրհաբերություն ես անում: Ինչը քեզ չես ցանկանա՝ մի անիր ուրիշ մարդկանց: Այնժամ պետության մեջ բողոքներ չեն լինի, ընտանիքում բողոքներ չեն լինի:

Զուն Գունն ասաց.

- Թեև ես ծանրամիտ եմ, կշանամ անել այնպես, ինչպես ասացիր:

[Մեկնությունը]

① «在家» - «ընտանիքում». Լյու Բառնանի «Մեկնություններում» նշվում է. «Տերությունը կառավարում է տիրակալը, ընտանիքում կառավարում են աստիճանավորներն ու ուսայլ այրերը»: Ենթադրվում է, որ «家» գաղափարագրի փոխարեն պետք է լիներ «大夫曰家» արտահայտությունը, ինչը որևէ հիմնավորում չունի:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 3 司马牛①问仁。子曰：“仁者，其言也讱。”曰：“其言也讱，斯谓之仁已乎？”子曰：“为之难，言之得无讱乎？”

Սիմա Նյուն հարցրեց մարդկայնության մասին։ Ուսուցիչն ասաց.

- Մարդկային է նա, որ դժվարանում է խոսել։
- Եթե նա դժվարանում է խոսել, ինչպես կարող է մարդկային լինել։
- Եթե անելը բարդ է, ինչպես կարող է խոսելը դժվար չլինել, ասաց Ուսուցիչը։

[Փռխադրությունը]

Սիմա Նյուն հարցրեց մարդկայնության մասին։ Քունձին ասաց.

- Մարդկային է նա, որ դժվարանում է խոսել։
- Եթե նա դժվարանում է խոսել, ինչպես կարող է մարդկային համարվել, հարցեց Սիմա Նյուն։
- Եթե անելը բարդ է, ինչպես կարող է խոսելը դժվար չլինել, ասաց Քունձին։

[Մեկնությունը]

① «司马牛» - Սիմա Նյու. «Ձուննիի սաների պատմագրության» մեջ նշվում է. «Սիմա Գեն, կոչում էին նաև Նյու։ Շատախոս էր և զրուցաեր, հաճախ էր հարցեր տալիս Քունձիին»։ Նա դատողություններ էր անում առանց երկար մտածելու, այդ պատճառով էր Կոնֆուցիոնը հենց նրան բացատրում մարդկայնության և խոսել դժվարանալու կապը։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 4 司马牛问君子。子曰：“君子不忧不惧。”曰：“不忧不惧，斯谓之君子已乎？”子曰：“内省不疚，夫何忧何惧？”

- Սիմա Նյուն հարցրեց ազնվայրի մասին: Ուսուցիչն ասաց.
- Ազնվայրը չի տագնապում և չի վախենում:
 - Նրան, ով չի տագնապում և չի վախենում, կարելի՞ է ազնվայր համարել:
 - Ներսդ քննելով՝ արատներ չես գտնում, ինչո՞ւ տագնապել, ինչո՞ւ վախենալ, ասաց Ուսուցիչը:

[Փոխադրությունը]

- Սիմա Նյուն հարցրեց ազնիվ մարդու մասին: Քունձին ասաց.
- Ազնիվ մարդը չի անհանգստանում և չի վախենում:
 - Նրան, ով չի անհանգստանում և չի վախենում, կարելի՞ է ազնիվ մարդ համարել:
 - Եթե ինքոդ քեզ քննելով՝ արատներ չես գտնում, ինչո՞ւ անհանգստանալ, ինչո՞ւ վախենալ, ասաց Քունձին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 5 司马牛忧曰：“人皆有兄弟，我独亡①。”子夏曰：“商闻之矣：死生有命，富贵在天。君子敬而无失，与人恭而有礼。四海之内，皆兄弟也—君子何患乎无兄弟也？”

- Սիմա Նյուն մորմոքով ասաց.
- Բոլոր մարդիկ եղբայրներ ունեն, իսկ ես կմեռնեմ միայնակ:
 - Զիսյան ասաց.
 - Լսել եմ, որ կյանքն ու մահը, հարստությունն ու փառքը Երկնքի կամքով են տրվում: Ազնվայրը գործում է պատկառանքով իի ու անթերի, հարգում է մարդկանց և հետևում ծեսերին: Չորս ծովերի սահմաններում բոլորը եղբայրներ են, ազնվայրն ինչո՞ւ պետք է տիսրի եղբայրներ չունենալու համար:

[Փոխադրությունը]

Սիմա Նյուն տիտոր ասաց.

- Բոլոր մարդիկ եղբայրներ ունեն, միայն ես եմ, որ միայնակ եմ:

Ձիպան ասաց.

- Ես լսել եմ, որ կյանքն ու մահը, հարստությունն ու փառքը կախված են Երկնքի կամքից: Ազնիվ մարդը իր գործն անում է լրջորեն ու անսխալ, հարգում է մարդկանց և պահում օրենքները: Երկնայինը մեծ է և իր եղբայրներն ամենուր են, ազնիվ մարդն ինչո՞ւ պետք է տիսրի եղբայրներ չունենալու համար:

[Մեկնությունը]

① «人皆有兄弟，我独亡» - «Բոլոր մարդիկ եղբայրներ ունեն, իսկ ես կմեռնեմ միայնակ». Վարքագիրների մեծամասնությունը նշում է, որ Սիմա Նյուն Սուն տերության աստիճանավոր Հուան Շուոյի եղբայրն էր: Վերջինս խոռվություն էր բարձրացրել իր եղբայրների հետ և պարտություն կրել. Սիմա Նյուն փախել էր, որպեսզի չկիսի եղբայրների ձականագիրը, սակայն նա մահացավ Երկար դեգերումներից հետո (տես՝ «Չուոյի նորերի») Այ իշխանի կառավարման տասնչորսերորդ տարվա նկարագրությունը): Սակայն ես կարծում եմ, որ Կոնֆուցիոսի սան Սիմա Նյուն և Սուն տերության աստիճանավոր Հուան Շուոյի եղբայր Սիմա Նյուն տարբեր մարդիկ են: Մասնավորապես՝ «Չուննիի սաների պատմագրության» մեջ որևէ հիշատակում չկա, որ Սիմա Նյուն Սուն տերության հպատակ է, այդ մասին որևէ տեղեկություն չկա նաև «Չուոյի նորերում»: Քուն Անգոն ևս կարծում է, որ «Չորուցներում» հիշատակվող Սիմա Նյուն և «Չոռոյի նորերում» հիշատակվող Սիմա Նյուն տարբեր մարդիկ են, որովհետև Սիմա Նյուն հայտնի էր նաև որպես Լի, իսկ «Չուննիի սաների պատմագրության» մեջ հիշատակված Սիմա Նյուն անվան տարբերակներից մեկը Սիմա Գենն էր: Եթե հավատամբ Քուն Անգոյին, ապա գոյություն են ունեցել Երկու Սիմա Նյու. Գեն անունով՝ Կոնֆուցիոսի սանը և Լի անունով՝ Հուան Շուոյի եղբայրը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 6 子张问明。子曰：“浸润之谮，肤受之憩，不行焉，可谓明也已矣。浸润之谮，肤受之憩，不行焉，可谓远也已矣。”

Զիշանը հարցրեց լուսավորման մասին։ Ուսուցիչն ասաց.

- Երբ հմտորեն տարածվող զրպարտանքն ու ձանձրալի գանգատ-ները ազդեցություն չեն ունենում, դա կարելի է լուսավորում համարել։ Երբ հմտորեն տարածվող զրպարտանքն ու ձանձրալի գանգատները ազդեցություն չեն ունենում, դա կարելի է նաև հեռատեսություն համարել։

[Փոխադրությունը]

Զիշանը հարցրեց ամենազիտության մասին։ Քունձին ասաց.

- Երբ հմտորեն տարածվող զրպարտանքն ու ձանձրալի գանգատ-ները ազդեցություն չեն ունենում, դա կարելի է ամենազիտություն հա-մարել։ Երբ հմտորեն տարածվող զրպարտանքն ու ձանձրալի գան-գատները ազդեցություն չեն ունենում, դա կարելի է նաև հեռատեսու-թյուն համարել։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 7 子贡问政。子曰：“足食，足兵①，民信之矣。”子 贡曰：“必不得已而去，于斯三者何先？”曰：“去兵。”子贡曰：“必不得已而去，于斯二者何先？”曰：“去食。自古皆有死，民无信不立。”

Զիգունը հարցրեց կառավարման մասին։ Ուսուցիչն ասաց.

- Բավարար սնունդը, բավարար զենքը և մարդկանց վստահությունն է։

Զիգունը հարցրեց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Եթե պետք լիներ այդ երեքից որևէ մեկից հրաժարվել, ո՞րը կընտրեիր:

- Կիրաժարվեի զենքից:

- Եթե պետք լիներ այդ երկուսից որևէ մեկից հրաժարվել, ո՞րը կընտրեիր, - հարցրեց Զիգունը:

- Կիրաժարվեի սննդից: Դեռ հնուց կա մահը, իսկ առանց մարդկանց վստահության անհնար է կանգուն մնալ:

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց տերության կառավարման մասին: Քունձին ասաց.

- Եթե լինի բավարար սնունդ և բավարար զենք, ապա ժողովուրդը կվստահի տիրակալին:

Զիգունը հարցրեց.

- Եթե ստիպված լինեիք թվարկած երեքից որևէ մեկից հրաժարվել, ո՞րը կընտրեիր:

- Կիրաժարվեի զենքից:

- Իսկ եթե ստիպված լինեիք մնացած երկուսից որևէ մեկից հրաժարվել, ո՞րը կընտրեիր, - հարցրեց Զիգունը:

- Կիրաժարվեի սննդից: Դեռ հնուց ոչ չի խուսափել մահից, իսկ առանց ժողովուրդի վստահության տերությունն անկարող է կանգուն մնալ:

[Մեկնությունը]

① «兵» - «զենք». ունի նաև «բանակ», «ռազմական» իմաստները: «Հնգամատյանում», «Զրույցներում», և Մենձի աշխատության մեջ գաղափարագիրը հիմնականում կիրառվում է «զենք» իմաստով, հազվադեպ հանդիպում է նաև «բանակ» կիրառությունը: Գու Յանուն և Յան Ժոույցուն ևս կարծում էին, որ «兵» գաղափարագիրը կոնֆու-

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ցիականության դասական աշխատություններում կիրառվում է «զենք» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.2.8 棘子成①曰：“君子质而已矣，何以文为？”子贡曰：“惜乎，夫子之说君子也②！驷不及舌。文犹质也，质犹文也。虎豹之鞚犹犬羊之鞚。”

Զի Զիշենը ասաց.

- Ազնվայրի համար էությունն ամենն է, ինչի՞ է պետք գիրը:

Զիզունն ասաց.

- Ակսոս, որ Ուսուցիչն այդպես է խոսում ազնվայրի մասին։ Չորս ձիով էլ չես հասնի լեզվին։ Գիրն էություն է, էությունը գիր է։ Վագրի և հովազի կաշիները նման են շան և ոչխարի կաշիներին։

[Փոխադրությունը]

Զի Զիշենը ասաց.

- Ազնիվ մարդու համար բարի էություն ունենալը բավական է, ինչի՞ են պետք ուսումն ու ծեսերը:

Զիզունն ասաց.

- Ցավալի է, որ Ուսուցիչն այդպես է խոսում ազնիվ մարդու մասին։ Քառաձի կառքն էլ չի հասնի լեզվին։ Ուսումն ու ծեսերը նույնքան կարևոր են, որքան բարի էությունը։ Եթե վագրի և հովազի, ինչպես նաև շան ու ոչխարի մորթիներից հեռացնեն բուրդը, ապա դրանց կաշիներն իրարից չի տարբերվի։

[Մեկնությունը]

① «棘子成» - Զի Զիշեն. Վեյ տերության աստիճանավոր էր։ Հնում

աստիճանավորմերին ընդունված էր դիմել նաև «夫子»՝ «ուսուցիչ», այդ պատճառով էլ Զիգունը նրան այդպես է դիմում:

② «惜乎， 夫子之说君子也» - «Ափսոս, որ Ուսուցիչն այդպես է խոսում ազնվայրի մասին». Զու Սիի «Մեկնություններում» այս արտահայտությունը փոխադրված է հետևյալ կերպ. «Ափսոս, որ այդպես է ասում Ուսուցիչը, ով նաև ազնվայր է»: Կա նաև այլ տարբերակ՝ «Այդ խոսքերը հնչեցին ազնվայրի բերանից, և ցավալի է ասել, որ դրանք սխալ են»:

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 9 哀公问于有若曰：“年饥，用不足，如之何？有若对曰：“盍彻乎？”曰：“二，吾犹不足，如之何其彻也？”对曰：“百姓足，君孰与不足？百姓不足，君孰与足？”

Այ իշխանը հարցրեց Յու Ժոյին.

- Քաղցի տարի է, միջոցները չեն բավականացում, ինչ անել:
Յու Ժոն ասաց.
- Գուցն գանձել մեկ տասանորդ:
- Երկուսն եմ գանձում, բայց ինձ չի բավականացնում, ինչ կլինի, եթե մեկը գանձեմ:

-Երբ հասարակ մարդիկ ապահովված են, միթե տիրակալին կարող է չբավականացնել: Եթե հասարակ մարդկանց չի բավականացնում, միթե տիրակալը կարող է ապահովված լինել:

[Փոխադրությունը]

Լու տերության Այ իշխանը հարցրեց Յու Ժոյին.

- Երաշտի տարի է, միջոցները չեն բավականացում, ինչ կարելի է անել:

Յու Ժոն ասաց.

- Գուցե՞ պետք է գանձել մեկ տասանորդ:
- Հիմա երկուսն եմ գանձում, բայց ինձ չի բավականացնում, ի՞նչ կլինի, եթե մեկը գանձեմ:
 - Երբ ժողովուրդը ապահոված է, մի՞թե տիրակալին կարող են շրավականացնել միջոցները: Եթե ժողովուրդը ապրուստի միջոց չունի, մի՞թե տիրակալը կարող է ապահոված լինել:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 0 子张问崇德辨惑。子曰：“主忠信，徙义，崇德也。爱之欲其生，恶之欲其死。既欲其生，又欲其死，是惑也。‘诚不以富，亦只以异①。’”

Զիջանը հարցրեց առաքինության բազմապատկման և մոլորությունները ձանաչելու մասին: Ուսուցիչն ասաց.

- Առաջնորդվիր հավատարմությամբ և անկեղծությամբ, գործիր արդարությամբ՝ կրազմապատկես առաքինությունը: Միրելով՝ կյանք են ցանկանում, ատելով՝ ցանկանում են մահ: Կյանք կամ մահ ցանկանալն արդեն մոլորություն է: «Եթե ձշմարտությունը ոչինչ չի տալիս, այն անիմաստ է»:

[Փոխադրությունը]

Զիջանը հարցրեց բնավորության բարեկավման և մոլորությունները ձանաչելու մասին: Քունձին ասաց.

- Պետք է առաջնորդվել հավատարմությամբ և անկեղծությամբ, գործել արդարությամբ, այնժամ կրարելավվի բնավորությունը: Երբ սիրում են մարդուն, նրան երկար կյանք են ցանկանում, երբ ատում են նրան, ցանկանում են վաղաժամ մահ: Սակայն երկար կյանք կամ

Կոնֆուցիոս. Զրույցներ

վաղաժամ մահ ցանկանալն արդեն մոլորություն է: Այսպիսով՝ եթե ձշմարտությունը բարի չէ քեզ համար, ապա այն մոլորություն է:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «诚不以富， 亦只以异» - «Եթե ձշմարտությունը ոչինչ չի տալիս, այն անիմաստ է». այս տողերը «Երգերի գրքից» են, Կոնֆուցիոսը մեջ թերում է դրանք: Չեն Յին կարծում էր, որ այս տողերը սիսալ են մեջըերված. արտահայտության առաջին հատվածը գրքի մի պարբերությունից է, երկրորդը՝ այլ: Փոխադրելիս ես հիմք եմ վերցրել Զու Սիի «ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՅԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 1 齐景公问政于孔子。孔子对曰：“君君，臣臣，父父，子子。”公曰：“善哉！信如君不君，臣不臣，父不父，子不子，虽有粟，吾得而食诸？”

Յիի Զին իշխանը Քունձիին հարցրեց կառավարման մասին: Քունձին ասաց.

- Տիրակալը պիտի տիրակալ լինի, պաշտոնյան՝ պաշտոնյա, հայրը՝ հայր, որդին՝ որդի:

Իշխանն ասաց.

- Գերազանց է: Հիրավի, եթե տիրակալը տիրակալ չինի, պաշտոնյան՝ պաշտոնյա, հայրը՝ հայր, որդին՝ որդի, ապա նույնիսկ մթերք ունենայի, կկարողանայի՞ ուտել:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Յի տերության Զին իշխանը Քունձիին հարցրեց կառավարման մասին: Քունձին ասաց.

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

- Տիրակալը պիտի տիրակալ լինի, պաշտոնյան՝ պաշտոնյա, հայր՝ հայր, որդին՝ որդի:

Զին իշխանն ասաց.

- Ճշմարիտ է: Հիրավի, եթե տիրակալը տիրակալ չլինի, պաշտոնյան՝ պաշտոնյա, հայր՝ հայր՝ հայր, որդին՝ որդի, նույնիսկ եթե մթերք ունենայի, կկարողանայի՝ արդյոք ուտել:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 2 子曰：“片言可以折狱①者，其由也与？”子路无宿诺②。

Ուսուցիչն ասաց. «Կես խոսքից դատը կարող էր վճռել Յոռուն, որիշ էլ ո՞վ: Զիլուն չէր հապաղում կատարել խոստացածը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Թերևս միայն Զունյոռուն կարող էր կես խոսքից դատը վճռել: Զիլուն երբեք չէր հապաղում կատարել խոստացածը»:

[Մեկնությունը]

① «片言可以折狱» - «Կես խոսքից դատը կարող էր վճռել». որոշ փոխադրություններում հանդիպում է նաև «单辞»՝ «մեկ ձառ» տարբերակով: Քանի որ դեռ հնուց դատի ժամանակ երոյթ էին ունենում և մեղադրող, և պաշտպանող կողմերը, երբեք վճիռ չէր կայացվում միայն մեկ կողմին լսելով:

② «子路无宿诺» - «Զիլուն չէր հապաղում կատարել խոստացածը». այս արտահայտությունը որևէ կերպ կապակցված չէ ասույթի առաջին հատվածի հետև և պարզ չէ, թե ինչու է այն հաջորդում Զունյոռուի մասին ասույթին: Թան ժամանակաշրջանի մեկնողներից Լու Դեմինը ենթադրում էր, որ այս ասույթը պիտի ուղղակի գրառվեր առանձին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 3 子曰：“听讼①，吾犹人也。必也使无讼乎！”

Ուսուցիչն ասաց. «Ես դատավարություններ լսում եմ՝ ինչպես ուրիշները։ Թեև ավելի լավ կլիներ, եթե դատավարություններ ընդհանրապես չլինեին»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Դատավարությունները ես կարող եմ լսել այնպես, ինչպես ուրիշները։ Թեև ավելի լավ կլիներ, եթե դատավարություններ ընդհանրապես չլինեին»։

[Մեկնությունը]

① «听讼» - «լսել դատավարություններ»։ Լու տերության Դին իշխանին ծառայելու ժամանակ Կոնֆուցիոսը զբաղեցրել է դատական աստիճանավորի բարձր պաշտոն։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 4 子张问政。子曰：“居之无倦，行之以忠。”

Զիջանը հարցրեց կառավարման մասին։ Ուսուցիչն ասաց.
- Գործել անխոնչ, ծառայել հավատարմությամբ։

[Փոխադրությունը]

Զիջանը հարցրեց տերության կառավարման մասին։ Քունձին ասաց.
- Եթե իշխանություն ունես, գործիր առանց հոգնելու, հրամանները կատարիր հավատարմորեն։

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 5 子曰：“博学于文， 约之以礼， 亦可以弗畔矣夫①！”

Ուսուցիչն ասաց. «Ուսումնասիրիք մշակովյթը, զսպվիք ծեսերով և կարող ես խուսափել մոլորություններից»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① Տես «Զրույցների» վեցերորդ գլխի քանյոթերորդ ասուլիթը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 6 子曰：“君子成人之美， 不成人之恶。小人反是。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը օգնում է մարդկանց դառնալ բարի, չի օգնում դառնալ չար: Նվաստն է այդպես վարվում»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդն օգնում է ուրիշներին, որ բարին արարեն, չի նպաստում նրանց չար գործերին: Նվաստ մարդը հակառակն է անում»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 7 季康子问政于孔子。孔子对曰：“政者， 正也。子帅以正， 孰敢不正？”

Զի Քանձին Քունձին հարցրեց կառավարման մասին: Քունձին ասաց նրան.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Կառավարումն արդարություն է: Եթե կառավարես արդարությամբ, ովք կիամարձակվի անարդար լինել:

[Փոխադրությունը]

Զի Քանձին Քունձիին հարցրեց տերության կառավարման մասին: Քունձին ասաց նրան.

- Կառավարեիս առաջնորդվիր արդարությամբ: Եթե կառավարում ես արդարությամբ, ապա ովք կիամարձակվի անարդար լինել:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 8 季康子患盜， 问于孔子。孔子对曰：“苟子之不欲， 虽赏之不窃。”

Զի Քանձին, ում անհանգստացնում էին գողությունները, հարցրեց Քունձիին դրա մասին: Քունձին ասաց նրան.

- Եթե դու ազահ չինես, նոյնիսկ պարզեի համար չեն գողանա:

[Փոխադրությունը]

Զի Քանձին, ում անհանգստացնում էր գողությունների հետզհետև ավելացող քանակը, հարցրեց Քունձիին դրա մասին: Քունձին ասաց նրան.

- Եթե դու ինքդ շահամոլ չինես, ապա մարդիկ նոյնիսկ պարզեի համար չեն գողանա:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 1 9 季康子①问政于孔子曰：“如杀无道， 以就有道， 何如？”孔子对曰：“子为政， 焉用杀？ 子欲善而民善矣。君子之德风， 小人之德草。草上之风， 必偃。”

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

Զի Քանձին Քունձիի հետ կառավարման մասին զրուցելիս ասաց.

- Կարելի՞ է սպանել նրանց, որոնք չեն հետևում Ռոդուն, որպեսզի մնացյալը մոտենան Ռոդուն:

Քոնձին ասաց նրան.

- Դու կառավարում ես, ինչո՞ւ սպանել: Եթե ձգտես բարիքի, մարդիկ ևս կձգտեն դրան: Ազնվայրի առաքինությունը քամի է, նվասդի առաքինությունը՝ խոտ: Խոտը կխոնարհվի այն ուղղությամբ, որ կփչի քամին:

[Փոխադրությունը]

Զի Քանձին Քունձիի հետ կառավարման մասին զրուցելիս ասաց.

- Կարելի՞ է սպանել վատ մարդկանց՝ մերձանալու համար լավ մարդկանց:

Քոնձին ասաց նրան.

- Ինչո՞ւ սպանել, եթե քո ձեռքում է կառավարման դեկը: Եթե կառավարելով բարիք արարես, մարդիկ ավելի լավը կրառնան: Կառավարողի կամքը քամի է, հասարակ մարդկանց կամքը՝ խոտ: Որ ուղղությամբ էլ փչի քամին, խոտը կխոնարհվի:

[Մեկնությունը]

① «季康子» - Զի Քանձի. ըստ Ձույի նոթերի՝ Այ իշխանի կառավարման երրորդ տարվա հուլիսին մահացավ Զի Սունսին, որի պաշտոնը ստացավ Զի Քանձին: Ամենայն հավանականությամբ՝ ասույթում խոսքը գնում է հենց Այ իշխանի կառավարման երրորդ տարուց հետո ընկած ժամանակահատվածի մասին:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 2 0 子张问：“士何如斯可谓之达矣？”子曰：“何哉，尔所

谓达者？”子张对曰：“在邦必闻，在家必闻。”子曰：“是闻也，非达也。夫达也者，质直而好义，察言而观色，虑以下人。在邦必达，在家必达。夫闻也者，色取仁而行违，居之不疑。在邦必闻，在家必闻。”

Զիշանը հարցրեց.

- Ուսալ այրը ի՞նչ պիտի անի նշանավոր համարվելու համար:
- Ի՞նչ ասել է լինել «նշանավոր»,՝ հարցրեց Ուսուցիչը:
- Զիշանն ասաց.
- Լինել հայտնի տերության մեջ, և լինել հայտնի տոհմում:
Ուսուցիչն ասաց.
- Դա հայտնին է, ոչ նշանավորը: Նշանավոր այրը ուղղամիտ է և արդար, ականջալուր է մարդկանց խորքերին և տրամադրություն-ներին, մտածում է, թե ինչպես ծառայել: Այդպիսի այրը նշանավոր կլինի և տերությունում, և տոհմում: Հայտնի այրը մարդկային է զուտ արտաքուստ, իրականում այդպիսին չէ: Նա ապրում է առանց երկմտանքի: Այդպիսին հայտնի կլինի և տերության մեջ, և տոհմում:

[Փոխադրությունը]

Զիշանը հարցրեց.

- Ուսալ մարդը ի՞նչ պիտի անի, որպեսզի նրան նշանավոր համարեն:
- Ի՞նչ է նշանակում լինել «նշանավոր»,՝ հարցրեց Քունձին:
- Զիշանն ասաց.
- Լինել հայտնի տերունական ծառայության մեջ, և լինել հայտնի ազնվական տոհմերին ծառայելիս:
- Քունձին ասաց.
- Դա հայտնին է, ոչ նշանավորը: Ինչպիսի՞ն պիտի լինի նշանավոր մարդը: Նա ուղղամիտ է և արդար, ուշադրությամբ է լսում մարդկանց

խոսքերն ու հետևում է նրանց տրամադրություններին, մտածում է, թե ինչպես աջակցել մարդկանց: Այդպիսի մարդը նշանավոր կլինի և տերությանը ծառայելիս, և ազնվական տոհմերին: Հայտնի մարդիկ մարդկայնություն դրսուրում են արտաքուստ, թեև իրականում այդպիսին չեն: Նա ապրում է առանց երկմտանքի: Այդպիսին հայտնի կդառնա և տերունական ծառայության մեջ, և ազնվական տոհմերին ծառայելիս:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 2 1 樊迟从游于舞雩之下，曰：“敢问崇德，修慝，辨惑。”子曰：“善哉问！先事后得，非崇德与？攻其恶，无攻人之恶，非修慝与？一朝之忿，忘其身，以及其亲，非惑与？”

Ֆան Չին դեպի անձրևի գոհարան ուղեկցելիս հարցրեց.

- Համարձակվում եմ հարցնել՝ ինչպես բազմապատկել առաքինությունը, ազատվել չար մտադրություններից և ձանաչել մոլորությունները:

Ուսուցիչն ասաց.

- Հիմնալի հարց է: Սկզբից գործ, հետո շահ, միթե առաքինության բազմապատկում չեն: Պայքարել սեփական չարության դեմ, չպայքարելով այլոց չարությունների դեմ, միթե դա չար մտադրություններից ազատվել չեն: Եթե մի օր զայրանալով մոռանաս թեզ ու հարազատներիդ՝ միթե դա մոլորություն չեն:

[Փոխադրությունը]

Ֆան Չին Քունձիին դեպի անձրևի գոհարան ուղեկցելիս հարցրեց.

- Համարձակվում եմ հարցնել՝ ինչպես կարող եմ բարելավել բնավորությունս, ազատվել չար մտադրություններից և ձանաչել մոլորությունները:

Քոնձին ասաց.

- Հիանալի հարց է: Զանասիրաբար աշխատելով և դրա արդյունքը վայեկելով, միթե չես բարեկավում բնավորությունդ: Սեփական չարությունդ քննադատելով, իսկ այլոց չարությունները չքննադատելով, միթե չես ազատվում չար մտադրություններից: Եթե պատահական զայրույթի պատճառով մոռանաս քեզ, հորդ ու մորդ, միթե դա մողորություն չի լինի:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

12.2.2 樊迟问仁。子曰：“爱人。”问知。子曰：“知人。”樊迟未达。子曰：“举直错诸枉，能使枉者直。”樊迟退，见子夏曰：“乡①也吾见于夫子而问知，子曰，举直错诸枉，能使枉者直’，何谓也？”子夏曰：“富哉言乎！舜有天下，选于众，举皋陶②，不仁者远③矣。汤④有天下，选于众，举伊尹⑤，不仁者远矣。”⑥

Ֆան Չին հարցրեց մարդկայնության մասին: Ուսուցիչն ասաց.

- Մարդկանց սիրելն է:

Հարցրեց գիտելիքի մասին: Ուսուցիչն ասաց.

- Մարդկանց ձանաչելն է:

Ֆան Չին շհասկացավ: Ուսուցիչն ասաց.

- Եթե բարձրացնեն շիտակներին՝ վեր դասելով ծոերից, նրանք կշտկվեն:

Ֆան Չին հեռացավ և Զիսյային հանդիպելով՝ ասաց.

- Քիչ առաջ ես հարցի Ուսուցչին գիտելիքի մասին: Ուսուցիչն ասաց. «Եթե բարձրացնեն շիտակներին՝ վեր դասելով ծոերից, նրանք կշտկվեն»: Ինչպես հասկանամ դա:

Զիսյան ասաց.

- Հիրավի, հիանալի է ասված: Եթե Շունը տիրում էր ամենին Երկնքի

տակ և բազում մարդկանցից բարձրացրեց Գառ Յային, բոլորը, որ մարդկային չէին՝ հեռացան: Երբ ժամն էր տիրում ամենին Երկնքի տակ՝ բազում մարդկանցից բարձրացրեց Յի Ինին, և բոլորը, որ մարդկային չէին՝ հեռացան:

[Փոխադրությունը]

Ֆան Զին հարցրեց մարդկանության մասին: Քունձին ասաց.

- Մարդկանց սիրելն է:

Հարցրեց գիտելիքի մասին: Քունձին ասաց.

- Մարդկանց տարրելավելն է:

Ֆան Զին չկարողացավ ամբողջովին ըմբռնել: Քունձին ասաց.

- Երբ առաջխաղացման տամեն արդարներին՝ վեր դասելով անարդարներից, անարդարները ևս կդառնան արդարամիտ:

Ֆան Զին հեռացավ և երբ հանդիպեց Զիպային՝ ասաց.

- Ես հարցի Ուսուցչին գիտելիքի մասին: Ուսուցիչն ասաց. «Երբ առաջխաղացման տամեն արդարներին՝ վեր դասելով անարդարներից, անարդարները ևս կդառնան արդարամիտ»: Ո՞րն է այս խոսքերի իմաստը:

Զիպան ասաց.

- Օ՛, ինչպիսի խորիմաստ խոսքեր: Երբ Շունը տիրում էր ողջ աշխարհին, բազում մարդկանցից ընտրեց և պաշտոն տվեց Գառ Յային, բոլորը, որ առաքինի չէին՝ հեռացան: Երբ ժամն էր տիրում ողջ աշխարհին, բազում մարդկանցից ընտրեց և պաշտոն տվեց Յի Ինին, և բոլորը, որ առաքինի չէին՝ հեռացան:

[Մեկնությունը]

① «辯» - ասլյաթում կիրառված է «քիչ առաջ» իմաստով, նույնն է, ինչ «向» գաղափարագիրը:

② «皋陶» - Գառ Յառ. Շուն հարստության նախարարներից էր:

Կոնֆուցիոս. Զրույցներ

③ «远» - «հեռու». ասուլթում կիրառված է «հեռանալ» կամ փախչել իմաստով: Որոշ փոխադրություններում հաճողիպում է նաև «վերանալ» տարբերակը:

④ «汤» - Թան. առասպելական արքայի անուն է, ով հայտնի էր նաև որպես Թայ Յի:

⑤ «伊尹» - Յի Ին. Թան արքայի խորհրդականն էր:

⑥ Ասուլթում մի արտահայտություն կա, որ Կոնֆուցիոսը կրկնում է. «Երբ բարձրացնեն շիտակներին՝ վեր դասելով ծոերից, նրանք կշտկվեն»: Այն հիշատակվում է նաև «Զրույցների» երկրորդ գլխի տասնիներորդ ասուլթում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 2 3 子贡问友。子曰：“忠告①而善道之，不可则止，毋自辱焉。”

Զիգունը հարցրեց բարեկամության մասին: Ուսուցիչն ասաց.

- Խորհուրդներ տուր և ուղղորդիր դեպի բարին: Եթե չի հետևում՝ կանգ առ, մի խայտառակիր քեզ:

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց, թե ինչպես վարվել բարեկամների հետ: Քունձին ասաց.

- Անկեղծ խորհուրդներ տուր և ուղղորդիր դեպի բարին: Եթե չեն հետևում խորհուրդներիդ, մի պնդիր, որպեսզի չխայտառակվեն:

[Մեկնությունը]

① «告» - «ասել», «հայտնել». հնչում է՝ «զու»:

Յան Բոձունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 2 . 2 4 曾子曰：“君子以文会友，以友辅仁。”

Յենձին ասաց. «Ազնվայրը բարեկամանում է իր ուսալությամբ և բարեկամությունը նրան մարդկային է դարձնում»:

[Փոխադրությունը]

Յենձին ասաց. «Ազնվայրը բարեկամներ է ձեռք բերում իր ուսալության շնորհիվ և բարեկամներն օգնում են նրան բազմապատկել իր առաջինությունը»:

Գլուխ 13. Զիլուն... Բնդամենը 30 ասութեանը

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 子路问政。子曰：“先之①劳之。”请益。曰：“无倦②。”

Զիլուն հարցրեց կառավարման մասին։ Ուսուցիչն ասաց.

- Բամիր ինքը՝ նախքան այլոց բանեցնելլ:

Խնդրեց բացատրել:

- Եղիր անխոնջ։

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց տերության կառավարման մասին։ Քունձին ասաց.

- Մեկական օրինակով մղիր մարդկանց գործելու։

Զիլուն խնդրեց մաճրամասնել։ Քունձին ասաց.

- Երբեք մի ծովացիր։

[Մեկնությունը]

① «先之» ~ «նախքան», «սկզբից». Կիրառված է «先有司»՝ «սկզբում ուղղորդիր» իմաստով։

② «无倦» ~ «անխոնջ». Առվա արտահայտությունը հանդիպում է «քրուցների» տասներկուերորդ գլուխ տասնչորսերորդ ասութում։

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 仲弓为季氏宰，问政。子曰：“先有司，赦小过，举贤才。”曰：“焉知贤才而举之？”子曰：“举尔所知；尔所不知，人其舍诸？”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Զուն Գունը, որ Ձի տոհմի կառավարիչ էր դարձել, հարցրեց կառավարման մասին: Ուսուցիչն ասաց.

- Սկզբում ուղղորդիր, ներիր փոքր սխալները, բարձրացրու շնորհալիներին:

- Ինչպես կարող եմ ձանաչել շնորհալիներին, որ բարձրացնեմ նրանց:

Ուսուցիչն ասաց.

- Բարձրացրու նրանց, ում ձանաչում ես, իսկ ում չես ձանաչում, մի՞թե մարդիկ կիրաժարվեն նրանցից:

[Փոխադրությունը]

Զուն Գունը, որ Ձի տոհմի կալվածքների կառավարիչ էր դարձել, Քունձին հարցրեց տեղության կառավարման մասին: Քունձին ասաց.

- Ուղղորդիր ենթականերիդ, ներիր նրանց փոքր սխալները, առաջնադաշնան տար շնորհալիներին:

- Ինչպես իմանամ՝ ով է շնորհալի, ով՝ ոչ, որ առաջնադաշնան տանեմ նրանց:

Ուսուցիչն ասաց.

- Առաջնադաշնան տար նրանց, ում ձանաչում ես, իսկ ում չես ձանաչում՝ մի՞թե մարդիկ կթողնեն նրանց ստվերում:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 3 子路曰：“卫君①待子而为政，子将奚先？”子曰：“必也正名②乎！”子路曰：“有是哉，子之迂也！奚其正？”子曰：“野哉，由也！君子于其所不知，盖阙如也。名不正，则言不顺；言不顺，则事不成；事不成，则礼乐不兴；礼乐不兴，则刑罚不中；刑罚不中，则民无所错③手足。故君子名之必可言也，言之必可行也。君子于其言，无所苟而已矣。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Զիլուն ասաց.

- Վեյի տիրակալը պատրաստվում է Ուսուցչին ներգրավել կառավարման մեջ, Ուսուցիչը սկզբում ի՞նչ կանի:

Ուսուցիչն ասաց.

- Պետք է շտկել անվանումները:

Զիլուն ասաց.

- Եթե այդպես է, Ուսուցիչը բարդացնում է: Ինչո՞ւ շտկել:

Ուսուցիչն ասաց.

- Անտաշ ես, Յոու: Ազնվայրը խոսափում է այն ամենից, ինչ չգիտի: Երբ անվանումները շիտակ չեն, խոսքերը ձիշտ չեն ընկալվում, երբ խոսքերը ձիշտ չեն ընկալվում, գործերը չեն հաջողում, երբ գործերը չեն հաջողում, ծեսերն ու երաժշտությունը ազդեցիկ չեն լինում, երբ ծեսերն ու երաժշտությունը ազդեցիկ չեն լինում, պատիժները չեն կիրառվում, երբ պատիժները չեն կիրառվում, ժողովուրդը չի իմանում՝ ինչպես շարժել ձեռքերն ու ոտքերը: Հետևաբար՝ ազնվայրը անվանումներ տալիս պիտի ձիշտ խոսի, այնուհետև կատարի այն, ինչ ասել է: Ազնվայրի խոսքը չպիտի անփույթ լինի:

[Փոխադրությունը]

Զիլուն ասաց.

- Վեյի տիրակալը ցանկանում է Ձեզ բարձր պաշտոն տալ: Դուք ի՞նչ փոփոխություններ կձեռնարկեք առաջին հերթին:

Քունձին ասաց.

- Անիրաժեշտ է առաջին հերթին շտկել անվանումները:

Զիլուն ասաց.

- Դուք չափազանց մանրախնդիր եք: Ինչո՞ւ է անիրաժեշտ շտկել անվանումները:

Քունձին ասաց.

- Որքան անխոհեմ ես, Յոու: Ազնիվ մարդը խոսափում է դատողու-

թյուններ անել այն ամենի մասին, ինչ չգիտի: Երբ անվանումները շիտակ չեն, խոսքերը ձիշտ չեն հասկացվում, երբ խոսքերը ձիշտ չեն հասկացվում, աշխատանքը ձիշտ չի ստացվում, երբ աշխատանքը ձիշտ չի ստացվում, ծեսերն ու երաժշտությունը ազդեցիկ չեն լինում, երբ ծեսերն ու երաժշտությունը ազդեցիկ չեն լինում, մեղավորները չեն պատժվում, երբ մեղավորները չեն պատժվում, ժողովորդը վայրենանում է: Հետևաբար՝ ազնիվ մարդը պետք է խոսքերը խոհեմությամբ արտասանի, այնուհետև կատարի այն, ինչ ասել է: Ազնիվ մարդու խոսքն աղերս չունի թեթևամտության հետ:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «卫君» ~ «Վեյի տիրակալ». բոլոր մեկնողները միաբերան պնդում են, որ խոսքը Վեյի Չու իշխանի մասին է:

② «正名» ~ «շոկել անունները». Հան ժամանակաշրջանից հետո այս արտահայտությունը տարբեր մեկնություններ է ունեցել: Հուան Քանը մեջբերում է Ձեն Սյուանի «Ներածությունից» մի հատված. «Անվանումներ շոկելը արփում է գրի և գաղափարագրերի շոկման, իին ու մերօրյա խոսքի համեմատման միջոցով»: Սակայն չեմ կարծում, որ այս մոտեցումն արտացոլում է Կոնֆուցիոսի տեսակետը: «Չուոյի նորերի» Ձեն իշխանի կառավարման երկրորդ տարվա նկարագրության մեջ հանդիպում են Կոնֆուցիոսի հետևյալ խոսքերը. «Միայն ծիսական անորմներն ու անուններն են, որ չեն կարող կերծվել»: Եվ «Զրույցներում», և «Չուոյի նորերում» «名» գաղափարագիրը կիրառված է նոյն իմաստով՝ «անվանում»: «Զրույցներում» կա հատված (վեցերորդ գլխի քսանիմգերորդ ասույթը), ուր Կոնֆուցիոսը հոգոց հանելով ասում է. «Գավաթ է, թե՝ ոչ»: Այսինքն՝ գավաթը, որ արտաքինից նման է գավաթի, սակայն իրականում այն չէ, շիտակ անվանում չի կրում: Կոնֆուցիոսը Ձին իշխանին ասում էր հետևյալը. «Տիրակալը պիտի տիրակալ լինի, պաշտոնյան՝ պաշտոնյա, հայրը՝ հայր, որդին՝ որդի», այսինքն՝

անձը պիտի համապատասխան լինի անվանը, դիրքին կամ կրչմանը: Այդ պատճառով էլ ես գերադասում եմ մեկնաբանել «ոչ շիտակ անվանում» արտահայտությունը որպես «անհամապատասխանություն դիրքին (պաշտոնին, աստիճանին)» և կարծում եմ, որ այս տեսակետն ավելի մոտ է Կոնֆուցիոսի գաղափարներին, քանզի նրա նպատակը ոչ միայն անվանումները շտկելը և դրանք ծեսերին համապատասխան դարձնելն էր, այլև պաշտոնատար անձանց՝ պաշտոններին համապատասխանությունը որոշելը: Լայն իմաստով՝ «անվանումներ շտկելը» խոսքի ձևի և բովանդակության համապատասխանեցումն է: Սիալ բառապաշտի կիրառումը, ըստ Կոնֆուցիոսի, ազդում էր ծիսակարգերի, կառավարական գործունեության և արարողակարգերի վրա:

③ «错» - բառացի «սիալ», սակայն ասույթում կիրառված է «措»՝ «կիրառել», «գործի դնել», «շարժել» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 4 樊迟请学稼。子曰：“吾不如老农。”请学为圃。曰：“吾不如老圃。”樊退出。子曰：“小人哉，樊须也！上好礼，则民莫敢不敬；上好义，则民莫敢不服；上好信，则民莫敢不用情。夫如是，则四方之民襁负其子而至矣，焉用稼？”

ֆան Չին խնդրեց հողագործություն սովորեցնել: Ուսուցիչն ասաց.

- Ես չեմ հավասարվի ծեր հողագործին:

Խնդրեց այգեգործություն սովորեցնել: Ուսուցիչն ասաց.

- Ես չեմ հավասարվի ծեր այգեգործին:

ֆան Չին հեռացավ: Ուսուցիչն ասաց.

- Նվաստ է ֆան Սյուն: Եթե վերևում սիրեն ծեսերը, ժողովուրդը չի հանդգնի անպատկառ լինել: Եթե վերևում սիրեն արդարությունը, ժողովուրդը չի հանդգնի չենթարկվել: Եթե վերևում սիրեն ազնվությունը,

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ժողովուրդը չի համդճի անկեղծ չիմել: Երբ այրերն այդպէս վարվեն, չորս ծագերից դեպի նրանց կձգուի ժողովուրդն իր զավակներով, ինչի է պետք հողագործություն սովորելը:

[Փոխադրությունը]

Ֆան Զին խնդրեց հողագործություն սովորեցնել: Քունձին ասաց.

- Իմ գիտելիքներով չեմ հավասարվի ծեր հողագործին:

Խնդրեց այգեգործություն սովորեցնել: Քունձին ասաց.

- Իմ գիտելիքներով չեմ հավասարվի ծեր այգեգործին:

Երբ Ֆան Զին հեռացավ, Քունձին ասաց.

- Հիրավի, նվաստ է Ֆան Սյուն: Եթե տիրակալը պահպանի ծեսերը, ժողովուրդը չի համարձակվի անպատկառություն դրսենորել: Եթե տիրական արդարամիտ է, ժողովուրդը չի համարձակվի ընդվզել: Եթե տիրակալը ազնիվ է, ժողովուրդը չի համարձակվի կեղծավոր լինել: Երբ տիրակալն այդպէս վարվի, երկրի բոլոր կողմերից մարդիկ իրենց զավակների հետ կհամախմբվեն նրա շուրջ, եւ ինչի է պետք հողագործություն սովորել:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 5 子曰：“诵《诗》三百，授之以政，不达；使于四方，不能专对①；虽多，亦奚以为②？”

Ուսուցիչն ասաց. «Մերտել է «Երգերից» երեք հարյուրը, սակայն եթե նրան կառավարչի պաշտոն տան, չի հաջողի, որպէս պատվիրակ չորս ծագեր ուղարկվելով՝ չի կարող բանակցել, ինչ օգուտ դրանից»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Մերտել է «Երգերի գրքի» երեք հարյուր գլուխները,

Կոնֆուցիոն. Զրույցներ

սակայն եթե նրան տերումական հանձնարարական տան, չի կարող կատարել, եթե որպես դեսպան ուղարկվի հարևան տերություններ, չի կարող ինքնուրույն բանակցել: Շատ է ընթերցել, սակայն ինչի՞ է պետք այդ ամենը»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «不能专对» - «չի կարող բանակցել», հնում դեսպանական պատվիրակությունները միայն տիրակալի տեսակետն էին փոխանցում, հազվադեպ էին փորձում հարմարվել փոփոխվող իրավիճակին և ինքնուրույն բանակցություններ վարել: Հաճախ դիվանագիտական ելույթներն ընդմիջվում էին «Երգերի գրքից» հատվածների արտասանությամբ: Այդ պատճառով էլ տերումական աստիճանավորները, անկախ մասնագիտացումից, շանասիրաբար սերտում էին «Երգերի գիրքը»:

②«亦奚以为» - «ի՞նչ օգուտ». որոշ փոխադրություններում հանդիպում են «ինչի՞ է պետք ուսումը» կամ «ի՞նչ օգուտ գրեթից» տարրերակները:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 6 子曰：“其身正， 不令而行； 其身不正， 虽令不从。”

Ուսուցիչն ասաց. «Նա շիտակ է՝ կենթարկվեն առանց հրամանի, նա շիտակ չէ՝ նույնիսկ հրամանով չեն հետևի»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Եթե տիրակալն արդար է, ապա նրան կենթարկվեն առանց հրամանի, եթե տիրակալն արդար չէ՝ նույնիսկ հրամանները կրկնելուց հետո ժողովուրդը չի վստահի նրան ու չի ենթարկվի:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 7 子曰：“魯卫之政，兄弟也。”

Ուսուցիչն ասաց. «Լուն և Վեյը իրենց կառավարմամբ եղբայրներ են»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Լու և Վեյ տերությունները կառավարվում են նոյն կերպ, ասես եղբայրներ լինեն»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 8 子谓卫公子荆①，“善居室②。始有，曰：‘苟合③矣。’少有，曰：‘苟完矣。’富有，曰：‘苟美矣。’”

Ուսուցիչն ասաց Վեյի իշխանազն Զինի մասին. «Լավ է կառավարում տոհմը: Երբ քիչ է ունենում, ասում է. «Այսքանը բավական է»: Երբ ավելին է ունենում, ասում է. «Լրիվ բավական է»: Երբ շատ-շատ է ունենում՝ ասում է. «Ավելի քան բավական է»:

[Փոխադրությունը]

Քոնճին Վեյ տերության իշխանի որդու՝ Զինի մասին ասաց. «Նա հաջողությամբ կառավարում է տոհմի կալվածքները: Նոյնիսկ քիչ ունենալիս ասում է. «Գրեթե բավական է»: Երբ ավելի շատ է ունենում, ասում է. «Լրիվ բավական է»: Երբ շատ-շատ է ունենում՝ ասում է. «Հրաշալի է»:

[Մեկնությունը]

① «卫公子荆» - Վեյի իշխանազն Զին. Վեյ տերության իշխանի որդիներից մեկն էր: Ու Զիջան նրան հիշատակում է որպես Վեյ տերության ազնվայրերից մեկը: «Չուոյի նորեկրում» հիշատակվում է Սյան իշխանի կառավարման քսանիներորդ տարվա մասին հատվածում, որտեղ գրված է, որ իշխանազն Զինը ապրում էր համեստ և ժուժկալ կյամքով, ի տարբերություն հարևան տերության արքունականների և պաշտոնյաների, որոնք կաշառակեր լինելուց բացի՝ ապրում էին ցոփ ու շվայտ կյանքով:

② «室» - «սրահ». գաղափարագիրը ունի մի շարք իմաստներ: Հիմնական իմաստը «տունն» է, կամ «սենյակը»: Մասնավորապես՝ «Ծեսերի գրքում» նշվում է հետևյալը. «Ազնվայրը սկզբում պետք է կառուցի նախնյաց տաձարը, այնուհետև իր տունը»: Բայտ երկրորդ տեսակետի՝ գաղափարագիրն ունի «ընդհանուր սրահ» իմաստը, այսինքն՝ սենյակ, որ հավասար եղումուտ ունեին և տղամարդիկ, և կանայք: Բայտ երրորդ տեսակետի՝ Հան ժամանակաշրջանում գաղափարագիրը ունեցել է «բանտ», «մեկուսարան» իմաստները: Սակայն ասույթի բովանդակությանն ավելի մոտ է չորրորդ տեսակետը, ըստ որի՝ գաղափարագիրն ունի «տոհմ» իմաստը:

③ «合» - ունի «ամբողջ», «միասին», «հավասար» իմաստները, ասույթում կիրառված է «այսքանը» կամ «այս ամենը» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 9 子适卫，冉有仆①。子曰：“庶矣哉！”冉有曰：“既庶矣，又何加焉？”曰：“富之。”曰：“既富矣，又何加焉？”曰：“教之②。”

Ուսուցիչը ձանապարհվում էր Վեյ, Ժանյուուն վարում էր կառքը: Ուսուցիչն ասաց.

- Որքան մարդաշատ է:
- Ժանյուն ասաց.
- Երբ մարդիկ շատ են, ի՞նչ անել:
- Հարստացնել:
- Երբ հարուստ են, այնժամ ի՞նչ անել:
- Կրթել, ասաց Ուսուցիչը:

[Փոխադրությունը]

Քունձին ձանապարհվում էր Վեյ տերություն, իսկ Ժանյուն վարում էր նրա կառքը: Քունձին ասաց.

- Որքան շատ են մարդիկ:
- Ժանյուն ասաց.
- Երբ մարդիկ շատ են, ի՞նչ պետք է անել:
- Պետք է նրանց հարստացնել:
- Իսկ երբ հարստանան, այնժամ ի՞նչ անել:
- Կրթել, ասաց Քունձին:

[Մեկնությունը]

① «*「ト」* - բառացի՝ «ծառայել», «սպասարկել». ասույթում կիրառված է «կառքը վարել» իմաստով: Երբեմն կիրառվել է նաև որպես գոյական՝ «կառապան» իմաստով:

② «既富矣，又何加焉？”曰：“教之” - «Երբ հարուստ են, այնժամ ի՞նչ անել:- Կրթել». Կոնֆուցիոսի ուսմունքի՝ տերության կառավարմանը վերաբերող դրույթներից մեկն էր՝ մարդկանց համար բարօրություն ապահովել, այնուհետև ուսում տալ նրանց: Այս դրույթը հետագայում զարգացրել են նաև Մենձին և Սյունձին: Նրանք իրենց աշխատություններում հածախ են մեջբերում «տիրակալը պետք է բարօրություն ապահովի ժողովրդի համար» և նույնաբովանդակ այլ դրույթներ:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 0 子曰：“苟有用我者，期月①而已可也，三年有成。”

Ուսուցիչն ասաց. «Եթե ինձ ծառայության վերցնեին, տասներկու ամսում նշանակալի բան կանեի, իսկ երեք տարում՝ կհաջողեի»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե ինձ տերունական ծառայության ընդունեին, մի տարում ես քիչ բան չէի անի, իսկ երեք տարում՝ կհասնեի լուրջ հաջողությունների»:

[Մեկնությունը]

① «期月» ~ «տասներկու ամիս». «期» գաղափարագիրը բառացի նշանակում է «ժամանակահատված», սակայն ասուլյում կիրառված է «մեկ տարի» իմաստով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 1 子曰：“善人为邦百年，亦可以胜①残去②杀矣③。’诚哉是言也！”

Ուսուցիչն ասաց. «Երբ առաքինի մարդիկ հարյուր տարի տիրեն երկրին, բռնությունը կհաղթահարվի, սպանությունները կվերանան». Հիրավի, ձիշտ է ասված»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Երբ հարյուր տարի շարունակ տերության գլուխ կանգնած լինեն առաքինի մարդիկ, ապա բռնությունը կհաղթահարվի, մահապատիճները կվերանան». Հիրավի, ձիշտ է ասված»:

[Մեկնությունը]

- ① «胜» - «հաղթանակ», «հաղթահարել». արտասանվում է «շեն»:
② «去» - բառացի՝ «գնալ», «անցնել», «հեռացնել», «ազատվել». ասուլյում կիրառված է «վերացնել» իմաստով:
③ «善人为邦百年，亦可以胜 残去杀矣。» - «Երբ առաքինի մարդիկ հարյուր տարի տիրեն երկրին, բռնությունը կհաղթահարվի, սպանությունները կվերաճան». ամենայն հավանականությամբ սրանք Կոնֆուցիոսի խոսքերը չեն, նա մեջբերում է ուրիշի:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 2 子曰：“如有王者，必世而后仁。”

Ուսուցիչն ասաց. «Եթե արժանի արքա լինի, միայն մի սերունդ հետո մարդկայնություն կլինի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Նույնիսկ եթե արժանի արքա կառավարի տերությունը, միայն երեսուն տարի հետո կհաստատվի մարդկային իշխանություն»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 3 子曰：“苟正其身矣，于从政乎何有？不能正其身，如正人何？”

Ուսուցիչն ասաց. «Եթե շտկում է ինքն իրեն, մի՞թե կդժվարանակառավարել: Եթե ընդունակ չէ շտկել ինքն իրեն, ապա ինչպես կշտկի մարդկանց»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե կարող է շտկել ինքն իրեն, մի՞թե կդժվարանա կառավարել: Եթե ընդունակ չէ շտկել ինքն իրեն, ապա ինչպես կկարո- դանա շտկել այլոց»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 4 冉子退朝。子曰：“何晏也？”对曰：“有政。”子曰：“其事也。如有政，虽不吾以，吾其与闻之①。”

Ժանձին վերադարձավ արքունիքից: Ուսուցիչը հարցրեց.

- Ինչո՞ւ ուշացար:

-Տերունական գործեր կային:

Ուսուցիչն ասաց.

- Քո գործերն էին: Եթե տերունական գործեր լինեին, թեև ես չեմ ծառայում, լսած կլինեի դրանց մասին:

[Փոխադրությունը]

Ժանձին վերադարձավ պալատից: Քունձին հարցրեց.

- Ինչո՞ւ այսքան ուշ եկար:

-Տերունական գործերի պատճառով:

Քունձին ասաց.

- Քո սեփական գործերի պատճառով ես ուշացել: Եթե տերունական գործերի պատճառով ուշացած լինեիր, ես անպայման կիմանայի այդ մասին, թեև արդեն չեմ ծառայում:

[Մեկնությունը]

① «与闻之» - բառացի՝ «լսած կլինեի». «Ձուոյի նոթերի» Այ իշխանի

կառավարման տասնմեկերորդ տարվա նկարագրության մեջ նշվում է, որ Զի տոհմը ցանկանում էր ծառայության ընդունել Կոնֆուցիոսին, ասելով՝ «Ուսուցիչը տերության ծերերից է, պետք է նրան ծառայության վերցնել»: Մինչ դա Կոնֆուցիոսը արդեն ծառայության փորձ ուներ և կարող էր տարբերակել տերունական գործը անձնականից: Զուտ Կոնֆուցիոսի ծառայողական փորձառությունը հիմք ընդունելով՝ կարող եմ եզրակացնել, որ բացի վերոնշյալից, ասույթն այլ թաքնված, խորքային իմաստ չունի:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 5 定公问：“一言而可以兴邦，有诸？”孔子对曰：“言不可以若是其几也。人之言曰：‘为君难，为臣不易。’如知为君之难也，不几乎一言而兴邦乎？”曰：“一言而丧邦，有诸？”孔子对曰：“言不可以若是其几也。人之言曰：‘予无乐乎为君，唯其言而莫予违也。’如其善而莫之违也，不亦善乎？如不善而莫之违也，不几乎一言而丧邦乎？”

Դին իշխանը հարցրեց.

- Կարելի՞ է մի բառով երկրին բարօրություն բերել:
Քունձին ասաց.

Բառն ինքն իրեն չի կարող ազդել: Մարդիկ ասում են. «Բարդ է տիրակալ լինելը, պաշտօնյա լինելը հեշտ չէ»: Եթե զիտես, որ բարդ է տիրակալ լինելը, միթե մոտ չես լինի մի բառով երկրին բարօրություն բերելուն:

Դին իշխանը հարցրեց.

- Կարելի՞ է մի բառով կործանել երկիրը:
Քունձին ասաց.
- Բառն ինքն իրեն չի կարող ազդել: Մարդիկ ասում են. «Տիրակալին

Կոնֆուցիոս. Զրույցներ

չի ուրախացնում այն, որ չկա մեկը, ով հակադարձի իր խոսքին»: Եթե ձշմարիտ խոսքին չեն հակադարձում, մի՞թե վատ է: Եթե սխալ խոսքին չեն հակադարձում, մի՞թե մոտ չեն լինում մի բառով երկիրը կործանելուն:

[Փոխադրությունը]

Լու տերության Դին իշխանը հարցրեց.

- Կարելի՞ է մի բառով երկրին բարօրություն բերել:

Քունձին ասաց.

- Բառն ինքն իրեն չի կարող ազդել: Մարդիկ ասում են. «Բարդ է տիրակալ լինելը, պաշտոնյա լինելը հեշտ չէ»: Եթե գիտես, որ բարդ է տիրակալ լինելը և կառավարելիս աշակորջ ես ու խելամիտ, մի՞թե մոտ չես լինի մի բառով երկրին բարօրություն բերելուն:

Դին իշխանը հարցրեց.

- Իսկ կարելի՞ է մի բառով կործանել երկիրը:

Քունձին ասաց.

- Բառն ինքն իրեն չի կարող ազդել: Մարդիկ ասում են. «Տիրակալին չի ուրախացնում այն, որ չկա մեկը, ով հակադարձի իր խոսքին»: Սական եթե իմաստալից խոսքին չեն հակադարձում, մի՞թե վատ է: Իսկ եթե չեն հակադարձում անիմաստ խոսքին, մի՞թե մոտ չեն լինում մի բառով երկիրը կործանելուն:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 6 叶公问政。子曰：“近者悦，远者来。”

Յեի իշխանը հարցրեց կառավարման մասին: Ուսուցիչն ասաց.

- Մերձավորները ուրախանում են, հեռավորները գալիս են:

[Փոխադրությունը]

Յե գավառի իշխանը հարցրեց կառավարման մասին: Ուսուցիչն ասաց.

- Պիտի կառավարել այնպես, որ մերձավորները երջանիկ լինեն, իսկ հեռավորները ցանկանան մոտ գալ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 7 子夏为莒父①宰，问政。子曰：“无欲速，无见小利。欲速，则不达；见小利，则大事不成。”

Զիսյան Զյույֆուի կառավարիչ դառնալով՝ հարցրեց կառավարման մասին: Ուսուցիչն ասաց.

- Մի շտապիր, մի ընկիր փոքր շահի հետևից: Շտապես՝ չես հաջողի, ընկնես փոքր շահի հետևից, մեծ գործերը չեն ստացվի:

[Փոխադրությունը]

Զիսյան Զյույֆուի գավառապետ դառնալուց հետ հարցրեց կառավարման մասին: Քունձին ասաց.

- Մի շտապիր գործել, մի մտահոգվիր փոքր շահի համար: Շտապես գործել՝ հաջողության չես հասնի, մտահոգվես փոքր շահի համար՝ մեծ գործեր չես կարող անել:

[Մեկնությունը]

① «莒父» - Զյույֆու. Լու տերության գավառներից մեկն էր: Ներկայումս հայտնի չէ դրա գտնվելու իսկական վայրը: Ենթադրվում է, որ գտնվել է Շանդուն նահանգի հարավ-արևելքում, ներկայիս Գաոսի գավառի տարածքում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

13.18 叶公语孔子曰：“吾党有直躬者，其父攘羊，而子证①之。”孔子曰：“吾党之直者异于是：父为子隐，子为父隐。一直在其中②矣。”

Յեի իշխանը ասաց Քունձիին.

- Իմ համայնքում ազնիվ մնելով կա. նրա հայրը ոչխար էր գողացել, որդին մատնեց:

Քունձին ասաց.

- Իմ համայնքում ազնվությունն այլ է. հայրը պաշտպանում է որդուն, որդին պաշտպանում է հորը: Դա է ազնվությունը:

[Փռխադրությունը]

Յե գավառի իշխանը ասաց Քունձիին.

- Իմ համայնքում իսկապես ազնիվ մարդ կա. նրա հայրը ոչխար էր գողացել, և նա հայտնեց այդ մասին:

Քունձին ասաց.

- Մեզ մոտ ազնվությունը տարբերվում է. հայրը թաքցնում է որդուն, որդին թաքցնում է հորը: Դա է ազնվությունը:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «证» - «հայտնել», «տեղեկացնել», «վկայել», «գեկուցել». ասույթում կիրառված է «մատնել» իմաստով: Հան Ֆեյժին այս գաղափարագիրը փոխադրում է որպես «հայտնել վերադասին»:

② «一直在其中»: «Դա է ազնվությունը». կոնֆուցիականության հիմնաքարերից երկուսն են ներկայացվում՝ «որդիական պատկառանք» և «քարություն»: Ահա թե ինչո՞ւ են հայրերն ու որդիները պաշտպանում միմյանց:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 1 9 樊迟问仁。子曰：“居处恭，执事敬，与人忠。虽之①夷狄，不可弃也。”

Ֆան Չին հարցրեց մարդկայնության մասին։ Ուսուցիչն ասաց.

- Տանը եղիր համեստ, ծառայելիս՝ պատկառանքով լի, մարդկանց հավատարիմ։ Նոյնիսկ Յիի և Դիի մեջ լինելիս պետք չէ մոռանալ դա։

[Փոխադրությունը]

Ֆան Չին հարցրեց մարդկայնության մասին։ Քունձին ասաց.

- Տանը եղիր համեստ, ծառայելիս՝ պատկառանքով լի, մարդկանց հանդեպ ազնիվ եղիր։ Նոյնիսկ բարբարոսների մեջ լինելիս պետք չէ մոռանալ այս ամենը։

[Մեկնությունը]

① «之» - որպես կանոն՝ կիրառվում է որպես դերանուն, սակայն ասույթում կիրառված է որպես բայ՝ «հասնել», «գտնվել» իմաստներով։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 0 子贡问曰：“何如斯可谓之士矣？”子曰：“行已有耻，使于四方，不辱君命，可谓士矣。”曰：“敢问其次。”曰：“宗族称孝焉，乡党称弟焉。”曰：“敢问其次。”曰：“言必信，行必果，硁硁然小人哉！—抑亦可以为次矣。”曰：“今之从政者何如？”子曰：“噫！斗筲之人①，何足算也？”

Զիգունը հարցրեց.

- Ու՞մ կարող ենք կոչել ուսյալ այր։

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ուսուցիչն ասաց.

- Նա, ով ամոթ ունի և որպես պատվիրակ չորս ծագերում չի խայտառակի տիրակալին, կարող է կոչվել ուսալ այր:
 - Համարձակվում են հարցնել, ո՞վ է հաջորդիվ:
 - Նա, ում տողմակիցները համարում են որդիական պատկառանք ունեցող, իսկ երկրացիները՝ եղբայրական սեր ունեցող:
 - Համարձակվում են հարցնել՝ ո՞վ է հաջորդիվ:
 - Նա, ում խոսքերն ազնիվ են, արարքները՝ վճռական. հարկավ նվաստն է, կարող է համարվել հաջորդը:
 - Այսօրվա կառավարիչների մասին ի՞նչ կարելի է ասել:
- Ուսուցիչն ասաց.
- Ավաղ... Դոու և շատի մարդիկ են, արժե՞ հիշատակել:

[Փռխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Ու՞ն կարող ենք կոչել ուսալ այր:
- Փունձին ասաց.
- Նա, ով ամոթ ունի և որպես դեսպան այլ տերություններ ուղևորվելով՝ չի խայտառակի տիրակալին, կարող է կոչվել ուսալ այր:
- Համարձակվում են հարցնել՝ ո՞վ է նրանից ցածր:
- Նա, ում ազգականները համարում են որդիական պատկառանք ունեցող, իսկ հարևանները՝ եղբայրական սեր ունեցող:
- Համարձակվում են հարցնել՝ ո՞վ է նրանից ցածր:
- Նա, ում խոսքերն ազնիվ են, արարքները՝ վճռական. հարկավ նվաստն է, քանզի մոտածում է միայն իր խոսքերի ու արարքների մասին՝ անկախ նրանից, դրանք բարի են, թե՞ չար: Նա կարող է համարվել ավելի ցածր:

Զիգունը հարցրեց.

- Այսօրվա իշխանների մասին ի՞նչ կարելի է ասել:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Քունձին ասաց.

- Ավանդ... Ինչո՞ւ խոսել թեթևամիտ և նվաստ մարդկանց մասին:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «斗筲之人» - «Դոռու և շառ չափի մարդիկ». Դոռուն և շառն չափման միավորներ էին, օգտագործվում էին բրինձ և այլ հատիկեղեն կշռելու համար: Կոնֆուցիոսը նկատի ուներ, որ այդ իշխանավորների ընդունակությունները և շնորհները քիչ են և կտեղավորվեն անզամ բրնձի համար նախատեսված զամբյուղներում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 1 子曰：“不得中行而与之，必也狂狷①乎！狂者进取，狷者有所不为也。”

Ուսուցիչն ասաց. «Եթե անհնար է լինել միջինին հետևողների հետ, ստիպված ես լինել պոռթկունների և զգուշների հետ: Պոռթկունները առաջ են ընթանում, զգուշները խուսափում են գործել»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Եթե անհնար է գտնել նրանց, որ իրենց խոսքերում և գործերում հետևում են «ոսկե միջինին», ստիպված ես գործակցել անզուսպների և զգուշավորների հետ: Անզուսպները համարորեն առաջ են ընթանում, իսկ զգուշները խուսափում են վատ արարքներ գործել»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

①«狂狷» - «Պոռթկուններ և զգուշներ». Մենձի համանուն աշխատության «Ողջ սրտով» գլխում կա այս եզրույթների մեկնությունը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

Մասնավորապես՝ նշվում է. «Մենձին ասաց. «Քունձին ասում էր. «Զի ստացվում գտնել միջին ուղուն հետևողներ, որոնց կրասավանդեի իմ ուսմունքը: Այդ պատճառով էլ գործ եմ ունենում պոռթկունների և զգուշների հետ: Պոռթկունները կարող են միշտ առաջ գնալ, իսկ զգուշները գործում են կշռադատված»: Միթե Քունձին չէր ցանկանում գտնել միջին ուղուն հետևողների: Թերևս՝ ցանկանում էր, սակայն այդպիսիք չկային: Ովքեր են պոռթկունները: Քունձին պոռթկուն է անվանում Ցինչանին, Չենսիին և Մուփիին, որոնք հապրտանում էին իրենց տոհմիկ լինելով: Սակայն նրանք էլ շատ չէին, այդ պատճառով էլ Քունձին փորձում էր գտնել գոնե նրանց, որոնք խոսափում էին չար գործերից: Դրանք էին զգուշները»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 2 子曰：“南人有言曰：‘人而无恒， 不可以作巫医①。’善夫！”“不恒其德②， 或承之羞。”子曰：“不占而已矣。”

Ուսուցիչն ասաց. «Հարավցիները մի խոսք ունեն. «Մարդիկ, որ անկայուն են, չեն կարող լինել գուշակներ և հեքիմներ»: Լավ է ասված: «Առաքինության մեջ անկայունները հաճախ են ամոթով մնում»: Ուսուցիչն ասաց. «Զեն կարող անել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հարավի բնակիչները մի խոսք ունեն. «Մարդիկ, որ անկայուն են, չախտի գուշակություն և հեքիմություն անեն»: Լավ խոսքեր են: «Փոփոխությունների գրքում» այսպիսի տողեր կան. «Փոփոխական մարդիկ հաճախ են ամոթով մնում»: Քունձին ասաց. «Նշանակում է, որ նման մարդիկ չեն կարող գուշակել»:

[Մեկնությունը]

① «巫 医» - «Գուշակներ և հեքիմներ». որոշ մեկնություններում արտահայտությունը փոխադրված է ուղղակի որպես «հեքիմներ», ինչը հիմնավորվում է նրանով, որ գուշակները հաճախ բժշկում էին աղոթքներով և կարող էին համարվել նաև հեքիմներ:

② «不 恒 其 德» - «Առաքինության մեջ անկայունները». կարող է մեկնաբանվել երկու իմաստով. ըստ առաջինի՝ նկատի ունի զուտ անձի փոփոխական լինելը, ըստ երկրորդի՝ որոշակի ընդգծված վարքային ձև չունենալը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 3 子曰：“君子和而不同， 小人同而不和①。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրերը ներդաշնակ են անհամաձայնության մեջ, նվաստները համաձայնության մեջ ներդաշնակ չեն»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդիկ ներդաշնակ են, նույնիսկ երբ համաձայն չեն իրար, իսկ նվաստները ներդաշնակ չեն, նույնիսկ երբ համաձայն են իրար»:

[Մեկնությունը]

① «和， 同» - «ներդաշնակություն, համաձայնություն». սրանք «Գարնան և Աշման» ժամանակաշրջանում տարածված արտահայտություններից են: Հանդիպում են նաև «Զույյի նոթերի» Զառ իշխանի կառավարման բասմերորդ տարվա նկարագրության մեջ՝ Յանձիի և Զին իշխանի զրոյցում: Շի Բոն իր «Պետական լեզու» աշխատության

Կոնֆուցիոս. Զրոյցներ

մեջ «和» գաղափարագրին տպիս է հետևյալ բացատրությունը. «Այն հինգ համերի և ութ նյութերի հաջող համադրումն է»: Ցյան Մուն այլ կերպ էր մեկնաբանում. «Ներդաշնակ է այն այրը, ով զուրկ է դաժան սրտից, իսկ այլոց համաձայն է այն այրը, ով առաջնորդվում է կեղծավորությամբ»: Որոշ մեկնողներ փոխադրում են արտահայտությունը որպես «հասնել միասնության տարածայնությունների միջոցով»: Իսկ «同» գաղափարագրիը բնութագրում է ոչ թե գիտակից համաձայնությունը, այլ առավել ուժեղի կամ հեղինակավորի տեսակետին ստիպված համաձայնելը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 4 子贡问曰：“乡人皆好之，何如？”子曰：“未可也①。”
“乡人皆恶之，何如？”子曰：“未可也；不如乡人之善者好之，其不善者恶之。”

Զիգունը հարցրեց.

- Եթք բոլոր գյուղացիները սիրում են, դրան ի՞նչ կասեք:
Ուսուցիչն ասաց.
- Բավական չէ:
- Եթք բոլոր գյուղացիներն ատում են, դրան ի՞նչ կասեք:
Ուսուցիչն ասաց.
- Բավական չէ: Զի հավասարվի բարի գյուղացիների սիրելին և
չարերի ատելին լինելուն:

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Ի՞նչ կարելի է ասել, եթե մի մարդու սիրում են բոլոր գյուղացիները:
Քունձին ասաց.

- Լավ չէ:
- Իսկ ի՞նչ կարելի է ասել, եթե մի մարդու ատում են բոլոր գյուղացիները:
- Քունձին ասաց.
- Լավ չէ: Առավել լավ է լինել բարի գյուղացիների սիրելին և չար գյուղացիների ատելին:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «未可也» - «Բավական չէ». Կոնֆուցիոսը կարծում էր, որ անձի մասին այլոց դրական կամ բացասան կարծիքները բավական չեն որևէ եզրակացություն անելու համար: Նոյնիմաստ են «Զրոյցների» տասն-հինգերորդ գլխի քանութերորդ և չորրորդ գլխի երրորդ ասուլյթները:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 5 子曰：“君子易事①而难说也。说之不以道，不说也；及其使人也，器之。小人难事而易说也。说之虽不以道，说也；及其使人也，求备焉。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրին ծառայելը դյուրին է, դժվար է նրան գոհացնելը. փորձես գոհացնել՝ չհետևելով Ուղուն, չես գոհացնի: Նա բանեցնում է մարդկանց ըստ ունակությունների: Նվաստին ծառայելը դժվար է, գոհացնելը՝ դյուրին. փորձես գոհացնել՝ չհետևելով ուղուն, կգոհացնես: Նա բանեցնում է մարդկանց՝ պահանջելով պատրաստակամություն»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդուն ծառայելը հեշտ է, սակայն դժվար է նրան գոհացնելը. եթե փորձես գոհացնել՝ շրջանցելով օրենքը, նրան

Կոնֆուցիոն. Զրույցներ

չես գոհացնի: Նա ծառայեցնում է մարդկանց ըստ ընդունակությունների և օգնում է հղկել դրանք: Նվաստին ծառայելը դժվար է, գոհացնելը՝ հեշտ. նոյնիսկ եթե փորձես գոհացնել՝ շրջանցելով օրենքը, նա գոհ կլինի: Նա ծառայեցնում է մարդկանց՝ պահանջելով լինել պատրաստ ամեն ինչի և ընդունակ ամեն բանի»:

[Մեկնությունը]

① «易事» - «դյուրին է ծառայելը». «Ազու պատմություններ» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Ցենձին ասաց. «Բավական է Ռւսուցիչը մեկի բարի գործը տեսներ, մոռանում էր հարյուր չարը, այդ պատճառով էլ դյուրին էր նրան ծառայելը»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 6 子曰：“君子泰而不骄①， 小人骄而不泰。”

Ռւսուցիչն ասաց. «Ազնվայրը խաղաղ է և ոչ գոռող, նվաստը գոռող է և ոչ խաղաղ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնվայրը խաղաղ է՝ արժանապատվությամբ լի, սակայն ոչ գոռող, նվաստը գոռող է, սակայն ոչ խաղաղ և արժանապատվությամբ լի»:

[Մեկնությունը]

① «泰, 骄» - «Խաղաղ, գոռող». Հուան Քանի «Ճշմարտի մեկնություն» աշխատության մեջ նշվում է հետևյալը. «Ազնվայրը հաստատուն է իր վարքում և մտքերում, խաղաղ է և ոչ գոռող: Նվաստը գոռող է,

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

հեղիեղուկ իր մտքերում և վարքում»: Նույն իմաստն է պարունակում «Զրուցների» քաներորդ գլուխ երկրորդ ասույթի մի հատված:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 7 子曰：“刚、毅、木、讷近仁。”

Ուսուցիչն ասաց. «Ամուր է, կայուն, պարզ և սակավախոս՝ մոտ է մարդկայնությանը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ուժ, վճռականություն, պարզություն և քչախոսություն: Այս չորս որակներն ունեցող մարդը մոտ է մարդկայնությանը»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 8 子路问曰：“何如斯可谓之士矣？”子曰：“切切偲偲①，怡怡②如也， 可谓士矣。朋友切切偲偲， 兄弟怡怡。”

Զիլուն հարցրեց.

- Ու՞ն կարելի է կոչել «ուսալ այր»:

Ուսուցիչն ասաց.

- Նրան, ով խանդավառ է, բազմաշնորհ և ներդաշնակ, կարելի է կոչել «ուսալ այր»: Բարեկամների հետ խանդավառ է և բազմաշնորհ, եղբայրների հետ՝ ներդաշնակ:

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Ու՞մ կարելի է կոչել «ուսալ այր»:
Քունձին ասաց.
- Նրան, ով քննադատում է այլոց և ներդաշնակ ապրում նրանց հետ,
կարելի է կոչել «ուսալ այր»: Բարեկամները քննադատում են իրար՝
առանց թշնամանքի, եղբայրներն իրար հետ ապրում են ներդաշնակ:

[Մեկնությունը]

- ① «切切惁惁» - «Խսանդավառ և բազմաշնորհ». իրականում այս
արտահայտությունն ունի «քննադատել այլոց» իմաստը:
- ② «怡怡» - «ներդաշնակ». նկատի ունի անձի բարեկրթությունը և
հեզությունը:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 2 9 子曰：“善人教民七年，亦可以即戎①矣。”

Ուսուցիչն ասաց. «Եթե բարի մարդը յոթ տարի սովորեցնի մարդ-կանց, նրանց կարելի կլինի զենքի կոչել»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե բարի մարդը յոթ տարի շարունակ սովորեցնի մարդկանց, ապա նրանց կարելի կլինի տանել պատերազմելու»:

[Մեկնությունը]

- ① «即 戎» - «զենքի կոչել». ունի «զորակոչել», «պատերազմի
տանել» իմաստները:

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 3 . 3 0 子曰：“以不教民①战，是谓弃之。”

Ուսուցիչն ասաց. «Անպատրաստ մարդկանց պատերազմի տանել՝ նշանակում է լքել նրանց»:

[Փռխադրությունը]

Քոնֆուչին ասաց. «Պատերազմի տանել անպատրաստ մարդկանց՝ նշանակում է կորստյան մատնել նրանց»:

[Մեկնությունը]

① «不教民» - «անպատրաստ մարդիկ». Ակատի ունի մարտական պատրաստություն չանցած մարդկանց, որոնց «Երգերի գրքում» անվանում են «խոռվասիրտ, երկշոտ և ավազակի հագուստ հագած»: «Ավազակի հագուստը» փոխաբերական իմաստ ունի, նշանակում է՝ «երբեք չլվացված հագուստ»:

Գլուխ 14. Սյանը հարցրեց... Բնդամենը 44 ասույթ

(Չու Սիի «Մեկնություններում» 47 ասույթ են,
որովհետև մի քանի ասույթ բաղդատված են)

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 宪问耻。子曰：“邦有道，谷；邦无道，谷，耻也。”“克、伐、怨、欲不行焉，可以为仁矣①？”子曰：“可以为难矣，仁则吾不知也。”

Սյանը հարցրեց ամոթի մասին։ Ուսուցիչն ասաց.

- Տերությունն Ուղի՝ հատիկ են ստանում, տերությունն ուղի չունի՝ հատիկ են ստանում, դա է ամոթը։

- Սնափառությամբ, պարծենկոտությամբ, բողոքավորությամբ և ազահությամբ չզործելը կարելի՞ է «մարդկայնություն» անվանել։
Ուսուցիչն ասաց.

- Դա բարդ է անելը, սակայն մարդկայնությունը է արդյոք՝ ես չգիտեմ։

[Փոխադրությունը]

Յուան Սյանը հարցրեց ամոթի մասին։ Քունձին ասաց.

- Տերությունը կառավարվում է օրենքով, և պաշտոնյաները ոռձիկ են ստանում։ Սակայն երբ տերությունը չի կառավարվում օրենքով, և պաշտոնյաները ոռձիկ են ստանում, դա է ամոթը։

Յուան Սյանը հարցրեց.

Յան Բոնդունի փոխադրությունը եւ մեկնությունը

- Փառասիրությունից, պարծենկոտությունից, տրտնջալուց և ազահությունից ազատվելը կարելի՞ է «մարդկայնություն» համարել:

Քոնձին ասաց.

- Դա հազվագյուտ և արժեքավոր որակ է, սակայն մարդկայնությունը է արդյոք, ես չեմ կարող համաձայնել:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «可以为仁矣» - «կարելի՞ է «մարդկայնություն» անվանել». որոշ մեկնություններում այս արտահայտությունը փոխադրված է որպես հաստատական, սակայն ես գերադասեցի պահպանել դրա հարցական կառուցվածքը: Գրեթե նույն իմաստն է պարունակում ութերորդ գլխի տասներեքերորդ ասույթի վերջին պարբերությունը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 子曰：“士而怀居①，不足以为士矣。”

Ուսուցիչն ասաց. «Ուսալ այրը, որ մտածում է միայն կալվածքի մասին, արժանի չէ ուսալ այր համարվելու»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քոնձին ասաց. «Ուսալ մարդը, որ մտածում է միայն խաղաղ և հարմարավետ կյանքի մասին, արժանի չէ ուսալ համարվելու»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «怀居» - «մտածել կալվածքի մասին». իրականում ասույթում այս արտահայտությունը կիրառված է «մտածել խաղաղ և հարմարավետ կյանքի մասին» իմաստով: «Զույի նոթերի» Սի իշխանի կառավար-

Կոնֆուցիոս. Զրույցներ

ման քսաներեքերորդ տարվա նկարագրության մեջ, որը հիշատակվում է Զին տերության Վեն իշխանի աքսորի մասին, կան այսպիսի տողեր. «Նա հաստատվեց Ցի տերությունում, իր կանանց ու հարձերի հետ և վայելուն էր իր անքավ հարստությունը: Նրա կանանցից մեկը՝ Զյանն ասաց. «Էհ, մտածելով խաղաղ կեցության մասին, մոռացության մատնեցիր անունդ»: Այս արտահայտությունները մոտ են իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 子曰：“邦有道，危①言危行；邦无道，危行言孙②。”

Ուսուցիչն ասաց. «Տերությունն ունի Ուղի՝ խոսիր շիտակ, գործիր շիտակ: Տերությունը չունի Ուղի՝ գործիր շիտակ, խոսիր զուսպ»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Եթե տերությունը կառավարվում է օրենքով, եղիր արդար խոսքերում և վարքում: Եթե տերությունը չի կառավարվում օրենքով՝ վարքում արդար եղիր, իսկ խոսքերում՝ համեստ»:

[Մեկնությունը]

① «危» - բառացի՝ «վտանգ», «վտանգել». ասույթում կիրառված է «շիտակ» իմաստով: Գաղափարագիրը հանդիպում է նաև «Ծեսերի գրքում», փոխադրվում է որպես «լինել գոեհկությունից բարձր»: Զու Սիի «Մեկնություններում» գաղափարագիրը փոխադրվում է որպես «արդար»:

② «孙» - բառացի՝ «ժառանգ», «թոռ». ենթադրվում է, որ գաղափարագիրի փոխարեն պիտի լինի նմանատիպ գրություն ունեցող «逊» գաղափարագիրը, որն ունի «զուսպ», «համեստ իմաստները»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 4 子曰：“有德者必有言， 有言者不必有德。仁者必有勇， 勇者不必有仁。”

Ուսուցիչն ասաց. «Առաքինություն ունեցողն անպայման ասելիք կունենա, ասելիք ունեցողն անպայման չէ, որ առաքինություն ունենա: Մարդկայինն անպայման խիզախ է, խիզախն անպայման չէ, որ մարդկային լինի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Առաքինի մարդիկ միշտ ունեն հիշատակման արժանի խոսքեր, սակայն հիշատակման արժանի խոսքեր ունեցողները միշտ չեն, որ առաքինի մարդիկ են: Մարդկայինը միշտ քաջ է, սակայն քաջը միշտ չէ, որ մարդկային է»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 5 南宮适①问于孔子曰：“羿②善射， 禊③荡舟④， 俱不得其死然。禹稷躬稼而有天下。”夫子不答。南宮适出， 子曰：“君子哉若人！ 尚德哉若人⑤！”

Նանգուն Քունձին ասաց Քունձին.

- Յին լավ նետաձիգ էր, Առն մակովկն էր տանում ցամաքով, սակայն երկուսն էլ մահացան անժամանակ: Յուն և Զին իրենք էին վարուցանք անում և տիրում էին ամենին Երկնքի տակ:

Ուսուցիչը ոչինչ չասաց: Երբ Նանգուն Քունձին հեռացավ, Ուսուցիչն ասաց.

- Հիրավի, ազնվայր է այս մարդը: Որքան քարձր առաքինություն ունի այս մարդը:

[Փոխադրությունը]

Նանգուն Քուոն հարցրեց Քունձիին.

- Յին անգերազանցելի նետաձիգ էր, Առն անկասելի էր ծովամարտերի ժամանակ, սակայն երկուսն էլ վաղ մահացան: Յուն և Զին իրենք իին բույսեր մշակում և տիրում էին ամենին երկնքի տակ: Ինչպես կարելի է բացատրել այդ ամենը:

Քունձին ոչինչ չասաց: Եթր Նանգուն Քուոն հեռացավ, Ուսուցիչն ասաց.

- Հիրավի, ազնիվ մարդ է նա՝ օժտված բարձր առաքինությամբ:

[Մեկնությունը]

① «南宮适» - Նանգուն Քուոն. Կոնֆուցիոսի սաներից էր, նաև նրա զարմիկի դստեր ամուսինը:

② «羿» - Յի. Կիսաառասպելական նետաձիգ: Յի անունը կրող երեք անվանի նետաձիգներ կային, որոնք ապրել են տարբեր ժամանակ-ներում և մինչ այժմ պարզ չեն, թե ում նկատի ունի Նանգուն Քուոն: Առաջինը նետաձություն էր սովորեցնում Քու կայսրին, երկրորդը ծառայում էր Թամյառ կայսրին՝ Քուի որդուն, իսկ երրորդը Սյա արքայատոհմին ենթակա աղքատ տերություններից մեկի իշխանն էր, ում մասին հիշատակվում է «Չուոյի նոթերի» Սյան իշխանի կառավարման չորրորդ տարվա նկարագրության մեջ:

③ «奡» - Առ. Սյա ժամանակաշրջանի հերոսներից էր, համարվում էր հայտնի Հան Չուոյի որդին:

④ «蕩舟» - բառացի՝ «ցամաքով տանել մակույկը» կամ «քարշ տալ մակույկը». Գու Յանուն նշում էր, որ այս արտահայտությամբ է բնորոշվում նավավարության հմտությունը:

⑤ Ասույթի իմաստը հետևյալն է՝ բիրտ ուժը առաքինություն չէ: Մարդիկ, որ աչքի են ընկնում ուժով և մշտապես ձգտում են քաջագործություններ անել՝ արագ սպառում են իրենց և մահանում ոչ իրենց

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

մահով: Իսկ առաքինի տիրակալները կառավարում են երկար ու անցնողում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 6 子曰：“君子①而不仁者有矣夫， 未有小人①而仁者也。”

Ուսուցիչն ասաց. «Պատահում է, որ ազնվայրը մարդկային չի լինում, սակայն չի լինում այնպես, որ նվաստը մարդկային լինի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնվայրերի մեջ կան այնպիսիք, որ մարդկային չեն, սակայն նվաստների մեջ մարդկայիններ չկան»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «君子， 小人» ~ «ազնվայր， նվաստ». որոշ մասնագետներ կարծում են, որ ասույթում այս արտահայտությունները կիրառված են ոչ թե «Զրույցների» հիմնական՝ «ազնվայր» ու «նվաստ» իմաստներով, այլ ուղղակի «տերունական պաշտոնյաներ» և «հասարակ ժողովուրդ» իմաստներով:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 7 子曰：“爱之， 能勿劳乎①？ 忠焉， 能勿诲乎？”

Ուսուցիչն ասաց. «Սիրում ես՝ չես կարող բանեցնել։ Հավատարիմ ես՝ չես կարող խրատել։»

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ սիրում ես նրան, չես կարող այնպես անել, որ նա աշխատի ջանասիրաբար: Երբ հավատարիմ ես նրան, չես կարող սովորեցնել»:

[Մեկնությունը]

① «能勿劳乎» - «Չես կարող բանեցնել». «Լոի ասույթներ» աշխատության մեջ հիշատակվում են Լու տերության ազնվական Գունֆու Վենքոյի՝ իր իմաստությամբ մոտ՝ Զինձյանի խոսքերը. «Երբ ժողովուրդը բանում է, հոգ է տանում բարօրության մասին, հոգ տանելը ծնում է բարի մտադրություններ, իսկ ծովությունն ախտեր է առաջացնում, որոնք ստիպում են մոռանալ բարին, բարին մոռանալն էլ ծնում է չար մտադրություններ»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 8 子曰：“为命①， 褒謚②草创之， 世叔③讨论④之， 行人子羽⑤修饰之， 东里子产⑥润色之。”

Ուսուցիչն ասաց. «Երբ գրություն էր պատրաստվում, Բի Զենը սևագրում էր, Շի Շուն մեկնաբանում էր, արարողապետ Զի Յուն ուղղում էր, Զիշանը՝ Դունլիից, մաքրագրում էր»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ Զեն տերության արքունիքը գրություն էր պատրաստում, Բի Զենը սևագրում էր այն, Շի Շուն վեր էր հանում թերությունները, ձարտար դիվանագետ Զի Յուն ուղղում էր այն, իսկ Զիշանը՝ Դունլի գավառից, կատարելության էր հասցնում այն»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «为命» - «Գրություն էր պատրաստվում». որոշ մեկնություններ փոխադրել են այս արտահայտությունը որպես «երբ ձակատագիրն է վճռվում», սակայն ասույթի կազմությունից պարզ է, որ խոսքը դիվանագիտական գրության մասին է՝ ուղղված այլ տերության արքայի: Իսկ «命» գաղափարագիրը, բացի «ձակատագրից», ունի նաև «գրություն», «հրաման», «տիտղոս» և այլ նշանակություններ: «Չույի նորերում» գաղափարագիրը ևս կիրառվում է «գրություն» իմաստով, մասնավորապես՝ Սյան իշխանի կառավարման երեսունմեկերրորդ տարվա նկարագրության մեջ:

② «裨谌» - Բի Չեն. ըստ «Չույի նորերի»՝ Չեն տերության աստիճանավոր էր՝ տիրակալի մերձավորներից, հայտնի է նաև որպես Յու Չի:

③ «世叔» - Շի Շու. ըստ «Չույի նորերի»՝ Չեն տերության աստիճանավոր էր՝ տիրակալի մերձավորներից, հայտնի է նաև որպես Յու Չի:
④ «讨论» - բառացի՝ «քննարկել». ասույթում կիրառված է «կարդալով՝ սխալները հայտնաբերել» կամ՝ «մեկնաբանել ուսումնասիրելուց հետո» իմաստներով:

⑤ «行人子羽» - «արարողապետ Չի Յու». «行人» գաղափարագիրը հնում ունեցել է «արարողապետ» իմաստը, սակայն ես փոխադրել եմ արտահայտությունը որպես «դիվանագետ»: Չի Յուն ևս Չեն տերության աստիճանավոր էր՝ Գունսուն տոհմից:

⑥ «东里子产» - «Չի Զանը՝ Դումիից». Դումին գավառ էր՝ ներկայիս Հենան նահանգի Զենջոռու քաղաքի մերձակայքում: Չիշանը Չեն տերության աստիճանավոր էր՝ Գունսուն տոհմից:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 9 或问子产。子曰：“惠人也。”问子西①。曰：“彼哉！彼哉②！”问管仲。曰：“人也。夺伯氏③骈邑④三百，饭疏食，没齿无怨言。”

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ոմն մեկը հարցրեց Զիշանի մասին: Ուսուցիչն ասաց.

- Առատաձեռն այր է:

Հարցրեց Զիսիի մասին:

- Նա է, նա է,- ասաց նա:

Հարցրեց Գուանչունի մասին:

- Այր է: Նրա համար Բո տոհմի Փյանյիից երեք հարյուր ծուխ խլեցին, թեև վատ էին սնվում, սակայն չտրտնջացին, - ասաց նա:

[Փոխադրությունը]

Մի մարդ հարցրեց Քունձիին, թե ինչպիսին է Զիշանը: Քունձին ասաց.

- Առատաձեռն և բարի մարդ է:

Հարցրեց, թե ինչպիսին է Զիսին:

- Օ՛, նա է, նա է,- բացականչեց Քունձին:

Հարցրեց, թե ինչպիսին է Գուանչունը:

- Ծնորհալի մարդ է: Նրա համար Բո տոհմի Փյանյի ավաճից երեք հարյուր ծուխ խլեցին, թեև Բո տոհմի մարդիկ կոպիտ էին սնվում, սակայն մի վատ բառ անգամ չասացին նրա մասին, - ասաց Քունձին:

[Մեկնությունը]

① «子西» - Զիսի. «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում այս անունը կրող երեք նշանավոր անձինք կային: Առաջինը Զեն տերության իշխան Սյայի թռոն էր՝ Լու տերության Սյան իշխանի ժամանակակիցը: Երկրորդը Զու տերության աստիճանավոր էր՝ Լու տերության Սի և Վեն իշխանների ժամանակակիցը: Երրորդը Զի տերության Շեն իշխանի որդին էր՝ Կոնֆուցիոնի ժամանակակիցը, հայտնի նաև որպես Գունսուն Սյա: Ամենայն հավանականությամբ՝ ասույթում խոսքը գնում է երրորդի մասին:

② «彼哉» - «Այն է». հնում օգտագործվող բացականչական

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

արտահայտություն էր՝ հիմնականում բացասական վերաբերմունք արտահայտող։ Կոնֆուցիոսը բացասաբար էր տրամադրված Զիսիի հանդեպ, քանզի վերջինս խոչընդոտել էր, որ Կոնֆուցիոսը Զու տերության տարածքում կալվածք ստանա։

③ «伯氏» - Բոն տոհմ. Ցի տերության ազնվական տոհմ էր, որի ծագումնաբանությունը հայտնի չէ։ Հուան Քանը նշում է, որ Բոն տոհմը զրկվել էր տիրակալի բարեհաձությունից և տոհմական կալվածքները բաժան-բաժան էին արվել։

④ «駢邑» - Փյանջի. տեղանուն է։ Գտնվել է Աերկայիս Շանդուն նահանգի տարածքում։

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 0 子曰：“贫而无怨难，富而无骄易。”

Ուսուցիչն ասաց. «Արքատ լինելով՝ չտրտնջալը դժվար է, հարուստ լինելով՝ չգոռողանալը՝ դյուրին»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Դժվար է լինել աղքատ և չտրտնջալ, սակայն հեշտ է լինել հարուստ և չգոռողանալ»։

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 1 子曰：“孟公绰①为赵魏老②则优③，不可以为滕、薛④大夫。”

Ուսուցիչն ասաց. «Մեն Գունչոն կհաջողեր որպես Զայի և Վեյի կառավարիչ, չէր կարող լինել աստիճանավոր ժենում և Սյունում»։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե Մեն Գունչոյին առաջարկեին Ձին տերության Զառ և Վեյ տոհմերի կառավարիչ լինել, նա կհամաձայներ, քանզի բավականաշափ ընդունակություններ ուներ դրա համար, սակայն նրա շնորհները բավական չէին, որպեսզի կարողանար լինել աստիճանավոր Թեն և Սյուն փոքր իշխանություններում»:

[Մեկնությունը]

① «孟公绰» - Մեն Գունչո. Լու տերության աստիճանավոր էր, «Ձուոյի նորթերում» նրա մասին հիշատակվում է Սյան իշխանի կառավարման քաննինգերորդ տարվա նկարագրության մեջ: «Ձուննի սաների պատմագրության» մեջ նշվում է, որ Կոնֆուցիոսն առանձնահատուկ հարգանք էր տածում նրա հանդեպ:

② «老» - բառացի՝ «ծեր». հեռում այս գաղափարագրով էին նշում նաև տերունական պաշտոնյաներին:

③ «优» - «հաջողել», «գերազանցել». ասույթում կիրառված է «ընդունակ լինել», «ուժ ունենալ ինչ-որ բան անելու» իմաստով:

④ «滕, 薛» - Թեն, Սյուն. Լու տերության հարևան փոքր իշխանություններ էին, գտնվել են ներկայիս Շանդուն նահանգի տարածքում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 2 子路问成人。子曰：“若臧武仲①之知，公绰之不欲，卞庄子②之勇，冉求之艺，文之以礼乐，亦可以为成人矣。”曰：“今之成人者何必然？见利思义，见危授命，久③要不忘平生之言，亦可以为成人矣。”

Զիլուն հարցրեց կատարյալ այրի մասին: Ուսուցիչն ասաց.

- Եթե Զան Ուզունի իմաստությանը, Գունչոյի անշահախնդրությանը,

Յան Բոնունի փոխադրությունը և մեկնությունը

Բյանցի Զուանձիի խիզախությանը և Ժանցլու վարպետությանը ավելացվի գրի, ծեսերի և երաժշտության իմացություն, այդպիսի այրը կարող է համարվել կատարյալ:

Հավելեց.

- Մերօրյա կատարյալ այրը մի՞թե պիտի այդպիսին լինի: Նա, ով շահը տեսնելով՝ մտածում է արդարության մասին, վտանգի հանդիպելիս՝ իրամաններ է տալիս և չի մոռանում ողջ կյանքի ընթացքում ասված իր խոսքերը՝ ևս կարող է համարվել կատարյալ այր:

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց, թե ինչպիսին պիտի լինի կատարյալ մարդը: Քունձին ասաց.

- Նա պիտի իմաստուն լինի, ինչպես Զան Ուզունը, ազնիվ և անշահախնդիր՝ ինչպես Մեն Գունչոն, խիզախ՝ ինչպես Զուանձին՝ Բյան ավանցի և բազմաշնորհ՝ ինչպես Ժան Ցյուն, պիտի կատարելագործի իր շնորհները գրի, ծեսերի և երաժշտության միջոցով. այդպիսի մարդը կարող է համարվել կատարյալ:

Այնուհետև փորք-ինչ մտորեց և ավելացրեց.

- Սակայն մի՞թե այդպիսին պետք է լինի մեր Ժամանակների կատարյալ մարդը: Նա, որ շահը տեսնելով՝ մտածում է՝ արժանի՞ է, արդյոք, դրան, թե՛ ոչ, վտանգի հանդիպելիս՝ պատրաստ է վտանգել կյանքը և չի մոռանում ողջ կյանքի ընթացքում տված իր խոստումները, նա ևս կարող է համարվել կատարյալ մարդ:

[Մեկնությունը]

① «臧武仲» - Զան Ուզուն. Լու տերության աստիճանավոր, հայտնի էր իր իմաստությամբ, ինչի պատճառով Լուի արքունիքում շատերը թշնամաբար տրամադրվեցին նրա հանդեալ և զրապարտեցին նրան: Արդյունքում նա հեռացավ Ցի տերություն: Զան Ուզունի մասին տես

Կոնֆուցիոս. Զրույցներ

«Չույի նոթերի»՝ Սյան իշխանի կառավարման քսաներեքերորդ տարվա նկարագրությունը:

② «卞庄子» - Բյանցի Չուանձի. Լու տերության զորապետերից էր, ծնունդով Բյան ավանից: Նրա սիրագործությունների մասին հիշատակում են նև Այուանձին, նև Հանը:

③ «久» - բառացի՝ «երկար ժամանակ». ասույթում կիրառված է «ողջ կյանքի ընթացքում» իմաստով: Փոխադրության նման ձևի կողմանակից է նաև պարոն Յան Յուֆուն:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 3 子问公叔文子①于公明贾②曰：“信乎，夫子不言，不笑，不取乎？”公明贾对曰：“以③告者过也。夫子时然后言，人不厌其言；乐然后笑，人不厌其笑；义然后取，人不厌其取。”子曰：“其然？岂其然乎？”

Ուսուցիչը Գունմին Ձյային հարցրեց Գունչու Վենձիի մասին.

- Ճիշտ է, որ տերը չի խոսում, չի ժպտում և չի վերցնում:

Գունմին Ձյան ասաց.

- Միաւլ են նրանք, որ այդպես են կարծում:Տերը խոսում է ժամանակին և մարդիկ չեն ասում նրա խոսքերը, եթե ուրախ է, նա ժպտում է, և մարդիկ չեն ասում նրա ժախտը, վերցնում է արդարությամբ և մարդիկ չեն տրտնջում նրա վերցրածից:

Ուսուցիչն ասաց.

- Իրանք այդպես է: Նա այդպես է վարվում:

[Փոխադրությունը]

Քունձին Գունմին Ձյային հարցրեց Գունչու Վենձիի մասին.

- Ճիշտ է, որ ծեր տերը չի խոսում, չի ժպտում և չի վերցնում:

Գունմին Զյան ասաց.

- Սիսալ են նրանք, որ այդպես են կարծում: Ծեր տերը խոսում է ժամանակին և մարդիկ չեն հոգնում նրա խոսքերից հետո, երբ ուրախ է, նա ժպտում է, և մարդիկ չեն հոգնում նրա ժպիտից, վերցնում է միայն իր հասանելիքը, և մարդիկ չեն տրտնջում դրա պատճառով:

Քունձին ասաց.

- Մի՞թե այդպես է: Նա այդպին է վարվում:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «公叔文子» - Գունչու Վենձի. Վեյ տերության ազնվական էր, Վեյի տիրակալ Սյան իշխանի թոռը, հայտնի նաև Գունսուն Բա անունով: Նրա մասին պատմություն կա «Թանգուն» աշխատության մեջ:

② «公明賈» - Գունմին Զյա. Վեյ տերության աստիճանավոր էր, ծառայում էր Գունչու Վենձիին:

③ «蔣» - «օգտագործել», «միջոցով», «համաձայն» և այլ իմաստներ ունի, սակայն ասույթում կիրավլած է «այդպես» իմաստով, փոխարինում է «此» գաղափարագրին: Գործածության նման օրինակ հանդիպում է նաև պարոն Յան Յուֆուի «բացատրական բառարանում»:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՇԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 4 子曰：“臧武仲以防求为后于鲁①， 虽曰不要②君， 吾不信也。”

Ուսուցիչն ասաց. «Մինչ Լուից հեռանալը Զան Ուշունը պահանջում էր, որ իր հետնորդները մնան ֆանում. թեև ասում են, որ չի հարկադրել տիրակալին, ես չեմ հավատում»:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զան Ուջունը մինչև Ցի տերություն աքսորվելը պահանջում էր, որ իր ժառանգները մնան իր Ֆան բերդաքաղաքում և շարունակեն ծառայել որպես Լու տերության աստիճանավորներ: Թեև ասում են, որ չի սպառնացել տիրակալին, ես չեմ հավատում»:

[Մեկնությունը]

① «臧武仲以防求为后于鲁» - «Մինչ Լուից հեռանալը Զան Ուջունը խնդրում էր, որ իր հետնորդները մնան Ֆանում». Ֆանը լավ ամրացված բերդաքաղաք էր, զբաղեցնում էր կարևորագույն ռազմավարական դիրք և մոտ էր Ցի տերության սահմանին:

② «要» - «ցանկանալ», «խնդրել», «պատրաստվել». Ժամանակակից լեզվի առաջին տոնայնությամբ արտասանվելու դեպքում ստանում է «պահանջել», «հարկադրել» իմաստները:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 5 子曰：“晋文公①谲②而不正， 齐桓公①正而不谲。”

Ուսուցիչն ասաց. «Զինի Վեն իշխանը նենգ էր և ոչ շիտակ, Ցիի Հուան իշխանը շիտակ էր և ոչ նենգ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ձին տերության Վեն իշխանը ուխտադրուժ էր և անազնիվ, իսկ Ցի տերության Հուան իշխանը ազնիվ էր և շիտակ, չէր դրժում երդումը»:

[Մեկնությունը]

① «晋文公，齐桓公» - Զինի Վեն իշխան, Ցիի Հուան իշխան. «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանի հայտնի տիրակալներն են, կառավարել են գլուխ միաժամանակ: Վեն իշխանը հայտնի էր նաև որպես Զունիք, իսկ Հուան իշխանը՝ որպես Սյառբայ:

② «謗» - «նենգ». ասություն կիրառված է «ուխտադրուժ» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 6 子路曰：“桓公杀公子纠，召忽死之，管仲不死①。”曰：“未仁乎？”子曰：“桓公九合②诸侯，不以兵车，管仲之力也。如其仁，如其仁③。”

Զիլուն ասաց.

- Հուան իշխանը սպանեց Գունձի Զյուին, Շառ Հուն անձնասպան եղավ, Գուանջունը չմահացավ:

Հավելեց.

- Մինթե մարդկային չէր:

Ուսուցիչն ասաց.

- Հուան իշխանը ինն անգամ միավորել է իշխաններին՝ առանց զենքի օգնության, Գուանջունի շնորհիվ: Այդպիսին է նրա մարդկայնությունը, այդպիսին է նրա մարդկայնությունը:

[Փոխադրությունը]

Զիլուն ասաց.

- Ցի տերության Հուան իշխանը սպանեց իր եղբայր Գունձի Զյուին, նրա ուսուցիչ Շառ Հուն ինքնասպան եղավ, իսկ մյուս ուսուցիչը՝ Գուանջունը, ողջ մնաց:

Անուհետև ավելացրեց.

- Մի՞թե Գուանջումը մարդկային էր:
Քոնձին ասաց.
- Ցի տերության Հուան իշխանին ինն անգամ հաջողվել է միավորել իշխաններին և կասեցնել պատերազմը: Այդ ամենը միայն Գուանջունի ընդունակությունների շնորհիվ էր: Այդպիսին է Գուանջունի մարդկայ-նությունը, այդպիսին է Գուանջունի մարդկայնությունը:

[ՄԵԿԸՆՈՒԹՅՈՒՆ]

① «管仲不死» - «Գուանջունը չմահացավ». Հուան իշխանը և Գունձի Զյուն Ցի տերության Սյան իշխանի եռքայրներն էին: Սյան իշխանը աչքի էր ընկնում թեթևամիտ ու անբարո վարքով, այդ պատ-ձառով էլ նրա հանդեպ դժգոհություն հասունացավ և նա սպանվեց: Երկու եռքայրները վախենալով, որ կարժանանան ավագ եռոր ձակատագրին, լրեցին Ցին: Հուան իշխանը Բառ Շույայի օգնությամբ փախավ Զյու տերություն, իսկ Գունձի Զյուն Գուանջունի և Զառհուի օգնությամբ փախավ Լու տերություն: Որոշ ժամանակ անց Հուան իշխանը վերադարձավ Ցի՝ որպես գահի օրինական ժառանգորդ: Ցիի տիրակալ հոչակվելուց հետո հրամայում է սպանել եղբորը, իսկ Գուան-ջունը մկսում է ծառայել Հուան իշխանին՝ որպես ավագ խորհրդական:

② «九合» - «ինն անգամ միավորվել». Իրականում Հուան իշխանը ընդհանուր վտանգի՝ բռչվորների դեմ միավորել է հարևան իշխաննե-րին տասնմեկ ամգամ, ինը թիվն այստեղ խորհրդանշական բնույթ է կրում, ցոյց է տալիս երևույթի բազմակիությունը:

③ «如其仁» - «Այդպիսին է նրա մարդկայնությունը». Վաճ Ինչիի «ՄԵԿԸՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» արտահայտությունը փոխադրվում է որպես «Դա այդպես է»: Յան Սյունի «Ընտրյալ ասույթներ» աշխատության մեջ արտահայտությունը կրկնվում է երեք անգամ, սակայն նույն իմաստով, կրկնողությունը ուղղակի հաստատական իմաստ է հաղորդում:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 7 子贡曰：“管仲非仁者与？桓公杀公子纠，不能死，又相之。”子曰：“管仲相桓公，霸诸侯，一匡天下，民到于今受其赐。微①管仲，吾其被②发左衽矣。岂若匹夫匹妇之为谅也，自经③于沟渎④而莫之知也？”

Զիգումն ասաց.

- Գուանջունը մարդկային է: Հուան իշխանը սպանեց Գունձի Ձյուին, նա չկարողացավ մեռնել և նախարար դարձավ:

Ուսուցիչն ասաց.

- Գուանջունը Հուան իշխանի նախարարը դառնալով՝ նրան ամենակալ դարձրեց իշխանների մեջ, օգնելով միավորել ամենը Երկնքի տակ: Մինչև հիմա մարդիկ վայելում են նրա բարեգործությունների պատուները: Չիներ Գուանջունը, մենք կշրջեինք հերարձակ և հագուստով կծածկվեինք ձախս կողմից: Միթե նա կարող էր հասարակ գեղջուկների պես անձնասպան լինել փոսերի և խանդակի մեջ, և չէր լինի մեկն, ով իմանար այդ մասին:

[Փոխադրությունը]

Զիգումն ասաց.

- Միթե Գուանջունը մարդկային է: Երբ Հուան իշխանը սպանեց իր եղբորը՝ Գունձի Ձյուին, Գուանջունը չկամեցավ ինքնասպան լինել, ավելին՝ Հուան իշխանի խորհրդականը դարձավ:

Քունձին ասաց.

- Երբ Գուանջունը Հուան իշխանի նախարարը դարձավ, օգնեց նրան ամենակալ դառնալ իշխանների մեջ, օգնելով միավորել երկիրը, իսկ ժողովուրդը մինչև հիմա վայելում է նրա բարեգործությունների պատուները: Չիներ Գուանջունը, մենք մինչև հիմա կշրջեինք հերարձակ և հագուստը կկապեինք ձախս կողմից, ինչպես վայրենիները: Միթե նա

Կոնֆուցիոս. Զրույցներ

կարող էր հասարակ մարդկանց նման ինքնասպան լինել ձամփեզրյա խանդակի մեջ՝ չքանալով անհայտության մեջ:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «微» - ասույթում կիրառված է նախադասությանը հիպոթետիկ սկիզբ հաղորդելու համար:

② «被» - ունի նույն իմաստը, ինչ «披» գաղափարագիրը՝ «արձակել», «բաց թողնել»:

③ «自经» - ունի նույն իմաստը, ինչ «自缢» արտահայտությունը՝ «կախվել», «ամձնասպան լինել»:

④ «沟渎» - «փոսեր և խանդակներ». Վան Ֆուչին կարծում էր, որ այս արտահայտությունն իրականում տեղանուն է, սակայն այդ տեսակետը որևէ լուրջ հիմնավորում չունի:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 8 公叔文子之臣大夫①僎与文子同升诸②公。子闻之，曰：“可以为‘文’③矣。”

Գունչու Վենձիի պաշտոնյա Զուանը Վենձիին հավասար աստիճան ստացավ՝ ազնվական կարգին դասվելով: Լսելով դա՝ Ռուուցիչն ասաց. «Կարող է «կիրթ» համարվել»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Գունչու Վենձիի պաշտոնյա Զուանը նրա երաշխավորությամբ Վենձիին հավասար աստիճան ստացավ արքունիքում և կարգվեց նախարար: Ինանալով այդ մասին՝ Քունձիին ասաց. «Նրան կարելի է «քաղաքակիրթ» համարել»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① Մաս Ցիլինը նշում էր, որ Զուանը Գունչու Վենձիի կալվածքների կառավարիչ էր, այսպես կոչված՝ «տան պաշտոնյա», և նրա ընդունակությունները տեսմելով՝ Վենձին կարողացավ նրա համար արթունական պաշտոնյայի կարգ ստանալ:

② «諸» - ասուլյուս նույն կիրառությունն ունի, ինչ «于»՝ «...ից» գաղափարագիրը, որ տվյալ դեպքում խորհրդանշում է անցումը տոհմական պաշտոնյայի կարգից արքունական պաշտոնյայի կարգին:

③ «文» - ասուլյուս կիրառված է «կիրթ» իմաստով, Գունչու Վենձիի պատվանունն է: «Ծեսերի գրքում» նշվում է, որ Գունչու Վենձին նույն ինքը՝ Զենհոյ Վենձին է:

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 1 9 子言卫灵公之无道也， 康子曰：“夫如是， 焉而①不丧？”
子曰：“仲叔圉②治宾客， 祝沃治宗庙， 王孙贾治军旅。夫如是， 焉其丧？”

Ուսուցիչը խոսելով Վեյի Լին իշխանի մասին, ասաց, որ նա հեռացել էր Ուղուց: Քանձին հարցրեց.

- Եթե այդպես է, ինչպես չի կորցրել:

Ուսուցիչն ասաց.

- Զունչու Յուն ընդունում է պատվիրակներին, Զութոուն կարգավորում է տաձարները, Վաճառուն Զյան կառավարում է բանակը: Եթե այդպես է, ինչպես կորցնել:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին՝ խոսելով Վեյ տերության Լին իշխանի մասին, ասաց, որ նա անվճռական է: Քանձին հարցրեց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Եթե իսկապես այդպես է, ինչո՞ւ չի կորցրել տերությունը:
Քոնձին ասաց.
- Նրան ծառայում են Զունշու Յուն, որ ընդունում է այլ տերություն-ների պատվիրակներին, Զութոուն, որ վերահսկում է տաճարական գործերը, և Վանսուն Ջան, որ առաջնորդում է բանակը: Եթե այդպես է, ինչպես կարող էր կորցնել տերությունը: «»

[ՄԵԿԱՌՅՈՒՆՐ]

① «**奚而**» - բառացի՝ «ինչո՞ւ չի» կամ «ինչպես չի»: Հաճախ կիրառվել է նոյնիմաստ «**奚为**» ձևով:

② «**仲叔圉**» - Զունշու Յու. նոյն ինքը՝ Քուն Վենձին է:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՌՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 0 子曰：“其言之不怍， 则为之也难。”

Ուսուցիչն ասաց. «Նա, որ խոսում է առանց ամաչելու, դժվարանում է գործել»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՐ]

Քոնձին ասաց. «Անամոթաբար պարծեցող մարդը դժվարանում է անել այն, ինչ ասել է»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՌՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 1 陈成子①弑简公②。孔子沐浴而朝③，告于哀公曰：“陈恒弑其君，请讨之④。”公曰：“告夫三子！”孔子曰⑤：“以吾从大夫之后，不敢不告也。君曰‘告夫三子’者！”之三子告，不可。孔子曰：“以吾从大夫之后，不敢不告也。”

Չեն Չենձին սպանեց Ձյան իշխանին: Քունձին լվացվելուց հետո շտապեց արքունիք և ասաց Այ իշխանին:

- Չենհենը սպանել է իր տիրակալին, խնդրում եմ պատժել նրան: Իշխանն ասաց.
- Չեկուցիր երեք տոհմերին:
- Քունձին ասաց.
- Քանի որ ես աստիճանավորներից ցածր եմ, չեմ համարձակվի չգեկուցել: Տիրակալն ասաց. «Չեկուցիր երեք տոհմերին»:
- Նա գեկուցեց երեք տոհմերին, ոչինչ չարեցին:
- Քունձին ասաց.
- Քանի որ ես աստիճանավորներից ցածր եմ, չի համարձակվի չգեկուցել:

[Փռխադրությունը]

Չեն Չենձին սպանեց Ցի տերության Ձյան իշխանին: Քունձին ծիսական լվացում անելուց հետո շտապեց արքունիք և դիմեց Լու տերության Այ իշխանին:

- Չենհենը սպանել է իր տիրակալին, խնդրում եմ զորք ուղարկել ու պատժել նրան:

Այ իշխանն ասաց.

- Չեկուցիր Ձի, Շու և Մեն տոհմերի նախարարներին:
Հեռանարով՝ Քունձին ասաց.
- Քանի որ ես ցածր պաշտոն ունեմ, չեմ համարձակվի չգեկուցել: Տիրակալն ասաց, որ գեկուցեմ այդ երեքին:

Նա գեկուցեց երեք տոհմերի նախարարներին, սակայն նրանք հրաժարվեցին զորք ուղարկել:

Քունձին ասաց.

- Քանի որ ես ցածր պաշտոն ունեմ, չեմ համարձակվի չգեկուցել:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

- ① «陈成子» - Չեն Չենձի. հայտնի էր նաև որպես Չենհեն, Ցի տերության աստիճանավոր էր:
- ② «简公» - Զյան իշխան. Ցի տերության իշխանն էր, հայտնի էր նաև որպես Ժեն:

③ «孔子沐浴而朝» - «Քունձին լվացվելուց հետո շտապեց արքունիք». այդ ժամանակ Քունձին արդեն տերունական ծառայության չէր և միայն այդ դեպքի մասին գեկուցելու համար գնաց Լուի տիրակալի մոտ:

④ «请讨之» - «Խննդրում եմ պատժել նրան». Կոնֆուցիոնը խնդրում էր պատժել Չենհենին, քանի վերջինս սպանել էր իր տիրակալին: Տիրասպանությունը ամբողջովին հակառակ էր Կոնֆուցիոնի ուսմունքին: Կոնֆուցիոնը կանխատեսել էր, որ այդ դեպքը կխարխլի տերության հիմքերը և հող կմախսապատրաստի նոր պատերազմների համար: «Չուոյի նորթերում» հիշատակվում են Կոնֆուցիոնի հետևյալ խոսքերը. «Երբ Չենհենը սպանեց իր տիրակալին, ժողովուրդը միաբան չեղավ և բաժանեց՝ մի մասը եկավ Լու, մյուսը մնաց Ցիում, մնացյալը ցրվեցին այլ տերություններում»:

⑤ «孔子曰» - «Քունձին ասաց». հարկ է նշել, որ նշված արտահայտությամբ հաջորդող խոսքերը Կոնֆուցիոնն ասել էր Այ իշխանի մոտից դուրս գալուց հետո: Այդ համդիպման մասին հիշատակված է նաև «Չուոյի նորթերի» Այ իշխանի կառավարման տասներեքերորդ տարվա նկարագրության մեջ:

ԿՈՆՖՈՒՅՈՒՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 2 子路问事君。子曰：“勿欺也，而犯之。”

Զիլուն հարցրեց տիրակալին ծառայելու մասին: Ուսուցիչն ասաց.
- Մի ստիր, լավ է ընդդիմանաս նրան:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց, թե ինչպես պետք է ծառայել տիրակալին: Քունձին ասաց.

«Պետք չէ ստել նրան, ավելի լավ է բացահայտ անհամաձայնություն հայտնել:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 3 子曰：“君子上达①， 小人下达①。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը ձգտում է վեր, նվաստը ձգտում է վար»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնվայրը հասնում է մարդկայնության և արդարության, նվաստը հասնում է հարստության և շահի»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «上达, 下达» - «Չգտել վեր, ձգտել վար». Հին ու ժամանակակից մասնագետները տարրեր տեսակետներ են հայտնում, սակայն ես նպատակահարմար եմ գտել արտահայտությունը փոխադրել ըստ Հուան Քանի մեկնության:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 4 子曰：“古之学者为己①， 今之学者为人①。”

Ուսուցիչն ասաց. «Հնում սովորում էին իրենց համար, այժմ սովորում են այլոց համար»:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հնում սովորում էին իրենց կատարելագործելու համար, այժմ սովորում են ուրիշների առջև պարծենալու համար»:

[Մեկնությունը]

① «为己, 为人» - «իրենց համար, այլոց համար». արտահայտությունները փոխադրելիս հիմք եմ վերցրել պարոն Յան Յուֆուի և Սյունձիի մոտեցումները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 5 蘇伯玉①使人于孔子。孔子与之坐而问焉，曰：“夫子何为？”对曰：“夫子欲寡其过②而未能也。”使者出。孔子曰：“使乎！使乎！”

Յյու Բոյուն բանքեր ուղարկեց Քունձիի մոտ: Քունձին նստեց նրա հետ և հարցրեց.

- Ի՞նչն է մտահոգում տիրոջդ:

Բանքերն ասաց.

- Տերս ցանկանում է քացնել իր սխալները, սակայն չի կարողանում: Բանքերը հեռացավ: Քունձին ասաց.

- Ինչ բանքեր է: Ինչ բանքեր է:

[Փոխադրությունը]

Յյու Բոյուն բանքեր ուղարկեց Քունձիի մոտ: Քունձին խնդրեց նրան նստել և հարցրեց.

- Ի՞նչ է մտածում տերդ:

Բանքերն ասաց.

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

- Տերս ցանկանում է նվազեցնել իր սխալները, սակայն դեռ չի կարողանում:

Երբ բանբերը հեռացավ, Քունձին ասաց.

- Ինչ լավ բանբեր է: Ինչ լավ բանբեր է:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «蘧伯玉» - Ցյու Բոյու. Վեյ տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Յուան: Կոնֆուցիոսը մի անգամ հյուրընկալվել էր նրան՝ Վեյի տարածքով անցնելու ժամանակ:

② «寡其过» - «քչացնել իր սխալները». «Չուանձիի» «Չեյան» գլխում այսպիսի տողեր կան. «Ցյու Բոյուն մինչև վաթսուն տարեկան դառնալը վաթսուն անգամ փոխվեց, և այն, ինչ սկզբում հաստատում էր, հետագայում ժխտում էր: Ո՞վ գիտի, գուցե մեզ էլ է վիճակված հիսունինն անգամ ժխտել այն, ինչ այժմ ձշմարտություն ենք համարում»: «Հուայնանի իմաստումներ» աշխատության մեջ նշվում է նոյնաբռվանդակ մի արտահայտություն. «Ցյու Բոյուն հիսուն տարեկան է և ժխտում է քառասունինը տարվա ընթացքում սովորածը»: Կոնֆուցիոսը կարծում էր, որ տեսակետները հաձախակի փոխելը վկայում է ձշմարտության մշտական փնտրութի մասին: Այդ պատճառով էլ նա գովեց բանբերին:

ԿՈՆՖՈՒՅԻՆԾԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 6 子曰：“不在其位，不谋其政①。”曾子曰：“君子思不出其位。”

Ուսուցիչն ասաց.

- Նրա դիրքում չես՝ մի խառնվիր նրա կառավարմանը: Զենձին ասաց.

- Ազնվայրը չի մտածում այն բանի մասին, որ իր դիրքից դուրս է:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փռխադրությունը]

Քունձին ասաց.

- Եթե տիրակալի դիրքում չես, մի փորձիր խառնվել նրա կառավարմանը:

Չենձին ասաց.

- Ազնիվ մարդը չի մտածում այն ամենի մասին, ինչն իր պաշտոնական դիրքից դուրս է:

[Մեկնությունը]

① Տես՝ «Զրույցների» ութերրդ գլուխը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 7 子曰：“君子耻其言而①过其行。”

Ուսուցիչն ասաց. «Ազնիվայրն ամաչում է, երբ իր խոսքերը հակասում են իր գործերին»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդն ամաչում է, երբ շատ է խոսում, սակայն քիչ գործում»:

[Մեկնությունը]

① «而» - ասուլյառում կիրառված է որպես պատկանելություն ցույց տվող գաղափարագիր, նման «之» գաղափարագրին:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 8 子曰：“君子道者三，我无能焉：仁者不忧，知者不惑，勇者不惧。”子贡曰：“夫子自道也。”

Ուսուցիչն ասաց.

- Ազնվայրը երեք Ուղի ունի, որոնցով ես չկարողացա անցնել։ Մարդկայինը չի տագնապում, իմաստունը չի երկմտում, խիզախը չի երկնչում։

Զիլոն ասաց.

- Ուսուցիչն անցել է այդ Ուղիներով։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Ես չկարողացա անել այն երեք բաները, որ պիտի անի ազնիվ մարդը։ Մարդկային լինելով՝ չի տագնապում, իմաստուն լինելով՝ չի երկմտում, քաջ լինելով՝ չի վախենում։

Զիլոն ասաց.

- Ուսուցիչը նկարագրեց ինքն իրեն։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 2 9 子贡方人①。子曰：“赐也贤乎哉？夫我则不暇。”

Զիգունը գնահատում էր մարդկանց։ Ուսուցիչն ասաց.

- Ցի, մի՞թե դա պետք է։ Ես ժամանակ չունեմ։

[Փոխադրությունը]

Զիգունը քննադատում էր մարդկանց։ Քունձին ասաց.

- Ցի, մի՞թե դրա կարիքը կա։ Ես դրա համար ժամանակ չունեմ։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «方人» ~ «գնահատել մարդկանց». որոշ մեկնություններում արտահայտությունը փոխադրված է որպես «չարախոսել մարդկանց» կամ «գրապարտել մարդկանց», սակայն ես գերադասեցի փոխադրել արտահայտությունը որպես «քննադատել մարդկանց», որովհետև Կոնֆուցիոսի ամենասիրելի սաներից մեկի՝ Չիգունի նկարագիրը, ըստ տարբեր մասնագետների՝ թույլ չի տալիս նրան «գրապարտիչ» անվանել:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 0 子曰：“不患人之不已知，患其不能也。”

Ուսուցիչն ասաց. «Մի վշտացիր, որ մարդիկ չեն ձանաչում քեզ, վշտացիր, որ ունակ չես»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Մի վշտացիր, որ մարդիկ չեն ձանաչում քեզ, վշտացիր, որ չես դրսնորել ընդունակություններդ»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 1 子曰：“不逆诈，不亿不信，抑亦先觉者，是贤乎！”

Ուսուցիչն ասաց. «Չակնկալել խարեւություն, չկասկածել անվստահության վրա, սակայն կանխատեսել այդ ամենը, մի՞թե իմաստություն չէ»:

[Փոխադրությունը]

Ուսուցիչն ասաց. «Երբ չես սպասում, որ կխաքեն, չես կասկածում, որ մարդիկ վստահելի չեն, սակայն ընդունակ ես կանխատեսել այդ ամենը, մի՞թե իմաստուն չես»:

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 2 微生亩①谓孔子曰：“丘何为是②栖栖者与？无乃为佞乎？”孔子曰：“非敢为佞也，疾固也。”

Վեյշեն Մուն հարցրեց Քունձիին.

- Ցյու, ինչի՞ համար ես այդպես մտահոգ։ Զե՞ս ուզում պերձախոսել։ Քունձին ասաց.
- Զեմ համարձակվի պերձախոսել։ Ասում եմ բոհությունը։

[Փոխադրությունը]

Վեյշեն Մուն հարցրեց Քունձիին.

- Ցյու, ինչո՞ւ ես մշտագրադ։ Զե՞ս ուզում ի ցույց դնել քո պերձախոսությունը։

Քունձին ասաց.

- Զեմ համարձակվում պերձախոսել, թեև ասում եմ համառ ու անտաշ մարդկանց։

[Մեկնությունը]

① «微生亩» - Վեյշեն Մու. մինչև հիմա հայտնի չէ, թե ում մասին է խոսքը։ Հուան Ցիշունը կարծում էր, որ նա ձգնավոր է եղել։ Բայ երևոյց թիմ՝ Կոնֆուցիոսից տարիքով մեծ էր, քանզի նրան անունով է դիմում՝ «Ցյու»։

Կոնֆուցիոն. Զրույցներ

② «是» ~ «լինել», «պահանջում կիրառված է որպես մակրայ՝ «այդպես» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 3 子曰：“骥不称其力，称其德也。”

Ուսուցիչն ասաց. «Նժույգն ազնվացեղ չի կոչվում ուժի համար, կոչվում է բնույթի համար»:

[Փռխադրությունը]

Քոնճին ասաց. «Նժույգն ազնվացեղ համարում են ոչ թե բիրտ ուժի, այլ իր որակների համար»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 4 或曰：“以德报怨①，何如？”子曰：“何以报德？以直报怨，以德报德。”

Մեկը հարցրեց.

- Իսկ եթե առաքինությամբ պատասխանել չարությանը:

Ուսուցիչն ասաց.

- Իսկ ինչպես պատասխանել առաքինությանը: Զարությանը պետք է պատասխանել արդարությամբ, իսկ առաքինությանը պատասխանել առաքինությամբ:

[Փռխադրությունը]

Ինչոր մեկը հարցրեց.

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

- Իսկ եթե չարությանը պատասխանել բարությամբ:
Քոնձին ասաց.
- Իսկ ինչպես պատասխանել բարությանը: Զարությանը պետք է պատասխանել արդարությամբ, իսկ բարությանը պատասխանել բարությամբ:

[Մեկնությունը]

① «以德报怨» - «առաքինությամբ պատասխանել չարությանը». Լաոձին նշում էր. «Մեծը բաղկացած է փորից, շատը՝ քից: Ատելությանը պետք է պատասխանել առաքինությամբ»: Այս արտահայտությունը մեր օրերում ևս շատ տարածված է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 5 子曰：“莫我知也夫！”子贡曰：“何为其莫知子也？”子曰：“不怨天，不尤人，下学而上达①。知我者其天乎！”

Ուսուցիչն ասաց.

- Զկա մեկը, որ ինձ ձանաչում է:
Ձիգունն ասաց.
- Ինչո՞ւ չկա մեկը, որ ձանաչում է Ուսուցիչն:
Ուսուցիչն ասաց.
- Չեմ գանգատվում Երկնքին, չեմ մեղադրում մարդկանց, ցածրն ուսումնասիրելով՝ հասնում եմ բարձրին: Ինձ ձանաչում է միայն Երկինքը:

[Փոխադրությունը]

- Քոնձին հոգոց հանեց և ասաց.
- Ինձ ոչ ոք չգիտի:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

Զիզումն ասաց.

- Ինչո՞ւ Ձեզ ոչ ոք չգիտի:

Քունձին ասաց.

- Որովհետև չեմ գանգատվում Երկնքին, չեմ մեղադրում մարդկանց, պարզ գիտելիքներ յուրացնելով՝ կարողանում եմ բացահայտել ձշմարիտը: Ինձ գիտի թերևս միայն Երկինքը:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «下学而上达» - «ցածրն ուսումնասիրելով՝ հասնում եմ բարձրին». այս արտահայտությունը բազում մեկնություններ ունի: Այժմ դժվար է ասել, թե իրականում ինչ է նկատի ունեցել Կոնֆուցիոսը: Հուան Քանը այսպես է մեկնարանում. «Ուսումնասիրելով ցածրը՝ լիմբոնում ես մարդկայինը, ուսումնասիրելով բարձրը՝ լիմբոնում ես երկնայինը»: Ես ենթադրում եմ, որ նկատի ունի ուսուցման մեջ պարզից բարդին անցնելը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 6 公伯寮①愬②子路于季孙。子服景伯③以告，曰：“夫子固有惑志于公伯寮，吾力犹能肆诸市朝④。”子曰：“道之将行也与，命也；道之将废也与，命也。公伯寮其如命何！”

Գունքո Լյառն Ձիլուին չարախոսեց Ձիսունի մոտ: Ձիֆու Ձինքոն պատմեց այդ մասին և ասաց.

- Գունքո Լյառն մոլորեցրել է տիրոջը. իմ ուժը կհերիքի, որ նրա կառափը դնեմ շուկայում կամ ապարանքի դիմաց:

Ուսուցիչն ասաց.

- Հետևում են Ուդուն՝ ձակատագիր է, շեղվում են Ուդուց՝ ձակատագիր է: Գունքո Լյառն ով է ձակատագրի դեմ:

[Փոխադրությունը]

Գունքո Լյառն զրպարտեց Զիլուին Զիսունի մոտ: Զիֆու Զինքոն պատմեց այդ մասին Քունձիին և ասաց.

- Գունքո Լյառին հաջողվել է մոլորեցնել ծեր տիրոջը, սակայն իմ ուժը կհերիքի, որ գլխատեմ նրան և գոլուն ի ցույց դնեմ շուկայում կամ պալատի դիմաց:

Քունձին ասաց.

- Կետևնեն իմ խորհուրդներին թե ոչ՝ ձակատագրի կամքն է: Մի՞թե Գունքո Լյառն կարող է տնօրինել իմ ձակատագիրը:

[Մեկնությունը]

① «公伯寮» - Գունքո Լյառ. Կոնֆուցիոսի սաներից էր, «Զուննիի սաների պատմագրություն» աշխատության մեջ հիշատակվում է նաև Զիջոնի անունով:

② «憩» - «գանգատվել», «բողոքել». ասուլյամ կիրառված է «չարախոսել», «զրպարտել» իմաստներով:

③ «子服景伯» - Զիֆու Զինքո. Լու տերության աստիճանավոր էր, Կոնֆուցիոսի առաջին սաներից, հայտնի էր նաև Զիֆու Հե անունով:

④ «市朝» - բառացի՝ «շուկա և ապարանք». հնում մահապատժի ենթարկված մարդկանց մարմինները կամ դրանց մասերն ի ցույց էին դրվում շուկայի հրապարակում կամ տերունական ապարանքի դիմաց:

ԿՈՆՖՈՒՅԻՇԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 7 子曰：“ 贤者辟①世， 其次辟地， 其次辟色， 其次辟言 。 ”子曰：“ 作者七人矣。 ”

Ուսուցիչն ասաց. «Առաքինին խոսափում է աշխարհից, հետևում են նրանք, որ խոսափում են տեղերից, հետևում են նրանք, որ խոսափում

Կոնֆուցիոս. Զրույցներ

Են վերաբերմունքից, հետևում են նրանք, որ խուսափում են խոսքից»:
Ուսուցիչն ասաց. «Այդպիսիք յոթն են»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Որոշ առաքինի այրեր հեռացան չար աշխարհից և սկսեցին ձգնել, սրանց հաջորդեցին նրանք, որ փախչում էին անհանգիստ վայրերից, սրանց հաջորդեցին նրանք, որ փախչում էին վատ վերաբերմունքից, սրանց հաջորդեցին նրանք, որ փախչում էին ծանր խոսքերից»:

Քունձին այնուհետև ավելացրեց. «Այդպիսիք յոթն էին»:

[Մեկնությունը]

① «辟» - ունի «ընդգրկել», «հետ մղել», «խուսափել» իմաստները, ասույթում կիրառված է «խուսափել» իմաստով, նույն կիրառությունն ունի ինչ «避» գաղափարագիրը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 8 子路宿于石门①。晨门曰：“奚自？”子路曰：“自孔氏。”
“曰：“是知其不可而为之者与？”

Զիլոն զիշերեց Շիմենի մոտ: Առավոտյան դռնապանը հարցրեց.

- Որտեղից ես:

Զիլոն ասաց.

- Քունի տոհմից եմ:

- Նա՞ է, ով իմանալով, որ չի հաջողի, փորձում է անել:

[Փոխադրությունը]

Զիլուն գիշերեց Շիմենի մոտ: Առավոտ վաղ, երբ քաղաք էր մտնում,
դոնապաններից մեկը հարցրեց նրան.

- Որտեղից ես գալիս:

Զիլուն ասաց.

- Քունձիի տոհմից եմ:

Դոնապանը հարցրեց.

- Նա՞ է, ով իմանալով, որ չի կարող անել, այնուամենայնիվ փորձում է:

[Մեկնությունը]

① «石門» - Շիմեն. տեղանուն է, բառացի՝ «Քարեղեն դարպասներ»: «Ուշ Հանի պատմագրության» մեջ և Զեն Սյուանի «Մեկնություններում» նշվում է, որ այն Լու տերության քաղաքներից է:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 3 9 子击磬于卫，有荷蒉而过孔氏之门者，曰：“有心哉，
击磬乎！”既而曰：“鄙哉，硁硁乎！莫己知也，斯已而已矣。深则厉，
浅则揭①。”子曰：“果哉！末之难矣。”

Ուսուցիչը զարկում էր քարե կոչմակներին Վեյում, երբ քթոցը մեջքին
մեկը քունի տան դարպասի մոտով անցնելիս ասաց.

- Մտահոգ է քարե կոչմակներին զարկողը:

Փոքր-ինչ հետո հավելեց.

- Որքան կոպիտ են, ձանձրացնող: Չկա մեկը, որ ձանաչում է, սա
են, ուրիշ ոչինչ: «Խորն է՝ կանցնեմ հազուստով, ծանծաղ է՝ կանցնեմ
քղանցք քարձրացրած»:

Ուսուցիչն ասաց.

- Հիրավի, կտրուկ է: Դժվար է նրան հակադարձելը:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Երբ Քունձին ապաստանել էր Վեյ տերությունում, մի անգամ զարկում էր քարե կոչնակներին, երբ կողովը մեջքին մի մարդ նրա տան դպրասահ մնուղ անցնելիս ասաց.

- Քարե կոչնակներին զարկողը տագնապում է:

Փոքր-ինչ ականջ դնելուց հետո էլ ավելացրեց.

- Կոպիտ ու ձանձրալի հնչյուններ են, կարծես ասելիս լինի. «Զկամեկը, որ ձանաշում է ինձ»: Զկամեկը, որ ձանաշում է քեզ, թող ամեն ինչ, ավելի լավ: Ինչպես ասվում է երգում. «Խորն է՝ կանցնեմ հազուտով, ծանծաղ է՝ կանցնեմ փեշս բարձրացրած»:

Քունձին ասաց.

- Որքան վճռական է: Դժվար կլինի նրան համոզել:

[Մեկնությունը]

① «深则厉, 浅则揭» - «Խորն է՝ կանցնեմ հազուտով, ծանծաղ է՝ կանցնեմ քանցքս բարձրացրած». հատված է «Երգերի գրքից»: Զրի խոր կամ ծանծաղ լինելոն այստեղ կիրառված է, որպեսզի խորհրդանշի երկրի խավարամտության մակարդակը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻՍՄԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 4 0 子张曰：“《书》云：‘高宗谅阴①，三年不言。’何谓也？”子曰：“何必高宗，古之人皆然。君薨，百官总己以听于冢宰三年。”

Զիջամն ասաց.

- «Գրքում» ասվում է. «Գառձունը սգում էր հյուղակում և չէր խոսում երեք տարի»: Ի՞նչ է դա նշանակում:

Ուսուցիչն ասաց.

- Ինչո՞ւ միայն Գառձունը, հնում բոլորն էին այդպես վարվում:

Տիրակալի մահից հետո հարյուր աստիճանավորները երեք տարի լսում էին միայն նախարարապետին:

[Փոխադրությունը]

Զիշանն ասաց.

- «Պատմագրության» մեջ ասվում է. «Երբ Գառձունը սուզ էր պահում, ապրում էր ծղոտե հյուղակում և երեք տարի շարունակ չէր խոսում»: Ի՞նչ է դա նշանակում:

Քոնձին ասաց.

- Ինչո՞ւ միան Գառձունը, բոլոր նախանձերը այդպես էին վարվում: Տիրակալի մահից հետո տարբեր պաշտոնների աստիճանավորները երեք տարի շարունակ կատարում էին միայն նախարարապետի հրամանները:

[Մեկնությունը]

① «谅阴» - «սգալ հյուղակում». հնում սգո ծեսերից մեկն էր՝ տիրակալը հրո մահից հետո տևական ժամանակ առանձնանում էր համեստ մի խրձիթում, որպեսզի ոչինչ չխանգարեր սգալ:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 4 1 子曰：“上好礼， 则民易使也。”

Ուսուցիչն ասաց. «Եթե վերևում սիրում են ծեսերը, ապա մարդկանց դյուրին է բանեցնելը»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Եթե բարձրաստիճան այրերը հետևում են ծեսերին, ապա ժողովրդին հեշտ է կառավարելը»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 4 2 子路问君子。子曰：“修己以敬。”曰：“如斯而已乎？”曰：“修己以安人①。”曰：“如斯而已乎？”曰：“修己以安百姓。修己以安百姓②，尧舜其犹病诸？”

Զիլուն հարցրեց ազնվայրի մասին։ Ուսուցիչն ասաց.

- Կատարելագործվում է հարգալից լինելու համար։
- Դա և ուրիշ ոչի՞նչ։
- Կատարելագործվում է այլոց խաղաղեցնելու համար։
- Դա և ուրիշ ոչի՞նչ։
- Կատարելագործվում է հասարակ մարդկանց խաղաղեցնելու համար։ Կատարելագործվել հասարակ մարդկանց խաղաղեցնելու համար՝ Յանյին և Շունին միթե դա չէր մտահոգում։

[Փռխադրությունը]

Զիլուն հարցրեց, թե ինչպիսին է ազնիվ մարդը։ Քունձին ասաց.

- Նա կատարելագործվում է առավել լավ ծառայելու համար։
- Զիլուն հարցրեց.
- Բնդամենը դա և ուրիշ ոչի՞նչ։
- Քունձին ասաց.
- Նա կատարելագործվում է ենթականերին բարգավաճում բերելու համար։

Զիլուն հարցրեց.

- Բնդամենը դա և ուրիշ ոչի՞նչ։
- Նա կատարելագործվում է բոլոր մարդկանց բարգավաճում բերելու համար։ Կատարելագործվել բոլոր մարդկանց բարգավաճում բերելու համար. միթե դա չէր, որ անընդհատ մտահոգում էր Յան և Շուն տիրակալներին։

[Մեկնությունը]

① «人» - «մարդ». տվյալ դեպքում կիրառված է «ենթականեր» կամ «ծառաներ» իմաստով: Տես՝ «Զրույցների» առաջին գլխի հինգերորդ ասույթի չորրորդ ծանրագրությունը:

② «百姓» - բառացի՝ «հարյուր տոհմ». արտահայտությունը հնուց ի վեր կիրառվել է հասարակ մարդկանց նշելու համար: Գրեթե նույն բովանդակությունն ունի «Զրույցների» վեցերորդ գլխի երեսուներորդ ասույթը, որը նշվում է. «Եթե գտնվեր մեկը, ով առատություն ու բարգավաճում բերեր ժողովրդին, կարող էինք նրան մարդկային կոչել»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 4 . 4 3 原壤①夷俟②。子曰：“幼而不孙弟③，长而无述焉，老而不死，是为贼。”以杖叩其胫。

Յուան Ժանը սպասում էր բարբարոսի պես: Ուսուցիչն ասաց.

- Երիտասարդ էիր, սակայն զուրկ որդիական պատկառանքից և եղբայրական սիրուց, հասակ առնելով՝ հիշատակելու ոչինչ չարեցիր, ծեր ես՝ չես ուղղվում, ասես ավազակ լինես:

Եվ գավազանով խփեց նրա սրունքին:

[Փոխադրությունը]

Յուան Ժանը՝ ոտքերը տարածած, նստած սպասում էր Քունձիին: Քունձին ասաց.

- Երբ դու երիտասարդ էիր, չգիտեիր ծեսերը, հասակ առնելով՝ հիշատակման արժանի ոչինչ չթողեցիր սերունդներին, հիմա ծեր ես՝ դարձյալ չես ուղղվում, ապրելով հացկատակ ավարայի պես:

Այս ասելով՝ գավազանով խփեց նրա ոտքին:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «原壤» - Յուան Ժան Կոնֆուցիոսի բարեկամներից էր, որ աչքի էր ընկնում իր տարօրինակ վարքով: «Ծեսերի գրքում» մի պատում կա նրա մասին: Եթի մահացավ Յուան Ժանի մայրը, Կոնֆուցիոսը իր վրա վերցրեց հուղարկավորության ծախսերն ու արարողությունների կազմակերպումը: Իսկ Յուան Ժանը հուղարկավորության ժամանակ բարձրացավ մոր դագաղի վրա և սկսեց երգել: Սակայն Կոնֆուցիոսը ձևացրեց, թե չի նկատում՝ այդ խայտառակ արարքը վերագրելով բարեկամի վշտին: Ոմանք համարում են նրան Կոնֆուցիոսի ընդդիմախոսներից մեկը:

② «夷俟» - «սպասել բարբարոսի նման». «夷» գաղափարագիրն ընդհանրական անուն էր գրեթե բոլոր «ոչ Հան» ժողովուրդների համար, իսկ «սպասել բարբարոսի պես» արտահայտությունը վերաբերում է նստելու դիրքին:

③ «孙弟» - բառացի՝ «ժառանգ և եղբայր». արտահայտությունն ասույթում կիրառված է «որդիական պատկառամբ և եղբայրական սեր» իմաստով:

ԿՈՆՖՈՒՅԻՆՈՒՄ ԲՆԱԳԻՐԸ

1 4. 4 4 阙党①童子将命。或问之曰：“益者与？”子曰：“吾见其居于位②也，见其与先生并行③也。非求益者也，欲速成者也。”

Ցյուե համայնքից մի պատանի գրություն էր բերել: Ոմն մեկը հարցրեց նրա մասին.

- Կիաջողի՞ արդյոք:

Ուսուցիչն ասաց.

- Ես տեսնում եմ նրա նստելու դիրքը, տեսնում եմ, թե ինչպես է քայլում իր պարոնների հետ կողք կողքի: Հաջողության չի հասնի, քանզի ձգտում է արագ արդյունքի:

[Փոխադրությունը]

Ցյուե համայնքից մի պատաճի գրություն էր բերել Քունձիի համար: Ինչոր մեկը Քունձիին հարցրեց նրա մասին:

- Կարո՞ղ է նա հասնել հաջողության:

Քունձին ասաց.

- Դատելով նրանից, թե ինչպես է նա նստում և թե ինչպես է քայլում մեծահասակների հետ կողք կողքի, կարելի է ասել, որ նա չի փորձում հասնել հաջողության, այլ փորձում է նմանվել անվանիներին:

[Մեկնությունը]

① «*阙党*» - «*Ցյուե համայնք*». տեղանուն է, ենթադրվում է՝ այդպես է կոչվել Կոնֆուցիոսի բնակավայրը: Այդ տեսակետի կողմնակիցներ էին Գո Յանուն, Լյու Բառնանը, Յան Ժուհուանը: Սյունձին նշում է հետևյալը. «*Քունձին իր սաների հետ ապրում էր Ցյուե վայրում*»:

② «*居于位*» - բառացի՝ «*նստելու դիրքը*». «*Ծեսերի գրքում*» նշվում է. «*Պատաճին, որ անելիք չունի, պիտի կանգնած մնա տիրոջ ներկայությամբ*»: Այսինքն՝ այն, որ պատաճին նստել էր, Կոնֆուցիոսին հիմք էր տալիս եզրակացնել, որ նրան խորթ են ծեսերը, իսկ այդպիսի մարդը չի կարող հասնել հաջողության:

③ «*与先生并行*» - «*պարոնների հետ կողք կողքի*». «*Ծեսերի գրքում*» նշվում է. «*Թեև փոքր է հինգ տարով, սակայն քայլում է ուս ուսի*»: Հնում վարվեցողության կանոնների կոպիտ խախտում էր համարվում, եթե տարիքային մեծ տարբերություն ունեցող մարդիկ քայլում էին կողք կողքի:

Գլուխ 15. Վեյի Լին իշխանը... Ընդամենը 42 ասույթ

(Զու Սիի «Մեկնություններում» 41 ասույթ են, որովհետև
առաջին և երկրորդ ասույթները միացված են իրար)

ԿՈՆՖՈՒՅԻՆՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5. 1 卫灵公问陈①于孔子。孔子对曰：“俎豆之事②，则尝闻之矣；军旅之事，未之学也。”明日遂行。

Վեյի Լին իշխանը Քունձիին հարցրեց ծավալման մասին։ Քունձին ասաց նրան։

- Չոհասեղանի և զավերի հետ վարվելու մասին վիճակվել է լսել, բանակային բաներ դեռ չեմ ուսումնասիրել։

Հաջորդը օրը հեռացավ։

[Փոխադրությունը]

Վեյ տերության Լին իշխանը Քունձիին հարցրեց բանակի ծավալման մասին։ Քունձին ասաց նրան։

- Ծեսերի և ծիսական անոթների մասին վիճակվել է լսել, սակայն ոպամակարություն երբեք չեմ ուսումնասիրել։

Հաջորդը օրը Քունձին հեռացավ Վեյ տերությունից։

[Մեկնությունը]

① «陈» ~ «ծավալել», «ցուցադրել», «պատմել». համարժեք է մերօրյա «阵»՝ «զորքերի դասավորություն» գաղափարագրին։

② «俎豆之事» - բառացի՝ «զոհասեղանի և գավերի բաներ». «俎» գաղափարագրով նշվում էին ծիսական սեղանները, իսկ «豆» գաղափարագրով՝ նվիրաբերության մթերքի գավերն ու անոթները: Նույն իմաստն ունի, ինչ «քրոյցների» ութերորդ գլխի չորրորդ ասուլիքի «笾豆之事» արտահայտությունը:

ԿՈՆՖՈՒՅՑԻԱՄԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 在陈绝粮，从者病，莫能兴。子路愠见曰：“君子亦有穷乎？”子曰：“君子固穷，小人穷斯滥矣。”

Չենում սնունդը վերջացավ, սաները տկարացան, չկար մեկը, որ բարձրանար: Ձիլուն զայրացած ասաց.

- Մի՞թե ազնվայրն աղքատ է լինում:
Ուսուցիչն ասաց.
- Ազնվայրը հաստատուն է աղքատության մեջ, նվաստն աղքատության մեջ անբարո է դառնում:

[Փոխադրությունը]

Երբ Զեն տերությունում էին, սնունդը վերջացավ, սաները տկարացան և նոյնիսկ դժվարանում էին մնալ ոտքի վրա: Այդ ամենը տեսնելով՝ Ձիլուն զայրացած հարցրեց.

- Մի՞թե կարող է ազնվայրն աղքատ լինել:
Քոնձին ասաց.
- Ազնիվ մարդը հավատարիմ է իր սկզբունքներին նոյնիսկ աղքատության մեջ, իսկ նվաստը պատրաստ է ամեն ինչի, եթե աղքատ է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 子曰：“赐也，女以予为多学而识之者与？”对曰：“然，非与？”曰：“非也，予一以贯之①。”

Ուսուցիչն ասաց.

- Յի, կարծում ես՝ ես նրանցից եմ, որ շատ են սովորում և գիտեն ամենը:

Նա ասաց.

- Հարկավ, այդպես չէ:

Ուսուցիչն ասաց.

- Այդպես չէ: Ամենը թափանցված է մեկով:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց.

- Յի, կարծում ես՝ ես նրանցից եմ, որ շատ են սովորում և շատ բան գիտեն:

Նա ասաց.

- Իհարկե, մի՞թե այդպես չէ:

Քոնճին ասաց.

- Այդպես չէ: Ես մի կարևոր գաղափար ունեմ, որ թափանցում է ամենուր:

[Մեկնությունը]

① «予一以贯之» - «Ամենը թափանցված է մեկով». Խոսքը առանցքային, հիմնական գաղափարի մասին է, ենթադրվում է, որ դա կարող է լինել հավատարմությունը կամ մարդկայնությունը: Նույն իմաստն ունի, ինչ «Զրույցների» չորրորդ գլուխ տասնինգերորդ ասույթը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5.4 子曰：“由！ 知德者鮮矣。”

Ուսուցիչն ասաց. «Յու, քիչ են նրանք, որ գիտեն, թե ինչ է առաջի-նությունը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց Զիլուին. «Յու, շատ քիչ են մարդիկ, որ գիտեն, թե ինչ է բարոյականությունը»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5.5 子曰：“无为而治^①者其舜也与？ 夫何为哉？ 恭己正南面而已矣。”

Ուսուցիչն ասաց. «Նա, որ կառավարում էր չգործելով՝ Շունն էր: Ի՞նչ էր անում. պատկառանքով նստում էր՝ ուղղված դեպի հարավ, ոչինչ ավելին»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Միակը, որ հանգիստ ու լուս կառավարում էր ամենը Երկնքի տակ, Շունն էր: Ի՞նչ էր նա անում. արժանապատվությամբ նստում էր տերունական ապարանքում, ուրիշ ոչինչ:

[Մեկնությունը]

① «无为而治» - «կառավարել չգործելով». ինչո՞ւ էր հենց Շունը համարվում այդպիսին: Որոշ կոնֆուցիականներ կարծում էին, որ գաղտնիքը ենթակաների ձիշտ ընտրության մեջ էր: Շունի աստիճանա-

Վորները ջանասիրաբար աշխատում էին, իսկ նրան մնում էր արժանապատվությամբ նստել գահին: «Եռապետության» մեջ մի այսպիսի հատված կա. «Շունին ծառայում էին Յուն և Գաոթան, իսկ նա գահին բազմած՝ կառավարում էր ամենը Երկնքի տակ»: Մենձին նշում էր. «Երբ ծառաները հավատարիմ են, տիրակալը կարող է ոչինչ չանել»: Այսինքն՝ ձիշտ կադրային քաղաքականությունը արդյունավետ պետական կառավարման հիմքն էր:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

15.6 子张问行。子曰：“言忠信，行笃敬，虽蛮貊之邦，行矣。言不忠信，行不笃敬，虽州里，行乎哉？立则见其参于前也，在舆则见其倚于衡也，夫然后行。”子张书诸绅。

Զիշանը հարցուեց վարքի մասին: Ուսուցիչն ասաց.

- Խոսքերում՝ վստահելի ու ազնիվ, վարքում՝ շիտակ ու հարգալիր, նոյնիսկ եթե բարբարոս ցեղերի տարածքում ես: Խոսքերում վստահելի ու ազնիվ չես, վարքում շիտակ ու հարգալիր չես, նոյնիսկ գավառիդ տարածքում կարելի՞ է այդպես վարվել: Երբ կանգնած ես, տես դա քո դիմաց, նստած ես կառքում՝ տես ձաղերի վրա, դրանից հետո կըմբռնես վարքը:

Զիշանը գրեց ամենը գոտու վրա:

[Փոխադրությունը]

Զիշանը հարցուեց ձշմարիտ վարվելակերպի մասին: Քունձին ասաց.

- Խոսքերդ պիտի վստահելի և ազնիվ լինեն, իսկ վարքդ՝ արդար և լի պատկառանքով, նոյնիսկ եթե դու բարբարոսների երկրում ես: Եթե խոսքերդ վստահելի ու ազնիվ չեն, իսկ վարքդ՝ անարդար է և զորկ պատկառանքից, նոյնիսկ եթե հարազատ վայրերում ես, մի՞թե կարելի

է այդպես վարվել: Երբ կանգնած ես, պիտի տեսնես այդ սկզբունքները քո դիմաց, երբ նստած ես կառքում՝ պիտի տեսնես՝ ասես ձաղերի վրա փորագրված, դրանից հետո միայն կըմբռնես, թե ինչ է ձշմարիտ վարվելակերպը:

Զիշանը գրեց այդ ամենը գոտու վրա:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 7 子曰：“直哉史魚①！邦有道，如矢；邦无道，如矢。君子哉蘧伯玉②！邦有道，则仕；邦无道，则可卷而怀之。”

Ուսուցիչն ասաց. «Շիտակ էր Շիյուն: Տերությունն Ուղի ուներ՝ նման էր նետի, տերությունն Ուղի չուներ՝ նման էր նետի: Ազնվայր էր Ցյու Բոյուն: Տերությունն Ուղի ուներ՝ ծառայում էր, տերությունն Ուղի չուներ՝ քողարկում էր իր գաղափարները»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Որքան ուղամիտ և անզիջում էր Շիյուն: Երբ տերությունը կառավարվում էր օրենքով, ուղիղ էր նետի պես, իսկ երբ տերությունը չէր կառավարվում օրենքով, ուղիղ էր նետի պես: Իսկ Ցյու Բոյուն իսկապես ազնիվ մարդ էր: Երբ տերությունը կառավարվում էր օրենքով, նա հավատարմորեն ծառայում էր, իսկ երբ տերությունը չէր կառավարվում օրենքով, նա հեռանում էր՝ թաքցնելով իր ունակությունները»:

[Մեկնությունը]

① «史魚» - Շիյու. Վեյ տերության աստիճանավոր էր: Հայտնի է նրանով, որ կարողացել է ազդել տիրակալի որոշման վրա իր մահից հետո: Հրամայել է որդուն իր մահից հետո դագաղը դնել տան գլխավոր

Կոնֆուցիոս. Զրույցներ

դարպասների մոտ, և ոչ թե արևմտյան դռների, ինչպես պահանջում էր ծիսակարգը: Վեյ տերության Լին իշխանը զարմանում է դա տեսնելով և հարցնում է Շիյովի որդուն, թե ինչու են նման կերպ վարվել: Վերջինս հոր խորհուրդն է փոխանցում Լին իշխանին՝ աստիճանազրկել խորհրդական Միջի Սյային և նշանակել նրա փոխարեն Ցյու Բոյույին:

② «蘧伯玉» - Ցյու Բոյու. Վեյ տերության աստիճանավոր էր, նրա մասին մանրամասն նշված է «Չուոյի նորթերի» Սյան իշխանի կառավարման տասնչորսերորդ և քսանվեցերորդ տարիների նկարագրություններում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 8 子曰：“可与言而不与之言，失人；不可与言而与之言，失言。知者不失人，亦不失言。”

Ուսուցիչն ասաց. «Չխոսելով նրա հետ, ում հետ կարելի է խոսել, կորցնում ես մարդուն, խոսելով նրա հետ, ում հետ չի կարելի խոսել, կորցնում ես խոսքերը: Ինաստունը չի կորցնում մարդուն, նաև չի կորցնում խոսքերը:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե չես զրուցում նրա հետ, ում հետ արժե զրուցել, կորցնում ես մարդուն, զրուցելով նրա հետ, ում հետ չարժե զրուցել, քամուն ես տալիս խոսքերը: Ինաստունը չի կորցնում մարդուն, նաև քամուն չի տալիս խոսքերը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 9 子曰：“志士仁人，无求生以害仁，有杀身以成仁。”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Ուսուցիչն ասաց. «Ուսալ այրը և մարդկայինը չեն պահպանի կյանքը մարդկայնությանը վնասելու գնով, սակայն կզիհեն իրենց հանուն մարդկայնության»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Նրանք, որ ուսալ են ու մարդկային չեն համաձայնի պահպանել կյանքը մարդկայնությանը վնասելու գնով, սակայն նրանք հանուն մարդկայնության իրենց զրիելու քաջությունն ունեն»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 0 子贡问为仁。子曰：“工欲善其事，必先利其器。居是邦也，事其大夫之贤者，友其士①之仁者。”

Զիգունը հարցրեց մարդկային լինելու մասին։ Ուսուցիչն ասաց.

- Արհեստավորն իր գործում լավը լինելու համար սկզբից սրում է իր գործիքները։ Տերությունում հաստատվելով՝ ծառայիր դրա աստիճանավորներից արժանավորին, բարեկամացիր դրա ուսալների և մարդկայինների հետ։

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց, թե ինչպես լինել մարդկային։ Քունձին ասաց.

- Եթե արհեստավորը ցանկանում է իր գործում լավը լինել, սկզբից պատրաստում է իր գործիքները։ Եթե հաստատվել ես որևէ տերությունում, լավ կլինի, որ ծառայես նրա աստիճանավորներից ամենաարժանավորներին և բարեկամանաս նրա ուսալ ու մարդկային այրերի հետ։

Կոնֆուցիոն. Զրույցներ

[ՄԵԼՈՒԹՅՈՒՆԸ]

① «士» - «ուսալ», «պաշտոնյա», «զինվոր». «Զրույցներում» հիմնականում կիրառված է «ուսալ այր» («կրթված մարդ») իմաստով, ինչն ունի նաև «Ուղուն հետևող մարդ» կամ «ինքնակատարելագործվող մարդ» իմաստները: Տես «Զրույցների» չորրորդ գլխի իններորդ կամ տասներեքերորդ գլխի քսաներորդ ասույթները:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 1 颜渊间为邦。子曰：“行夏之时①，乘殷之辂②，服周之冕③，乐则《韶》、《舞》④。放郑声⑤，远佞人。郑声淫，佞人殆。”

Յան Յուանը հարցրեց տերության կառավարման մասին: Ուսուցիչն ասաց.

- Գործածիր Սյայի օրացույցը, վարիր Ինի կառքերը, կրիր Զոռույի խույրերը, երաժշտությունը՝ «շառ» և «ու»: Ազատվիր Զենի հնչյուններից, հեռու մնա շողոքորթներից: Զենի հնչյուններն անպարկեցն են, շողոքորթները՝ վտանգավոր:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Յան Յուանը հարցրեց, թե ինչպես կառավարել տերությունը: Քունձին ասաց.

- Օգտվիր Սյա հարստության օրացույցից, վարիր Ին հարստության կառքերը, կրիր Զոռու հարստության ուլումքազարդ խույրերը, իսկ երաժշտությունը թող լինի «շառ» և «ու»: Մի թող նվազեն Զեն տերության երգերը, վանիր քեզնից շողոքորթ մարդկանց: Զեն տերության երգերը կոպիտ ու անպարկեցն են, իսկ շողոքորթ մարդիկ՝ վտանգավոր:

[Մեկնությունը]

① «行夏之时» - «Գործածիր Սյայի օրացուցը». ըստ հնում գործածվող Սյա հարստության օրացուցի՝ տարին սկսվում էր գարնան առաջին ամսին, պահպանվում էր տարվա եղանակների բնական հաջորդականությունը: Օրացուցը նաև կոչում էին «հողագործական», քանզի այն բաժանված էր 24 ժամանակահատվածների, որոնց ընթացքում պիտի իրականացվեին այս կամ այն հողագործական աշխատանքները: Զոու հարստության օրոք կիրառվում էր այլ օրացուց, այն սկսվում էր նոյեմբերից, սակայն հարկատու շատ տերություններում կիրառվում էր իին՝ Սյա հարստության օրացուցը, քանզի այն ավելի հարմար էր գյուղատնտեսական աշխատանքների կարգավորման համար:

② «乘殷之辂» - «Վարիր Ինի կառքերը». Ին հարստության կառքերը համարվում էին կառուցվածքով ավելի պարզ և հեշտ կառավարելի: «Զույի նորերի» Հուան իշխանի կառավարման երկրորդ տարվա նկարագրության մեջ նշվում է. «Մեծ կառքում ուրիշի տեղը նստելն ազահության նշան է»:

③ «服周之冕» - «Կրիր Զոույի խույրերը». Զոու հարստության ծիսական խույրերը համարվում էին լավագույնը. դրանք հարմար էին, նաև՝ շքեղ, իսկ Կոնֆուցիոսը դեմ չէր ծիսական պիտույքների շքեղությանը:

④ «韶，舞» - «Չառ» և «ու». «Չառ» կոչվում էր Շան հարստության իիմներից մեկը, իսկ «ու»՝ Զոու տերության Ու արքայի հիմնը:

⑤ «放郑声» - «Ազատվիր Ձենի երգերից». որոշ մեկնողներ կարծում են, որ «声»՝ «հնչյուն», «ձայն» զաղափարագիրը նպատակահարմար չէ կիրառել որպես «诗»՝ «երգ», «հիմն», «պոեմ» գաղափարագի հոմանիշ, քանզի այն վերաբերում է ոչ թե երգեցողությանը, այլ Ձեն տերության ուազմատենչ հոեսորաբանությանը:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 2 子曰：“人无远虑，必有近忧。”

Ուսուցիչն ասաց. «Այլը, որ հեռուն չի նայում, անպատճառ շուտով վշտեր կունենա»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ան մարդը, որ չի մտահոգվում ապագայի մասին, անպայման կրախվի մոտալուտ հոգսերի»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 3 子曰：“已矣乎！ 吾未见好德如好色①者也。”

Ուսուցիչն ասաց. «Վերջ ամենին։ Ես դեռ չեմ տեսել մեկին, որ սիրի առաքինությունն այնպես, ինչպես գեղեցկությունը»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ամեն ինչ կորած է։ Ես դեռ չեմ տեսել մեկին, որ սիրի բարին այնպես, ինչպես գեղեցիկը»:

[Մեկնությունը]

① «好色» - «գեղեցկություն», «ցանկասիրություն»։ Սիմա Ցյանը կարծում էր, որ Կոնֆուցիոն ակնարկում է Վեյ տերության Լին իշխանին և նրա վերաբերմունքը երիտասարդ ու գեղեցիկ կողակցի՝ Նանձիի հանդեպ։ Այս խոսքերը Կոնֆուցիոնը բացականչել է, տեսնելով, թե ինչպես է Լին իշխանը կատքում իր կողքը նստեցնում կնոջը՝ իշեցնելով ներքինի Յուն Ցյուսանին։

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 4 子曰：“臧文仲①其窃位者与！知柳下惠②之贤而不与立③也。”

Ուսուցիչն ասաց. «Զան Վենջունը զավել է իր դիրքը։ Իմանալով, որ Լյուսացի Հուեյն արժանավոր է, չգործակցեց նրա հետ»։

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զան Վենջունն ասես անազնիվ ձանապարհով է հասել իր դիրքին, չի կատարում իր պարտքը։ Շատ լավ իմանալով, որ Հուեյը՝ Լյուսա զավառից, արժանավոր այր է, պատշաճ պաշտոն չի տալիս նրան»։

[Մեկնությունը]

① «臧文仲» - Զան Վենջուն. Լու տերության աստիճանավոր էր, դատական իշխանության ներկայացուցիչ, Սուն ազնվական տոհմից, հայտնի էր նաև որպես Զան Սունչեն։

② «柳下惠» - «Լյուսացի Հուեյ»։ Լու տերության հպատակ էր, Լյուսա զավառից, հայտնի նաև որպես Զան Հոու և Զան Զի։

③ «立» - «կանգնել»։ ասուլում կիրառված է «դիրք», «պաշտոն» իմաստներով՝ որպես «位» զաղափարագրի հոմանիշ։

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 5 子曰：“躬自厚①而薄责于人，则远怨矣。”

Ուսուցիչն ասաց. «Խիստ՝ ինքը քո հանդեպ, քիչ պահանջկոտ՝ այլոց և հեռու կմնաս զանգատներից»։

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե խատապահանջ լինես ինքդ քո հանդեպ՝ քիչ կշտամբելով այլոց, ապա զերծ կմնաս վրդովմունքից»:

[Մեկնությունը]

① «躬自厚» - «Խիստ՝ ինքդ քո հանդեպ». Ակատի ունի պահանջկութությունը սեփական անձի նկատմամբ: Որոշ տարրերակներում գործածվում է «躬自厚责» արտահայտությունը, այսինքն՝ ավելացվում է «责» գաղափարագիրը, որն ունի «պարտք», «պատասխանատվություն», «մեղադրել» և «կշտամբել» իմաստները: Քանի որ մեկնվող արտահայտությանը հաջորդում է «薄 责» բառակապակցությունը, ապա «躬自厚责» արտահայտության «责» գաղափարագիրը սղվել է: Այդ կանոնի կիրառման մասին հիշատակվում է «Գրական չինարենի բերականություն» աշխատության մեջ:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 6 子曰：“不曰‘如之何’①，如之何’者，吾末如之何也已矣。”

Ուսուցիչն ասաց. «Նա, ով չի ասում՝ «ի՞նչ անել, ի՞նչ անել», ես չգիտեմ, թե նրա հետ ինչ անել»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Ես չգիտեմ, թե ինչ անել մեկի հետ, ով երբեք չի ցանկանում մտածել, թե ինչ անել»:

[Մեկնությունը]

① «不曰如之何» - «չի ասում՝ «ի՞նչ անել»: Ակատի ունի մարդուն,

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

որ չի գործածում իր ուղեղը: Այունձին նշում է. «Կալսը բազմած էր զահին, իսկ աստիճանավորները մոտենալով նրան ասում էին՝ «ի՞նչ անել», բազմապատկելով նրա տագնապները»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 7 子曰：“群居终日，言不及义，好行小慧，难矣哉！”

Ուսուցիչն ասաց. «Ողջ օրը միասին են, խոսում են՝ չիշատակելով արդարությունը, սիրում են իիմարություններ անել, դժվար է»:

[Փռխադրությունը]

Քոնձին ասաց. «Դժվար է սովորեցնել նրանց, որ ողջ օրը միասին են և զրուցում են ամեն ինչի մասին՝ փորձելով ուսալ երևալ»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 8 子曰：“君子义以为质，礼以行之，孙以出之①，信以成之。君子哉！”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրն արդար է իր քնույթով, գործում է՝ հետևելով ծեսերին, բարձրանում է պատկառանքով և կատարելագործվում ազնվությամբ: Ահա ազնվայրը»:

[Փռխադրությունը]

Քոնձին ասաց. «Ազնիվ մարդն էությամբ արդարամիտ է, գործում է՝ հետևելով վարվելակարգին, խոսում է՝ լի պատկառանքով և կատարելագործում իրեն ազնիվ վարքով: Ահա թե ինչպիսին է ազնիվ այրը»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «孙以出之» - «բարձրանում է պատկառանքով». որոշ մեկնողներ, մասնավորապես՝ Հե Յանը և Զեն Սյուանը կարծում էին, որ «出» գաղափարագիրն ասուլում կիրառված է «խոսել», «խոսք» իմաստներով: Ասուլը փոխադրելիս օգտվել եմ նրանց տեսակետից:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 1 9 子曰：“君子病无能焉，不病人之不已知也。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրն վհատվում է իր անկարողությունից, չի վհատվում, որ մարդիկ իրեն չգիտեն»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդն ամաչում է միայն իր անընդունակությունից, չի ամաչում, որ մարդիկ իրեն չեն ձանաչում»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 0 子曰：“君子疾没世而名不称焉。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը վհատվում է, որ կմահանա առանց իր անունը փառավորելու»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդուն վշտացնում է այն, որ մարդիկ իրեն չեն փառաբանի մահից հետո»:

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 1 子曰：“君子求諸己，小人求諸人。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը պահանջում է իրենից, նվաստը պահանջում է մարդկանցից»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ազնվայրը պահանջկուտ է ինքն իր նկատմամբ, նվաստը պահանջկուտ է այլոց նկատմամբ»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 2 子曰：“君子矜而不争，群而不党①。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը ինքնագոհ է, սակայն չի վիճում, միանում է՝ անմասն մնալով»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Ազնիվ մարդն ինքնագոհ է, սակայն չի վիճում այլոց հետ, հեշտությամբ բարեկամանում է մարդկանց՝ խմբերի մեջ չմտնելով»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «群而不党» - «միանում է՝ անմասն մնալով». արտահայտությունն իր բնույթով մոտ է «Չըուցների» երկրորդ գլխի տասնչորսերորդ ասույթի «周而不比»՝ «միավորվում է՝ առանց շահի» և տասներեք երրորդ գլխի քասներեքերորդ ասույթի «和而不同»՝ «ներդաշնակ է անհամաձայնության մեջ» արտահայտություններին:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 3 子曰：“君子不以言举人，不以人废言。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը չի պատվում մարդկանց խոսքերի համար, չի մերժում խոսքը մարդու պատճառով»:

[Փոխադրությունը]

Քուծին ասաց. «Ազնիվ մարդը չի մեծարում այլոց գեղեցիկ խոսքերի համար, նաև չի մերժում ձշմարիտ խոսքը, նույնիսկ եթե այն արտաքերողը վաստ մարդ է»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 4 子贡问曰：“有一言而可以终身行之者乎？”子曰：“其恕①乎！己所不欲，勿施于人。”

Ձիգունը հարցրեց.

- Կա՞ մի բառ, որին կարելի է հետևել ողջ կյանքում:

Ուսուցիչն ասաց.

- Դա կարելեցանքն է: Ինչո՞ք քեզ չես ցանկանում՝ մի արա ուրիշներին:

[Փոխադրությունը]

Ձիգունը հարցրեց.

- Արդյոք կա՞ գեթ մի բառ, որին կարելի է հետևել ողջ կյանքի ընթացքում:

Քունձին ասաց.

- Ծերւս՝ կարելեցանքն է: Այն, ինչ քեզ չես ցանկանում՝ մի արա ուրիշներին:

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

[Մեկնությունը]

① «恕» - «ներել», «ներողամտություն», «կարեկցանք». այս հասկացությունը կոնֆուցիական բարոյականության հիմքերից է համար վում, «忠»՝ «հավատարմություն» հասկացությանը զուգահեռ: Ֆեն Ցուլանը «Չինական փիլիսոփայության համառոտ պատմություն» աշխատության մեջ նշում է հետևյալը. «Հավատարմության և կարեկցանքի սկզբունքներին հետևելը ձևավորում է մարդկայնություն»: «Ծեսերի գրքում» հիշատակվող «絜矩之道»՝ «Մաքուր կանոնի Ուղին» հենց կարեկցանքի Ուղին է:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 ♀ 2 5 子曰：“吾之于人也，谁毁谁誉？如有所誉者，其有所试矣。斯民也，三代之所以直道而行也。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկանց մեջ ես ո՞մ եմ պարապել, ո՞մ դրվատել: Եթե դրվատել եմ, ապա նրանց, ով փորձվել է: Այդ էր պատճառը, որ երեք արքայատոհմերի մարդիկ գնում էին շիտակ Ուղով»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես երբսէ պախարակնել կամ գովել եմ մարդկանց: Եթե նույնիսկ գովել եմ, ապա միայն նրանց, ովքեր արժանի էին դրան: Սյա, Շան և Զոռու արքայատոհմերն այդպես էին վարվում, ուստի երեք արքայատոհմերի մարդիկ գնում էին շիտակ Ուղով»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 6 子曰：“吾犹及史之阙文也。有马者借人乘之①，今亡矣夫！”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Ես պատմագրության մեջ բացթողումներ եմ տեսել: Զի ունեցողը փոխս է տալիս այն մարդկանց, որ հեծնեն: Հիմա ազատվել ենք դրանից»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Ես դեռ տեսնում եմ բացթողումներ պատմագրության մեջ: Նա, ով ձի ունի, տալիս է այն ուրիշներին, որ արշավեն: Հիմա նման բան չես տեսնի»:

[Մեկնությունը]

① Դժվար է առնչություն գտնել «Ես պատմագրության մեջ բացթողումներ եմ տեսել» և «Զի ունեցողը փոխս է տալիս այն մարդկանց, որ հեծնեն» արտահայտությունների միջև: Ենթադրվում է, որ բնագրային բացթողում է: Այդ տեսակետին են հարում մեկնողների մեծանասնությունը, մասնավորապես՝ Բան Սյանը, Հուան Քանը, Ֆան Չանյան և այլք: Սուն Յեմենի տարբերակում ընդհանրապես բացակայում է ասույթի երկրորդ՝ «ձի ունեցողի» նասին հատվածը: Կարծում եմ՝ այն պարզապես բնագրի կորուսյալ ասույթներից մեկի նաև է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 7 子曰：“巧言亂德。小不忍①，則亂大謀。”

Ուսուցիչն ասաց. «Ճարտար խոսքերը մթագնում են առաքինությունը: Փոքրում անհամբերությունը մթագնում է մեծ ծրագրերը»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Շողոքորթ ու կեղծավոր խոսքերը բավական են

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

առաքինությունը կործանելու համար: Փոքր գործերում անհամբերությունը կարող է կործանել մեծ ծրագրերը»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «小不忍» ~ «Փոքրում անհամբերությունը». փոքր գործերում անհամբերությունը կամ անզուսպ լինելը վերաբերում է նաև նվաստի կամ այսպես կոչված «小人»՝ «փոքր մարդու» անհամբերությանը, ազահությանը և արագ շահ ստանալու ձգտմանը, նա չունի նաև «թունավոր օձի խայթոցից հետո ձեռքը կտրող ուզմիկի» խիզախությունը, ինչը վտանգում է մեծ ծրագրերի իրականացումը:

ԿՈՆՖՈՒՅ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 8 子曰：“众恶之，必察焉①； 众好之，必察焉。”

Ուսուցիչն ասաց. «Շատերն են ատում, պետք է քննել՝ ինչո՞ւ, շատերն են սիրում, պետք է քննել՝ ինչո՞ւ»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ]

Քոնճին ասաց. «Երբ մարդիկ ատում են մեկին, պետք է իմանալ, թե ինչու, երբ մարդիկ սիրում են մեկին, պետք է իմանալ, թե ինչու»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ]

① «必察焉» ~ «պետք է քննել՝ ինչու». այս արտահայտությունն իր բովանդակությամբ մոտ է «Զրույցների» տասներեքերրորդ զլիսի քսանչորսերրորդ ասույթում ներկայացվածին և կարող է լրացնել դրան:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 2 9 子曰：“人能弘道， 非道弘人①。”

Ուսուցիչն ասաց. «Մարդը կարող է մեծ դարձնել Ուղին, Ուղին մարդուն մեծ չի դարձնում»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Մարդն ունակ է փառավորել Ուղին, սակայն չի կարող փառավորվել Ուղու միջոցով»:

[Մեկնությունը]

① Այս ասույթը նպատակահարմար է փոխադրել բառացի: Դժվար է հասկանալ, թե ինչ է նկատի ունեցել Կոնֆուցիոսը «Ուղին մարդուն մեծ չի դարձնում» ասելով: Զու Սին և Զեն Հառն ևս այս արտահայտության արժանահավատ մեկնություն չունեն: Դուն Զունշուն կարծում էր, որ ասույթը բնորոշում է մարդկանց, որ ընդունակ են հետևել ծեսերին և մարդկայնության սկզբունքներին և իրենց վարքով նշում են դրանց կարևորությունը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 0 子曰：“过而不改， 是谓过矣①。”

Ուսուցիչն ասաց. «Մխալը, որ չի ուղղվում, դա է կոչվում սխալ»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Մխալ կարելի է համարել միայն այն սխալը, որ հնարավոր չի ուղղել»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Մեկնությունը]

① «是谓过矣» ~ «Դա է կոչվում սխալ». «Հանի պատմություն» աշխատության մեջ Կոնֆուցիոսի այս արտահայտությունը մեջբերվում է երեք անգամ:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 1 子曰：“吾尝终日不食，终夜不寝，以思，无益，不如学也。”

Ուսուցիչն ասաց. «Ես փորձել եմ ողջ օրը չուտել, գիշերը չքնել, մտածել, անօգուտ է, չի հավասարվի սովորելուն»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ես փորձել եմ օրեր շարունակ չուտել, գիշերները չքնել և մտորել, սակայն անօգուտ է, չի հավասարվի սովորելուն»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 2 子曰：“君子谋道不谋食。耕也，馁在其中矣；学也，禄在其中①矣。君子忧道不忧贫。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրն Ուղի է որոնում, ապրուստ չի հայթայթում: Հող մշակելով՝ նաև քաղցում է, սովորելով՝ ոռձիկ է ստանում: Ազնվայրին մտահոգում է Ուղին, չի մտահոգում չքավորությունը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը ջանում է յուրացնել ուսմունքը, չի

Կոնֆուցիոն. Զրույցներ

ջանում սննդի ու հագուստի համար: Դաշտերում քանելով նաև երբեմն քաղցում է, իսկ երբ կիրառում է սովորածը՝ տերունական ոռձիկ է ստանում: Ազնիվ մարդուն մտահոգում է այն, որ Ռուի չի ունենա, չի մտահոգում այն, որ շահ չի ունենա»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «*祿在其中*» - բառացի՝ «ոռձիկն է այնտեղ», կիրառված է «ոռձիկ է ստանում» իմաստով: Իր բովանդակությամբ ասույթը մոտ է «Զրույցների» տասներեքերորդ գլխի չորրորդ ասույթին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 3 子曰：“知及之，仁不能守之；虽得之，必失之。知及之，仁能守之。不庄以莅之，则民不敬。知及之，仁能守之，庄以莅之，动之不以礼，未善也①。”

Ուսուցիչն ասաց. «Իմաստությամբ ձեռք բերվածն անպայման կկորսվի, քանզի չի ամրացվում մարդկայնությամբ: Իմաստությամբ ձեռք բերվածն ու մարդկայնությամբ ամրացվածը չի կիրառվում արժանապատվությամբ՝ մարդիկ չեն պատկանի: Իմաստությամբ ձեռք բերվածը, մարդկայնությամբ ամրացվածը և արժանապատվորեն կիրառվածը չի գործածվում ըստ ծեսերի՝ ապա կատարելություն չկա»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Եթե իմաստությամբ հնարավոր է հասնել որևէ քանի, այն անպայման կկորսվի, եթե չի հենվում մարդկայնության վրա: Երբ տերության կառավարման համար կա բավականաշափ իմաստություն և մարդկայնություն, սակայն չկա պատշաճ լրջություն, ապա մարդիկ չեն պատկանի: Երբ տերության կառավարման համար կա

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

բավականաչափ իմաստություն, մարդկայնություն և պատշաճ լրջություն, սակայն տերությունը չի կառավարվում ըստ օրենքի, ապա դա հեռու է կատարելությունից»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① Ասույթի բովանդակությունից պարզ է, որ խոսքը մարդկանց և տերությունը կառավարելու մասին է: Արժանապատվությունից գործկ տիրակալի ժողովուրդը հաձախ է ընդվզում, իսկ արժանապատիվ տիրակալ ունեցող և օրենքներով կառավարվող տերության ժողովուրդը խաղաղ է և միաբան:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 4 子曰：“君子不可小知而可大受也， 小人不可大受而可小知也。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը չի կարող իմանալ փոքրը, սակայն կարող է գլուխ հանել մեծից: Նվաստը չի կարող գլուխ հանել մեծից, սակայն կարող է իմանալ փոքրը»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդուն չի կարելի փորձել մանր գործերում, սակայն կարելի է վստահել նրան մեծ գործեր: Նվաստին չի կարելի վստահել մեծ գործեր, սակայն նրան կարելի է փորձել մանր գործերում»:

Կոնֆուցիոն. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 5 子曰：“民之于仁也，甚于水火①。水火，吾见蹈而死者矣，未见蹈仁而死者也。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկայնությունն առավել կարևոր է մարդկանց համար, քան ջուրն ու կրակը: Ես տեսել եմ, թե ինչպես են մեռնում ջրից ու կրակից, սակայն չեմ տեսել, որ մեռնեն մարդկայնությունից»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Մարդիկ ավելի շատ կարիք ունեն մարդկայնության, քան ջրի ու կրակի: Ես տեսել եմ, թե ինչպես են մարդիկ մեռնում ջրից ու կրակից, սակայն չեմ տեսել, որ մեռնեն մարդկայնությունից»:

[Մեկնությունը]

① «甚于水火» - «ավելի քան ջուրն ու կրակ». Մենձին իր համանուն աշխատության «Ողջ արտով» գլխում նշում է հետևյալը. «Մարդիկ չեն կարող ապրել առանց ջրի և կրակի: Ասում են՝ մարդիկ բարգավաճում են, երբ գիշերվա խավարում նրանց դուռը թակելով կարող են ջուր ու կրակ խնդրել, և չի գտնվի մեկը, որ չի ունենա»: Փոխադրության մեջ ես ավելացրել եմ «կարիք ունենալ» արտահայտությունը, այն առավել մատչելի դարձնելու համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 6 子曰：“当仁，不让于师。”

Ուսուցիչն ասաց. «Մարդկայնությամբ մի զիջիր ուսուցչիդ»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Բարոյականությամբ մի զիջիր նույնիսկ ուսուցչիդ»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 7 子曰：“君子贞①而不谅②。”

Ուսուցիչն ասաց. «Ազնվայրը ողջախոհ է և ոչ համառ»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը հավատարիմ է իր սկզբունքներին, սակայն կապանքված չէ դրանցով»:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

① «贞» - «ողջախոհ», «պարկեշտ». Զյաձին նշում էր. «Երբ խոսքն ու գործերը համապատասխանում են իրար, կարելի է խոսել ողջախության մասին»:

② «谅» - բառացի՝ «ներել», «հասկանալ». Զու Զյունշենը նշում էր, որ «谅» գաղափարագիրը կիրառվել է «勅»՝ «համառ», «բոի» գաղափարագրի փոխարեն և կրում է նույն իմաստը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 8 子曰：“事君，敬其事而后其食①。”

Ուսուցիչն ասաց. «Տիրակալին ծառայելիս՝ հարկ է հարգել գործը, այնուհետև՝ կերակուրը»:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Տիրակալին ծառայելիս, նախ՝ պետք է գործել զանասիրաբար և լրջությամբ, այնուհետև մտածել ոռձիկի մասին»:

[Մեկնությունը]

① «而后其食» ~ բառացի՝ «այնուհետև՝ կերակուրը». խոսքն իրականում ոռձիկի մասին է, քանզի հնում տերունական աստիճանավորները որպես ոռձիկ նաև սնունդ էին ստանում՝ հիմնականում հացահատիկեղեն ու չորացրած միս: Սուն ժամանակաշրջանի գրող Չառ Գունուն իր աշխատության մեջ հիշատակում է այս արտահպտությունը և նշում, որ «食»՝ «կերակուրը» նույնն է, ինչ «祿»՝ «տերունական ոռձիկը»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 3 9 子曰：“有教无类①。”

Ուսուցիչն ասաց. «Կրթիր անխստիր»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Հարկ է կրթել բոլորին, առանց հաշվի առնելու ծագումն ու կայքը»:

[Մեկնությունը]

① «无类» ~ «անխստիր». «类» գաղափարագիրն ունի «սոցիալական դաս», «տեսակ», «տարբերություն» իմաստները: Կոնֆուցիականության առանցքային գաղափարներից մեկն էր՝ բոլորի համար կրթության հավասար պայմաններ ապահովելը և կրթելը՝ առանց

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

դասային կամ սոցիալական խտրականության: Իր բովանդակությամբ մոտ է «Զրուցների» յոթերորդ գլխի յոթերորդ ասույթին, որը Կոնֆու- շիոսն ասում էր. «Անգամ եթե ինձ մի կապ ապխտած միս բերեն, ես չեմ հրաժարվի սովորեցնել»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 4 0 子曰：“道不同，不相为谋。”

Ուսուցիչն ասաց. «Ուղիները նույնը չեն՝ միասին ոչինչ չի ծրագր- վում»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ սկզբունքները տարբեր են, անհնար է գործակցելը»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 . 4 1 子曰：“辞达①而已矣。”

Ուսուցիչն ասաց. «Ճառը պիտի ըմբռնելի լինի, այդքանը»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Խոսքերը պիտի արտահայտեն մտադրությունը, ընդամենը այդքանը»:

[Մեկնությունը]

① «辞达» - բառացի՝ «ճառն ըմբռնելի». կարելի է զուգահեռներ

Կոնֆուցիոն. Զրույցներ

անցկացնել «Զրույցների» վեցերորդ գլխի տասնութերորդ ասուլիքի հետ: Կոնֆուցիոնը կողմ էր կշռադատված և կիրթ խոսքին, սակայն չէր ընդունում դատարկ պերճախոսությունը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 5 .4 2 师冕①见，及阶，子曰：“阶也。”及席，子曰：“席也。”皆坐，子告之曰：“某在斯，某在斯。”师冕出。子张问曰：“与师言之道与？”子曰：“然；固相师之道也。”

Վարպետ Մյանը հյուր եկավ: Երբ հասան աստիճաններին՝ Ուսուցիչն ասաց.

- Աստիճանները:

Երբ հասան խսիրին, Ուսուցիչն ասաց.

- Խսիրը:

Երբ նստեցին, Ուսուցիչն ասաց.

- Մեկն այստեղ է, մյուսն այնտեղ է:

Երբ վարպետ Մյանը հեռացավ, Զիջանը հարցրեց.

- Միյեն այրկերա են խոսում վարպետի հետ:

Ուսուցիչն ասաց.

- Հարկավ, վարպետին օգնում են այդկերա:

[Փռխադրությունը]

Վարպետ Մյանը հյուր եկավ Քունձիին: Երբ հասան աստիճաններին, Քունձին ասաց.

- Ահա աստիճանները:

Երբ հասան հատակին փոված խսիրներին, Քունձին ասաց.

- Ահա խսիրը:

Երբ նստեցին, Քունձին ասաց.

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

- Այստեղ է այս մեկը, այնտեղ նատած է այն մեկը:
Երբ վարպետ Մյանը հեռացավ, Զիջանը հարցրեց.
- Մի՞թե այդպես են խոսում վարպետի հետ:
Քունձին ասաց.
- Իհարկե, այդպես են օգնում կույր վարպետին:

[Մեկնությունը]

① «师冕» - «Վարպետ Մյան». Ենթադրվում է, որ խոսքը արքունական երաժշտապետի մասին է: Հնում երաժիշտների մեջ հաճախ էին պատահում կույր մարդիկ:

Գլուխ 16. Զիշին Բնդամենը 16 ասույթ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

16.1 季氏将伐颛臾①。冉有、季路见于孔子曰：“季氏将有事②于颛臾。”孔子曰：“求！无乃尔是过③与？夫颛臾，昔者先王以为东蒙④主，且在邦域之中矣，是社稷之臣也。何以伐为？”冉有曰：“夫子欲之，吾二臣者皆不欲也。”孔子曰：“求！周任⑤有言曰：‘陈力就列，不能者止。’危而不持，颠而不扶，则将焉用彼相矣？且尔言过矣，虎兕出于柙，龟玉毁于椟中，是谁之过与？”冉有曰：“今夫颛臾，固而近于费⑥。今不取，后世必为子孙忧。”孔子曰：“求！君子疾夫舍曰欲之而必为之辞。丘也闻有国有家者，不患寡当作贫而患不均，不患贫当作寡而患不安⑦。盖均无贫，和无寡，安无倾。夫如是，故远人不服，则修文德以来之。既来之，则安之。今由与求也，相夫子，远人不服，而不能来也；邦分崩离析，而不能守也；而谋动干戈于邦内。吾恐季孙之忧，不在颛臾，而在萧墙之内⑧也。”

Զիշին ցանկանում էր գրոհել Զուանյուն։ Ժանյուն և Զիլուն հանդիպեցին Քունձիին և ասացին.

- Զիշին ցանկանում է զավթել Զուանյուն։

Քունձին ասաց.

- Ցյու! Մի՞թե դա քո սխալը չէ։ Մի իին արքա իիմնեց Զուանյուն որպես Դումնենի պաշտամունքի վայր, ավելին՝ այն մեր տերության սահմաններում է և օգտվում է աղոթարաններից։ Ինչո՞ւ գրոհել այն։

Ժանյուն ասաց.

- Տերն է այդպես ցանկանում, մենք՝ երկու աստիճանավորներս, չենք ուզում, որ այդպես լինի։

Քունձին ասաց.

- Ցյու: Զոուժենն ասում էր. «Յուզ տուր ունակություններդ տեղում, չես կարող՝ հեռացիր»: Եթե վտանգի ժամանակ չեն օժանդակում, ընկած ժամանակ չեն բարձրացնում, կույրին հարկավոր են նման ուղեկցողներ: Միայ են խոսքերդ: Վագրն ու ոնգեղջուրը փախչում են վանդակից, կրիայի պատշաճն ու հասպիսը շարդվում են արկղիկում, ու՞ն պիտի լուսակացնեն:

Ժամկուն ասաց.

- Այժմ Զուանյուն ամրացված է և մոտ է Ֆեյին: Եթե հիմա չգրավվի, այն հաջորդ սերունդների համար սպառնալիք կդառնա:

Քունձին ասաց.

- Ցյու: Ազնվայրն ատում է նրանց, որ թաքցնում են իրական մտադրությունները՝ դրանք ձառերով սքողելով: Լսել եմ, որ տիրակապին կամ տոհմի նահապետին չի վշտացնում այն, որ կայքը չի բավականացնում, այլ վշտացնում է այն, որ հավասար չի բաշխված, չի վշտացնում որ սակավաթիվ է, վշտացնում է, որ խաղաղ չէ: Կայքը հավասար է բաշխված՝ աղքատություն չի լինի, ներդաշնակություն է՝ մարդիկ սակավաթիվ չեն լինի, խաղաղություն է՝ ցնցումներ չեն լինի: Երբ հեռավոր տիրույթում մարդիկ չեն հպատակվում, նրանց պետք է գրավել գրով և առաքինությամբ, գրավելով՝ նրանց կյանքը խաղաղ դարձնել: Այժմ դուք՝ Յոու և Ցյու, ծառայում եք ձեր տիրոջը, սակայն հեռավոր տիրույթներում մարդիկ չեն հպատակվում նրան և չեն մոտենում: Տերությունը ցնցվում է և մասնատվում, նա ունակ չէ պահպանել այն և դեռ ծրագրում է պատերազմել տերության ներսում: Վախենամ, Զիի սերունդների տագնապը Զուանյուտը չէ, այլ իրենց «ոգու պատերից» ներս:

[Փոխադրությունը]

Զիշին պատրաստվում էր զավթել Զուանյուն: Ժամկուն և Զիլուն հանդիպեցին Քունձիին և ասացին.

- Զիշին ցանկանում է զորք ուղարկել դեպի Զուանյու: Քունձին ասաց.
- Ժան Ցյու, մի՞թե դու չես մեղավոր: Հին արքաները հիմնեցին Զուանյուն որպես Դումանեն լեռան պաշտամունքի վայր, այն Լու տերության տարածքն է: Իմաստ ունի՞ գրոհել այն:
- Ժանյուն ասաց.
- Զիշին է այդպէս ցանկանում, մենք՝ երկուս, դեմ ենք դրան: Քունձին ասաց.
- Ժան Ցյու: Զուուժենն ասում էր. «Ճույց տուր ունակություններդ տեղում, չես կարող՝ հեռացիր»: Եթե կույր մարդուն վտանգի ժամանակ չեն բարձրացնում, մի՞թե կույրը կարիք ունի նման օգնականների: Մխալ են խոսքերդ: Երբ վագրն ու ոնցեղջյուրը փախչում են վանդակից, իսկ կրիայի պատյանն ու հասպիսը ջարդվում են արկղիկում, ովք է մեղավոր:
- Ժանյուն ասաց.
- Այժմ Զուանյուի պարիսպներն ամուր են և այն մոտ է Ֆեյին: Եթե հիմա չգրավեն այն, ապա Զի տոհմի հաջորդ սերունդների համար գլխացավանք կդառնա:
- Քունձին ասաց.
- Ժան Ցյու: Ազնիվ մարդն ատում է նրանց, որ թաքցնում են իրենց իրական մտադրությունները՝ դրանք սքողելով ձարտասանությամբ: Ես լսել եմ, որ տիրակալին կամ տոհմի նահապետին չի մտահոգում այն, որ ունեցվածքը չի բավականացնում, այլ մտահոգում է այն, որ հավասար չի բաշխված, չի մտահոգում այն, որ մարդիկ սակավաթիվ են, մտահոգում է այն, որ տերության մեջ խաղաղություն չկա: Երբ ունեցվածքը հավասար է բաշխված, աղքատություն չի լինի, ներդաշնակություն է՝ մարդիկ սակավաթիվ չեն լինի, խաղաղություն է՝ ցնցումներ չեն լինի: Երբ հեռավոր գավառների մարդիկ չեն հպատակվում, նրանց պետք է գրավել մշակույթով ու բարոյականությամբ, իսկ երբ նրանք մոտենան, հարկ է նրանց կյանքը խաղաղ դարձնել: Այժմ դուք՝ Զունյու

և Ժան Ցյու, օգնում եք ձեր տիրոջը, սակայն հեռավոր գավառների մարդիկ չեն հպատակվում նրան և յուրային չեն դառնում: Տերության հիմքերը երերում են, հողերը մասնատվում են, նա ընդունակ չէ պահպանել ամրող ջականությունը և դեռ պատրաստվում է պատերազմ վարել տերության ներսում: Վախենամ, որ Զիի սերունդներին պիտի անհանգստացնի ոչ թե Զուանյուն, այլ հենց Լու տերության արքունիքը:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «顛曳» - Զուանյուն. գավառ էր Լու տերության կազմում: Գտնվել է ներկայիս Շանդուն նահանգի տարածքում, այժմ այնտեղ համանուն գյուղ կա, սակայն հայտնի չէ դրա կապը պատմական Զուանյուի հետ:

② «有事» - բառացի «զբաղվել ինչ-որ բանով», «մտքում ինչ-որ բան ունենալ». ասույթում կիրառված է «զավթել», «զորք կիրառել», «պատերազմել» իմաստներով: Արտահայտությունը կիրառված է նաև «Զույի նոթերի» Զեն իշխանի կառավարման տասներեքերրորդ տարվա նկարագրության մեջ, որտեղ նշվում է. «Տերության հիմնական գործերը գոհարերություններն են և պատերազմները»:

③ «无乃尔是过与» - «Մի՞թե դա քո սխալ չէ». արտահայտության մեջ «尔» գաղափարագիրը կիրառված է որպես «քո» անձնական դերանուն: «过» գաղափարագիրը կիրառված է որպես «սխալ»:

④ «东蒙» - Դունմեն. լեռան անուն է: Գտնվում է Շանդուն նահանգի Մենյին գավառի հարավում: Սահմանակից է Ֆեյ գավառին:

⑤ «周任» - Զոուիժեն. արքունական պատմագրի անուն է:

⑥ «费» - Ֆեյ. Լու տերության գավառներից մեկն էր, Զի տոհմի տիրույթը: Գտնվում է ներկայիս Շանդուն նահանգում, համանուն գավառում:

⑦ «不患寡而患不均, 不患贫而患不安» - «չի վշտացնում այն, որ կայքը չի բավականացնում, այլ վշտացնում է այն, որ հավասար չի բաշխված, չի վշտացնում, որ սակավաթիվ է, վշտացնում է, որ խաղաղ

չէ»։ այս արտահայտության մեջ «貧»՝ «աճքավարար», «աղքատիկ» և «均»՝ «հավասար» գաղափարագրերը վերաբերում են ունեցվածքին, կայրին: «寡»՝ «սակափաթիվ» և «安»՝ «խաղաղ» գաղափարագրերը վերաբերում են բնակչությանը:

⑧ «蕭牆之内» - «իիենց «ոզու պատերից» ներս». «蕭牆»՝ «ոզու պատը» ձարտարապետական լուծում էր, կառուցվում էր դարպասի դիմաց՝ դրսի կամ ներսի կողմից, հաձախ շրեղորեն զարդարվում էր՝ ի ցույց դնելու համար տանտիրոջ տոհմիկ և ունարությունը: Ենթադրվում է, որ ասույթում այս արտահայտությունը խորիրդանշում է Լու տերության արքունիքը: Զի տոհմը մեծ ազդեցություն ուներ արքունականների վրա, իսկ Լուի տիրակալը ցանկանում էր վերականգնել ինքնիշխանությունը՝ առանց երեք ազնվական տոհմերի մասնակցության: Զիշին գիտեր այդ մասին և ցանկանում էր իր ազդեցության տակ վերցնել Զուանյուն, որպեսզի այն Լուի տիրակալի կողմը չանցնի բախտորոշակին: Ժամանակին Կոնֆուցիոսի այս խոսքերը խոցել էին Զիշիին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

16.2 孔子曰：“天下有道，则礼乐征伐自天子出；天下无道，则礼乐征伐自诸侯出。自诸侯出，盖十世希不失矣；自大夫出，五世希不失矣；陪臣执国命，三世希不失矣①。天下有道，则政不在大夫。天下有道，则庶人不议。”

Քոնձին ասաց. «Երբ ամենը Երկնքի տակ Ուղի ունի, ապա ծեսերի, երաժշտության և զորաշարժերի վերաբերյալ հրաման տալիս է Երկնքի որդին: Երբ ամենը Երկնքի տակ Ուղի չունի, ապա ծեսերի, երաժշտության և զորաշարժերի վերաբերյալ հրաման տալիս են իշխանները: Երբ հրամայում են իշխանները, ապա քչերն են, որ իշխանությունը չեն կորցնում տաս սերունդների ընթացքում: Երբ հրամայում են աստիճա-

նավորմերը, ապա քչերն են, որ իշխանությունը չեն կորցնում իհնգ սերունդների ընթացքում: Երբ կրտսեր պաշտոնյաներն են կառավարում տերությունը, քչերն են, որ իշխանությունը չեն կորցնում երեք սերունդների ընթացքում: Երբ ամենը Երկնքի տակ Ուղի ունի, ապա աստիճանավորները չեն կառավարում: Երբ ամենը Երկնքի տակ Ուղի ունի, ապա մարդիկ չեն քննադատում»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երբ երկրում խաղաղություն է տիրում, ապա ծեսերի, երաժշտության և զորաշարժերի վերաբերյալ հրաման տալիս է կայսրը: Երբ երկրում խաղաղություն չկա, ապա ծեսերի, երաժշտության և զորաշարժերի վերաբերյալ հրաման տալիս են իշխանները: Երբ հրամայում են իշխանները, ապա նրանցից քչերին է հաջողվում իշխանությունը փոխանցել տաս սերունդների: Երբ հրամայում են աստիճանավորները, ապա նրանցից քչերին է հաջողվում իշխանությունը փոխանցել իհնգ սերունդների: Երբ կրտսեր պաշտոնյաներն են կառավարում տերությունը, քչերին է հաջողվում իշխանությունը փոխանցել երեք սերունդների: Երբ երկրում խաղաղություն է տիրում, ապա աստիճանավորները չեն կառավարում: Երբ երկրում խաղաղություն է տիրում, ապա մարդիկ չեն գանգատվում»:

[Մեկնությունը]

① Այս տեսակետին Կոնֆուցիոսը ամենայն հավանականությամբ հանգել էր պատմագրության ուսումնասիրությունից հետո: Բացարձակ իշխանությունը «Երկնքի որդին» էր՝ կայսրը: Ըստ երևույթին նկատի ուներ իհնգ կայսրերին՝ Հուանդիին, Ջուանայուին, Դիքուին, Թանյաոյին և Յուշումին: Ցի տերության Հուան իշխանը դադարեց ենթարկվել Ջոու հարստության կայսրին, և նրա տաս սերունդ իշխեցին Ցիում՝ Լի, Ջառ, Ցի, Հուեյ, Ցին, Լին, Ջուան, Ջին, Դառ, Ջան իշխանները: Ջան իշխանին

Կոնֆուցիոս. Զրույցներ

սպանեց Զենհենը, և Կոնֆուցիոսը այդ դեպքերի ժամանակակիցն էր: Զին տերության Վեն իշխանին հաջորդեցին Սյան, Լին, Զեն, Զին, Լի, Փին, Զառ, Ցին, Չյու, Լյու իշխանները և Կոնֆուցիոսը գիտեր այդ մասին: Այսինքն՝ ակնհայտ է, որ վերոնշյալ տիրակալները «իշխանությունը չկորցրեցին տաս սերունդների ընթացքում»: Եթե Լու տերությունում թույլ էր տիրակալի իշխանությունը, այն իրականում կառավարվում էր Զի տոհմի կողմից, և այդ տոհմի հինգ սերունդ կարողացան պահպանել իրենց ազդեցությունը՝ Վենձին, Ռոձին, Փինձին, Հուանձին և Յանհուն: Կոնֆուցիոսը քաջ ծանոթ էր նաև այդ ժամանակագրությանը: Այսինքն՝ Զի տոհմի ներկայացուցիչները «իշխանությունը չկորցրեցին հինգ սերունդների ընթացքում»: Իսկ եթե Լու տերության իրական իշխանությունն անցավ Զի տոհմին ենթակա աստիճանավորների ձեռքը, միմյանց հաջորդեցին Նան Քուայը, Գունչան Ֆուչան և Յան Հուն: Այսինքն՝ կրտսեր աստիճանավորները պահպանեցին իշխանությունը երեք սերունդների ընթացքում: Սակայն Կոնֆուցիոսը չէր հասկանում, որ դա պատմության անխոսափելի էվոլյուցիան էր, և իշխանության վերաբաշխման պայքարը մշտապես թեժանում էր:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 3 孔子曰：“祿之去公室五世①矣， 政逮于大夫四世①矣， 故夫三桓②之子孙微矣。”

Քունձին ասաց. «Հինգ սերունդ է, ինչ իշխանական տունն իշխանություն չունի: Չորս սերունդ է, ինչ կառավարում են աստիճանավորները: Այդ պատճառով էլ Հուանի երեք սերունդները թույլ են»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Արդեն հինգ սերունդ է, ինչ իշխանական տոհմը իշխանություն չունի: Արդեն չորս սերունդ է, ինչ տերությունը կառավարում են աստիճանավորները: Այդ պատճառով էլ Հուան իշխանից սերված երեք տոհմերի սերունդները այժմ թույլ են»:

[Մեկնությունը]

① «五世, 四世» - «հինգ սերունդ, չորս սերունդ»: «Հինգ սերունդ» ասելով Կոնֆուցիոսը նկատի ուներ Լու տերության Սյուան, Չեն, Սյան, Զառ և Դին իշխաններին: «Չորս սերունդ» ասելով նկատի ուներ Զի տոհմից սերող Վենձի, Ուձի, Փինձի և Հուանձի աստիճանավորներին: Այդ տեսակետին է հարում նաև Մառ Ցիլինն իր մեկնություններում:

② «三桓» - բառացի՝ «Երեք Հուան». նկատի ունի Լու տերության Հուան իշխանից սերված երեք՝ Մեն, Շու և Զի տոհմերին:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 4 孔子曰：“益者三友， 损者三友。友直， 友谅^①， 友多闻， 益矣。友便辟， 友善柔， 友便佞， 损矣。”

Քունձին ասաց. «Օգուտ բերող երեք բարեկամներ կան, վնասող երեք բարեկամներ կան: Շիտակ բարեկամը, վստահելի բարեկամը և իմաստուն բարեկամն օգուտ են բերում: Շողոքորթ բարեկամը, երեսպաշտ բարեկամը և շաղակրատ բարեկամը վնասում են»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Երեք տեսակի ընկերներ կան, որ օգուտ են բերում, և երեք տեսակ ընկերներ կան, որ վնասում են: Օգուտ է բերում ընկերա-

Կոնֆուցիոն. Զրույցներ

նալը շիտակ, հավատարիմ և բանիմաց մարդկանց: Վճառում է ընկերանալը շողոքորթ, երկերեսանի և զրպարտող մարդկանց հետ»:

[Մեկնությունը]

① «*谅*» - բառացի՝ «ներել», «հասկանալ». գաղափարագիրն ասույթում կիրառված է «վատահելի» խմաստով՝ «*信*» գաղափարագիր փոխարեն: «Քրույցներում» այս գաղափարագիրը կիրառվում է տասներկու անգամ՝ տարբեր խմաստներով:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻԱՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 5 孔子曰：“益者三乐， 损者三乐。乐节礼乐， 乐道人之善， 乐多贤友， 益矣。乐骄乐， 乐佚游， 乐宴乐， 损矣。”

Քունձին ասաց. «Օգուտ բերող երեք տեսակ ուրախություն կա, վնասող երեք տեսակ ուրախություն կա: Երբ ուրախանում են ծեսերից ու երաժշտությունից, ուրախանում են մարդկանց մեջ եղած բարու մասին խոսելուց և ուրախանում են բազում առարինիների հետ բարեկամությամբ՝ օգուտ է բերում: Երբ ուրախանում են շոայլելով, ուրախանում են անբանությամբ և ուրախանում են խրախճանքներով՝ վճառում է»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Օգուտ բերող երեք ուրախություն կա, վնասող երեք ուրախություն կա: Օգուտ է բերում ծեսերից ու երաժշտությունից, մարդկանց բարի կողմերի մասին խոսելուց և արժանավոր մարդկանց հետ ընկերություն անելուց ուրախանալը, վճառում է շոայլությունից, ծովությունից և խրախճանքներից ուրախանալը»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 6 孔子曰：“侍于君子有三愆：言未及之而言谓之躁，言及之而不言谓之隐，未见颜色而言谓之瞽。”

Քոնճին ասաց. «Ազնվայրին ծառայելիս երեք սխալներ կան. խոսել, երբ խոսելու ժամանակը չէ՝ շտապողականությունն է, չխոսել, երբ խոսելու ժամանակն է՝ գաղտնապահությունն է, խոսել՝ չտեսնելով դիմախաղը, կուրությունն է»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդու հետ շփվելիս երեք սխալ են գործում. խոսում են, երբ խոսելու ժամանակը չէ. դա շտապողականությունն է, չեն խոսում, երբ խոսելու ժամանակն է. դա գաղտնապահությունն է, խոսում են՝ չնկատելով դիմախաղը, դա կուրությունն է»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 7 孔子曰：“君子有三戒：少之时，血气未定，戒之在色；及其壮也，血气方刚，戒之在斗；及其老也，血气既衰，戒之在得①。”

Քոնճին ասաց. «Ազնվայրը հեռու է մնում երեք բանից: Երիտասարդ ժամանակ, երբ արյունն ու շունչն անհանգիստ են, հեռու է մնում հեշտանքից, հասունանալով, երբ արյունն ու շունչն ամրանում են, հեռու է մնում կրիվներից, ծերանալով, երբ արյունն ու շունչը թուլանում են, հեռու է մնում ագահությունից»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ազնիվ մարդը պետք է հեռու մնա երեք բանից:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Երիտասարդ ժամանակ, երբ աշխուլծ է ու կորովի, պետք է հեռու մնա մարմնական վայելքից, հասունանալով և զրեղանալով՝ պետք է հեռու մնա ընդհարումերից, իսկ երբ ծերանում է և տկարանում, պետք է հեռու մնա շահամոլությունից»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «得» - գաղափարագիրն ունի մի շարք իմաստներ՝ «ձեռք բերել», «պատշաճ», «ավարտուն», «թույլատրել», «կարիք ունենալ» և այլն, սակայն Քուն Անգոն իր «Մեկնություններում» նշում է, որ այն կիրառված է «貪得»՝ «ազահություն ձեռք բերել» իմաստով: Այդ ազահությունը վերաբերում էր սոցիալական դիրքին, հեղինակությանը և կայքին: Նույնարդվանական մի հատված կա «Հույնանի իմաստուններ» աշխատության մեջ, որը նշվում է հետևյալը՝ «Երիտասարդները վավաշու են, հասուն մարդիկ՝ կրվարար, իսկ ծերերը՝ շահամոլ»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 8 孔子曰：“君子有三畏：畏天命，畏大人①，畏圣人之言。小人不知天命而不畏也，狎大人，侮圣人之言。”

Քունձին ասաց. «Ազնվայրը երեք երկյուղ ունի. երկյուղում է Երկնքի կամքից, երկյուղում է նշանավոր այրերից, երկյուղում է իմաստունների խոսքերից: Նվաստը չգիտի Երկնքի կամքը և չի երկյուղում, մտերմավար է նշանավոր այրերի հետ, ծանակում է իմաստունների խոսքերը»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը երկյուղ ունի երեք բանից. երկյուղում է ձակատագրից, երկյուղում է արքաններից և իշխաններից, երկյուղում է իմաստունների խոսքերից: Նվաստը չգիտի ձակատագիրը և չի

Յան Բոհյունի փոխադրությունը և մեկնությունը

երկյուղում, արհամարհում է արքաներին ու իշխաններին, ծաղրում է իմաստունների խոսքերը»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «大人» - բառացի՝ «մեծ մարդ». ասուլյառ կիրառված է «նշանավոր այրեր» իմաստով, ինչը վերաբերում է արքաներին, իշխաններին և բարձրաստիճան պաշտոնյաներին: «Ծեսերի գրքում» նշվում է. «Նշանավոր այրերը հետևում են ծեսերին»: Մենձի համանուն աշխատության մեջ այսպիսի մի հատված կա. «Երբ խորհուրդ ես տալիս նշանավոր մի այրի, նայիր նրան բարձրից, մի երկնչիր նրա վեհապանն կեցվածքից»: Կարելի է ենթադրել, որ «大人» արտահայտությունը բնորոշել է հասարակական բարձր դիրք զբաղեցնող անձանց, իսկ «圣人»՝ բառացի «սուրբ մարդ» արտահայտությունը բնորոշել է իմաստուններին և առաքիններին:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 9 孔子曰：“生而知之者上也，学而知之者次也；困而学之，又其次也；困而不学，民斯为下矣。”

Քունձին ասաց. «Ծնվելով իմացողները բարձր են ամենքից, հաջորդիվ սովորելով իմացողներն են, հաջորդիվ նրանք, որ սովորում են խոչընդոտների բախվելով, իսկ խոչընդոտների բախվելով չսովորողները ցածրում են»:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Քունձին ասաց. «Բնածին գիտելիքներ ունեցողները բարձր են ամենքից, նրանց հաջորդում են սովորելով իմացողները, իսկ սրանց՝ դժվարությունների բախվելով սովորողները, իսկ դժվարությունների բախվելով չսովորողներն ամենացածրում են»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 1 0 孔子曰：“君子有九思： 视思明， 听思聪， 色思温， 貌思恭， 言思忠， 事思敬， 疑思问， 忒思难， 见得思义。”

Քունձին ասաց. «Ազնվայրը մտածում է ինը բանի մասին. նայելով՝ մտածում է պայծառության մասին, լսելով՝ մտածում է հստակության մասին, շիվելով՝ մտածում է ցերմության մասին, վարվելով՝ մտածում է պատկառանքի մասին, խոսելով՝ մտածում է անկեղծության մասին, ծառայելով՝ մտածում է հարգալիրության մասին, երկմտելով՝ մտածում է հարցնելու մասին, զայրանալով՝ մտածում է հետևանքի մասին, ձեռք բերելով՝ մտածում է արդարության մասին»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Ազնիվ մարդը մտածում է ինը բանի մասին. երբ նայում է՝ մտածում է պարզության մասին, երբ լսում է՝ մտածում է հստակության մասին, երբ շիվում է՝ մտածում է բարեհամբույր լինելու մասին, մարդկանց հետ վարվելիս՝ մտածում է պատկառանքի մասին, երբ խոսում է՝ մտածում է անկեղծության մասին, երբ ծառայում է՝ մտածում է լրջության մասին, երբ կասկածում է՝ մտածում է խորհուրդ հարցնելու մասին, երբ զայրանում է՝ մտածում է հետևանքի մասին, երբ օգուտ է ստանում՝ մտածում է արդարության մասին»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 1 1 孔子曰：“见善如不及， 见不善如探汤。吾见其人矣， 吾闻其语矣。隐居以求其志， 行义以达其道。吾闻其语矣， 未见其人也。”

Քունձին ասաց. «Տեսնելով բարին, շտապում են, ասես կարող են շհացնել, տեսնելով չարք՝ փախչում են, ասես եռման ջրից։ Ես տեսել

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

եմ այդպիսի մարդկանց, ես լսել եմ այդպիսի խոսքեր: Ապրում են միայնության մեջ՝ կամքն ամրացնելու համար, վարվում են արդարությամբ՝ հետևելով իրենց Ուղուն: Ես լսել եմ այդպիսի խոսքեր, սակայն չեմ տեսել այդպիսի մարդկանց»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Տեսնելով բարին՝ այնպես են ձգտում դրան, ասես վախենում են, որ կարող են կորցնել, տեսնելով չարը՝ փախչում են դրանից, ասես եռման ջրից: Ես տեսել եմ այդպիսի մարդկանց, ես լսել եմ այդպիսի խոսքեր: Ապրում են միայնության մեջ՝ կամքն ամրացնելու համար, ամեն ինչում առաջնորդվում են արդարությամբ՝ հետևելով իրենց ուսմունքին: Ես լսել եմ այդպիսի խոսքեր, սակայն չեմ տեսել այդպիսի մարդկանց»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 1 2 齐景公有马千驷①，死之日，民无德而称焉。伯夷叔齐饿于首阳②之下，民到于今称之。其斯之谓与③？

Յիի Զին իշխանը հազար քառյակ ձի ուներ: Մահվան օրը մարդիկ բարի խոսքով չիշխատակեցին նրան: Բո Յին և Շու Յին սովամահ եղան Շոռլյանի ստորոտում, սակայն մարդիկ մինչ օրս փառաբանում են նրանց: Մի՞թե դա չէ իմաստը:

[Փոխադրությունը]

Յի տերության Զին իշխանը չորս հազար ձի ուներ: Սակայն երբ նա մահացավ, մարդիկ նրան բնորոշող մի բարի խոսք անգամ չգտան փառաբանելու համար: Բո Յին և Շու Յին սովամահ եղան Շոռլյան լեռան ստորոտում, սակայն մարդիկ այսօր էլ փառաբանում են նրանց: Ահա թե ինչ է դա նշանակում:

[Մեկնությունը]

① «千驷» - «հազար քառյակ». հնում ձիերը հաշվում էին քառյակ-ներով, քանզի մարտակառքերին լծվում էին չորս ձիեր: Արտահայտությունը քանից համդիպում է «Չուոյի նորերում»՝ «千乘» տարբերակով, որտեղ «乘» գաղափարագիրն ունի «քառաձի մարտակառք» իմաստը: Հաճախ կիրառվում է նաև որպես փոխաբերություն՝ նշելու համար չափազանց հարուստ ուժեցվածքը:

② «首阳» - Շոռուան. լեռան անուն է: Հանդիպում է մի շարք աշխատություններում, սակայն դրա գտնվելու վայրն այժմ հայտնի չէ:

③ «其斯之谓与» - «Մի՞րեւ դա չէ իմաստը». անհասկանալի է «Մի՞րեւ դա չէ իմաստը» արտահայտության կիրառությունը: Զու Սին կարծում էր, որ բնագրում առկա է վրիպակ, այս արտահայտությունը պետք է այլ ասույթի մաս կազմեր: Հարկ է նշել նաև, որ այս ասույթը չի սկսվում «Ուսուցիչն ասաց» կամ «Քունձին ասաց» բառերով, ինչը Զու Սին և Զեն Յին համարում էին բնագրային բացթողումներ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 1 3 陈亢①问于伯鱼曰：“子亦有异闻乎？”对曰：“未也。尝独立，鲤趋而过庭。曰：‘学诗乎？’对曰：‘未也。’不学诗，无以言。”鲤退而学诗。他日，又独立，鲤趋而过庭。曰：‘学礼乎？’对曰：‘未也。’不学礼，无以立。”鲤退而学礼。闻斯二者。”陈亢退而喜曰：“问一得三，闻诗，闻礼，又闻君子之远其子也。”

Զեն Գանը հարցեց Բոյուին.

- Ուսուցչից լսել ես ինչ-որ յուրահասուկ բան:
- Ոչ: Մի անգամ մենակ կանգնած էր, իսկ ես արագ քայլելով անցնում էի բակով: Նա ասաց. «Ուսումնասիրեցի՞ր «Երգերը»: Ասացի՞«Ոչ»: «Չուսումնասիրես «Երգերը»՝ ոչինչ չես կարող ասել»: Ես դար-

ձա, որպեսզի ուսումնասիրեմ «Երգերը»: Մյուս օրը նա կրկին մենակ կանգնած էր, իսկ ես արագ քայլելով անցնում էի բակով: Նա ասաց. «Ուսումնասիրեցիր «Ծեսերը»: Ասացի՝ «Ոչ»: «Չուսումնասիրես «Ծեսերը»՝ չես գտնի դիրք»: Ես դարձա, որպեսզի ուսումնասիրեմ «Ծեսերը»: Այդ երկու բանն եմ լսել:

Չեն Գանը դուրս եկավ և ուրախ ասաց.

- Մի բան հարցրեցի՝ իմացա երեքը: Իմացա «Երգերի» մասին, իմացա «Ծեսերի» մասին, նաև իմացա, որ ազնվայրն իրեն հեռու է պահում որդուց:

[Փոխադրությունը]

Չեն Գանը Քունձի որդուն՝ Բոյուին հարցրեց.

- Ուսուցչից իմշոր յուրահատուկ բան լսել ես:

Բոյուն ասաց.

- Ոչ: Մի անգամ մենակ կանգնած էր բակում, իսկ ես հարգալիր անցնում էի նրա կողքով: Նա հարցրեց ինձ. «Ուսումնասիրեցիր «Երգերի գիրքը»: Ասացի՝ «Ոչ»: Նա ասաց. «Չուսումնասիրես «Երգերի գիրքը»՝ խսելու ոչինչ չես ունենա»: Ես ետ դարձա, որպեսզի ուսումնասիրեմ «Երգերի գիրքը»: Մյուս օրը նա կրկին մենակ կանգնած էր բակում, իսկ ես հարգալիր անցնում էի նրա կողքով: Նա հարցրեց ինձ. «Ուսումնասիրեցիր «Ծեսերի գիրքը»: Ասացի՝ «Ոչ»: «Չուսումնասիրես «Ծեսերի գիրքը»՝ հասարակության մեջ չես գտնի դիրք»: Ես ետ դարձա, որպեսզի ուսումնասիրեմ «Ծեսերի գիրքը»: Ընդամենը այդ երկու բանն եմ լսել:

Չեն Գանը դուրս եկավ և ուրախ ասաց.

- Ես մի բան հարցրեցի՝ իմացա երեքի մասին: Իմացա «Երգերի» մասին, իմացա «Ծեսերի» մասին, նաև իմացա, թե ինչպես է ազնիվ մարդը վերաբերվում որդուն:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «陈亢» - Չեն Գան. հայտնի էր որպես Չեն Զիցին:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 6 . 1 4 邦君之妻，君称之曰夫人，夫人自称曰小童；邦人称之曰君夫人，称诸异邦曰寡小君；异邦人称之亦曰君夫人①。

Երկրի տիրակալն իր կնոջը «տիկին» է կոչում, տիկինն իրեն «աղջնակ» է կոչում, տերության մարդիկ նրան «տիրակալի տիկին» են կոչում, այլ տերությունների մարդկանց մոտ նրան կոչում են «փոքր տիրուիի», իսկ այլ տերությունների մարդիկ նրան «տիրակալի տիկին» են կոչում:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Երկրի տիրակալն իր կնոջը «տիկին» է կոչում, տիկինն իրեն «աղջնակ» է կոչում, հպատակները նրան «տիրակալի տիկին» են կոչում, օտար տերությունների պատվիրակությունների մոտ նրան կոչում են «փոքր տիրուիի», իսկ օտար տերությունների հպատակները նրան «տիրակալի տիկին» են կոչում:

[ՄԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ]

① Այս ասույթը, թերևս, Կոնֆուցիոսի հեղինակածն է, սակայն կրկին բացակայում են «Ուսուցիչն ասաց» կամ «Քունձին ասաց» արտահայտությունները, որոնցով սկսվում է ասույթների մեծ մասը: Ոմանք կարծում են, որ այս խոսքերով ուղղակի լրացվել են բնագիրը պարունակող հնդկեղեգնի կտորների բաց հատվածները: Սակայն հայտնի էր, որ Կոնֆուցիոսի «Զրույցների» գրառման համար կիրառվել են հնդկե-

Յան Բոնձունի փոխադրությունը և մեկնությունը

ղեգնի ութ մատնաչափ երկարությամբ կտորներ: Կարձ ասույթները գրառվել են հնդկեղեգնի մի կտորի վրա, իսկ երկար ասույթները՝ մի քանի կտորի: Այս ասույթը բաղկացած է քառասուն գաղափարազրից և տեսակետը, որ այն ընդամենը դատարկ տեղ է լրացնում՝ արժանահավատ չէ, մանավաճ՝ որ այն հանդիպում է նաև «Հին զրոյցներում» և «Լուի զրոյցների» «Տիրակալի կինը» գլխում: Կարելի է ենթադրել, որ ասույթն ավելի հին աղբյուրների բաղկացուցիչ է եղել, այնուհետև ներառվել է «Զրոյցների» մեջ:

Գլուխ 17. Յան Հուոն Բնդամենը 26 ասույթ

(Հե Յանի «Մեկնություններում» երկրորդ և երրորդ,
իններորդ և տասներորդ ասույթները միացված են,
ուստի այն ներառում է 24 ասույթ)

ԿՈՆՖՈՒՅԻՆԸ ԲՆԴԱՄԵՆԸ

17.1 阳货①欲见孔子， 孔子不见， 归孔子豚②。孔子时其亡也， 而往拜之。遇诸途。谓孔子曰：“来！予与尔言。”曰③：“怀其宝而迷其邦， 可谓仁乎？”曰：“不可。—好从事而亟④失时， 可谓知乎？”曰：“不可。—日月逝矣， 岁不我与。”孔子曰：“诺；吾将仕矣⑤。”

Յան Հուոն ցանկանում էր հանդիպել Քունձիին, Քունձին չերևաց։ Քունձիին գոճի ուղարկեց։ Քունձին գնաց իր հարգանքը հավաստելու, երբ նա տանը չէր և հանդիպեց նրան ձանապարհին։ Նա ասաց Քունձիին։

- Մոտեցիր, ուզում եմ խոսել քեզ հետ։
Հետո ասաց։
- Կարելի՞ է մարդկային անվանել նրան, ում մտքերը գոհարներ են, սակայն կորստյան է մատնում երկիրը։
Հետո ասաց։
- Չի կարելի։ Կարելի՞ է իմաստուն անվանել նրան, ով ձգտում է ծառայել, սակայն համառորեն բաց է թողնում հնարավորությունները։
Հետո ասաց։
- Չի կարելի։ Օրերն ու ամիսներն անցնում են, ժամանակը չի սպասում։

Յան Քոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Քունձին ասաց.

- Այո, ես կծառայեմ:

[Փոխադրությունը]

Յան Հուոն ցանկանում էր հանդիպել Քունձիին, սակայն Քունձին այդպես էլ չեկավ: Յան Հուոն Քունձիին խորոված գոձի ուղարկեց, որ պեսզի նա ստիպված լիներ գալ և շնորհակալություն հայտնել: Քունձին գնաց շնորհակալություն հայտնելու, սակայն ընտրեց այնպիսի ժամանակ, երբ նա տաճը չէր լինի: Եվ համեստ նրանք հանդիպեցին ձանապարհին: Յան Հուոն ասաց Քունձիին.

- Մոտեցիր, ես ուզում եմ խոսել քեզ հետ:

Քունձին մի քայլ ետ գնաց: Յան Հուոն ասաց.

- Մի՞թե կարելի է մարդկային անվանել նրան, ով բազմաշնորհ է, սակայն իր երկիրը թողնում է բախտի քմահաձույքին:

Քունձին ոչինչ չասաց: Յան Հուոն շարունակեց.

- Չի կարելի: Մի՞թե կարելի է իմաստուն անվանել նրան, ով ցանկանում է աստիճանավոր լինել, սակայն միշտ բաց է թողնում հնարավորությունները:

Քունձին ոչինչ չասաց: Յան Հուոն շարունակեց.

- Չի կարելի: Տարիներն անցնում են, ժամանակը ետ չի դառնում:

Քունձին ասաց.

- Լավ, ես կրառնամ աստիճանավոր:

[Մեկնությունը]

① «阳货» - Յան Հուոն հայտնի էր նաև որպես Յան Հու: Չի ազնվական տոհմին պատկանող կալվածքների կառավարիչն էր: Չի տոհմը Լու տերության ամենաազդեցիկ քաղաքական ուժն էր և Յան Հուոն բարձր աստիճան ուներ: Սակայն նա հեղինակազրկվեց և փախչելով՝ ապաստան գտավ Չին տերությունում:

② «归孔子豚» - «Քունձիին գոծի ուղարկեց». ասույթում «归»՝ «վերադառնալ», «վերադառնել», «պատկանել» զաղափարագիրը կիրառված է «馈»՝ «ընծայաբերել», «նվեր ուղարկել», «նվիրել» իմաստով: Մենձի համանուն աշխատության «Թենի Վեն իշխանը» գիտում այսպիսի տողեր կան. «Երբ բարձրաստիճան այրը ընծայ էր ուղարկում պաշտոնյային, և նա տանը չէր լինում, պիտի գար և շնորհակալություն հայտներ»: Ստացվել էր այնպես, որ Յան Հուոն ուղարկել էր խորոված գոծին այն ժամանակ, երբ Կոնֆուցիոսը տանը չէր: Քանի որ, համաձայն ծեսերի՝ Կոնֆուցիոսը պարտավոր էր գնալ և անձամբ շնորհակալություն հայտնել ընծայի համար, դիտավորյալ ընտրեց այնպիսի ժամանակ, որ Յան Հուոն տանը չիներ. այդպիսով նա կխոսակիեր անցանկալի հանդիպումից:

③ «曰» - «ասել». այս ասույթում Յան Հուոն հիմնականում հարցեր է տալիս և ինքը պատասխանում դրան: Կոնֆուցիոսը ողջ ընթացքում լուր է մնում և խոսում է միայն վերջում: Փոխադրելիս մասամբ օգտվել եմ Յու Յուեի մեկնության տարրերակից:

④ «亟» - զաղափարագիրն ունի «համառ», «շարունակական», «տևական», «մշտական» իմաստները:

⑤ «吾将仕矣» - «Ես կծառայեմ». այս արտահայտությունն անելով՝ Կոնֆուցիոսը նկատի ուներ այն, որ կծառայի Լու տերությանը, ոչ թե Զի տոհմին: Նա հավատարիմ եղավ իր խոսքին և չծառայեց Յան Հուոյին վերջինիս գորության ծաղկման շրջանում: Այս մասին հիշատակված է նաև «Ձուոյի նորերի» Դին իշխանի կառավարման ութերորդ տարվա նկարագրության մեջ:

ԿՈՆՖՈՒՅԻՆ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 子曰：“性相近也，习相远也。”

Ուսուցիչն ասաց. «Բնույթով մոտ են իրար, սովորություններով՝ հեռու»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Մարդիկ բնավորությամբ նման են միմյանց, սակայն օտարանում են տարբեր սովորությունների պատճառով»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 3 子曰：“唯上知与下愚①不移。”

Ուսուցիչն ասաց. «Զեն փոխվում վեհ իմաստությունն ու նվաստ հիմարությունը»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Զեն փոխվում միայն ամենահիմաստունները և նվաստ հիմարները»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «上知、下愚» - «Վեհ իմաստություն, ստոր հիմարություն». այս արտահայտությունը մեկնարանվել է տարբեր կերպ: Ունաճը իմաստությունն ու հիմարությունը կապում են բարու և չարի հետ, այսինքն՝ մարդու բնույթի, նշելով, որ իմաստնանում են բարի մարդիկ, իսկ չար մարդիկ հիմար են: Սակայն առավել արժանահավաս է համեմատությունը «Զրույցների» տասնվեցերորդ գլխի իններորդ ասույթի հետ, որտեղ Կոնֆույոն ամենահիմաստուն համարում էր ի ծնե ուշիմ մարդկանց: Նա ինքն իրեն այդախիսին չէր համարում և այդ մասին նշվում է «Զրույցների» յոթերորդ գլխի քսաններորդ ասույթում. «Ես գիտուն չեմ ծնվել, իինը սիրելի ու ջանահրությունն են ինձ այսպիսին դարձրել»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7.4 子之武城，闻弦歌之声。夫子莞尔而笑，曰：“割鸡焉用牛刀？”子游对曰：“昔者偃也闻诸夫子曰：‘君子学道则爱人，小人学道则易使也。’”子曰：“二三子！偃之言是也。前言戏之耳。”

Երբ Ուսուցիչն Ուշենում էր, լսեց լարերի նվազն ու հնչյունները: Նա ժպտաց և ասաց.

- Ինչո՞ւ ցլի դանակով ձուտ մորթել:

Զիձոռուն ասաց նրան.

- Նախկինում Յանը լսել է, թե ինչպես է Ուսուցիչն ասում. «Ազնվայրը ուսումնասիրելով Ուղին՝ սիրում է մարդկանց, նվաստն ուսումնասիրելով Ուղին՝ հեշտությամբ է կառավարվում»:

Ուսուցիչն ասաց.

- Զավակներս, Յանի խոսքերը ձշմարիտ են: Նախկինում ասածն կատակ էր:

[Փռխադրությունը]

Երբ Քունձին եկավ Ուշեն ավան, ուր կառավարում էր Զիյոնուն, նա լսեց ծխական երաժշտության հնչյունները: Նա ժպտաց և ասաց.

- Արժե՞ն, արդյոք, մեծ դանակով ձուտ մորթել: Շան գիտելիք է անհրաժեշտ այս փոքր տարածքը կառավարելու համար:

Զիձոռուն ասաց նրան.

- Նախկինում ես լսել եմ, թե ինչպես ես դու ասում՝ «Գիտելիքով օժտված ազնիվ մարդն առարինի է, իսկ գիտելիքներով օժտված նվաստին հեշտ է կառավարել»: Գիտելիքն անհրաժեշտ է միշտ:

Քունձին ասաց.

- Իմ սաներ, Յանը ձիշտ է ասում: Այն, ինչ ասել եմ նրան նախկինում՝ կատակ էր:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

17.5 公山弗扰①以费畔②，召，子欲往。子路不说，曰：“末之也，已③，何必公山氏之之④也？”子曰：“夫召我者，而岂徒哉⑤？如有用我者，吾其为东周乎。”

Գունչան Ֆուժառն ընդվզելով ամրացավ Ֆեյում, հրավիրեց Ռւսուց-չին, և նա ցանկացավ գնաւ։ Զիլոն դժգոհ ասաց.

- Մի գնաւ։ Ինչո՞ւ պիտի գնաս Գունչան տոհմի մոտ։
Ռւսուցիչն ասաց.

- Այդ այրը հրավիրել է ինձ, մի՞թե անհմաստ է։ Եթե ես ծառայեմ նրան, արևելքում Զոռ կստեղծեմ։

[Փոխադրությունը]

Գունչան Ֆուժառն ապստամբեց և իր զորքով ամրացավ Ֆեյ ավա-նում, այնուհետև իր մոտ հրավիրեց Քունձիին, և նա ցանկացավ գնաւ։ Զիլոն դժգոհ ասաց.

- Մոռացիր այդ հրավերի մասին և մի գնաւ։ Ինչո՞ւ պիտի գնաս նրա մոտ։

Քունձին ասաց.

- Մի՞թե նա հրավիրել է ինձ առանց որևէ պատճառի։ Եթե նա ինձ ծառայության վերցնի, ես արևելքում կկարողանամ վերստեղծել Զոռ տերության Վեն և Ու արքաների կառավարման կարգը։

[Մեկնությունը]

① «公山弗扰» - Գունչան Ֆուժառ. Լու տերության աստիճանավոր էր, ծառայում էր Զի տոհմին։ Ապստամբում է՝ միավորվելով Յան Հույնի հետ, սակայն պարտություն է կրում։ Նրա մասին հիշատակված է «Զույն նոթերի» Դին իշխանի կառավարման հինգերորդ, ութերորդ, տասնհինգերորդ և Այ իշխանի կառավարման ութերորդ տարվա նկա-

Կոնֆուցիոս. Զրույցներ

բազրության մեջ: Սակայն այնտեղ բացակայում է Կոնֆուցիոսին հրավիրելու մասին հատվածը:

② «畔» - բառացի՝ «ծայր», «սահման», «ափ». Մատ Ցիլինը նշում էր, որ «畔» գաղափարագիրն ասուլում ունի «謀逆»՝ «ապստամբության պատրաստվել», «ընդվզել» իմաստները, ուստի փոխադրության մեջ գործածել են այդ իմաստով:

③ «末之也, 已» - բառացի՝ «արդեն գնալու տեղ չկա». ասուլում կիրառված է «մի գնա» իմաստով:

④ «何必公山氏之之也» - «Ինչո՞ւ՝ պիտի գնաս Գունչան տոհմի մոտ». արտահայտության մեջ կիրառված երկու «之之» գաղափարագրերից առաջինն ըստ երևույթին կիրառված է որպես շրջուն շարահյուսության օժանդակ բառ, իսկ երկրորդը՝ որպես բայ՝ «գնալ»:

⑤ «而岂徒哉» - «Մի՞թե անհնաստ է». որոշ մասնագետներ փոխադրել են արտահայտությունը որպես «Ինչո՞ւ՝ է ինձ կանչել»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 6 子张问仁于孔子。孔子曰：“能行五者于天下为仁矣。”“请问之。”曰：“恭，宽，信，敏，惠。恭则不侮，宽则得众，信则人任焉，敏则有功，惠则足以使人。”

Ձիջանը քունձիին հարցրեց մարդկայնության մասին: Քունձին ասաց.

- Երկնքի տակ ամենուր իինգ արժանիքներ դրսորողը մարդկային է:
- Թույլ տուր հարցնել՝ որո՞նք են:

- Պատկառանքը, մեծահոգությունը, ազնվությունը, խելքն ու բարությունը: Պատկառու՞ն ես, չեն պախարակի, մեծահոգությամբ կգրավես բազմությունը, ազնվությամբ կարժանանաս մարդկանց վստահությանը, խելքով կհաջողես, բարությամբ կբանեցնես մարդկանց:

[Փոխադրությունը]

Զիշանը Քունձիին հարցրեց մարդկայնության մասին: Քունձին ասաց.

- Նա, ով ամենուր կարողանում է դրսնորել իինգ առաքինություն-ները՝ մարդկային է:

Զիշանն ասաց.

- Թույլ տուր հարցնել՝ որո՞նք են դրանք:

- Պատկառանքը, մեծահոգությունը, ձշմարտացիությունը, խելա-մտությունն ու բարությունը: Պատկառո՞ն ես, չեն վիրավորի, մեծահո-գությամբ կվայեն մարդկանց համակրանքը, ձշմարտացիությամբ կարժանանաս մարդկանց վստահությանը, խելամտությամբ կիասնես հաջողության, իսկ բարությամբ կկարողանաս կառավարել մարդկանց:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

17.7 佛肸①召，子欲往。子路曰：“昔者由也闻诸夫子曰：‘亲于其身为不善者，君子不入也。’佛肸以中牟②畔，子之往也，如之何？”子曰：“然，有是言也。不曰坚乎，磨而不磷③；不曰白乎，涅④而不缁。吾岂匏瓜⑤也哉？焉能系而不食？”

Ֆու Սին հրավիրեց, Ուսուցիչը ցանկացավ գնալ: Զիլուն ասաց.

- Նախկինում ես լսել եմ, թե ինչպես է Ուսուցիչն ասում. «Ազնվայրը չի միանում նրանց, ովքեր չարիք են գործում»: Ֆու Սին ընդգվել է Զունմուտում, իսկ Ուսուցիչը ցանկանում է գնալ նրա մոտ:

Ուսուցիչն ասաց.

- Ճիշտ է, իմ խոսքերն են: Մի՞թե չեն ասում. «Կարծրը չի տաշփում, բարակում»: Մի՞թե չեն ասում. «Ճերմակը չի սևանում»: Մի՞թե կնման-վեմ դդմիկի, որ կախված է և չի ուսվում:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Ֆու Սին հրավիրեց Քունձիին, և նա պատրաստվեց գնալ: Զիլուն ասաց.

- Նշանկինում ես լսել եմ, թե ինչպես ես ասում. «Ազնիվ մարդը չի միանում չարագործներին»: Ֆու Սին ապստամբել է Զունմուում, իսկ դու ցանկանում ես գնալ նրա մոտ:

Քունձին ասաց.

- Ճիշտ է, դա ես եմ ասել: Միջեւ չես լսել այս խոսքերը. «Կարծր իրն անհնար է տաշել, ճերմակ իրն անհնար է սևացնել»: Միջեւ ես դդմիկ եմ, որ կախված է և ոչ ոք այն չի ուսում:

[Մեկնությունը]

① «佛肸» - Ֆու Սի. Զին տերության աստիճանավոր էր՝ Զունմու գավառի կառավարիչը: Նա ենթարկվում էր նահանգապետ Ֆան Զունսինին, և երբ Զին տերության իշխանը զորք ուղարկեց Ֆան Զունսինի դեմ, Ֆու Սին ապստամբեց և ամրացավ Զունմուում:

② «中牟» - Զունմու. Զին տերության գավառներից մեկի անուն է: Գտնվել է ներկայիս Հեբեյ նահանգի Սինթայ և Հանդան գավառների տարածքում: Զշփորեկ Հենան նահանգի համանուն գավառի հետ:

③ «磷» - բառացի՝ «խարխուլ», «թուլ». ասույթում կիրառված է «բարակել» իմաստով:

④ «涅» - հնում այս գաղափարագրով նշում էին հատուկ նյութը, որից ստանում էին սև ներկ: Ասույթում կիրառված է որպես բայ, ունի «սևացնել» իմաստը:

⑤ «匏 瓜» - «դդմիկ». այս գաղափարագրով նշվում էր շշածն դդմիկը, ինչի սնամեջ պտուղներն օգտագործում էին որպես խմիչքի տարաներ: Այդ տեսակն առանձնապես պիտանի չէր ուտելու համար: Պատահական չէ, որ Կոնֆուցիոսն ինքն իրեն համեմատում է այդ պտղի հետ: Այն ժամանակ նա չէր ծառապում և կարծում էր, որ

կհայտնվի մեկը, ով ծառայության կընդունի իրեն, և նա հնարավորություն կունենա դրսեսրել իրեն ըստ արժանվույն: «Կախված է և չի ուտվում» արտահայտությունը խորհրդանշում է «անպետքությունը», ծառայության մեջ չինելը:

ԿՈՆՖՈՒՅԻՉՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

17.8 子曰：“由也！女闻六言①六蔽矣乎？”对曰：“未也。”“居！吾语女。好仁不好学②，其蔽也愚③；好知不好学，其蔽也荡④；好信不好学，其蔽也⑤贼⑤贼⑤；好直不好学，其蔽也绞；好勇不好学，其蔽也乱；好刚不好学，其蔽也狂。”

Ուսուցիչն ասաց.

- Յո՞ւ: Լսել ես վեց խոսքերը վեց մոլորությունների մասին:
- Չեմ լսել, ասաց նա:
- Նստիր: Ես կասեմ քեզ: Մարդկայնության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է պարզամտության: Իմաստության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է մտացրիվության: Արդարամտության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է վնասների: Շիտակության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է կոպսության: Խիզախության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է լմբուսության: Տոկունության ձգտելը՝ առանց սովորելու, մոլորություն է, որ տանում է խելագարության:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց.

- Յուն Յո՞ւ: Գիտե՞ս վեց արատների մասին:
- Չգիտեմ, ասաց Զիլուն:
Քոնձին ասաց.

- Նստիր: Ես կասեմ քեզ: Առաքինությունը սիրելով չսովորելը հիմարության արատն է: Իմաստությունը սիրելով չսովորելն անորոշության արատն է: Ազնվությունը սիրելով չսովորելը վնասարարության արատն է: Ուղղամտությունը սիրելով չսովորելը անտաշության արատն է: Քաջությունը սիրելով չսովորելը ըմբռաստության արատն է: Հաստատակամությունը սիրելով չսովորելը խելազարության արատն է:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «言» - «խոս», «բառ». այս գաղափարագիրը երբեմն կիրառվել է նաև «արժանիք» իմաստով: Մասնավորապես՝ «Զրույցների» տասն-հինգերորդ գլխի քսանչորսերորդ ասույթում այս գաղափարագիրը ևս փոխադրել եմ որպես «բառ», սակայն գաղափարագրի կիրառման բովանդակությունը թույլ է տալիս կիրառել այն որպես «արժանիք»: Այսինքն՝ վեց արժանիքներն, ըստ Կոնֆուցիոսի, հետևյալն էին՝ մարդկայնություն, իմաստություն, արդարամտություն, շիտակություն, խիզախություն, տոկունություն:

② «不好学» - բառացի՝ «չսիրել սովորելը». նպատակահարմար է փոխադրել որպես «առանց սովորելու», քանզի առանց սովորելու անհնար է հաջողել՝ անկախ գիտելիքների կիրառման բնագավառից:

③ «愚» - «հիմար», «պարզամիտ». Զու Սին իր «Մեկնություններում» նշում է հետևյալը. «Պարզամիտներին վիճակված է հաձախ ձաշակել դժբախտության համը»:

④ «蕩» - «մտացրիկություն». Քուն Անգոն փոխադրել է այս գաղափարագիրը որպես «նպատակների բացակայություն»:

⑤ «賊» - «վնաս». Գուան Խունը իր «Զորս գրքերի մեկնություն» աշխատության մեջ նշում է հետևյալը. «Արդարամիտ այրը, որ ջանասիրաբ չի սովորում, կվնասի իրեն և մարդկանց, նույնիսկ՝ եթե գործում է ազնիվ մղումներից ելնելով»: Մշտապես կրթվելը կոնֆուցիականները համարում էին հաջողության համապիտանի գրավական:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 9 子曰：“小子何莫学夫诗？诗，可以兴，可以观，可以群，可以怨。迩之事父，远之事君；多识于鸟兽草木之名。”

Ուսուցիչն ասաց. «Զավակներս, ինչո՞ւ չեք սերտում «Երգերը»: «Երգերը» կարող են ոգեշնչել, կարող են խորհուրդ տալ, կարող են միավորել, կարող են բողոքել։ Սովորեցնում են մտավկից ծառայել ծնողներին և հեռվից՝ տիրակալին, իմանալ բազում թռչունների և գազանների, պտուղների և ծառերի անուններ»։

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Իմ սաներ, ինչո՞ւ չեք ուսումնասիրում «Երգերի գիրքը»: «Երգերի գիրքը» կարող է ոգևորել, կարող է խորհուրդներ տալ, կարող է օգնել միաբանվել, կարող է բողոքի պատճառ դառնալ։ Այն սովորեցնում է, թե ինչպես պետք է ծառայել ծնողներին ու տիրակալին, իմանալ մեծաթիվ թռչունների ու կենդանիների, պտուղների ու ծառերի անուններ»։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 0 子谓伯鱼曰：“女为《周南》、《召南》①矣乎？人而不为《周南》、《召南》，其犹正墙面而立②也与？”

Ուսուցիչն ասաց Բոնյին. «Յուրացրել ես «Զոունանը» և «Շառնանը»։ Այրը, որ չի յուրացրել «Զոունանը» և «Շառնանը», մի՞թե նման չէ նրան, որ կանգնած է պատի դիմաց»։

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց Բոյուին. «Ուսումնասիրե՞լ ես «Զոռունանը» և «Շառնանը»: Մարդը, որ չի ուսումնասիրել «Զոռունանը» և «Շառնանը», նման է նրան, որ դեմքով կանգնած է դեպի պատը»:

[Մեկնությունը]

① «周南», «召南» - «Զոռունան», «Շառնան». Երգեր են, «Երգերի գրքի» մաս են կազմում: Շեն Կուտն իր «Խոհագրություն երազանքի ավազանի մասին» աշխատության մեջ նշում է, որ սրանք երաժշտության տեսակներ են, որ տարածված էին Զառ և Շառ հարստությունների օրոր:

② «正牆面而立» - «կանգնած է պատի դիմաց». Զու Սին նշում էր հետևյալը. ««Կանգնած լինել պատի դիմաց» արտահայտությունը խորհրդանշում է աշխարհայացքի նեղությունը և մտավոր սահմանափակությունը»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 子曰：“礼云礼云，玉帛云乎哉？乐云乐云，钟鼓云乎哉？”

Ուսուցիչն ասաց. «Ծեսեր, ծեսեր, միթե հասպիսն ու մետաքսն են: Երաժշտությունն, երաժշտություն, միթե զանգերն ու կոչնակներն են»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Երբ ասում են «Ծեսեր, ծեսեր», միթե դա միայն հասպիս ու մետաքս լնծայելն է: Երբ ասում են «Երաժշտություն», երաժշտություն», միթե նկատի ունեն միայն զանգերի ու կոչնակների ձայնը»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 2 子曰：“色厉而内荏，譬诸小人，其犹穿窬之盗也与？”

Ուսուցիչն ասաց. «Խստադեմ է, սակայն ներսից թույլ, համեմատելի նվաստին: Մի՞թե նման չէ զողի, որ փորում է պարսպի տակ կամ անցնում վրայով»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Արտաքինից խիստ է, սակայն ներքուստ՝ երկշոտ, ինչպես նվաստը: Նման է զողի, որ փորում է պարսպի տակ կամ անցնում դրա վրայով»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 3 子曰：“乡愿①，德之贼也。”

Ուսուցիչն ասաց. «Երկերեսանին կործանում է առաքինությունը»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Ճշմարիտն ու սուտը չտարբերող նվաստը վնաս է հասցնում բարոյականությանը»:

[Մեկնությունը]

① «乡愿» - «կեղծավոր», «երկերեսանի». այս արտահայտությունը բազմաթիվ վեճերի պատճառ է դարձել: Բացի նշյալ տարբերակներից, այն փոխադրվել է որպես «զյուղացի ողջախիներ», «տեղացի արժանավորներ», «ազնիվ զյուղացիներ», «զյուղի առաքինիներ»: Արտահայտությունը փոխադրելիս հիմք են վերցրել Մեկնճի համանուն աշխատու-

Կոնֆուցիոս. Զրույցներ

թյան «Ողջ սրտով» գլխի նշյալ հատվածը. «Ո՞՞ն է պետք այդ պարծեն-կոտորչյունը: Ասում են. «Մենք սերում ենք հին այրերից, հին այրերից»: Սակայն նրանց խոսքերը չեն համապատասխանում արարքներին, իսկ արարքները չեն համապատասխանում խոսքերին: Նրանց մասին ասում են, որ հեռու են մնալու մարդկանցից և անտարբեր են ամենի հանդեպ: Քունձին նրանց կոչում է երկերեսանի, քանզի նրանք չեն ընդունում սիսալն ու ցածր բարքի տեր են, թեև զլուղում առարինի այրի համարում ունեն: Շրջապատողները բարձր են գնահատում նրանց, և նրանք իրենց շիտակ են համարում: Սակայն նրանց հետ չի կարելի քայլել Յայի և Շունի ուղիղով»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 4 子曰：“道听而途说，德之弃也。”

Ուսուցիչն ասաց. «Ճանապարհին լսածի մասին խոսելով՝ հեռանում ես առաքինությունից»:

[Փոխադրությունը]

Քունձինն ասաց. «Նա, ով տարածում է փողոցում լսած շշուկները, հեռանում է բարոյականությունից»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 5 子曰：“鄙夫可与①事君也与哉？其未得之也，患得之当作患不得之②。既得之，患失之。苟患失之，无所不至矣。”

Ուսուցիչն ասաց. «Կարելի՞ է նվաստ մեկի հետ ծառայել տիրակալին: Քանի դեռ չի հասել ուզածին՝ տագնապում է, որ չի հասնի, հասնելով՝

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

տագնապում է կորցնելուց: Տագնապելով կորցնել՝ ոչնչի առջև կանգ չի առնի»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Միթե կարեի է ստոր մարդու հետ ծառայել տիրակալին: Քանի դեռ չի ստացել ցանկալի պաշտոնը, նա վախենում է, որ չի ստանա, ստանալով՝ վախենում է, որ կկորցնի այն: Պաշտոնը կորցնելու վախից նա պատրաստ կլինի ամեն ինչի»:

[Մեկնությունը]

① «可与» - «կարելի՞ է». Վան Ինչին նշում էր, որ այս արտահայտությունը նույն իմաստն ունի, ինչ ժամանակակից «可以» արտահայտությունը:

② «患得之» - «տագնապում է հասնելով». Վան Ֆուն իր «Ցյանֆուի զրոյցներ» աշխատության մեջ նշել է հետևյալը. «Քունձին ասում էր նրանց, ովքեր վախենում էին նրանից, որ չեն հասնի ուզածին, իսկ հասնելով՝ վախենում էին կորցնել այն»: Հան ժամանակաշրջանի մեկնողների մեծամասնությունն արտահայտությունը փոխադրում են հետևյալ կերպ. «Նվաստը ստանալով ցանկալին՝ վախենում է կորցնել»:

ԿՈՆՖՈՒՅՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 6 子曰：“古者民有三疾，今也或是之亡也。古之狂也肆，今之狂也蕩；古之矜也廉^①，今之矜也忿戾；古之愚也直，今之愚也詐而已矣。”

Ուսուցիչն ասաց. «Հնում մարդիկ երեք թերություն ունեին, որ այժմ չկան: Հնում պողոթկունները քմաբարո էին, այժմ պողոթկունները սանձարձակ են: Հնում անձնապաշտները ազնիվ էին, այժմ անձնապաշտ-

Կոնֆուցիոս. Զրույցներ

Աերն ատելությունը պքողում են ցասմամբ: Հնում իմաստակները շիտակ էին, այժմ իմաստակները խարեբա են»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Հին ժամանակներում մարդիկ երեք թերություն ունեին, որ մեր ժամանակներում չեն հանդիպում: Հին ժամանակներում բռնկուն մարդիկ քնահած էին, մեր ժամանակներում բռնկուն մարդիկ անգուսապ են: Հին ժամանակներում ինքնահավան մարդիկ տիրապետում էին իրենց, մեր ժամանակներում ինքնահավան մարդիկ այլոց հանդեա ատելությունը քողարկում են ցասմամբ: Հին ժամանակներում նույնիսկ հիմարները շիտակ էին, մեր ժամանակներում հիմարները խարեբա են»:

[Մեկնությունը]

① «廉» - «ազնիվ», «անկաշառ». ասուլթում կիրառված է «հեղինակավոր», «ինքն իրեն տիրապետող», «զուսպ» իմաստներով, բնորոշում է ազնվայրի վարքը:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 1 7 子曰：“巧言令色， 鲜矣仁①。”

Ուսուցիչն ասաց. «Ճարտար խոսքեր, կեղծավոր կեցվածք. որքան քիչ է մարդկայնությունը»:

[Մեկնությունը]

① Այստեղ նույնությամբ կրկնվում է «Զրույցների» առաջին գլուխ երրորդ ասուլթը:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

17.18 子曰：“恶紫之夺朱①也， 恶郑声之乱雅乐也， 恶利口之覆邦家者。”

Ուսուցիչն ասաց. «Վատ է, երբ մանուշակագույնով փոխարինում են խրուկաներկը: Վատ է, երբ Զենի հնչյուններն աղջատում են ծիսական երաժշտությունը: Վատ է, երբ զլախոսները կործանում են տերությունն ու ընտանիքը»:

[Փոխադրությունը]

Քոնձին ասաց. «Զզվելի է, երբ մարդիկ մանուշակագույնով փոխարինում են կարմիրը: Զզվելի է, երբ Զեն տերության երգերը փչացնում են զեղեցիկ երաժշտությունը: Վատ է, երբ դատարկաբանները կործանում են երկիրը»:

[Մեկնությունը]

① «紫之夺朱» - «մանուշակագույնով փոխարինում են խրուկաներկը». «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանում Լու տերության Հուան իշխանը և Ցի տերության Հուան իշխանը սիրում էին հազնել մանուշակագույն հագուստ՝ փոխարինելով հնուց ընդունված կարմիրը, որն իշխանական հանդերձների հիմնական գույնն էր:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

17.19 子曰：“予欲无言。”子贡曰：“子如不言，则小子何述焉？”子曰：“天何言哉？四时行焉，百物生焉，天何言哉？”

Ուսուցիչն ասաց.

- Կցանկանայի լուռ մնալ:

Կոնֆուցիոս. Զրույցներ

Զիգումն ասաց.

- Եթե Ուսուցիչը լուս մնա, ինչ կփոխանցեն սաները:
Ուսուցիչն ասաց.
- Միթե Երկինքը խոսում է: Չորս եղանակները հաջորդում են իրար,
ամենը սկիզբ է առնում, միթե Երկինքը խոսում է:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց.

- Կցանկանայի այլևս չխոսել:
Զիգումն ասաց.
- Եթե Դուք լուս մնաք, միթե մենք կկարողանանք խոսել:
Քունձին ասաց.
- Միթե Երկինքը խոսում է: Չորս եղանակները շարունակում են
հաջորդել իրար, ամեն ինչ սկիզբ է առնում, միթե Երկինքը խոսում է:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 0 穰悲①欲见孔子， 孔子辞以疾②。 将命者出户， 取瑟而歌， 使之闻之。

Ժու Բեյը ցանկանում էր հանդիպել Քունձիին, սակայն Քունձին մերժեց՝ պատճառաբանելով տկարությունը: Հենց բանքերը դուրս եկավ դոնից, նա սկսեց սե նվագել և երգել այնպես, որ բանքերը լսի:

[Փոխադրությունը]

Ժու Բեյը ցանկանում էր հանդիպել Քունձիին, սակայն Քունձին մերժեց նրա ուղարկած բանքերին՝ իր հիվանդությունը պատճառ բերելով: Հենց բանքերը դուրս եկավ դոնից, Քունձին սկսեց սե նվագել և երգել այնպես, որ Ժու Բեյի բանքերը լսի:

[Մեկնությունը]

① «孺悲» - Ժու Բեյ. Լու տերության պաշտոնյա էր, ում տիրակալն ուղարկել էր Կոնֆուցիոսի մոտ՝ ծեսերն ուսումնասիրելու համար:

② «辞以疾» - «պատճառաբանելով տկարությունը». Կոնֆուցիոսը միտումնավոր հրաժարվեց Ժու Բեյին ընդունել, ընդ որում՝ բանքերի դուրս գալուց հետո վերջինիս համար լսելի կերպով նվազում և երգում էր, ցույց տալով, որ ամենին էլ հիվանդ չէ: Այդ ամենով Կոնֆուցիոսը ցույց էր տալիս իր բացասական տրամադրվածությունը Ժու Բեյի հանդեպ, քանի որ նա ավագներին պատկառանքով չէր վերաբերվում և չէր պահպանում ծեսերը:

ԿՈՆՖՈՒՅԻ-ԾԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

17.21 宰我曰：“三年之丧，期已久矣。君子三年不为礼，礼必坏；三年不为乐，乐必崩。旧谷既没，新谷既升，钻燧改火①，期②可已矣。”子曰：“食夫稻③，衣夫锦，于女安乎？”曰：“安。”“女安，则为之！夫君子之居丧，食旨不甘，闻乐不乐，居处不安④，故不为也。今女安，则为之！”宰我出。子曰：“予之不仁也！子生三年，然后免于父母之怀。夫三年之丧，天下之通丧也，予也有三年之爱于其父母乎！”

Զայլոն ասաց.

- Երեք տարին չափազանց երկար է սգալու համար: Եթե ազնվայրը երեք տարի չուսումնասիրի ծեսերը, դրանք անպայման կմոռացվեն, երեք տարի չվարժվի երաժշտության մեջ, այն անպայման կաղավաղվի: Եթի հին հատիկեղենն արդեն սպառվում է, նոր հատիկեղենի հնձի ժամանակն է, իսկ կրակ վառելու համար փոխում են ցախը, մի տարի է լրանում, ինչը բավական է սգալու համար:

Ուսուցիչն ասաց.

Կոնֆուցիոս. Չրույցներ

- Եթե ընտիր բրինձ ուտես և ասեղմագործ հանդերձներ կրես, խաղաղ կլինես:

- Խաղաղ կլինեմ:

- Խաղաղ կլինես, այդպես էլ վարվիր: Սզացող ազնվայրի քիմքին հաճելի չեն խորտիկները, երաժշտություն ունկնդրելը նրան չի ուրախացնում, տաճը հանգիստ չի լինում: Ուստի այդպես չի վարվում: Թե խաղաղ կլինես՝ այդպես էլ վարվիր:

Զայվոն հեռացավ: Ուսուցիչն ասաց.

- Յուն մարդկային չէ: Երեխան ծնվելուց հետո երեք տարի չի իշնում ծնողների գրկից: Այդ պատճառով էլ երկնքի տակ ամենուր ծնողների մահը սգում են երեք տարի: Մի՞թե Յուն երեք տարի չի վայելել ծնողները սերը:

[Փոխադրությունը]

Զայվոն հարցրեց.

- Երեք տարին չափազանց երկար չէ ծնողների մահը սգալու համար: Եթե ազնիվ մարդը երեք տարի չուսումնասիրի ծեսերը, դրանք մոռացության կմատնվեն, երեք տարի չհմտանա երաժշտության մեջ, այն անպայման կառավարվի: Եթր իմ հասիկեղենն արդեն վերջանում է, նոր հատիկեղենը հնձելու ժամանակն է, իսկ կրակ վառելու համար փոխում են ցախերը, մի տարի է անցնում, ինչը բավական է ծնողներին սգալու համար:

Քոնձին ասաց.

- Եթե ծնողներին մահը սգաս երեք տարուց պակաս, ընտիր բրինձ ուտես և մետաքս հագուստ հագնես, հանգիստ կլինես:

- Իհարկե:

- Եթե հանգիստ կլինես, հենց այդպես էլ վարվիր: Սզացող ազնիվ մարդը նոյնիսկ ամենահամեղ կերակուրներն ուտելիս համ չի զգում, երաժշտություն լսելով՝ չի ուրախանում, տաճը չի կարողանում հանգս-

տանալ: Ուստի ազնիվ մարդը չի սգում երեք տարի: Եթե հաճգիստ կլինես, սգա մի տարի:

Զայվոն հեռացավ: Քոնձին ասաց.

- Հիրավի, Զայվոն մարդկային չէ: Երեխան ծնվելուց հետո երեք տարի չի իշնում հոր ու մոր գրկից: Վյո պատճառով էլ երկրում ամենուր ծնողների մահը սգում են երեք տարի: Միթե Զայվոն երեք տարի չի վայելի ծնողների սերը:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «钻燧改火» - «կրակ վառելու համար փոխում են ցախը». հնում ցախը վառում էին տարվա եղանակներին համապատասխան: Գարնաճը վառում էին թեղու և ուռենու փայտ, ամռանը՝ արքայանարնջի, թթենու և ծիրանի, աշնանը՝ բալասանի ծառ, ձմռանը՝ ակացիայի և սանդալի փայտ:

② «期» - «ժամանակահատված». ասուլյում կիրառված է «մեկ տարի» իմաստով:

③ «稻» - «բրինձ». հնում որպես հիմնական սնունդ գործածվում էր կորեկը, բրնձի տեսակները շատ թանկ էին և լայնորեն տարածված չէին, ուստի համարվում էին նրբախորսիկներ:

④ «居处不安» - «տանը հանգիստ չի լինում». հնում ընդունված էր, որ սգացող այրը պիտի որոշ ժամանակ ապրի հյուղակում, քնի հատակին՝ խսիրի վրա և ժուժկալ կյանք վարի՝ վայելքներից և հարուստ սննդից զերծ մնալով:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 2 子曰：“饱食终日，无所用心，难矣哉！不有博①弈者乎？为之，犹贤乎已②。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Ուսուցիչն ասաց. «Երբ ողջ օրն ուսում են՝ ոչնչի ուշադրություն չդարձնելով, վաս է: Մի՞թե չկան նրանք, որ «յի» են խաղում: Նրանք ավելի արժանավոր են»:

[Փռխադրությունը]

Քունձին ասաց. «Վաս է, երբ մարդիկ ամբողջ օրն ուսում են՝ ոչինչ չանելով: Չէ՞ որ կա «յի» խաղը: «Յի» խաղալն ավելի լավ է, քան անգործության մատնվելը»:

[Մեկնությունը]

① «博» - «խաղալ». Ջառ Սունը իր «Ճշմարիտը Մենձի մասին» աշխատության մեջ նշում էր հետևյալը. ««Յի» խաղալը մոլախաղերից գերադասելի է», նկատի ունենալով զուտ հաձույքի և ոչ թե շահի համար խաղալը:

② «犹贤乎已» - «Նրանք ավելի արժանավոր են». նկատի ունի, որ «յի» խաղացողները որկրամոլներից և ծովյերից գերադասելի են:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 3 子路曰：“君子尚①勇乎？”子曰：“君子义以为上①，君子有勇而无义为乱，小人有勇而无义为盗。”

Զիլուն ասաց.

- Ազնվայրն արժևորու՞մ է խիզախությունը:
Ուսուցիչն ասաց.

- Ազնվայրն ամենից ավելի արժևորում է արդարությունը: Եթե ազնվայրը խիզախ է, սակայն անարդար՝ կընդվզի, եթե նվասոր խիզախ է, սակայն անարդար՝ ելուզակություն կանի:

[Փոխադրությունը]

Զիլուն հարցրեց.

- Ազնիվ մարդը արժնորու՞ն է խիզախությունը:

Քունձին ասաց.

- Ազնիվ մարդն ամենից ավելի արժնորում է արդարությունը: Եթե ազնիվ մարդը խիզախ է, սակայն անարդար՝ ապստամբություն կրարձրացնի, եթե նվաստը խիզախ է, սակայն անարդար՝ ավագակ կդառնա:

[Մեկնությունը]

① «尚, 上» - կիրառված են «արժնորել» իմաստով. երկու գաղափարագրերն էլ ունեն նույն իմաստը և կիրառված են որպես բայ:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 4 子贡曰：“君子亦有恶乎？”子曰：“有恶：恶称人之恶者，恶居下流流字衍文①而讪上者，恶勇而无礼者，恶果敢而窒者。”曰：“赐也亦有恶乎？”“恶徼以为知者，恶不孙以为勇者，恶讦以为直者。”

Զիգունն ասաց.

- Ազնվայրն ասո՞ւ՞ն է որևէ մեկին:

Ուսուցիչն ասաց.

- Ասում է: Ասում է նրանց, որ բամբասում են, ասում է նրանց, որ ներքեւում գտնվելով՝ զրապարտում են նրանց, որ վերևում են, ասում է նրանց, որ խիզախ լինելով՝ չեն հետևում ծեսերին, ասում է նրանց, որ վճռական են, սակայն համար: Ցի, դու նև ասում ես:

- Ասում եմ նրանց, որ կրկնելով՝ իրենց իմաստուն են կարծում, ասում եմ նրանց, որ անհնազանդությունը խիզախություն են համարում, ասում եմ նրանց, որ մատնությունը շիտակություն են համարում:

Կոնֆուցիոն. Զրույցներ

[Փոխադրությունը]

Զիգունը հարցրեց.

- Ազնիվ մարդն ատու՞մ է որևէ մեկին:

Քոնձին ասաց.

- Ատում է: Նա ատում է նրանց, որ կուրորեն չարախտում են այլոց, ատում է նրանց, որ ենթակա լինելով՝ զրպարտում են վերադասին, ատում է նրանց, որ խիզախ լինելով՝ արհամարհում են օրենքները, ատում է նրանց, որ իրենց գաղափարները պաշտպանելու քաջություն ունեն, սակայն համառ են: Ցի, դու ևս ատում ես:

Զիգունն ասաց.

- Ես ատում եմ նրանց, որ այլոց մտքերը կրկնելով՝ իրենց իմաստուն են կարծում, ատում եմ նրանց, որ ըմբռատությունը քաջություն են համարում, ատում եմ նրանց, որ կարծում են, թե մատնում են հանուն արդարության:

[Մեկնությունը]

① «下流» - բառացի՝ «Աերքեսում գտնվող». ասույթում ունի «ենթակա» կամ «ցածրախավ մարդիկ» իմաստները: Ֆեն Դենը և Հունը նշում էին, որ «Գրույցների» այն օրինակներում, որ տարածված էին թան հարստությունից առաջ, բացակայում էր «流» գաղափարագիրը, որն ունի «հնամք», «դաս», «խավ», «տեսակ» իմաստները: Իսկ Սու Շիի մեջբերումներում «流» գաղափարագիրը արդեն առկա է:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 5 子曰：“唯女子与小人为难养也，近之则不孙，远之则怨。”

Ուսուցիչն ասաց. «Դժվար է գործ ունենալ միայն կանանց և նվաստների հետ: Երբ մոտ եմ՝ անհնազանդ են դառնում, հեռանալով՝ մեղադրում են»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Դժվար է գործ ունենալ միայն կանանց և նվաստ-ների հետ: Երբ նրանք մոտ են՝ դառնում են կոպիտ ու անհնազանդ, հեռանալով՝ վրդովվլում են»:

ԿՈՆՖՈՒՅՑԻԱՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 7 . 2 6 子曰：“年四十而见恶焉，其终也已①。”

Ուսուցիչն ասաց. «Եթե ատում են քառասնամյա մեկին, դա արդեն վերջն է»:

[Փոխադրությունը]

Քոնճին ասաց. «Երբ ատում են քառասնամյա մեկին, ապա կարելի է ասել, որ նրա կյանքն ավարտված է»:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «其终也已» - «Դա արդեն վերջն է». նկատի ունի, որ կարելի է նման մարդու կյանքն ավարտված համարել: Որոշ մեկնողներ արտահայտությունը փոխադրել են որպես՝ «նա կործանված է» կամ «նա ապագա չունի»: «Ե» զաղափարագիրն ունի ոչ միայն «արդեն», այլև «կանգ առնել», «հետո», «հետագայում» իմաստները: Արտահայտության բովանդակությունը կարելի է համեմատել «Զրուցների» երկրորդ գլուխ տասնվեցերորդ ասույթում հիշատակվող «տանում է դեպի կործանում» արտահայտության հետ:

Գլուխ 18. Վեյձին Ընդամենը 11 ասույթ

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 1 微子①去之， 箕子为之奴②， 比干諫而死③。 孔子曰：
“殷有三仁焉。”

Վեյձին լրեց նրան, Զիձին նրա ստրուկը դարձավ, Բիգանը սպանվեց հակածառելու համար։ Քունձին ասաց. «Ինը երեք մարդկային այրեր ուներ»։

[Փոխադրությունը]

Զոռուսին արքան այնքան ցնորամիտ էր և դաժան, որ Վեյձին հեռացավ նրանից, Զիձին նրա ստրուկը դարձավ, Բիգանը մահապատժի ենթարկվեց նրան հակածառելու համար։ Քունձին ասաց. «Ինի և Շանի վերջին տարիներին երկրում ինի և Շանի ընդամենը երեք այրեր կային, որոնք աչքի էին ընկնում մարդկայնությամբ»։

[Մեկնությունը]

① «微子» - Վեյձի. հայտնի էր նաև որպես Ցի։ Զոռուսին արքայի խորթ եղբայրն էր, նրա մայրը Ցի կայսեր հարձերից էր։ Վեյձին փորձում էր դարձի բերել անառակ և հարբեցող եղորրը՝ Զոռուսինին, սակայն վերջինս անուղղելի էր, այդ պատճառով էլ Վեյձին գերադասեց հեռանալ արքունիքից։ Այդ անցքերի մասին հիշատակում են Սիմա Ցյանը և Մենձին։

② «箕子为之奴» - «Զիձին նրա ստրուկը դարձավ»։ Զիձին Զոռուսին

արքայի մորեղբայրն էր: Երբ Զիձին տեսավ, որ արքան արհամարհում է իր խորհուրդները և դաժան հաշվեհարդար է տեսնում այլախոհների հետ՝ խելագար ձևացավ, որպեսզի կարողանա փրկել կյանքը: Որոշ ժամանակ բանտում անց կացնելուց հետո ազատ արձակվեց, սակայն ամրողջովին շնորհազրկվեց ու հավասարեցվեց ստրուկներին:

③ «比干諫而死» - «Բիգանը սպանվեց հակածառելու համար». Բիգանը ևս Զոուսին արքայի մորեղբայրն էր: Նա հակածառում էր արքային, ինչը զայրացրեց նրան և ցասման պոռթկման մեջ նա գոռաց. «Ասում են, որ իմաստունի սիրտը յոթ անգը ունի, ուզում եմ տեսնել»: Արքայի հրամանով դահիճը տապարով ձեղքեց Բիգանի կուրծքը, որպեսզի սիրտը ցույց տա արքային:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1.8.2 柳下惠为士师，三黜。人曰：“子未可以去乎？”曰：“直道而事人，焉往而不三黜？枉道而事人，何必去父母之邦？”

Լյուսա Հուեյը դատավոր էր և երիցս պաշտոնազրկվել էր: Մի մարդ ասաց.

- Ավելի լավ չի լինի, եթե հեռանաս:

- Երբ ծառայում ես մարդկանց ըստ շիտակ Ուղու, ու՞ր կարող ես գնալ, որ երիցս չպաշտօնազրկեն: Երբ ծառայում ես մարդկանց ըստ ծուռ Ուղու, մի՞թե կարիք կա լրելու հայրենի երկիրը:

[Փոխադրություն]

Լյուսա Հուեյը դատավոր էր և բազմիցս պաշտոնազրկվել էր: Ինչ-որ մեկն ասաց.

- Ավելի լավ չի լինի, եթե հեռանաս Լու տերությունից:

Լյուսա Հուեյն ասաց.

Կոնֆուցիոս. Զրույցներ

- Երբ պաշտոնավարում ես արդարությամբ, ու՞ն կարող ես գնալ, որ բազմիցս չպաշտոնազրկեն: Երբ ծառայում ես անարդարությամբ, մի՞թե կարիք կա լրելու հայրենի երկիրը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 3 齐景公待孔子曰：“若季氏， 则吾不能； 以季、 孟之间待之。”曰：“吾老矣， 不能用也。”孔子行。

Ցիի Զին իշխանը պատրաստվելով ընդունել Քունձիին՝ ասաց.

- Ես չեմ կարող ընդունել նրան որպես Զի տոհմի պայազատի, թերևս ընդունեմ նրան որպես Զիի և Մենի միջև ընկած մեկին:

Նաև ասաց.

- Ես ծեր եմ, չեմ կարող բանեցնել նրան: Քունձին հեռացավ:

[Փոխադրությունը]

Ցի տերության Զին իշխանը պատրաստվելով ընդունել Քունձիին՝ ասաց.

- Ես չեմ կարող ընդունել նրան այնպես, ինչպես Լու տերության իշխանն է ընդունում Զի տոհմի ավագներին, ավելի լավ կլինի ընդունեմ նրան որպես աստիճանակարգմամբ Զի տոհմի շառավղից ցածր և Մեն տոհմի շառավղից բարձր մեկին:

Այնուհետև ավելացրեց.

- Ես ծեր եմ, չեմ կարող ծառայության վերցնել նրան: Քունձին հեռացավ Ցի տերությունից:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8.4 齐人归女乐①，季桓子②受之，三日不朝，孔子行。

Յի մարդիկ կին երաժիշտների ուղարկեցին, Զի Հուանձին ընդունեց նրանց և երեք օր չիք արքունիքը։ Քունձին հեռացավ։

[Փոխադրությունը]

Յի տերությունից շատ երգչուիհներ ու պարուիհներ ուղարկեցին Լու տերություն, Զի Հուանձին ընդունեց նրանց և արքունիքը երեք օր շարունակ ոչ մի տերունական գործ չձեռնարկեց։ Քունձին ստիպված էր հեռանալ։

[Մեկնությունը]

① «齐人归女乐» - «Յի մարդիկ կին երաժիշտների ուղարկեցին»。
«归» գաղափարագիրը ասուլյատ կիրառված է «馈»՝ «ընծայաբերել»,
«նվեր ուղարկել» իմաստներով։ Այդ մասին հիշատակում են «Պատմագրություն. Քունձիի ուսմունքը» և «Հան Ֆեյձի» աշխատությունները։

② «季桓子» - Զի Հուանձին. Լու տերության նախարարապետն էր, Զի տոհմի ավագներից։ Մեծ ազդեցություն ուներ արքունիքում, ինչը տարածվում էր նույնիսկ Լուի տիրակալ Դին իշխանի և նրան հաջորդող Այ իշխանի վրա։ Վախճանվել է Այ իշխանի գահակալման երրորդ տարում։

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8.5 楚狂接舆①歌而过孔子曰：“凤兮凤兮！何德之衰？往者不可谏，来者犹可追②。已而，已而！今之从政者殆而！”孔子下，欲与之言。趋而辟之，不得与之言。

Կոնֆուցիոս. Զրույցներ

Խելագար Զյելում՝ Զուից, Քունձիին պատահելով՝ երգեց.

- Օ՛, փյունիկ, փյունիկ,

Քո առաքինությունը թուղացել է,

Զի կարելի մեղադրել անցյալի համար,

Իսկ զալիքին կարելի է հասնել:

Թող ամենը, թող ամենը:

Այժմ վտանգ է կառավարելը:

Քունձին իջավ՝ ցանկանալով խոսել նրա հետ, սակայն նա շտապեց հեռանալ: Զկարողացավ խոսել նրա հետ:

[Փոխադրությունը]

Չու տերությունից մի խելագար դիմավորելով կառը, ուր նստած էր Քունձին, երգեց.

- Օ՛, փյունիկ, փյունիկ,

Մի՞թե թուղացել է քո առաքինությունը,

Անցյալը վերադանելմ անկարելի է,

Իսկ զալիքին կարելի է հասնել:

Մոռացիր, մոռացիր ամենը:

Այժմ վտանգ է կառավարելը:

Քունձին իջավ կառքից՝ ցանկանալով խոսել նրա հետ, սակայն նա արագ քայլերով հեռացավ: Քունձիին չհաջողվեց խոսել նրա հետ:

[Մեկնությունը]

① «接輿» - Զյելու. մասնագետները հաձախ են վիճում, դիտարկել արդյոք, այս զաղափարագրերը որպես հատուկ անուն, թե՛ կիրառել այն բառացիորեն, որպես «դիմավորել կառը» կամ «կառ դիմավորող»: Ես ևս նպատակահարմար եմ համարում երկրորդ տարբերակի գործածությունը, քանզի «Զրույցներում», որպես կանոն, ձգնավորները և խելագարները իրենց անուններով չեն հիշատակվում:

② «犹可追» - «կարելի է հասնել», ունի նաև «ունակ լինել հաղթահարել» և «ունակ լինել ժամանակին անել ինչ-որ բան» իմաստները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

18.6 长沮、桀溺耦而耕①，孔子过之，使子路问津焉。长沮曰：“夫执舆②者为谁？”子路曰：“为孔丘。”曰：“是鲁孔丘与？”曰：“是也。”曰：“是知津矣。”问于桀溺。桀溺曰：“子为谁？”曰：“为仲由。”曰：“是鲁孔丘之徒与？”对曰：“然。”曰：“滔滔者天下皆是也，而谁以③易之？且而④与其从辟⑤人之士也，岂若从辟世之士哉？”耰⑥而不辍。子路行以告。夫子怃⑦然曰：“鸟兽不可与同群，吾非斯人之徒与而谁与？天下有道，丘不与易也。”

Զանձյուն և Զյենին միասին հողն էին փորում։ Քունձին նրանց կողքով անցնելիս ուղարկեց Զիլուին հարցնելու համար, թե որտեղ է գետանցումը։ Զանձյուն ասաց.

- Ո՞վ է կառքում՝ սանձերը բռնած։
- Զիլուն ասաց.
- Քուն Ցյուն է։
- Քուն Ցյուն Լուից։
- Այո։
- Նա զիսի՝ որտեղ է գետանցումը։
- Հարցրեց Զյենին։ Զյենին ասաց.
- Դու ով ես։
- Զումյուն եմ։
- Քուն Ցյուի սա՞նը՝ Լուից։
- Իհարկե։
- Ամենը Երկնքի տակ նման է հորդահոս հեղեղի, ով կարող է փոխել դա։ Մարդկանցից խուսափողին հետևելու փոխարեն ավելի լավ չի լինի հետևել նրանց, ովքեր խուսափում են աշխարհից։

Կոնֆուցիոս. Զրույցներ

Նա շարունակեց անդադար տափանել հողը: Զիլուն վերադարձավ և պատմեց Ուսուցչին: Նա հոգոց հանեց ու ասաց.

- Զի կարեի ապրել թռչունների և գազանների հետ: Եթե մարդկանց հետ չինեմ, ապա ո՞ւ՞մ հետ: Թե ամենը Երկնքի տակ Ուղի ունենար, Ցյուն ձեզ հետ միասին չէր փորձի փոխել:

[Փոխադրությունը]

Զանձյուն և Ցյենին միասին դաշտն էին հերկում: Քունձին անցնում էր նրանց կողքով և ուղարկեց Զիլուին, որպեսզի հարցնի, թե որտեղ է գետանցումը: Զանձյուն ասաց.

- Ո՞վ է սանձերը ձեռքին բազմել կառքում:

Զիլուն ասաց.

- Քուն Ցյուն է:

- Քուն Ցյուն Լու տերությունից, - հարցրեց Զանձյուն:

- Այս:

- Եթե իսկապես նա է, ապա լավ գիտի, թե որտեղ է գետանցումը:

Զիլուն նոյնը հարցրեց Ցյենիին: Ցյենին ասաց.

- Դու ո՞վ ես:

- Զունցուն եմ:

- Քուն Ցյուի սա՞նը՝ Լու տերությունից:

- Իհարկե:

- Ամենուր չարիքն է հորդում՝ ինչպես հեղեղ, մի՞թե կարող եք փոխել դա: Մարդկանցից խուսափող Քուն Ցյուին հետևելու փոխարեն ավելի լավ չի լինի հետևել մեզ՝ աշխարհից խուսափողներիս:

Նա շարունակեց տափանել հողը՝ առանց դադար առնելու: Զիլուն վերադարձավ և ամենը պատմեց Ուսուցչին: Քունձին հոգոց հանեց ու ասաց.

- Զի կարող մարդն ապրել թռչունների և գազանների հետ: Եթե մարդկանց հետ չինեմ, ապա ո՞ւ՞մ հետ: Թե երկիրը խաղաղ լիներ, մենք ոչինչ չէինք փորձի փոխել:

[Մեկնությունը]

① «长沮、桀溺耦而耕» - «Չանձյուն և Զյենին միասին հողն էին փորում». հարկ է նշել, որ մեկնողների մի ստվար զանգված համարում է, որ Չանձյուն և Զյենին հասուլ անուններ չեն, այլ զուգով հերկող մարդկանց բնորոշող բառեր: Զույգով հերկելու եղանակը հայտնի էր դեռ «Գարնան և Աշնան» ժամանակաշրջանից, սակայն պարզ չէ, թե ինչպես է կազմակերպվել բուն գործընթացը՝ լծկանով, թե՞ զուտ երկու մարդու միջոցով: Վաճ Գոդինի՝ 1959 թվականին հրատարակված «Գյուղատնտեսության պատմության ուսումնասիրություն» աշխատության մեջ այս գործընթացը ներկայացվում է զուտ որպես երկու հոգու զուգահեռ աշխատանք դաշտում:

② «执輿» - բառացի՝ «սանձերով, կառում». նկատի ունի կառքին լծված ձիերի սանձերը բռնած նատելը: Սկզբում սանձերը Զիլուի ձեռքում էին, սակայն երբ նա գնաց գետանցման վայրը հարցնելու, Կոնֆուցիոսն ինքը վերցրեց սանձերը:

③ «以» - ասուլթում նույն իմաստն ունի, ինչ «与» գաղափարագիրը՝ «հետ»:

④ «而» - ասուլթում նույն իմաստն ունի, ինչ «尔» գաղափարագիրը՝ «քամ», ցոյց է տալիս հակադրություն:

⑤ «辟» - ասուլթում նույն իմաստն ունի, ինչ «避» գաղափարագիրը՝ «խոսափել», «սպրել», «ձողոպրել»:

⑥ «耰» - «տափանել». հողագրծական գործընթաց է, երբ սերմը ցանելուց հետո այն ծածկում են հողի շերտով և տրորելով ամրացնում:

⑦ «怃» - «հոգոց հանել», «հիսարախված». ասուլթի իմաստային բովանդակությանն առավել մոտ է «հոգոց հանել» տարրերակը:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 7 子路从而后，遇丈人，以杖荷蓀①。子路问曰：“子见夫

子乎？”丈人曰：“四体不勤，五谷不分②。孰为夫子？”植其杖而芸。子路拱而立。止子路宿，杀鸡为黍③而食之，见其二子焉。明日，子路行以告。子曰：“隐者也。”使子路反见之。至，则行矣。子路曰：“不仕无义。长幼之节，不可废也；君臣之义，如之何其废之？欲洁其身，而乱大伦。君子之仕也，行其义也。道之不行，已知之矣。”

Զիլուն հետ էր մնացել։ Հանդիպելով բրիչն ուսին մի ծեր մարդու՝ Զիլուն հարցրեց։

- Տեսե՞լ ես Ուսուցիս։

Ծերունին ասաց։

- Չորս վերջույթներին նեղություն չի տալիս, հինգ հատիկները չի տարրերում, մի՞թե նա Ուսուցիչ է։

Եվ սկսեց փորեկ բրիչով։ Զիլուն ձեռքերը կոճքի մոտ հարգալիր պահած կանգնած էր։ Նա Զիլուին գիշերելու տեղ տվեց, հալ մորթեց, փխրուն կորեկով ձաշ եփեց և իր երկու զավակներին ներկայացրեց։ Մյուս օրը Զիլուն հասավ Ուսուցին և պատմեց ամենը։ Ուսուցին ասաց։

- Ճգնակյաց է։

Եվ Զիլուին հետ ուղարկեց, որ հանդիպի նրան։ Նա տանը չէր և Զիլուն ասաց։

- Զծառայելն անարդար է։ Եթե ավագների ու կրտսերների դասելը չի կարելի վերացնել, մի՞թե կարելի է վերացնել տիրակալի ու հպատակների վարպետողության արդար սկզբունքները։ Նա, ով ցանկանում է անքիծ մնալ, ընդվզում է այդ սկզբունքների դեմ։ Ազնվայրը ծառայում է արդարությամբ, անգամ՝ երբ գիտի, որ չի կարող հետևել Ուղուն։

[Փոխադրությունը]

Զիլուն ձամփորդում էր Քունձիի հետ և հետ էր մնացել նրանից։ Նա հանդիպեց բրիչն ուսին մի ծեր մարդու և հարցրեց։

- Տեսե՞լ ես իմ Ուսուցին։

Ծերունին ասաց.

- Դու մատղ մատղի չես տալիս, հինգ հատիկները չես տարբերում, ով կարող է լինել քո Ռւսուցիչը:

Խոսքն ավարտելով՝ նա սկսեց բրիչով փիսրեցնել հողը: Զիլուն ձեռքերը կրծքի մոտ կամարած կանգնել էր՝ լի պատկառանքով: Ծերունին Զիլուին գիշերելու տեղ տվեց իր տանը, հավ մորթեց, կորեկով շիլա եփեց և իր երկու զավակներին ծանոթացրեց նրա հետ: Մյուս օրը Զիլուն հասավ Քունձիին և պատմեց տեղի ունեցածի մասին: Քունձին ասաց.

- Ճգնակյաց է եղել:

Եվ Զիլուին ետ ուղարկեց, որ հանդիպի նրան: Երբ Զիլուն հասավ, ծերունին տանը չէր: Զիլուն ասաց.

- Չծառայելը սխալ է: Եթե մարդկանց ավագների ու կրտսերների դասելը չի կարելի վերացնել, մի՞թե կարելի է վերացնել տիրակալի ու հպատակների հարաբերությունների արդար սկզբունքները: Նա, ով ցանկանում է մաքուր մնալ, հրաժարվում է այդ սկզբունքներից: Իսկ ազնիվ մարդը իր պարտքն է կատարում արդարությամբ ծառայելով, անգամ՝ երբ գիտի, որ չի կարող ոչինչ փոխել:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «蓀» - «բրիչ». Երկրագործական հին գործիք է, կիրառվել է հողը փիսրեցնելու և մղախտելը քարիանելու համար:

② «四体不勤, 五谷不分» - «Չորս վերջություններին նեղություն չի տալիս, հինգ հատիկները չի տարբերում». Սուն ժամանակաշրջանի մեկնողներ Լյու Բենջունը և Սյան Ֆենը, Ցին ժամանակաշրջանի մեկնող Զու Բինը կարծում էին, որ ծերունու այս խոսքերը վերաբերում էին իրեն՝ Կոնֆուցիոսին: Ես հակված եմ ենթադրել, որ խոսքը Զիլուի մասին էր:

③ «黍» - «կորեկ». Ենթադրվում է, որ խոսքն այսպես կոչված «դեղին բրնձի» մասին է: Դեղին բրնձով և հավի մսով պատրաստված

Կոնֆուցիոս. Չրույցներ

շիլան հասարակ մարդկանց համար թանկարժեք ուտեստ էր, այն եփում էին հիմնականում այն ժամանակ, երբ պատվելի հյուր էին ընդունում:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 8 逸①民： 伯夷、叔齐、虞仲、夷逸、朱张、柳下惠、少连
②。子曰：“不降其志，不辱其身，伯夷、叔齐与！”谓：“柳下惠、少连，降志辱身矣，言中伦，行中虑，其斯而已矣。”谓：“虞仲、夷逸，隐居放言，身中清，废中权。我则异于是，无可无不可。”

Մերժված մարդիկ էին Բո Յին, Շու Յին, Յու Զունը, Յի Ին, Զու Զանը, Լյույյա Հուեյը, Շառ Լյանը։ Ուսուցիչն ասաց.

- Զիրաժարվեցին իրենց ձգտումներից և չխայտառակեցին իրենց Բո Յին և Շու Յին։

Ավելացրեց.

- Հրաժարվեցին իրենց ձգտումներից և խայտառակեցին իրենց Լյույյա Հուեյը և Շառ Լյանը, թեև նրանց խոսքերը խելամիտ էին և արարքները՝ մտածված, միան այլքանը։

Ավելացրեց.

- Յու Զունը և Յի Ին ազատախոս էին մենակյացության մեջ, անքիծ և արդարամիտ։ Ես տարբերվում եմ, ինձ ոչինչ չի մտահոգում։

[Փոխադրությունը]

Հնում ականավոր այրերից արհամարհված էին Բո Յին, Շու Յին, Յու Զունը, Յի Ին, Զու Զանը, Լյույյա Հուեյը, Շառ Լյանը։ Քունձին ասաց.

- Նրանք, որ չդավաճանեցին իրենց սկզբունքներին և չխայտառակեցին իրենց, Բո Յին և Շու Յին էին։

Հետո ասաց.

- Դավաձանեցին իրենց սկզբունքներին և խալտառակեցին իրենց Լյուսյա Հուեյը և Շառ Լյանը, թեպետ նրանց խոսքերը խելամիտ էին և վարքը՝ զգուշավոր, ընդամենն այդքանը:

Ավելացրեց.

- Յու Զունը և Յի Ին ազատախոս էին մենակյացության մեջ, վարքով անրիծ և հեռու արքունական խարդավաճքներից: Ես տարբերվում եմ նրանցից, չեմ կանխորշում ինչ անել և ինչ չանել:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «逸» - զաղափարագիրն ունի «մերժվել», «կորցնել», «անտեսվել» իմաստները, կիրառված է որպես «佚» զաղափարագրի հոմանիշ: Մենձի համանուն աշխատության «Գունսուն Զուու» գլխի առաջին հատվածում Լյուսյա Հուեյի մասին հիշատակված են հետևյալ խոսքերը. «Չէր տրտնջում, երբ անտեսված էր, կարիքի մեջ ու դժբախտ»:

② «虞仲、夷逸、朱张、少连» - «Յու Զուն, Յի Ին, Յու Զան, Շառ Լյան». այս չորս անձանց մասին ձշգրիտ պատմական տեղեկություններ չկան: Յի Ին մասին հիշատակվում է «Շիի գրառումներում», որտեղ նշվում է, որ Վերջինս հրաժարվում է տերունական ծառայությունից՝ արդարության սկզբունքներին հավատարիմ մնալու համար: Շառ Լյանի մասին հիշատակվում է «Ծեսերի գրքում», որտեղ նշվում է, որ նա պատշաճորեն կատարում էր որդիական պարտքը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 9 大师挚①适齐， 亚饭干适楚， 三饭缭适蔡， 四饭缺适秦②，
鼓方叔入于河， 播鼗武入于汉， 少师阳、击磬襄入于海。

Ավագ վարպետ Զին հեռացավ Յի, երկրորդ ձաշի Գանը հեռացավ Զու, երրորդ ձաշի Լյանն հեռացավ Յայ, չորրորդ ձաշի Յյունն հեռացավ

Կոնֆուցիոն. Զրույցներ

Ցին, թմբկահար Ֆանչուն անցավ գետից այն կողմ, կոչնակահար Ուն անցավ Հան գետից այն կողմ, կրտսեր վարպետ Յանը և քարե կոչնակներ զարկող Սյանը անցան ծովից այն կողմ:

[Փռխադրությունը]

Երաժշտապետ Ջին հեռացավ Ցի տերություն, երկրորդ ձաշի երաժիշտ Գանը հեռացավ Չու տերություն, երրորդ ձաշի երաժիշտ Լյան հեռացավ Ցայ տերություն, չորրորդ ձաշի երաժիշտ Ցյուեն հեռացավ Ցին տերություն, թմբկահար Ֆանչուն անցավ Դեղին գետից այն կողմ, կոչնակահար Ուն անցավ Հան գետից այն կողմ, երաժշտապետի օգնական Յանը և քարե կոչնակներ զարկող Սյանը անցան ծովից այն կողմ:

[Մեկնությունը]

① «大师摯» ~ «Ավագ վարպետ Ջի». կարծում եմ՝ խոսքը «Զրույցների» ութերորդ գլխի տասնինգերորդ ասույթում հիշատակված երաժիշտ Ջիի մասին է:

③ «亚饭» ~ «Երկրորդ ձաշ». հնում կայսեր և իշխանների ձաշելու ժամանակ պիտի երաժշտություն հնչեր: Ամեն մի սնունդ ընդունելու ժամանակ նվազում էին տարբեր երաժիշտներ, որոնց պաշտոնները կոչվում էին ըստ իրենց նվագելու ժամի՝ «Երկրորդ ձաշի երաժիշտ», «չորրորդ ձաշի երաժիշտ» և այլն: Երաժիշտները հեռացել էին Լու տերությունից, քանզի երեք իշխանական տոհմերի նահապետները իրենց ձաշելու ժամանակ ևս հրամայել էին նվագել, իսկ դա միայն տիրակալի արտօնությունն էր: Ուստի տերունական երաժիշտները լքեցին Լուն, ի նշան բողոքի:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 1 0 周公谓鲁公①曰：“君子不施②其亲， 不使大臣怨乎不以。故旧无大故， 则不弃也。无求备于一人！”

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

Զոռուի իշխանը ասաց Լուի իշխանին.

- Ազնվայրը չի քամահրում ազգականներին, չի ստիպում աստիճանավորներին տրտնջալ անտեսվելու համար: Հին բարեկամներից անհիմն չի հեռանում, չի փնտրում բոլոր արժանիքները մի մարդու մեջ:

[Փոխադրությունը]

Զոռուի իշխանը ասաց Լուի իշխանին.

- Ազնիվ մարդը չի արհամարհում հարազատներին, չի ստիպում աստիճանավորներին տրտնջալ զգնահատվելու համար: Հին ընկերներից չի հեռանում առանց լուրջ պատճառի, չի պահանջում, որ մի մարդու մեջ դրսևորվեն բոլոր արժանիքները:

[Մեկնությունը]

① «周公，魯公» - «Զոռուի իշխան, Լուի իշխան». Զոռուի իշխանը, ում Կոնֆուցիոսը իշխանավորի կատարելատիպերից էր համարում, այս խորհուրդներն էր տալիս իր որդի Բո Ցիին, ով պիտի բազմեր Լու տերության գահին:

② «施» - կիրառված է որպես «弛» գաղափարագրի հոմանիշ՝ «թուլացնել կապը», «արհամարհել» իմաստներով: «Թուլացնել կապը» իմաստը բխում է աղեղնալարը աղեղի վրայից հանելու գործողությունից:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 8 . 1 1 周有八士： 伯达、伯适、仲突、仲忽、叔夜、叔夏、季随、季涖①。

Զոռուում ութ ուսալներ կային՝ Բո Դան, Բո Շին, Զուն Տուն, Զուն Հուն, Շուն Յան, Շուն Այան, Զի Սույը, Զի Գուան:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փռխաղըությունը]

Իոնու տերությունում ութ ուսյալ այրեր կային՝ Բո Դան, Բո Շին, Զուն Տուն, Զուն Հուն, Շու Յեն, Շու Սյան, Զի Սույը, Զի Գուան:

[Մեկնությունը]

① «伯, 仲, 叔, 季» - «Բո, Զուն, Շու, Զի». սրանք ազնվական տոհմի ներսում հարազատության աստիճան և ավագության կարգ ցույց տվող բառերն էին:

Գլուխ 19. Զիջանը Բնդամենը 25 ասութեանը

ԿՈՆՖՈՒՅԻՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

19.1 子张曰：“士见危致命，见得思义，祭思敬，丧思哀，其可已矣。”

Զիջանն ասաց. «Ուսալ կարելի է համարել նրան, ով հանդիպելով վտանգի՝ պատրաստ է անձնազրության, շահելիս՝ մտածում է արդարության մասին, զրիաբերությունների ժամանակ մտածում է պատկառանքի մասին, հուղարկավորությունների ժամանակ մտածում է սգալու մասին»:

[Փոխադրությունը]

Զիջանն ասաց. «Ուսալ այր կարելի է համարել նրան, ով վտանգի հանդիպելիս պատրաստ է զրիել կյանքը, ձեռք բերելիս՝ մտածում է արդարության մասին, զրիաբերությունների ժամանակ մտածում է պատկառանքի մասին, իսկ հուղարկավորությունների ժամանակ անկեղծ սգում է»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

19.2 子张曰：“执德不弘①，信道不笃，焉能为有？焉能为亡②？”

Զիջանն ասաց. «Առաքինություն ունենալով՝ չեն տարածում, Ուղուն հետևելով՝ շիտակ չեն, մի՞թե էական է՝ ունեն, թե՛ չունեն»:

Կոնֆուցիոս. Զրոյցներ

[Փռադրությունը]

Զիջանն ասաց. «Եթե այրն առաքինություն ունենալով՝ չի տարածում այն, և հետևում է Ուղուն՝ առանց հավատալու, մի՞թե էական է՝ նա ապրո՞ւմ է, թե՞ ոչ»:

[Մեկնությունը]

① «弘» - գաղափարագիրն ունի «սփռել», «տարածել» իմաստները, սակայն որոշ մեկնողներ կարծում էին, որ այն կիրառվել է որպես «强» գաղափարագրի հոմանիշ՝ «ուժեղ», «զորեղ», «հաստատուն» իմաստներով: Այդ տեսակետի կողմնակիցն էր Զան Բինլինը, ով իր ««Չրուցների» մեկնության» մեջ ասույթի առաջին հատվածը փոխադրել էր հետևյալ կերպ. «Առաքինություն ունենալով՝ ուժեղ չեն»:

② «焉能为有， 焉能为亡» - «մի՞թե էական է, ունեն, թե՞ չունեն». արտահայտության փոխադրության մի քանի տարբերակներ կան, որոնք, ըստ էության՝ զուտ բառախաղեր են: Հետո «Մեկնություններում» նշվում է, որ չարժե այս արտահայտության փոխադրությանը առանձնակի ուշադրություն դարձնել:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 3 子夏之門人問交于子張。子張曰：“子夏云何？”對曰：“子夏曰：‘可者與之，其不可者拒之。’”子張曰：“異乎吾所聞：君子尊賢而容眾，嘉善而矜不能。我之大賢與，于人何所不容？我之不賢與，人將拒我，如之何其拒人也？”

Զիսայի սաները Զիջանին հարցրեցին բարեկամներ գտնելու մասին: Զիջանն ասաց.

- Զիսայն ինչ է ասել:
Նրանք ասացին.

Յան Բոձունի փոխադրությունը և մեկնությունը

- Զիսան ասել է. «Բարեկամացեք նրանց հետ, ում հետ կարեի է, ում հետ չի կարելի՝ մերժեք»:

Զիսանն ասաց.

- Տարբերվում է իմ լսածից. «Ազնվայրը գնահատում է արժանավոր-ներին և հանդուրժող է մնացյալի հանդեպ, գովաբանում է առաքինի-ներին և կարեկցում անկարողներին»: Թե ես մեծ արժանիքներ ունենայի, մի՞թե չէի հանդուրժի այլոց: Թե ես արժանիքներ չունենայի, մարդիկ ինձ կմերժեին: Ինչպես կարող էի ես մերժել նրանց:

[Փոխադրությունը]

Զիսանի սաները Զիսանին հարցրեցին, թե ինչպես ընկերներ գտնել: Զիսանը հարցրեց.

- Զիսան ինչ է ասել:

Նրանք ասացին.

- Զիսան ասել է. «Ընկերացեք նրանց հետ, ում հարմարվում եք, ում չեք հարմարվում՝ մերժեք»:

Զիսանն ասաց.

- Դա տարբերվում է իմ լսածից. «Ազնիվ մարդը գնահատում է արժանավորներին և ընդունում մնացյալին, գովաբանում է հմտուներին և խղճում անկարողներին»: Եթե ես արժանավոր լինեի, մի՞թե չէի հանդուրժի այլոց: Եթե ես լինեի անարժան մեկը, մարդիկ ինձ կմերժեին: Ինչպես կարող էի ես մերժել մարդկանց:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 4 子夏曰：“虽小道，必有可观者焉；致远恐泥，是以君子不为也。”

Զիսան ասաց. «Թեև մանր Ռւդիները անպայման արժանիքներ

Կոնֆուցիոն. Զրույցներ

ունեն, հեռուն գնալիս, վախենամ, խրվես, ուստի ազնվայրը այդպես չի վարվում»:

[Փոխադրությունը]

Չիսան ասաց. «Ժեև փոքր ուսմունքները ևս արժանիքներ ունեն, սակայն հեռուն գնացող նպատակներ հետապնդելիս, վախենամ, խրվես ձահիձը, ուստի ազնիվ մարդը դրանց չի հետևում»:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՇԻ-ՈՍԽ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 5 子夏曰：“日知其所亡，月无忘其所能，可谓好学也已矣。”

Չիսան ասաց. «Օրերով նա ուսումնասիրում է այն, ինչ չգիտի, ամիսներով չի մոռանում յուրացրածը, կարող է ուսումնասեր համարվել»:

[Փոխադրությունը]

Չիսան ասաց. «Եթե ամեն օր նա ուսումնասիրում է այն, ինչ չգիտի, ամեն ամիս կրկնում է յուրացրածը, կարող է ուսումնասեր համարվել»:

ԿՈՆՖՈՒՅԻ-ՇԻ-ՈՍԽ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 6 子夏曰：“博学而笃志①，切问而近思，仁在其中矣。”

Չիսան ասաց. «Զանասիրաբար ուսանել և կոփել կամքը, ոգևորությամբ հարցնել և մտածել ամենի մասին, ինչ մոտ է. դրա մեջ է մարդկայնությունը»:

[Փոխադրությունը]

Զիսան ասաց. «Համակողմանի ուսումնասիրել և հավատարիմ մնալ սկզբունքներին, փորձագանորեն հարցնել և մտորել ներկա հանգամանքների մասին՝ որանում է մարդկայնությունը»:

[Մեկնությունը]

① «志» - «կամք». Քուն Զուն կարծում էր, որ այն կիրառված է որպես «识» գաղափարագրի հոմանիշ՝ «գիտելիք» իմաստով: Ուստի առաջարկում է «博学而笃志»՝ «Չանասիրաբար ուսանել և կոփել կամքը» արտահայտությունը փոխադրել որպես «博闻强记»՝ «ունենալ լայն գիտելիքներ և սուր հիշողություն»: Սակայն այս մոտեցումը անհիմն է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 7 子夏曰：“百工居肆以成其事，君子学以致其道。”

Զիսան ասաց. «Արհեստավորները կատարելագործվում են իրենց արհեստանոցներում, ազնվայրը հասնում է իր Ուղուն ուսման միջոցով»:

[Փոխադրությունը]

Զիսան ասաց. «Ամենաստարբեր արհեստավորներ կատարելագործում են իրենց վարպետությունը արհեստանոցներում, իսկ ազնիվ մարդը սովորելով է հասնում իր Ուղուն»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 8 子夏曰：“小人之过也必文。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Զիսան ասաց. «Նվաստը սխալվելիս անպայման արդարանում է»:

[Փռխաղբությունը]

Զիսան ասաց. «Նվաստ մարդիկ անպայման շանում են քողարկել իրենց թերությունները»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 9 子夏曰：“君子有三变：望之俨然，即之也温，听其言也厉。”

Զիսան ասաց. «Ազնվայրը երեք փոխակերպումներ ունի. հեռվից ազդեցիկ է երևում, մոտենալիս՝ ջերմ, խոսելիս՝ խիստ»:

[Փռխաղբությունը]

Զիսան ասաց. «Ազնիվ մարդը երեք դրսեւրումներ ունի. հեռվից ազդեցիկ է թվում և երկյուղալի, երբ մոտենում ես՝ ջերմ է ու կարեկից, լսում ես նրա խոսքերը՝ թվում են խիստ ու խեղամիտ»:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 0 子夏曰：“君子信而后劳其民；未信，则以为厉已也。信而后谏；未信，则以为谤已也。”

Զիսան ասաց. «Ազնվայրը շահում է վստահությունը, այնուհետև բանեցնում մարդկանց: Վստահությունը չշահի՝ նրան բոնարար կհամարեն: Շահում է վստահությունը, այնուհետև համոզում, թե վստահությունը չշահի՝ նրան բանսարկու կհամարեն»:

[Փոխադրությունը]

Զիսյան ասաց. «Ազնվայրն արժանանում է մարդկանց վստահությանը, այնուհետև ծառապեցնում նրանց: Եթե չարժանանա նրանց վստահությանը, նրան տաճարար կհամարեն: Արժանանում է տիրակալի վստահությանը, այնուհետև խորհուրդներ տալիս: Եթե չարժանանա տիրակալի վստահությանը, նրան գրպարտիչ կհամարեն»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 1 子夏曰：“大德不逾闲， 小德出入可也。”

Զիսյան ասաց. «Մեծ առաքինություններում չափը չանցնելիս՝ փոքր առաքինություններում կարելի է անհետսնողական լինել»:

[Փոխադրությունը]

Զիսյան ասաց. «Եթե մարդը մեծ առաքինություններին հետևելիս սահմանները չի անցնում, ապա փոքր առաքինություններին հետևելիս կարող է փոքր-ինչ անհետսնողական լինել»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 2 子游曰：“子夏之门人小子， 当洒扫应对进退，则可矣， 抑末也。本之则无， 如之何？”子夏闻之， 曰：“噫！ 言游过矣！ 君子之道， 孰先传焉？ 孰后倦焉？ 瞽诸草木， 区以别矣。君子之道， 焉可诬也？ 有始有卒者， 其惟圣人乎！”

Զիսյուն ասաց.

~ Զիսյայի սաները կարող են ավել, պատասխանել հարցերին,

Կոնֆուցիոս. Չլույցներ

գիտեն՝ երբ գալ ու հեռանալ, միայն այդքանը: Դա հիմքը չէ, ինչո՞ւ է այդպես:

Զիսյան դա լսելով՝ ասաց.

- Ավաղ, Յանյոուն սխալվում է: Ուղուն հետևող ազնվայրը ի՞նչ է ուսուցանում ի սկզբանեւ: Ի՞նչն է թողնում հետագայի համար՝ հոգմելով: Տարբերում է այնպես, ինչպես բազմազան խոտերն ու ծառերը: Ուղուն հետևող ազնվայրը ինչպես կարող է խոտորվել: Միայն ամենախմասուուները գիտեն սկիզբն ու վերջը:

[Փոխադրությունը]

Զիյոուն ասաց.

- Զիսյայի սամերը կարող են հատակն ավել, հյուրերին ընդունել և պատասխանել նրանց, գիտեն՝ երբ ներս գալ ու հեռանալ, ընդամենը: Վաս չէ, սակայն դա երկրորդական է, կարևորը նրանք չեն յուրացրել: Միթե այդպես կարելի է:

Այդ մասին լսելով՝ Զիսյան ասաց.

- Ավաղ, Յանյոուի խոսքերը սխալ են: Ուսյալ ազնվայրը ի՞նչ է սովորեցնում ի սկզբանեւ և ի՞նչն է թողնում հետագայի համար՝ հոգմելով: Սովորեցնելիս անհրաժեշտ է տարբերել կարևորն անկարևորից, դա նման է խոտերն ու ծառերը տարբերելուն: Ուսյալ ազնվայրը ինչպես կարող է սխալվել: Միայն ամենախմասուուն մարդիկ կարող են սովորեցնել ըստ կարգի՝ սկիզբից մինչև վերջ:

ԿՈՆՖՈՒՅ-ՅԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 3 子夏曰：“仕而优则学，学而优则仕。”

Զիսյան ասաց. «Ծառայիր և կատարելագործվիր ուսման մեջ, ուսանիր և կատարելագործվիր ծառայության մեջ»:

Յան Բոնդյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Զիսան ասաց. «Ծառայելիս կատարելագործվիր սովորելու մեջ, թե ավյունի կիերիքի, սովորելիս կատարելագործվիր ծառայության մեջ, թե ավյունի կիերիքի»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 4 子游曰：“喪致乎哀而止。”

Զիյոն ասաց. «Հուղարկավորելիս հարկ է միայն սգալ»:

[Փոխադրությունը]

Զիյոն ասաց. «Հուղարկավորության ժամանակ պիտի անկեղծորեն սգալ, ընդամենը»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 5 子游曰：“吾友张也为难能也，然而未仁。”

Զիյոն ասաց. «Իմ բարեկամ Զանի ունակությունները դժվար է գերազանցել, թեև դեռ մարդկային չէ»:

[Փոխադրությունը]

Զիյոն ասաց. «Իմ բարեկամ Զիշանը անգերազանցելի ընդունակություններ ունի, թեև դեռ հեռու է մարդկայնությունից»:

ԿՈՆՖՈՒՅԻՍԻओՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 6 曾子曰：“堂堂①乎张也， 难与并为仁矣。”

Կոնֆուցիոս. Զրույցներ

Զենձին ասաց. «Մեծ է Զանը, սակայն դժվար է նրա հետ հասնել մարդկայնության»:

[Փոխադրությունը]

Զենձին ասաց. «Հիրավի, արժանավոր այր է Զիջանը, սակայն դժվար է նրա հետ մարդկայնություն տարածելը»:

[Մեկնությունը]

① «堂堂» - «մեծ», «արժանավոր». այս ածականը իմաստ է ստանում միայն գաղափարագի կրկնակի կիրառմամբ: «堂» գաղափարագիրն առանձին կիրառմամբ ունի «սրահ» իմաստը, սակայն կիրառվել է նաև նշելու համար տոհմակիցների միջև հարաբերությունները: Արտահայտության մեկնաբանության տարբեր տեսակետներ կան: Սյունձին կարծում էր, որ այն ունի «անհասանելի» իմաստը: Ավելի ուշ ժամանակաշրջանների կոնֆուցիականները կարծում էին, որ Զենձին դասավանդելիս շամքերն ուղղում էր արդարամտության և ազնվության որակների ամրապնդմանը, մինչդեռ Զիջանը աչքի էր ընկնում ձարտասանությամբ և ցուցադրականությամբ: Դա էր պատճառը, որ Զիյոուն և Զենձին ընդգծում էին Զիջանի արժանիքները՝ նրան քննադատելով հանդերձ:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 7 曾子曰：“吾闻诸夫子：人未有自致者也，必也亲丧乎！”

Զենձին ասաց. «Ես լսել եմ Ռւսուցչից, որ մարդիկ, որոնք չեն դրսնորում իրենց, անպայման անում են դա ծնողներին հուղարկավորելիս»:

[Փոխադրությունը]

Զենձին ասաց. «Ես լսել եմ Ուսուցչից, որ մարդիկ, սովորաբար, դժվարանում են արտահայտել իրենց զգացմունքները, սակայն անպայման ամուս են դա ծնողներին հուղարկավորելին»:

ԿՈՆՖՈՒՅԻՑԻԱՍԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 1 8 曾子曰：“吾闻诸夫子：孟庄子①之孝也，其他可能也；其不改父之臣与父之政，是难能也。”

Զենձին ասաց. «Ես լսել եմ Ուսուցչից, որ Մեն Զուանձիին կարելի է հավասարվել որդիական պատկառանքով, թեև դժվար է վարվել նրա պես՝ չփոխել հոր ծառայողներին և հոր կառավարման ձևը»:

[Փոխադրությունը]

Զենձին ասաց. «Ես լսել եմ Ուսուցչից, որ կարելի է ունենալ նոյն որդիական պատկառանքը, ինչ Մեն Զուանձին, սակայն նրա պես վարվել՝ չփոխարիմել հոր ծառայողներին և նրա կառավարման կարգը, չափազանց դժվար է»:

[Մեկնությունը]

① «孟庄子» - Մեն Զուանձի. Լու տերության երեք ազդեցիկ տոհմերից մեկի՝ Մենի ճահապես Մեն Սյանձիի որդիին էր, հայտնի էր նաև որպես Մեն Սու: Նրա հայրը մահացավ Սյան իշխանի կառավարման տասնիններորդ տարում, իսկ ինքը՝ Մեն Զուանձին մահացավ ընդամենը չորս տարի հետո: Այս ասույթն իր բովանդակությամբ համեմատելի է «Զրուցների» առաջին գլուխ տասնմեկերորդ ասույթի հետ, որտեղ նշվում է հետևյալը. «Երեք տարի հոր ուղուն հետևելը կարելի է կոչել «որդիական պատկառանք»»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

19.19 孟氏使阳肤①为士师，问于曾子。曾子曰：“上失其道，民散②久矣。如得其情，则哀矜而勿喜！”

Մեն տոհմը Յան Ֆուին դատավոր նշանակեց, և նա խորհրդի համար դիմեց Ձենձին: Ձենձին ասաց.

- Վերևում կորցրել են իրենց Ուոլին, ժողովուրդը վաղուց խոտորվել է, ուստի նրանց դատելիս կարեկից եղիր և մի գոռողացիր:

[Փոխադրությունը]

Մեն տոհմի նահապետը Յան Ֆուին դատավոր նշանակեց, և նա Ձենձից խորհուրդ հարցրեց: Ձենձին ասաց.

- Մեր օրերում կառավարողները օրինապահ չեն, և հասարակ ժողովուրդը վաղուց երես է դարձրել նրանցից, ուստի հանցագործներին դատելիս կարեկցիր նրանց, սակայն մի գոռողացիր հանցանքները բացահայտելիս:

[Մեկնությունը]

③ «阳肤» - Յան Ֆու. ըստ որոշ աղբյուրների՝ Ձենձին սաներից մեկն էր:

④ «散» - «ցըվել», «խառնվել». ասուլթում ունի «շեղվել», «խոտորվել» իմաստները: Այս տեսակետին կողմնակից էր Հուան Ջյադայը, որ գաղափարագիրը վերլուծել էր Ցի և Լու տերությունների բարբառների տեսանկյունից և հանգել այն եզրակացությանը, որ գաղափարագիրն ունի «խոտորվել» իմաստը, քանզի ասույթի բովանդակությունը վկայում է այն մասին, որ մարդիկ շեղվել և խախտում էին օրենքը: Թեև տեսակետը վիճելի է, սակայն արժանի է հիշատակման:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 0 子贡曰：“纣①之不善，不如是之甚也。是以君子恶居下流，天下之恶皆归焉。”

Զիգունն ասաց. «Չոռուն այնքան վատը չէր, որքան հիմա համարում են: Ուստի ազնվայրը խուսափում է լինել հոսանքի ներքնում, վախենալով, որ Երկնքի տակ ամեն չարը կթափվի վրան»:

[Փոխադրությունը]

Զիգունն ասաց. «Չան տերության արքա Չոռուսինն այնքան վատը չէր, որքան այժմ համարում են: Այդ պատճառով էլ ազնիվ մարդը խուսափում է լինել անարժան մեկը, վախենալով, որ աշխարհում ամեն չար բան կվերագրեն իրեն»:

[Մեկնությունը]

① «纣» - Չոռու. Չան տերության արքան էր, հայտնի նաև որպես Չոռուսին: Երբ Չոռու տերության Ու արքան հարձակվեց Չանի վրա և գրավեց այն, Չոռուսին արքան ինքնասպանություն գործեց՝ հրկիզելով ինքն իրեն:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 1 子贡曰：“君子之过也，如日月之食焉：过也，人皆见之；更也，人皆仰之。”

Զիգունն ասաց. «Ազնվայրի սխալվելը նման է արևի և լուսնի խավարման: Երբ սխալվում է, տեսնում են բոլորը, երբ ուղղում է՝ բոլորը նայում են հավանությամբ»:

Կոնֆուցիոս. Զրույցներ

[Փոխադրությունը]

Զիգունն ասաց. «Ազնիվ մարդու սխալվելը նման է արևի և լուսնի խավարման: Եթք նա սխալվում է, բոլորը նկատում են, եթք ուղղում է սխալը, բոլորը նպաստ են նրան՝ հույսով լի»:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 2 卫公孙朝①问于子贡曰：“仲尼焉学？”子贡曰：“文武之道，未坠于地，在人。贤者识其大者，不贤者识其小者。莫不有文武之道焉。夫子焉不学？而亦何常师之有？”

Գունսուն Զառն՝ Վեյից, հարցրեց Զիգունին.

- Որտե՞ղ է ուսանել Զուննին:

Զիգունն ասաց.

- Վենի և Ուի Ուղին չի վերացել աշխարհից, մարդկանց մեջ է: Նրանցից արժանապորներն իմանում են մեծը, անարժաններն իմանում են փոքրը: Զկա մի վայր, ուր չինի Վենի և Ուի Ուղին: Ուսուցիչը որտե՞ղ կարող էր չուսանել: Մի՞թե անպայման պիտի ուսուցիչ ունենար:

[Փոխադրությունը]

Գունսուն Զառն՝ Վեյ տերությունից, հարցրեց Զիգունին.

- Որտե՞ղ է սովորել Զուննին:

Զիգունն ասաց.

- Զոու տերության Վեն և Ու արքաների Ուղին չի վերացել աշխարհից, այն սիռված է մարդկանց մեջ: Նրանք, որ արժանի են, ժառանգում են կարևոր սկզբունքները, իսկ անարժանները՝ անկարևորները: Զկա մի տեղ, ուր չինի Վեն և Ու արքաների Ուղին: Կա՞ մի տեղ, ուր Ուսուցիչը կարող էր չուսանել: Մի՞թե նա անպայման պիտի իր ուսուցիչն ունենար:

[Մեկնությունը]

① «卫公孙朝» - Գունսուն Զառ՝ Վեյից. այս անունով մի քանի պատմական անձինք են եղել: Նրանց տարբերակում են ըստ տերությունների, որտեղ նրանք ծառայել են: Պատահական չէ, որ ասույթում Գունսուն Զառն հիշատակվում է որպես Վեյ տերության հպատակ: «Լեձի» աշխատության մեջ նշվում է, որ Գունսուն Զառն Ձեն տերության իշխան Զիշանի երայրն էր և աչքի էր ընկնում գիճնեմությամբ:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 3 叔孙武叔①语大夫于朝曰：“子贡贤于仲尼。”子服景伯以告子贡。子贡曰：“譬之宫墙②，赐之墙也及肩，窥见室家之好。夫子之墙数仞③，不得其门而入，不见宗庙之美，百官④之富。得其门者或寡矣。夫子之云，不亦宜乎！”

Շուստն Ուշուն արքունիքում աստիճանավորներին ասաց.

- Զիգունը Զուննիից արժանավոր է:

Զիգու Զինքոն ասաց այդ մասին Զիգունին: Զիգունն ասաց.

- Օրինակ բերեն տան պարհսապը: Ի՞ն տան պարհսապն ուսի բարձրության է և ամեն ոք կարող է տեսնել, թե արժեքավոր ինչ կա: Ուսուցչի տան պատի բարձրությունը մի քանի Ժեն է, և եթե չգտնես դարպասն ու չմտնես, չես տեսնի նախնիների տաճարի և ապարանքի գեղեցկությունը, բազում տների հարատությունը: Սակայն քչերին է վիճակված գտնել այդ դարպասը: Այն, ինչ ասել է այդ պարոնը, ձիշտ չէ:

[Փոխադրությունը]

Շուստն Ուշուն արքունիքում հավաքված աստիճանավորներին ասաց.

- Զիգունը ավելի արժանավոր է, քան իր ուսուցիչ Զուննին:

Զիփու Զինքոն պատմեց այդ մասին Զիգումին: Զիգումն ասաց.

- Կարելի է համեմատել տան պարսպի հետ: Իմ տան պարիսպն ուսի բարձրության է և ամեն մեկը կարող է տեսնել, թե տանը թանկարժեք ինչ կա: Չունինի տան պատի բարձրությունը մի քանի ժեն է, և եթե չգտնես դարպասն ու շմտնես, չես տեսնի նախնիների տաճարի ու պալատների շքեղությունը, բազում գանձերը: Սակայն քչերին է հաջողվում գտնել այդ դարպասը: Այն, ինչ ասել է Շուստն Ուշուն, բնավ զարմանավի չէ:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «叔孙武叔» - Շուստն Ուշուն. Լու տերության աստիճանավոր էր, հայտնի նաև որպես Զոռու Զոռու:

② «宫墙» - «տան պարիսպ». արտահայտությունը երբեմն փոխադրվում է որպես «ապարանքի պարիսպ» կամ «կալվածքի պարիսպ»: Ժամանակակից փոխադրություններում ուղղակի ներկայացված է որպես «պատ» կամ «ցանկապատ»:

③ «仞» - «ժեն». չափման միավոր է, հավասար է յոթ չի (չինական ոտնաչափի):

④ «官» - զաղափարազիրն ի սկզբանե ունեցել է «տուն» իմաստը, հետագայում ներառել է նաև «աստիճանավոր», «ոլիոք», «պաշտոն», «կառավարական» իմաստները: Տեսակետը հիմնավորվում է Յու Յուեի և Յու Ֆուի մենագրություններում: Թեև որոշ մեկնողներ «百官之富» արտահայտությունը փոխադրել են որպես «բազում աստիճանավորների կուտակած հարստություն»:

ԿՈՆՖՈՒՅՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 4 叔孙武叔毁仲尼。子贡曰：“无以①为也！仲尼不可毁也。他人之贤者，丘陵也，犹可逾也；仲尼，日月也，无得而逾焉。人虽欲自绝，其何伤于日月乎？多②见其不知量也③。”

Յան Բոնդունի փոխադրությունը և մեկնությունը

Ծուսուն Ուշուն պարսավում էր Զուննիին: Զիգունն ասաց.

- Զուր է ջանում: Զուննիին անհնար է պարսավել: Այլ արժանավոր ները նման են բլուրների, որոնք կարելի է մազցել, Զուննիին նման է արեգակի և լուսի, նրան անհնար է հասնել: Նույնիսկ եթե մարդը ցանկանա ազատվել դրանցից, մի՞թե դա կվճառի արեգակին ու լուսնին: Ակներև է, նա չափը չգիտի:

[Փոխադրությունը]

Ծուսուն Ուշուն վատաքանում էր Զուննիին: Զիգունն ասաց.

- Զուր է այդպես վարվում: Զուննիին անհնար է վատաքանել: Արժանավոր այրեր շատ կան, սակայն նրանք նման են բլուրների, որ կարելի է մազցել, իսկ Զուննիին անհասանելի բարձունքի վրա է՝ ինչպես արևն ու լուսինը: Նույնիսկ եթե մարդը ցանկանա խուսափել դրանցից, մի՞թե դա կվճառի արեգակին ու լուսնին: Դա ընդամենը ցույց կտա, որ նա չի տիրապետում իրեն:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «以» - «գործածել», «պատճառով». ասույթում կիրառված է որպես մակրայ՝ «无以» արտահայտության ձևով:

② «多» - «շատ», «բազմաթիվ», «հաճախ». ասույթում կիրառված է որպես մակրայ, միայն իմաստով:

③ «不知量也» - բառացի՝ «չզիտի չափը». Հուան Քանի «Ճշմարիտ մեկնություն» աշխատության մեջ արտահայտությունը փոխադրված է հետևյալ կերպ՝ «նա չզիտի իմաստունի արժանիքների չափը»: Զու Սիի «Մեկնություններում» «也» գաղափարագիրը փոխադրված է որպես «耳»՝ «ընդամենը»:

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

1 9 . 2 5 陈子禽谓子贡曰：“子为恭也，仲尼岂贤于子乎？”子贡

曰：“君子一言以为知，一言以为不知，言不可不慎也。夫子之不可及也，犹天之不可阶而升也。夫子之得邦家者，所谓立之斯立，道之斯行，绥之斯来，动之斯和。其生也荣，其死也哀，如之何其可及也？”

Չեն Զիցինը հարցրեց Զիգունին.

- Դու համեստ ես, մի՞թե Զուննին քեզնից արժանավոր է:

Զիգունն ասաց.

- Ազնվայրի մի բառը կարող է ցույց տալ նրա իմացությունն ու շիմացությունը, ուստի բառերը չեն կարող անզգով լինել: Ուսուցի հետ անհնար է համեմատվել, ինչպես ամհնար է սանդուղքով Երկինք բարձրանալ: Եթե Ուսուցիչը տերություն կամ տոհմ կառավարեր, ապա երբ ոտքի կանգնեցներ՝ կկանգնեին, առաջնորդեր Ուղիով՝ կիետնեին, խաղաղեցներ՝ կհավաքվեին, բանեցներ՝ կմիարանվեին: Ողջ լիներ՝ կփառաբանեին, վախճանվեր՝ կսգային: Մի՞թե նրա հետ կարելի է համեմատվել:

[Փռխադրությունը]

Չեն Զիցինը հարցրեց Զիգունին.

- Համեստությունից դրդված ես Զուննին քեզնից արժանավոր համարում:

Զիգունն ասաց.

- Ազնիվ մարդու մի բառը կարող է ցույց տալ նրա իմաստությունն ու անտեղյակությունը, ուստի խոսելիս հարկ է զգովզ լինել: Ուսուցի հետ համեմատվելը նման է սանդուղքով Երկինք բարձրանալ փորձելուն: Եթե Ուսուցիչը տիրակալ լիներ կամ ազնվական տոհմի նահապետ, ապա թե ոտքի կանգնեցներ՝ բոլորը կկանգնեին, առաջնորդեր արդարությամբ՝ կիետնեին, խաղաղեցներ երկիրը՝ կգային նույնիսկ հեռավոր տերություններից, բարեհաձությամբ ծառայեցներ՝ կմիարանվեին: Ողջ կյանքի ընթացքում կփառաբանեին նրան, իսկ երբ վախճանվեր՝ անկեղծորեն կսգային: Մի՞թե նրա հետ կարելի է համեմատվել:

Գլուխ 20. Յառն ասաց... Բնդամենը Յ ասույթ

ԿՈՆՖՈՒՅՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2 0 . 1 尧曰：“咨！尔舜！天之历数在尔躬，允执其中。四海困穷，天禄永终。”舜亦以命禹①。

Յառն ասաց. «Այս, Շուն: Երկնքի սահմանած կարգով ընտրվեցիր, անշեղ հետևիր միջինին: Թե չորս ծովերի սահմաններում զրկանքներ կրեն, Երկինքը հավերժ կրի քեզ»:

Այս պատգամով Շունը դիմեց Յուին:

[Փոխադրությունը]

Յառն գահը Շունին փոխանցելով՝ ասաց. «Այս, Շուն: Երկնքի կամոք ընտրվեցիր, կառավարիր ազնվորեն ու արդարությամբ: Եթե ողջ երկրում մարդիկ տառապեն թշվառությունից և զրկանքներ կրեն, Երկինքը երես կրեքի քեզնից»:

Նոյն բանը Շունն ասաց Յուին, երբ փոխանցում էր նրան գահը:

[Մեկնությունը]

① Այս ասույթի մասերը տրամաբանական կապ չունեն, չեն բխում մեկը մյուսից, կամ լրացնում միմյանց: Սուն ժամանակաշրջանի գրողներից Սոն Շին կարծում էր, որ կորսված է բնագրի մի հատված: Ես բաժանել եմ այն մի քանի մասերի, որպեսզի փոխադրությունը և մեկնություններն ավելի ակնառու լինեն:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

曰：“予小子履①敢用玄牡， 敢昭告于皇皇后帝： 有罪不敢赦。帝臣不蔽②， 简在帝心。朕躬有罪， 无以万方； 万方有罪， 罪在朕躬。”

Ասաց. «Ես՝ նվաստ Լյուս, համարձակվում եմ սև ցոլ զոհաբերել և խոնարհաբար խոստովանում եմ Մեծն Կայսրին, որ չեմ ներել մեղավորներին։ Կայսեր աստիճանավորներին չեմ թաքցրել, Կայսրը սրտով կընտրի։ Թե ես մեղավոր եմ, մի պատժիր բյուրին, բյուրը մեղավոր է՝ պատժիր ինձ»։

[Փռխադրությունը]

Թաճնը ասաց. «Ես՝ համեստ Լյուս, համարձակվում եմ սև ցոլ զոհաբերել և խոնարհաբար խոստովանում եմ Մ'նձ ու Պայծառափայլ Կայսրին, որ երբեք չեմ ներել մեղավորներին, եթե նրանց հանցանքն ի հայտ է եկել։ Կայսեր պաշտոնյաների չարագործությունները չեմ պարտակել, սրտի խորքում Կայսրն ինքը ամեն ինչ գիտի։ Թե ես մեղավոր եմ, մի պատժիր ամենքին Երկնքի տակ, ամենքը Երկնքի տակ թե մեղավոր եմ՝ պատժիր ինձ»։

[Մեկնությունը]

① «予小子履» - «Ես՝ նվաստ Լյուս»։ Ինում կայսրերը իրենց մասին արտահայտվում էին համեստորեն՝ սեփական արժանիքները նվազեցնելով։ Այդ նպատակով հիմնականում շրջանառվում էին «予小子»՝ «Ես՝ նվաստ» և «予一人»՝ «Ես՝ հասարակ այրս» արտահայտությունները։ Սիմա Ցյանի «Պատմագրության» մեջ նշվում է, որ թաճնը ունեցել է թյանյի և Դայի պատվանունները, իսկ գուշակության համար գործածվող ուկորներից մեկի վրա փորագրված էր այն անունը, որ տրվել էր նրան ծնվելիս՝ Լյույ։

③ «帝臣不蔽» - «Կայսեր աստիճանավորներին չեմ թաքցրել»։ այս

արտահայտությունը տարբեր մեկմաքանություններ ունի: Մոնիկ փոխադրել էր այն հետևյալ կերպ. «Չեմ փորձել թաքցնել Կայսեր աստիճանավորների բարի և չար գործերը»: Ձեն Սյուանի տարբերակը գրեթե նույնն է, սակայն այնտեղ հիշատակվում է միայն աստիճանավորների շարագրությունների և հանցանքների մասին: Մոնիկ նշում է, որ Ծանն այս խոսքերն արտասանել է Սյա հարստության վերջին տիրակալ Զեին պարտության մատնելուց հետո, երաշտի ժամանակ՝ անձրևի համար աղոյելիս: Մի շարք մատյաններում այս խոսքերը մեջքերվում են որպես «Ծանի աղերս»: Պատահական չէ, որ Ծանն ասում է. «Ծե ես մեղավոր եմ, մի պատժիր բյուրին»: Հնում բնության արհավիքների պատճառ համարում էին տիրակալի անբարո, անազնիվ, Ուղուց շեղված վարքը: Այդ պատճառով էլ Ծանը աղերսում է իր մեղավորության համար չպատժել երկրի ողջ բնակչությանը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

周有大賚， 善人是富。 “虽有周亲， 不如仁人。 百姓有过，在予一人①。”

Զոռուն մեծ շնորհներ ուներ, լավ մարդիկ հարստանում էին: «Ծեն Զոռուն հարազատներ ուներ, չին հավասարվի մարդկայիններին: Հարյուր տոհմերը սիսակվում են՝ մեղավորը ես եմ»:

[Փոխադրությունը]

Զոռու տերությունը գորեղ տիրակալներ ուներ, նրանց շնորհիվ արժանավոր մարդիկ ունենոր էին դառնում: «Ծեն ես հարազատներ ունեմ, նրանք չեն հավասարվի առաքինի այրերին: Ծե մարդիկ մեղավոր են՝ ես ինձ վրա եմ վերցնում մեղքը»:

Կոնֆուցիոս. Չրույցներ

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① Լյու Բատմանի և Սուն Սյանֆենի «Մեկնություններում» նշվում է, որ այս խոսքերը պատկանում են կամ Զոռու տերության Ու արքային, կամ նրա մերձավոր խորհրդական Ձյան Թայգումին, ով հետագայում հիմք դրեց Ցի տերությանը:

ԿՈՆՖՈՒՅԻՉԻՈՒՄԻ ԲՆԱԳԻՐԸ

谨权量， 审法度①， 修废官②， 四方之政行焉。兴灭国， 继绝世，
举逸民， 天下之民归心焉。

Սահմանեց կշիռներն ու չափերը, քննեց օրենքներն ու աստիճանները, վերահաստատեց արձակված աստիճանավորներին և չորս բոլորը սկսեցին կատարել տերունական հրամանները: Վերականգնեց կործանված տերությունները, վերածնեց ընդհատված տոհմերը, համբավեց հանիրավի մերժվածներին, և ամենը Երկնքի տակ հպատակվեցին նրան:

[ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ]

Թե սահմանվեն կշիռներն ու չափերը, քննարկվեն օրենքներն ու աստիճանակարգերը, կրկին պաշտոնների նշանակվեն անիրավորներն արձակված աստիճանավորները, ապա ամենուր կսկսեն կատարել տերունական հրամանները: Թե վերականգնվեն կործանված տերությունները, ամրանան սերունդների ընդհատված կապերը, պաշտոններ ստանան նրանք, որոնց զրպարտելով արտաքսել էին, ապա ողջ ժողովուրդը կիպատակվի:

[Մեկնությունը]

① «謹权量，审法度» - «Սահմանեց կշիռներն ու չափերը, քննեց օրենքներն ու աստիճանները». Յան Ժողովին, Ցին Ցյուանը և Ցին Լյանը կարծում էին, որ «法度» արտահայտությունը կապ չունի օրենքի, իրավական համակարգի և պաշտոնյաների աստիճանակարգման հետ, վերաբերում է կշիռներին ու չափերին, այդ պատճառով էլ մեկնարան-վող արտահայտությունը նրանց աշխատություններում ներկայացված է հետևյալ կերպ. «Սահմանեց բոլոր կշիռներն ու չափերը»: Ժամանակակից որոշ մասնագետներ ևս այս մոտեցման կողմնակից են և նրանց փոխադրություններում բացակայում է «օրենքներ և աստիճաններ» արտահայտությունը: Վաղ Ցին ժամանակաշրջանում տարածված օրինակներում երկու տարբերակներն էլ համդիպում են:

② «废官» - «Արձակված աստիճանավորներ». Զատ Յողով «Քառամատյանի մեկնություններ» աշխատության մեջ մեջքերվում են հետևյալ խոսքերը. «Թե դիրք ունես, սակայն աստիճանավոր չես, կամ աստիճանավոր ես, սակայն դիրք չունես, քեզ անպայման կարձակեն»: Ենթադրվում է, որ այս խոսքերը պատկանում են Կոնֆուցիոսին: «废» գաղափարագիրն այստեղ ունի «արձակել», «շնորհազրկել», «կոչումազրկել» իմաստները: Ասույթն ունանք վերագրում են Յաոյին, ունանք՝ Շունին կամ Թանին, մյուսները՝ Զոռոյի տիրակալ Ուին: Սակայն ժամանակակից մեկնարաբանողների մեծամասնությունը կարծում է, որ դրանք Կոնֆուցիոսի խոսքերն են: Լյու Բանանը այս ասույթը վերագրում էր Կոնֆուցիոսին և փոխադրել էր հետևյալ կերպ. «Խոհեմությամբ կիրառիր զորությունդ, սահմանիր օրենքներ, պաշտոններում վերահաստատիր հանիրավի արձակված աստիճանավորներին և բարձրացրու մերժված արժանավորներին. այնժամ Երկնքի տակ բոլորը կիպատակվեն քեզ»: Լյու Բանանին փորձում է հերքել Հե Սյուն, ով նշում է, որ Հան ժամանակաշրջանում մարդիկ «Զրույցներից» հատվածներ մեջքերելիս կոչում էին դրանք «Քունձի ասույթներ»,

Կոնֆուցիոս. Զրույցներ

այսինքն՝ բոլոր ասույթների հեղինակությունը վերագրվում էր Կոնֆուցիոսին, ինչը սխալ է, քանի որ շատ ասույթներ պատկանում են նրա սամերին և բավականին շատ են մեջբերումները տարբեր ժամանակաշրջաններից: «Զրույցները» հաճախ են հայտնվել ասույթների՝ այս կամ այն հեղինակին պատկանելու վերաբերյալ վեճերի կիզակետում: Մասնավորապես՝ «Զրույցների» տասնիներորդ գլուխ չորրորդ ասույթը վերագրում են և Կոնֆուցիոսին, և Զիսյային: Որոշ մասնագետներ «Զրույցների» տասնիներորդ գլուխ՝ Զիսյային պատկանող վեցերորդ ասույթը վերագրում են Կոնֆուցիոսին, և նման կարծիքները բազմաթիվ են: Բնական է, քանզի «Քունձիի զրույցները» շրջանառվում էին նաև որպես «Քունձի», ինչպես որ «Մ'ենձիի զիրքը»՝ «Մ'ենձի», այսինքն այդ աշխատություններում ներառված ողջ նյութը սիսպմամբ վերագրվում էր հեղինակներին, հաճախ՝ նույնիսկ մեջբերումները: Նեռլունֆուցիական Զայ Հան իր «Քառամատյանի մեկնություններում» նշում էր հետևյալը. «Մոծին արժանավոր էր բազմաշնորհությամբ, Քունձին՝ մարդկայնությամբ, Հուանձին՝ խորիմաստությամբ, Թյանձին՝ հավասարակշռությամբ, Լյեձին՝ համեստությամբ, Լյառձին՝ աճսահմանությամբ»: Սա նշանակում է, որ կոնֆուցիականները փորձում էին նշանակալի կշիռ ունեցող գրեթե բոլոր փիլիսոփաներին ներկայացնել որպես Կոնֆուցիոսի գաղափարական ազդեցության կրողներ, իսկ Կոնֆուցիոսին՝ ամենաերևելին փիլիսոփաներից, ինչը վիճահարուց մոտեցում է:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

所重： 民、食、丧、祭。

Կարևորի մարդկանց, պարենը, սուգը և զրհաբերությունները:

Յան Բոնյունի փոխադրությունը և մեկնությունը

[Փոխադրությունը]

Պետք է ուշադիր լինել հասարակ մարդկանց, սննդի, սգո արարողությունների, աստվածներին և նախնիներին մատուցվող զոհաբերությունների նկատմամբ:

ԿՈՆՖՈՒՅ-ՑԻ-ՈՍԻ ԲՆԱԳԻՐԸ

宽则得众，信则民任焉①，敏则有功，公则说。

Մեծահոգությամբ կզրավես բազում մարդկանց, ազնվությամբ կշահես ժողովրդի վստահությունը, ջանասիրությամբ կհասնես արդյունքի, անաշառությամբ կուրախացնես:

[Փոխադրությունը]

Առատաձեռնությամբ կունենաս մարդկանց աջակցությունը, աշխատասիրությամբ կհասնես արդյունքի, արդարամտությամբ կուրախացնես ժողովրդին:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «信则民任焉» - «Ազնվությամբ կշահես ժողովրդի վստահությունը». «Քրույցների» մի շարք խմբագրություններում այս հինգ գաղափարը բացակայում են: Ենթադրվում է, որ այս արտահայտությունն ասույթում ավելացվել է թյուրիմացաբար, քանի որ այն նույնությամբ կրկնվում է «Քրույցների» տասնյոթերորդ գլուխ վեցերորդ ասույթում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

20.2 子张问于孔子曰：“何如斯可以从政矣？”子曰：“尊五美，屏①四恶，斯可以从政矣。”子张曰：“何谓五美？”子曰：“君子惠而不费，劳而不怨，欲而不贪②，泰而不骄，威而不猛。”子张曰：“何谓惠而不费？”子曰：“因民之所利而利之，斯不亦惠而不费乎？择可劳而劳之，又谁怨？欲仁而得仁，又焉贪？君子无众寡，无小大，无敢慢，斯不亦泰而不骄乎？君子正其衣冠，尊其瞻视，俨然人望而畏之，斯不亦威而不猛乎？”子张曰：“何谓四恶？”子曰：“不教而杀谓之虐；不戒视成谓之暴；慢令致期谓之贼；犹之③与人也，出纳④之吝谓之有司⑤。”

Զիշանը հարցրեց Քունձիին.

- Ինչպնդ կարելի է կառավարել:

Ուսուցիչն ասաց.

- Հարգելով իինգ արժանիքները և ազատվելով չորս թերություններից՝ կարելի է կառավարել:

Զիշանը հարցրեց.

- Որննը են իինգ արժանիքները:

Ուսուցիչն ասաց.

- Ազնվայրն առատաձեռն է, սակայն ոչ շոայլ, բանեցնում է՝ չեն գանգատվում, ցանկություններում ազահ չէ, մեծ է, սակայն ոչ գոռող, գորեղ է, սակայն ոչ կատաղի:

Զիշանը հարցրեց.

- Ի՞նչ ասել է՝ «առատաձեռն է, սակայն ոչ շոայլ»:

Ուսուցիչն ասաց.

- Մարդկանց տալ այն, ինչն օգուտ կրերի նրանց, մի՞թե առատաձեռնություն չէ, առանց շոայլության: Մի՞թե բանող մարդիկ կգանգատվեն, թե աշխատանքը ուժասպառ չանի: Թե ձգտի մարդկայնության և հաջողի, մի՞թե կարող է ազահ լինել: Ազնվայրը գործ ունենալով շատի

ու քչի, մեծի ու փոքրի հետ, քամահրաբար չի վարվում, մի՞թե դա մեծ լինել չէ՝ առանց գոռողության: Ազնվայրն իր հագուստն ու գլխանոցը կրում է վայելչաբար, լի արժանապատվությամբ, և մարդիկ նրան նայելով պատկառում են. մի՞թե զորեղ լինել չէ՝ առանց կատադրության:

Զիշանը հարցրեց.

- Որո՞նք են չորս թերությունները:

Քունացին ասաց.

- Սպանելն առանց սովորեցնելու դաժանություն է, կանխավ չզգուշացնելով՝ արդյունք ակնկալելը բռնություն է, դանդաղ հրամանատրմամբ հանդերձ աշխատանքն արագացնելու պահանջը վճասարպություն է, շնորհներ խոստանալն ու շնորհելիս ժլատություն անելը կծծիություն է:

[Փոխադրությունը]

Զիշանը հարցրեց Քունձիին.

- Ինչպես կարելի է կառավարել տերունական գործերը:

Քունձին ասաց.

- Հավատարիմ մնալով հինգ արժանիքներին և զերծ մնալով չորս թերություններից՝ կարելի է կառավարել տերունական գործերը:

Զիշանը հարցրեց.

- Որո՞նք են հինգ արժանիքները:

Քունձին ասաց.

- Երբ ազնիվ մարդը բարեգործություն է անում՝ ոչինչ չծախսելով, բանեցնում է մարդկանց՝ առանց գանգատների առիթ տալու, ցանկություններում ազահ չէ, մեծ ու խաղաղ է, սակայն ոչ գրող, զորեղ է, սակայն ոչ կատաղի:

Զիշանը հարցրեց.

- Ի՞նչ է նշանակում՝ «բարեգործություն է անում՝ ոչինչ չծախսելով»:

Քունձին ասաց.

- Մարդկանց տալ այն, ինչն օգուտ կրերի նրանց, մի՞թե բարեգործություն չէ՝ առանց ծախսելու: Մի՞թե աշխատող մարդիկ կզանգատվեն, եթե աշխատանքը ձիշտ ժամանակին լինի և ուժասպառ չանի: Եթե նա ձգուի մարդկայնության, մի՞թե կարող է ազահ լինել: Ազնիվ մարդը խտրականորեն չի վերաբերվում մարդկանց, անկախ նրանց դիրքից և տոհմիկ լինելուց. մի՞թե դա մեծ ու խաղաղ լինել չէ՝ առանց գոռողության: Ազնիվ մարդն իր հազուստն ու գլխանոցը կրում է վայելչաբար, քայլում է՝ լի արժանապատվությամբ, և մարդիկ նրան նայելով զգաստանում են. մի՞թե դա զորեղ լինել չէ՝ առանց կատաղության:

Զիջանը հարցրեց.

- Որ՞նք են չորս թերությունները:

Քոնձին ասաց.

- Մարդկանց պատերազմ առաջնորդելն առանց ուսուցանելու՝ դաժանություն է, առանց նախազգուշացնելու՝ օգուտ ակնկալելը բռնություն է, անորոշ հրամաններ տալով հանդերձ աշխատանքն արագացնելու պահանջը վճարարարություն է, արժանավորներին շնորհներ խոստանալն ու դրանք բաշխելիս ժլատություն անելը նվաստություն է:

[ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ]

① «屏» - «ազատվել», «վերացնել», «զերծ մնալ». բոլոր տարբերակներն էլ գործածելի են:

② «欲而不贪» - բառացի՝ «ցանկություններում ազահ չէ». ասույթի բովանդակությունից պարզ է, որ «欲»՝ «ցանկություն», «տենչանք» գաղափարագիրը կիրառված է մարդկայնության վերաբերմամբ: Հուան Քանը նշում էր հետևյալը. «Նրանք, որ մարդկայնություն և արդարամտություն են տենչում՝ մեծահոգի են, իսկ նրանք, որ հարստություն և վայելներ են տենչում՝ ազահ են»:

③ «犹之» - Վան Ինջին կարծում էր, որ արտահայտությունն ասույթում կիրառված է որպես խոսքի օժանդակ մաս, փոխադրելիս իմաստը սղվում է:

Յան Բոնդյունի փոխադրությունը եւ մեկնությունը

④ «出納» - բառացի՝ «ստանալ և հանձնել». ասովքում կիրառված է այլ իմաստով, վերաբերում է արժանի մարդկանց համար կանխորշշած պարզեցների չափի նվազեցմանը:

⑤ «有司» - «Կծիություն». արտահայտությունը կիրառվել է մանր պաշտոնյաներին բնորոշ սեփական թերարժեքությունից չարանալու անձնային որակը բնորոշելու համար:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆԻ ԲՆԱԳԻՐԸ

2 0 . 3 孔子曰：“不知命，无以为君子也；不知礼，无以立也；不知言①，无以知人也。”

Քունձին ասաց. «Չիմանալով կամքը՝ չես կարող ազնվայր լինել, չիմանալով ծեսերը՝ չես կարող ոտքի կանգնել, չիմանալով խոսքերը՝ չես կարող ձանաչել մարդկանց»:

[Փոխադրությունը]

Քունձին ասաց. «Եթե չգիտես ձակատագիրը, չես կարող ազնիվ մարդ լինել, չգիտես ծեսերը՝ չես կարող մարդկանց մեջ քո տեղն ունենալ, չես հասկանում այլոց խոսքերը՝ չես կարող ձանաչել մարդկանց»:

[Մեկնությունը]

① «知言» - «իմանալ խոսքերը». այս արտահայտությունը վերաբերում է այլ մարդկանց վարքային դրսևորումների տարրերակմանը, ըստ իրենց խոսքերի: Նույն իմաստն ունի, ինչ Մենձիի համանուն աշխատության հետևյալ միտքը. «Լավ իմանալով մարդկանց խոսքերը՝ ունակ էր տարրերել բարին ու չարը»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Գլուխ 1. Ուսուցում	12
Գլուխ 2. Կառավարում	32
Գլուխ 3. Ութ շարք	58
Գլուխ 4. Համայնք և մարդկայնություն	83
Գլուխ 5. Գունյե Զան	100
Գլուխ 6. Յունի մասին	128
Գլուխ 7. «Փոխանցում եմ...»	155
Գլուխ 8. «Ժայ Բո»	185
Գլուխ 9. «Ուսուցիչը հազվադեպ էր...»	203
Գլուխ 10. Հայրենի ավանում	229
Գլուխ 11. Նրանք, որ սկզբից ուսումնասիրում են...	255
Գլուխ 12. Յան Յուանը	285
Գլուխ 13. Զիլուն...	308
Գլուխ 14. Սյանը հարցրեց...	336
Գլուխ 15. Վեյի Լին իշխանը...	378
Գլուխ 16. Զիշին	408
Գլուխ 17. Յան Հուոն	426
Գլուխ 18. Վեյձին	452
Գլուխ 19. Զիջանը	467
Գլուխ 20. Յառն ասաց...	485

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ

ԶՐՈՒՅՑՆԵՐ

Փոխադրությունը եւ մեկնությունը՝
ՅԱՍ ԲՈՉՅՈՒԽԻ

Չինարենից թարգմանեց
Պավել ՃԱՂԱՐՅԱՎԸԸ

Մտելիանակերտ 2020

Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Եջադրումը՝ Թ. Դարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 31.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագովել է «Դիզակ պյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Ն. Զակոբյան 25

«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010

Իռուիք Բրոդսկի. «Տեղատարափի շաչունը» - 2011

Ս. Բախտին. «Դոստուևկու պոետիկայի խնդիրները» - 2012

«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խոթենիկով, Ն.Գոմիլյով,

Վ.Խողասելիչ/ - 2012

Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012

Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Աշակույթ» - 2012

Վառամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012

Ժարկո Սիլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013

Պավել Ֆլորենսկի. «Բկոնոստաս» - 2014

Ուսու կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,

Լ.Ռուբինշտեյն/ - 2014

Հենրիխ Սապգիր. «Չուգահեռ մարդը» - 2014

Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014

«Կամուրջների խոռվությունը.

մետանետաֆորխստներ» - 2015

Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015

Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը.

Պատմվածքներ» - 2015

Արդի ուսական վերիքո (անթոլոգիա) - 2015

Զինատանի մշակույթի քրեստոմատիա - 2015

Զիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015

Սա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015

Եվգենի Վոդոլազկին. «Լավո» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015

Ուսու այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հասոր 1) - 2016

Յու Զիան. «Անձրեսից պատսպարվող թոշունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեռ Տոլսոոյ.

Փախուստ դրախտից» - 2016

Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016

Վան Զենչկի. «Երիտասարդ վաճականի սիրո

պատմությունը» - 2016

Լյուդմիլա Պետրուշեևկայա. «Սեր. երջանկություն.

ոերվիեմ» - 2016

Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016

«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»

(անթոլոգիա) - 2016

Ո-ոս Մինհմալիստներ (անթոլոգիա) - 2016

Ինգե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը,

դասուիզմը, քրիստոնեությունը եւ չինական

մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017

Ինգերորդ Բախման. «30-րդ տարին» - 2017

Զիոն Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Սայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռութ» - 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոններ» - 2017

Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017

Սյան Ցյան. «Վիշապի մորուքներն ընդիւմ

նախագծերի» - 2017

Ուան Յուլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդր Սոլոգուր. «Չնչաղելը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018

Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոքն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018

Ուեյսին Սյուլը, Սյուն Շու. «Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018

Աղի ծայնը (20-րդ դարի հետությունական թվականների
սերնդի շին գրողների պատմվածքներ) -2019

20-րդ դարի ռուսական պատմվածք (անբոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019

Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեև Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին.
իրական պատմություն) - 2020



Ոգի-Նարի

Vogi-Nairi

www.vogi-nairi.am

E-mail: vogi.nairi@mail.ru

Phone: +374 97252323, +374 94259161

